Գիրքը **լուսապատճենվել** և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորի կողմից սիրված Գրքամոլ-ը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com էլ. հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2014 © Grqamol. All Rights Reserved.

URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ԳԵՈՂՈՐ ԳՐԱՅՔԵՐ

2

ՊԵՈՂՈՐ ԳՐԱՅՉԵՐ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ

ՀԱՏՈՐՈՎ

„ՀԱՅԱՍՏԱՆ" հրատարակչություն
Երևան 1966

ՊԵՈՂՈՐ ԳՐԱՅՉԵՐ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ
ԵՐԿՐՈՐԴ

ՋԵՆԻ ԳԵՐՀԱՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ" հրատարակչություն
Երևան 1966

И (Անգլ)

Գ 85

Ռուս. թարգմ.՝ Հ. Հարությունյան

ТЕОДОР ДРАЙЗЕР

Собрание сочинений в десяти томах

Том II

ДЖЕННИ ГЕРХАРДТ

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1966

Г 3—4

ԳԼՈՒԽ I

1880 թվականի աշնանային մի առավոտ տարեց մի կին մոտ տասնութ տարեկան մի աղջկա ուղեկցությամբ մտավ Կոլումբուս քաղաքի (Օհայո նահանգ) գլխավոր հյուրանոցը և կլերկին մոտենալով հարցրեց, թե իր համար որևէ աշխատանք չի՞ լինի հյուրանոցում։ Նա լիքը-լիքը կին էր, բայց ոչ ամրակազմ, իրեն պահում էր համեստ ու հասարակ։ Նրա դեմքը պայծառ էր ու շիտակ, խոշոր աչքերը նայում էին հեզ ու համբերատար, և նրանց մեջ նշմարվում էր թախծի մի ստվեր, որ հասկանալի է միայն նրան, ով առիթ է ունեցել կարեկցանքով նայելու հոգսերի տակ ճզմված անօգնական, չքավոր մարդու դեմքին։ Դժվար չէր հասկանալ, թե որտեղից են նրա դստեր երկչոտությունն ու ամոթխածությունը, որոնք այժմ նրան ստիպում էին մոր ետևում մնալ և շինծու անտարբերությամբ մի կողմ նայել։ Այդ աղջկա բնավորության մեջ երևակայությունը, անզարգացած, բայց պոետական մաքի նրբազգացությունն ու զգայնությունը, որ ժառանգել էր մորից, զուգակցվում էին հորից ստացած լրջության ու հավասարակշռության։ Այդ կանանց կարիքն էր բերել այստեղ։ Նրանք ներկայացնում էին ազնիվ աղքատության այնպիսի մի հուսիչ մարմնացում, որ նույնիսկ կլերկի կարեկցանքը շարժեցին։

— Իսկ ինչպիսի՞ աշխատանք եք փնտրում դուք,— հարցրեց նա։

— Դուցե ձեզ հարկավոր լինի որևէ տեղ կարգի բերել

կամ մաքրել,— անհամարձակ պատասխանեց կինը։— Ես կարող եմ հատակ լվանալ։

Այս խոսքի վրա աղջիկը կուչ եկավ, ոչ նրա համար, որ աշխատել չէր ուզում, այլ որովհետև դառնանում էր, որ մարդիկ կհասկանան, թե ինչպիսի ծայրահեղ կարիքն է նրանց ստիպում սև աշխատանքի անցնել։ Կլերկը, ինչպես վայել է տղամարդուն, շատ զգացվեց գեղեցիկ աղջկա վշտից։ Ինչ ասել կուզի, որ աղջկա միամտության ու անօգնականության պատճառով նրանց վիճակը շատ ավելի ծանր էր թվում։

— Սպասեք մի րոպե,— ասաց կլերկը և, գրասենյակ մտնելով, իր մոտ կանչեց ավագ սպասուհուն։

Հյուրանոցում իրոք որ աշխատանք գտնվեց։ Գլխավոր սանդուղքն ու նախասրահը մնացել էին առանց մաքրելու, որովհետև մշտական հատակ մաքրողն աշխատանքից ազատվել էր։

— Այն նրա աղջի՞կն է,— հարցրեց ավագ սպասուհին, հեռվից նայելով կանանց։

— Երևի։

— Լավ, թող հենց այսօր էլ աշխատանքի անցնեն։ Աղջիկը, երևի, օգնելո՞ւ է մորը։

— Խոսեցեք ավագ սպասուհու հետ,— սիրալիր ասաց կլերկը, իր սեղանի մոտ վերադառնալով։— Անցեք այստեղ,— նա մատով ցույց տվեց կողքի դուռը։— Ավագ սպասուհին ձեզ հետ ամեն ինչի մասին կպայմանավորվի։

Այս տեսարանը կարելի է համարել ողբերգական բոլորումը դժբախտությունների ու ձախորդությունների այն երկար շարանի, որ ծանրացել էր ապակեգործարանի բանվոր Ուիլյամ Գերհարդի և նրա ընտանիքի գլխին։ Այդ մարդը զրկվել էր աշխատանքից,— բախտի այսպիսի հեղհեղուկությունը լավ ծանոթ է թշվառ աշխատավորներին,— և հիմա սրտի դողով էր դիմավորում ամեն մի առավոտը, չիմանալով, թե նոր օրը ինչ կբերի իրեն, կնոջը և վեց երեխաներին, որովհետև նրանց հացն հանապազօրյա կախված էր դիպվածի քմայքից։ Ինքը՝ Գերհարդը, հիվանդության պատճա-

ռով գամված էր անկողնին։ Նրա ավագ որդի Սեբաստիանը, կամ, ինչպես մտերիմներն էին կոչում, Բասսը որպես օժանդակ բանվոր էր աշխատում տեղական վագոնաշինական արհեստանոցում, բայց շաբաթական ստանում էր ընդամենը չորս դոլլար։ Ավագ դուստրը՝ Ջեննին, արդեն բոլորել էր տասնութ տարին, բայց դեռ նրան ոչ մի արհեստ չէին սովորեցրել։ Գերհարդն ուրիշ երեխաներ էլ ուներ՝ տասնչորսամյա Ջորջը, տասներկուամյա Մարթան, տասնամյա Ուիլյամը և ութամյա Վերոնիկան։ Սրանք դեռ շատ փոքր էին աշխատելու համար, և հարկավոր էր սրանց բոլորին կերակրել։ Ընտանիքի միակ ունեցվածքը և հույսը Գերհարդին պատկանող տունն էր, բայց այն էլ գրավ էր դրված վեց հարյուր դոլլարով։ Գերհարդն այդ գումարը պարտք էր վերցրել այն ժամանակ, երբ իր ամբողջ խնայողությունը տունը գնելու վրա ծախսելուց հետո մտածել էր նրան կից էլի մի երեք սենյակ ու պատշգամբ կառուցել, որպեսզի ընտանիքն ավելի աղատ ապրի։ Գրավաթուղթը լրիվ մարելու ժամկետին դեռ մի քանի տարի կար, բայց այնպիսի ծանր ժամանակներ էին սկսվել, որ ստիպված էին եղել ծախսել այն փոքրիկ գումարն էլ, որ ետ էին դրել՝ հիմնական պարտքի մի մասը և տարեկան տոկոսները վճարելու համար։ Այժմ Գերհարդը միանգամայն անօգնական վիճակում էր և գիտակցում էր, որ իր դրությունը հուսահատական է. մի կողմից բժշկի պարտքը, մյուս կողմից գրավագումարի չվճարված տոկոսները, էլ չենք խոսում մսավաճառի ու հացավաճառի պարտքերի մասին, որոնք հույս դնելով նրա անբասիր ազնվության վրա՝ վստահել էին պարտքով մթերք բաց թողնել մինչև վերջին հնարավորությունը,— այս ամենը հալումաշ էր անում նրան և խանգարում հաղթահարել իր հիվանդությունը։

Տիկին Գերհարդն ամենևին էլ վհատվող կին չէր։ Նա սկսել էր լվացք վերցնել, եթե հաջողվում էր պատվիրատու գտնել, իսկ մնացած ժամանակը երեխաների համար կար ու կարկատան էր անում, նրանց դպրոց էր տանում, եփում-թափում էր, հիվանդ ամուսնուն էր խնամում և, պատահում

էր, լաց էր լինում։ Հաճախ նա գտնում էր որևէ մի նոր նպարեղենի խանութ,— ամեն անգամ իրենց տնից ավելի ու ավելի հեռու,— և սկզբում կանխիկ վճարելուց հետո ըսկըսում էր ապառիկ գնումներ անել, քանի դեռ ուրիշ խանութպանները չէին նախազգուշացրել դյուրահավատ բարերարին։ Եգիպտացորենն ամենաէժանն էր։ Միսիս Գերհարդը մի լիքը կաթսա եգիպտացորեն էր խաշում և այդ ուտելիքը, որ համարյա միակն էր, բավականացնում էր մի ամբողջ շաբաթ։ Եգիպտացորենի ալյուրից եփված խաշիլը նույնպես ավելի լավ էր, քան ամենևին ոչինչ չլինելը, իսկ եթե հաջողվում էր խաշիլին մի քիչ էլ կաթ ավելացնել, արդեն համարյա թե խնջույք էր դառնում։ Տապակած կարտոֆիլը Գերհարդների տանը ամենաշքեղ ճաշատեսակն էր համարվում, սուրճը՝ հազվադեպ հյուրասիրություն։ Ածուխ նրանք ձեռք էին բերում դույլերն ու վամբյուղները ձեռքներին մոտակա երկաթուղային դեպոյի ոլորապտույտ ճանապարհներին շրջելով։ Վառելափայտն էլ ճարում էին նույնպիսի արշավներ կատարելով դեպի մոտակա փայտի պահեստները։ Այսպես նրանք մի կերպ յոլա էին գնում, ամեն ժամ հուսալով, թե հայրը կլավանա և նորից աշխատանքը կվերսկսվի ապակու գործարանում։ Բայց ձմեռը մոտենում էր, և հուսահատությունն ավելի ու ավելի էր համակում Գերհարդին։

— Ես պետք է անպայման շուտ դուրս պրծնեմ այս պատմությունից,— հաճախ ասում էր համառ գերմանացին, նրա քիչ արտահայտիչ ձայնն անզոր էր հաղորդելու իր հոգին մաշող անհանգստությունը։

Ի լրումն բոլոր դժբախտությունների՝ փոքրիկ Վերոնիկան էլ կարմրուկ ընկավ, և մի քանի օր շարունակ նրա կյանքը վտանգի տակ էր։ Մայրը բոլոր գործերը թողած՝ չէր հեռանում երեխայից և աղոթում էր։ Բժիշկ Էլուոնգերը կարեկցության մղումով ամեն օր այցելում էր հիվանդին։ Լութերական քահանա պաստոր Վունդը ներկայանալով մխիթարում էր սուրբ եկեղեցու անունից։ Նրանք երկուսն էլ մոայլ կեղծ-բարեպաշտության ոգի էին բերում տուն։ Դրանք բարձրագույն ուժերի ամբողջովին սնազգեստ առաք-

յալներն էին։ Միսիս Գերհարդը կարծում էր, թե կորցնում է իր աղջկան, և թախիծը սրտում արթուն նստում էր նրա անկողնի կողքին։ Երեք օր հետո վտանգն անցավ, բայց տանը ոչ մի պատուհաց չկար։ Սեբաստիանի ստացած փողը դեղորայքի վրա էր ծախսվել։ Միայն ածուխն էր հաջողվում ձրիաբար ձեռք բերել, բայց արդեն. մի քանի անգամ երեխաներին դուրս էին քշել դեպոյից։ Միսիս Գերհարդը մտքում ծանրութեթև էր արել, թե ուր կարող է դիմել աշխատանք գտնելու համար և, հաջողության որևէ հույս չունենալով, եկել էր հյուրանոց։ Եվ ահա, հրա՛շք, նրա բախտը բանեց։

—Որքա՞ն եք ցանկանում,— հարցրեց ավագ սպասուհին։

Միսիս Գերհարդն ամենևին չէր մտածել, թե իրեն այդպիսի հարց կտան։ Բայց կարիքը քաջություն տվեց նրանց։

— Օրական մեկ դոլլար։ Շատ չէ՞։

— Լավ,— ասաց ավագ սպասուհին։— Շաբաթական մի երեք օրվա գործ կլինի։ Եկեք ամեն օր կեսօրից հետո, և լրիվ տեղեկություն կստանաք։

— Շնորհակալ եմ,— ասաց միսիս Գերհարդը։— Կարելի՞ է հենց այսօր սկսել։

— Այո։ Գնանք, ես ձեզ ցույց կտամ որտեղ են դույլերն ու լաթերը։

Այն հյուրանոցը, ուր այդպես անսպասելիորեն ընկել էին նրանք, այն ժամանակների և Կոլումբուս քաղաքի համար շատ նշանակալից հաստատություն էր։ Կոլումբուսը, որ նահանգի մայրաքաղաքն է, հիսուն հազարի չափ բնակիչ ունի, ըստ որում այստեղ միշտ էլ մեծ թվով եկվորներ են լինում, հետևապես քաղաքում պետք է բարգավաճեին հյուրանոցները, և այս հանգամանքն օգտագործվում էր լավագույն ձևով, համենայն դեպս քաղաքացիները հպարտությամբ այդպես էին մտածում։ Հինգհարկանի հսկայական շենքը գտնվում էր Կոլումբուսի կենտրոնական հրապարակի վրա, որտեղ էին նաև նահանգի օրենսդրական ժողովի շենքը և խոշորագույն խանութները։ Հյուրանոցի ընդարձակ

Նախասրահը հենց վերջերս վերազարդարվել էր։ Հատակը և հղկված մարմարով երեսապատված պատերը խնամքով մաքրվում էին և շողում էին սպիտակությունից։ Դեպի վեր էր տանում մի հոյակապ սանդուղք, որի ճաղերն ընկուզենու փայտից էին, իսկ աստիճաններին փռված ուղեգորգը սմրացված էր պղնձյա ձողիկներով։ Նախասրահի մի անկյունում զգալի տեղ էր գրավում այն սեղանը, որի վրա լրագրեր ու սիգարներ էին վաճառում։ Սանդուղքի տակ էր գտնվում հերթապահ կլերկի սեղանը և հյուրանոցի վարչության գրասենյակը։ Ամեն ինչ դրվագված էր լավագույն տեսակի փայտով և զարդարված գաղե լապտերներով, որ այն ժամանակներում նորություն էր։ Նախասրահի ծայրում տեղավորված էր վարսավիրանոցը, որի բաց դռնից երևում էին բազկաթոռներն ու սափրելու շողշողուն սարքերը։ Հյուրանոցի առաջ միշտ կարելի էր տեսնել երկու կամ երեք հանրակառք, որոնք գնում-գալիս էին գնացքների չվացուցակին համապատասխան։

Այս հյուրանոցում իջևանում էին նահանգի խոշորագույն քաղաքական ու հասարակական գործիչները։ Մի քանի նահանգապետ հերթով այն դարձրել էին իրենց նստավայրը։ Միացյալ Նահանգների երկու սենատորները, երբ գործը նրանց Կոլումբուս էր բերում, անպայման լյուքս-համարներ էին զբաղեցնում այս հյուրանոցում։ Նրանցից մեկին, սենատոր Բրենդերին, հյուրանոցի տերը համարյա իր մշտական բնակիչն էր համարում, քանի որ արդեն հասակն առած այդ ամուրի մարդը Կոլումբուսում ուրիշ տուն չուներ, բացի հյուրանոցից։ Մյուս ավելի պակաս նստակյաց այցելուների մեջ կային կոնգրեսի և նահանգի օրենսդրական ժողովի անդամներ, ինչպես նաև կուլուարային քաղաքագետներ, վաճառականներ, փաստաբաններ, բժիշկներ և, վերջապես, ով ասես, որ չէր լինում այնտեղ։ Այդ ամբողջ բազմապիսի հասարակությունը գալիս ու գնում էր, և հյուրանոցն ապրում էր կալեյդոսկոպիկ խայտաբղետ ու աշխույժ կյանքով։

Մայրն ու աղջիկը, որոնց բախտը հանկարծակի գցել էր այս կուրացուցիչ աշխարհը, խիստ ահակալել էին։ Նրանք

հապիվ էին սիրտ անում որևէ բանի ձեռք տալ։ Կարմիր ուղեղորդով ծածկված լայն միջանցքը, որը պետք է նրանք մաքրեին, պալատի պես հոյակապ էր թվում։ Նրանք սիրտ չէին անում հայացքները բարձրացնել և խոսում էին շշուկով։ Իսկ երբ պետք է մաքրեին հոյակապ սանդուղքը և պղնձյա ձողերն ու ճաղերը, երկուսն էլ ստիպված էին օգնության կանչել իրենց ամբողջ արիությունը, մայրը՝ որպեսզի հաղթահարի իր երկչոտությունը, աղջիկը՝ որպեսզի հաղթահարի ամոթը, որ ստիպված է բոլորի աչքի առաջ այդ գործով զբաղվել։ Նրանցից ներքև փռված էր ընդարձակ նախասրահը, և բոլորը, ովքեր այնտեղ հանդստանում, ծխում էին կամ գնում-գալիս, կարող էին նրանց երկուսին էլ տեսնել։

— Որքա՜ն գեղեցիկ է այստեղ, չէ՞,— շշնջաց Ջեննին և իր սեփական ձայնից ցնցվեց։

— Այո,— կամացուկ արձագանքեց մայրը, որը ծունկ չոքած եռանդով մզում էր լաթերը։

— Երևի այստեղ ապրելու համար շատ ու շատ փող է հարկավոր։

— Այո,— ասաց մայրը։— Զմոռանաս մաքրել ահա այս անկյունները։ Տես, ինչքան կեղտ ես թողել։

Ջեննին այդ նկատողությունից վշտացած՝ եռանդով գործի անցավ և սկսեց քսմսել ամբողջ ուժով, այլևս չհամարձակվելով այս ու այն կողմ նայել։

Ամբողջ եռանդով, առանց ձեռքները խնայելու, նրանք աշխատում էին մինչև ժամը հինգը։ Դուրսն արդեն մութն էր, և նախասրահը պայծառ լուսավորվել էր։ Սանդուղքը լվանալը վերջացրին. մնում էր միայն ամենացածի մի քանի աստիճանը։

Այդ ժամանակ բացվեց երկփեղկանի լայն դուռը, որ շուտ-շուտ բացվելուվ լինելով փողոցից պաղ օդի հոսանք էր ներս թողնում, և ներս մտավ մի բարձրահասակ, տարեց մարդ՝ ցիլինդրը գլխին, զինվորական ձևի լայն թիկնոցն ուսերին։ Այս մարդը խիստ աչքի էր ընկնում պարապ-սարապ ամբոխի ֆոնի վրա. իսկույն երևում էր, որ ծանրակշիռ

մարդ է։ Նրա դեմքը թուխ էր, շեշտված դիմագծերով, բայց շիտակ էր ու դուրեկան։ Շողշողուն աչքերի վրա կախվել էին սև, թավ հոնքերը։ Քայլելիս սեղանից վերցրեց իր համար այնտեղ դրված բանալին և սկսեց սանդուղքով վեր բարձրանալ։

Նա ոչ միայն զգուշությամբ անցավ լաթը ձեռքին աշխատող հասակավոր կնոջ մոտով, այլև բարեհամբույր տեսքով ձեռքը թափ տվեց նրա վրա, կարծես ասելով. «Ոչինչ, ես կանցնեմ»։

Այդ րոպեին աղջիկը վեր կացավ և այնպես պատահեց, որ կանգնեց ուղիղ նրա դեմ-դիմաց. նրա աչքերից երևում էր, որ շատ է վախեցել, թե ինչու այդ մարդու ճանապարհին բուսավ ինքը։

Մարդը սիրալիր ժպտաց և գլուխ տվեց։

— Իզուր եք անհանգստանում,— ասաց նա։

Ջեննին որպես պատասխան միայն ժպտաց։

Մի հարթակ վեր բարձրանալով, մարդը ինքնաբերաբար շուռ եկավ և, աղջկան նայելով, համոզվեց, որ նա, ինչպես և թվացել էր առաջին հայացքից, արտասովոր գեղեցիկ աղջիկ է։ Նա նկատեց աղջկա լայն, մաքուր ճակատը, ուղիղ երկու հավասար մասի սանրված ու ծամ արած մազերը, կապուտակ աչքերը և դեմքի սքանչելի գույնը։ Հիացմունքով նկատեց նույնիսկ նրա գեղեցիկ կորությամբ շրթունքները, համարյա մանկական դեմքի ձվաձևությունը և բարեկազմ, նրբագեղ իրանը, որ մարմնացումն էր նրա ջահելության, առողջության ու հույսերի— այն ամենի, ինչ այնքան բարձր է գնահատում արդեն հասակն առած մարդը։ Հետո նա արժանապատվությամբ առաջ գնաց, այլևս ոչ մի անգամ չնայելով աղջկա կողմը, բայց մտքում տանելով նրա չքնաղ պատկերը։ Այդ մարդը հարգարժան սենատոր Ջորջ Սիլվեստր Բրենդերն էր։

— Ի՞նչ գեղեցիկ էր այն մարդը, որ հենց նոր վերև բարձրացավ, չէ՞, մայրիկ,— քիչ լռելուց հետո խոսեց Ջեննին։

— Այո,— հաստատեց մայրը։

— Նրա ձեռնափայտի դլխիկն արծաթից էր։

— Հարկավոր չէ մարդկանց նայել,— խրատական տոնով ասաց մայրը։— Լավ բան չէ։

— Ես նրան չէի նայում,— միամտորեն առարկեց Ջեննին։— Նա ինքն ինձ գլուխ տվեց։

— Կարիք չկա, որ նայես մարդկանց,— ասաց մայրը։— Գուցե այդ նրանց դուր չի գալիս։

Ջեննին նորից լուռ գործի անցավ, բայց այս զարմանալի աշխարհի փայլը չէր կարող չդրաղեցնել նրա միտքը։ Նա ակամա ականջ էր դնում շուրջը տիրող աշխույժ խոսակցություններին ու ծիծաղին, որոնք միաձուլվելով դառնում էին մի ընդհանուր դժժոց։ Առաջին հարկի մի ծայրում ռեստորանն էր, որտեղից ամանեղենի զրնգոց էր լսվում և դժվար չէր հասկանալ, որ այնտեղ ընթրիքի սեղան են բաց անում։ Մյուս ծայրում հյուրասրահն էր, որտեղ ինչ-որ մեկը դաշնամուր էր նվագում։ Ամեն ինչի մեջ զգացվում էր ուրախություն, անբռնաբռոսիկ տրամադրություն, որ սովորական բան է երեկոյան խնջույքից առաջ։ Դա խեղճ աղջկա սրտին ստիպում էր տրոփել հույսով, որովհետև նա ջահել էր, և կարիքը դեռ իր ամբողջ ծանրությամբ չէր ճնշել նրա հոգին։ Նա շարունակում էր ջանասիրությամբ լվանալ ու մաքրել և երբեմն մոռանում էր իր կողքին աշխատող խոնջացած մորը, որի բարի աչքերը շրջապատված էին կնճիռների ցանցով, իսկ շրթունքներն անձայն կրկնում էին ամենօրյա հոգսերի անվերջանալի շարանը։ Աղջիկը կարող էր մտածել միայն, թե որքան հրապուրիչ է շրջապատը, և նա ցանկանում էր, որ իրեն էլ մի քիչ բաժին ընկնի այդ փայլից և ուրախությունից։

Ժամը հինգն անց կեսին ավագ սպասուհին, մորն ու աղջկան մտաբերելով, եկավ նրանց արձակելու։ Սանդուղքը մաքրելն ավարտել էին։ Նրանք նրանից բաժանվեցին թեթևացած շունչ առնելով և դույլերն ու լաթերն իրենց տեղը դնելով՝ շտապեցին տուն, ըստ որում, մայրը շատ գոհ էր, որ վերջապես աշխատանք է գտել։

Նրանք քայլում էին դեղեցիկ, խոշոր շենքերի մոտով,

ն Ջեննին նորից զգում էր այն աղոտ հուզմունքը, որ արթնացրել էր նրա մեջ հյուրանոցում իր ամբողջ տեսածի նորությունն ու անսովորությունը։

— Ի՞նչ լավ է հարուստ լինել, չէ՞,— հարցրեց նա։

— Այո,— արձագանքեց մայրը, մտածելով հիվանդ Վերոնիկայի մասին։

— Դու տեսա՞ր, ինչ մեծ ճաշարան ունեն նրանք այնտեղ։

— Այո։

Այժմ նրանք քայլում էին ցածրիկ տների մոտով, նրանց ոտքերի տակ անկյանք խշխշում էին աշնանային տերևները։

— Ի՞նչ լավ կլիներ, որ մենք հարուստ լինեինք,— համարյա ինքն իրեն մրմնջում էր Ջեննին։

— Չգիտեմ ինչ անեմ,— ծանր հառաչանքով ասաց մայրը։— Տանը, երևի, ուտելու ոչինչ չկա։

— Արի մի անգամ էլ գնանք միստր Բաումենի մոտ,— աշխույժ կարեկցությամբ արձագանքեց Ջեննին, որին հուզել էր մոր ձայնի մեջ հնչող անհուսալիության նոտան։

— Կարծում ես նա էլի՞ կհավատա մեզ։

— Մենք նրան կասենք, որ աշխատանք ենք գտել։ Ես ինքս կասեմ։

— Լավ,— հոգնած համաձայնեց մայրը։

Տուն հասնելուն դեռ երկու փողոց էլ մնացել էր, երբ նրանք մտան նպարեղենի աղոտ լուսավորված փոքրիկ խանութը։ Միսիս Գերհարդն ուզում էր խոսել, բայց Ջեննին նրա առաջն ընկավ։

— Դուք մեզ պարտքով հաց ու մի քիչ ճարպ չե՞ք տա։ «Կոլումբուս-Հաուզ»-ում մենք աշխատանք ենք գտել և շաբաթ օրն անպատճառ կվճարենք ձեզ։

— Այո, ավելացրեց միսիս Գերհարդը,— հիմա ես աշխատանք ունեմ։

Նրանք Բաումենի մշտական գնորդներն էին դեռ այն ժամանակ, երբ չէին սկսել բոլոր ձախորդություններն ու

հիվանդությունները, և խանութպանը գիտեր, որ նրանք ճիշտ են ասում։

— Իսկ դուք վաղո՞ւց եք աշխատում այնտեղ,— հարցրեց նա։

— Այսօր առաջին օրն է։

— Դուք ինձ ճանաչում եք, միսիս Գերհարդ,— ասաց նա։— Ես չէի ուզի ձեզ մերժել։ Միստր Գերհարդը հուսալի մարդ է, բայց չէ՞ ես էլ հարուստ չեմ։ Հիմա դժվար ժամանակներ են,— ավելացրեց նա,— իսկ ես ընտանիք ունեմ։

— Այո, հասկանում եմ,— կամացուկ ասաց միսիս Գերհարդը։

Նա անհանգիստ տրորում էր հնամաշ շալի տակ թաքցրած աշխատանքից կոշտացած ու կարմրած ձեռքերը։ Ջեննին լուռ ու լարված կանգնել էր նրա կողքին։

— Լավ,— վերջապես ասաց Բաումենը։— Այս անգամ թող այդպես լինի, էլի պարտքով կտամ։ Շաբաթ օրը կվճարեք, որքան կկարողանաք։

Նա հաց ու ճարպ փաթաթեց նրանց համար և փաթեթը մեկնելով Ջեննիին, քմծիծաղով ասաց.

— Երբ դուք նորից փող ունենաք, երևի կսկսեք՝ որևէ մի ուրիշ տեղ գնումներ անել։

— Ճիշտ չէ,— առարկեց միսիս Գերհարդը,— դուք հո գիտեք, որ այդպես չէ։

Բայց նա այնքան շատ էր հոգնած, որ սիրտ չուներ երկար բացատրությունների մեջ մտնելու խանութպանի հետ։

Նրանք փողոցի անկյունով թեքվեցին և սկսեցին քայլել խղճուկ տնակներով մռայլ փողոցի միջով։

— Տեսնես երեխաները ածուխ ճարե՞լ են,— հոգնած ասաց մայրը, երբ տուն հասնելուն մի քանի քայլ էր մնացել։

— Մի հուզվիր,— ասաց Ջեննին։— Եթե ճարած չլինեն, ես կգնամ ու կբերեմ։

Երբ մայրը ներս մտնելով հարցրեց ածուխի մասին, Ջորջը, դեռ բարևն էլ չառած, վրա տվեց.

— Մի մարդ եկավ խռիկ տվեց մեզ, բայց ես էլի կարողացա մի քիչ բերել։ Բաց վագոնից էի ցած թափել,— ավելացրեց նա։

Միսիս Գերհարդը ժպտաց, իսկ Ջեննին բարձր ծիծաղեց։

— Իսկ ինչպե՞ս է Վերոնիկան,— հարցրեց նա։

— Կարծես քնած է,— ասաց հայրը։— Ժամը հինգին ես նորից դեղ եմ տվել նրան։

Աղքատիկ ընթրիքը պատրաստելուց հետո մայրը նստեց հիվանդ աղջկա անկողնի մոտ, պատրաստվելով ամեն օրվա պես արթուն մնալ ամբողջ գիշերը։

Ընթրիքի ժամանակ Սերաստյանը մի գործնական առաջարկություն արեց, որին բոլորը հարկ եղած ուշադրությամբ վերաբերվեցին, որովհետև նա գործնական մարդ էր և կենսական գործերում մյուսներից ավելի փորձված։ Սերաստյանը եղած-չեղած՝ վագոնավերանորոգման արհեստանոցում վարպետի օգնական էր և ոչ մի կրթություն չէր ստացել, որովհետև եկեղեցական դպրոցում նրան սովորեցրել էին միայն լութերական դավանանքի դոգմաները, որոնք, լավ դեպք, ամենևին դուր չէին գալիս նրան, բայց դրա փոխարեն նա համակված էր զուտ ամերիկյան ավյունով ու եռանդով։ Բարձրահասակ, ատլետիկ կազմվածքով և իր տարիքի համեմատ շատ ամրապինդ այդ պատանին տիպիկ քաղաքացի տղա էր։ Նա արդեն ուներ իր կենսափիլիսոփայությունը. եթե ուզում ես հաջողության հասնել, ուշքդ գլխիդ պահիր, իսկ դրա համար հարկավոր է մտերմանալ կամ գոնե ձևացնել, թե մտերիմ ես նրանց հետ, ովքեր առաջին տեղերն են գրավում այս աշխարհում, որտեղ արտաքին, ցուցադրական փայլն ամեն ինչից վեր է։

Ահա թե ինչու Բասսը սիրում էր թրև գալ «Կոլումբուս-Հաուզի» մոտերքը։ Նրան թվում էր, թե այդ հյուրանոցը այս աշխարհի բոլոր հզորների կենտրոնակետն է։ Երբ նրան հաջողվեց մի կարգին կոստյումի փող հավաքել, սկսեց երե-

կոնները քաղաքի կենտրոնը գնալ և ընկերների հետ ժամերով կանգնում էր հյուրանոցի մուտքի առաջ։ Նա կրունկներն էր շրխկացնում, ծխում էր դույզը հինգ ցենտանոց սիգարներ և կոտրատվելով ու անհոգ տեսքով աղջիկներին էր նայում։ Այդտեղ լինում էին ուրիշ երիտասարդներ էլ՝ քաղաքի պճնամոլ թափառաշրջիկները, որոնք հյուրանոց էին մտնում սափրվելու կամ մի բաժակ վիսկի խմելու։ Բասսը հիանում էր նրանցով և ձգտում էր ընդօրինակել նրանց։ Մարդուն այստեղ գնահատում էին նախ և առաջ ըստ հագուստի։ Եթե մարդիկ լավ են հագնված, մատանիներ ու քորոցներ են կրում, ինչ էլ որ անեն՝ լավ է։ Բասսն ուզում էր նմանվել նրանց, վարվել նրանց պես, և փուչ ու անիմաստ ժամանակ անցկացնելու տեսակետից նրա փորձն արագ ընդարձակվում էր։

— Ավելի լավ չի՞ լինի, եթե դու լվացք վերցնես հյուրանոցում իջևանողներից,— ասաց նա Ջեննիին, հյուրանոցի տեսքերի մասին նրա պատմությունը լսելուց հետո։— Դա ատ ավելի լավ գործ է, քան սանդուղքը լվանալը։

— Իսկ ինչպե՞ս կարելի է անել այդ,— հարցրեց աղջիկը։

— Շատ հասարակ, դիմիր կլերկին։

Այս խորհուրդը Ջեննիին շատ խելամիտ թվաց։

— Միայն թե՝ տես, եթե հյուրանոցի մոտ ինձ հանդիպես, հետս չխոսես,— նախազգուշացրեց նա քրոջը, երբ Էրկուսով մնակ էին մնացել։ Ցույց չտաս, որ ինձ ճանաչում ես։

— Ինչո՞ւ,— միամտորեն հարցրեց Ջեննին։

— Դու շատ լավ գիտես, թե ինչու,— պատասխանեց եղբայրը. նա շատ անգամ էր ասել, որ նրանք բոլորն էլ խիստ ողորմելի տեսք ունեն, և այդպիսի հարազատներ ունենալով մարդ խայտառակվելուց չի ազատվի։— Եթե հանդիպենք, սուսուփուս մոտովս անցիր ու պրծավ-գնաց։ Հասկացա՞ր։

— Լավ,— հեզորեն պատասխանեց Ջեննին։ Թեև եղ-

բայրն ընդամենը մեկ տարով էր մեծ իրենից, աղջիկը միշտ ենթարկվում էր նրան։

Մյուս օրը հյուրանոց գնալիս Ջեննին մոր հետ խոսեց նրանց առաջարկության մասին։

— Բասսն ասում է, որ մենք կարող ենք հյուրանոցում իջևանած մարդկանցից լվացք վերցնել։

Միսիս Գերհարդը, որն ամբողջ գիշերը տանջալից մտածել էր, թե ինչպես անի, որ բացի հավաքարարության համար ստանալիք շաբաթական երեք դոլլարից էլի մի բան վաստակի, Բասսի ասածին հավանություն տվեց։

— Այդ ճիշտ է,— ասաց նա։— Ես կլերկին կհարցնեմ։

Սակայն, երբ նրանք հյուրանոց հասան, հարմար առիթը միանգամից չներկայացավ։ Հետո բախտը նրանց ժպտաց. ավագ սպասուհին պատվիրեց հատակը լվանալ կլերկի սեղանի առաջ։ Այս պատկառատես պաշտոնյան ակնհայտորեն բարյացակամ էր նրանց նկատմամբ. այդ բարեսիրտ, հոգսերի տակ կքած կինը և լավիկ աղջիկը նրան դուր էին գալիս։ Եվ նա բարեհաճությամբ լսեց միսիս Գերհարդին, երբ սա համարձակվեց հարց տալ նրան լվացքի մասին, որն ամբողջ օրը դուրս չէր գալիս իր գլխից։

— Դուցե ձեր հյուրանոցում ապրողներից որևէ մեկը կհամաձայնի՞ սպիտակեղեն տալ ինձ լվանալու։ Ես այնքան շնորհակալ կլինեի...

Կլերկը նայեց նրան և այդ անուրախ դեմքին նորից կորդաց անելանելի կարիքը։

— Տեսնենք,— պատասխանեց նա և իսկույն միտքը եկան սենատոր Բրենդերն ու գեներալ Հոպկինսը։ Նրանք երկուսն էլ կարեկից մարդիկ են և սիրով կօգնեն խեղճ կնոջը։— Բարձրացեք վերև, սենատոր Բրենդերի մոտ։ Քսաներկուերորդ համարը։ Ահա,— կլերկը մի թղթի վրա գրեց համարը,— գնացեք և ասացեք, որ ես եմ ուղարկել ձեզ։

Միսիս Գերհարդը դողդոջուն ձեռքով վերցրեց թուղթը։ Նրա աչքերը լի էին շնորհակալությամբ, որ նա խոսքերով արտահայտել չէր կարող։

— Ոչինչ, ոչինչ,— ասաց կլերկը, նկատելով նրա հուզ-

մունքը։— Իսկույն գնացեք։ Հենց հիմա նա իր համարումն է։

Միսիս Գերհարդն զգուշությամբ ու հարգանքով բախեց քսաներկուերորդ համարի դուռը։ Ջեննին լուռ կանգնած էր նրա կողքին։

Մի րոպե անց դուռը բացվեց, և պայծառ լուսավորված սենյակի շեմքում երևաց սենատորը։ Նա մի գեղեցիկ սմոկինգ ուներ հագին և ավելի երիտասարդ էր թվում, քան երևացել էր առաջին հանդիպման ժամանակ։

— Ինչո՞վ կարող եմ ծառայել, տիկին,— հարցրեց նա միսիս Գերհարդին, իսկույն ճանաչելով երկուսին էլ։

Մայրը բոլորովին չշփոթվելով, միանգամից պատասխանել չկարողացավ։

— Մենք ուզում էինք հարցնել... գուցե դուք լվանալու սպիտակեղե՞ն կունենաք։

— Լվանալո՞ւ,— հարցրեց սենատորը զարմանալի հնչեղ ձայնով։— Լվանալու սպիտակեղե՞ն։ Ներս եկեք։ Հիմա կնայենք։

Նա հարգալից մի կողմ քաշվեց մորն ու աղջկանը ներս թողնելով և դուռը ծածկեց։

— Հիմա կնայենք,— կրկնեց նա իրար ետևից դուրս քաշելով ընկուզենու տախտակից պատրաստված ահագին զգեստապահարանի արկղները։

Ջեննին հետաքրքրությամբ դիտում էր սենյակը։ Դեռ երբեք նա այդքան շատ արդուզարդի գեղեցիկ իրեր չէր տեսել, որքան այստեղ, բուխարու և փոքրիկ սեղանի վրա շարված։ Փափուկ բազկաթոռ և կողքին՝ կանաչ լուսամփոփով լամպ, հատակին՝ հաստ, փափուկ գորգ, մի քանի մանրիկ գորգեր՝ փռված այստեղ-այնտեղ, և ամեն ինչի մեջ զգացվում էր հարստություն ու շքեղություն։

— Նստեցեք, ահա աթոռներ,— սիրալիր ասաց սենատորը՝ հարևան սենյակը գնալով։

Վեհերոտ մեծարանքով համակված, մայրն ու աղջիկը քաղաքավարությամբ կանգնած մնացին, բայց սենատորը որոնումները վերջացնելով, կրկնեց իր հրավերը։ Մայր ու աղջիկ շփոթված նստեցին անհարմար դիրքով։

— Սա ձեր դո՞ստրն է,— հարցրեց նա միսիս Գերհարդին, ժպիտով նայելով Ջեննիին։

— Այո, սըր,— պատասխանեց մայրը։— Սա իմ ավագ դուստրն է։

— Իսկ ձեր ամուսինը կենդանի՞ է,— շարունակեց հարցեր տալ նա։— Ինչպե՞ս է ձեր ազգանունը։ Որտե՞ղ եք ապրում։

Միսիս Գերհարդը խոնարհությամբ պատասխանում էր բոլոր հարցերին։

— Քանի՞ երեխա ունեք,— շարունակեց սենատորը։

— Վեց,— պատասխանեց միսիս Գերհարդը։

— Փոքր ընտանիք չէ, ինչ ասել կուզի։ Դուք, անտարակույս, կատարել եք ձեր պարտքը երկրի հանդեպ։

— Այո, սըր,— պատասխանեց միսիս Գերհարդը, նրա ուշադրությունից զգացված։

— Ուրեմն ասում եք սա ձեր ավագ դո՞ստրն է։

— Այո, սըր։

— Իսկ ինչո՞վ է զբաղվում ձեր ամուսինը։

— Նա ապակի փչող բանվոր է։ Բայց հիվանդ պառկած է։

Նրանք զրուցում էին, իսկ Ջեննին ականջ էր դնում, և նրա խոշոր, կապուտակ աչքերը նայում էին զարմացած ու զննաբար։ Ամեն անգամ, երբ սենատորը նայում էր Ջեննիին, հանդիպում էր այնպիսի պարզասիրտ ու անմեղ հայացքի, այնպիսի մի սքանչելի ժպտի, որ նրա համար դժվար էր լինում հայացքը հեռացնել աղջկանից։

— Այո,— կարեկցանքով ասաց նա,— շատ տխուր բան է այդ ամենը։— Այստեղ մի քիչ սպիտակեղեն է հավաքվել, լվացեք, խնդրում եմ։ Իսկ մյուս շաբաթ, երևի, էլի կլինի։

Նա սպիտակեղենը դարսեց մի փոքրիկ, գեղեցիկ ասեղնագործված տոպրակի մեջ։

— Ո՞ր օրը բերենք,— հարցրեց միսիս Գերհարդը։

— Միևնույն է,— մտացրիվ պատասխանեց սենատորը։— Շաբաթվա որ օրը կամենաք։

Կինը համեստորեն շնորհակալություն հայտնեց և պատրաստվում էր գնալու։

— Այ ինչ,— ասաց սենատորը առաջ անցնելով և դուռը բացելով նրանց առջև,— բերեք երկուշաբթի օրը։

— Շատ լավ, սըր,— ասաց միսիս Գերհարդը։— Շնորհակալ ենք ձեզանից։

Նրանք գնացին, իսկ սենատորը նորից անցավ ընթերցանության, բայց, չգիտես ինչու, նրան համակել էր մի տարօրինակ ցրվածություն։

— Տխուր բան է,— ասաց նա գիրքը ծածկելով։— Այս մարդկանց մեջ մի ինչ-որ շատ հուզիչ բան կա։

Ջեննիի զարմանքով ու հիացմունքով համակված պատկերը չէր հեռանում սենյակից։

Իսկ միսիս Գերհարդն ու իր դուստրը նորից քայլում էին մռայլ ու մթին փողոցներով։ Անսպասելի հաջողությունը շատ էր քաջալերել նրանց։

— Ի՞նչ հիանալի սենյակ ունի նա, չէ՞,— շշնջաց Ջեննին։

— Այո,— պատասխանեց մայրը։— Նա սքանչելի մարդ է։

— Նա սենատոր է, չէ՞,— շարունակեց աղջիկը։

— Այո։

— Երևի հաճելի բան է նշանավոր մարդ լինելը,— կամացուկ ասաց աղջիկը։

ԳԼՈՒԽ II

Ջեննիի հոգեկան պատկերը— ինչպե՞ս նկարագրես այն։ Այդ խեղճ աղջիկը, որին կարիքն ստիպում էր օգնել սենատորից լվացք վերցնող իր մորը, կեղտոտ սպիտակեղենը բերել և մաքուրը տանել, ուներ մի հիանալի մեղմ բնավորություն, որի ամբողջ հմայքը դժվար է բառերով արտահայտել։ Լինում են այնպիսի հաղվագյուտ, յուրահատուկ բնավորության տեր մարդիկ, որոնք աշխարհ են գալիս չի-

մանալով ինչու և կյանքից հեռանում են այդպես էլ ոչինչ չհասկանալով նրանից։ Միշտ էլ, մինչև վերջին րոպեն, կյանքը նրանց պատկերանում է անսահման չքնաղ, հրաշքների մի իսկական աշխարհ, և եթե նրանք կարողանային միայն հիացմունքով շրջել աշխարհում, այն դրախտից պակաս չէր լինի նրանց համար։ Աչքերը բացելով, նրանք շուրջը տեսնում են մի կատարյալ աշխարհ, որն այնքա՜ն նրանց սրբտովն է, ծառեր, ծաղիկներ, հնչյունների ծով, գույների ծով։ Դա նրանց ամենաթանկագին ժառանգությունն է, նրանց լավագույն հարստությունը։ Եվ եթե ոչ ոք նրանց չկանգնեցնի ասելով. «Այս իմն է», նրանք կարող էին երջանկությունից շողալով անվերջ շրջել այս աշխարհում, երգելով մի երգ, որը երբևիցե կլսի ամբողջ աշխարհը։ Դա բարության երգն է։

Բայց այդպիսի մարդիկ իրական աշխարհի վանդակի մեջ սեղմված՝ համարյա միշտ էլ խորթ են աշխարհի համար։ Գոռոզության ու ագահության այս աշխարհը իդեալիստին ու երազողին խեթ է նայում։ Եթե երազողը նայի բարձրում սլացող ամպերին, նրան կկշտամբեն պարապսարապ մնալու համար։ Եթե նա ականջ է դնում քամու երգին, որը շոյում է նրա հոգին, այդ նույն ժամանակ շրջապատի մարդիկ շտապում են տիրանալ նրա ունեցվածքին։ Եթե ամբողջ այսպես կոչված՝ ո՛չ շնչավոր աշխարհը հափշտակում է նրան, հրապուրելով այնպիսի նուրբ ու թովիչ ձայներով, որ թվում է, թե դրանք չեն կարող կենդանի ու բանական չլինել, երազողը կործանվում է տարերքի հարվածների տակ։ Իրական աշխարհը միշտ էլ իր ագահ շանչերը մեկնում է այդպիսի մարդկանց վրա և տիրապետում նրանց։ Հենց այդպիսիներին է, որ կյանքը հնազանդ ստրուկներ է դարձնում։

Այդպիսին էր և Ջեննին այս պրոզայիկ աշխարհում։ Մանկությունից նրա ամեն մի քայլը եղել էր բարության և քնքշության թելադրանք։ Երբ Սեբաստիանն ընկնում էր ոռ մի տեղը վնասում, նա էր, որ վախն ու անհանգստությունը հաղթահարելով օգնում էր եղբորը վեր կենալ և բերում էր իր մոր մոտ։ Երբ Ջորջը տրտնջում էր, թե սոված է, Ջեննին

իր բաժին հացը տալիս էր նրան։ Ժամեր շարունակ նա օրորում էր իր փոքրիկ եղբայրներին և քույրերին, սիրագորով երգելով նրանց համար և միաժամանակ ինչ-որ բան երազելով։ Դեռ նոր էր քայլել սովորել, նա արդեն դարձավ մոր հավատարիմ օգնականը։ Լվացք էր անում, սենյակ մաքրում, եփում-թափում էր, խանութ էր վազում մի բան գնելու, փոքրիկներին էր պահում։ Դեռ երբեք ոչ ոք նրանից տրտունջի ոչ մի խոսք չէր լսել, թեև հաճախ էր խորհում իր դառն բախտի մասին։ Նա գիտեր, որ շատ աղջիկներ շատ ավելի ուրախերջանիկ կյանք են վարում, բայց մտքովն էլ չէր անցնում նախանձել նրանց։ Հաճախ թախծում էր դողտուկ, բայց և այնպես երգում էր իր երգերը։ Պարզ օրերին, երբ խոհանոցի լուսամուտից դուրս էր նայում, լայնարձակ կանաչ տարածությունները ձգում էին նրան։ Բնության գեղեցկությունը, նրա գծերն ու գույները, լույսն ու ստվերները հուզում էին աղջկան սքանչելի երգի նման։ Պատահում էր, նա Ջորջին ու մյուս երեխաներին տանում էր պնդուկենու թփուտը, մի գողտրիկ, ստվերախիտ անկյուն, որտեղ կարկաչուն առվակն էր քչքչում, իսկ հեռվում երևում էին լայնարձակ դաշտերը։ Նա չէր կարողանում բանաստեղծների պես բառերով արտահայտել այն ամենը, ինչ զգում էր, բայց նրա հոգին աշխույժ արձագանքում էր այդ ամբողջ գեղեցկությանը և հրճվում ամեն մի ձայնից, զեփյուռի ամեն մի շրշյունից։

Երբ հեռվից լսվում էր անտառային տատրակների՝ ամառվա այդ ոգիների մեղմ ու քնքուշ կչկչոցը, նա գլուխը խոնարհում ու ականջ էր դնում, և այդ քնքշագին հնչյունները արծաթե կաթիլների պես ուղիղ նրա սրտի մեջ էին ընկնում։

Երբ արեգակն ավելի թեժ էր տաքացնում և նոսր ստվերներն ու ոսկեփայլ շողերն ընկնում էին կանաչ խոտի վրա, Ջեննիի հիացմունքը սահման չէր ունենում, նա ձգտում էր այնտեղ, որտեղ ճառագայթներն ավելի պայծառ էին շողշողում, և նա կախարդվածի պես գնում էր ավելի ու ավելի հեռու, դեպի անտառի սրբազան թավուտը։

Նա կգում էր գույների ամբողջ հրապույրը։ Այն չքնաղա-

դեղ փայլփլոցը, որ մայրամուտի ժամին փովում է երկնքում, անսահման ուրախացնում ու հիացնում էր նրան։

— Ի՜նչ լավ կլինի լողալ այն ամպերի վրա,— մի անգամ մանկան նման ասաց նա։

Նա մի ճոճ էր գտել, որ բնությունն ինքն էր հյուսել վայրի վազերից, և այժմ ճոճվում էր նրա վրա Մարթայի ու Ջորջի հետ միասին։

— Այո, եթե այդպիսի մի մակույկ լինի,— ասաց Ջորջը։

Գլուխը ետ գցած Ջեննին նայում էր հեռավոր ամպին, որ ասես կարմիր կղզի լիներ արծաթափայլ ծովում։

— Ա՛յ թե մարդիկ ապրեին այդպիսի կղզո՜ւմ,— ասաց նա։

Մտովին նա արդեն այնտեղ էր և թեթև վազում էր օդային կածաններով։

— Տե՛ս, մեղո՜ւ,— ձայն տվեց Ջորջը, թռչող իշամեղուն ցույց տալով։

— Այո,— երազանքով արձագանքեց Ջեննին,— շտապում է իր տուն։

— Իսկ մի՞թե բոլորը տուն ունեն,— հարցրեց Մարթան։

— Համարյա բոլորը,— պատասխանեց Ջեննին։

— Թռչունները՞ն էլ,— հարցրեց Ջորջը։

— Այո,— ասաց Ջեննին, ամբողջ էությամբ ղղալով այդ մտքի պոեզիան։— Թռչուններն էլ տուն ունեն։

— Մեղունե՞րն էլ,— նորից հարցրեց Մարթան։

— Այո, մեղուներն էլ։

— Շնե՞րն էլ,— հարցրեց Ջորջը, ոչ հեռու ճանապարհին տեսնելով մի թափառող շուն։

— Դե իհարկե,— ասաց Ջեննին։— Դու չգիտե՞ս, որ շները տուն ունեն։

— Իսկ մոծակնե՞րը,— շարունակեց հարցնել տղան, նկատելով թափանցիկ աղջամուղջում ճախրող մոծակների մի ամբողջ պարս։

— Այո,— ասաց քույրը, կիսով չափ ինքն էլ հավատալով դրան։— Լսեցեք։

— Օհո՜,— թերահավատ գոչեց Ջորջը։— Կուզեի տեսնել՝ ինչպիսի տներ ունեն նրանք։

— Լսեցե՛ք,— հաստատորեն կրկնեց Ջեննին և, ձեռքը բարձրացնելով, լռության կոչեց։

Այդ այն խաղաղ ժամն էր, երբ երեկոյան զանգը օրհնության նման հնչում է մարող օրվա վրա։ Հեռավորությունից մեղմացած հնչյունները հանդարտ լողում էին երեկոյան օդում, և բնությունն ինքը ասես լռել ու ականջ էր դնում Ջեննիի հետ միասին։ Նրանից մի քանի քայլ հեռու խոտերի մեջ ոստոստում էր կարմրակուրծք շիկահավը։ Մեղուն բզզում էր, ինչ-որ տեղ զնգում էր զանգակը, ճյուղերի կասկածելի ճրթճրթոցը մատնում էր սկյուռի մոտենալը պնդուկներին։ Մոռանալով ձեռքը ցած թողնել, Ջեննին ականջ էր դնում, մինչև որ երկարաձիգ զնգոցը մարեց օդում և նրա սիրտը լցվեց։ Եվ այն ժամանակ նա ոտքի կանգնեց։

— Օ՜,— դուրս թռավ նրա կրծքից, և պոետական ցընծության պոռթկումով նա ամուր իրար սեղմեց ձեռքերը։ Նրա աչքերը լցվել էին արցունքով։ Նրա զգացմունքները հուզող հիասքանչ ծովը զարկում էր ափերին։ Այդպես էր Ջեննիի հոգին։

ԳԼՈՒԽ III

Սենատոր Ջորջ Սիլվեստր Բրենդերը արտասովոր կերտվածքի մարդ էր։ Քաղաքական գործարարի ճկունությունը նրա մեջ յուրահատուկ ձևով զուգակցվում էր ժողովրդական ներկայացուցչի զգայնության հետ։ Լինելով հարավային Օհայոյի ծնունդ, նա այնտեղ էլ մեծացել ու կրթություն էր ստացել, եթե չհաշվենք այն երկու տարին, երբ Նյու-Յորքի Կոլումբյան համալսարանում իրավունք էր ուսումնասիրում։ Քաղաքացիական ու քրեական իրավունքը նա թերևս ավելի վատ չգիտեր իր նահանգի ամեն մի բնակչից, բայց երբեք դրանով չէր զբաղվում այնպիսի ջանասիրությամբ, որ անհրաժեշտ է փաստաբանական ասպարեզում աչքի ընկնող

հաջողությունների հասնելու համար։ Նա վատ չէր վաստակում և շատ անգամ նրան փայլուն առիթ էր ներկայացել շատ ավելին վաստակելու, եթե ցանկանար գործարքի մեջ մտնել իր խղճի հետ, բայց նա դրան ընդունակ չէր։ Եվ այնուամենայնիվ, չնայած իր ամբողջ ազնվությանն ու անկաշառությանը, նա երբեմն անկարող էր լինում դիմադրել իր որևէ բարեկամի խնդրանքին։ Շատ ժամանակ չէր անցել, երբ պրեզիդենտական վերջին ընտրություններին նա պաշտպանում էր այն մարդու թեկնածությունը, որը— և այս Բրենդերին լավ հայտնի էր,— ամենևին էլ չուներ այն հատկությունները, որ անհրաժեշտ են կառավարող մարդուն։

Ճիշտ այդպես էլ նա էր մեղավոր, որ մի քանի անգամ պետական պաշտոններ տրվեցին կասկածելի, իսկ երկու-երեք դեպքում՝ բացարձակորեն ո՛չ գովելի մարդկանց։ Երբ խղճի խայթն սկսում էր տանջել նրան, նա ինքն իրեն հանգստացնում էր իր սիրած ասացվածքով. «Քի՞չ բան է լինում կյանքում»։ Երբեմն նա երկար ժամանակ մեն-մենակ նստում էր իր բազկաթոռում և սուզվում անուրախ մտորումների մեջ և ապա, վեր կենալով, մեղավորի ժպիտով կրկնում էր այդ խոսքերը։ Նրա խիղճն ամենևին էլ չէր լռում, իսկ սիրտը, համենայն դեպս, զգայնորեն արձագանքում էր ամեն ինչի։

Այդ մարդը, որ երեք անգամ նահանգի կոնգրեսում էր ընտրվել այն օկրուգից, որի կազմի մեջ մտնում էր Կոլումբուսը, և երկու անգամ էլ ընտրվել էր Միացյալ Նահանգների սենատում, դեռ երբեք ամուսնացած չէր եղել։ Քահել ժամանակ նա լրջորեն սիրահարված էր, և մեղքն իրենը չէր, որ դա ամուսնությամբ չվերջացավ։ Նրա սրտի տիրուհին չուզեց սպասել, իսկ նա այդ ժամանակ դեռ երկար պիտի աշխատեր այնպիսի դիրք գրավելու համար, որը նրան հնարավորություն տար ընտանիք պահել։

Լինելով բարձրահասակ, բարեկազմ ու թիկնեղ, նա հենց միայն իր տեսքով հարգանք էր ներշնչում։ Նա ունեցել էր կորուստի ապրումներ, ճաշակել էր բախտի հարվածները, նրա մեջ կար այնպիսի մի բան, որ աշխույժ երևակայություն ունեցող մարդկանց մեջ համակրանք էր հարուցում։

Բարի ու սիրալիր մարդու համբավ ուներ նա, իսկ սենատի նրա պաշտոնակիցները գանում էին, որ նա երկնքից աստղեր չի ցած բերում, բայց շատ դուրեկան մարդ է։

Այս անգամ սենատոր Բրենդերի Կոլումբուսում լինելու պատճառն այն էր, որ անհրաժեշտ էր ամրապնդել նրա խախուտացած քաղաքական հեղինակությունը։ Կոնգրեսի վերջին ընտրություններում նրա կուսակցությունը հաջողություն չէր ունեցել։ Նա ինքը իր կողմնակից բավականաչափ ձայներ ուներ և կարող էր նորից ընտրվել, բայց այդ ձայներն իր կողմը պահելու համար քիչ քաղաքական ճկունություն չէր պահանջվում։ Չէ՞ որ բացի նրանից, էլի կան փառասերներ։ Կգտնվեն մի կես դյուժինի չափ հնարավոր թեկնածուներ, և նրանցից ամեն մեկն էլ ուրախ կլինի նրա տեղը գրավելու։ Նա շատ լավ էր հասկանում, թե հիմա ինչ է պահանջվում իրենից։ Հակառակորդների համար այնքան էլ հեշտ չի լինի հաղթել իրեն, բայց եթե նույնիսկ այդ տեղի ունենա, նա մտածում էր, որ պրեզիդենտը, իհարկե, չի հրաժարվի արտատահմանում որևէ դիվանագիտական պաշտոն տալ իրեն։

Այո, սենատոր Բրենդերին լիովին կարելի է հաջողակ մարդ համարել, բայց, չնայած այս ամենին, նա զգում էր, իր կյանքում ինչ-որ մի բան պակասում է։ Նա դեռ չէր արել այն ամենը, ինչ ցանկանում էր։ Ահա նա հիսուներկու տարեկան է, նա պատվավոր, հարգարժան ու ականավոր գործչի անբասիր անուն ունի, բայց մենակ է։ Ակամայից նա նորից էր մտածում, որ իր կողքին չկա մեկը, որի համար ինքը թանկ լինի։ Սեփական սենյակը երբեմն նրան զարմանալի դատարկ էր թվում, և նա զզվանք էր զգում ինքն իր նկատմամբ։

«Հիսուն տարեկա՞ն,— հաճախ մտածում էր նա։— Եվ մենակ եմ, բոլորովին մենակ...»։

Այդ շաբաթ օրվա երեկոյան, երբ նստած էր իր սենյակում, դուռը կամացուկ բախեցին։ Այդ ժամանակ նա խորհում էր, թե աշխարհում ինչպես ամեն ինչ անցողական է, և՛ կյանքը, և՛ փառքը, և այս տեսակետից որքա՞ն անպտուղ է իր քաղաքական գործունեությունը։

«Որքա՞ն ենք մենք չարչարվում, որպեսզի մի որևէ դիրք գրավենք,— մտածում էր նա։— Եվ կանցնի մի քանի տարի, ու այդ ամենը որքա՞ն քիչ նշանակություն կունենա ինձ համար»։

Նա վեր կացավ, դուռը բաց արեց և տեսավ Ջեննիին։ Նա մորն առաջարկել էր հենց հիմա տանել լվացած սպիտակեղենը, չսպասելով երկուշաբթի օրվան, որպեսզի սենատորին զարմացնեն իրենց աշխատանքի արագությամբ։

— Ներս մտեք,— ասաց Բրենդերը և, ինչպես առաջին անգամ, սիրալիր առաջ թողեց նրան։

Ջեննին ներս մտավ, գովասանքի սպասելով այդպես շուտ վերջացնելու համար, բայց սենատորը նույնիսկ չնկատեց այդ։

— Է՛, ինչպե՞ս եք, սիրունիկ օրիորդ,— հարցրեց նա։

— Շատ լավ,— պատասխանեց Ջեննին։— Ես ու մայրս որոշեցինք չսպասել երկուշաբթի օրվան, այսօր բերել սպիտակեղենը։

— Օ՜, դա կատարելապես միևնույն է,— անփութորեն ասաց Բրենդերը։— Դրեք այն աթոռին։

Ջեննին ուզում էր դուրս գնալ, չմտածելով նույնիսկ, որ իրեն չեն վճարել, բայց սենատորը պահեց նրան։

— Ինչպե՞ս է ձեր մայրիկը,— սիրալիր հարցրեց նա։

— Լավ է,— անտարբեր պատասխանեց Ջեննին։

— Իսկ ձեր փոքրի՞կը։ Լավանո՞ւմ է։

— Բժիշկն ասում է, որ դեպի լավն է գնում,— պատասխանեց Ջեննին։

— Նստեցեք,— առաջարկեց սենատորը։— Ես ուզում եմ մի քիչ զրուցել ձեզ հետ։

Աղջիկը նստեց կողքին դրված աթոռին։ Սենատորը մի թերթ հազալով շարունակեց.

— Իսկ ինչո՞վ է հիվանդ ձեր քույրը։

— Կարմրուկ է,— ասաց Ջեննին։— Մի ժամանակ մենք նույնիսկ մտածում էինք, թե չի դիմանա։

Աղջկան լսելիս սենատորը սևեռուն նայում էր նրա երեսին, և այդ երեսը արտակարգ հուզիչ էր թվում նրան։ Նա

այնքա՞ն աղքատիկ է հագնված, և այնպե՞ս է հիանում սենատորի բարձր դիրքով։ Սենատորն ամոթ զգաց իր հարստության և այն շքեղության համար, որի մեջ ապրում էր ինքը։ Ի՞նչ ասել կուզի. բախտը շատ է բարձրացրել իրեն։

— Ուրախ եմ, որ լավանում է,— ասաց նա։— Իսկ քանի՞ տարեկան է ձեր հայրը։

— Հիսունյոթ։

— Նա լավանո՞ւմ է։

— Այո, սըր, նա արդեն անկողնից վեր է կենում, միայն թե դեռ տանից դուրս չի գնում։

— Կարծեմ, ձեր մայրիկն ասում էր, որ նա ապակի փըչող բանվո՞ր է։

— Այո, սըր։

Բրենդերը լավ գիտեր, որ այդ քաղաքում ապակու արդյունաբերությունը ճգնաժամ է ապրում։ Դա վերջին քաղաքական պայքարի արդյունքներից մեկն էր։ Երևի Գերհարդների դրությունն իսկապես շատ ծանր է։

— Ձեր կրտսեր եղբայրներն ու քույրերը բոլորն էլ դպրո՞ց են հաճախում։

— Այո, սըր,— կմկմալով պատասխանեց Ջեննին։ Նա ամաչում էր ասել, որ եղբայրներից մեկը թողել է ուսումը, որովհետև կոշիկները բոլորովին քրքրվել են։ Եվ միաժամանակ տանջվում էր, որ ստիպված եղավ ստել։

Սենատորը մի պահ մտքի մեջ ընկավ։ Հետո, տեսնելով, որ այլևս աղջկան պահելու պատճառ չունի, վեր կացավ, մոտեցավ նրան։ Գրպանից մի քանի թղթադրամ հանելով, նա մեկը մեկնեց Ջեննիին։

— Ահա, վերցրեք,— ասաց նա։— Տվեք ձեր մայրիկին, թող տնօրինի ինչպես ցանկանում է։

Ջեննին շփոթմունքով փողը վերցրեց։ Նրա մտքովն էլ չանցավ տեսնել, թե որքան են տվել իրեն։ Ջեննին իրեն կորցրել էր այդքան նշանավոր մարդու ներկայությամբ, նրա այդքան շքեղ բնակարանում, և լավ էլ չէր հասկանում, թե ինչ է անում։

— Շնորհակալ եմ,— ասաց նա։— Դուք օր կնշանակե՞ք, թե երբ գանք սպիտակեղեն տանելու։

— Այո, այո,— պատասխանեց Բրենդերը։— Եկեք երկուշաբթի օրերը։ Երկուշաբթի երեկոյան։

Աղջիկը դուրս գնաց, և սենատորը մտքի մեջ ընկած՝ դուռը ծածկեց նրա ետևից։ Անտարակույս աղքատությունն ու գեղեցկությունը այնպիսի զուգակցություն է, որի նկատմամբ դժվար է անտարբեր մնալ։ Նա նստեց բազկաթոռին և անձնատուր եղավ դուրեկան մտքերի, որ հարուցել էր նրա մեջ Ջեննիի այցելությունը։ Ինչո՞ւ ինքը չօգնի այդ ընտանիքին։

— Հարկավոր է իմանալ, որտեղ են ապրում նրանք,— վերջապես վճռեց Բրենդերը։

Հետևյալ շաբաթների ընթացքում Ջեննին կանոնավորապես գալիս էր սպիտակեղենը տանելու։ Սենատոր Բրենդերն ավելի ու ավելի շատ էր հետաքրքրվում նրանով և շուտով կարողացավ հաղթահարել այն երկչոտությունն ու անհարմարության զգացմունքը, որ համակում էր աղջկան նրա ներկայությամբ։ Դրան առանձնապես օգնեց այն, որ սենատորն սկսեց նրան պարզապես անունով կոչել։ Այդ սկսվեց Ջեննիի երրորդ այցելությունից, և հետո, համարյա անգիտակցաբար, նա սկսեց ավելի հաճախ աղջկան այդպես կոչել։

Դժվար կարելի էր ասել, թե այդ նրա մոտ հայրաբար էր ստացվում. որևէ մեկի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը նրան շատ քիչ էր հատուկ։ Բայց այդ աղջկա հետ խոսելիս նա իրեն մի տեսակ առանձնապես ջահել էր զգում և հաճախ ինքն իրեն հարց էր տալիս՝ մի՞թե նա չի նկատի և չի գնահատի, որ իր մեջ դեռ այդքան պատանեկան ավյուն կա։

Իսկ Ջեննիին բոլորովին նվաճել էին այդ մարդուն շրջապատող շուքն ու շքեղությունը և, թեև նա այդ չէր գիտակցում, հենց ինքը՝ Բրենդերը։ Այդպիսի հմայիչ մարդու նա դեռ երբեք չէր հանդիպել։ Ամեն ինչ, որ պատկանում էր նրան, սքանչելի էր, ամեն ինչ, որ անում էր նա, գերազնիվ էր, նշանակալից, հարգարժան։ Հայտնի չէ որտեղից, գուցե իր ինչոր գերմանացի նախնիներից, Ջեննին այդ ամենը հասկա-

նալու և գնահատելու ընդունակություն էր ժառանգել։ Ապրել հարկավոր է հենց այնպես, ինչպես ապրում է այդ մարդը։ Ջեննիին առանձնապես դուր էր գալիս նրա վեհանձնությունը։

Սենատորով հիանալու զգացմունքը մասամբ Ջեննիին էր հաղորդվել իր մորից, որի մեջ զգացմունքի ձայնը միշտ ավելի բարձր էր հնչում, քան բանականության ձայնը։ Երբ Ջեննին տասը դոլլար բերեց, միսիս Գերհարդն ուրախությունից գլուխը կորցրեց։

— Ես միայն փողոցում տեսա, որ այսքան փող է տրվել,— ասաց Ջեննին։— Նա ինձ ասաց, որ քեզ տամ։

Միսիս Գերհարդը թղթադրամը վերցրեց, խնամքով բռնեց բռի մեջ և պարզ պատկերացրեց սենատորին, նրա բարեկազմ իրանը և սիրալիր վերաբերմունքը։

— Ի՞նչ մարդ է դա,— ասաց նա։— Ի՞նչ բարի սիրտ ունի։

Այդ երեկոյան և մյուս օրը միսիս Գերհարդը մի գլուխ խոսում էր այդ հեքիաթային հարուստի մասին, թե որքան նա, անկասկած, բարեսիրտ ու մեծահոգի մարդ է։ Երբ բանը հասավ լվացքին, նա Բրենդերի սպիտակեղենը լվանում էր ամբողջ եռանդով, մտածելով, թե ինչքան էլ ջանա, էլի քիչ է նրա համար։ Ամուսինը դրա մասին ոչինչ չգիտեր։ Նա այնպիսի խիստ բնավորություն ուներ, որ ինչքան էլ կարիքը մեծ լիներ, կնոջ համար հեշտ չէր լինի համոզել նրան՝ չվաստակած փող վերցնել։ Դրա համար էլ նա ամուսնուն ոչինչ չասաց, այլ ուղղակի սկսեց այդ փողով հաց ու միս գնել, բայց քիչ-քիչ, որպեսզի անսպասելի հարստությունն աննկատելի մնա։

Սենատորի նկատմամբ մոր վերաբերմունքը փոխանցվեց նաև Ջեննիին, և նա անսահման երախտագիտությամբ սկսեց նրա հետ խոսել ավելի պարզ ու անբռնազբոսիկ։ Նրանց միջև այնպիսի լավ հարաբերություն ստեղծվեց, որ Բրենդերը նկատելով, թե իր արդուզարդի սեղանին դրված լուսանկարի փոքրիկ կաշվե շրջանակը որքան շատ դուր եկավ Ջեննիին, այն ընծայեց աղջկան։ Ամեն անգամ, երբ Ջեննին

գալիս էր, սենատորը մի որևէ պատրվակով նրան երկար պահում էր իր մոտ և շուտով հասկացավ, որ այդ դեռատի, հեզահամբույր աղջկան մինչև հոգու խորքը վիրավորում է այն կարիքը, որի մեջ ապրում է նա, և որ այդ աղջիկը ամաչում է իր աղքատությունից։ Այս անկեղծորեն հիացնում էր սենատորին, և նա աղջկա ողորմելի հագուստին ու մաշված կոշիկներին նայելով ինքն իրեն հարց էր տալիս, թե ինչպես անի, որ օգնի նրան՝ առանց վիրավորանք պատճառելու։

Երբեմն նա մտածում էր մի երեկո աղջկա ետևից գնալ և անձամբ տեսնել, թե ինչ պայմաններում է ապրում նրանց ընտանիքը։ Բայց չէ՞ որ ինքը, այսպես թե այնպես, Միացյալ Նահանգների սենատի անդամ է, իսկ այդ մարդիկ երևի ծվարել են մի որևէ խղճուկ ծայրամասում։ Եվ նա գլխից հանեց այդ միտքը. խոհականությունն առժամանակ հաղթեց, և մտածված այցելությունը հետաձգվեց։

Դեկտեմբերի սկզբին սենատոր Բրենդերը մի երեք շաբաթով վերադարձավ Վաշինգտոն, և մի գեղեցիկ օր միսիս Գերհարդն ու Ջեննին զարմանքով իմացան, որ նա գնացել է։ Լվացքի համար նա նրանց շաբաթական վճարում էր առնըվազն երկու դոլլար, իսկ երբեմն՝ նույնիսկ հինգ։ Երևի նա չէր էլ պատկերացնում, թե իր այդ մեկնումը ինչպիսի ճեղքվածք կառաջացնի նրանց բյուջեի մեջ։ Բայց ճար չկար, նրանք ստիպված էին մի կերպ ծայրը ծայրին հասցնել։ Գերհարդ հայրն այժմ իրեն լավ էր զգում։ Աշխատանք գտնելու համար բազմաթիվ գործարաններ ապարդյուն շրջելուց հետո նա մի իշոտնուկ սարքեց և սղոցն առած սկսեց տնետուն շրջել ու փայտ սղոցել։ Աշխատանք քիչ կա, բայց իր ուժերը չխնայելով, նա մի կերպ կարողանում էր շաբաթական երկու, երբեմն նույնիսկ երեք դոլլար վաստակել։ Այդ փողը կնոջ վաստակածի և Սեբաստյանի տվածի հետ միասին բավականացնում էր միայն ցամաք հացի համար։

Մոտենում էին ծննդյան տոնի ուրախ օրերը, և Գերհարդների ընտանիքում կարիքն ավելի դառնորեն էր զգացվում։ Գերմանացիները սիրում էին ծնունդը տոնել մեծ հանդիսավորությամբ։ Այդ օրերին ամենից ավելի ցայտուն են

երևում նրանց ծնողական զգացմունքները։ Երեխաների ուրախությունը նրանք բարձր են գնահատում և աշխատում են այնպես անել, որ մանուկներն այդ օրերին զվարճություններ և խաղալիքներ ունենան։ Ծննդյան տոներից առաջ Գերհարդ-հայրն իր սղոցով աշխատելիս շատ էր մտածել դրա մասին։ Որքա՜ն կուզենար նա նվերներով ուրախացնել ու զվարճացնել իր փոքրիկ Վերոնիկային. չէ՞ որ նա այնքան երկար ժամանակ հիվանդ էր եղել։ Որքա՜ն կուզենար բոլոր երեխաներին մի-մի զույգ դիմացկուն կոշիկ ընծայել և տղաներին մի-մի տաք գլխարկ, իսկ աղջիկներին՝ գեղեցիկ կապոցներ։ Անցած տարիներին նրանք միշտ էլ ծննդյան տոներին խաղալիքներ ու քաղցրավենիք էին ստացել։ Հոր համար շատ դառն էր մտածել, որ կբացվի տոնի ձյունափառ առավոտը, իսկ սեղանին առատորեն չի լինի այն ամենը, ինչ այնքան բաղձալի է երեխաներին։

Ինչ վերաբերում է միսիս Գերհարդին, ապա ավելի հեշտ է պատկերացնել նրա զգացմունքները, քան նկարագրել։ Նա այնքան սրտին մոտ էր ընդունում այդ ամենը, որ պարզապես ուժ չուներ ամուսնու հետ խոսելու մոտեցող ճակատագրական օրվա մասին։ Հուսալով, թե կարող է մի տոննա ածուխ գնելու փող տնտեսել և խեղճ Ջորջին ազատել ամեն օր ածուխի պահեստներն ուխտի գնալուց, նա կարողացել էր մի երեք դոլլար ետ գցել, և հիմա որոշեց այդ փողը ծախսել ծննդյան նվերների վրա։ Գերհարդ-հայրը նույնպես գաղտուկ երկու դոլլար փող էր պահել, մտածելով, թե թաթախման օրը, երբ նեղն ընկնեն, կտա կնոջը և դրանով գեթ մի փոքր կուրախացնի նրան։

Բայց երբ թաթախումը եկավ, այդ ողորմելի հինգ դոլլարը շատ չնչին մխիթարություն եղավ։ Քաղաքում տոնական աշխուժություն էր տիրում։ Նպարեղենի խանութները զարդարված էին սրատերևի ճյուղերով։ Խաղալիքների և հրուշակեղենի խանութները կուրացնում էին իրենց շքեղ փայլով. այստեղ կար այն ամենը, ինչ կարող էր պետք գալ իր հարգն իմացող Սանտա-Կլաուսին։ Ե՛վ ծնողները, և՛ երեխաները նայում էին ցուցափեղկերին, առաջինները՝ իրենց

դառն կարիքի տխուր գիտակցությամբ, մյուսները՝ անզուսպ ցնծությամբ և այդ գանձերին տիրելու ծարավը հագիվ զսպելով։

Գերհարդ-հայրը երեխաների մոտ հաճախ ասում էր.

— Ամեն պապին այս տարի շատ աղքատ է։ Նա շատ ընծաներ բերել չի կարող։

Բայց երեխային, նույնիսկ ամենաաղքատ երեխային չես կարող ստիպել, որ հավատա դրան։ Ամեն անգամ հայրը տեսնում էր, որ, չնայած իր նախազգուշացումներին, երեխաների աչքերը շողշողում են ուրախ սպասումից։

Ծնունդը երեքշաբթի օրն էր ընկնում, և նախօրյակին, երկուշաբթի օրը, դպրոցում պարապմունք չկար։ Հյուրանոց գնալիս միսիս Գերհարդը Ջորջին խորհուրդ տվեց որքան կարելի է շատ ածուխ հավաքել, որ վաղն էլ բավականացնի։ Ջորջը իր երկու կրտսեր քույրերին վերցրած իսկույն գնաց դեպո, բայց ածուխ քիչ կար, նրանց շատ չհաջողվեց իրենց զամբյուղները լցնել, և երեկոյան դեմ շատ քիչ ածուխ էին հավաքել։

— Դու գնացե՞լ ես ածուխի,— այս եղավ միսիս Գերհարդի առաջին հարցը, երբ նա այդ երեկոյան վերադարձավ հյուրանոցից։

— Գնացի,— պատասխանեց Ջորջը։

— Վաղը կբավականացնի՞։

— Կարծում եմ՝ կբավականացնի։

— Գնանք տեսնենք։

Եվ լամպը վերցնելով, նրանք գնացին մառան, որտեղ ածուխն էր դարսված։

— Օ՜, ասավա՜ծ իմ,— բացականչեց միսիս Գերհարդը։— Սա շատ քիչ է։ Իսկույն գնա և էլի բեր։

— Է՜,— ծոր տվեց Ջորջը շուրթերն ուռեցնելով։— Ես արդեն գնացել եմ։ Հիմա էլ թող Բասսը գնա։

Բասսն աշխատանքից վերադարձել էր ուղիղ վեցն անց քառորդին և այժմ լվացվում ու հագնվում էր, որ քաղաք դուրս գա։

— Ոչ,— ասաց միսիս Գերհարդը։— Բասսն ամբողջ օրն աշխատել է։ Դու ինքդ պիտի գնաս։

— Չեմ ուզում,— մրթմրթաց Ջորջը։

— Լա՞վ է,— ասաց միսիս Գերհարդը։— Իսկ եթե վաղը վառելու բան չլինի ի՞նչ կանենք։

Նրանք տուն վերադարձան, բայց Ջորջի ինքնասիրությունն այնքան խիստ էր վիրավորված, որ նա հարցը լուծած համարել չէր կարող։

— Բա՛ս, դու էլ արի,— դեռ շեմքից գոռաց նա ավագ եղբորը։

— Այդ ո՞ւր։

— Ածուխի։

— Ա՞յդ էր պակաս,— պատասխանեց Բասսը։— Դու ինձ ինչի՞ տեղ ես դրել։

— Որ այդպես է, ես էլ չեմ գնա,— գլուխը համառաբար թափ տալով ասաց Ջորջը։

— Իսկ ինչո՞ւ դու այսօր ածուխ չես հավաքել,— խրատությամբ հարցրեց եղբայրը։— Դու մի ամբողջ օր ունեիր։

— Հա-ա՞, ես հավաքել եմ,— ասաց Ջորջը։— Ածուխը շատ քիչ էր։ Որտեղի՞ց հավաքեի, որ չկար։

— Երևի վատ ես հավաքել։ Հարկավոր էր ավելի լավ աշխատել։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Ջեննին, որ գնացել էր խանութ և այժմ տուն մտնելուն պես իսկույն նկատեց Ջորջի փքված ու անբավական դեմքը։

— Բասսը չի ուզում ինձ հետ ածուխի գալ։

— Իսկ մի՞թե դու ցերեկը ոչինչ չես հավաքել։

— Հավաքել եմ, բայց մայրիկն ասում է՝ քիչ է։

— Ես կգամ քեզ հետ,— ասաց քույրը։— Դու էլ կգա՞ս, Բասս։

— Չէ,— սառը պատասխանեց երիտասարդ պճնամոլը։ Նա փողկապն էր կապում և զայրանում էր, որ իրեն խանդարում են։

— Դե այնտեղ իսկի ածուխ էլ չկա,— ասաց Ջորջը։—

Գուցե միայն բաց վագոններից կարելի լինի ցած թափել։ Իսկ երբ ես գնացել էի, այնտեղ ածուխի վագոն էլ չկար։

— Եզած կլինի,— գոչեց Բասսը։

— Չկա՛ր,— ասաց Ջորջը։

— Մի՛ վիճիր, խնդրում եմ,— ասաց Ջեննին։— Զամբյուղները վերցրու, գնանք, թե չէ ուշ կլինի։

Մյուս երեխաները, որոնք քնքշորեն սիրում էին ավագ քրոջը, նույնպես պատրաստվեցին նրա հետ գնալու։ Վերոնիկան զամբյուղ վերցրեց, Մարթան և Ուիլյամը՝ դույլեր, Ջորջը՝ լվացքի մեծ զամբյուղը, որ պիտի լցնեին ինքն ու Ջեննին և միասին բերեին։ Այդ ժամանակ Բասսը, որ զգացվել էր գործը կարգավորելու քրոջ պատրաստակամությունից և դեռ եղբայրական ինչ-որ զգացմունք ուներ նրա նկատմամբ, առաջարկեց.

— Տես ինչ եմ ասում, Ջե՛ննի։ Դու պստիկների հետ գնա վեցերորդ փողոցի կողմը և սպասիր վագոնի մոտ։ Ես էլ այնտեղ կգամ։ Միայն թե, երբ ես մոտենամ, ձեզանից ոչ մեկը ամենևին ցույց չտա, թե ինձ ճանաչում եք։ Պարզապես կասեք. «Միստր, խնդրում ենք մեզ համար մի քիչ ածուխ ցած թափեք»։ Ես կբարձրանամ վագոնի վրա և ինչքան պետք է ցած կթափեմ։ Հասկացա՞ք։

— Լավ,— միանգամայն գոհ ասաց Ջեննին։

Նրանք տանից դուրս եկան երեկոյան ձյունամշուշին և ուղղվեցին դեպի երկաթուղի։ Այնտեղ, ուր փողոցը կտրում էին ապրանքային կայարանը տանող երկաթուղագծերը, կանգնած էր ածուխ բարձած մի գնացք, որ հենց նոր էր ժամանել։ Երեխաները թաքնվեցին վագոններից մեկի ստվերում։ Մինչ նրանք կանգնած սպասում էին ավագ եղբորը, ժամանեց Վաշինգտոնից եկող ճեպընթացը, մի հիանալի երկար գնացք՝ նորագույն տիպի մի քանի ննջավագոններով։ Փայլփլում էին ապակեպատ խոշոր լուսամուտները, որոնց ետևը երևում էին փափուկ բազկաթոռների մեջ ընկղմված ուղևորները։ Երբ գնացքը դղրդոցով անցնում էր կողքով, երեխաները բնազդաբար ետ քաշվեցին։

— Ի՞նչ երկար է,— ասաց Ջորջը։

— Ա՛յ թե ես այսպիսի մի գնացքի կոնդուկտոր լինեի՞,— հառաչեց Ուիլյամը։

Միայն Ջեննին լուռ մնաց, բայց հեռավոր ճամփորդությունների և շքեղության միտքը նրան ամենից շատ էր հուզում։ Երևի, անշափ հիանալի է հարուստ մարդկանց կյանքը։

Հեռվում երևաց Սեբաստիանը։ Նա եռանդուն ու կորովի քայլվածք ուներ, և ամեն ինչից երևում էր, որ իր հարգն իմացող մարդ է։ Նա խիստ համառ ու վճռական տղա էր, և եթե երեխաները ճշտորեն չկատարեին իր պատվերը, մոտներով կանցներ՝ նույնիսկ չմտածելով օգնել նրանց։

Բայց Մարթան գործին վերաբերվում էր հարկ եղած լրջությամբ և, ինչպես պատվիրված էր, ճվճվաց. «Միստր, խնդրում եմ մի քիչ ածուխ ցած գցեք մեզ համար»։

Սեբաստիանը կտրուկ կանգ տուավ, օտարի նման նայեց նրանց և «ի՛նչ կա որ, կարելի է» ասելով, բարձրացավ բաց վագոնը և զարմանալի արագությամբ այնքան ածուխ ցած թափեց, որ բոլոր զամբյուղները լիքը կլցներ։ Ապա, որպես թե չցանկանալով կանգ առնել այդքան անարժան խմբի մեջ, նա շտապ անցավ ռելսերը և չքացավ։

Վերադարձի ճանապարհին նրանք հանդիպեցին էլի մի ջենտլմենի, այս անգամ իսկական ջենտլմենի, որը գլխին ցիլինդր ուներ և վրան մի սքանչելի թիկնոց։ Ջեննին նրան իսկույն ճանաչեց։ Դա ոչ այլ ոք էր, եթե ոչ սենատոր Բրենդերը, որը հենց նոր էր վերադարձել Վաշինգտոնից և տոնից ոչ մի լավ բան չէր սպասում։ Նա եկել էր այն նույն նեպլեթացով, որը գրավել էր երեխաների ուշադրությունը և ցանկանալով մի քիչ ոտքով ման գալ, փոքրիկ ճամպրուկը ձեռքին ուղղվել էր դեպի հյուրանոց։ Եվ հանկարծ նրան թվաց, թե ինքը ճանաչեց Ջեննիին։

— Այդ դո՞ւք եք, Ջեննի,— ձայն տվեց նա քայլերը դանդաղեցնելով, որպեսզի լավ տեսնի։

Ջեննին, որ սենատորից ավելի շուտ էր ճանաչել նրան, գոչեց. «Օ՜յ, սա միստր Բրենդերն է»,— և զամբյուղի բրոնակը բաց թողնելով, փոքրիկներին պատվիրեց շուտ տուն տանել, իսկ ինքը վազեց հակառակ կողմը։

Սենատոր Բրենդերը գնաց նրա ետևից և մի երեք-չորս անգամ կանչեց. «Ջե՛ննի, Ջե՛ննի», բայց իզուր։ Աղջկա ետևից հասնելու հույսը կտրելով և հանկարծ հասկանալով, թե ինչը նրան ստիպեց փախչել, նա որոշեց չամաչեցնել նրան, շուռ եկավ և քայլեց երեխաների ետևից։ Եվ նորից, ինչպես ամեն անգամ այդ աղջկան հանդիպելիս, նա զգաց այն ամբողջ անդունդը, որ կար իր և այդ աղջկա դրության միջև։ Ահա ինքը սենատոր է, իսկ այս երեխաները ռելսերի վրայից ածուխ են հավաքում։ Ի՞նչ ուրախություն է բերելու սրանց վաղվա տոնը։ Կարեկցությամբ տոգորված, նա ամենալավ մտադրությամբ քայլում էր նրանց ետևից և շուտով տեսավ, թե ինչպես նրանք ներս մտան մի դռնակով և ծածկվեցին մի միահարկ տան մեջ։ Նա փողոցն անցավ և կանգնեց ձյունածածկ ծառերի ոչ թանձր ստվերում։ Դեպի բակ նայող լուսամուտից դեղնավուն լույս էր ցած ընկնում։ Շուրջն ամեն ինչ ձյունով էր ծածկված։ Մառանից երեխաների ձայներ էին լսվում, և մի անգամ էլ Բրենդերին թվաց, թե ինքը տեսավ միսիս Գերհարդին։ Քիչ անց՝ մի ինչ-որ ստվեր ներս ընկավ կողքի դռնակից։ Սենատորը ճանաչեց նրան։ Նրա սիրտը խփեց, և նա հուզմունքը զսպելով շրթունքը կծեց։ Հետո կտրուկ շուռ եկավ և արագ հեռացավ։

Քաղաքում նպարեղենի ամենամեծ վաճառականն էր ոմն Մեննինգ, որ հաստատորեն նվիրված էր Բրենդերին և շատ էր հպարտանում, որ ինքը ծանոթ է սենատորի հետ։ Այդ երեկոյան հենց նրա մոտ էլ գնաց սենատոր Բրենդերը և գտավ նրան վաճառասեղանի ետևը նստած, իր գործերի մեջ խորասուզված։

— Մեննի՛նգ,— ասաց նա,— չե՞ք կարող արդյոք հենց այսօր կատարել իմ մի հանձնարարությունը։

— Դե իհարկե, սենատոր, իհարկե կարող եմ,— ասաց նպարավաճառը։— Այդ ե՞րբ եք վերադարձել։ Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս։ Պատրաստ եմ ձեզ ծառայելու։

— Ընտրեցեք ամեն բան, ինչ տոնի համար հարկավոր է մի ութ մարդուց բաղկացած ընտանիքին՝ հայր, մայր և վեց

երեխա։ Տոնածառ, մթերք, խաղալիքներ...։ մի խոսքով դուք ինքներդ հասկանում եք։

— Իհարկե, իհարկե, սենատոր։

— Ծախսի առաջ կանգ չառնեք։ Ուղարկեցեք ամեն ինչ առատորեն։ Ես ձեզ հասցեն կտամ,— և նա հանեց ծոցատետրը։

— Հաճույքամբ ամեն ինչ կանեմ, սենատոր,— շարունակեց Մեննինգը։— Մեծագույն բավականությամբ։ Դուք միշտ մեծահոգի եք եղել։

— Լավ, լավ, Մեննինգ,— ասաց սենատորը հոնքերը կիտելով՝ պարզապես նրա համար, որ պահպանի պետական մարդու իր արժանապատվությունը։— Անհապաղ ուղարկեցեք ամեն ինչ, իսկ հաշիվն ինձ կուղարկեք։

— Մեծագույն բավականությամբ,— միայն այսքանը կարողացավ ասել ուրախացած առևտրականը։

Սենատորը դուրս եկավ փողոց, բայց հիշելով Գերհարդ ծերունիներին, մեկ էլ մտավ կոշիկի ու պատրաստի հագուստեղենի խանութը, բայց գլխի ընկնելով, որ չգիտե ինչ համարի հագուստներ են հարկավոր, նա որոշ բաներ պատվիրեց՝ գնածը փոխելու իրավունքով։ Այս ամենը վերջացնելով վերադարձավ հյուրանոց։

«Ածուխ են հավաքում...— նորից ու նորից մտածեց նա։— Որքա՜ն անուշադիր եմ եղել։ Այլևս ես նրանց չպետք է մոռանամ»։

ԳԼՈՒԽ IV

Փախչելու ցանկությունը, որ Ջեննիին համակեց սենատորին տեսնելուն պես, բացատրվում էր նրանով, որ աղջիկն իր վիճակն ստորացուցիչ էր համարում։ Սենատորն իր մասին այնքան լավ կարծիք ուներ, և նա ամաչում էր, որ իրեն այդքան ստոր ղբաղմունքի մեջ տեսավ։ Նա միամտորեն երևակայում էր, թե սենատորի հետաքրքրությունն իր նկատմամբ բխում է ինչ-որ մի ուրիշ բանից և ոչ թե անձամբ ինքն է հետաքրքրության առարկան։

Երբ նա տուն վերադարձավ, երեխաներն արդեն մորը պատմել էին նրա փախուստի մասին։

— Այն ի՞նչ պատահեց քեզ,— հարցրեց Ջորջը, երբ Ջեննին սենյակ մտավ։

— Ոչինչ,— պատասխանեց նա, բայց և իսկույն մորը բացատրեց.— Միստր Բրենդերն անցնում էր մոտիկով և մեզ տեսավ։

— Ի՞նչ ես ասում,— ցածրաձայն գոչեց միսիս Գերհարդը։— Ուրեմն նա վերադարձե՞լ է։ Իսկ ինչո՞ւ էիր դու փախչում, անխե՛լք։

— Պարզապես չէի ուզում, որ ինձ տեսնի։

— Բայց գուցե նա քեզ չի էլ ճանաչել,— կարեկցանքով ասաց մայրը։

— Չէ՛, ճանաչեց,— շշնջաց Ջեննին։— Նա մի երեք անգամ ձայն տվեց ինձ։

Միսիս Գերհարդը գլուխն օրորեց։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Գերհարդ-հայրը այդ խոսակցությունը լսելով և հարևան սենյակից դուրս գալով։

— Ոչինչ,— պատասխանեց կինը, որն ամենևին չէր ուզում ամուսնուն բացատրել, թե սենատորն ինչ դեր է սկսել խաղալ իրենց կյանքում։— Ածուխ բերելիս մի ինչ-որ մարդ վախեցրել է սրանց։

Նույն օրը երեկոյան եկան տոնական ընծաները, որոնք ամբողջ ընտանիքը արտակարգ հուզմունքի մեջ գցեցին։ Գերհարդն ու իր կինը չէին կարողանում հավատալ իրենց աչքերին, երբ նպարեղենի խանութի ֆուրգոնը կանգ առավ նրանց դռան առաջ, և ցրիչը, որ մի քաջառողջ երիտասարդ էր, սկսեց կապոցները նրանց տուն կրել։ Նրանք փորձեցին ցրիչին համոզել, թե նա սխալվել է, բայց երբ այդ փորձերն ապարդյուն անցան, Գերհարդները միանգամայն հասկանալի ուրախությամբ սկսեցին զննել այդ ամբողջ բարիքը։

— Դուք մի՛ անհանգստացեք,— վստահորեն ասաց ցրիչը։— Ես գիտեմ ինչ եմ անում։ Ձեր աղգանունը Գերհարդ է, չէ՞։ Դե, ուրեմն այս բոլորը ձեզ համար է։

Միսիս Գերհարդը գլուխը կորցրել էր և հուզմունքով ձեռքերը տրորելով կրկնում էր.

— Դե մի՞թե սա հրաշք չէ։

Գերհարդն ինքն էլ զգացվել էր անհայտ բարերարի առատաձեռնությունից և հակված էր այս բանը վերագրելու տեղական մի խոշոր գործարանատիրոջ, որի մոտ ինքը մի ժամանակ աշխատել էր և որը իր նկատմամբ լավ վերաբերմունք ուներ։ Միսիս Գերհարդը կասկածում էր, թե որը կլինի անսպասելի ուրախության իսկական աղբյուրը և անչափ զգացված էր, բայց բան չասաց։ Իսկ Ջեննին միանգամից գլխի ընկավ, թե այդ ում արածը կլինի։

Ծննդյան տոնի երկրորդ օրը Բրենդերը հյուրանոցում հանդիպեց միսիս Գերհարդին. Ջեննին մնացել էր տնտեսությանը հետևելու։

— Ինչպե՞ս եք, միսիս Գերհարդ,— սիրալիր զուշեց սենատորը ձեռքը մեկնելով։— Ինչպե՞ս դիմավորեցիք տոնը։

Խեղճ միսիս Գերհարդը վեհերոտ սեղմեց նրա ձեռքը, և նրա աչքերն իսկույն արցունքով լցվեցին։

— Դե լա՛վ, լա՛վ,— ասաց սենատորը նրա ուսին թրփթրփացնելով։— Լաց լինելու կարիք չկա։ Եվ չմոռանաք վաղը լվալու վերցնել իմ սալիտակեղենը։

— Ջեմ մոռանա, սրբ,— պատասխանեց կինը և ուզում էր էլի ինչ-որ բան ասել, բայց նա արդեն հեռացել էր։

Այժմ Գերհարդ-հայրը շարունակ լսում էր հյուրանոցի զարմանալի սենատորի մասին, թե որքան նա ափրալիր է և որքան շատ է վճարում լվացքի համար։ Պարզամիտ աշխատավորը հեշտությամբ հավատաց, որ միստր Բրենդերը ամենաբարի և ամենաազնվասիրտ մարդն է։

Ջեննին ինքն էլ այդպես էր մտածում և ավելի ու ավելի էր հիանում սենատորով։

Նա այնպես քնքշացել, այնքան լավիկն էր դարձել, որ ոչ ոք չէր կարող անտարբեր անցնել նրա կողքով։ Նա սլացիկ հասակ ուներ և հիանալի կազմվածք։ Երկար հագուստով, բարձրաշխարհիկ կնոջ զուգով նա հիանալի զույգ կլիներ այնպիսի բարեսես մարդու համար, ինչպիսին սենատորն էր։

Նա զարմանալի վճիտ, աշխույժ աչքեր ուներ, դեմքի հրաշալի գույն, համաչափ ճերմակ ատամներ։ Դրա հետ միասին նա խելացի էր, զգայուն և զննող։ Նրան պակասում էր միայն դաստիարակություն և վստահություն, որ երբեք չի ունենում իր կախյալ, ենթակա վիճակը գիտակցող մարդը։ Լվացքով զբաղվելու, սպիտակեղենը տանել-բերելու և ամեն մի մանրուք որպես բարերարություն ընդունելու անհրաժեշտությունը կաշկանդում էր նրան։

Այժմ նա շաբաթական երկու անգամ գալիս էր հյուրանոց։ Սենատոր Բրենդերը նրա հետ սիրալիր էր ու ազատ, և աղջիկն էլ նույնով էր պատասխանում նրան։ Սենատորը հաճախ ընծաներ էր տալիս նրան, նրա քույրերին ու եղբայրներին և նրա հետ միշտ խոսում էր այնպես պարզ ու անկեղծ, որ ի վերջո նրանց բաժանող անդունդի զգացողությունը չքացավ, և աղջիկն սկսեց ի դեմս նրա տեսնել ոչ այնքան պատկառելի սենատորի, որքան մեծահոգի մի բարեկամի։ Մի անգամ Բրենդերը հարցրեց նրան, թե չի՞ ուզում արդյոք սովորել, մտածելով, որ լավ դպրոցը նրան ավելի ևս հրապուրիչ կդարձներ։ Վերջապես մի երեկո նա մոտ կանչեց աղջկան։

— Հապա մի մոտ եկեք, Ջեննի։

Աղջիկը մոտեցավ, և սենատորը հանկարծ բռնեց նրա ձեռքը։

— Հապա, Ջեննի,— ասաց նա ուրախ և զննաբար նայելով նրա աչքերին,— ասացեք, ի՞նչ եք մտածում դուք իմ մասին։

— Չգիտեմ,— պատասխանեց աղջիկը ամոթխածությամբ մի կողմ նայելով։— Ինչո՞ւ եք հարցնում։

— Ոչ, գիտեք,— առարկեց սենատորը։— Դե հո մի որևէ կարծիք ունեք իմ մասին։ Ասացեք, ի՞նչ կարծիք։

— Դուք հարցնում եք, թե ինձ դո՞ւր եք գալիս, այո՞,— պարզամտորեն հարցրեց Ջեննին՝ վերից-վար նայելով սենատորի սպիտակախառն սև մազերին, որ առյուծի բաշի նման կուտակվելով լայն ճակատին՝ մի առանձին վեհություն էին տալիս նրա գեղեցիկ դեմքին։

— Այո,— պատասխանեց նա մի փոքր հիասթափված։

Աղջիկը կոտրատվել չգիտեր։

— Դե իհարկե դուք եք գալիս,— մի անուշ ժպիտով ասաց նա։

— Ուրիշ ոչ մի բան չե՞ք մտածել իմ մասին։

— Ես մտածում եմ, որ դուք շատ բարի մարդ եք,— պատասխանեց Ջեննին ավելի ևս վախենալով։ միայն այժմ նա նկատեց, որ սենատորը դեռ բռնած ունի իր ձեռքը։

— Էլ ուրիշ ոչի՞նչ,— հարցրեց նա։

— Մի՞թե սա քիչ է,— ասաց աղջիկը, և նրա թարթիչները դողացին։

Սենատորը նայում էր աղջկան, և նրա պատասխան հահացքը, որ ուրախ էր, մտերմական ու անկեղծ, խորապես հուզում էր նրան։ Նա լուռ ուսումնասիրում էր նրա դեմքը, և աղջիկը երեսը դարձրեց ու կուչ եկավ, զգալով, թեև հազիվ թե հասկանալով, այդ զննական հայացքի ամբողջ նշանակությունը։

— Այ, իսկ ես մտածում եմ, որ դուք հիանալի աղջիկ եք,— վերջապես ասաց նա։— Իսկ ձեզ չի՞ թվում, որ ես շատ լավ մարդ եմ։

— Թվում է,— իսկույն պատասխանեց Ջեննին։

Սենատորը ետ ընկավ բազկաթոռի թիկնակին և ծիծաղեց, այնքան հետաքրքիր էր ստացվել աղջկա այդ պատասխանը։ Ջեննին հետաքրքրությամբ նայեց նրան ու ժպտաց։

— Ինչո՞ւ եք ծիծաղում,— հարցրեց նա։

— Ձեր պատասխանի վրա։ Թեև ես չպետք է ծիծաղեի։ Դուք ինձ մի կաթիլ էլ չեք գնահատում։ Երևի ես ձեզ ամենևին դուր չեմ գալիս։

— Ոչ, դուր եք գալիս,— լրջորեն պատասխանեց աղջիկը։— Դուք այնքա՞ն լավն եք։

Աչքերի արտահայտությունից երևում էր, որ աղջիկը սրտանց է խոսում։

— Այդպե՞ս,— ասաց սենատորը և աղջկան մեղմորեն իր կողմը քաշելով համբուրեց նրա այտը։

Ջեննին զարմանքի ու վախի մի թեթև ճիչ արձակելով ուղղվեց։

Դա մի նոր բան էր նրանց հարաբերությունների մեջ։ Վայրկենապես չքացավ այն տարածությունը, որ կար Ջեննիի և պետական մարդու միջև։ Աղջիկը նրա մեջ տեսավ այն, ինչ առաջ չէր նկատել։ Նա միանգամից ավելի երիտասարդ թվաց։ Նա իրեն վերաբերվում է որպես կնոջ, նա սիրահարված է իրեն։ Եվ աղջիկը չգիտեր, թե ինչ անի ինքը, ինչպես պահի իրեն։

— Ես ձեզ վախեցրի՞,— ասաց նա։

Աղջիկը նայեց այդ մարդուն, որին վարժվել էր խորապես հարգել, և ժպիտով պատասխանեց.

— Այո, վախեցրիք։

— Դրա պատճառն այն է, որ դուք ինձ դուր եք գալիս։ Ջեննին մի րոպե մտածելով ասաց.

— Ես պետք է գնամ։

— Դե տես,— դժկամությամբ ասաց Բրենդերը,— մի՞թե դուք դրա համար եք փախչում։

— Ոչ,— ասաց աղջիկը թեթև նազանքով, որ առաջ երբեք չէր երևացել։

Նա զգում էր իր իշխանությունը սենատորի վրա, և դա այնքան նոր, այնքան զարմանալի բան էր, որ երկուսն էլ մի տեսակ շփոթվեցին։

— Ինչ էլ որ լինի, այժմ դուք իմն եք,— ասաց սենատորը վեր կենալով։— Այսուհետև ես կհոգամ ձեր մասին։

Ջեննիի համար հաճելի էր այդ լսել։ «Սրան սազում է հրաշքներ գործել,— մտածեց նա,— սա իսկական կախարդ է»։ Նա ետ նայեց, և մտածելով, որ իր առաջ մի նոր, զարմանալի կյանք է բացվում, գլուխը պտույտ եկավ ուրախությունից։ Չի կարելի ասել, թե նա լրիվ հասկացավ սենատորի ասածը։ Երևի նա ավելի բարի ու մեծահոգի է լինելու, հիանալի բաներ է ընծայելու։ Հասկանալի է, աղջիկը երջանիկ էր։ Նա վերցրեց լվացքի կապոցը, որի համար եկել էր, չնկատելով ու չզգալով իր դրության անհեթեթությունը, իսկ սենատորի համար դա դառն կշտամբանք էր։

«Սա չպետք է լվացք տանող-բերող լինի»,—մտածեց նա։ Փնջանքն ու կարեկցանքը ջերմ ալիքով բարձրացավ նրա մեջ։ Նա թաթերի մեջ առավ աղջկա դեմքը, այս անգամ որպես բարի հովանավոր։

— Ոչինչ, սիրուն աղջիկ,— ասաց նա։— Դուք ստիպված չեք լինի միշտ սրանով զբաղվել։ Ես մի որևէ բան կմտածեմ։

Սրանից հետո նրանց հարաբերությունները դարձան ավելի պարզ ու մտերմական։ Երբ հաջորդ անգամ Ջեննին եկավ, սենատորն առանց այլևայլության առաջարկեց նրան նստել իր բազկաթոռի թևին և սկսեց մանրամասն հարցափորձ անել, թե ինչպես են ապրում նրա հարազատները, ինչ է ուզում և ինչ է երազում նա ինքը։ Նա նկատեց, որ աղջիկը որոշ հարցերի խուսափողական պատասխան է տալիս, մանավանդ հոր աշխատանքի մասին։ Նա ամաչում էր ասել, որ հայրը տնեատուն ման գալով փայտ է սղոցում։ Մտածելով, թե այստեղ մի ինչ-որ ավելի լուրջ բան կա թաքնված, Բրենդերը որոշեց մոտ օրերը գնալ և ամեն ինչ իմանալ։

Այդպես էլ նա արեց առաջին իսկ ազատ առավոտյան։ Դա երեք օր առաջ էր այն օրից, երբ կոնգրեսում կատաղի պայքար սկսվեց, որն ավարտվեց նրա պարտությամբ։ Մնացած այդ օրերին, միևնույն է, ոչինչ նախաձեռնել չէր կարելի։ Եվ ահա Բրենդերը ձեռնափայտը վերցրեց ու քայլեց դեպի Գերհարդների տունը։ Կես ժամ անց՝ նա արդեն վճռականորեն բախում էր դուռը։

Դուռը բացեց միսիս Գերհարդը։

— Բարև ձեզ,— ուրախ ասաց նա և, նկատելով կնոջ շփոթմունքը, ավելացրեց.— կարելի՞ է ներս գալ։

Այս արտասովոր հյուրին տեսնելով՝ խեղճ կինը բոլորովին գլուխը կորցրեց։ Նա կամացուկ ձեռքերը սրբեց հին, կարկատած դոդոցով և, վերջապես, ասաց.

— Այո, այո, համեցեք, ներս եկեք։

Մոռանալով դուռը ծածկել՝ միսիս Գերհարդը հյուրին շտապ առաջնորդեց սենյակ և, սթոռն առաջ քաշելով, հրավիրեց նստել։

Բրենդերը ցավ զգաց, որ այդպես շփոթեցրեց նրան։

— Մի անհանգստացեք, միսիս Գերհարդ,— ասաց նա։— Ես հենց այնպես այս տեղերով անցնում էի և մտածեցի մի րոպեով մտնեմ ձեզ մոտ։ Ինչպե՞ս է ձեր ամուսնու առողջությունը։

— Շնորհակալ եմ, առողջ է,— պատասխանեց կինը։— Աշխատանքի է գնացել։

— Նշանակում է գո՞րծ է գտել։

— Այո, սըր,— պատասխանեց միսիս Գերհարդը. նա ևս Ջեննիի նման չէր ուզում ասել, թե ինչ աշխատանք է դա։

— Երեխաներն էլ, հուսով եմ, բոլորն առողջ են և դրպրո՞ց են հաճախում։

— Այո,— պատասխանեց միսիս Գերհարդը։

Նա դռնոցն արձակեց և շփոթված սկսեց ճմրթել այն։

— Այդ լավ է։ Իսկ որտե՞ղ է Ջեննին։

Ջեննին հենց այդ ժամանակ սպիտակեղենն էր հարթուկում։ Հյուրի ձայնը լսելով, նա հարթուկն ու տախտակը թողած վազել էր ննջարան, որտեղ այժմ շտապով իրեն կարգի էր բերում, վախենալով, որ մայրը գլխի չի ընկնի ասել, թե տանը չի և իրեն թաքնվելու հնարավորություն չի տա։

— Տանն է,— ասաց միսիս Գերհարդը։— Իսկույն կըկանչեմ։

— Ինչո՞ւ նրան ասացիր, որ ես այստեղ եմ,— կամացուկ կշտամբեց Ջեննին։

— Հապա ի՞նչ անեի։

Նրանք սիրտ չէին անում դուրս գալ սենատորի մոտ, իսկ սա մինչ այդ սենյակն էր դիտում։ Նրա համար տխուր բան էր տեսնել, որ այդքան արժանավոր մարդիկ այդպիսի կարիքի մեջ են ապրում։ Կուզենար մի որևէ կերպ օգնել նրանց։

— Բարի լույս,— ասաց նա, երբ, վերջապես, Ջեննին ա.նհամարձակ մատավ սենյակ։— Ինչպե՞ս եք։

Ջեննին մոտեցավ նրան և կարմրատակելով ձեռքը մեկնեց։ Սենատորի գալուստն այնպես էր հուզել, որ նա հազիվ կարող էր մի բառ արտասանել։

— Որոշեցի մի քանի րոպեով ներս մտնել և տեսնել

ինչպես եք ապրում,— ասաց սենատորը։— Վատ տուն չէ։ Քանի՞ սենյակ ունեք։

— Հինգ,— պատասխանեց Ջեննին։— Գիտեք, մեզ մոտ խառնիխուռն է։ Առավոտից հարթուկ էինք անում, դրա համար էլ ամեն ինչ տակնուվրա եղած է։

— Հասկանում եմ,— մեղմորեն ասաց Բրենդերը։— Մի՞թե կարծում եք, թե ես այդ չեմ հասկանա, Ջեննի։ Ինձնից քաշվելու կարիք չկա։

Նա խոսում էր նույնպես հանգիստ ու մտերմաբար, ինչպես միշտ, երբ Ջեննին նրա մոտ էր լինում, և այդ աղջկան օգնեց ուշքի գալ։

— Թող ձեզ չշփոթեցնի, եթե ես էլի մի անգամ ձեզ մոտ գամ։ Ես էլի եմ այցելելու ձեզ, ուզում եմ ձեր հորը տեսնել։

— Մի՞թե,— ասաց Ջեննին։— Իսկ նա տանը չի։

Բայց մինչ նրանք խոսում էին, Գերհարդն իր սղոցով ու իշոտնուկով երևաց բակի դռնակի առաջ։ Բրենդերը նրան տեսավ և աղջկա որոշ նմանությունից իսկույն ճանաչեց։

— Ահա և ձեր հայրը, եթե չեմ սխալվում, —ասաց նա։

— Մի՞թե,— արձագանքեց Ջեննին, լուսամուտից դուրս նայելով։

Գերհարդն իր մտքերով տարված՝ լուսամուտի մոտով անցավ առանց հայացքը բարձրացնելու։ Նա իշոտնուկը դրեց պատի տակ, սղոցը մեխից կախեց և տուն մտավ։

— Մայր,— ձայն տվեց նա գերմաներեն, ապա, կնոջը չտեսնելով, մոտեցավ դռանը և նայեց սեղանատան ներսը։

Բրենդերը վեր կացավ և ձեռքը մեկնեց նրան։ Կորաքամակ, մկանուտ գերմանացին մոտեցավ ու այդ ձեռքը սեղմեց՝ հարցական նայելով անծանոթին։

— Սա իմ հայրն է, միստր Բրենդեր,— ասաց Ջեննին. սենատորի նկատմամբ տածած բարյացակամության զգացմունքը նրան օգնեց հաղթահարել ամոթխածությունը։— Հայրիկ, սա միստր Բրենդերն է, նա, որ ապրում է հյուրանոցում։

— Ազգանունն ինչ է՞,— հարցրեց Գերհարդը մերթ մեկին մերթ մյուսին նայելով։

— Բրենդեր,— ասաց սենատորը։

— Ա՜, այո։— Գերհարդը նկատելիորեն խոսում էր գերմանական առոգանությամբ։— Հիվանդությունից հետո լավ չեմ լսում։ Կինս ինձ ասել է ձեր մասին։

— Ես որոշեցի ներս մտնել, ձեզ հետ ծանոթանալ,— ասաց սենատորը։— Դուք, տեսնում եմ, մեծ ընտանիք ունեք։

— Այո,— ասաց ընտանիքի հայրը։ Նա հասկանում էր, որ իր հագին բանվորական մաշված շոր է և ուզում էր շուտ հեռանալ։— Վեց երեխա, և բոլորն էլ դեռ աշխատանքի չանցած։ Ահա սա իմ ավագ դուստրն է։

Ներս եկավ կինը, և Գերհարդն շտապեց օգտվել այդ առիթից։

— Դուք ինձ ներեցեք,— ասաց նա,— ես պիտի գնամ։ Սղոցս կոտրվեց, ստիպված եղա գործը թողնել։

— Խնդրեմ,— սիրալիր ասաց Բրենդերը, իսկույն հասկանալով, թե Ջեննին ինչն էր միշտ լռության մատնում։ Նա, երևի, կգերադասեր, որ աղջիկն արիություն ունենար ոչինչ չթաքցնելու։

— Դե, ուրեմն, միսիս Գերհարդ,— ասաց նա, երբ տիկինը նստելով, լարված ուղղվեց աթոռի վրա։— Ես կուզենայի, որ այսուհետև դուք ինձ օտար մարդ չհամարեք։ Եվ կուզենայի, որ դուք մանրամասն պատմեք ինձ ձեր գործերի մասին։ Ջեննին միշտ չէ, որ այդ անում է։

Ջեննին լուռ ժպտաց։ Միսիս Գերհարդն անհանգիստ ձեռքերն էր տրորում։

— Շատ լավ,— երկչոտությամբ ու շնորհակալությամբ պատասխանեց նա։

Նրանք էլի մի քիչ խոսեցին, ապա սենատորը վեր կացավ։

— Ասացեք ձեր ամուսնուն, որ երկուշաբթի օրը գա ինձ մոտ, հյուրանոց,— ասաց նա։— Ես կաշխատեմ օգնել նրան։

— Շնորհակալ եմ,— շփոթված մրմնջաց միսիս Գերհարդը։

— Իսկ հիմա գնալուս ժամանակն է,— ավելացրեց Բրեն-

դերը։—Ուրեմն չմոռանաք ասել ձեր ամուսնուն, որ ինձ մոռանցնի։

— Օ՜, իհարկե կգա։

Բրենդերը ձախ ձեռքի ձեռնոցը հագավ, աջը մեկնեց Ջեննիին։

— Ահա ձեր ամենալավ գանձը, միսիս Գերհարդ,— ասաց նա։— Եվ ես մտադիր եմ այս գանձը խլել ձեզանից։

— Օ՜, ես չգիտեմ, թե առանց դրան ինչպես կարող եմ յոլա գնալ,— պատասխանեց մայրը։

— Դե, ողջ մնաք,— ասաց սենատորը միսիս Գերհարդի ձեռքը սեղմելով և ուղղվեց դեպի դուռը։

Նա գլխով արեց որպես հրաժեշտ և դուրս գնաց, իսկ մի հինգ-վեց հարևաններ, որոնք տեսել էին, թե ինչպես նա տուն մտավ, այժմ հետաքրքրությամբ լի հայացքով ուղեկցում էին նրան խլափեղկերի ու վարագույրների ետևից։

«Ո՞վ կարող է լինել սա». այս հարցն էր զբաղեցնում բոլորին։

— Տես ինչ տվեց նա ինձ,— աղջկան ասաց պարզամիտ մայրը, հենց որ դուռը ծածկեց հյուրի ետևից։

Դա տասը դոլլարանոց մի թղթադրամ էր, որ Բրենդերը հրաժեշտ տալիս աննկատելիորեն դրել էր միսիս Գերհարդի բուռը։

ԳԼՈՒԽ V

Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ Ջեննին մեծ չափով իրեն պարտական էր զգում սենատորին և, միանգամայն հասկանալի է, բարձր էր գնահատում այն ամենը, ինչ նա անում էր իր և իրենց ընտանիքի համար։ Սենատորը նրա հորը մի նամակ տվեց ուղղված տեղի գործարանատիրոջը, և սա Գերհարդին ծառայության ընդունեց։ Դա, իհարկե, մի երևելի գործ չէր, եղած-չեղած՝ գիշերային պահակ, բայց և այնպես Գերհարդը նորից աշխատում էր, և նրա երախտագիտությունը սահման չուներ։ Ի՞նչ բարի մարդ

է այդ սենատորը, որքա՜ն կարեկից. աշխարհիս երեսին ուրիշ այդպիսի մարդ չի լինի։

Չէր մոռացվել նաև միսիս Գերհարդը։ Մի անգամ Բրենդերը նրան շոր ուղարկեց, մի ուրիշ անգամ՝ շալ։ Այդ բոլոր բարերարություններն արվում էին մասամբ նրանց օգնելու ցանկությամբ, մասամբ էլ սեփական բավականության համար, բայց միսիս Գերհարդը խանդավառությամբ այդ ամենը վերագրում էր սոսկ սենատորի բարեսրտությանը։

Իսկ Ջեննին... Բրենդերը ամեն կերպ աշխատում էր նվաճել նրա վստահությունը և, վերջապես, աղջկա վերաբերմունքը նրան այնքան բարդ դարձավ, որ դա բավական դժվար էր հասկանալ։ Իսկ այդ դեռատի ու անփորձ աղջիկն այնքան միամիտ ու անհոգ էր, որ չէր կարող գեթ մեկ բոպե մտածել, թե ինչ կարող են ասել մարդիկ։ Այն անմոռանալի ու երջանիկ օրից, երբ Բրենդերը կարողացավ հաղթահարել նրա բնածին երկչոտությունը և այնպես քնքշորեն համբուրեց նրա այտը, նրանց համար նոր ժամանակաշրջան սկսվեց։ Ջեննին նրա մեջ բարեկամ էր տեսնում, և որքան սենատորն ավելի պարզ ու անբռնազբոսիկ էր դառնում, գոհունակությամբ ազատվելով սովորական զսպվածությունից ու խստաբարոյությունից, այնքան ավելի լավ էր աղջիկը հասկանում նրան։ Նրանք սրտանց ծիծաղում ու խոսում էին, և սենատորը անկեղծորեն հիանում էր, որ վերադարձել է երիտասարդության ու երջանկության այդ պայծառ աշխարհը։

Այնուամենայնիվ երբեմն նրան անհանգստացնում էր մի միտք, որից ազատվել չէր կարող, այն, որ ինքն այնպես չի վարվում, ինչպես հարկավոր է։ Եթե ոչ այսօր, ապա վաղը մարդիկ կնկատեն, որ այդ լվացարարի աղջկա հետ իր հարաբերություններն ընդունված սահմաններից անցնում են։ Ավագ սպասուհու ուշադրությունից, երևի, չէր վրիպել, որ Ջեննին, երբ գալիս է սպիտակեղենը տանել կամ բերելու համար, համարյա միշտ սենատորի համարում մնում է տասնհինգ-քսան բոպե, իսկ երբեմն էլ մի ժամի չափ։ Բրենդերը հասկանում էր, որ դա կարող է հասնել հյուրանոցի մյուս

ծառայողների ականջին ևս, լուրը կտարածվի քաղաքում և դրանից ոչ մի լավ բան չի դուրս գա։ Բայց այսպիսի մտքերը նրան չէին ստիպում այլ կերպ պահել իրեն։ Նա մերթ իրեն հանգստացնում էր այն մտքով, որ Ջեննիի համար ոչ մի վատ բան չի անում, մերթ ինքն իրեն ասում էր, որ չի կարող զրկվել իր միակ քնքուշ մտերմությունից։ Խղճով որ խոսենք, մի՞թե ինքը Ջեննիի լավը չի ուզում։

Այս ամենի մասին խորհելով, Բրենդերն ամեն անգամ որոշում էր, որ Ջեննիից հրաժարվել չի կարող։ Բարոյական բավականությունը, որ նա կունենար, հաղիվ թե արժեր այն ցավին, որ անխուսափելիորեն կբերեր նրան այդպիսի անձնազոհությունը։ Նրան այնքան էլ շատ կյանք չէր մնացել։ Ցավալի բան կլիներ մեռնել՝ առանց ստանալու այն, ինչ այնքան ցանկանում ես։

Մի երեկո եղավ, որ նա ամուր գրկեց Ջեննիին։ Մի ուրիշ անգամ նա աղջկան նստեցրեց իր ծնկին և սկսեց պատմել Վաշինգտոնում անցկացրած իր կյանքի մասին։ Այժմ նա ոչ մի անգամ աղջկան բաց չէր թողնում առանց փաղաքշելու և համբուրելու։ Բայց սրանք բոլորը սոսկ թույլ անորոշ փորձեր էին։ Նա չէր ուզում խիստ ուժեղ անհանգստացնել աղջկան։

Իսկ պարզամիտ Ջեննին բավականություն էր զգում այդ ամենից։ Նրա կյանքում այնքան նոր, արտասովոր բան էր սկսվել։ Նա միամիտ, անփորձ աղջիկ էր, խորապես զգալու ընդունակ։ Սիրո մասին դեռ ոչինչ չգիտեր, բայց արդեն այնքան մեծ էր, որ կարող էր ուրախանալ այդ ականավոր մարդու ուշադրությամբ, քանի որ նա աղջկան արժանացրել էր իր մտերմությանը։

Մի երեկո, երբ Ջեննին կանգնած էր Բրենդերի բազկաթոռի կողքին, ձեռքը քսեց նրա մազերին, ճակատից ետ տարավ, ապա հենց այնպես, մեքենայորեն նրա գրպանից հանեց ժամացույցը։ Աղջկա այդ անուշ պարզամտությունը հիացմունք պատճառեց սենատորին։

— Իսկ դուք կուզենայի՞ք ժամացույց ունենալ,— հարցրեց նա։

— Հարկավ,— հառաչանքով ասաց Ջեննին։

Մյուս օրը Բրենդերը մտավ ակնեղենի խանութ և գեղեցիկ ձեավոր սլաքներով մի ոսկե ժամացույց գնեց։

— Ջեննի,— ասաց նա երբ հաջորդ անգամ աղջիկը եկավ,— ես ուզում եմ ձեզ մի բան ցույց տալ։ Հապա մի նայեցեք իմ ժամացույցին, ժամը քանի՞սն է։

Ջեննին նրա ժիլետի գրպանից ժամացույցը հանեց և աչքերը չռեց։

— Սա ձեր ժամացույցը չի,— զարմացած գոչեց նա։

— Ոչ,— պատասխանեց սենատորը աղջկա տարակուսանքով հիացած,— դա ձերն է։

— Ի՞մը,— գոչեց Ջեննին։— Ի՞մը։ Ի՞նչ հիանալի է։

— Ձեզ դո՞ւր է գալիս,— հարցրեց Բրենդերը։

Նա շատ զգացված ու շոյված էր աղջկա հիացմունքից։ Ջեննիի դեմքն ուղղակի փայլում էր, աչքերը շողում էին։

— Դա ձեր ժամացույցն է,— ասաց նա։— Վերցրեք, բայց տեսեք, չկորցնեք։

— Որքա՞ն բարի եք դուք,— ասաց Ջեննին։

— Ոչ, —առարկեց սենատորը և ձեռքը աղջկա մեջքին գցելով մտածեց, թե ինչ պարգև կարող է ստանալ ինքը։ Ապա նա դանդաղորեն Ջեննիին քաշեց իր կողմը, և այդ ժամանակ աղջիկը երկու ձեռքով փաթաթվեց նրա պարանոցին և երախտագիտության զգացմունքով իր այտը սեղմեց նրա այտին։ Ոչ մի բան չէր կարող ավելի մեծ հրճվանք պատճառել սենատորին։ Երկար տարիներ նա երազել էր այդպիսի մի բոպե ապրելու մասին։

Այս իդիլիայի հետագա զարգացումն ընդհատեցին կոնգրեսում տեղ գրավելու համար սկսված թեժ մարտերը։ Հակառակորդների ճնշման տակ սենատոր Բրենդերն ստիպված էր կյանքի ու մահու կռիվ մղել։ Մեծագույն զարմանքով նա իմացավ, որ երկաթուղային հզոր ընկերությունը, որը միշտ բարյացակամ էր եղել իր նկատմամբ, գաղտնաբար մեծ եռանդով պաշտպանում է իր առանց այն էլ վտանգավոր ախոյանին։ Այս լուրը ցնցեց Բրենդերին, նրան մերթ մոայլ հուսահատությունն էր համակում, մերթ կատաղության նո-

պան։ Թեպետև ձևացնում էր, թե հեշտությամբ է կրում բախտի հարվածները, բայց դրանք խոր էին խոցում նրան։ Վաղուց արդեն, շատ վաղուց նա պարտության դառնություն չէր ճաշակել։

Այդ օրերին Ջեննին առաջին անգամ իմացավ, թե ինչ բան է տղամարդու բնավորության հարափոխությունը։ Երկու շաբաթ նա Բրենդերին բոլորովին չէր տեսել, իսկ հետո, մի երեկո, իր կուսակցության տեղական պարագլուխի հետ շատ անմխիթարական խոսակցություն ունենալուց հետո սենատորը նրան դիմավորեց ավելի քան սառն։ Երբ աղջիկը դուռը բախեց, նա կիսաբաց արեց այն և համարյա կոպտորեն ասաց.

— Այսօր ես սպիտակեղենով զբաղվել չեմ կարող։ Վաղը եկեք։

Ջեննին գնաց՝ այդպիսի ընդունելությունից զարմացած և վշտացած։ Նա չէր իմանում ինչ մտածի։ Մի վայրկյանում սենատորը նրան նորից թվաց անհասանելի բարձրության վրա, օտար ու հեռու, և նրան արդեն չէր կարելի անհանգստացնել։ Իհարկե, նա կարող է աղջկան զրկել իր բարեկամական ուշադրությունից, եթե այդպես է ցանկանում։ Բայց ինչո՞ւ...

Մեկ-երկու օր հետո Բրենդերը մասամբ զղջաց, բայց չհասցրեց գործն ուղղել։ Սպիտակեղենը վերցվեց ու նրան վերադարձվեց բոլորովին պաշտոնական ձևով, և նա գլխովին իր գործերի մեջ սուզված լինելով, ոչ մի բան չէր մտաբերում, մինչև որ ցավալի պարտություն կրեց, հակառակորդը երկու ձայն ավելի էր ստացել։ Այդ ելքից Բրենդերը բոլորովին վհատվել ու ճնշվել էր։ Հիմա ի՞նչ պիտի աներ նա։

Այսպիսի վիճակում գտավ նրան Ջեննին, որից զվարթություն, հույս և կյանքի ուրախություն էր բուրում։ Մռայլ մտքերից հուսահատության հասած Բրենդերը նրա հետ խոսել սկսեց սկզբում պարզապես նրա համար, որ մտքերը ցրի, բայց նրա վհատությունն աննկատելիորեն փարատվեց, և շուտով ինքն էլ նկատեց, որ ժպտում է։

— Ա՜խ, Ջեննի,— ասաց նա նրան, ինչպես երեխայի

հետ են խոսում,— դուք բախտավոր եք, որ ջահել եք։ Դա կյանքում ամենալավ, ամենաթանկ բանն է։

— Իսկապե՞ս։

— Այո, միայն թե հիմա դուք այդ չեք հասկանում։ Միշտ էլ շատ ուշ են սկսում հասկանալ այդ։

«Ես սիրում եմ այդ աղջկան,— նույն դիշերը ասաց նա ինքն իրեն։— Ես կուզենայի երբեք չբաժանվել նրանից»։

Բայց բախտը նրա համար էլի մի հարված էր պատրաստել։ Հյուրանոցում սկսել էին խոսել, թե Ջեննին, մեղմ արտահայտած, իրեն տարօրինակ է պահում։ Լվացարարուհու աղջիկը երբեք չի կարող կշտամբական դիտողություններից ազատվել, եթե նրա զուգսի մեջ իր դիրքին անհամապատասխան որևէ բան նկատեն։ Ջեննիի ձեռքին ոսկե ժամացույց էին տեսել։ Ավագ սպասուհին դրա մասին մորն ասաց.

— Ես որոշեցի խոսել ձեզ հետ։ Դուք չպետք է ձեր աղջկան ուղարկեք նրա մոտ սպիտակեղեն տանելու, թե չէ արդեն բամբասանքներ են սկսվել։

Միսիս Գերհարդն այնպես շփոթվեց ու վշտացավ, որ ոչ մի խոսք ասել չկարողացավ։ Ջեննին նրան ոչ մի բան չէր ասել, բայց նա նույնիսկ այժմ չէր հավատում, թե այստեղ լուրջ խոսակցության որևէ առիթ կա։ Որ սենատորը Ջեննիին ժամացույց էր ընծայել, դա հուզել ու հիացրել էր նրան։ Նրա մտքովն էլ չէր անցել, թե դրանից իր աղջկա բարի անվանը որևէ վտանգ է սպառնում։

Նա տուն վերադարձավ շատ վատ տրամադրությամբ և Ջեննիին պատմեց պատահածի մասին։ Բայց աղջիկը ընդունեց, թե իր արարքների մեջ որևէ վատ բան կա։ Նա դրան բոլորովին այլ կերպ էր նայում։ Սակայն նա սենատորի հետ իր ունեցած հանդիպումների մասին մանրամասն չպատմեց։

— Ինչ սոսկալի բան է, որ այդպիսի բամբասանքներ են սկսվել,— ասաց մայրը։— Եվ դու իսկապե՞ս երկար ժամանակ մնում ես նրա մոտ։

— Չգիտեմ,— պատասխանեց Ջեննին, որին իր խիղճն ստիպում էր գեթ մասամբ խոստովանել ճշմարտությունը,— գուցե մնում եմ։

— Բայց նա քեզ երբեք որևէ անհարմար բան չի՞ ասել։

— Ոչ,— պատասխանեց աղջիկը, չկասկածելով նույնիսկ, որ իր ու Բրենդերի հարաբերությունների մեջ կարող է որևէ վատ բան լինել։

Եթե մայրը էլի մի քիչ հարցուփորձ աներ Ջեննիին, ավելի շատ բան կիմանար, բայց հենց իր իսկ հոգեկան հանգստության համար ուրախ էր շուտ վերջ տալ այդ խոսակցությանը։ Լավ մարդուն միշտ էլ աշխատում են բամբասել, այս նա գիտեր։ Ջեննին մի քիչ անխոհեմ է եղել։ Մարդիկ միշտ էլ բամբասելու սեր ունեն։ Կյանքն այնքան ծանր է, և մի՞թե խեղճ աղջիկը կարող էր այլ կերպ վարվել, քան Ջեննին է վարվել։ Եվ միսիս Գերհարդն այս ամենը մտածելով, արտասվեց։

Ի վերջո նա որոշեց, որ ինքը կգնա սենատորի մոտ սպիտակեղենին։

Եվ ահա, հաջորդ երկուշաբթի օրը նա բախեց սենատորի դուռը։ Բրենդերը, որ սպասում էր Ջեննիին տեսնել, զարմացած ու հիասթափված էր։

— Իսկ ի՞նչ է պատահել Ջեննիին,— հարցրեց նա։

Միսիս Գերհարդը հույս ուներ, թե նա չի նկատի փոփոխությունը կամ, համենայն դեպս, ոչինչ չի հարցնի, և հիմա չգիտեր ինչ պատասխանի։ Նա սենատորին նայեց միամտորեն ու անօգնական և ասաց.

— Ջեննին այսօր չկարողացավ գալ։

— Բայց նա հո հիվանդ չէ՞։

— Ոչ։

— Ուրախ եմ այդ լսելուս,— ասաց սենատորը խոնարհաբար։— Իսկ դուք ինչպե՞ս եք։

Միսիս Գերհարդը պատասխանեց նրա սիրալիր հարցերին և հրաժեշտ տվեց։ Նրա գնալուց հետո սենատորը մտքի մեջ ընկավ ինքն իրեն հարց տալով, թե ինչ կարող է պատահած լինել։ Հենց իր համար էլ տարօրինակ էր, որ այդպիսի հարցերն ղբաղեցնում են իրեն։

Բայց շաբաթ օրը, երբ նորից մայրը բերեց սպիտակեղենը, սենատորն զգաց, որ այստեղ ինչ-որ բան կա։

— Այս ի՞նչ բան է, միսիս Գերհարդ,— հարցրեց նա։— Ձեր աղջկանը որևէ բա՞ն է պատահել։

— Ոչ, սըր,— պատասխանեց կինը այնքան հուզված, որ ստել չէր կարող։

— Հապա ինչո՞ւ այլևս նա չի բերում սպիտակեղենը։

— Ես... ես...— միսիս Գերհարդը հուզմունքից կմկըմաց։— Նա... նրա մասին սկսել են վատ-վատ բաներ խոսել...— վերջապես ջանք գործադրելով ասաց նա։

— Ովքե՞ր են սկսել խոսել,—լրջորեն հարցրեց Բրենդերը։

— Այստեղ, հյուրանոցում։

— Այստե՞ղ, ովքե՞ր,— նրա ձայնը հնչում էր զրդռված։

— Ավագ սպասուհին։

— Ա՜խ, ավագ սպասուհի՞ն,— բացականչեց նա։— Եվ ի՞նչ է ասում նա։

Մայրը նրան պատմեց իր խոսակցությունը ավագ սպասուհու հետ։

— Ա՜յ թե ինչ,— զայրույթով գոչեց Բրենդերը։— Նա համարձակվում է խառնվել իմ գործերի՞ն։ Կուզենայի իմանալ, ինչո՞ւ մարդիկ չեն կարողանում իրենց բանին մնալ և ինձ հանգիստ թողնել։ Ինձ հետ ծանոթությունը ոչինչ չի սպառնում ձեր աղջկան, միսիս Գերհարդ։ Ես նրան ոչ մի վատ բան չեմ անի։ Ամոթ-խայտառակություն է,— ավելացրեց նա վրդովմունքով,— որ աղջիկը չի կարող գալ ինձ մոտ, հյուրանոց, որովհետև կսկսեն կասկածել նրան։ Ես զեռ կպարզեմ, թե սա ինչ բան է։

— Միայն դուք չկարծեք... ես այստեղ մեղք չունեմ,— մեղավորի տոնով ասաց միսիս Գերհարդը։— Ես գիտեմ, դուք Ջեննիին սիրում եք և նրան շարիք չեք կամենում։ Դուք այնքան շատ լավություն եք արել նրան և մեզ բոլորիս, միստըր Բրենդեր, և ես ամաչում եմ, որ նրան չեմ թողնում ձեզ մոտ գալ։

— Ոչինչ, միսիս Գերհարդ,— հանգիստ ասաց Բրենդերը։— Դուք ճիշտ եք վարվել։ Ես ձեզ ամենևին չեմ դատապարտում։ Բայց ինձ զայրացնում է, որ հյուրանոցում այդպիսի լուրեր են պտտվում։ Կտեսնենք, թե ով է մեղավորը։

Միսիս Գերհարդը հուզմունքից գունատվեց։ Նա վախենում էր, թե վիրավորեց այն մարդուն, որն այնքան շատ բան է արել իրենց համար։ Եթե գոնե ասեր նրան, բացատրեր ամեն ինչ, որպեսզի նա չմտածի, թե ինքն է բամբասանքներ տարածում։ Նա այնքա՞ն էր վախենում անախորժություններից։

— Ես ուզում էի այնպես անել, ինչպես ավելի լավ է,— վերջապես ասաց նա։

— Դուք միանգամայն իրավացի եք,— պատասխանեց Բրենդերը։— Ես Ջեննիին շատ եմ սիրում։ Ինձ համար միշտ էլ հաճելի է, երբ նա գալիս է։ Ես նրա լավն եմ ուզում, բայց գուցե ավելի լավ է, եթե նա չգա, համենայն դեպս, մոտ ժամանակներս։

Այդ երեկո սենատորը նորից իր բաղկաթոռին նստած խորհում էր պատահածի մասին։ Բանից դուրս է գալիս, որ Ջեննին նրա համար շատ ավելի թանկ է, քան ինքը կարծում էր առաջ։ Հիմա, երբ նա այլևս հույս չուներ նրան իր մոտ տեսնելու, սկսեց հասկանալ, թե իր համար որքան շատ բան էին նշանակում այդ աղջկա կարճատև այցելությունները։ Նա խորհեց ամեն ինչի մասին, իսկույն հասկացավ, որ հյուրանոցում բամբասանքներից խուսափել չի լինի և այն հետևության եկավ, որ իրոք, աղջկան շատ անհարմար դրության մեջ է դրել։

«Թերևս ինձ հարկավոր էր վերջ դնել այս պատմությանը,— մտածում էր նա։— Ես ինձ շատ անխոհեմ եմ պահել»։

Այսպիսի եզրակացության գալով՝ Բրենդերը գնաց Վաշինգտոն, որտեղ և ապրեց մինչև իր սենատորական լիազորությունների ժամանակը լրացավ։ Ապա վերադարձավ Կոլումբուս և սկսեց սպասել, որպեսզի պրեզիդենտը բարեկամական համակրանքից մղված իրեն որևէ պատասխանատու պաշտոն տա արտասահմանում։ Բայց Ջեննիին մոռանալ նրան չէր հաջողվում։ Որքան ավելի երկար էր հեռու մնում նրանից, այնքան ավելի էր փափագում նորից տեսնել նրան։ Նորից իր հին տեղը հաստատվելով, Բրենդերը մի գեղեցիկ առավոտ ձեռնափայտը վերցրեց և քայլեց շատ լավ

ծանոթ ճանապարհով։ Հասնելով Գերհարդների տանը, նա որոշեց ներս մտնել, դուռը բախեց, և նրան զարմանքի ու հարգալից ժպիտով դիմավորեցին միսիս Գերհարդն ու իր դուստրը։ Նա անորոշ ձևով բացատրեց, թե քաղաքից գնացած է եղել և հիշատակեց լվացքի մասին, որպես թե հենց դրա համար է եկել։ Հետո, երբ բախտը բերեց ու մի քանի րոպե Ջեննիի հետ մենակ մնաց, քաջաբար գործի անցավ։

— Կուզե՞ք վաղը երեկոյան ինձ հետ միասին կառքով զբոսնել,— հարցրեց նա։

— Կուզեմ,— պատասխանեց Ջեննին, որի համար այդպիսի զվարճությունը նորություն էր և հրապուրիչ։

Բրենդերը ժպտալով թփթփացրեց նրա այտին, պատանու նման ուրախանալով, որ նորից տեսնում է նրան։ Թվում էր, թե նա օրեցօր դեղեցկանում է։ Ձյունափառ դոգնոցով, գլխի շուրջը պինդ հյուսած ծամերով նա այնքան սիրունիկ էր երևում, որ դժվար էր չհիանալ նրանով։

Բրենդերն սպասեց մինչև միսիս Գերհարդի վերադարձը և տեղից վեր կացավ. նա այլևս մնալու բան չուներ։

— Ես պատրաստվում եմ վաղը երեկոյան զբոսանքի գնալ ձեր դստեր հետ,— ասաց նա։— Ուզում եմ հետը խոսել իր ապագայի մասին։

— Դե ինչ կա որ,— ասաց մայրը։

Նա այդ բանում ոչ մի անպատշաճություն չէր տեսնում։ Նրանք բաժանվեցին բազմաթիվ ժպիտներ փոխանակելով և իրար ձեռք սեղմելով։

— Ոսկի սիրտ ունի այս մարդը,— ասաց միսիս Գերհարդը։— Եվ ինչքան շատ է խոսում քո մասին, չէ՞։ Նա կարող է քեզ օգնել կրթություն ստանալու։ Դու պետք է շատ պարծենաս դրանով։

— Ես հենց պարծենում եմ,— անկեղծորեն խոստովանեց Ջեննին։

— Չգիտեմ, արժե՞ սրա մասին հորդ պատմել,— ասաց միսիս Գերհարդը։— Նա չի սիրում, երբ դու երեկոները տանից դուրս ես գնում։

Ի վերջո նրանք որոշեցին հորը չասել։ Նա երևի չի հասկանա։

Ջեննին արդեն պատրաստ էր, երբ մյուս օրը Բրենդերը մտավ նրանց տուն։ Համեստ լամպի աղոտ լույսի տակ նա նկատեց, որ աղջիկը այդ դեպքի առթիվ զուգվել է. նա հագել էր իր ամենալավ շորը։ Բաց շուշանագույն չթե շորը ժանեկազարդ նեղ թևերով և հիանալիորեն օսլայած ու հարթուկած բավական բարձր օձիքով՝ ընդգծում էր նրա անբասիր իրանը։ Նա ոչ ձեռնոց ուներ, ոչ որևէ զարդարանք, ոչ էլ գոնե մի կարգին ժակետ, բայց ճաշակով սանրած մազերը ամենամողայիկ գլխարկից ավելի լավ էին զարդարում նրա սիրունիկ գլուխը և մի քանի դուրս պրծած խոպոպները պսակում էին նրան թեթև լուսապսակի պես։ Երբ Բրենդերը փորհուրդ տվեց ժակետ հագնել, նա մի վայրկյան տատանվեց, ապա անցավ մյուս սենյակը և վերադարձավ մոր հասարակ մոխրագույն թիկնոցն ուսերին։ Այստեղ Բրենդերը հասկացավ, որ նա ժակետ չունի և սրտի ցավով մտածեց, որ ուզում էր տանց դրան յոլա գնալ։

«Նա կատաղեր երեկոյան,— մտածեց Բրենդերը,— և, իհարկե, դրանից չէր զանազատվի»։

Նա նայեց Ջեննիին և մատախոհ գլուխն օրորեց։ Հետո նրանք ճամփա ընկան, և Բրենդերն խոկույն մոռացավ ամեն ինչ, բացի նրանից, որ Ջեննին իր կողքին է։ Նա խոսում էր ամեն ինչի մասին աղատորեն և կիսամանկական հավիշտակությամբ, որը Բրենդերին թվում էր այնքան թովիչ։

— Լսեցեք, Ջեննի,— ասաց նա, տեսնելով, որ աղջիկը աքանչացած է ծագող լուսնի մեղմ շողերով ոսկեզօծված ծառերի նուրբ գծագրությամբ։— Դուք արտասովոր աղջիկ եք։ Ես համոզված եմ, որ եթե դուք մի քիչ ուսում տանեիք, ոտանավորներ կգրեիք։

— Կարծում եք կկարողանայի՞,— միամտորեն հարցրեց Ջեննին։

— Կարծո՞ւմ, Ջեննի,— ասաց նա աղջկա ձեռքը բռնելով։— Կարծո՞ւմ։ Ես այդ գիտեմ։ Դուք աշխարհիս երեսին ամենաանուշ երազողն եք։ Իհարկե, դուք կարող եք բանաս-

տեղծ լինել։ Դուք պոեզիայով եք զբաղվում։ Դուք հենց պոեզիա եք, որ կաք, սիրելիս։ Եվ այնքան էլ կարևոր չէ՝ ոտանավորներ գրել կարողանում եք թե ոչ։

Ոչ մի բան չէր կարող այնքան հուզել աղջկան, որքան այս դավասանքը։ Նա այնպիսի անուշ բաներ է ասում։ Կարծես ոչ ոք և երբեք սրա կեսի չափ էլ իրեն չի սիրել ու գնահատել։ Եվ որքա՜ն բարի է նա։ Բոլորն են ասում այս։ Նույնիսկ հայրիկը։

Նրանք ավելի ու ավելի հեռու էին գնում։ Հետո, ասես ինչ-որ բան հիշելով, Բրենդերը հանկարծ ասաց.

— Հետաքրքիր է, ժամը քանի՞սն է։ Երևի վերադառնալու ժամանակն է։ Ձեր ժամացույցը վերցրե՞լ եք։

Ջեննին ցնցվեց։ Ժամացույցը. նա այնպես էր վախենում, թե Բրենդերը կխոսի ժամացույցի մասին։ Նրա վերադառնալուց հետո աղջիկն անընդհատ սպասում էր այդ բոպեին։

Բրենդերի բացակայության ժամանակ ընտանիքում փողը խիստ պակասել էր, և Ջեննին ստիպված էր եղել ժամացույցը գրավ դնել։ Մարթայի շորն այն վիճակին էր հասել, որ աղջիկն այլևս չէր կարողանում դպրոց հաճախել։ Եվ ահա երկար քննարկումներից հետո որոշվել էր ժամացույցից հրաժարվել։

Բասսը երկար վեճերից հետո ժամացույցը տարել էր հարևան վաշխառուի մոտ և գրավ դրել տասը դոլլարով։ Միսիս Գերհարդն այդ փողը ծախսել էր երեխաների վրա և թեթևացած շունչ քաշել։ Մարթան որքա՜ն ավելի կարգին տեսք էր ստացել։ Հասկանալի է, Ջեննին ուրախ էր դրա համար։

Բայց այժմ, երբ սենատորը խոսեց իր ընծայի մասին, նրան թվաց, թե հասել է հատուցման ժամը։ Նա ամբողջ մարմնով դողում էր, և Բրենդերը նկատեց նրա շփոթմունքը։

— Ի՞նչ պատահեց ձեզ, Ջեննի,— ասաց նա սիրալիր։— Ինչո՞ւ այդպես ցնցվեցիք։

— Ոչինչ,— պատասխանեց աղջիկը։

— Ժամացույցը ձեզ մոտ չէ՞։

Ջեննին հապաղում էր, ստելը նրան անհնարին էր թըվում։ Տիրեց անհարմար լռություն։ Հետո Ջեննին ասաց.

— Ոչ, սըր։

Նրա ձայնի մեջ արցունք զգացվեց։

Բրենդերն իսկույն ճշմարտությունը կասկածեց, սկսեց հարցը պնդել, և աղջիկն ամեն ինչ խոստովանեց։

— Հարկավոր չէ վշտանալ, սիրելիս,— ասաց նա։— Դուք ամենալավ աղջիկն եք աշխարհի երեսին։ Ես գրավիչ կհանեմ ձեր ժամացույցը։ Իսկ հետագայում, երբ դուք որևէ բանի կարիք կունենաք, անպայման եկեք ինձ մոտ։ Լսո՞ւմ եք։ Անպայման, խոստացեք ինձ այդ։ Եթե ես քաղաքում չլինեմ, գրեցեք ինձ։ Ես այլևս երբեք ձեզ իմ տեսադաշտից չեմ կորցնի։ Իմ հասցեն միշտ ձեր մոտ կլինի։ Բավական է, որ ինձ իմաց տաք, և ես կօգնեմ ձեզ։ Լսո՞ւմ եք։

— Այո,— ասաց Ջեննին։

— Դուք այդ խոստանում եք ինձ, չէ՞։

— Այո,— պատասխանեց աղջիկը։

Մի ոտքի երկուսն էլ լուռ էին։

— Ջեննի,— վերջապես ասաց սենատորը. դարձանային այդ սքանչելի երեկոյի ազդեցությամբ նրա զգացմունքը դուրս էր հորդել,— ես համոզվեցի, որ առանց ձեզ ապրել չեմ կարող։ Դուք կհամաձայնեի՞ք այլևս չբաժանվել ինձանից։

Ջեննին մի կողմ էր նայում, այնքան էլ չհասկանալով, թե ինչ է ուզում նա։

— Չգիտեմ,— անորոշ պատասխանեց նա։

— Դե ուրեմն մտածեցեք սրա մասին,— մեղմորեն ասաց Բրենդերը։— Ես լուրջ եմ խոսում։ Կուզեի՞ք դառնալ իմ կինը և մի քանի տարով գնալ սովորելու։

— Գնալ դպրո՞ց մտնել։

— Այո, մեր ամուսնությունից հետո։

— Գուցե և այո...— պատասխանեց Ջեննին։

Նա մտածում էր մոր մասին։ Գուցե թե դրանով նա կօգներ հարազատներին։

Բրենդերը դարձավ նրան, ջանալով տեսնել նրա դեմքի

արտահայտությունը։ Բավական լույս էր։ Արևելքում ծառերի գագաթներին երևաց լուսինը, և անհամար աստղերն արդեն աղոտացան նրա ճառագայթներից։

— Մի՞թե դուք իմ նկատմամբ բոլորովին անտարբեր եք, Ջեննի,— հարցրեց նա։

— Ոչ։

— Բայց դուք այլևս երբեք չեք գալիս ինձ մոտ՝ սպիտակեղենը տանելու,— դառնորեն դանդատվեց սենատորը։

Դրանից աղջիկն զգացվեց։

— Ես մեղավոր չեմ,— պատասխանեց նա։— Ի՞նչ կարող եմ անել։ Մայրիկս կարծում է, որ այդպես ավելի լավ կլինի։

— Նա իրավացի է,— համաձայնեց Բրենդերը։— Մի՞ վշտացեք, ես պարզապես կատակ արի։ Բայց դուք գոհունակությամբ կգայիք, եթե կարողանայիք, հիշտ չէ՞։

— Այո,— անկեղծորեն պատասխանեց աղջիկը։

Բրենդերը նրա ձեռքը բռնեց և այնպես սիրալիր սեղմեց, որ նրա խոսքերը կրկնակի չափով հուզեցին Ջեննիին։ Նա թափով գրկեց սենատորին։

— Դուք այնքա՞ն բարի եք, —ասաց նա դստեր քննքշությամբ։

— Ջեննի, սիրելի աղջիկս,— խորին զգացմունքով ասաց Բրենդերը,— ես ձեզ համար ամեն ինչի պատրաստ եմ։

ԳԼՈՒԽ VI

Տարաբախտ ընտանիքի հայրը, Ուիլյամ Գերհարդը, ծնունդով սաքսոնացի, սովորական մարդ չէր։ Դեռ տասնութամյա հասակում նրան վրդովեցրել էր ընդհանուր զինվորական պարտականության օրենքի անարդարացիությունը և նա փախել էր Փարիզ։ Իսկ այնտեղից էլ տեղափոխվել էր Ամերիկա, այդ ավետյաց երկիրը։

Հասնելով այստեղ՝ նա սկզբում Նյու-Յորքից անցել էր Ֆիլադելֆիա, իսկ հետո՝ ավելի հեռու, դեպի արևմուտք։

Միառժամանակ աշխատել էր Պենսիլվանիայի այլևայլ ապակու գործարաններում։ Այս նոր աշխարհի մի գեղատեսիլ գյուղում նա գտել էր իր կյանքի ընկերուհուն, որի մասին միշտ երազել էր։ Դա գերմանական ծագումով մի համեստ դեռատի ամերիկուհի էր, որի հետ Գերհարդը տեղափոխվել էր Յանգուստան, ապա՝ Կոլումբուս, շարունակ հետևելով Հեմմոնդ ազգանունով ապակու գործարանատիրոջը, որի գործերը մերթ հաջողակ էին լինում, մերթ ձախողակ։

Գերհարդն աղնիվ մարդ էր, և նրան հաճելի էր, որ մարդիկ գնահատում են անկեղծ լինելու իր հատկությունը։

— Ուիլյամ,— հաճախ ասում էր նրան գործարանատերը,— ես ուզում եմ, որ դու ինձ մոտ աշխատես, որովհետև քեզ կարող եմ վստահել։

Եվ այս գովասանքը Գերհարդի համար ոսկուց էլ թանկ էր։

Նրա ազնվությունը, ինչպես և կրոնական համոզմունքները մանկությունից էին ամրացել նրա մեջ և միս ու արյուն դարձել։ Գերհարդը երբեք դրա մասին չէր մտածել։ Նրա հայրն ու պապը եղել էին գովական գերմանացի արհեստավորներ, որոնք երբեք ոչ ոքի մի գրոշի անգամ չէին խաբել, և այդ համառ ազնվությունը լիովին անցել էր նրան։

Նա իսկական լութերական էր։ Կանոնավոր եկեղեցի հաճախելը և ընտանեկան բոլոր ծեսերի պահպանումը երկար տարիների ընթացքում ամրապնդել էին նրա հայացքներն ու հավատը։ Նրա հոր տանը քահանայի խոսքը օրենք էր եղել, և Գերհարդը ժառանգել էր այն համոզմունքը, թե լութերական եկեղեցին անբասիր է և անդրշիրիմյան կյանքի մասին նրա ուսմունքը անսխալական ու անառարկելի է։ Նրա կինը, որ ձևականորեն մինոնիտների ուսմունքին էր հետևում, սիրով ընդունեց ամուսնու դավանանքը։ Այսպես ուրեմն, նրա ընտանիքը լիովին աստվածավախ էր։ Ուր էլ որ տեղափոխվում էին Գերհարդները, ամենից առաջ մտնում էին տեղական լութերական եկեղեցու ծխերի շարքերը, և քահանան նրանց տան ցանկալի հյուրն էր դառնում։

Միստր Վունդտը, Կոլումբուս քաղաքի լութերականների

Հովիվը, անկեղծ ու նախանձախնդիր քրիստոնյա էր և կույր, անհանդուրժող ֆանատիկոս։ Նա կարծում էր, որ իր հոտի անդամները եթե պարում են, թուղթ են խաղում կամ թատրոն հաճախում, վտանգի են ենթարկում իրենց հոգու փրկությունը և առանց տատանվելու իր թոքերի ամբողջ ուժով ազդարարում էր, թե ով չի ենթարկվի իր պատվիրաններին, դժոխք կընկնի։ Խմելը, նույնիսկ չափավոր, մեղք է։ Ծխելը... ասենք, նա ինքն էլ ծխում էր։ Անարատությունը մինչև ամուսնանալը, իսկ հետո ամուսնության սրբությունը պահպանելը խիստ պարտադիր է ամեն մի քրիստոնյայի համար։ Փրկություն չկա, ասում էր նա, այն աղջկանը, ով չի կարող պահպանել իր անարատությունը և այն ծնողներին, որոնք թույլ կտան, որ իրենց աղջիկը մեղք գործի։ Նրանք դժոխք կընկնեն։ Անշեղորեն ընթացեք առաքինության ուղիով, որպեսզի խուսափեք հավիտենական պատժից, որովհետև արդարադատ աստծո ցասումն անպայման կհասնի մեղապարտին։

Գերհարդը, նրա կինն ու Ջեննին առանց առարկության ընդունում էին իրենց եկեղեցու ուսմունքը միստր Վունդտի մեկնաբանությամբ։ Բայց Ջեննին ըստ էության այդ ամենին համաձայնում էր միայն ձևականորեն։ Կրոնը դեռ նրա վրա վճռական ազդեցություն չուներ։ Հաճելի է իմանալ, որ գոյություն ունի դրախտ, վախեցնում է այն միտքը, թե գոյություն ունի դժոխք։ Տղաներն ու աղջիկները պետք է լավ պահեն իրենց և հնազանդ լինեն ծնողներին։ Մնացած ամեն ինչում Ջեննիի կրոնական հասկացողությունները բավական աղոտ էին։

Գերհարդ-հայրը համոզված էր, որ իր եկեղեցու ամբիոնից արտասանված ամեն մի խոսք անվիճելի ճշմարտություն է։ Անդրշիրիմյան կյանքը նրան միանգամայն իրական բան էր թվում։

Իսկ տարիներն անցնում էին, կյանքն ավելի ու ավելի անհասկանալի և անբացատրելի էր դառնում, և Գերհարդը մոլեգնորեն կառչում էր կրոնական դոգմաներից, որոնք պատասխան էին տալիս բոլոր հարցերին։ Օ՜, եթե նա այնքան աղնիվ ու կայուն լիներ, որ աստված ոչ մի հիմք չունե-

Նա իրեն մերժելու։ Նա դողում էր ոչ միայն իր, այլև կնոջ ու երեխաների համար։ Չէ՞ որ կգա օրը, երբ ինքն ստիպված կլինի պատասխան տալ նրանց համար։ Արդյոք իրենց բոլորին կործանման չի՞ հասցնի իր թուլությունը և այն, որ չի կարողացել նրանց ներշնչել հավիտենական կյանքի օրենքները։ Իր երևակայության մեջ նա պատկերացնում էր դժոխքի տանջանքները և ինքն իրեն հարց էր տալիս, թե վերջին ժամին ինչ է սպասում իրեն և իր մերձավորներին։

Բնական է, որ այսքան խոր կրոնականությունը նրան անողոք էր դարձրել երեխաների նկատմամբ։ Երիտասարդների զվարճություններին ու թուլություններին նա խեթ էր նայում։ Իր հայրական կամքով լիներ՝ Ջեննին երբեք չէր իմանա, թե ինչ բան է սերը։ Եթե նույնիսկ նա քաղաքում որևէ տեղ ծանոթանար երիտասարդ տղաների հետ և նրանք սկսեին սիրահետել նրան, հայրը իրենց շեմքից ներս չէր թողնի այդ երիտասարդներին։ Նա մոռացել էր, որ ինքն էլ մի ժամանակ երիտասարդ է եղել, և այժմ հոգում էր միայն իր դստեր հոգու փրկության համար։ Եվ ահա սենատորը աղջկա կյանքում բոլորովին նոր երևույթ էր։

Երբ Բրենդերն առաջին անգամ սկսեց մասնակցություն ունենալ ընտանիքի գործերին, Գերհարդ-հոր բոլոր պատկերացումները, թե ինչն է լավ և ինչն է վատ՝ անզոր գտնվեցին։ Նա չգիտեր, թե ինչ չափանիշով մոտենա այդպիսի մարդուն։ Բրենդերը մի սովորական կավալեր չէր, որը փորձում է սիրահետել նրա սիրունիկ աղջկան։ Գերհարդների կյանքին սենատորի միջամտությունն այնքան յուրատեսակ էր և միաժամանակ այնքան բարետես, որ նա սկսեց այդ կյանքում կարևոր դեր խաղալ, նախքան որևէ մեկը ուշքի կգար։ Նույնիսկ Գերհարդն ինքը մոլորության մեջ էր ընկել։ Նա այդ աղբյուրից ոչ մի բան չէր սպասում, բացի հարգանքից և օգուտից իր ու իր ընտանիքի համար, ուստի և ամենայն հանգստությամբ ընդունում էր սենատորի հոգատարությունն ու ծառայությունները։ Ի դեպ, կինը նրան ոչինչ չէր ասել այն բազմաթիվ ընծաների մասին, որ Բրենդերից ստացել էին այն հիանալի ծննդյան տոնից և՛ առաջ, և՛ հետո։

Բայց մի առավոտ, երբ Գերհարդը գիշերային աշխատանքից հետո տուն էր վերադառնում, նրան մոտեցավ իր հարևան Օտտո Ուիվերը։

— Գերհարդ,— ասաց նա,— ես ուզում եմ խոսել քեզ հետ։ Ես քո բարեկամն եմ և ուզում եմ պատմել քեզ, ինչ լսել եմ։ Գիտե՞ս ինչ, մեր հարևանները շատ բաներ են խոսում այն մարդու մասին, որը գնում-գալիս է քո աղջկա մոտ։

— Իմ աղջկա՞,— կրկնեց Գերհարդը անասելի շշմած ու նեղացած այդ անսպասելի հարձակումից։— Ո՞ւմ մասին է խոսքդ։ Ես չգիտեմ ինչ մարդ է գնում-գալիս իմ աղջկա մոտ։

— Չգիտե՞ս,— հարցրեց Ուիվերը, զրուցակցից ոչ պակաս զարմացած։— Արդեն հասակն առած մարդ է, մաղերը կիսով չափ ճերմակած։ Երբեմն ձեռնափայտով է գալիս։ Մի՞թե դու նրան չես ճանաչում։

Գերհարդը մտահոգ տեսքով հիշողությունն էր փորփրում։

— Ասում են նա առաջ սենատոր է եղել,— անվստահ շարունակեց Ուիվերը։— Հաստատ չգիտեմ։

— Ա՜, սենատոր Բրենդերը,— որոշ չափով թեթևացած ասաց Գերհարդը։— Այո՛։ Նա երբեմն գալիս է մեզ մոտ։ Ճիշտ է։ Լավ, հետո ի՞նչ դրանից։

— Դե ոչինչ,— պատասխանեց հարևանը,— միայն թե, ա՛յ, մարդիկ բամբասում են։ Նա արդեն, գիտես էլի, ջահել մարդ չէ։ Աղջիկդ մեկ-մեկ նրա հետ զբոսանքի է գնացել։ Իսկ մարդիկ այդ տեսել են, և հիմա խոսակցություններ են սկսվել։ Դե ես էլ մտածեցի, թե գուցե հարկավոր է, որ դու իմանաս այս։

Այս սոսկալի խոսքերը Գերհարդին մինչև հոգու խորքը ցնցեցին։ Երևի մարդիկ իզուր չեն այսպիսի բաներ ասում։ Ջեննին և իր մայրը լուրջ մեղք են գործել։ Բայց և այնպես նա առանց տատանվելու աղջկան պաշտպան կանգնեց։

— Դա մեր ընտանիքի բարեկամն է,— շփոթված ասաց նա։— Մարդիկ իզուր են խոսում այն մասին, ինչ իրենք չգիտեն։ Իմ աղջիկը ոչ մի վատ բան չի արել։

— Դե հասկանալի է։ Այստեղ մի վատ բան չկա,—

ասաց Ուիվերը։— Հաճախ հարևանները զուր շատախոսում են։ Բայց ես ու դու հին բարեկամներ ենք, և ես մտածեցի, թե գուցե պետք է, որ դու իմանաս...

Էլի մի բոպե Գերհարդը մնաց լուռ կանգնած, բերանը կիսաբաց։ Մի տարօրինակ անօգնականություն էր համակել նրան։ Ի՞նչ սարսափելի է, երբ մարդիկ քեզ թշնամի են դառնում։ Որքա՞ն կարևոր է, որ նրանց կարծիքն ու համակրանքը քո կողմը լինի։ Նա, Գերհարդը, այնպե՞ս աշխատել է ապրել սահմանված բոլոր կանոնները պահպանելով։ Ինչո՞ւ մարդիկ չեն գոհանում դրանով և իրեն հանդիստ չեն թողնում։

— Շնորհակալ եմ, որ ասացիր ինձ,— մրթմրթաց նա տան կողմն ուղղվելով։— Կմտածեմ դրա մասին։ Մնաս բարով։

Նա օգտվեց առաջին իսկ հարմար առիթից, որպեսզի կնոջը հարցուփորձ անի։

— Սենատոր Բրենդերն ինչի՞ համար է գալիս Ջեննիի մոտ,— հարցրեց նա գերմաներեն։— Հարևաններն արդեն սկսել են բամբասել։

— Այստեղ մի վատ բան չկա,— պատասխանեց միսիս Գերհարդը նույնպես գերմաներեն։ Հարցը ակներևաբար նրբան անակնկալի էր բերել։— Նա ընդամենը մի երկու-երեք անգամ է եկել։

— Բայց դու ինձ չես ասել դրա մասին,— առարկեց ամուսինը, վրդովվելով, որ կինը հանդուրժել է աղջկա այդ արարքը և թաքցրել է այն։

— Ոչ, չեմ ասել,— պատասխանեց միսիս Գերհարդը բոլորովին շփոթված։— Նա եկել է միայն մի երկու անգամ։

— Մի՞այն, —գոչեց Գերհարդը՝ ենթարկվելով ձայնը բարձրացնելու զուտ գերմանական սովորությանը։— Մի՞այն։ Բոլոր հարևաններն արդեն խոսում են դրա մասին։ Աստ, խնդրեմ, ինչի՞ նման է սա։

— Նա եկել է ընդամենը մի երկու անգամ,— անօգնական կրկնեց միսիս Գերհարդը։

— Հենց նոր փողոցում ինձ մոտեցավ Ուիվերը,— շարունակեց Գերհարդը,— և ասաց, որ բոլոր հարևանները շա-

տախոսում են այն մարդու մասին, որի հետ զբոսնում է իմ աղջիկը։ Իսկ ես ոչինչ չգիտեմ։ Կանգնել եմ ապուշի պես և չգիտեմ ինչ ասեմ։ Ինչի՞ նման է սա։ Ի՞նչ կմտածի նա իմ մասին։

— Այստեղ մի այնպիսի բան չկա,— ասաց կինը։— Ջեննին մի երկու անգամ նրա հետ զբոսանքի է գնացել։ Նա ինքն է այստեղ եկել, մեր տուն։ Այստեղ ի՞նչ կա որ, ինչ խոսելու բան է։ Մի՞թե աղջիկը մի քիչ զվարճանալու իրավունք չունի։

— Բայց նա արդեն ջահել մարդ չէ,— առարկեց Գերհարդը, կրկնելով Ուիվերի խոսքը։— Ականավոր մարդ է, բարձր դիրքով։ Ինչի՞ համար է գալիս Ջեննիի նման մի աղջրկա մոտ։

— Չգիտեմ,— պաշտպանվում էր միսիս Գերհարդը։— Գալիս է մեր տուն։ Ես նրա մասին ոչ մի վատ բան չգիտեմ։ Ես կարո՞ղ եմ նրան ասել, որ չգա։

Գերհարդն այստեղ լռեց։ Սենատորին նա ճանաչում էր լավ կողմից։ Իսկապես, ի՛նչ մի սարսափելի բան կա այստեղ։

— Հարևանները միշտ էլ սիրում են բամբասել։ Էլ ուրիշ խոսելու բան չունեն, Ջեննիի մասին են շատախոսում։ Դու ինքդ գիտես, Ջեննին լավ աղջիկ է։ Ինչի՞ են այդպիսի բաներ ասում,— և բարեսիրտ մոր աչքերն արցունքով լցվեցին։

— Այդ, իհարկե, այդպես է,— փնթփնթաց Գերհարդը,— բայց կարիք չկա, որ նա այստեղ գա և ջահել աղջկան զբոսանքի տանի։ Դա բանի նման չէ, եթե նույնիսկ նրա մտքում ոչ մի վատ բան չկա։

Այդ րոպեին ներս մտավ Ջեննին։ Նա լսել էր ծնողների ձայնը այն փոքրիկ սենյակից, որ իր ու քրոջ ննջարանն էր, բայց մտքովն էլ չէր անցել, թե իր համար ինչպիսի նշանակություն ունի նրանց այդ խոսակցությունը։ Երբ նա ներս մտավ, մայրը երեսը շուռ տվեց նրանից ու կռացավ սեղանի վրա, որտեղ թիվածք էր պատրաստում, աշխատելով աղջկանից թաքցնել իր կարմրած աչքերը։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Ջեննին՝ ծնողների լարված լռությունից դուրս-ինչ անհանգստացած։

— Ոչինչ,— վճռական պատասխանեց հայրը։

Մայրը նույնիսկ շուռ չեկավ, բայց նրա հենց այդ անշարժությունն էլ շատ բան էր նշանակում։ Ջեննին մոտեցավ նրան և իսկույն տեսավ, որ նա լաց է լինում։

— Ի՞նչ է պատահել,— զարմացած իր հարցը կրկնեց աղջիկը՝ հորը նայելով։

Գերհարդը լուռ էր. աղջկա պարզ դեմքը մեղմացրել էր նրա երկյուղը։

— Ի՞նչ է պատահել,— մեղմիվ հարցրեց Ջեննին մորը դառնալով։

— Ա՜խ, այդ հարևանե՞րը,— հառաչանքով ասաց միսիս Գերհարդը։— Միշտ բամբասում են չիմացած բաների մասին։

— Էլի՞ իմ մասին,— հարցրեց Ջեննին թեթև շառագունելով։

— Այ, տեսնո՞ւմ եք,— վրա բերեց Գերհարդը առանց որևէ մեկին դիմելու,— նա ինքն էլ գիտե, թե ինչ է եղել։ Իսկ ինչո՞ւ ինձ չեք ասել, որ նա լինում է այստեղ։ Բոլոր հարևանները խոսում են դրա մասին, իսկ ես մինչև օրս ոչինչ չգիտեի։ Ինչի՞ նման է սա, հարց եմ տալիս։

— Դե լավ, ի՛նչ կա որ,— գոչեց Ջեննին՝ մորը խղճալով։

— Ինչ կա ո՞ր— գոռաց Գերհարդը, շարունակելով խոսել գերմաներեն, թեև աղջիկը նրան պատասխանում էր անգլերեն։— Ուրեմն ոչի՞նչ, որ մարդիկ ինձ կանգնեցնում են փողոցում և պատմում դրա մասին։ Գոնե ամաչեիր ասածիցդ։ Ես միշտ լավ կարծիք եմ ունեցել այդ մարդու մասին, բայց հիմա, քանի որ դուք նրա մասին ինձ ոչինչ չեք ասել, իսկ հարևանների մեջ բամբասանքներ են սկսվել, արդեն չգիտեմ, թե ինչ մտածեմ։ Մի՞թե ես պետք է հարևաններից իմանամ, թե ինչ է կատարվում իմ տանը։

Մայրը ու աղջիկ լուռ էին։ Ջեննին արդեն սկսել էր մտածել, որ իրենք իսկապես լուրջ սխալ են գործել։

— Ես ամենևին էլ այնպիսի բան չեմ արել, որ հարկավոր լիներ թաքցնել,— ասաց նա։— Պարզապես մի անգամ նա ինձ կառքով զբոսանքի է տարել, ուրիշ ոչինչ։

— Այո, բայց դու ինձ դրա մասին ոչինչ չես ասել,— պատասխանեց հայրը։

— Ես գիտեմ, որ դու չես սիրում, երբ երեկոյան տանից դուրս եմ գնում, դրա համար էլ չեմ ասել։ Բայց այստեղ թաքցնելու բան չկա։

— Նա երեկոյան քեզ ոչ մի տեղ չպետք է տաներ,— պատասխանեց Գերհարդը, չդադարելով անհանգստանալ, թե ինչ կասեն մարդիկ։— Ի՞նչ է ուզում նա քեզանից։ Ինչո՞ւ է այստեղ գալիս։ Նա շատ ծեր է։ Քեզ պես ջահել աղջիկը նրա հետ ոչ մի գործ չպետք է ունենա։

— Նա ոչինչ էլ չի ուզում, միայն ինձ օգնել է ցանկանում,— մրմնջաց Ջեննին։— Նա ուզում է ամուսնանալ ինձ հետ։

— Ամուսնանա՞լ։ Փա՛հ։ Հապա ինչո՞ւ ինձ չի ասում այդ,— գոչեց Գերհարդը։— Ես ինքս կլուծեմ այդ հարցը։ Ես չեմ ուզում, որ նա քարշ գա իմ աղջկա ետևից, որպեսզի բոլոր հարևանները բամբասեն։ Եվ բացի այդ, նա շատ ծեր է։ Ես նրան այդպես էլ կասեմ։ Նա չպետք է խաղա աղջկա անարատ անվան հետ։ Եվ թող այլևս չերևա՝ այստեղ։

Գերհարդի սպառնալիքը Ջեննիին ու մորը սարսափ ազդեց։ Մի՞թե նա Բրենդերին կառաջարկի այլևս չերևալ իրենց մոտ։ Ո՞ւր կհասցնի այդ։ Ի՞նչ դրության մեջ կընկնեն իրենք Բրենդերի առաջ։

Իսկ Բրենդերը, իհարկե, նորից եկավ, երբ Գերհարդն աշխատանքի էր, և մայր ու աղջիկ դողում էին, թե հանկարծ հայրը կիմանա այդ։ Մի քանի օր հետո սենատորը եկավ Ջեննիի ետևից և նրանք գնացին զբոսանքի։ Ոչ մայրը, ոչ աղջիկը Գերհարդին ոչինչ չասացին։ Բայց և չհաջողվեց երկար ժամանակ անտեղյակ պահել նրան։

— Ջեննին նորի՞ց զբոսանքի է գնացել այդ մարդու հետ,— մյուս օրը հարցրեց նա կնոջը։

— Երեկ նա եկել էր,— խուսափողական պատասխան տվեց կինը։

— Իսկ Ջեննին նրան ասա՞ց, որ այլևս չգա։

— Չգիտեմ, չեմ կարծում։

— Լավ, ես ինքս կաշխատեմ վերջ դնել դրան,— ասաց Գերհարդը։— Ինքս կխոսեմ նրա հետ։ Թող միայն մի անգամ էլ գա։

Եվ նա երեք անգամ երեկոները թույլտվություն խնդրեց ու, աշխատանքը թողնելով, եկավ հսկելու տանը, որ տեսնի հյուր ընդունո՞ւմ են թե ոչ։ Չորրորդ երեկոյան Բրենդերը եկավ և դուրս կանչելով խիստ հուզված Ջեննիին՝ տարավ զբոսանքի։ Աղջիկը վախենում էր հորից, վախենում էր, թե որևէ տգեղ տեսարան կստեղծվի, բայց չգիտեր ինչ անի։

Գերհարդն այդ պահին մոտենում էր տանը և տեսավ, թե ինչպես աղջիկը դուրս եկավ։ Այդ էլ բավական էր։

— Որտե՞ղ է Ջեննին,— հարցրեց նա կնոջը։

— Ինչ-որ տեղ գնաց,— պատասխանեց նա։

— Ես գիտեմ, ուր է գնացել,— ասաց Գերհարդը։— Ինքս տեսա։ Դե թող վերադառնան, ինքս կխոսեմ նրա հետ։

Նա հանգիստ նստեց և սկսեց գերմաներեն թերթ կարդալ՝ աչքի տակով կնոջը նայելով։ Վերջապես բակի դռնակը ցիկաց, ապա բացվեց մուտքի դուռը։ Այն ժամանակ նա ոտքի ելավ։

— Որտե՞ղ էիր,— գոռաց նա գերմաներեն։

Բրենդերը, որն ամենևին այդպիսի տեսարան չէր սպասում, իրեն և՛ վիրավորված, և՛ անհարմար վիճակում զգաց։ Ջեննին խիստ շփոթվեց։ Խոհանոցում տանջալից անհանգիստ վիճակում սպասում էր նրա մայրը։

— Գնացել էի զբոսնելու,— շփոթված պատասխանեց աղջիկը։

— Իսկ ես քեզ չե՞մ ասել, որ այլևս երեկոները տնից դուրս չգնաս,— ասաց Գերհարդը, ամենաչնչին ուշադրություն անգամ չդարձնելով Բրենդերի վրա։

Ջեննին ամբողջովին կարմրատակեց և ուժ չունենալով ոչ մի խոսք ասելու։

— Ի՞նչ է պատահել,— ազդու տոնով հարցրեց Բրենդերը։— Ինչո՞ւ եք դուք այդպես խոսում սրա հետ։

— Երբ մութն ընկնում է, նա տանից չպետք է դուրս գնա,— կոպիտ պատասխանեց Գերհարդը։— Արդեն քանի՞ անգամ ես այս ասել եմ նրան։ Եվ դուք էլ այլևս այստեղ գալու բան չունեք։

— Իսկ ինչո՞ւ,— կարճ լռությունից հետո հարցրեց սենատորը, խնամքով ընտրելով բառերը։— Ա՜յ տարօրինակ բան։ Ի՞նչ մի վատ բան է արել ձեր դուստրը։

— Ինչ է արե՞լ,— գոռաց Գերհարդը. նրա վրդովմունքն աճում էր բոպե առ բոպե, և նա ավելի ու ավելի անհասկանալի էր արտասանում անգլերեն բառերը։— Կարիք չկա, որ նա փողոցներում թրև գա գիշերվա կեսին, երբ պետք է տանը նստած լինի։ Ես չեմ ուզում, որ իմ աղջիկը երեկոյան տանից դուրս գնա մի մարդու հետ, որը նրան հայր կասզի։ Ի՞նչ եք ուզում դուք նրանից։ Նա դեռ երեխա է։

— Ինչ եմ ուզո՞ւմ,— ասաց սենատորը ջանալով արժանապատվությամբ դուրս գալ ստեղծված դրությունից։— Հասկանալի է, ուզում եմ զրուցել նրա հետ։ Նա այնքան մեծ է, որ ինձ համար հետաքրքիր է նրա հետ լինել։ Ես ուզում եմ ամուսնանալ նրա հետ, եթե ինքը համաձայնի։

— Իսկ ես ուզում եմ, որ դուք հեռանաք այստեղից և այլևս չգաք,— պատասխանեց Գերհարդը, տրամաբանորեն դատելու ամեն ընդունակություն կորցնելով և ամենասովորական հայրական բռնակալության մեջ ընկնելով։— Ես այլևս չեմ ցանկանում ձեզ տեսնել իմ տանը։ Կարծես ուրիշ թշվառություններ քիչ ունեմ ես, պակասն այդ է, որ աղջիկս էլ խլեն ու կործանեն նրա անբասիր անունը։

— Նեղություն քաշեք բացատրել՝ ի՞նչ եք ուզում ասել դրանով,— ասաց սենատորն ամբողջ հասակով ուղղվելով։— Ես իմ արածից ամաչելու բան չունեմ։ Իմ մեղքով ձեր աղջիկան ոչ մի վատ բան չի պատահել։ Եվ ես կուզենայի հասկանալ՝ ինչ բանում եք դուք մեղադրում ինձ։

— Ես ուզում եմ ասել,— Գերհարդը հուզմունքից մի քանի անգամ կրկնեց միևնույն խոսքը,— ես... ես ուզում եմ

ասել, որ բոլոր հարևանները խոսում են, թե ինչպես եք դուք այստեղ գալիս, ինչպես եք կառքով պտտեցնում իմ աղջկան և երեկոներն զբոսնում նրա հետ, և այդ ամենը՝ երբ ես տանը չեմ լինում, ահա թե ինչ եմ ուզում ասել։ Ես ուզում եմ ասել, որ եթե դուք ազնիվ մտադրություն ունենայիք, չէիք կապվի այնպիսի մի աղջկա հետ, որը ձեզ դուստր կսպի։ Մարդիկ բաց են արել իմ աչքերը։ Հեռացեք այստեղից և իմ աղջկան հանգիստ թողեք։

— Մարդի՞կ,— կրկնեց սենատորը։— Ես ոչ մի գործ չունեմ այդ մարդկանց հետ։ Ես սիրում եմ ձեր աղջկան և գալիս եմ այստեղ, որովհետև սիրում եմ նրան։ Ես մտադիր եմ ամուսնանալ նրա հետ, իսկ եթե ձեր հարևանները ցանկանում են շատախոսել, թող շատախոսեն։ Այդ դեռ չի նշանակում, թե դուք կարող եք ինձ վիրավորել, նույնիսկ չիմանալով իմ մտադրությունը։

Այս անասելի վեճից վախեցած՝ Ջեննին ետ-ետ քաշվեց դեպի սեղանատուն տանող դուռը։ Մայրը մոտեցավ նրան։

— Հայրդ վերադարձավ, երբ դուք տանը չէիք,— ասաց նա աղջկան, հուզմունքից շնչասպառ լինելով։— Հիմա ի՞նչ պիտի անենք։

Եվ, ըստ բոլոր կանանց սովորության, նրանք գրկախառնվեցին ու սկսեցին կամացուկ լալ։ Իսկ այն երկուսը շարունակում էին վիճել։

— Ա՜խ, ա՛յ թե ինչ,— գոչեց Գերհարդը։— Դուք ամուսնանա՞լ եք ուզում։

— Այո,— պատասխանեց սենատորը,— ամուսնանալ։ Ձեր աղջիկը տասնութ տարեկան է, նա ինքը կարող է որոշել իր անելիքը։ Դուք վիրավորեցիք ինձ և ծաղրեցիք ձեր դստեր զգացմունքները։ Դե ուրեմն նկատի ունեցեք, որ սրանով գործը չի վերջանա։ Եթե դուք կարող եք էլի մի որևէ բանում մեղադրել ինձ, բացի նրանից, որ շատախոսում են ձեր հարևանները, նեղություն քաշեցեք ասել։

Սենատորը Գերհարդի առաջ կանգնել էր որպես արդարության ու անբասիրության վեհատես մարմնացում։ Նա ձայնը չէր բարձրացնում, կտրուկ շարժումներ չէր անում,

բայց նրա ամուր սեղմված շրթունքների արտահայտության մեջ զգացվում էր վճռականություն և աննկուն կամք։

— Այլևս ձեզ հետ խոսել չե՛մ ուզում,— առարկեց Գերհարդը մի քիչ շփոթված, բայց առանց վախենալու։— Իմ աղջիկը, իմ աղջիկն է։ Եվ իմ գործն է որոշել՝ պիտի զբոսնի՞ ձեզ հետ երեկոները և պիտի ամուսնանա՞ ձեզ հետ, թե ոչ։ Ճանաչում եմ ձեզ՝ քաղաքագետներիդ։ Երբ մենք ծանոթացանք, ես ձեզ կարգին մարդ էի համարում, իսկ հիմա տեսնում եմ, թե ինչպես եք վարվում իմ աղջկա հետ, և այլևս ձեզ ճանաչել չեմ ուզում։ Գնացեք այստեղից, ուրիշ ոչինչ։ Այլևս ոչինչ չեմ ուզում ձեզանից։

— Շատ եմ ցավում, միսիս Գերհարդ, որ ես ստիպված եղա այսպիսի վեճի մեջ մտնել ձեր տանը,— ասաց Բրենդերը, դիտմամբ երեսը շուռ տալով զայրացած հորից։— Ես չգիտեի, որ ձեր ամուսինը դեմ է իմ այցելություններին։ Համենայն դեպս, դա ոչինչ չի փոխում։ Ցվշտանաք, գործն այնքան վատ չէ, որքան թվում է։

Գերհարդը զարմացել էր նրա սառնարյունությունից։

— Ես գնում եմ,— շարունակեց Բրենդերը՝ հորը դառնալով,— բայց չկարծեք, թե այսպես էլ կթողնեմ այս։ Այսօր դուք մեծ սխալ գործեցիք։ Հուսով եմ, կհասկանաք այդ։ Բարի գիշեր։

Նա թեթևակի գլուխ տվեց և դուրս գնաց։

Գերհարդը դուռը շրխկոցով ծածկեց նրա ետևից։

— Հիմա, հուսով եմ, մենք նրանից ազատվեցինք,— ասաց նա։— Իսկ քեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում փողոցներում թրև գալ երեկոները, որպեսզի ամբողջ աշխարհը բամբասի քեզ։

Այս հարցի շուրջն այլևս ոչ մի խոսք չասվեց, բայց հետագա օրերին տանը ճնշող լռություն էր տիրում, և այդտեղ բնակվողների դեմքից ու տրամադրությունից դժվար չէր հասկանալ, թե ինչ ապրումներ ունեն նրանք։ Գերհարդը մռայլադեմ խորհում էր, որ իր աշխատանքը պարտական է սենատորին և որոշեց հրաժարվել իր տեղից։ Նա հայտարարեց, որ իր տանը այլևս սենատորի համար ոչ մի լվացք չպի-

տի արվի և եթե հավատացած չլիներ, որ Միսիս Գերհարդը հյուրանոցում աշխատանքը գտել է ինքնուրույնաբար, այդ էլ կարգելեր։ Համենայն դեպս այդ աշխատանքը ոչ մի լավ բանի չհասցրեց։ Եթե կինը հյուրանոց չգնար, այդ բամբասանքներն էլ չէին լինի։

Իսկ սենատորը շատ էր սրտնեղել այդ ցավալի դեպքից։ Քաղքենիական բամբասանքները միշտ էլ անհաճո բան են, իսկ նրա դիրքն ունեցող մարդուն այդպիսի բամբասանքների հերոս լինելն առավել ևս անվայել է։ Բրենդերը չգիտեր, թե ինչպես վարվի, և մինչ նա ջանում էր որևէ որոշում գտնել, մի քանի օր անցավ։ Հետո նրան կանչեցին Վաշինգտոն, և նա գնաց, այդպես էլ առանց Ջեննիի հետ տեսնվելու։

Մինչ այդ Գերհարդները առաջվա պես յոլա էին գնում ինչպես կարող էին։ Հասկանալի է, նրանք խիստ կարիքի մեջ էին, բայց Գերհարդը պատրաստ էր արիաբար դիմանալ կարիքին, միայն թե իր պատիվը պահպաներ։ Սակայն նպարավաճառին պետք է վճարել առաջվանից ոչ պակաս։ Երեխաների հագուստն անողոքաբար մաշվում էր։ Ստիպված էին ամենախիստ խնայողություն անել և դադարեցնել հին պարտքերի վճարումը, որոնցից Գերհարդը փորձում էր ազատվել։

Հետո հասավ այն օրը, երբ պետք էր վճարել գրավատունարի տարեկան տոկոսները, իսկ հետո երկու նպարավաճառ փողոցում Գերհարդին հանդիպելով հարցրին, թե երբ է վճարելու նա իր պարտքը։ Նա առանց տատանվելու նրանց բացատրեց իր քսակի վիճակը և համակրելի անկեղծությամբ ասաց, որ բոլոր ուժերով կաշխատի և ամեն հնարավոր բան կանի, որ վճարի։ Բայց և այնպես բախտի հարվածների տակ նա հոգեպես ընկճվեց։ Աշխատանքի ժամերին նա աղոթում էր, որ երկինքը ողորմա, իսկ ցերեկը, երբ պետք էր քնել ու հանգստանալ, շրջում էր քաղաքում, որ մի ավելի ձեռնտու ծառայություն գտնի և միաժամանակ ձեռնամուխ էր լինում ամեն տեսակ պատահական աշխատանքի։ Մասնավորապես նա վարձվում էր գաղոնները հնձելու։

Միսիս Գերհարդն աղաչում էր չտանջել իրեն ուժից վեր

աշխատանքով, բայց նա պատասխանում էր, թե ուրիշ կերպ չի լինի։

— Ես հանգստանալու ժամանակ չունեմ, երբ մարդիկ փողոցում կանգնեցնում են ինձ և խնդրում պարտքերս վճարել։

Ընտանիքի դրությունը հուսահատական էր։

Ի լրումն այս ամենի՝ Սեբաստյանը բանտ ընկավ։ Դրա պատճառը ածուխ գողանալու հին խորամանկությունն էր, որի ժամանակ նա վերջ ի վերջո բռնվեց։ Մի երեկո նա բարձրացավ վագոն, որպեսզի Ջեննիի ու երեխաների համար մի քիչ ածուխ ցած թափի, և երկաթուղային ոստիկանության գործակալը նրան բռնեց։ Վերջին երկու տարում ճանապարհին ածուխի գողությունը չէր դադարում, բայց քանի դեռ քիչ էին գողանում, վարչությունը դրա վրա մատների արանքով էր նայում։ Բայց երբ գնորդները գանգատվեցին, թե Պենսիլվանիայի ածխային ավազանից Քլիվլենդ, Ցինցիննատի, Չիկագո և այլ քաղաքներ ժամանող գնացքները ճանապարհին հազարավոր ֆունտ ածուխ են կորցնում, գործը հանձնվեց լրտեսների ձեռքը։ Միայն Գերհարդների երեխաները չէին, որ ջանում էին ածուխ ձեռք բերել երկաթուղագծում։ Կոլումբուսի շատ բնակիչներ էլ սիստեմատիկաբար նույն գործով էին զբաղվում, բայց այնպես պատահեց, որ հենց Սեբաստյանը բռնվեց և պետք է պատիժ կրեր ի խրատ ամբողջ քաղաքի։

— Հապա մի ցած իջիր,— ասաց լրտեսը հանկարծակի երևալով մթության մեջ։

Ջեննին և երեխաները դույլերն ու զամբյուղները թողած՝ ամբողջ ուժով փախան։ Սեբաստյանի առաջին միտքն էլ նույնն էր՝ ցած ցատկել վագոնից ու փախչել, բայց լրտեսը բռնեց նրա վերարկուի փեշը։

— Կանգ առ,— գոչեց նա։— Ես հենց քեզ էի որոնում։

— Բա՛ց թող,— կատաղաբար պատասխանեց Սեբաստյանը, որն ամենևին էլ վախկոտներից չէր։ Նա տոգորված էր խիզախությամբ ու վճռականությամբ և լավ էր հասկանում իր դրության ամբողջ վտանգավորությունը։

— Բա՛ց թող, ասում եմ քեզ,— կրկնեց նա և այնպիսի թափով ձիգ տվեց, որ քիչ մնաց լրտեսին գետին տապալեր։

— Դե՛-դե՛, ցա՛ծ արի,— ասաց լրտեսը չարությամբ ձիգ տալով Սեբաստյանի փեշը, որպեսզի ապացուցի իր իշխանությունը։

Սեբաստյանը ցած ցատկեց և հակառակորդին այնպես հարվածեց, որ նա տեղում ճոճվեց։ Սկսվեց մի կատաղի պայքար, բայց մոտիկով անցնող մի բանվոր լրտեսին օգնության հասավ։ Նրանք երկուսով Բասսին քարշ տվին կայարան և հանձնեցին երկաթուղային ոստիկանության ձեռքը։ Նրա վերարկուն պատառոտվել էր, դեմքն ու ձեռքերը չանգռվել, աչքերը հարվածից ուռել։ Այս վիճակում էլ Սեբաստյանը փակված մնաց մինչև առավոտ։

Երեխաները տուն վազեցին՝ դեռ չիմանալով, թե ինչ պատահեց իրենց ավագ եղբորը և ոչ մի խելքը գլխին բան չկարողացան պատմել, բայց երբ խփեց ժամը ինը, ապա տասը, տասնմեկը, իսկ Սեբաստյանը դեռ չէր վերադարձել, միսիս Գերհարդն անհանգստությունից խելքը թռցնում էր։ Քիչ չէր պատահել, որ որդին տուն էր եկել տասներկուսին, նույնիսկ գիշերվա մեկին, բայց մայրն զգում էր, որ այս երեկո նրան մի սոսկալի բան է պատահել։ Երբ ժամացույցը զարկեց տասներկուսն անց կես, իսկ Սեբաստյանը դեռ էլի չկար, նա սկսեց լաց լինել։

— Հարկավոր է գնալ հայրիկին տեղեկացնել,— ասաց նա։— Սեբաստյանը, երևի, բանտ է ընկել։

Ջեննին ցանկություն հայտնեց գնալ։ Ջորջին, որն արդեն խոր քուն էր մտել, արթնացրին, որպեսզի ուղեկցի նրան։

— Ի՞նչ կա,— զարմացած գոչեց Գերհարդը՝ երեխաներին տեսնելուն պես։

— Բասսը մինչև հիմա տուն չի եկել,— ասաց Ջեննին, ապա պատմեց, թե այդ օրը ինչ անհաջողություն ունեցան, երբ գնացել էին ածուխի։

Գերհարդն իսկույն աշխատանքը թողեց, երեխաներին

հետ դուրս եկավ և ուղղվեց դեպի բանտ։ Նա գլխի էր ընկնում, թե ինչ է կատարվել, և սիրտը ճմլվում էր։

— Հենց այս էր պակաս,— անհանգիստ կրկնում էր նա, ձեռքով սրբելով ճակատի քրտինքը։

Քաղաքամասում հերթապահ սերժանտը համառոտակի հայտնեց նրան, որ Բասսը ձերբակալված է։

— Սեբաստյան Գերհա՞րդ,— հարցրեց նա ցուցակները նայելով։— Այո, կա այդպիսին։ Ածուխ է գողացել և ոստիկանին դիմադրություն է ցույց տվել։ Ձեր որդի՞ն է։

— Ach Gott! — ասաց Գերհարդը։— Ա՜խ, աստված,— կրկնեց նա հուսահատաբար ձեռքերը տրորելով։

— Ուզո՞ւմ եք իրեն տեսնել,— հարցրեց սերժանտը։

— Այո, այո,— պատասխանեց հայրը։

— Առաջնորդիր սրան, Ֆրեդ,— դարձավ սերժանտը ծերունի պահակայինին։— Թող տղային տեսնի։

Երբ Գերհարդը հարևան սենյակում կանգնած տեսավ ներս մտնող Սեբաստյանին, որը ծեծված էր ու շորերը պատառոտված, ուժերը դավաճանեցին նրան և սկսեց լաց լինել։ Նա ոչ մի խոսք ասել չկարողացավ։

— Մի՛ լար, հայրիկ,— քաջաբար ասաց Սեբաստյանը։— Ես ոչինչ չէի կարող անել։ Դե լավ, մեծ ցավ չէ։ Առավոտյան ինձ բաց կթողնեն։

Վշտահար Գերհարդը դողում էր ամբողջ մարմնով։

— Մի՛ լար,— շարունակեց Սեբաստյանը, ինքն էլ ջանալով զսպել իր արցունքները։— Ինձ ոչինչ չի եղել։ Լալուց ի՞նչ օգուտ կա։

— Գիտեմ, ես գիտեմ,— վշտահար ասաց հայրը,— բայց ինձ զսպել չեմ կարողանում։ Ամբողջն իմ մեղքն է։ Խոր ես եմ քեզ թույլ տվել այդ գործով զբաղվել։

— Չէ՛, չէ՛,— առարկեց Սեբաստյանը,— դու այստեղ մեղք չունես։ Իսկ մայրիկը գիտե՞։

— Գիտե։ Ջեննին ու Ջորջը հենց նոր եկան ինձ մոտ ու ասացին։ Ես հենց նոր իմացա։

Եվ նա նորից լաց եղավ։

— Դե լավ, պետք չէ այդպես հուզվել,— ասաց Սե-

բաստյանը։ Այդ բոպեին նրա հոգում արթնացել էր այն ամբողջ լավը, որ կար նրա մեջ։— Ամեն ինչ լավ կլինի։ Վերադարձիր քո աշխատանքին և դարդ մի անի։ Ամեն ինչ լավ կլինի։

— Այդ ինչո՞ւ աչքդ ուռած է,— հարցրեց հայրը, արցունքից կարմրած աչքերով նայելով նրան։

— Այս ոչինչ, ես մի փոքրիկ ընդհարում ունեցա մի տղայի հետ, որը բռնում էր ինձ,— քաջաբար ասաց տղան, ջանալով ժպտալ։— Կարծում էի կկարողանամ ծլկել։

— Իզուր ես արել այդ, Սեբաստյան,— ասաց Գերհարդը։— Դա կարող է վնասել քեզ։ Ե՞րբ են քննելու քո գործը։

— Ասացին՝ վաղն առավոտյան,— պատասխանեց Բասսը։— Ժամը իններին։

Գերհարդն էլի մի քիչ մնաց որդու հետ։ Նրանք խոսում էին, թե չի՞ կարելի, որ հարազատները երաշխավորությամբ վերցնեն Բասսին, խոսեցին տուգանքի, սպառնացող բանտարկության մասին, բայց այդպես էլ ոչ մի եզրակացության գալ չկարողացան։ Վերջապես նա հորը համոզեց գնալ, բայց անջատումը հուսահատության նոր պոռթկում առաջացրեց։ Գերհարդին սենյակից դուրս տարան բոլորովին վշտաբեկ սրբտով։

«Բանը վատ է,— հոր մասին մտածելով, ինքն իրեն ասաց Բասսը, երբ նրան նորից խցիկն էին տանում։— Իսկ մայրի՞կն ինչ վիճակում կլինի...»։

Մոր մասին մտածելով, նա խորապես հուզվեց։

— Է՛հ, ափսոս, որ ես առաջին իսկ հարվածով չտապալեցի այն տիպին,— ասաց նա։— Եվ ի՞նչ հիմարն եմ ես, որ չփախա։

ԳԼՈՒԽ VII

Գերհարդը հուսահատ վիճակում էր։ Նա չէր ճանաչում մեկին, որին կարողանա դիմել գիշերվա ժամը երկուսի և առավոտյան իններին միջև։ Նա գնաց տուն՝ կնոջ հետ խորհրդակցելու, ապա վերադարձավ իր պահակակետը։ Ի՞նչ անել։

Նա հիշեց միայն մեկ մարդու, որը կարող էր և գուցե համաձայներ որևէ բանով օգնել։ Դա ապակու գործարանատեր Հեմմոնդն էր։ Բայց նա էլ այդ ժամանակ քաղաքում չէր։ Ասենք՝ Գերհարդն այդ չգիտեր էլ։

Ժամը իններին մոտ նա գնաց դատարան. որոշված էր, որ ընտանիքի մյուս անդամները չպետք է ներկա լինեին։ Միսիս Գերհարդն անհապաղ ամեն ինչ կիմանա. ինքն իսկույն կվերադառնա և ամեն ինչ կպատմի։

Դատարանում Սեբաստյանն ստիպված եղավ երկար սպասել, որովհետև նրանից առաջ էլի մի քանի հոգի նստած էին մեղադրյալի աթոռին։ Վերջապես նրան կանչեցին և հրեցին դեպի արդելապատը։

— Ածուխ է գողացել, ձերդ ազնվություն, և ձերբակալման ժամանակ դիմադրություն է ցույց տվել,— պարզաբանեց նրան ձերբակալող ոստիկանը։

Դատավորը ուշի-ուշով նայեց Սեբաստյանին։ Տղայի ծեծված ու չանգռոտված դեմքը նրա վրա անբարենպաստ տպավորություն գործեց։

— Դե, երիտասարդ,— ասաց նա,— ի՞նչ կարող եք ասել ձեզ արդարացնելու համար։ Այդ ինչո՞ւ է ձեր աչքի տակն այդպես կապտել։

Սեբաստյանը նայեց դատավորին, բայց ոչինչ չպատասխանեց։

— Ես եմ նրան բռնել,— ասաց լրտեսը։— Ես նրան բռնեցի մեր ընկերությանը պատկանող վագոնի վրա։ Նա փորձեց ձեռքիցս դուրս պրծնել, բայց երբ ես ավելի ամուր բռնեցի, հարձակվեց ինձ վրա։ Ահա այս մարդը վկա է,— ավելացրեց նա մատնացույց անելով այն բանվորին, որն իրեն օգնել էր բռնել Սեբաստյանին։

— Այդ սա՞ է հարվածել ձեզ,— հարցրեց դատավորը, նկատելով որ լրտեսի կզակն ուռած է։

— Այո, սըր,— պատասխանեց նա գոհ լինելով, որ իր վրեժը լիովին լուծվելու է։

— Թույլ տվեք ասել,— առաջ գալով միջամտեց Գերհարդը,— դա իմ որդին է։ Նրան ուղարկել էին ածուխի։ Նա...

— Մենք դեմ չենք, թող ածուխ հավաքեն ճանապարհների վրայից,— ընդհատեց նրան լրտեսը։— Բայց սա վագոնից էր ածուխ ցած թափում իր գործակիցներին, որոնք մի վեց հոգի կլինեին։

— Մի՞թե դուք չեք կարող այնքան վաստակել, որ ստիպված չլինեք ածուխ հավաքել երկաթուղագծերից,— հարցրեց դատավորը, բայց նախքան հայրը կամ որդին կպատասխանեին, ավելացրեց.— ինչո՞վ եք զբաղվում դուք։

— Վագոնանորոգման արհեստանոցում եմ աշխատում,— ասաց Սեբաստյանը։

— Իսկ դո՞ւք,— Գերհարդին դարձավ դատավորը։

— Ես Միլլերի կահույքի գործարանում գիշերային պահակ եմ։

— Հը՞մ,— ասաց դատավորը զգալով, որ Սեբաստյանը շարունակում է իրեն պահել մռայլ ու զրգռիչ տեսքով։— Ահա՞ թե ինչ. այս երիտասարդից ածուխի գողության մեղադրանքը կարելի էր հանել, բայց նա, ինչպես երևում է, շատ սիրով է գործի դնում իր բռունցքները։ Կոլումբուսում առանց այն էլ տուրուզմբոց խիստ շատ է լինում։ Տասը դոլլար։

— Թույլ տվեք ասել...— սկսեց Գերհարդը, բայց դատական պրիստավը մի կողմ հրեց նրան։

— Այլևս ոչինչ լսել չեմ ուզում,— ասաց դատավորը։— Ա՜յ թե կամակորն է։ Ո՞վ է հետևյալը։

Գերհարդը որդուն մոտեցավ ամոթահար, բայց և գոհ էր, որ գործն ավելի վատ չվերջացավ։ Փողը մի կերպ կճարի, մտածում էր նա։ Երբ հայրը մոտեցավ, որդին կարեկցաբար նրան էր նայում։

— Ամեն ինչ կարգին է,— նրան հանգստացնել ուզեց Բասսը։— Միայն թե նա ինձ թույլ չտվեց մի խոսք ասել։

— Լավ է, որ ավելի խիստ չդատապարտեց,— մտահոգ ասաց հայրը։— Հիմա կաշխատենք փողը ճարել։

Հետո նա գնաց տուն և դատավճիռը հայտնեց տագնապահար կնոջն ու երեխաներին։ Միսիս Գերհարդը սիրթնեց, բայց և այնպես թեթևություն զգաց. դե ասսը դոլլարը մի

կերպ կարելի է ճարել։ Ջեննին լսում էր բերանը կիսաբաց և խոշոր աչքերով հորը նայելով։ Այս ամբողջ պատմությունը նրա համար մի անողոք հարված էր։ Խե՜ղճ Բասս։ Նա միշտ այնքան ուրախ ու բարեսիրտ է եղել։ Ուղղակի սոսկալի բան է, որ նա բանտ է ընկել։

Գերհարդն շտապեց դեպի Հեմմոնդի հոյակապ առանձնատունը, բայց գործարանատերը քաղաքում չէր։ Այն ժամանակ նրա միտն եկավ Ջենկինս ազգանունով փաստաբանը, որի հետ մի քիչ ծանոթ էր, և գնաց նրա գրասենյակը, բայց նա էլ այնտեղ չէր։ Էլի մի քանի ծանոթ նպարավաճառ ու ածխավաճառ կային, բայց ինքը նրանց փող էր պարտ։ Պաստոր Վունդտը գուցե փող կտար, բայց Գերհարդի համար շատ տանջալից բան կլիներ այդքան պատվարժան մարդուն խոստովանել, թե ինչ է պատահել։ Նա փորձեց դիմել մի երկու-երեք ծանոթի, բայց սրանք էլ նրա անսպասելի ու տարօրինակ խնդիրքից զարմացած՝ քաղաքավարի ձևով մերժեցին։ Ժամը չորսին նա տուն վերադարձավ հոգնած ու տառապած։

— Չգիտեմ ինչ անեմ,— ասաց նա հուսահատ տոնով։— Ուղղակի խելքս բան չի կտրում...

Ջեննին մտածեց Բրենդերի մասին, բայց, թեև դրությունը հուսահատական էր, նա չհամարձակվեց գնալ նրանից օգնություն խնդրելու՝ շատ լավ հասկանում էր հոր արգելքը և այն սոսկալի վիրավորանքը, որ նա հասցրել էր սենատորին։ Նրա ժամացույցն արդեն երկրորդ անգամ գրավ էր դրված, իսկ փող ճարելու ուրիշ միջոց նա չգիտեր։

Ընտանեկան խորհուրդը շարունակվեց մինչև ժամը տասն անց կես, բայց ոչ մի հնար չգտնվեց։ Միսիս Գերհարդը հայացքը հատակին հառած՝ միապաղաղ շարժումներով ձեռքերն էր ճմրթում։ Նրա ամուսինը մտացրիվ նստած ձեռքն էր քսում իր ճերմակախառն շեկ մազերին։

— Ամեն ինչ անօգուտ է,— վերջապես ասաց նա։— Ես ոչ մի հնար չեմ գտնում։

— Գնա քնիր, Ջեննի,— հոգատարությամբ ասաց մայրը։— Մյուսներին էլ պառկեցրու քնելու։ Կարիք չկա, որ այս-

տեղ նստեք։ Գուցե ես մի բան կհնարեմ։ Իսկ դուք գնացեք քնելու։

Ջեննին գնաց իր սենյակը, բայց նրա աչքերին քուն չէր գալիս։ Սենատորի հետ իր հոր կռվից հետո շատ չանցած՝ նա լրագրում կարդացել էր, որ Բրենդերը գնացել է Վաշինգտոն։ Վերադարձի մասին ոչինչ չէր հաղորդվել, բայց և այնպես գուցե արդեն եկե՞լ է։ Նա մտքի մեջ ընկած կանգ առավ աղքատիկ սեղանին դրված նեղլիկ հայելու առաջ։ Վերոնիկան, որ իր հետ միևնույն սենյակումն էր քնում, արդեն պառկել էր։ Վերջապես Ջեննիի որոշումն ամրապնդվեց. ինքը կգնա սենատոր Բրենդերի մոտ։ Եթե նա քաղաքումն է, Բասսին կազատի։ Ինչո՞ւ պիտի չգնա. չէ՞ որ նա սիրում է իրեն։ Քանի՞ անգամ խնդրել է ամուսնանալ իր հետ։ Ուրեմն էլ ինչո՞ւ չգնա ու նրա օգնությունը խնդրի։

Նա մի պահ տատանվում էր, հետո՝ լսելով Վերոնիկայի միալար շնչառությունը, ժակետը հագավ, գլխարկը դրեց և դուռը կամացուկ բաց արեց, որ տեսնի սեղանատանը մարդ կա՞ թե ոչ։

Տանը ոչ մի ձայն չէր լսվում, միայն խոհանոցում Գերհարդը ճոճաթոռին նստած՝ ճոճվում էր անհանգիստ։ Ոչ մի տեղ լույս չկար. վառվում էր միայն իր սենյակի փոքրիկ լամպը և մեկ էլ խոհանոցի դռան տակից լույսի մի դեղնավուն շերտ էր երևում։ Ջեննին իր լամպի պատրույգն իջեցրեց և փչեց, ապա կամացուկ անցավ ելքի դռան մոտ, բացեց այն և դուրս եկավ գիշերային խավարի մեջ։

Երկնքում շողում էր նվազող լուսինը, և օդը հագեցած էր վերածնվող կյանքի շնչով, որովհետև նորից մոտենում էր գարունը։ Ջեննին շտապ քայլում էր մթին փողոցներով— աղեղնավոր լամպերը դեռ հնարված չէին— և վախից դողում էր. ի՞նչ ցնորամիտ քայլ է արել ինքը։ Ինչպե՞ս կընդունի իրեն սենատորը։ Ի՞նչ կմտածի։ Նա կանգ առավ և տարակուսանքի մեջ ընկավ, ապա հիշեց բանտի խցում փակված Բասսին և նորից շտապեց առաջ։

Կոլումբուս-Հաուզ հյուրանոցի կառուցվածքն այնպիսին էր, որ կինը առանց դժվարության կարող էր կանանց հա-

տուկ մուտքով գիշերվա որ ժամին ուզենար՝ բարձրանալ ցանկացած հարկը։ Չի կարելի ասել, թե այդ հյուրանոցում ներքին կարգ ու կանոններ չկային, բայց, ինչպես և ուրիշ շատ հյուրանոցներում, կանոնների պահպանումն այն ժամանակներում բավական խիստ չէր։ Ով ուզենար՝ կարող էր ներս մտնել դռնով, հասնել նախասրահը, և այստեղ կլերկը կնկատեր նրան։ Բացի դրանից, ուրիշ ոչ ոք առանձնապես չէր հսկում, թե ովքեր են գնում-գալիս։

Երբ Ջեննին մոտեցավ հյուրանոցին, շուրջը խավար էր, վառվում էր միայն մուտքի վերևի աղոտ լույսը։ Սենատորի համարը հասնելու համար հարկավոր էր միայն երկրորդ հարկի միջանցքով մի քիչ առաջ գնալ։ Ջեննին վերև վազեց։ Նա հուզմունքից գունատվել էր, ուրիշ ոչինչ չէր մատնում նրա հոգում մոլեգնող փոթորիկը։ Ծանոթ դռանը մոտենալով՝ նա կանգ առավ, և՛ վախենում էր, թե սենատոր Բրենդերին տանը չի գտնի, և՛ դողում էր այն մտքից, թե նա կարող է այստեղ լինել։ Դռան վերևի ապակեպատ փոքրիկ լուսամուտից լույս էր երևում, և Ջեննին, իր ամբողջ արիությունը ժողովելով, դուռը բախեց։ Դռան ետևը հազ ու շարժում լսվեց։

Երբ Բրենդերը դուռը բացեց, նրա զարմանքին սահման չկար։

— Ջե՞ննին է,— գոչեց նա։— Ա՜յ քեզ հրաշք։ Իսկ ես հենց ձեր մասին էի մտածում։ Ներս եկեք, ներս եկեք...

Նա ջերմագին գրկեց աղջկան։

— Ես ուզում էի այցելել ձեզ։ Շարունակ մտածում էի, թե ինչպես հարթենք գործը։ Եվ ահա դուք եք եկել։ Բայց ի՞նչ է պատահել։

Նա մի քայլ ետ գնաց և ուշադիր նայեց Ջեննիի հուզված դեմքին։ Նրա գեղեցկության մեջ սենատորն զգաց հենց նոր քաղված, դեռևս ցողաթաթավ շուշանի թարմություն։

Անսահման քնքշությունը ալիք տվեց նրա սրտում։

— Ես մի բան եմ խնդրելու ձեզանից,—վերջապես ճիգ գործադնելով ասաց աղջիկը։— Իմ եղբայրը բանտումն է։ Մենք

պետք է նրա համար տասը դոլլար տուգանք մուծենք, և ես չդիտեի, էլ ուրիշ ուր կարող եմ գնալ։

— Խե՜ղճ իմ աղջիկս,— ասաց սենատորը նրա սառած ձեռքերը տաքացնելով։— էլ ուրիշ ո՞ւր պիտի գնայիք։ Չէ՞ որ ես ձեզ ասել եմ՝ միշտ ինձ դիմեցեք։ Մի՞թե չդիտեք, որ ես ձեզ համար ամեն ինչ կանեմ, Ջեննի։

— Այո,— շնչասպառ լինելով հազիվ մրմնջաց աղջիկը։

— Դե ուրեմն ոչ մի բանի մասին մի՛ անհանգստացեք։ Բայց ե՞րբ պիտի, վերջապես, բախտը դադարի հարվածներ տեղալ ձեր վրա, խե՜ղճ իմ աղջիկ։ Ինչպե՞ս է ձեր եղբայրը բանտ ընկել։

— Նրան բռնել են, երբ վագոնից ածուխ էր ցած թափում,— պատասխանեց Ջեննին։

— Ա՜,— արձագանքեց Բրենդերն անկեղծ կարեկցությամբ։

Այդ պատանուն ձերբակալել և տուգանքի են դատապարտել նրա համար, ինչի որ մղել է նրան ինքը՝ կյանքը։ Եվ այս աղջիկը կեսգիշերին եկել է իր մոտ տասը դոլլար խնդրելու, որ անհրաժեշտ է նրան։ Տասը դոլլարը նրա համար ահագին գումար է, իսկ իր համար՝ ոչինչ բան է։

— Եղբորդ համար մի՛ վշտացեք։ Ես ամեն ինչ կկարգավորեմ,— արագ ասաց նա։— Կես ժամից հետո նա ազատ կլինի։ Մի քիչ նստեցեք այստեղ, հանգստացեք, մինչև ես կվերադառնամ։

Նա աղջկան մատնացույց արեց մեծ լամպի մոտ դրված բազկաթոռը և շտապ դուրս գնաց սենյակից։

Բրենդերը ճանաչում էր օկրուգային բանտի շերիֆին։ Ճանաչում էր նաև Սեբաստյանին տուգանքի դատապարտող դատավորին։ Ընդամենը մի հինգ րոպե հարկավոր եղավ, որպեսզի դատավորին մի երկտող գրի, խնդրելով պատիժը վերացնել ու չփչացնել պատանու ապագան և թղթատարի միջոցով երկտողն ուղարկեց նրա տուն։ Էլի մի տասը րոպե հարկավոր եղավ, որպեսզի ինքն անձամբ գնա բանտ և իր բարեկամ շերիֆին համոզի իսկույն բաց թողնել Սեբաստյանին։

— Ահա փողը,— ասաց Բրենդերը։— Եթե տուգանքը վերացվի, կվերադարձնեք ինձ։ Իսկ հիմա բաց թողեք նրան։

Շերիֆը սիրով համաձայնեց։ Նա իսկույն ցած իջավ, որպեսզի անձամբ հետևի իր հրամանի կատարմանը, և զարմացած Բասսն արդեն ազատ էր։ Նրան ոչ մի բացատրություն էլ չտվին։

— Ամեն ինչ կարգին է,— ասաց բանտապահը։— Դու ազատ ես։ Վազիր տուն և տես, այլևս այդպիսի բաներ չանես։

Բասսը տարակուսանքի մեջ ընկած տուն գնաց, իսկ նախկին սենատորը վերադարձավ իր հյուրանոցը, մտածելով որոշել թե ինչ պիտի անի հիմա։ Դրությունը բավական փափուկ էր։ Ջեննին, ըստ երևույթին, իր օգնությանն էր դիմել առանց հոր գիտության։ Սա նրա վերջին հույսն է եղել։ Եվ հիմա նա իր համարում նստած սպասում է։

Ամեն մարդու կյանքում լինում են վճռական րոպեներ, երբ նա տատանվում է պարտքի ու արդարության խստիվ պահպանման և երջանկություն ստանալու հրապուրանքի միջև, որին կարելի է հասնել, հարկավոր է միայն վարվել ոչ այնպես, ինչպես հարկն է։ Բրենդերը հասկանում էր, որ նույնիսկ Ջեննիի հետ ամուսնանալը հեշտ չի լինելու նրա հոր անմիտ համառության պատճառով։ Մյուս խոշընդոտը հասարակական կարծիքն էր։ Ենթադրենք ինքն ամուսնացավ Ջեննիի հետ, ի՞նչ կասեն մարդիկ։ Նա շատ մեծաշնորհ բնավորություն ունի, ընդունակ է խորապես զգալու, այդ Բրենդերը գիտեր։ Նրա մեջ ինչ-որ պոետական բան կա, հոգեկան մի նրբություն, որն անմատչելի է ամբոխի ըմբռնողությանը։ Բրենդերն ինքն էլ լիովին չէր հասկանում, թե ինչ է դա, բայց կռահում էր, որ աղջիկը շքեղ ներքնաշխարհ ունի, իսկ դա կհրապուրեր ամեն մեկին, ով էլ Բրենդերի տեղը լիներ, թեև Ջեննիի միտքը դեռ զարգացած չէր և նա կյանքի փորձ չուներ։ «Արտակարգ աղջիկ է»,— մտածում էր Բրենդերը՝ մտովին նրան նորից տեսնելով իր առաջ։

Խորհելով, թե ինչպես պիտի վարվի սրանից հետո, նա

վերադարձավ հյուրանոց։ Սենյակ մտնելուն պես նրան նորից շշմեցրեց աղջկա գեղեցկությունն ու անհաղթահարելի հրապույրը։ Լուսամփոփով ստվերված լամպի լույսի տակ նա թվում էր աշխարհին անհայտ մի հրաշք։

— Դե, ահա,— ասաց նա ջանալով հանգիստ երևալ։— Ես միջնորդեցի ձեր եղբոր համար։ Հիմա նա ազատ է։

Ջեննին վեր կացավ։

Նա ձեռքերն իրար զարկելով ախ քաշեց, ապա մի քայլ արեց դեպի Բրենդերը։ Նրա աչքերը լցվեցին երախտագիտության արցունքներով։

Բրենդերը տեսավ այդ արցունքները և բոլորովին մոտեցավ նրան։

— Ի սեր աստծո, մի՛ լացեք, Ջեննի,— ասաց նա։— Դուք հրեշտակ եք։ Դուք ինքը՝ բարությունն եք։ Մտածեցեք մի, որքա՞ն զոհողություն եք արել դուք և հիմա լաց եք լինում։

Նա աղջկան քաշեց իր կողմը, և այդ պահին մշտական զգուշությունը դավաճանեց նրան։ Նա զգում էր միայն մեկ բան. կատարվում է այն, ինչին նա այնքան կարոտ է եղել։ Վերջապես այնքան անհաջողություններից հետո բախտը շնորհում է նրան այն, ինչ փափագել է ամենից ավելի՝ սեր, սիրեցյալ կին։ Նա գրկեց Ջեննիին և համբուրեց նրան նորից ու նորից։

Անգլիական գրող Ջեֆրիսն ասել է, որ կատարյալ աղջիկ երևան է գալիս հարյուր հիսուն տարին մեկ անգամ։ «Այդ գանձն ստեղծում են երկրի ու օդի բոլոր թովչանքները։ Ե՛վ հարավային զեփյուռը, որ մեկուկես դար փչում է ցորենի դաշտերի վրա, և՛ բարձր փոտերի բուրմունքը, որոնք օրորվում են երեքնուկի մեղրալից ծանր գլխիկների ու բեռինիկի ծիծղուն ծաղիկների վրա, ծածկում են սերինոսին և փակում մեղվի ուղին, և՛ վարդի թփերի դալար ցանկապատերը, և՛ մատղաշ ցախկեռասը, և՛ կապուտակ տերեփուկները ոսկեփայլ արտի մեջ, և՛ կանաչ եղևնիների ստվերը։ Ամբողջ հմայքը մարմանդ գետակների, որոնց ափերին դեպի արևն են ձգվում հիրիկները, մթին անտառների ամբողջ տիրական

գեղեցկությունը, բոլոր հեռավոր բլուրները, որոնցից քեմոնի ու ազատության շունչ է բուրում— այս ամենը նորից ու նորից կրկնվում է հարյուրավոր տարիներ։

Գարնանածաղիկները, զանգակածաղիկները, մանուշակները, ծիրանի գարունը, ոսկե աշունը, արևի լույսը, հորդ անձրևները և ցողաթաթավ առավոտները, անմահ գիշերները, նորից ու նորից հարյուր տարի կրկնվում է անընդհատ հոսող ժամանակի ամբողջ շրջանը։ Չգրված տարեգրություն, որը ոչ ոք գրել չի էլ կարող. ո՞վ կարող է պատմել հարյուր տարի առաջ թափված վարդի թերթիկների մասին։ Հարյուր անգամ ծիծեռնակները վերադառնում են կտուրի տակի իրենց բույնը, հարյուրավոր անգամ։ Բայց ահա աղջիկը երևաց, և ամբողջ աշխարհը ծարավի է նրա գեղեցկության, ինչպես այն ծաղիկների, որոնք արդեն չկան։ Նրա տասնյոթ տարու թովչանքի մեջ դարերի հմայքն է։ Ահա թե ինչու նրա հարուցած կրքի մեջ թախիծ է թաքնված»։

Եթե դուք հասկացել ու գնահատել եք հարյուր անգամ կրկնված անտառային զանգակածաղիկների հմայքը, եթե վարդերը, երաժշտությունը, շառագուն լուսաբացն ու մայրամուտը երբևիցե ստիպել են, որ ձեր սիրտն ավելի ուժգին բաբախի, եթե այդ ամբողջ գեղեցկությունն անցողիկ է և ահա այն, նախքան աշխարհը դուրս կփախչի ձեզանից, ձեր ձեռքն է տրված, կհրաժարվե՞ք արդյոք նրանից։

ԳԼՈՒԽ VIII

Մեր կյանքում տեղի ունեցող արտաքին ու ներքին փոփոխությունների նշանակությունը միշտ չէ, որ միանգամից մեզ պարզ է լինում։ Մենք ցնցված ենք, վախեցած, իսկ հետո կարծես վերադառնում ենք նախկին վիճակին, բայց փոփոխությունն արդեն տեղի է ունեցել։ Երբեք և ոչ մի տեղ մենք արդեն նախկինը չենք լինի։ Ջեննիին սենատորի մոտ էր բերել եղբորը փրկելու ցանկությունը, և հիմա խորհելով այն երեկոյի հանդիպման անսպասելի վերջավորության մա-

սին, նա չէր կարողանում հասկանալ իր զգացմունքները։ Նա շատ ազատ էր պատկերացնում, թե հասարակական ու ֆիզիոլոգիական իմաստով ինչպիսի փոփոխություններ կարող են բերել իր նոր փոխհարաբերությունները Բրենդերի հետ։ Նա դեռ չէր գիտակցում, թե նույնիսկ ամենաբարենպաստ պայմաններում սովորական կնոջ համար ինչպիսի ցնցում է մայրությունը։ Նա զարմանք էր զգում, հետաքրքրություն, անվստահություն, և միևնույն ժամանակ անկեղծորեն երջանիկ էր ու հանգիստ։ Բրենդերը լավ մարդ է։ Այժմ նա իր համար դարձել է շատ ավելի մոտիկ, քան որևէ մեկ ուրիշը։ Նա սիրում է Ջեննիին։ Նրանց նոր հարաբերություններն անխուսափելիորեն կփոխեն և աղջկա դիրքը հասարակության մեջ։ Նրա կյանքը բոլորովին ուրիշ կդառնա, արդեն ուրիշ է դարձել։ Բրենդերը նորից ու նորից հավատացնում էր նրան, որ ինքը հավերժ է սիրելու։

— Ասում եմ քեզ, Ջեննի, ամենևին մի՛ անհանգստացիր,— կրկնում էր նա, երբ աղջիկը պիտի գնար։— Կիրքը ինձնից ավելի ուժեղ դուրս եկավ, բայց ես կամուսնանամ քեզ հետ։ Ես գլուխս կորցրի, բայց ես մեղքս կքավեմ։ Գնա տուն և ոչ ոքի ոչինչ չասես։ Նախազգուշացրու եղբորդ, եթե դեռ ուշ չէ։ Ամեն ինչ գաղտնի պահիր, և ես կամուսնանամ քեզ հետ ու այստեղից կտանեմ։ Հենց հիմա այդ բանն անել չեմ կարող։ Չեմ ուզում այստեղ անել այդ։ Կգնամ Վաշինգտոն և քեզ կկանչեմ։ Եվ ահա, վերցրու այս (նա քսակից հանեց հարյուր դոլլար, ամբողջը, որ կար իր մոտ)։ Վաղը էլի կուղարկեմ քեզ։ Այժմ դու իմ հարսնացուն ես, հիշիր այս։ Դու իմն ես։

Նա քնքշանքով գրկեց աղջկան։

Ջեննին դուրս եկավ գիշերային խավարի մեջ։ Անկասկած նա իր խոսքի տերը կլինի։ Մտովի աղջիկն արդեն նոր, հիասքանչ կյանք էր ապրում։ Իհարկե, նա կամուսնանա իր հետ։ Մտածեցեք մի. ինքը կգնա Վաշինգտոն, այդ հեռավոր, անծանոթ քաղաքը։ Իսկ հայրն ու մայրը. նրանք այլևս այդքան աշխատելու կարիք չեն ունենա։ Իսկ Բասսը, իսկ

Մարթան... նա շողում էր ուրախությունից, մտածելով, թե ինչքան շատ բան կարող է անել նրանց համար։

Մի փողոց անցնելուց հետո նա քայլերը դանդաղեցրեց, և Բրենդերը հասավ նրա ետևից։ Նա Ջեննիին ուղեկցեց մինչև նրանց բակի դռնակը և կանգ առավ, իսկ աղջիկն զգուշությամբ շուրջը նայելով թեթև վեր վազեց սանդուղքով և դուռը քաշեց։ Դուռը փակ չէր։ Ջեննին մի բոպե դանդաղեց, որպեսզի սիրեցյալ մարդուն ցույց տա, որ ամեն ինչ կարգին է, և ներս մտավ։ Տանը լռություն էր տիրում։ Նա անցավ իր սենյակը և լսեց քնած Վերոնիկայի շնչառությունը։ Ապա անաղմուկ գնաց այն սենյակը, որտեղ քնում էին Բասսն ու Ջորջը։ Բասսը մեկնված էր մահճակալին և թվում էր, թե քնած է։ Բայց երբ աղջիկը ներս մտավ, նա շշնջաց.

— Դո՞ւ ես, Ջեննի։

— Ես եմ։

— Որտե՞ղ էիր։

— Լսիր,— շշնջաց աղջիկը,— դու հայրիկին ու մայրիկին տեսե՞լ ես։

— Այո։

— Նրանք գիտե՞ն, որ ես տանից դուրս եմ գնացել։

— Մայրիկը գիտե։ Նա ինձ թույլ չտվեց քո մասին հարցնել։ Որտե՞ղ ես եղել դու։

— Գնացել էի սենատոր Բրենդերի մոտ քեզ համար խնդրելու։

— Ա՜, այ թե ի՜նչ։ Ինձ, ախր, չասացին, թե ինչու են բաց թողնում։

— Ոչ ոքի ոչինչ չասես,— աղաչեց Ջեննին։— Ես չեմ ուզում, որ որևէ մեկն իմանա։ Դու հո գիտես, թե հայրիկն ինչպես է վերաբերվում նրան։

— Լավ,— ասաց Բասսը։

Բայց նրա համար հետաքրքիր էր, թե ինչ էր մտածում նախկին սենատորը, ինչ է արել նա, և Ջեննին ինչպես է խոսել նրա հետ։ Ջեննին համառոտակի ամեն ինչ պատմեց, և այդ ժամանակ դռան ետևը լսվեցին մոր քայլերը։

— Ջեննի,— շշուկով կանչեց միսիս Գերհարդը։

Ջեննին գնաց նրա մոտ։

— Ա՜խ, ինչո՞ւ գնացիր դու։

— Ուրիշ կերպ չէի կարող, մայրիկ։ Դե հո հարկավո՞ր էր մի բան անել։

— Իսկ ինչո՞ւ այդքան երկար մնացիր այնտեղ։

— Նա ուզում էր ինձ հետ խոսել,— խուսափողաբար պատասխանեց Ջեննին։

Մայրը նայում էր նրան տագնապահար, տանջալից աչքերով։

— Ա՜խ, ես այնպես էի վախենում, այնպես էի վախենում։ Հայրդ ուզում էր քո սենյակը գնալ, բայց ես ասացի, թե դու արդեն քնած ես։ Նա մուտքի դուռը փակեց, բայց ես նորից բաց արի։ Երբ Բասսը եկավ, նա էլ էր ուզում քեզ տեսնել, բայց ես համոզեցի սպասել մինչև առավոտ։

Եվ մայրը նորից թախիծով նայեց աղջկան։

— Ամեն ինչ լավ է, մայրիկ,— սիրտ տալով ասաց Ջեննին։— Վաղը ես քեզ ամեն ինչ կպատմեմ։ Իսկ հիմա գնա քնիր։ Հայրիկն ի՞նչ է կարծում, Բասսին ինչո՞ւ են բաց թողել։

— Նա չգիտե։ Կարծում է պարզապես բաց են թողել, որովհետև, միևնույն է, Բասսը տուգանքը տալ չէր կարող։

Ջեննին գորովանքով գրկեց մոր ուսերը։

— Գնա քնիր,— ասաց նա։

Նա արդեն մտածում ու վարվում էր այնպես, ասես մի քանի տարով մեծացել էր։ Նա զգում էր, որ պետք է հոգա և՛ իր մասին, և՛ մոր մասին։

Հետևյալ օրերին Ջեննին ասես երազի մեջ լիներ։ Նա նորից ու նորից մտքում վերհիշում էր այն երեկոյի արտասովոր դեպքերը։ Այնքան էլ դժվար բան չէր մորը պատմել, որ սենատորը նորից ամուսնության մասին է խոսում, որ նա ուզում է ամուսնանալ իր հետ, երբ Վաշինգտոնից կվերադառնա, որ նա իրեն հարյուր դոլլար է տվել և խոստացել է էլի ուղարկել, բայց բոլորովին ուրիշ բան էր այն միակ կարևորը, որի մասին նա չէր կարող խոսել։ Դա խիստ սրբազան բան էր։ Խոստացած փողը՝ չորս հարյուր դոլլար նա

հենց մյուս օրն ուղարկեց հատուկ մարդու միջոցով, խոր-հուրդ տալով գնել այն բանկում, ընթացիկ հաշվով։ Նախկին սենատորը հաղորդում էր, որ ինքն արդեն Վաշինգտոնի ճանապարհին է, բայց կվերադառնա կամ նրան կկանչի իր մոտ։ «Սիրտդ պինդ պահիր,— գրում էր նա։— Քեզ լավա-գույն օրեր են սպասում»։

Բրենդերը գնաց, և Ջեննիի բախտը, իրոք որ, մազից էր կախված։ Բայց նա դեռ պահում էր իր միամտությունն ու պատանեկան պարզամտությունը։ Արտաքուստ նա բոլորովին առաջվանն էր, միայն մի տեսակ մեղմ մտահոգություն էր իջել վրան։ Իհարկե, Բրենդերն իր մոտ կկանչի իրեն։ Նա ար-դեն պատկերացնում էր հեռավոր վայրերը, զարմանալի, հիասքանչ կյանքը։ Նա բանկում մի քիչ փող ունի, առաջ այդպիսի հարստության մասին երազել անգամ չէր կարող, հիմա կարող է մորն օգնել։ Ինչպես միշտ հատուկ է ջահել աղջիկներին, նա սպասում էր միմիայն լավ բան, այլ կերպ գուցե և նրան կհամակեին տագնապալից զգացմունքները։ Նրա ամբողջ էությունը, նրա կյանքը, ապագան, ամեն ինչ մազից էր կախված։ Դա կարող էր և՛ լավ վերջանալ, և՝ վատ, բայց այդպիսի անփորձ արարածի համար դժբախտու-թյունն ակներև է դառնում միայն այն ժամանակ, երբ արդեն կատարվում է։

Թե ինչպես կարելի է այդպիսի անորոշ վիճակում հո-գեկան հանգստություն պահպանել, դա այն հրաշքներից մեկն է, որի լուծումը ամեն մի պատանի էակի բնածին դյուրահա-վատության մեջ է գտնվում։ Շատ չի պատահում, որ հասուն մարդը պահպանի իր պատանեկան պատկերացումները։ Եվ հրաշքն այն չէ, որ մեկը պահպանել է այդ պատկերացում-ները, այլ այն է, որ բոլորը կորցնում են այն։ Շրջիր ամբողջ աշխարհը, ի՞նչ կմնա այնտեղ, երբ անցյալի գիրկն ընկնեն պատանու քնքշությունն ու միամտությունը, որն ամեն ինչին նայում է զարմանքից չոռած աչքերով։ Մի քանի կանաչ ոստ, որ երբեմն երևան են գալիս մեր առօրյա շահերի անապատի մեջ, արևաշող ամառվա մի քանի տեսիլք, որ երևում են մեր պաղած հոգու հայացքի առաջ, զվարճության կարճատև բո-

պեներ՝ անդադրում ծանր աշխատանքի մեջ— այս ամենը խոնջացած ուղևորի առաջ բացում է տիեզերքը, որը միշտ բաց է երիտասարդ հոգու առաջ։ Ոչ վախ, ոչ շահամոլություն։ Լայնարձակ դաշտեր և լուսաճաճանչ բլուրներ, առավոտ, կեսօր, երեկո, աստղեր, թռչունների ճռվողյուն, ջրի կարկաչ— այս ամենը որպես պարգև է տրվում երեխայի հոգուն։ Ոմանք այդ կոչում են պոեզիա, ուրիշները՝ քարասիրտները, դատարկ հերյուրանք։ Պատանեկության օրերին այս ամենը նրանց էլ հասկանալի է եղել, բայց պատանեկան զգայնությունը չքացել է, և նրանք այլևս ընդունակ չեն տեսնելու։

Ջեննիի նոր ապրումներն արտահայտվեցին միայն մտախոհ թախիծով, որ երևում էր ամեն բանում, ինչ էլ նա աներ։ Երբեմն նա զարմանում էր, որ Բրենդերից դեռ նամակ չկա, բայց և իսկույն հիշում էր, որ նա խոսում էր մի քանի շաբաթվա մասին, ուստի և նրանց անջատումից հետո անցած մեկուկես ամիսը այնքան էլ երկար ժամանակ չէր թվում։

Մինչ այդ հարգարժան նախկին սենատորը ուրախուրախ տեսակցության գնաց պրեզիդենտի մոտ, հետո սուզվեց բարձրաշխարհիկ հաճելի կյանքի մեջ և հենց ուզում էր այցելել Մերիլենդի իր բարեկամներին, բայց թեթև մրսածությունը նրան ստիպեց մի քանի օր սենյակում փակված մնալ։ Նա սրտնեղում էր, որ հենց հիմա ստիպված է անկողնում պառկել, բայց ամենևին չէր կարծում, թե իր հիվանդությունը մի լուրջ բան է։ Հետո բժիշկը պարզեց, որ նա ծանր տեսակի որովայնի տիֆ ունի, միառժամանակ նա գիտակցությունը կորցրել էր և երբ ուշքի եկավ, շատ էր թուլացել։ Թվում էր, թե նա առողջանում է, բայց Ջեննիից բաժանվելուց ուղիղ մեկուկես ամիս հետո տեղի ունեցավ սրտի անսպասելի կաթված, և ամեն ինչ վերջացավ։ Ջեննին երջանիկ անտեղյակության մեջ էր, չէր էլ կասկածում, թե նա հիվանդ է և նույնիսկ չտեսավ նրա մահվան մասին խոշոր տառերով տպված հաղորդումը, մինչև որ երեկոյան Բասսը Ֆրագիրը տուն բերեց։

— Մի տես, Ջեննի,— բարձրաձայն ասաց նա,— Բրենդերը մեռել է։

Նա քրոջը մեկնեց լրագիրը, որի առաջին էջին տըպված էր.

ՆԱԽԿԻՆ ՍԵՆԱՏՈՐ ԲՐԵՆԴԵՐԻ ՄԱՀԸ

Օհայո նահանգի պանծալի զավակի անակնկալ մահը։

Վախճանվեց սրտի կաթվածից, Վաշինգտոնում, «Արլինգտոն» հյուրանոցում։

Վերջերս նա հիվանդացել էր տիֆով և բժիշկների կարծիքով արդեն առողջանալու ճանապարհին էր, բայց հիվանդությունը ճակատագրական եղավ։ Նրա արտասովոր կարիերայի կարևորագույն փուլերը...

Ջեննին անսահմանորեն ցնցված, նայում էր լրագրի տողերին։

— Մեռե՞լ է,— գոչեց նա։

— Հա՛, հա՛, տեսնո՞ւմ ես, տպված է,— ասաց Բասսը խիստ կարևոր նորություն բերող մարդու տոնով։— Մեռել է այսօր, առավոտյան ժամը տասին։

ԳԼՈՒԽ IX

Ջեննին իր դողը հազիվ թաքցնելով լրագիրը վերցրեց ու անցավ հարևան սենյակը։ Նա կանգնեց լուսամուտի առաջ և նորից այդ տողերին նայեց՝ ամբողջովին քար կտրելով անասելի սոսկումից։

«Նա մեռել է»,— ահա այն ամենը, որ այժմ նա կարող էր հասկանալ, իսկ հարևան սենյակից լսվում էր Բասսի ձայնը, որը հորը հայտնում էր պատահածը։ «Այո, մեռել է»,— լսեց նա և նորից փորձեց պատկերացնել, թե ինչ է նշանակում այդ իր համար։ Բայց գիտակցությունը հրաժարվում էր ծառայել նրան։

Մի րոպե անց նրան մոտեցավ միսիս Գերհարդը։ Նա

լսել էր Բասսի ասածը և տեսել էր, թե ինչպես Ջեննին դուրս գնաց սենյակից, բայց հիշելով իր ընդհարումներն ամուսնու հետ սենատորի պատճառով, վախենում էր իր զգացմունքները ցույց տալ։ Նրա մեջ ամենաչնչին կասկած անգամ չկար, թե ինչ է տեղի ունեցել իր աղջկա ու սենատորի միջև, և այժմ պարզապես ուզում էր Ջեննիին մխիթարել նրա հույսերի կործանման ժամին։

— Ի՞նչ տխուր բան է, չէ՞,— ասաց նա անկեղծ վրշտով։— Հենց հիմա՞ պիտի մեռներ, երբ ուզում էր այնքան լավություն անել քեզ և մեզ բոլորիս։

Նա լռեց և պատասխանի էր սպասում, բայց Ջեննին ասես համրացել էր։

— Մի՛ վշտանա,— շարունակեց միսիս Գերհարդը,— հիմա արդեն ոչ մի բան չի օգնի։ Նա շատ բան էր ուզում անել, բայց հիմա էլ պետք չէ մտածել դրա մասին։ Ամեն ինչ վերջացավ, և ոչինչ փոխել չի կարելի, դու հո ինքդ հասկանում ես։

Նա նորից լռեց, իսկ Ջեննին էլի նույն համրն էր, անշարժ կանգնած։ Տեսնելով, որ հորդորներն անօգուտ են, միսիս Գերհարդը մտածեց, թե Ջեննին ուզում է մենակ մնալ և դուրս գնաց սենյակից։

Իսկ Ջեննին դեռ էլի կանգնած էր լուսամուտի առաջ, և հիմա, երբ այդ նորության իսկական նշանակությունը սկսեց հասնել նրա գիտակցությանը, նա սկսեց հասկանալ, թե որքան անելանելի և անուղղելի է իր դրությունը։ Նա մտավ նընջարան, նստեց մահճակալի եզրին և փոքրիկ հայելու մեջ իր դիմաց, տեսավ գունատ ու վշտից աղճատված մի դեմք։ Ջեննին շփոթված նայում էր։ Մի՞թե այդ ինքն է։ «Ստիպված եմ հեռանալ»,— մտածեց նա և հուսակտուր արիությամբ սկսեց մտովի օթևան որոնել իր համար։

Մինչ այդ հասավ ընթրիքի ժամը, և կարգը պահպանելու համար նա էլ միացավ մյուսներին։ Նրա համար դժվար էր իրեն պահել ամեն օրվա պես։ Գերհարդը նկատեց, որ նա ընկճված է, բայց չէր կարող հասկանալ դրա տակ թաքնված հուսահատության ամբողջ խորությունը։ Իսկ Բասսն այնքան

շատ էր զբաղված իր գործերով, որ ոչ մեկի վրա ուշադրություն չէր դարձնում։

Հետագա օրերին Ջեննին խորհում էր իր դժվարին դրության մասին և ինքն իրեն հարց էր տալիս, թե ի՛նչ անի։ Ճիշտ է, փող նա ուներ, բայց չուներ ո՛չ բարեկամներ, ո՛չ փորձ, ո՛չ օթևան։ Նա միշտ ապրել էր ծնողների հետ։ Երբեմն անհասկանալի ընկճվածություն էր զգում, թվում էր, թե ինչ-որ անձև— անորոշ վախ հետապնդում է իրեն։ Մի առավոտ նա լալու անհաղթահարելի ցանկություն ունեցավ, և հետո այդ զգացմունքը հաճախ համակում էր նրան ամենաանհարմար րոպեներին։ Միսիս Գերհարդն սկսեց նկատել այդ և մի օր որոշեց հարցուփորձ անել աղջկան։

— Ասա, ի՞նչ է պատահել քեզ,— սիրագորով հարցրեց նա։— Դու պետք է ամեն ինչ պատմես քո մորը, Ջեննի։

Ջեննին, որին թվում էր, թե միանգամայն անկարելի է ճշմարտությունն ասել, վերջապես չդիմացավ և մոր քնքուշ հորդորներին զիջելով, արեց ճակատագրական խոստովանությունը։ Միսիս Գերհարդը վշտից քար կտրեց և երկար ժամանակ ոչ մի խոսք ասել չէր կարողանում։

— Ա՜խ, այդ ամենը ի՛մ մեղքն է,— ասաց նա վերջապես զղջումի զգացմունքով։— Ես պետք է հասկանայի։ Բայց մենք կանենք ամեն բան, ինչ կարող ենք։

Այստեղ նա չդիմացավ ու սկսեց հեկեկալ։

Քիչ անց նա նորից սկսեց իր ընդհատած լվացքը և տաշտակի վրա կռացած՝ շարունակեց լալ։ Արցունքները գլորվում էին նրա այտերի վրայով և թափվում օճառի փրփուրի մեջ։ Երբեմն նա գոգնոցով սրբում էր աչքերը, բայց արցունքները նորից ու նորից էին հոսում։

Առաջին սոսկալի րոպեներից հետո հասավ անհաղթահարելի դժբախտության ծակող գիտակցությունը։ Ի՞նչ կանի Գերհարդը, եթե ճշմարտությունն իմանա։ Նա շատ անգամ է ասել, որ եթե իր աղջիկներից որևէ մեկը երբևիցե այնպես վարվի, ինչպես ուրիշները, ինքը նրան փողոց կը-շըպրտի։ «Էլ նրա ոտքը չի լինի իմ տանը»,— գոռում էր նա։

— Ես այնպես եմ վախենում հորից,— այդպիսի րո-

պենիերին հանախ միսիս Գերհարդն ասում էր աղջկան։— Ի՞նչ կասի նա...

— Գուցե ավելի լավ է ես գնամ,— ասում էր Ջեննին։

— Ոչ,— պատասխանում էր մայրը,— առայժմ նրան ոչինչ չպիտի ասել։ Մի քիչ սպասիր։

Բայց հոգու խորքում նա հասկանում էր, որ ճակատագրական օրը, միևնույն է, շուտով կհասնի։

Մի անգամ, երբ տագնապալի անհայտությունը անտանելի դարձավ, նա Ջեննիին ու մյուսներին տանից տեղ ուղարկեց, հուսալով, թե մինչև նրանց վերադարձը կկարողանա ամեն ինչ ասել ամուսնուն։ Առավոտից նա դեսուդեն էր ընկնում, երկյուղով սպասելով հարմար րոպեի, իսկ ճաշից հետո ամուսնուն թողեց, որ պառկի, այդպես էլ ոչինչ չասելով նրան։ Ցերեկը նա գործի չգնաց, որովհետև առանց իր տանջալից պարտքը կատարելու գնալ չէր կարող։ Ժամը չորսին Գերհարդն արթնացավ, իսկ կինը դեռ տատանվում էր, թեպետև լավ գիտեր, որ Ջեննին շուտով կվերադառնա, և խնամքով նախապատրաստված հնարավորությունը ձեռքից բաց կթողնվի։ Երևի այդպես էլ նա քաջություն չէր ունենա որևէ բան ասել, եթե Գերհարդն ինքը չխոսեր Ջեննիի մասին։

— Ջեննին ինչ-որ ուշքիս լավ չի երևում,— ասաց նա։— Կարծես հիվանդ լինի։

— Ա՜խ,— սկսեց միսիս Գերհարդը, ջանալով վախը հաղթահարել և գործը մինչև վերջ հասցնել,— Ջեննիին դժբախտություն է պատահել։ Չգիտեմ, թե ինչ անեմ։ Նա...

Գերհարդը, որ այդ րոպեին դռան փականքն էր քանդում նորոգելու համար, գլուխը բարձրացրեց և կասկածանքով նայեց կնոջը։

— Ի՞նչ ես ուզում ասել,— հարցրեց նա։

Միսիս Գերհարդն սկսեց հուզմունքով իր գոգնոցը ճմրթել։ Նա ջանում էր իր ամբողջ քաջությունը ժողովել ու ամեն ինչ ասել, բայց ոչ մի խոսք արտասանել չկարողացավ, գոգնոցով երեսը ծածկեց ու սկսեց լալ։

Գերհարդը նայեց նրան ու վեր կացավ։ Նա մի քիչ նման էր Կալվինին՝ նիհար, հիվանդագին դեղնած դեմք, որ ասես

խամրել էր հասակից և բաց երկնքի տակ, անձրևի ու քամու առաջ երկար աշխատելուց։ Զարմանքի կամ զայրույթի բոպեներին նրա աչքերը բռնկում էին։ Հուզմունքի մեջ նա շուտ-շուտ մազերը ետ էր տալիս ճակատից և սկսում սենյակում ետ ու առաջ քայլել։ Այժմ նա թվում էր տագնապահար և պատրաստ բռնկվելու։

— Ինչի՞ մասին ես խոսում,— կտրուկ հարցրեց նա գերմաներեն։— Դժբախտություն... մի՞թե որևէ մեկը...— նա խոսքը չվերջացրեց և սպառնագին ձեռքը բարձրացրեց։— Ինչո՞ւ ես լռել։

— Ես երբեք չէի կարծում, թե նրան այդպիսի բան կպատահի,— վախենալով խոսեց միսիս Գերհարդը, ջանալով այնուամենայնիվ արտահայտել իր միտքը։— Նա միշտ էլ լավ աղջիկ է եղել։ Ա՜խ,— վերջացրեց նա իր խոսքը,— մարդու հավատը չի գալիս, որ նա կործանել է Ջեննիին...

— Նզո՛վք,— կատաղորեն գոռաց Գերհարդը։— Ես այդպես էլ գիտեի։ Բրենդե՞ը։ Օ՜, ձեր այդ ազնիվ ջենտլմենը։ Ահա թե ուր հասցրեց, որ դու թույլ էիր տալիս նրան երեկոները վազվզել, կառքով այստեղ-այնտեղ գնալ, փողոցներում զբոսնել։ Ես այդպես էլ գիտեի։ Արգարաղա՜տ աստված։

Այս ողբալի մենախոսությունից հետո նա սկսեց նեղլիկ սենյակում անկյունից-անկյուն նետվել, ինչպես վանդակի մեջ ընկած գազան։

— Խորտակե՜ց,— գոչում էր նա։— Խորտակե՜ց։ Հա՛, ինչպե՜ս խորտակեց նրան, ա՛յ թե ինչպես։

Հանկարծ նա կանգ առավ ինչպես մի տիկնիկ, որի թելից ձիգ են տվել։ Նա կանգնել էր միսիս Գերհարդի առաջ, որը ետ-ետ էր քաշվել դեպի պատի մոտ գրված սեղանը և սպասում էր վախից սփրթնած։

— Բայց նա մեռե՞լ է,— գոչեց նա, ասես առաջին անգամ այդ նրա միտքը եկավ։— Մեռե՞լ է։

Նա կնոջն էր նայում քունքերն ափերի մեջ սեղմած, ասես վախենում էր, թե գլուխը չի դիմանա,— պատահածի շար հեգնանքը այրում էր նրան կրակի պես։

— Մեռե՞լ է,— կրկնեց նա, և միսիս Գերհարդն ասես երկյուղ կրելով, թե նա դժվում է, ավելի ևս ետ քաշվեց։ Ամուսնու աղճատված դեմքն այժմ նրան ավելի էր սարսափեցնում, քան նրա կատաղության պատճառը։

— Նա ուզում էր Ջեննիի հետ ամուսնանալ,— աղեկըտուր ասաց կինը։— Եթե չմեռներ, կամուսնանար նրա հետ։

— Կամուսնանա՞ր,— գոռաց Գերհարդը կնոջ ձայնի վրա դուրս գալով քարացած վիճակից։— Կամուսնանա՞ր։ Սրիկա՛, շո՛ւն։ Նրա հոգին հավիտենապես դժոխքի բաժին լինի։ Տե՞ր աստված, տե՞ր աստված, դու, դու... Ա՜խ, եթե ես քրիստոնյա չլինեի...

Նա կատաղությունից դողալով բռունցքները սեղմեց։

Միսիս Գերհարդը հեկեկում էր։ Ամուսինը շուռ եկավ. նա այնքան շատ էր ցնցված, որ չէր էլ կարող կարեկցել կնոջը։ Նա նորից սկսեց խոհանոցում ետ ու առաջ քայլել։ Հատակը դողում էր նրա ծանր քայլերի տակ։ Քիչ անց Գերհարդը նորից մոտեցավ կնոջը։ Այժմ սոսկալի ճշմարտությունը նոր լույսով էր երևում նրան։

— Ե՞րբ է կատարվել այդ,— հարցրեց նա։

— Չգիտեմ,— պատասխանեց միսիս Գերհարդը, որն այնքան շատ էր վախեցել, որ ճշմարտությունն ասել չէր կարող։— Ես ինքս էլ այս մի քանի օրն եմ իմացել։

— Ստո՛ւմ ես,— գոռաց ամուսինը։— Դու միշտ պաշտպանել ես նրան։ Դո՛ւ ես մեղավոր, որ նա այդտեղ է հասել։ Եթե դու ինձ չխանգարեիր և ամեն ինչ իմ ասածի պես արվեր, հիմա մենք այսպես տանջվելու բան չէինք ունենա։

«Ո՜ւր հասանք,— շարունակեց նա ինքն իրեն։— Ո՜ւր հասանք։ Տղաս բանտ է ընկնում, աղջիկս թրև է գալիս փողոցներում և բամբասանքների առիթ տալիս, հարևանները երեսիս ասում են, որ իմ երեխաներն իրենց այնպես չեն պահում, ինչպես պետք է, իսկ հիմա էլ այդ սրիկան է փորտակել նրան։ Տե՞ր աստված, այս ի՞նչ է գալիս իմ երեխաների գլխին»։

— Եվ ո՞ր մեղքիս համար է այս պատիժը,— մրմնջում

էր նա ինքն իրեն խղճալով։— Մի՞թե ես չեմ աշխատում լավ քրիստոնյա լինել։ Ամեն երեկո աղոթում եմ, որ աստված ինձ ճշմարիտ ճանապարհը ցույց տա, բայց իզուր։ Աշխատում եմ, աշխատում... Ահա իմ ձեռքերը, ամբողջովին կոշտուկներ են։ Ամբողջ կյանքումս աշխատել եմ ազնիվ մարդ լինել։ Եվ ահա... և ահա...

Նրա ձայնը խզվեց, թվում էր, թե հիմա լաց կլինի։ Եվ հանկարծ զայրույթի պոռթկումով հարձակվեց կնոջ վրա.

— Դո՛ւ ես մեղավորը, դո՛ւ,— գոռում էր նա։— Միմիայն դո՛ւ։ Եթե դու այնպես անեիր, ինչպես ես էի ասում, ոչինչ չէր պատահի։ Բայց չէ՛, դու ինձ չէիր լսում։ Դե հիմա թող կորչի՛, չքվի՛ իմ տնից։ Պոռնի՛կ է նա, ա՛յ թե ինչ։ Հիմա նա միայն մի ճանապարհ ունի՝ դեպի դժոխք։ Եվ թող այնտեղ էլ գնա։ Ես ձեռքերս լվանում եմ։ Էլ գործ չունեմ։

Նա շուռ եկավ իր փոքրիկ ննջարանը գնալու, բայց դռանը հասնելով կանգ առավ։

— Թող կորչի՛ այստեղից,— կատաղությամբ կրկնեց նա։— Նա իմ տանը տեղ չունի՛։ Հենց այսօր։ Հենց հիմա։ Այլևս իմ շեմքը կոխել չեմ թողնի։ Ես նրան ցույց կտամ, թե ինչ է նշանակում ինձ խայտառակել։

— Այսօր մի՛ վռնդի նրան,— աղաչեց միսիս Գերհարդը։— Նա գնալու տեղ չունի։

— Ո՛չ, հենց այսօր,— գոռաց հայրը, և նրա դաժան դեմքին արտացոլվեց անսասան վճռականություն։— Հենց ա՛յս րոպեին։ Թող ուրիշ տուն գտնի իր համար։ Մեր տունը նրան դուր չի եկել, դե թող կորչի այստեղից։ Տեսնենք ինչպես է զգալու իրեն ուրիշների մոտ։

Եվ նա դուրս գնաց սենյակից։

Ժամը հինգն անց կեսին, երբ միսիս Գերհարդն արտասվաթոր աչքերով ընթրիք էր պատրաստում, եկավ Ջեննին։ Դռան թխկոցը լսելով՝ մայրը ցնցվեց. նա գիտեր, որ հիմա փոթորիկ է ճայթելու։ Հայրը Ջեննին դիմավորեց շեմքում։

— Կորի՛ր աչքիցս,— գոռաց նա կատաղորեն։— Հո՛տդ էլ չլինի իմ տանը։ Էլ աչքիս չերևա՛ս։ Չքվի՛ր։

Ջեննին կանգնել էր նրա առաջ սփրթնած, լուռ ու մունջ

դողալով։ Երեխաները, որ եկել էին հետը, զարմացած ու վախեցած շրջապատեցին նրան։ Վերոնիկան ու Մարթան, որոնք քնքշորեն սիրում էին քրոջը, լաց եղան։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Ջորջը բոլորովին շշմած։

— Թող կորչի՛ այստեղից,— կրկնեց Գերհարդը։— Ես չեմ ուզում դրան տեսնել իմ տանը։ Ուզում է անառակ լինել՝ իր գործն է, բայց թող չքվի այստեղից։ Հավաքի՛ր քո իրերը,— ավելացրեց նա աղջկան դառնալով։

Ջեննին ոչ մի խոսք չասաց, բայց երեխաներն ավելի ուժեղ լաց եղան։

— Լռե՛լ,— գոռաց Գերհարդը։— Գնացեք խոհանոց։

Նա երեխաներին դուրս տարավ սենյակից և ինքն էլ գընաց նույնիսկ առանց ետ նայելու։

Ջեննին լուռ անցավ իր սենյակը։ Նա հավաքեց իր աղքատիկ ունեցվածքը և արցունք թափելով սկսեց տեղավորվել մոր բերած զամբյուղում։ Աղջկական մի քանի զարդերը նրա աչքին ընկան, բայց չվերցրեց, մտածեց փոքր քույրերի մասին և թողեց նրանց։ Մարթան ու Վերոնիկան ուզում էին օգնել նրան իրերը դասավորելու, բայց հայրը չթողեց։

Ժամը վեցին տուն եկավ Բասսը և ամբողջ ընտանիքը անհանգիստ վիճակում խոհանոցում գտնելով հարցրեց, թե ինչ է պատահել։

Գերհարդը մոայլ նայեց նրան և պատասխան չտվեց։

— Ի՞նչ է պատահել,— նորից հարցրեց Բասսը։— Ինչի՞ եք այստեղ նստել։

— Հայրդ Ջեննին վռնդեց տանից,— արցունքն աչքերին շշնջաց միսիս Գերհարդը։

— Ինչի՞ համար,— հարցրեց Բասսը զարմանքից աչքերը չռելով։

— Ես կասեմ քեզ, թե ինչի համար,— գերմաներեն վրա բերեց Գերհարդը։— Նրա համար, որ նա անառակ է, ա՛յ թե ինչի համար։ Այն տեղն է հասել, որ իրեն կործանել է իրենից երեսուն տարով մեծ մի մարդ, որն իրեն հայր կսաղեր։

Հիմա թող դուրս պրծնի ինչպես ուզում է։ Եվ թող հենց հիմա դուրս կորչի այստեղից։

Բասսը շուրջը նայեց. երեխաները չռել էին աչքները։ Բոլորը, նույնիսկ ամենափոքրիկները, զգում էին, որ ինչ-որ սոկալի բան է պատահել։ Բայց միայն Բասսը հասկացավ կատարվածը։

— Ինչո՞ւ ես դու նրան դուրս քշում այս կեսգիշերին,— ասաց նա։— Հիմա այնպիսի ժամանակ չէ, որ աղջիկը փողոցում լինի։ Մի՞թե չի կարելի մինչև առավոտ սպասել։

— Չէ՛,— ասաց Գերհարդը։

— Իզուր ես անում,— վրա բերեց մայրը։

— Թող հենց հիմա հեռանա,— ասաց Գերհարդը,— և այլևս դրա մասին ոչինչ չլսեմ։

— Բայց ո՞ւր գնա,— պնդեց Բասսը։

— Չգիտեմ,— անօգնական ասաց միսիս Գերհարդը։

Բասսը մի անգամ էլ նայեց բոլորին, բայց ոչ մի խոսք չասաց։ Քիչ անց մայրն օգտվեց այն բոպեից, երբ Գերհարդը շուռ եկավ, և ձեռքով նրան նշան արեց դեպի դուռը։

«Գնա սենյակ»,— նշանակում էր այդ շարժումը։

Բասսը դուրս գնաց, իսկ հետո էլ միսիս Գերհարդը սիրտ արավ գործը թողնել ու հետևել որդուն։ Երեխաներն էլ մի քիչ նստեցին խոհանոցում, հետո մեկը մյուսի ետևից նրանք էլ դուրս եկան, հորը մենակ թողնելով։ Երբ Գերհարդի կարծիքով բավական ժամանակ էր անցել, նա էլ տեղից վեր կացավ։

Մինչ այդ մայրն շտապ-շտապ անհրաժեշտ խրատներ էր տալիս Ջեննիին։

Ջեննին պետք է տեղավորվեր որևէ համեստ կահավորված սենյակում և իր հացեն մորը հայտներ։ Բասսը հիմա իր հետ դուրս չի գա, բայց նա թող մի քիչ հեռանա և փողոցում սպասի. նա կգա, կուղեկցի իրեն։ Երբ հայրն աշխատանքի գնացած կլինի, մայրը կայցելի նրան, կամ թող Ջեննին տուն գա։ Մնացած ամեն ինչը կարելի է հետաձգել մինչև հաջորդ հանդիպումը։

Դեռ նրանք խոսքը չէին վերջացրել, երբ սենյակ մտավ Գերհարդը։

— Գնալո՞ւ է դա, թե ոչ,— կտրուկ հարցրեց նա։

— Հիմա՛,— պատասխանեց միսիս Գերհարդը, և նրա ձայնի մեջ առաջին ու միակ անգամ հնչեց մարտահրավեր։

— Ի՞նչ շտապելու բան կա,— ասաց Բասսը։

Բայց հայրն այնպես սպառնագին հոնքերը կիտեց, որ նա այլևս սիրտ չարավ առարկել։

Ներս մտավ Ջեննին՝ իր միակ կարգին շորը հագին, զամբյուղը ձեռքին։ Նրա աչքերը նայում էին ահակալած, որովհետև նա հասկանում էր, որ իրեն դաժան փորձություն է սպասում։ Բայց նա հասուն կին էր դարձել։ Նա ձեռք էր բերել սիրո ուժ, համբերության հենարան և ըմբռնել էր ղոհաբերության մեծ քաղցրությունը։ Նա լուռ համբուրեց մորը, արցունքները հոսում էին նրա այտերի վրայով։ Հետո շուռ եկավ և դուրս գնաց դեպի նոր կյանքը, և դուռը ծածկվեց նրա ետևից։

ԳԼՈՒԽ X

Այն աշխարհում, ուր շպրտվեց Ջեննին իր համար այդպիսի մի դժվարին պահի, առաքինի մարդը անհիշելի ժամանակներից ի վեր միշտ էլ իզուր է ջանացել պահպանել իր գոյության իրավունքը։ Որովհետև առաքինությունը մարդկանց բարի ցանկանալու և բարիք գործելու ընդունակություն է։ Առաքինի մարդը մեծահոգի մարդն է, որն ուրախությամբ պատրաստ է ծառայելու ամենքին ու բոլորին, բայց հասարակությունն այնքան էլ չի գնահատում այդ հատկությունը։ Եթե դուք ձեզ էժան գնահատեք, ձեզ բանի տեղ չեն դնի, ոտքի տակ կտան ձեզ։ Եթե դուք ձեզ թանկ գնահատեք, թեկուզև ոչ ըստ արժանվույն, ձեզ կհարգեն։ Հասարակությունն ընդհանրապես շատ վատ է ճանաչում մարդկանց։ Նրա միակ չափանիշն է՝ «ինչ կասեն ուրիշները»։ Միակ չափանիշն է ինքնապաշտպանության զգացմունքը։ Պահպանե՞լ է արդյոք

այսինչը իր կարողությունը։ Պահպանե՞լ է արդյոք այսինչ կինը իր անաղարտությունը։ Ինչպես երևում է, շատ քչերն են միայն ընդունակ երբեմն ինքնուրույն դատողություն ունենալու։

Ջեննին չէր էլ փորձում բարձր գնահատել իրեն։ Նա ինքնագոհության բնածին հակում ուներ։ Ամենևին էլ հեշտ բան չէր նրան պատվաստել այնպիսի կենսական էգոիզմ, որն օգնում է պաշտպանվել չարից։

Մարդ բարձրագույն լարման րոպեներին ամենից ավելի նկատելի է աճում։ Նա ուժերի և ընդունակությունների հզոր հորձանք է զգում։ Մենք դեռ դողում ենք, վախենում ենք մի քայլ անել, բայց մենք աճում ենք։ Ոգևորության բռնկումներն են ղեկավարում մեզ։ Բնությունը ոչ ոքի չի մերժում։ Եթե միջավայրը կամ հասարակությունը մեզանից երես են դարձնում, մենք էլի բարեկամ ենք մնում այն ամենին, ինչ գոյություն ունի։ Բնությունը մեծահոգի է։ Քամին ու աստղերը քո բարեկամներն են։ Միայն բարի եղիր ու զգայուն և դու կհասնես այդ մեծագույն ճշմարտությանը։ Գուցե և այն քեզ չի հասնի ձևակերպված ֆորմուլաներով, բայց կհասնի հրճվանքի ու անդորրի զգացողությամբ, որը և, վերջին հաշվով, կազմում է իմացության էությունը։ Անդորրի մեջ ձեռք ես բերում իմաստություն։

Դեռ նոր էր Ջեննին հեռացել դռնից, երբ Բասսը հասավ նրա ետևից։

— Տուր ինձ զամբյուղը,— ասաց նա և տեսնելով, որ Ջեննին հուզմունքից ոչ մի խոսք ասել չի կարողանում, ավելացրեց.— ես կարծեմ գիտեմ, թե որտեղ կարելի է սենյակ գտնել քեզ համար։

Նա քրոջը տարավ քաղաքի հարավային մասը, որտեղ ոչ ոք նրանց չէր ճանաչում։ Գնացին մի պառավի մոտ, որը վերջերս մաս-մաս վճարելու պայմանով մի պատի ժամացույց էր գնել այն խանութում, որտեղ այժմ աշխատում էր Բասսը։ Վերջինս գիտեր, որ պառավը փողի կարիք ունի և ցանկանում է իր մի սենյակը վարձով տալ։

— Ձեր սենյակն ազա՞տ է,— հարցրեց նա պառավին։

— Այո,— պատասխանեց պառավը Ջեննիին զննելով։

— Դուցե դուք այդ սենյակը իմ քրո՞ջը կտաք։ Մենք փոխադրվում ենք ուրիշ քաղաք, իսկ սա առայժմ մեկնել չի կարող։

Պառավը համաձայնեց, և շուտով Ջեննին ժամանակավոր օթևան ունեցավ։

— Դու տրամադրությունդ մի գցիր,— ասաց Բասսը անկեղծորեն վշտանալով քրոջ համար։— Ամեն ինչ կարգի կընկնի։ Մայրիկն էլ ասում էր, որ չվշտանաս։ Վաղը, երբ հայրիկն աշխատանքի կլինի, արի տուն։

Ջեննին խոստացավ գնալ։ Բասսն էլի մի քանի խրախուսական փոսք ասաց, պառավի հետ պայմանավորվեց, որ Ջեննին սնունդն էլ նրա մոտ է ստանալու և հրաժեշտ տվեց։

— Դե, ահա, ամեն ինչ կարգին է,— ասաց նա արդեն շեմքում։— Ամեն ինչ լավ կլինի։ Մի՛ տխրիր։ Իմ գնալու ժամանակն է, իսկ առավոտյան մի քանի րոպեով քեզ մոտ կանցնեմ։

Նա գնաց, և անհաճո մտքերն այնքան էլ չէին անհանգստացնում նրան. չէ՞ նա գտնում էր, որ քույրն իսկապես մեղավոր է։ Դա պարզ էր հենց նրանից, թե ինչպես էր ճանապարհին հարցուփորձ անում նրան, թեպետև տեսնում էր, որ նա տխուր է ու տրտում։

— Ախր ինչի՞ համար դու այդ բանն արիր,— հարցնում էր նա։— Բա մի րոպե չմտածեցի՞ր, թե ինչ ես անում։

— Խնդրում եմ, հիմա ինձ ոչինչ մի հարցնի,— ասաց Ջեննին և դրանով էլ վերջ դրեց եղբոր համառ հարցուփորձին։

Նա արդարանալու բան չուներ և ոչ էլ գանգատվելու բան։ Եթե կա մեկը, որ մեղավոր է, ապա դա հենց ինքն է։ Այն փորձանքը, որի մեջ ընկել էր ինքը՝ Բասսը և իր հետ էլ փորձանքի մեջ քաշել ընտանիքին, ինչպես և Ջեննիի անձնազոհությունը, մոռացվել էր արդեն։

Այդ նոր, օտար սենյակում մենակ մնալով՝ Ջեննին ազատություն տվեց իր վշտին։ Իր ապրած ցնցումը, ամոթը, որ իրեն դուրս են արել հայրենի տնից, նրա ուժերից ավելի

վեր եղան, և նա սկսեց հեկեկալ։ Ճիշտ է, ի բնե նա համբերատար էր և չէր սիրում գանգատվել, բայց բոլոր հույսերի անակնկալ խորտակումը ընկճել էր նրան։ Ի՞նչ ուժ է դա, որ կարող է մրրիկի պես վրա հասնել մարդուն և կործանել նրան։ Ինչո՞ւ է այդպես անակնկալ ներխուժում մահը և փշուր-փշուր անում այն ամենը, ինչ ամենապայծառն ու քերկրալին էր թվում կյանքում։

Մտածելով անցյալի մասին, նա վերհիշում էր Բրենդերի հետ իր երկարատև ծանոթության բոլոր մանրամասնությունները և, որքան էլ մեծ էր իր վիշտը, նրա նկատմամբ ոչինչ չէր զգում, բացի սիրուց ու քնքշանքից։ Վերջ ի վերջո նա չէր ցանկանում գիտակցաբար վնաս պատճառել իրեն։ Նա իրոք որ բարի էր ու մեծահոգի։ Դա իսկական լավ մարդ էր, և մտածելով նախ և առաջ նրա մասին և ոչ թե իր, Ջեննին անկեղծորեն սգում էր նրա անժամանակ մահը։

Գիշերն անցավ այսպիսի անմխիթար մտքերով, իսկ առավոտյան աշխատանքի գնալիս Բասսը մի բոպեով ներս մտավ և ասաց, որ երեկոյան մայրիկն սպասում է Ջեննիին։ Հայրիկը տանը չի լինի, և նրանք կարող են խոսել ամեն ինչի մասին։ Ջեննին երկար ու ծանր օր անցկացրեց, բայց իրիկնադեմին նրա տրամադրությունը բարձրացավ, և ժամը յոթն անց քառորդին գնաց իրենց տուն։

Տանը նրան այնքան էլ ուրախ լուրեր չէին սպասում։ Գերհարդն էլի անասելի զայրացած էր։ Նա որոշել էր առաջիկա շաբաթ օրը աշխատանքից հրաժարվել և գնալ Յանգսթաուն։ Այժմ ուրիշ ամեն մի քաղաքում ավելի լավ կլինի, քան Կոլումբուսում. այստեղ նա այլևս երբեք չի կարող մարդկանց աչքերին նայել։ Այժմ նրա համար Կոլումբուսի հետ կապված էին ամենաանտանելի հուշեր։ Նա կգնա այստեղից, և եթե աշխատանք գտնի, ընտանիքին էլ կկանչի, իսկ դա նշանակում էր բաժանվել իրենց տնակից։ Միևնույն է, ինքը գրավագումարը վճարել չի կարող, դրա հույսը չպետք է ունենալ։

Մի շաբաթ անց Գերհարդը գնաց, Ջեննին վերադարձավ

տուն, և միառժամանակ նրանց կյանքը նախկին հունը մըտավ, բայց, իհարկե, ոչ երկար ժամանակով։

Բասսը հասկանում էր այդ։ Ջեննիին պատահած փորձանքը և Ֆրա հնարավոր հետևանքները խիստ անհանգըստացնում էին նրան։ Կոլումբուսում մնալ հնարավոր չէ։ Ցանգթաուն փոխադրվել չարժե։ Եթե բոլորը միասին պիտի գնան, ավելի լավ է որևէ մեծ քաղաք գնալ։

Ստեղծված դրության մասին խորհելով, Բասսը մտածեց, որ արժե բախտ որոնել Քլիվլենդում, որտեղ, ինչպես նա լսել էր, արդյունաբերությունը զարգանում է բուռն թափով։ Եթե ինքն այնտեղ հաջողություն ունենա, մյուսներն էլ կարող են փոխադրվել իր մոտ։ Եվ եթե հայրն առաջվա պես աշխատի Ցանգթաունում, իսկ ամբողջ ընտանիքը փոխադրվի Քլիվլենդ, ապա Ջեննին էլ փողոցում չի մնա։

Բասսն այս եզրակացությանը միանգամից չեկավ, բայց, վերջապես, իր մտադրությունը հայտնեց մորը։

— Ուզում եմ Քլիվլենդ գնալ,— մի երեկո ասաց նա մորը, երբ սա ընթրիք էր տալիս։

— Ինչի՞ համար,— հարցրեց մայրը, շփոթված նայելով որդուն։ Նա վախենում էր, թե Բասսը կարող է իրեն լքել։

— Կարծում եմ, այնտեղ աշխատանք կգտնեմ,— պատասխանեց որդին։— Կարիք չկա, որ մենք մնանք այս նզովյալ քաղաքում։

— Մի հայհոյիր,— կշտամբեց մայրը։

— Դե լավ,— ձեռքը թափ տվեց Բասսը։— Ո՛վ լինի, որ չհայհոյի։ Այստեղ մեր բախտը չբանեց։ Ես կգնամ և եթե աշխատանք գտնեմ, բոլորդ էլ կփոխադրվեք ինձ մոտ։ Մեզ համար ավելի լավ կլինի այնպիսի մի քաղաքում, որտեղ մեզ ոչ ոք չի ճանաչում։ Իսկ այստեղ մեզ ոչ մի լավ բան չի սպասում։

Միսիս Գերհարդը լսում էր, և նրա սրտում հույս էր արթնանում, որ իրենք էլ, վերջապես, կսկսեն մի քիչ ավելի հեշտ ապրել։ Եթե միայն Բասսն այնպես անի, ինչպես ասում է։ Այ, եթե գնա ու աշխատանք գտնի և իրեն օգնի, ինչպես պետք է մորն օգնի առողջ ու խելացի որդին։ Որքա՜ն

լավ կլիներ։ Հիմա իրենք ընկել են մի սրընթաց հոսանքի մեջ, որը դեպի անդունդ է քշում։ Մի՞թե ոչ մի բան չի փրկելու իրենց...

— Իսկ դու կարծո՞ւմ ես, որ աշխատանք կգտնես,— աշխույժ հարցրեց մայրը։

— Պետք է, որ գտնեմ,— պատասխանեց Բասսը։— Դեռ չի եղել, որ ես իմ ուզած տեղն աշխատանք չստանամ։ Տղաներից մի քանիսն արդեն գնացել են Քլիվլենդ և շատ լավ են տեղավորվել։ Միլլերները, օրինակ։

Նա ձեռքերը գրպանները խրեց և լուսամուտից դուրս նայեց։

— Ի՞նչ ես կարծում, դուք այստեղ յոլա կգնա՞ք, մինչև ես այնտեղ տեղավորվեմ,— հարցրեց նա։

— Կարծում եմ՝ կարող ենք,— պատասխանեց մայրը։— Հայրդ հիմա աշխատում է, մենք էլ մի քիչ փող ունենք, որ... որ...

Նա սիրտ չարեց ասել այդ փողի ակունքը, ամաչելով այն դրությունից, որի մեջ ընկել էին։

— Լավ, հասկանալի է,— մռայլ ասաց Բասսը։

— Մինչև աշուն մենք ոչինչ չունենք վճարելու, իսկ այն ժամանակ էլ, միևնույն է, ստիպված ենք լինելու ամեն ինչ թողնել,— ավելացրեց միսիս Գերհարդը։

Նա խոսում էր տան գրավագումարի մասին. հերթական վճարումը պիտի կատարեին սեպտեմբերին և, իհարկե, վճարել չէին կարողանալու։

— Եթե մեզ հաջողվի մինչև այդ փոխադրվել մի ուրիշ քաղաք, կարծում եմ մի կերպ կապրենք։

— Այդպես էլ կանեմ,— վճռական ասաց Բասսը։— Կգնամ։

Եվ ահա ամսի վերջին նա իր աշխատանքից հրաժարվեց և հենց մյուս օրը մեկնեց Քլիվլենդ։

ԳԼՈՒԽ XI

Ջենիի կյանքում հետագա իրադարձությունները պատկանում են նրանց շարքին, որոնց վրա մեր ժամանակակից բարոյականությունը խստագույն արգելք է դնում։

Իր գործը խավարի և լռության մեջ կատարող մեծ ու իմաստուն ստեղծագործական ուժի՝ մայր բնության որոշ օրենքները նույն ուժով ստեղծված առանձին շնչին արարածներին շատ ստորացուցիչ են թվում։ Մենք զզվանքով երես ենք դարձնում այն ամենից, ինչ կապված է կյանքի գոյացման հետ, որպես թե մարդուն անվայել է բացահայտորեն հետաքրքրվել դրանով։

Հետաքրքրական է, որ այդ զգացմունքը ծագել է մի աշխարհում, որի բուն էությունը հենց այն է, որ անընդհատ, նորից ու նորից նոր կյանք ծնունդ առնի, մի աշխարհում, որտեղ քամին, հողը, ջուրը, արևի լույսը՝ ամեն ինչ ծառայում է պտուղի ծնունդին, մարդու ծնունդին։ Եվ թեպետ ոչ միայն մարդը, այլև ամբողջ երկիրը, տոհմը շարունակելու միևնույն բնազդն ունի, և աշխարհում ամեն ինչը ծնունդ է առնում միևնույն եղանակով, չգիտես ինչու գոյություն ունի դրա առաջ աչքերը փակելու և երես դարձնելու մի անհեթեթ ձգտում, ասես դա մի ինչ-որ պիղծ բան լինի։ «Սերված արատով և ծնունդ առած մեղքով»— ահա այն անբնական բացատրությունը, որ գուհիկը տալիս է բնության օրենքին, և հասարակությունը լռելյայն համաձայնում է այդ հրեշավոր դատողությանը։

Անտարակույս այսպիսի մոտեցումն արմատաբաց սխալ է։ Մարդու ամենօրյա պատկերացումների մեջ պետք է հաստատուն տեղ գրավի այն, ինչ սովորեցնում է փիլիսոփայությունը, ինչին հանգում է կենսաբանությունը, բնության մեջ չկան ստոր պրոցեսներ, չկան անբնական վիճակներ։ Տվյալ հասարակության հիմքերից ու սովորություններից պատահական շեղումները ամենևին էլ պարտադիր չէ մեղք համարել։ Ոչ մի թշվառ արարածի, որը պատահականության կամքով խախտել է մարդկանց սահմանած կարգը,

չի կարելի մեղադրել այն անսահման ատրության մեջ, որ անխուսափելիորեն վերագրում է նրան աշխարհի կարծիքը։

Ջեննին այժմ ստիպված եղավ անձամբ համոզվելու, թե որքան սխալ է մեկնաբանում բնության այն հրաշքը, որը, եթե չլիներ Բրենդերի մահը, սրբազան պիտի համարվեր և մեծարվեր որպես կյանքի բարձրագույն արտահայտություն։ Թեպետև նա չէր կարողանում հասկանալ, թե այդ այնքան բնական կենսական պրոցեսն ինչով է տարբերվում մյուս բոլորից, բայց շրջապատը նրան ստիպում էր զգալ, որ իր բաժինն անկումն է և իր վիճակը մեղք է ու մեղքի ծնունդ։ Այս ամենը քիչ էր մնում սպանի այն սերը, ուշադրությունն ու հոգատարությունը, որ հետագայում մարդիկ կպահանջեն նրանից իր երեխայի նկատմամբ։ Այդ հասունացող բնական ու անհրաժեշտ սերը քիչ էր մնում չարիք երևար նրան։ Ջեննիին կառաջնորդեն չտարան, բանտ չնետեցին, ինչպես նրա նմաններին պատժում էին մի քանի դար առաջ, բայց շրջապատի մարդկանց տգիտությունն ու հետամնացությունը խանդարում էին նրա վիճակի մեջ տեսնել մի այլ բան, բացի հասարակության օրենքների ստոր ու չարամիտ խախտումից, իսկ դա պատժվում էր ընդհանուրի արհամարհանքով։ Նրան մնում էր միայն խույս տալ խեթ հայացքներից և լուռումունջ ապրել իր մեջ տեղի ունեցող մեծագույն փոփոխությունը։ Որքան էլ տարօրինակ է, նա ավելորդ խղճի խայթեր և անպտուղ ափսոսանքներ չէր զգում։ Նրա հոգին հանգիստ էր, սիրտը մաքուր ու թեթև։ Ճիշտ է, նրա վիշտը չէր մարել, բայց առաջվա սրությունը չուներ, մնացել էր միայն աղոտ անվստահություն ու տարակուսանք, որոնցից երբեմն Ջեննիի աչքերը լցվում էին արցունքով։

Դուք լսել եք անտառային տատրակի դունդունոցը ամառային օրվա անդորրության մեջ։ Ձեզ պատահել է հանդիպել մի անծանոթ առվակի, որը քչքչում ու խոխոջում է թավուտի մեջ, որտեղ ոչ ոքի ականջը չի կարող լսել նրան։ Անցած տարվա մեռյալ տերևների տակ, ձյունի ծածկույթի տակ բացվում են համեստ ձնծաղիկները, ասես արձագանքելով գար-

նանային կապուտակ երկնքին։ Այդպես է ծնունդ առնում և նոր կյանքը։

Ջեննին միայնակ մնաց, բայց անտառային տատրակի պես նա իր ամբողջությամբ ամառային գորովալից երգ էր։ Նա հոգում էր անտեսական գործերը և հանգիստ, անտրտունջ սպասում այն բանի ավարտին, ինչ տեղի էր ունենում իր մեջ և ինչի համար ինքը վերջ ի վերջո ծառայում էր որպես մի սրբազան անոթ։ Աղատ ժամերին նա անձնատուր էր լինում խաղաղ խոհերի, ասես կախարդված կյանքի հրաշքով։ Իսկ երբ մորն օգնելով ստիպված էր լինում առանձնապես շատ չարչարվել, Ջեննին երբեմն սկսում էր կամացուկ երգել, որովհետև աշխատանքի մեջ հեշտ էր մոռացության գիրկն ընկնել։ Եվ միշտ նա ապագային նայում էր հանգիստ, պարզ ու անվեհեր արիությամբ։ Բոլոր կանայք չեն, որ ընդունակ են դրան։ Ափսոս, որ բնությունն ընդհանրապես չնչին էությունների էլ թույլ է տալիս մայր դառնալ։ Այդ անվանն արժանի կանայք, երբ հասունանում են, ուրախ են լինում մայր դառնալու և հպարտությամբ ու բավականությամբ են կատարում իրենց պարտքը մարդկային ցեղի հանդեպ։

Ջեննին, որ ըստ տարիքի համարյա դեռ երեխա էր, ֆիզիկապես ու հոգեպես արդեն հասուն կին էր, բայց դեռ պարզ պատկերացում չուներ կյանքի մասին և իր տեղի մասին կյանքում։ Այն արտասովոր դեպքը, որ այժմյան իր աննորմալ վիճակին հասցրեց, որոշ իմաստով նրա արժանիքների տուրքն էր։ Դա հաստատում էր նրա արիությունը, կարեկցությունը, իրեն զոհաբերելու պատրաստակամությունը նրա համար, ինչ նա իր պարքն էր համարում։ Եվ եթե դա հասցրեց անսպասելի հետևանքների, որոնք նրա վրա նոր, ավելի ծանր ու բարդ պատասխանատվություն դրին, ապա դա տեղի ունեցավ նրա համար, որ ինքնապաշտպանության բնազդը նրա մեջ այնքան ուժեղ չէր, որքան մյուս զգացմունքները։ Երբեմն նա երեխայի առաջիկա ծնունդի մասին մտածում էր վախով ու շփոթմունքով, երկյուղ կրելով, թե երբևիցե նա կկշտամբի իրեն։ Բայց միշտ էլ ծնունդի դարավոր արդարացիության գիտակցությունը նրան չէր թողնում վերջնականա-

պես հոգեպես ընկճվել։ Նա մտածում էր, որ մարդիկ չեն կարող դիտավորյալ դաժան լինել։ Նրա մեջ ապրում էր աստվածային բարության ու արդարության աղոտ պատկերացում։ Կյանքը սքանչելի է իր և՛ վատ, և՛ լավ ժամերին, և միշտ էլ սքանչելի է եղել։

Այս մտքերը միանգամից չէին եկել նրա գլուխը, այլ սպասումի երկար ամիսների ընթացքում։ Ի՞նչ հիանալի բան է մայր լինել նույնիսկ այսպիսի ծանր պայմաններում։ Ջեննին զգում էր, որ կսիրի իր երեխային և լավ մայր կլինի նրա համար, եթե միայն կյանքը թույլ տա։ Բայց հենց բանն էլ այդ է. թույլ կտա՞ կյանքը։

Հարկավոր էր շատ բան անել. ամեն անհրաժեշտ բան կարել երեխայի համար, հոգալ իր առողջության, սննդի մասին։ Ըստ որում Ջեննին շարունակ վախենում էր, թե հանկարծ հայրը կվերադառնա։ Բայց այդպես չեղավ։ Դիմեցին ծերունի բժիշկ Էլուսնգերին, որը միշտ բուժում էր Գերհարդի ընտանիքի անդամներին, ինչով էլ նրանք հիվանդանալու լինեին, և նա մի քանի գործնական ու օգտակար խորհուրդ տվեց։ Կրոնական դոգմաները լութերական եկեղեցու այդ պավակին չէին խանգարել մեծահոգի բժիշկ դառնալ և երկարամյա փորձի հիման վրա գալ այն եզրակացությանը, որ աշխարհում շատ բաներ կան, որոնք մեր իմաստունների մտքովն էլ չեն անցել և չեն տեղավորվում կյանքի մասին մեր ունեցած քաղքենիական մանր պատկերացումների մեջ։

— Այդպես, այդպես,— ասաց նա, երբ միսիս Գերհարդը իր երկյուղը հայտնեց նրան։— Բայց դուք մի՛ վշտացեք։ Այդպիսի բաներ շատ ավելի հաճախ են պատահում, քան դուք կարծում եք։ Եթե դուք կյանքի և ձեր հարևանների մասին այնքան իմանայիք, որքան ես գիտեմ, լաց չէիք լինի։ Ձեր դուստրը հիանալի կդիմանա դրան։ Նա շատ լավ առողջություն ունի։ Իսկ հետո կարող է որևէ տեղ գնալ և ոչ ոք ոչինչ չի իմանա։ Արժե՞ վշտանալ նրա համար, թե ինչ կասեն հարևանները։ Դա այնպիսի մի բացառիկ դեպք չէ, ինչպես ձեզ թվում է։

Միսիս Գերհարդը թեթևացած շունչ քաշեց։ Ի՞նչ խելա-

ցի մարդ է այս բժիշկը։ Նրա խոսքերը մի քիչ սիրտ տվին մորը։ Իսկ Ջեննին նրան լսում էր հետաքրքրությամբ և առանց վախի։ Նա իր մասին չէր մտածում, այլ՝ երեխայի և ուզում էր անպայման կատարել այն ամենը, ինչ պատվիրված էր։ Բժիշկը հետաքրքրվեց, թե ով է երեխայի հայրը, և պատասխանը լսելով՝ նա հայացքը երկինք դարձրեց։

— Ի՛նչ ասել կուզի,— ասաց նա,— պետք է որ հիանալի երեխա լինի։

Վերջապես հասավ ժամը, երբ մանուկը պետք է լույս աշխարհ գար։ Ներկա էր բժիշկ Էլուոնգերը, նրան օգնում էր միսիս Գերհարդը, որը վեց երեխայի մայր լինելով՝ ճշտորեն գիտեր, թե ինչ պետք է անել։ Ամեն ինչ բարեհաջող անցավ։ Նորածնի առաջին ճիչը լսելով՝ Ջեննին ամբողջ էությամբ ձգվեց դեպի նա։ Իր երեխա՜ն։ Դա մի պստլիկ աղջիկ էր, թույլ ու անօգնական, որն այնքան մայրական խնամքի կարիք էր զգում։ Երբ երեխային լողացրին ու բարուրեցին, Ջեննին սրտի դողով և անսահման հրճվանքով նրան կրծքին սեղմեց։ Իր մանկի՜կը, իր աղջի՜կը։ Ջեննին փափագում էր ապրել ու աշխատել նրա համար և նույնիսկ այժմ, երբ բոլորովին թույլ էր, ուրախանում էր, որ ընդհանրապես ինքն ամուր առողջություն ունի։ Բժիշկ Էլուոնգերն ասաց, որ նա շուտով ոտքի կելնի։ Նա գտնում էր, որ Ջեննին անկողնում երկու շաբաթից ավելի չի մնա։ Եվ իրոք, տասն օրից հետո նա արդեն ոտքի վրա էր, առողջ ու ամուր, ինչպես միշտ։ Ջեննին ի բնե ուժեղ ու առողջ էր և ուներ այն բոլոր հատկությունները, որոնք հարկավոր են իդեալական մորը։

Վճռական ժամն անցավ, և կյանքն սկսեց ընթանալ համարյա առաջվա պես։ Քույրերն ու եղբայրները, բացի Բասսից, այնքան փոքր էին, որ կարգին չէին հասկանա, թե ինչ է կատարվել, և հավատացին, երբ նրանց ասացին, թե Ջեննին ամուսնացել էր սենատոր Բրենդերի հետ, որը դրանից հետո հանկարծ մեռել է։ Նրանք երեխայի մասին ոչինչ չգիտեին, մինչև որ նա ծնվեց։ Միսիս Գերհարդը վախենում էր հարևաններից, որոնք միշտ ամեն ինչի հետևում էին և գիտեին։ Ջեննին ոչ մի կերպ չէր կարող դիմանալ այդ դրու-

թյանը, եթե Բասսը, որը դրանից քիչ առաջ տեղավորվել էր Քլիվլենդում, չգրեր նրան, թե՝ հենց որ նա բոլորովին կաղդուրվի, ամբողջ ընտանիքը պիտի տեղափոխվի իր մոտ, և իրենք նոր կյանք կսկսեն։ Քլիվլենդում գործերը շատ լավ են գնում։ Կոլումբուսից դուրս գալուց հետո իրենք այլևս երբեք իրենց այժմյան հարևաններին չեն պատահի, և Ջեննին կարող է իր համար որևէ աշխատանք գտնել։ Իսկ առայժմ նա տանն էր մնում։

ԳԼՈՒԽ XII

Այն ժամանակ, երբ Բասսը Քլիվլենդ ընկավ, քաղաքը ոչ թե օրերով, այլ ժամ առ ժամ էր աճում, և այս տեսարանը միանգամից վերականգնեց պատանու հոգեկան հավասարակշռությունը, նրան հույս ներշնչելով, թե կկարգավորի և՛ իր, և՛ ընտանիքի գործերը։ «Միայն թե նրանք գան,— մտածում էր նա։— Միայն թե աշխատանք գտնեն, այն ժամանակ ամեն ինչ կընթանա ինչպես պետք է»։ Այստեղ ոչ մի բան չէր հիշեցնում վերջերս ընտանիքին հասած ձախորդությունները, չկային ծանոթներ, որոնք հենց միայն իրենց տեսքով կհիշեցնեին ավելի վաղուց հասած դժբախտությունները։ Ամեն ինչ հագեցած էր եռանդով ու գործունեությամբ։ Թվում էր, թե բավական է փողոցի անկյունով շուռ գաս, որպեսզի աղատվես անցած օրերից ու անցած մեղքերից։ Ամեն մի նոր թաղում նոր աշխարհ էր բացվում։

Բասսը շուտով գործ գտավ ծխախոտի խանութում և մեկուկես ամսի չափ այնտեղ ծառայելուց հետո նամակ գրեց տուն՝ նկարագրելով իր վարդագույն ծրագրերը։ Ջեննին պետք է դա հենց որ ի վիճակի լինի, իսկ հետո, երբ նա աշխատանք գտնի, կգան և մյուսները։ Նրա հասակի աղջիկների համար ինչքան ասես աշխատանք կա։ Ժամանակավորապես նա կարող է տեղավորվել իր հետ միասին, կամ գուցե հաջողվի մի փոքրիկ տուն վարձել. այստեղ ամսական տասնհինգ դոլլարով այդպիսի տներ են տրվում վարձով։

Այստեղ կահույքի խոշոր խանութներ կան, որտեղ կարելի է մաս-մաս վճարելու պայմանով ամեն անհրաժեշտ բան գնել։ Մայրը կսկսի տնտեսությունը վարել։ Իրենց շրջապատը բոլորովին նոր կլինի, ոչ ոք իրենց չի ճանաչի և իրենց մասին չի բամբասի։ Իրենք կյանքը նորից կսկսեն և կդառնան կարգին, հարգարժան, բարգավաճող ընտանիք։

Տարված լինելով հույսերով ու երազանքներով, որպիսիք միշտ ունենում են երիտասարդ, անփորձ էակները նոր տեղում ու նոր մարդկանց շրջապատում, Բասսը, վերջապես, Ջեննիին գրեց, որ նա անհապաղ մեկնի։ Այդ ժամանակ Ջեննիի երեխան արդեն կես տարեկան էր։ Այստեղ թատրոններ կան, գրում էր Բասսը, գեղեցիկ փողոցներ։ Քլիվլենդը զարմանալի քաղաք է և աճում է շատ արագ։ Սա Բասսին ամենից ավելի էր դուր գալիս իր նոր կյանքում։

Այս ամենը միսիս Գերհարդի, Ջեննիի և ընտանիքի մյուս անդամների վրա արտակարգ տպավորություն թողեց։ Միսիս Գերհարդը Ջեննիի զանցանքի հետևանքը խիստ ծանր էր ապրում, և հիմա կողմնակից էր, որ անհապաղ հետևեն Բասսի խորհրդին։ Ի բնե նա շատ կենսուրախ էր, վհատվել չգիտեր և հիմա ամբողջովին հրապուրվեց Քլիվլենդի ճաճանչափայլ կյանքի հեռանկարով, արդեն իրականացած էր տեսնում իր նվիրական երազանքը, որ ոչ միայն մի փոքրիկ, սիրունիկ տուն կունենա, այլև իր երեխաները փայլուն ապագա կունենան։ «Իհարկե, նրանք աշխատանք կգտնեն»,— ասում էր նա։ Բասսն իրավացի է։ Ինքը միշտ էլ ուզում էր, որ ամուսինը փոխադրվի որևէ մեծ քաղաք, բայց նա չէր ուզում։ Իսկ հիմա այդ անհրաժեշտ է և իրենք կգնան ու շատ ավելի լավ կապրեն, քան երբևէ ապրել են։

Գերհարդը ևս միացավ նրա կարծիքին։ Կնոջը ուղղած պատասխան նամակում գրում էր, թե իր համար անմտություն կլինի աշխատանքից հրաժարվել, բայց եթե Բասսի կարծիքով նրանք կարող են Քլիվլենդում տեղավորվել, ապա թող տեղափոխվեն։ Այդ ծրագիրը նա առանձնապես սիրով էր ընդունում, որովհետև նրան գժվեցնելու չափ ճնշում էր այն միտքը, թե ինչպես պիտի կերակրի իր ընտանիքը և վճարի

ժամկետն անցած պարտքերը։ Իր ոռճիկից նա շաբաթական հինգ դոլլար էր ետ գցում և ուղարկում կնոջը։ Երեք դոլլարը ծախսում էր ուտելու վրա և հիսուն ցենտ թողնում էր մանր ծախսերի համար՝ եկեղեցում աջհամբույր տալու, ծխախոտ գնելու, երբեմն էլ մի բաժակ գարեջուր էր խմում։ Բացի դրանից, շաբաթական մեկուկես դոլլար էլ ետ էր գցում որպես խնայողություն։ Բնակվում էր գործարանի տանիքի մի մերկ, անհրապույր անկյունում։ Մինչև երեկոյան ժամը ինը Գերհարդը մեն-մենակ նստում էր գործարանի շեմքում ու նայում դատարկ, խուլ փողոցներին, հետո բարձրանում էր տանիքը։ Այստեղ, ցածի հարկերից բարձրացող մեքենայի յուղի խեղդող հոտի մեջ, ճարպե մոմի լույսի տակ նույնպես մեն-մենակ ծերունին ավարտում էր իր օրը. գերմաներեն թերթ էր կարդում, ձեռքերը կրծքին խաչած մտքի մեջ էր ընկնում, իսկ հետո խավարի մեջ ծունկ էր չոքում բաց լուսամուտի առաջ և երեկոյան աղոթքն անելուց հետո մեկնվում էր իր կոշտ անկողնում։ Օրերն անցնում էին երկար ու ձիգ, ապագան թվում էր մռայլ ու անուրախ։ Բայց և այնպես ձեռքերը դեպի երկինք մեկնելով, նա անսահման հավատով աղոթում էր, որ թողություն տրվի իր մեղքերին և էլի մի քանի տարի անդորր ու երջանկություն ունենա իր ընտանիքի շրջապատում։

Եվ այսպես, կարևորագույն հարցը, վերջապես, վճռված էր։ Երեխաները հալումաշ էին լինում անհամբերությունից, և միսիս Գերհարդը սրտի խորքում բաժանում էր նրանց զգացմունքները։ Ջեննին, ինչպես Բասսն էր առաջարկել, առաջինն էր մեկնելու։ Նրանից հետո էլ Քլիվլենդ էին գնալու մյուս բոլորը։

Երբ հասավ Ջեննիի մեկնելու ժամը, բոլորը խիստ հուզված էին։

— Դու շո՞ւտ կգրես, որ մենք էլ գանք,— նորից ու նորից հարցնում էր Մարթան։

— Ասա Բասսին, որ շուտ անի,— պահանջում էր Ջորջը։

— Քլիվլենդ գնա՞լ եմ ուզում, Քլիվլենդ գնա՞լ,— ծոր էր տալիս Վերոնիկան, երբ կարծում էր, թե իրեն ոչ ոք չի լսում։

— Տես, թե սիրան ինչ է ուզում,— ծաղրաբար գոչեց Ջորջը, լսելով նրա այդ երգը։

— Քո ի՛նչ բանն է,— նեղացած ասաց աղջիկը։

Բայց երբ հրաժեշտի րոպեն հասավ, Ջեննին պետք է օգնության կանչեր իր ամբողջ արիությունը։ Թեպետև ինքը գնում էր, որպեսզի նրանք կարողանան բոլորը միասին ապրեն, և ավելի լավ, քան առաջ, բայց և այնպես ակամա ընկճվել էր։ Նա ստիպված էր անչատվել իր վեց ամսական երեխայից։ Առջևում նրան սպասում էր վիթխարի, անծանոթ մի աշխարհ, և այդ վախեցնում էր նրան։

— Մի՛ անհանգստանա, մայրիկ,— ասաց նա իր ուժերը ժողովելով։— Ամեն ինչ լավ կլինի։ Հենց որ տեղ հասնեմ, ես քեզ նամակ կգրեմ։ Դա շատ շուտ կլինի։

Բայց երբ պետք է վերջին անգամ նայեր երեխային, Ջեննիի արիությունը մարեց, ինչպես լուցկին քամու առաջ։ Օրորոցի վրա կռանալով՝ նա գորովալից քնքշությամբ նայեց իր աղջկա երեսին։

— Դու լավ աղջիկ կլինես, չէ՞,— կրկնում ու կրկնում էր նա։

Հետո երեխային գիրկն առավ, ամուր սեղմեց կրծքին և ճակատը հպեց փոքրիկ մարմնին։ Միսիս Գերհարդը նկատեց, որ նա ամբողջ մարմնով դողում է։

— Լավ, լավ, այդպես հուզվել պետք չէ,— այժմ էլ նա՝ սկսեց հորդորել Ջեննիին։— Երեխան ինձ մոտ լավ կլինի։ Ես գիտեմ, ինչպես պիտի պահել երեխային։ Իսկ եթե դու այդպես հուզվելու ես, ավելի լավ է իսկի մի գնա։

Ջեննին գլուխը բարձրացրեց և երեխային տվեց մորը։ Նրա կապուտակ աչքերը խոնավ էին։

— Ինձ զսպել չեմ կարողանում,— արցունքն աչքերին ժպտալով ասաց նա։

Հետո շտապ համբուրեց մորը, քույրերին ու եղբայրներին և դուրս վազեց սենյակից։

Ջորջի հետ միասին փողոցով քայլելիս նա ետ նայեց և ուրախ-ուրախ ձեռքը թափահարեց։ Միսիս Գերհարդն էլ որպես պատասխան իր ձեռքը թափահարեց և միաժամանակ

մտածեց, որ Ջեննին հիմա բոլորովին հասուն կնոջ տեսք ունի։ Մեկնելուց առաջ փողի մի մասը ծախսել էին նոր հագուստի վրա, որովհետև Ջեննին մի կարգին շոր չուներ։ Եվ հիմա նա հագին ուներ մի դարշնագույն սիրուն կոստյում, որը նրան շատ էր սազում, սպիտակ կուրտկա և ծղոտե գլխարկ ճերմակ քողով, որը կարելի էր իջեցնել երեսին։ Աղջիկն ավելի ու ավելի էր հեռանում, իսկ միսիս Գերհարդը ուղեկցում էր նրան հայացքով, տոգորված անսահման սիրով, և երբ Ջեննին տեսողությունից ծածկվեց, մայրը քնքշորեն ասաց արտասվելով.

— Համենայն դեպս, ես շատ ուրախ եմ, որ նա այդքան սիրունիկ տեսք ունի։

ԳԼՈՒԽ XIII

Բասսը Ջեննիին դիմավորեց Քլիվլենդի կայարանում և իսկույն էլ սկսեց աշխույժ խոսել ապագայի մասին։

— Առաջին հերթին հարկավոր է աշխատանք գտնել,— ասաց նա, իսկ քույրը արդյունաբերական խոշոր քաղաքի աղմուկ-զնգոցից և սուր հոտերով հագեցած օդից շշմած՝ գլուխը կորցրել էր և արդեն ոչինչ չէր տեսնում ու չէր լսում։— Հարկավոր է քեզ համար որևէ գործ գտնել,— շարունակում էր Բասսը։— Միևնույն է, թե ինչպիսի տեղ, միայն թե գըտնենք։ Եթե նույնիսկ շաբաթական երեք-չորս դոլլար ստանաս, այդ արդեն բավական կլինի բնակարանի վարձը վճարելու համար։ Ջորջն էլ երբ գա, կսկսի փող վաստակել, հայրիկն էլ փող է ուղարկում, այնպես որ մենք հիանալի կապրենք։ Շատ ավելի լավ, քան Կոլումբուս կոչված այն ողորմելի քնում։

— Այո,— անորոշ պատասխանեց Ջեննին, նա շրջապատի նորությամբ այնքան էր հափշտակված, որ ոչ մի կերպ չէր կարողանում կենտրոնանալ այդ կարևոր նյութի վրա։— Այո, հասկանում եմ։ Ես մի որևէ գործ կգտնեմ։

Նա շատ էր մեծացել եթե ո՛չ տարիքով, ապա խելքով։

Այն փորձությունը, որ հենց նոր ապրել էր նա, իրեն օգնել էր ավելի պարզ հասկանալ, թե կյանքն ինչպիսի մեծ պատասխանատվություն է դնում իր վրա։ Նա անընդհատ մտածում էր մոր մասին, մոր և երեխաների մասին։ Մասնավորապես պետք է աշխատել, որ Մարթան ու Վերոնիկան իրենց կյանքն ավելի լավ դասավորեն, քան ինքը։ Հարկավոր է նրանց ավելի լավ հագցնել։ Նրանք պետք է ավելի երկար ժամանակ դպրոց հաճախեն։ Թող նրանք ավելի շատ բարեկամներ ունենան, իրենց մտահորիզոնն ու ծանոթություններն ընդարձակելու ավելի մեծ հնարավորություններ։

Քլիվլենդը, ինչպես և այն տարիների ամեն մի երիտասարդ, աճող քաղաք, լեփ-լեցուն էր աշխատանք որոնող մարդկանցով։ Շուտ-շուտ նորանոր ձեռնարկություններ էին բացվում, բայց ազատ բանվորական ձեռքեր միշտ ավելի կար, քան պահանջվում էր։ Քաղաք եկող նոր մարդուն կարող էր հաջողվել, որ հենց նույն օրն աշխատանք գտնի։ Բայց և պատահում էր, որ եկվորը երկար շաբաթներ և նույնիսկ ամիսներ թափառում էր աշխատանք որոնելով։ Բասսը Ջեննիին առաջարկեց ամենից առաջ իր բախտը փորձել մեծ ու փոքր խանութներում։ Եվ եթե այդտեղից բան դուրս չեկավ, կարելի է գործարան մտնել կամ որևէ այլ տեղ։

— Միայն թե, եթե որևէ բան հանդիպի, առիթը բաց չթողնես,— նախազգուշացրեց նա։— Ինչ էլ լինի, իսկույն ընդունիր։

— Իսկ ի՞նչ ասեմ ես,— հուզմունքով հարցրեց Ջեննին։

— Ասա, որ ուզում ես աշխատանք ստանաս։ Որ քեզ համար միևնույն է, թե ինչից կսկսես։

Ջեննին առաջին իսկ օրը փորձեց հետևել եղբոր խրատներին, բայց որպես վարձատրություն մի քանի սառն մերժում ստացավ։ Ուր էլ նա դիմում էր, ոչ մի տեղ, ըստ երևույթին, նոր ծառայողների կարիք չունեին։ Նա շրջեց խանութները, գործարանները, մանր արհեստանոցները, որոնցից ծայրամասերում շատ կային, բայց ամենուրեք նրան դուռն էին ցույց տալիս։ Վերջապես նա սկսեց սպասուհու տեղ որոնել, թեպետև շատ մեծ հույս ուներ, որ ստիպված չէր լինի

դիմելու այդ վերջին միջոցին։ Լրագրերում հայտարարություններն ուշադիր կարդալով՝ նա ընտրեց չորսը, որոնք առավել հարմար թվացին, և գնաց այդ հասցեներով։ Երբ նա եկավ, տեղերից մեկն արդեն զբաղված էր, բայց դուռը բաց անող տիկնոջ վրա Ջեննիի դեմքն այնպիսի տպավորություն գործեց, որ նա առաջարկեց ներս մտնել և սկսեց հարցուփորձ անել։

— Ափսոս, որ մի քիչ առաջ չեք եկել,— ասաց նա։— Դուք ինձ ավելի շատ եք դուր գալիս, քան այն աղջիկը, որին վարձել եմ։ Համենայն դեպս ձեր հասցեն թողեք ինձ մոտ։

Ջեննին այդ սիրալիր ընդունելությունից ուրախացած՝ հեռացավ ժպիտը դեմքին։ Այժմ նա այնպես ջահել չէր երևում, ինչպես առաջ, մինչև իրեն հասած փորձությունը։ Նրա դեմքը փոքր-ինչ նիհարել էր, աչքերը մի քիչ խոր էին ընկել, և դա նրա ամբողջ կերպարանքին ավելի մեծ խոհեմություն ու քնքշություն էր տալիս։ Նա մաքրության օրինակ էր հանդիսանում։ Հենց նոր լվացված ու հարթուկված շորի մեջ այնքա՜ն թարմ ու հրապուրիչ էր երևում։ Նա դեռ չէր դադարել աճել, բայց երևում էր, որ դա արդեն փոքրիկ աղջիկ չէ, այլ՝ քսանամյա կին։ Իսկ գլխավորը՝ Ջեննին շատ լավ բնավորություն ուներ և, չնայած ծանր աշխատանքին ու զրկանքներին, երբեք իր կայտառությունը չէր կորցնում։ Սպասուհի կամ օգնական որոնող ամեն մեկի համար նա իսկական գյուտ կլիներ։

Հետո նա գնաց Էվկլիդի փողոցում գտնվող մի մեծ առանձնատուն։ Դա նրան խիստ շքեղ թվաց, հազիվ թե իր ծառայությունն այստեղ պետք լիներ, բայց քանի որ եկել էր, հարկավոր էր փորձել։ Դուռը բացող ծառան նրան առաջարկեց մի քիչ սպասել, ապա նրան տարավ երկրորդ հարկը, տանտիրուհի միսիս Բրայսբրիջի զարդասենյակը։ Բարձր հասարակության մեջ հաճախ հանդիպող այդ դուրեկան շիկահեր տիկինը կնոջ գեղեցկությունը վատ չէր հասկանում և իսկույն գնահատեց Ջեննիի արտաքինը։ Նա մի քիչ խոսեց երիտասարդ կնոջ հետ և որոշեց փորձի համար վերցնել նրան որպես սպասուհի։

— Ես ձեզ շաբաթական չորս դոլլար կվճարեմ, և եթե ուզում եք, դուք այստեղ կապրեք,— ասաց միսիս Բրայսբրիջը։

Ջեննին բացատրեց, որ ինքն ապրում է Եղբոր մոտ, և շուտով գալու է նաև ամբողջ ընտանիքը։

— Դե լավ,— ասաց տանտիրուհին,— տեղավորվեցեք, ինչպես ձեզ հարմար է։ Միայն թե առավոտները ժամանակին եկեք։

Նա ցանկացավ, որ Ջեննին իսկույն անցնի իր պարտականություններին, և աղջիկը համաձայնեց։ Միսիս Բրայսբրիջը կարգադրեց, որ Ջեննիին մի գեղեցիկ գլխազարդ ու զոգնոց տան և համառոտակի ծանոթացրեց իր նոր պարտականություններին։ Սպասուհին ամենից առաջ պիտի հոգ տաներ տանտիրուհու մասին, սանրեր նրա մազերը, օդներ հագնվել։ Նա պետք է նաև դուռը բաց աներ, երբ զանգը տային, անհրաժեշտության դեպքում սպասարկեր սեղանը և ընդհանրապես կատարեր տանտիրուհու բոլոր հանձնարարությունները։ Միսիս Բրայսբրիջը իր ապագա սպասուհուն թվաց մի փոքր չոր ու խիստ, բայց և այնպես Ջեննին հիացած էր նրա եռանդով ու տիրական շարժուձևերով։

Երեկոյան ժամը ութին Ջեննիին ասացին, որ այսօր նա ազատ է։ Նա ինքն իրեն հարց էր տալիս, թե իսկապես մի՞թե իրեն հարմար սպասուհի են համարել այսպիսի մի մեծ ու հարուստ տան համար, և շատ ուրախ էր, որ այդպես լավ տեղավորվեց։ Տիրուհին սկզբում հանձնարարեց մաքրել զարդասենյակի թանկարժեք կահույքն ու զարդերը, և թեև Ջեննին եռանդով ու ջանասիրությամբ էր աշխատում, մինչև ժամը ութը չհասցրեց ամեն ինչ անել։ Նա շտապում էր տուն գնալ և ուրախ էր, որ հիմա եղբորն ասելու է, թե ինչ լավ տեղ է գտել։ Հիմա մայրը կարող է գալ Քլիվլենդ, հիմա իր աղջիկն էլ իր հետ կլինի։ Հիմա իսկապես որ նրանք նոր ձևով կապրեն, և այդ նոր կյանքը շատ ավելի դյուրին, լավ և ուրախ կլինի, քան առաջ էր։

Բասսի առաջարկությամբ Ջեննին մորը գրեց, որ նա անհապաղ գա, իսկ մի շաբաթ հետո արդեն նրանք մի հար-

մար տուն գտան և վարձեցին։ Միսիս Գերհարդը երեխաների օգնությամբ դասավորեց եղած-չեղածը, այդ թվում և կահույքը, որ տեղավորվել էր մեկ ֆուրգոնում, և երկու շաբաթ հետո նրանք տեղավորվեցին նոր բնակարանում։

Միսիս Գերհարդը միշտ էլ այնպե՞ս էր ցանկացել ապրել լավ, դուրեկան բնակարանում։ Ամուր ու գեղեցիկ փափուկ կահույք, հաճելի տաք գույնի հաստ գորգ, բազմաթիվ աթոռներ, բազկաթոռներ, նկարներ, թախտ, դաշնամուր,— այսպիսի գեղեցիկ բաների մասին էր երազել նա ողջ կյանքում, սակայն երբեք հնարավորություն չէր ունեցել իրականացնել իր երազանքը։ Բայց և այնպես նա չէր հուսահատվում։ Գուցե թե երբևիցե կվայելի այդ ամենի հաճույքը։ Կարծես թե ահա հիմա բախտը ժպտալու է նրան։

Հասնելով Քլիվլենդ և տեսնելով ուրախ, շողշողուն Ջեննիին՝ միսիս Գերհարդը ոգեշնչվեց։ Բասսը նրան հավատացրեց, որ ամբողջ ընտանիքով հիանալի կապրեն։ Նա բոլորին տարավ իր տուն, ապա Ջորջին պատվիրեց վերադառնալ կայարան և իրերը բերել։ Այն փողից, որ սենատոր Բրենդերն ուղարկել էր Ջեննիին, դեռ մի հիսուն դոլլար մնացել էր միսիս Գերհարդի մոտ։ Այդ փողով կարելի էր մաս-մաս վճարելու պայմանով ձեռք բերել պակասող կահույքը։ Բասսն արդեն մուծել էր մի ամսվա բնակարանային վարձը, իսկ Ջեննին վերջին երեկոներն զբաղված էր հատակներն ու լուսամուտները լվանալով և նոր տանը իդեալական մաքրություն էր ստեղծել։ Այժմ, առաջին երեկոյին, նրանք ունեին երկու նոր ներքնակ և բամբակամեջ վերմակներ, որոնք փռված էին անբասիր մաքուր հատակին։ Ունեին մի նոր լամպ, որ գնել էին մոտիկ խանութից, մի արկղ, որ Ջեննին ընտանեկան կարիքների համար վերցրել էր նպարեղենի խանութից և հիմա առայժմ միսիս Գերհարդին ծառայում էր որպես բազկաթոռ։ Ընթրիքի և առավոտյան համար հաց կար և մի քիչ երշիկ։ Մինչև ժամը ինը նրանք նստած ապագայի ծրագրեր էին կազմում, ապա բոլորը պառկեցին քնելու, բացի Ջեննիից և միսիս Գերհարդից։ Մայր ու աղջիկ շարունակում էին զրուցել, ըստ որում վճռական խոսքը պատկանում էր Ջեննիին։ Մայրն

սկսել էր իրեն մի որոշ չափով աղջկանից կախման մեջ զգալ։

Մի շաբաթում ամբողջ տունը կարգի բերվեց, գնեցին որոշ կահ-կարասի, մի զորգ և խոհանոցային անհրաժեշտ իրեր։ Ամենից վատն այն էր, որ ստիպված էին վառարան էլ գնել. դա էլ մի նոր մեծ ծախս էր։ Փոքր երեխաները դպրոց մտան, իսկ Ջորջի մասին որոշվեց, որ նա պետք է աշխատանք գտնի։ Ջեննիի և միսիս Գերհարդի վրա շատ էր ազդում այդ զոհաբերության ամբողջ անարդարությունը, բայց չգիտեին, թե ինչպես կարելի է խուսափել դրանից։

— Կաշխատենք այնպես անել, որ նա եկող տարի դպրոց գնա,— ասաց Ջեննին։

Որքան էլ, ըստ երևույթին, բարենպաստ էր սկսվում նոր կյանքը, բայց ընտանիքի ծախսերը համարյա հավասարվում էին եկամուտին, և բյուջեի հավասարակշռությունը միշտ սպառնալիքի տակ էր։ Բասսը, որ սկզբում լի էր մեծահոգությամբ, շուտով հայտարարեց, թե բավական է, որ ինքը ընդհանուր ծախսերի համար չորս դոլլար տա՝ սենյակի և սննդի ծախսեր։ Ջեննին տալիս էր իր ամբողջ վաստակածը և հավատացնում էր, թե իրեն ոչինչ հարկավոր չէ, միայն թե իր երեխան լավ խնամք ունենա։ Ջորջը ծառայող երեխայի տեղ գտավ մի խանութում, ստանում էր շաբաթական երկուսուկես դոլլար և սկզբնական շրջանում սիրով տալիս էր մորը։ Հետագայում որոշվեց հիսուն ցենտ թողնել նրան մանր ծախսերի համար։ Գերհարդը, որ առաջվա պես միայնակ աշխատում էր ընտանիքից հեռու, փոստով հինգ դոլլար էր ուղարկում, ամեն անգամ հիշեցնելով, թե անհրաժեշտ է քիչ-քիչ փող ետ դցել Կոլումբուսի հին պարտքերը վճարելու համար, որոնք մինչև այժմ ծանրացած են իր խղճի վրա։ Այսպիսով ընդհանուր եկամուտը կազմում էր շաբաթական տասնըհինգ դոլլար, և այդ փողով պետք էր կերակրել ու հագցնել ամբողջ ընտանիքը, բնակարանի վարձ տալ, ածուխ գնել և ամսական երեք դոլլար մուծել պարտքով գնած կահույքի համար, որն արժեր հիսուն դոլլար։

Ինչպե՞ս անել այդ։ Թող ապահովված մարդիկ, որոնք հաճախ ու սիրով դատողություններ են անում, թե սոցիալա-

կան տեսակետից ինչ է աղքատությունը, նեղություն տան իրենց՝ հետաքրքրվելու այս հարցի պատասխանով։ Հենց միայն բնակարանի վարձը, ածուխն ու լուսավորությունը կլանում էին ամսական քսան դոլլար կազմող մի կլոր գումար, ուտելիքի վրա, որ, դժբախտաբար, ծախսերի մյուս անխուսափելի առնթն էր, գնում էր քսանհինգ դոլլար։ Հագուստի, կահույքի դիմաց մուծումների, ամեն տեսակ վճարումների, անհրաժեշտ դեղորայքի և այլ բաների համար պետք է բավականացներ մնացած տասնհինգ դոլլարը, իսկ թե ինչպես, այդ ապահովված ընթերցողին թող թելադրի նրա բանկուն երևակայությունը։ Այսպես թե այնպես ծայրը ծայրին էր հասնում, և առայժմ Գերհարդները հույսով լի էին և կարծում էին, որ իրենք հիանալի են ապրում։

Այս ժամանակաշրջանում նրանց ընտանիքը կարող էր ծառայել համեստ ու աղնիվ աշխատասիրության արժանավոր օրինակ։ Միսիս Գերհարդը, որն աշխատում էր սպասուհու պես և ամենաչնչին վարձատրություն անգամ չէր ստանում,— ոչ հագուստ, ոչ զվարճություններ, ոչ որևէ այլ բան,— ամեն առավոտ վեր էր կենում լուսաբացին, երբ դեռ բոլորը քնած էին լինում, կրակ էր վառում և սկսում նախաճաշ պատրաստել։ Բարակ ու մաշված չստերը հագին, որոնց մեջ ստիպված էր լրագրի թուղթ դնել (թե չէ ոտքերից կընկնեին), նա անձայն ման էր գալիս սենյակում և հաճախ անսահման քնքշությամբ նայելով խոր քնով քնած Ջեննիին, Բասսին ու Ջորջին, սրտանց ցանկանում էր, որ նրանք ստիպված չլինեն այդպես շուտ վեր կենալ և այդպես ծանր աշխատել։ Երբեմն իր սիրելի Ջեննիին արթնացնելուց առաջ մայրը երկար նայում էր նրա հոգնած, գունատ դեմքին, որ այնքան հանգիստ էր քնի մեջ, և դառնորեն ցավում էր, որ բախտն այդպես դաժան է վարվել նրա հետ։ Հետո քնքշորեն ձեռքը դիպցընում էր քնած աղջկա ուսին և շշուկով տալիս նրա անունը, մինչև որ Ջեննին արթնանում էր։

Երբ երեխաները վեր էին կենում, նախաճաշն արդեն պատրաստ էր լինում։ Երբ երեկոյան տուն էին վերադառնում, նրանց ընթրիքն էր սպասում։ Միսիս Գերհարդը երեխաներից

ոչ մեկի վրայից չէր պակսեցնում իր ուշադրությունն ու հոգատարությունը։ Փոքրիկ Թոռնիկից աչք չէր հեռացնում։ Նա հավատացնում էր, թե իրեն ոչ շոր է հարկավոր, ոչ կոշիկ. չէ՞ որ երեխաներից որևէ մեկը միշտ էլ կարող էր գնալ նրա այս կամ այն հանձնարարությունը կատարելու։

Բոլոր երեխաներից միայն Ջեննին էր լրիվ հասկանում մորը և, քնքշորեն սիրելով նրան, բոլոր ուժերով աշխատում էր օգնել։

— Մայրիկ, տուր այդ ես անեմ։

— Թող, մայրիկ, դրա մասին ես կհոգամ։

— Նստիր, մի քիչ հանգստացիր, մայրիկ։

Այս հասարակ խոսքերի մեջ արտահայտվում էր այն անսահման սերը, որ Ջեննիին կապում էր մոր հետ։ Նրանք միշտ էլ շատ լավ էին հասկանում իրար և քանի գնում, այնքան ավելի լիակատար ու խոր էր դառնում այդ փոխըմբռնողությունը։ Ջեննիի սիրտը ճմլվում էր, երբ մտածում էր, թե մայրը գերու նման շեմքից դուրս գալ չի կարողանում։ Ամբողջ օրն աշխատանքի ժամանակ նա մտածում էր այն աղքատիկ տնակի մասին, որտեղ մայրը չարչարվում ու աշխատում էր։ Որքա՞ն կուզենար Ջեննին հանգիստ տալ նրան, համեստ հարմարություններ, որ մայրը միշտ այնպես փափագել է։

ԳԼՈՒԽ XIV

Այն ժամանակամիջոցում, երբ Ջեննին ծառայում էր Բրայսբրիջների մոտ, նրա մտահորիզոնը շատ ընդարձակվեց։ Այդ հոյակապ տունը նրա համար հանդիսացավ մի դպրոց, որտեղ նա ոչ միայն հագնվել ու իրեն պահել սովորեց, այլև կենցաղային իմաստության դասեր ստացավ։ Միսիս Բրայսբրիջը և նրա ամուսինը գերժամանակակից մարդիկ էին, կահավորության անբասիր ճաշակի, ինքնավստահության, վերջին մոդայով հագնվելու, հյուրեր ընդունելու և հասարակության մեջ իրենց ամենալավ ձևով պահելու մարմնացում։

Հաճախ առանց որևէ առիթի, եթե չհաշվենք իր սեփական քմահաճույքը, միսիս Բրայսբրիջը հակիրճ ասացվածքներով շարադրում էր իր փիլիսոփայությունը։

— Կյանքը պայքար է, սիրելիս։ Եթե ուզում ես մի բան ստանալ, պետք է պայքարես։

— Իմ կարծիքով մեծ հիմարություն է չօգտվել ամեն մի միջոցից, որը կարող է քեզ համար դառնալ այն, ինչ ինքդ ես ուզում։ (Այս նա ասում էր շրթունքները թեթևակի ներկելով)։

— Համարյա բոլոր մարդիկ ի ծնե հիմար են։ Նրանք ապրում են այնպես, ինչի արժանի են և ոչ մի ավելի լավ բանի պետք չեն։ Արհամարհում եմ ճաշակի պակասությունը. դա ամենամեծ հանցանքն է։

Այս իմաստուն խրատների մեծ մասը Ջեննիին չէին ուղղված։ Բայց պատահաբար դրանք լսելով՝ Ջեննին չէր կարող չխորհել դրանց մասին։ Պարարտ հողի մեջ ընկած սերմերի պես դրանք ծիլեր էին տալիս։ Նրա մեջ սկսեց որոշ պատկերացում առաջանալ հասարակական սանդուղքի, իշխանության մասին։ Գուցե և բարձր դիրքն իր համար չէ, բայց այն գոյություն ունի աշխարհում, և եթե բախտը մարդուն ժպտա, կարելի է մի աստիճան վեր բարձրանալ։ Ջեննին աշխատում էր և շարունակ մտածում, թե ինչպես ավելի լավ բախտի հասնի։ Ո՞վ կուզենա ամուսնանալ իր հետ, իմանալով իր անցյալը։ Ինչպե՞ս բացատրի ինքը իր երեխայի գոյությունը։

Երեխան, նրա երեխան ամենագլխավորն է, ամենահրապուրիչը, ուրախության ու վախի մշտական աղբյուրը։ Կարո՞ղ է արդյոք ինքը գեթ երբևիցե երջանիկ դարձնել իր աղջկան։

Առաջին ձմեռը բավական սահուն անցավ։ Խստագույն խնայողության շնորհիվ երեխաները հագնված էին և դպրոց էին հաճախում, բնակարանի և կահույքի համար հաջողվում էր ժամանակին վճարել։ Միայն մեկ անգամ նրանց կյանքի խաղաղ ընթացքին սպառնալիք ծագեց, երբ հայրը գրեց, թե ծննդյան տոներին տուն է գալու։ Այդ կարճ ժամանակամիջոցում գործարանը փակվելու էր։ Եվ բնական է, Գերհարդի համ-

բերությունը չէր տալիս, նա ուզում էր տեսնել, թե իր ընտանիքն ինչպես է ապրում Քլիվլենդում։

Միսիս Գերհարդը սրտանց կուրախանար ամուսնու գալու առթիվ, եթե չվախենար, թե նա կռիվ կսարքի։ Ջեննին դրա մասին խոսեց մոր հետ, սա էլ իր հերթին խոսեց Բասսի հետ, և Բասսը խորհուրդ տվեց չվախենալ։

— Մի՛ անհանգստացիր,— ասաց նա։— Հայրիկը ոչինչ չի կարող անել։ Իսկ եթե որևէ բան ասի, ես ինքս կխոսեմ նրա հետ։

Անհաճո տեսարան ստեղծվեց, բայց ո՛չ այնքան ծանր, որքան վախենում էր միսիս Գերհարդը։ Ամուսինը եկավ ցերեկը, երբ Բասսը, Ջեննին ու Ջորջն աշխատանքի էին։ Փոքրը երեխաներից երկուսը նրան դիմավորեցին կայարանում։ Երբ նա տուն մտավ, միսիս Գերհարդը գրկեց նրան, միաժամանակ սրտի դողով մտածելով, թե հիմա անխուսափելիորեն ամեն ինչ կբացվի։ Եվ երկար սպասելու կարիք չեղավ։ Մի քանի րոպեից հետո Գերհարդը մտավ ննջարան։ Սպիտակ ծածկոցով ծածկված մահճակալին քնած էր մի սիրունիկ երեխա։ Նա իսկույն հասկացավ, թե դա ինչ երեխա է, բայց ձևացրեց, թե չի իմանում։

— Այս ո՞ւմն է,— հարցրեց նա։

— Ջեննիի աղջիկն է,— վախվխելով ասաց միսիս Գերհարդը։

— Վաղո՞ւց է այստեղ։

— Ո՛չ այնքան,— հուզվելով պատասխանեց կինը։

— Պետք է կարծել, որ նա ինքն էլ այստեղ է,— ասաց Գերհարդը՝ նույնիսկ չցանկանալով աղջկա անունը տալ։

— Նա աշխատում է որպես սպասուհի,— Ջեննին պաշտպան կանգնեց միսիս Գերհարդը։— Հիմա նա այնպես լավ է պահում իրեն։ Էլ ո՞ւր պիտի գնա։ Ձեռ չտաս նրան։

Գերհարդը երբ ընտանիքից հեռու էր ապրում, արդեն որոշ բան հասկացել էր։ Կրոնական թեմաների մասին խորհելիս նրա մեջ տարօրինակ, անհասկանալի մտքեր ու զգացմունքներ էին ծագել։ Իր աղոթքներում նա ամենաբարձյալին խոստովանում էր, որ իզուր է աղջկա հետ այդպես վար-

վել։ Բայց դեռ չէր որոշել, թե այսուհետև ինչպես վարվի նրա հետ։ Աղջիկը ծանր մեղք էր գործել, որից փախչել չի լինի։

Երեկոյան, երբ Ջեննին տուն վերադարձավ, արդեն հանդիպումից խույս տալ չէր կարելի։ Գերհարդը լուսամուտից տեսավ նրան և ձևացրեց, թե ամբողջովին տարված է լրագրի ընթերցանությամբ։ Կինը, որ առաջ աղաչում էր նրան զեթ նայել Ջեննիի վրա, այժմ վախից դողում էր, թե հանկարծ մի խոսքով կամ շարժումով կվիրավորի նրան։

— Ահա նա գալիս է,— ասաց միսիս Գերհարդը, մտնելով սեղանատուն, որտեղ ամուսինն էր նստած, բայց Գերհարդը նույնիսկ գլուխը չբարձրացրեց։— Գոնե մի խոսք ասա նրան,— խնդրեց նա նախքան դուռը կբացվեր, բայց ամուսինը չպատասխանեց։

Երբ Ջեննին տուն մտավ, մայրը նրան շշնջաց.

— Հայրդ սեղանատանն է։

Ջեննին գունատվեց, մատը սեղմեց շուրթերին և անվճռական կանգ առավ, չիմանալով ինչ անել։

— Նա տեսե՞լ է...

Եվ լռեց, մոր երեսից հասկանալով, որ հայրն արդեն գիտե երեխայի գոյության մասին։

— Գնա, մի վախենա,— ասաց միսիս Գերհարդը։— Նա բան չի ասի։

Ջեննին, վերջապես, մոտեցավ դռանը, տեսավ հորը, որի ճակատին կնճիռներ էին գոյացել որպես նշան ոչ թե ցասումի, այլ խոր մտախոհության, և մի վայրկյան տատանվելուց հետո ներս մտավ։

— Հայրիկ,— խոսեց նա ու կանգ առավ, ուժ չունենալով շարունակել։

Գերհարդը գլուխը բարձրացրեց, նրա մոխրա-դարչնագույն աչքերը մի զննական հայացք գցեցին շիկավուն թավ թարթիչների տակից։ Աղջկան տեսնելուն պես նրա մեջ մի հնչ-որ բան շարժվեց, բայց նա ծածկվեց իր անհողդողդությամբ ինչպես վահանով և ամենևին ցույց չտվեց, թե ուրախ է աղջկան տեսնելուն։ Նրա մեջ կատաղի պայքար էր գնում պայմանական, ընդունված բարոյականության և բնական,

հայրական զգացմունքի միջև, բայց ինչպես հաճախ լինում է սահմանափակ մարդկանց հետ, պայմանականության ուժը ժամանակավորապես հաղթեց։

— Ի՞նչ,— ասաց նա։

— Դու ինձ չե՞ս ներում, հայրիկ։

— Ներում եմ,— մռայլ խոսեց Գերհարդը։

Ջեննին մի պահ տատանվեց, ապա մի քայլ արավ դեպի հայրը. Գերհարդը շատ լավ հասկացավ, թե ինչի համար։

— Լավ, վերջ,— ասաց հայրը թեթևակի ետ հրելով աղջկան, հենց որ նրա շրթունքները դիպան հոր չսափրված այտին։

Սառն էր նրանց հանդիպումը։

Երբ այս դառն փորձությունից հետո Ջեննին խոհանոց մտավ և հանդիպեց մոր տագնապահար հայացքին, փորձեց բացատրել, թե ամեն ինչ կարծես բարեհաջող անցավ, բայց նրան չհաջողվեց թաքցնել իր զգացմունքները։

«Դուք հաշտվեցի՞ք»,— ուզեց հարցնել մայրը, բայց դեռ մի խոսք էլ չէր ասել, երբ աղջիկը խոհանոցի սեղանի մոտ ընկավ աթոռին, գլուխը ձեռքերի վրա գցեց և սկսեց բարձրաձայն հեկեկալ։

— Կամաց, կամաց,— ասաց միսիս Գերհարդը։— Կարիք չկա լալու։ Ի՞նչ ասաց նա քեզ։

Ջեննին միանգամից չկարողացավ այնքան հանգստանալ, որ պատասխանի։ Մայրը ջանում էր սիրտ տալ նրան.

— Մի՛ վշտանա,— ասաց նա։— Հայրը միշտ այդպես է լինում։ Հետո ամեն ինչ կարգի կընկնի։

ԳԼՈՒԽ XV

Գերհարդի գալուց հետո երեխայի հետ կապված խնդիրները ամբողջ հասակով ծառացան։ Գերհարդը կամա թե ակամա պիտի հակվեր դեպի այն տեսակետը, որ բնական է պատպի համար. չէ՞ որ երեխան էլ մարդ է, կենդանի հոգի։ Նա ինքն իրեն հարց էր տալիս, թե երեխային մկրտե՞լ են արդյոք։ Հետո դրա մասին հարցրեց տնեցիներին։

— Դեռ ոչ,— պատասխանեց կինը, որն այդ սրբազան պարտականությունը չէր մոռացել, բայց վստահ չէր, թե իր թոռնիկին կընդունե՞ն եկեղեցու գիրկը։

— Դե, իհարկե՝ դեռ ոչ,— փնչացրեց Գերհարդը։ Նա շատ էլ մեծ կարծիքի չէր կնոջ բարեպաշտության մասին։— Ինչպիսի՞ անհոգություն, ինչպիսի՞ անհավատություն։ Հիանալի է, խոսք չունեմ։

Մի պահ մտածելուց հետո նա որոշեց, որ անհրաժեշտ է անհապաղ շարիքն ուղղել։

— Երեխային պետք է մկրտել,— ասաց նա։— Ինչո՞ւ նա չի արել այդ։

Միսիս Գերհարդը հիշեցրեց նրան, որ դրա համար կընքահայրը է հարկավոր, բացի այդ, երեխային մկրտելու համար անխուսափելիորեն հարկ կլինի խոստովանել, որ նա օրինական հայր չունի։

Այս լսելով Գերհարդը մի քանի րոպե լռեց, բայց նրա հավատն այնպիսին չէր, որ նման դժվարությունները նրան ստիպեին մոռանալ իր պարտքը։ Ինչպե՞ս կնայի աստված այդպիսի խուտափանքներին։ Դա քրիստոնեաբար չէ, և Գերհարդը պարտավոր է հոգալ, որ այս գործն ուղղվի։ Ջեննին պետք է անհապաղ երեխային տանի եկեղեցի և մկրտի, իսկ ինքն ու կինը կնքահայր ու կնքամայր կլինեն։ Կամ գուցե չարժե աղջկան այդպիսի ներողամտություն ցուցաբերել, ինքը պարզապես կհոգա, որ երեխային մկրտեն իր բացակայությամբ։ Նա երկար խորհեց այս դժվարին դրության մասին և, վերջապես, որոշեց, որ մկրտությունը պիտի տեղի ունենա առաջիկա լի օրերից մեկին, Ծննդյան տոնի ու Նոր տարվա միջև, երբ Ջեննին աշխատանքի կլինի։ Այս միտքը նա առաջարկեց կնոջը և նրա հավանությունն էլ ստանալով արտահայտեց էլի մի միտք, որը մտահոգում էր նրան.

— Աղջիկն անուն չունի,— ասաց նա։

Ջեննին նույնպես դրա մասին խոսել էր մոր հետ և ասել, որ իրեն դուր է գալիս Վեստա անունը։ Այժմ միսիս Գերհարդը համարձակվեց ինքն առաջարկել այդ.

— Գուցե անունը Վեստա՞ դնենք։

Գերհարդը կնոջը լսեց բոլորովին անտարբեր։ Նա արդեն մտքում ընտրություն էր արել։ Դեռ երիտասարդության հասակից նրա մտքում մի անուն կար, որը, չգիտես ինչու, չէր օգտագործվել իր աղջիկների համար. Վիլհելմինա։ Հասկանալի է, նա չէր էլ մտածում որևէ քնքշանքի մասին թոռան նկատմամբ։ Պարզապես դա լավ անուն է, և աղջիկը պետք է շնորհակալ լինի դրա համար։ Մտացրիվ ու անբավական տեսքով Գերհարդն առաջարկեց իր առաջին ընծան աղգակցական սեղանին, որովհետև վերջ ի վերջո դա ընծա էր։

— Վատ չէ,— ասաց նա՝ մոռանալով իր անտարբերությունը։— Իսկ գուցե Վիլհելմինա՞ անվանենք։

Միսիս Գերհարդը չհամարձակվեց հակառակվել նրան, քանի որ նա արդեն ակամա փափկել էր։ Կանացի տակտը փրկեց նրան։

— Կարելի է երկու անունն էլ տալ,— ասաց նա։

— Ինձ համար միևնույն է,— պատասխանեց Գերհարդը՝ նորից մտնելով իր կեղևի մեջ, որից դուրս էր եկել ինքն էլ չնկատելով այդ։— Կարևորն այն է, որ մկրտվի։

Ջեննին ուրախությամբ լսեց այս ամենի մասին, որովհետև նա ուզում էր անպայման իր աղջկա համար հասնել բոլոր հնարավոր առավելություններին, լինի այդ կրոնի թե որևէ այլ հարցում։ Նա շատ աշխատանք թափեց, որպեսզի օրինակելի չափով օսլայի և հարթուկի երեխայի շորը և ամեն ինչ, ինչով նշանակված օրը զուգելու էին աղջկան։

Գերհարդը մի լութերական քահանա գտավ՝ մեծագլուխ ու ամրակազմ մի եկեղեցու սպասավոր, որը շատ բծախնդիր ու ձևապաշտ մարդ էր, և իր խնդիրքը հայտնեց նրան։

— Ձեր թոռնի՞կն է երեխան,— հարցրեց քահանան։

— Այո,— ասաց Գերհարդը։— Հայրն այստեղ չէ։

— Այդպե՞ս,— ծոր տվեց քահանան հետաքրքրությամբ նայելով զրուցակցին։

Բայց Գերհարդին շփոթեցնելը հեշտ չէր։ Նա բացատրեց, թե երեխային մկրտելու կբերեն ինքն ու իր կինը։ Քահանան գլխի ընկավ, թե որն է դրության դժվարությունը և այլևս չշարունակեց հարցափորձ անել։

— Եկեղեցին չի կարող մկրտությունը մերժել, քանի որ դուք, որպես պապ, ցանկություն եք հայտնում երեխայի կընքահայրը դառնալ,— ասաց նա։

Գերհարդը գնաց հիվանդագին զգացողությամբ, որ խայտառակության ստվերն իր վրա էլ է ընկել, բայց միևնույն ժամանակ հաճելի էր այն գիտակցությունը, որ իր պարտքը կատարել է։ Հիմա նա աղջկան կտանի Եկեղեցի, նրան կմկրտեն, և այն ժամանակ ամեն մի պատասխանատվություն կվերանա իր վրայից։

Բայց երբ մկրտության ժամը հասավ, պարզվեց, որ ինչ-որ մի նոր ուժ նրա մեջ ավելի մեծ հետաքրքրություն է առաջացնում դեպի երեխան և ավելի մեծ պատասխանատվության զգացմունք։ Նա նորից լսեց անողոք կրոնի պատվիրանները, որ սահմանել էր բարձրագույն օրենքը, պատվիրաններ, որոնք մի ժամանակ ամրապնդել էին նրա կապը հարազատ երեխաների հետ։

— Դուք մտադի՞ր եք արդյոք այս երեխային դաստիարակել ավետարանի սիրո ոգով,— հարցնում էր սևազգեստ քահանան, երբ Գերհարդն ու իր կինը կանգնել էին նրա առաջ փոքրիկ, խաղաղ եկեղեցում, ուր բերել էին նրանք երեխային. նա ծեսին համապատասխան հարցեր էր տալիս։ Գերհարդն ասաց. «Այո», և միսիս Գերհարդը նույնպես դրական պատասխան տվեց։

— Պարտավորվո՞ւմ եք արդյոք հարկ եղած հոգատարությամբ ու ջանասիրությամբ, ճշմարիտ օրինակով ու խստությամբ ուղիղ ճանապարհի դնել նրան և պաշտպանել ամեն չարից ու սովորեցնել հնազանդվել աստծո կամքին, ինչպես սրա մասին ասված է սուրբ գրքում։

Գերհարդը լսում էր, և հանկարծ նրա ուղեղում կայծակի պես փայլատակեց այն միտքը, ինչ տեղի էր ունեցել իր երեխաների հետ. նրանց էլ, ահա, այսպես մկրտել էին։ Նրանք էլ լսել էին իր հանդիսավոր խոստումը՝ հոգալ նրանց հոգեկան բարեկեցության մասին։ Նա լուռ էր։

— Այո, պարտավորվում ենք,— թելադրեց քահանան։

— Այո, պարտավորվում ենք,— խոնարհաբար կրկնեցին Գերհարդն ու իր կինը։

— Մկրտության ծեսով դուք այս մանկան բախտը հանձնո՞ւմ եք արդյոք ձեր աստծո ձեռքը, որը կյանք է տվել նրան։

— Այո։

— Եվ, վերջապես, եթե դուք պատրաստ եք խղճի մտոք հայտարարել աստծո առաջ, որ ձեր հավատն ամուր է և ձեր երդումներն անսասան են և ընդունված ձեր սրտով, հաստատեցեք այդ աստծո առաջ, ասելով՝ այո։

— Այո,— կրկնեցին նրանք։

— Մկրտվում է մանուկը Վիլհելմինա-Վեստա, հանուն հոր և որդու և հոգույն սրբո,— ավարտեց քահանան ձեռքերը մեկնելով երեխայի վրա։ Աղոթենք։

Գերհարդը ճերմակած դլուխը խոնարհեց և սկսեց մրմընջալ աղոթքի խոսքերը։

Այդ հանդիսավոր խոսքերը լսելով՝ նա մեծ պատասխանատվություն զգաց իր կնոջ ձեռքերին պառկած այդ փոքրիկ, մերժված արարածի համար, զդաց, որ ինքը պետք է հոդ տանի թոռան մասին, որ ինքը նրա համար պատասխանատու է աստծո առաջ։ Նա երկյուղածությամբ գլուխը խոնարհեց, և երբ արարողությունը վերջացավ ու նրանք եկեղեցուց դուրս եկան, իր զդացմունքներն արտահայտելու խոսքեր չդտավ։ Նա խոր ու ջերմ հավատ ուներ։ Աստված նրա համար կենդանի էակ էր, բարձրագույն իրականություն։ Կրոնը ներկայացնում է ոչ միայն հետաքրքիր մտքեր, խոսքեր, որ լսում ես կիրակի օրերը, այլև դա աստվածային կամքի հզոր, կենդանի արտահայտություն է, որ ժառանգություն է մնացել այն ժամանակներից, երբ մարդիկ անձնական, անմիջական հաղորդակցության մեջ էին աստծո հետ։ Նա կրոնի պատվիրանների կատարման մեջ էր տեսնում սիրոփանքն ու փրկությունը, միակ մխիթարությունը արարածի համար, որն առաքված է թափառելու այս անցավոր աշխարհում, որի իմաստը մեզ համար կբացահայտվի ո՛չ այստեղ, այլ երկնքում։ Գերհարդը

դանդաղորեն քայլում էր փողոցով, խորհելով այն սրբազան խոսքերի մասին, որ լսել և ինքն էլ արտասանել էր եկեղեցում, և այն պարտավորությունների մասին, որ այդ խոսքերը դնում էին իր վրա, և վերանում էր զվվանքի վերջին սովերը, որ համակել էր իրեն երեխայի հետ եկեղեցի գալիս, իր տեղը զիջելով միանգամայն բնական քնքշանքին։ Որքան էլ ծանր մեղք գործած լինի իր դուստրը, երեխան ոչ մի հանցանք չունի։ Այս անօգնական, թույլ արարածը իրենից սեր ու հոգատարություն էր պահանջում։ Գերհարդն զգում էր, որ իր սիրտը մղվում է դեպի երեխան, բայց նա չէր կարող միանգամից զիջել իր դիրքերը։

— Հիանալի մարդ է,— ասաց նա քահանայի մասին կնոջ կողքով քայլելիս և նոր պարտականության մտքերի ազդեցության տակ արագորեն մեղմանալով։

— Այո, ճիշտ է,— վեհերոտ համաձայնեց միսիս Գերհարդը։

— Եկեղեցին էլ լավն է,— ասաց ամուսինը։

— Այո։

Գերհարդը այս ու այն կողմ նայեց, տներին, փողոցին, որ այնպես աշխուժացել էր ձմեռային այդ արևոտ օրը և, վերջապես, նայեց երեխային, որ գրկած տանում էր իր կինը։

— Դա, երևի, ծանր է քեզ համար,— ասաց նա գերմաներեն։— Տուր ես տանեմ։

Միսիս Գերհարդը հոգնած լինելով՝ համաձայնեց։

— Դե, տեսնենք,— ասաց Գերհարդը նայելով մանկանը և նրա գլուխը հենելով իր ուսին, որպեսզի ավելի հարմար լինի։— Հուսանք, որ սա արժանի կլինի այն ամենին, ինչ այսօր արվեց իր համար։

Եվ միսիս Գերհարդը լավ հասկացավ, թե ինչ է հնչում նրա ձայնի մեջ։ Այս երեխայի ներկայությունն իրենց տանը գուցե և շատ անգամ ծանր տրամադրության և սուր խոսքերի առիթ կլինի, բայց մի ուրիշ, ավելի հզոր ուժ կգսպի Գերհարդին։ Նա միշտ կհիշի երեխայի հոգու մասին։ Նա այլևս երբեք չի հրաժարվի նրա մասին հոգալուց։

ԳԼՈՒԽ XVI

Վերջին օրերը, որ Գերհարդն անցկացրեց Քլիվլենդում, ասես նա քաշվում էր Ջեննիի ներկայությամբ և աշխատում էր ձևացնել, թե նրան չի նկատում։ Երբ գնալու ժամանակը եկավ, նա մեկնեց առանց աղջկան հրաժեշտ տալու և կնոջը հանձնարարեց, որ իր փոխարեն ինքն անի այդ, բայց հետո, Յանգսթաունի ճանապարհին նա ցավեց, որ այդպես է արել։ «Հարկավոր էր հրաժեշտ տալ նրան»,— մտածում էր նա գնացքում։ Բայց արդեն շատ ուշ էր։

Իսկ ընտանիքի կյանքն ընթանում էր իր կարգով։ Ջեննին շարունակում էր ծառայել միսիս Բրայսբրիջի մոտ։ Սեբաստյանը ամուր հաստատվել էր ծխախոտի խանութում որպես վաճառող։ Ջորջի ռոճիկն ավելացրին մինչև երեք դոլլար, իսկ հետո նույնիսկ մինչև երեքուկես։ Դա ո՛չ դյուրին, տխուր ու միապաղաղ դոյություն էր։ Ածուխը, կենսամթերքը, կոշիկն ու հագուստը խոսակցության գլխավոր նյութն էր։ Բոլորը կաշվից դուրս էին գալիս՝ ջանալով ծայրը ծայրին հասցընել։

Ջեննիի զգայուն սրտի վրա շատ հոգսեր էին ծանրացել, բայց ամենից ավելի նրան անհանգստացնում էր իր ապագան, և այդ ո՛չ այնքան իր համար, որքան իր մանկան և հարազատների համար։ Նա չէր կարողանում պատկերացնել, թե ինչ է սպասում իրեն։ «Ու՞մ եմ պետք ես»,— նորից ու նորից հարց էր տալիս ինքն իրեն։ Ի՞նչ անել երեխային, եթե որևէ մեկը սիրի իրեն։ Իսկ այդ միանգամայն հնարավոր էր. Ջեննին ջահել էր, գեղեցիկ, և տղամարդիկ սիրով սիրահետում էին նրան, ավելի ճիշտ՝ փորձում էին սիրահետել։ Բրայսբրիջների մոտ շատ հյուրեր էին լինում, և նրանցից ոմանք փորձում էին կպչել այդ սիրունիկ սպասուհուց։

— Աղջիկս, ախր դուք ուղղակի չքնաղ եք,— ասաց նրան արդեն հիսունն անց մի ծեր թեթևսոլիկ, երբ մի առավոտ Ջեննին տիրուհու պատվերով ինչ-որ գործով գնացել էր նրա մոտ։

— Ներեցեք ինձ,— ասաց նա կարմրելով։

— Ճշմարիտ, դուք զմայլելի աղջիկ եք։ Եվ ինձնից նեղություն խնդրելու կարիք էլ չկա։ Ես կուզեի մի քիչ խոսել ձեզ հետ։

Եվ նա փորձեց շոյել աղջկա այտը, բայց Ջեննին շուտ եկավ և արագ հեռացավ։ Նա ուզում էր այդ դեպքը պատմել տիրուհուն, բայց ամոթը չթողեց։ «Ինչո՞ւ տղամարդիկ միշտ այդպես են վարվում,— մտածում էր նա։ Գուցե հենց ի՞նչ մեջ ի բնե մի արատ կա, ներքին մի փչացածություն, որը ձգում է փչացած մարդկանց»։

Անպաշտպան բնավորություններին հետաքրքիր դիծ. նրանք ասես մի ման մեղր լինեն ճանճերի համար, նրանց երբեք ոչինչ չեն տալիս, բայց նրանցից վերցնում են շատ։ Մեղմ, զիջողամիտ, անշահախնդիր մարդը միշտ էլ ավար է դառնում ամբոխի համար։ Մարդիկ հեռվից զգում են նրա անպաշտպան լինելը։ Սովորական տղամարդկանց համար Ջեննիի նման աղջիկը ասես կրակ լինի, որի մոտ կարելի է տաքանալ։ Նրանք ձգտում են դեպի այդպիսի աղջիկը, աշխատում են նրա համակրանքը նվաճել, փափագում են տիրապետել նրան։ Ահա թե ինչու շատերն էին նեղացնում նրան իրենց սիրալիր վերաբերմունքով։

Մի անգամ Ցինցիննատիից Բրայսբրիջների մոտ հյուր եկավ ոմն Լեսթեր Քեյն, որի հայրը կառքերի խոշոր գործարանատեր էր և լավ հայտնի էր ոչ միայն Ցինցիննատիում, այլև ամբողջ երկրում։ Լեսթեր Քեյնը հաճախ էր այցելում Բրայսբրիջներին։ Առանձնապես մտերիմ էր միսիս Բրայսբրիջի հետ, որը մեծացել էր Ցինցիննատիում և աղջիկ ժամանակ հաճախ էր լինում նրա հոր տանը։ Նա լավ ճանաչում էր Լեսթերի մորը, նրա եղբորն ու քույրերին և միշտ էլ սիրված մարդ էր Քեյնների ընտանիքում։

— Գիտե՞ս, Հենրի, վաղը Լեսթերը գալու է,— ամուսնուն ասաց միսիս Բրայսբրիջը Ջեննիի ներկայությամբ։— Այսօր ես հեռագիր ստացա նրանից։ Տեսնո՞ւմ ես դատարկապորտին։ Ես նրան կտեղավորեմ վերևը, արևելյան մեծ սենյակում։ Ուշադիր եղիր նրա հետ։ Նրա հայրը միշտ էլ շատ բարի է եղել իմ նկատմամբ։

— Գիտեմ,— հանդիստ ասաց ամուսինը։— Լեսթերն ինձ դուր է գալիս։ Իրենց ընտանիքում նա ամենահետաքրքիր ու խելացի տղան է։ Միայն թե շատ անտարբեր է ամեն ինչի նկատմամբ։ Ոչ մի բան չի հուզում նրան։

— Այո, բայց շատ լավ մարդ է, իմ ճանաչած մարդկանցից ամենալավը։

— Ես նրա հետ միանգամայն կարգին կլինեմ։ Կարծեմ ես միշտ էլ սիրալիր եմ եղել քո բարեկամների հետ։

— Այո, շատ։

— Դե, էլ ինչ կա,— ասաց ամուսինը։

Ջեննին պատրաստվել էր տեսնելու մի արտասովոր մարդու և չէր սխալվել։ Հյուրասենյակ մտավ և տանտիրուհուն ողջունեց մոտ երեսունվեց տարեկան մի մարդ՝ միջակից ավելի բարձր հասակով, սալետիկ կազմվածքով, գլուխը բարձր բռնած, վճիտ աչքերով և համառ կզակով։ Նա զարմանալի ուժեղ ու հնչեղ ձայն ուներ, այնպես, որ այդ ձայնը լսելիս և՛ ծանոթները, և՛ անծանոթները ակամա կանգ էին առնում և ետ նայում։ Նա խոսում էր պարզ ու հակիրճ։

— Բարի օր,— սկսեց նա՝ ողջունելով տանտիրուհուն։— Ուրախ եմ նորից տեսնելու ձեզ։ Ինչպե՞ս է միստր Բրայսբրիջը։ Ինչպե՞ս է Ջեննին։

Հարցերը հնչում էին եռանդով ու մտերմաբար, և միսիս Բրայսբրիջը պատասխանեց նույնպիսի ջերմությամբ։

— Ես շատ ուրախ եմ, որ եկաք, Լեսթեր,— ասաց նա։— Ջորջը ձեր իրերը վերև կտանի։ Դնանք իմ սենյակը, այնտեղ ավելի լավ է։ Ինչպե՞ս են պապիկն ու Լուիզան։

Հյուրը նրա ետևից սանդուղքով վերև բարձրացավ, և Ջեննին, որ հարթակում կանգնած ականջ էր դնում, միանգամից զգաց նրա արտասովոր հմայքը։ Նրան թվում էր— նա ինքն էլ չէր կարող բացատրել, թե ինչու— եկել է իսկապես մի մեծ ու հազվագյուտ մարդ։ Ամբողջ տունն ասես աշխուժացավ։ Տանտիրուհին անհամեմատ ավելի սիրալիր և բարեհամբույր դարձավ։ Ամեն մեկն ուզում էր մի որևէ բան անել հյուրի համար։

Ջեննին շարունակում էր աշխատել, բայց եկվորի թողած

տպավորությունից ազատվել չէր կարողանում։ Նա մտքում կրկնում էր նրա անունը՝ Լեսթեր Քեյն։ Ցինցիննատիից։ Շուտ-շուտ գաղտագողի նայում էր նրան. առաջին անգամն էր կյանքում, որ անծանոթ մարդն այդպես հետաքրքրում էր նրան։ Այդ մարդն այնպես բարեկազմ էր, գեղեցիկ, ուժեղ։ Հետաքրքիր էր իմանալ՝ ինչո՞վ է զբաղվում նա։ Եվ միևնույն ժամանակ նա մի փոքր վախեցնում էր Ջեննիին։ Մի անգամ նա որսաց հյուրի սևեռուն, խորաթափանց հայացքն իր վրա։ Նա ներքուստ ցնցվեց և առաջին իսկ հնարավորության դեպքում դուրս գնաց սենյակից։ Մի ուրիշ անգամ հյուրն ուզեց խոսել Ջեննիի հետ, բայց նա ձևացրեց, թե խիստ զբաղված է և շտապեց դուրս գնալ։ Հաճախ նա, նույնիսկ առանց հյուրի կողմը նայելու, գիտեր, որ նա իրեն է նայում, և մի անորոշ տագնապ էր զգում։ Նա ուզում էր փախչել այդ մարդուց, թեև դրա համար ոչ մի տեսանելի պատճառ չկար։

Եվ այդ մարդն էլ, որի հարստությունը, դաստիարակությունը և հասարակության մեջ ունեցած դիրքը շատ ավելի բարձր էին դասում նրան Ջեննիից, նույնպես ակամա սկսեց հետաքրքրվել այդ արտասովոր աղջկանով։ Ինչպես և շատ ուրիշների՝ նրան հրապուրում էր Ջեննիի զարմանալի քնքուշ կանացիությունը։ Նրա մեջ կար մի ինչ-որ բան, որը հաղվադեպ ու սքանչելի սեր էր խոստանում։ Եվ նա զգում էր, որ դժվար չէ այդ աղջկան հաղթել, թեպետև չէր հասկանում, թե ինչու։ Այն ամենը, ինչ ապրել էր Ջեննին, ամենևին չէր ազդում նրա արտաքինի վրա։ Նրա վարվեցողության մեջ կոտրտվելու ամենաչնչին նշան անգամ չկար, և այնուամենայնիվ Քեյնն զգում էր, հաջողությունն ապահովված է։ Նա պատրաստ էր հենց հիմա փորձել իր բախտը, բայց գործերը նրան ստիպեցին շորս օր հետո մեկնել Քլիվլենդից։ Երեք շաբաթ նա բացակա էր։ Ջեննին կարծում էր, թե նա այլևս չի վերադառնա և զարմանալի թեթևություն էր զգում և դրա հետ միասին՝ անհանգստություն։ Եվ հանկարծ նա նորից եկավ։ Ըստ երևույթին, նրան չէին սպասում, և նա միսիս Բրայսբրիջին բացատրեց, թե ինքը նորից գործեր ունի

Քլիվլենդում։ Այս ասելիս նա մի թռուցիկ հայացք գցեց Ջեննիի վրա, և աղջկան թվաց, թե գուցե նա մասամբ հենց իր համար է այստեղ։

Այս գալուն Ջեննին հաճախ էր տեսնում հյուրին մերթ նախաճաշի ժամանակ, որին ինքը երբեմն սպասարկում էր, մերթ ճաշի ժամանակ, երբ ինքը հյուրին կարող էր նայել դահլիճից կամ հյուրասենյակից, մերթ զարդասենյակում, ուր նա երբեմն մտնում էր միսիս Բրայսբրիջի հետ զրուցելու։ Նրանք շատ մտերիմ էին իրար հետ։ Քեյնի գալու երկրորդ օրը Ջեննին լսեց, թե ինչպես միսիս Բրայսբրիջը նրան ասաց.

— Ինչո՞ւ չեք ամուսնանում, Լեսթեր։ Ժամանակն է կարծեմ։

— Գիտեմ, ժամանակն է,— պատասխանեց նա,— բայց ինչ-որ տրամադրություն չունեմ։ Ուզում եմ էլի մի քիչ ազատ զբոսնել։

— Գիտեմ, գիտեմ ես ձեր զբոսանքը։ Ամաչեիք գոնե։ Դուք ինչքա՞ն եք վշտացնում ձեր հորը։

Քեյնը ժպտաց։

— Հայրս իմ պատճառով այնքան էլ չի վշտանում։ Նա ամբողջովին թաղված է գործերի մեջ։

Ջեննին հետաքրքրությամբ նայեց հյուրին։ Նա հազիվ թե ինքն էլ կարողանում էր հասկանալ իր մտքերը, բայց այդ մարդը ձգտում է նրան։ Եթե նա հասկանար, թե ինչու է այդպես, առանց ետ նայելու կփախչեր նրանից։

Հյուրն ավելի ու ավելի ուշադիր էր դառնում, հաճախ նրան էր դիմում որևէ պատահական դիտողությունով և աշխատում էր խոսակցության մեջ քաշել աղջկան։ Ջեննին չէր կարող չպատասխանել. նա այնքա՞ն դուրեկան ու սիրելի էր։ Եղավ, որ մի առավոտ Լեսթերը նրան գտավ երկրորդ հարկի միջանցքում, որտեղ Ջեննին պահարանից սպիտակեղեն էր հանում։ Նրանք մենակ էին. միսիս Բրայսբրիջը գնումների էր գնացել, իսկ ծառաները ցածումն էին։ Քեյնն իսկույն օգտվեց դրանից։ Նա Ջեննիին մոտեցավ ամենավերնական ու սիրական տեսքով։

— Ես պետք է խոսեմ ձեզ հետ,— ասաց նա։— Որտե՞ղ եք ապրում դուք։

— Ես... ես... Լորրի-սթրիթում,— թոթովեց Ջեննին նկատելի սփրթնելով։

— Տան համա՞ր,— հարցրեց նա, կարծես աղջիկը պարտավոր էր պատասխանել։

Ջեննիի սիրտը սեղմվեց։

— Տասներեք-տասնչորս,— մեքենայաբար ասաց նա։

Հյուրի համարձակ, մուգ դարչնագույն աչքերը վստահ ու բազմանշանակ նայեցին աղջկա խոշոր, կապուտակ աչքերի խորքը, և ասես մի կայծ անցավ նրանց միջով։

— Դու ի՛մն ես,— ասաց նա։— Ես վաղուց էի որոնում քեզ։ Ե՞րբ կհանդիպենք մենք։

— Այդպես մի խոսեք,— ասաց Ջեննին հուզմունքով մատները սեղմելով շուրթերին։— Ես չեմ կարող հանդիպել ձեզ հետ... ես... ես...

— Ա՜խ, չխոսե՞մ։ Ա՛յ թե ինչ,— նա բռնեց աղջկա ձեռքը և թեթևակի քաշեց իր կողմը,— արի միանգամից պայմանավորվենք։ Դու ինձ դուր ես գալիս։ Իսկ ես քե՞զ։ Ասա՛։

Ջեննին նայում էր նրան զարմանքից ու սարսափից շոված աչքերով։

— Չգիտեմ,— շնչասպառ լինելով ասաց նա ցամաքած շուրթերով։

— Դո՞ւր եմ գալիս։

Նա մռայլ ու համառ նայում էր աղջկան։

— Չգիտեմ։

— Նայի՛ր ինձ։

— Այո... ասաց նա։

Նա ամուր գրկեց աղջկան։

— Մենք դեռ կխոսենք,— ասաց նա և տիրաբար համբուրեց աղջկա շուրթերը։

Ջեննին սարսափել ու շշմել էր կատվի ճանկն ընկած թռչնակի պես։ Եվ այնուամենայնիվ նրա մեջ ինչ-որ մի բան արձագանքեց այդ ճակատագրական, սոսկալի ու աննահանջ կոչին։ Լեսթերը ծիծաղեց և բաց թողեց նրան։

— Այստեղ այս բանն այլևս չի կրկնվի, բայց հիշիր։ դու իմն ես,— ասաց նա, շուռ եկավ և գնաց թեթև, անհոգ քայլվածքով։

Իսկ Ջեննին սոսկումով պատած նետվեց տիրուհու ընդարանը և դուռը բանալիով փակեց։

ԳԼՈՒԽ XVII

Այս անսպասելի խոսակցությունից Ջեննին այնպես էր ցնցվել, որ երկար ժամանակ ուշքի գալ չէր կարողանում։ Սկզբում նա պարզապես չէր հասկանում, թե այս ինչ պատահեց։ Դա կարծես որոտ լիներ պարզ ու ջինջ երկնքում։ Նորից նա ենթարկվել էր տղամարդու։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ,— հարց էր տալիս նա ինքն իրեն, և սակայն հոգու խորքում ինչ-որ մի տեղ պատասխանը պատրաստ էր։ Նա չէր կարող բացատրել իր զգացածը, բայց ինքն ստեղծված էր այդ մարդու համար և նա էլ՝ իր համար։

Սիրո մեջ, ինչպես և ճակատամարտում, յուրաքանչյուրն իր բախտն ունի։ Խելացի, եռանդուն ու հաստատակամ այդ մարդը, հարուստ գործարանատիրոջ որդին, որը հասարակության մեջ անհամեմատ ավելի բարձր դիրք ուներ, քան Ջեննին, մի ակամա, անհաղթահարելի մղում էր զգում դեպի այդ աղքատ սպասուհին։ Այդ աղջիկը ներքուստ մոտիկ էր իրեն, թեպետև ինքն այդ չէր գիտակցում։ Դա միակ կինն էր, որի մեջ նա կարող էր գտնել այն ամենագլխավորը, ինչ նրան միշտ պակասում էր։ Լեսթեր Քեյնը շատ բազմապիսի կանանց էր ճանաչում, հարուստների ու աղքատների, այն դասակարգի ներկայացուցիչներին, որին ինքն էլ պատկանում էր, ճանաչում էր և պրոլետարների աղջիկների, բայց դեռ երբեք նա չէր հանդիպել իր իդեալին, այնպիսի կնոջ, որն իր մեջ մարմնավորի կարեկցությունն ու բարությունը, գեղեցկությունն ու ջահելությունը։ Բայց նա միշտ երազել էր հենց այդպիսի կին, և հանդիպելով նրան՝ մտադիր չէր ձեռքից բաց թողնել։ Նա հասկանում էր, որ ամուսնանալու մա-

սին մտածելու համար նա պետք է այդպիսի կին գտնի իր շրջապատում։ Բայց եթե մտածելու լինի կարճատև երջանկության մասին, կին կարող է գտնել որտեղ ցանկանա, թեև, հասկանալի է, այդ դեպքում ամուսնության մասին խոսք անգամ լինել չի կարող։ Նրա մտքովն էլ չէր անցնում, թե ինքը կարող է լուրջ առաջարկություն անել մի սպասուհու։ Բայց Ջեննին ուրիշ բան է։ Այդպիսի սպասուհի նա երբեք չի տեսել։ Նա այնպիսի ազնիվ տեսք ունի, այնպես թովիչ է և այն էլ, ըստ երևույթին, ինքն էլ չի գիտակցում այդ։ Այո, սա հազվագյուտ աղջիկ է։ Ինչո՞ւ չփորձել տիրանալ նրան։ Արդարադատ լինենք Լեսթեր Քեյնի նկատմամբ, փորձենք հասկանալ նրան։ Ամեն խելք չի կարելի չափել մի ինչ-որ անմիտ արարքով։ Ամեն մեկին չի կարելի դատել նրա մի ինչ-որ կրքով։ Մեր դարում նյութական ուժերի ներգործությունը համարյա անհաղթահարելի է. նրանք ճնշում ու խորտակում են հոգին։ Զարհուրելի արագությամբ զարգանում ու բարդանում է մեր քաղաքակրթությունը, բազմապիսի ու փոփոխական են հասարակական կյանքի ձևերը, մեր անհաստատ, նրբացած և աղճատված երևակայության վրա խիստ այլազան ու անսպասելի են ազդում, օրինակ, այնպիսի գործոններ, ինչպիսիք են երկաթուղիները, ճեպընթաց գնացքները, փոստը, հեռագիրը և հեռախոսը, լրագիրը, մի խոսքով, մեր հասարակության մեջ գոյություն ունեցող հաղորդակցության ու կապի միջոցների ամբողջ մեխանիզմը։ Այս ամենն ամբողջությամբ վերցրած ստեղծում է կալեյդոսկոպիկ խայտաբղետություն, կուրացուցիչ, անկանոն կենսական ֆանտասմագորիա, որը հյուծում, բթացնում է սիրտը և ուղեղը։ Այստեղից էլ՝ յուրատեսակ մտավոր հոգնածությունը, և ամեն մի օրը բազմապատկում է նրա զոհերի թիվը, նրանց թիվը, ովքեր տառապում են անքնությամբ, մելամաղձությամբ կամ պարզապես խելագարվում են։ Ժամանակակից մարդու ուղեղը, ինչպես երևում է, ընդունակ չէ տեղավորելու, դասավորելու և պահպանելու ամեն օր նրա վրա տեղացող փաստերի ու տպավորությունների վիթխարի զանգվածը։ Մենք չափից ավելի ակնառու ենք ապրում և արտաքին աշխարհից թաքնը-

վելու տեղ չունենք։ Մենք ստիպված ենք լինում խիստ շատ բան ընկալել։ Ասես անծայրության իմաստությունը փորձում է իր համար ճանապարհ բացել դեպի նեղվածք գանգերը և տեղավորվել սահմանափակ ուղեղներում։

Լեսթեր Քեյնը այս աննորմալ պայմանների բնական արդյունքն էր։ Նա այնպիսի ուժի սուր ու դիտող խելք ուներ, որպիսին հանդիպում է Ռաբլեի հերոսների մոտ, բայց շըրջապատի բաղմակերպությունը, կյանքի պանորամայի անսահման լայնությունը, նրա մանրամասնությունների փայլը, նրանց ձևի անորսալիությունը, նրանց անորոշությունն ու արդարացված չլինելը մոլորեցնում էին նրան։ Նա մեծացել էր կաթոլիկական ընտանիքում, բայց արդեն չէր հավատում կաթոլիկության աստվածային բնույթին։ Նա պատկանում էր հասարակության սերուցքին, բայց այն պատկերացումը, թե մարդն իր ծնունդի և հասարակական դիրքի շնորհիվ կարող է ինչ-որ անկապտելի գերազանցություն ունենալ ուրիշ մարդկանց նկատմամբ, նրա համար դատարկ նախապաշարմունք էր դարձել։ Նա դաստիարակված էր որպես հարուստ ժառանգ, և ենթադրվում էր, որ իր համար կին կգտնի իր շրջապատում, բայց նա ամենևին հավատացած չէր, թե ընդհանրապես ինքը կցանկանա ամուսնանալ։ Հասկանալի է՝ ամուսնությունը հասարակական ինստիտուտ է։ Այդպես է սահմանված, խոսք չկա։ Բայց դրանից ի՞նչ է հետևում։ Մարդ պետք է ժամանակին ամուսնանա, դա դարձել է երկրի օրենքը։ Այո, իհարկե։ Բայց կան երկրներ, որտեղ օրենքով սահմանված է բազմակնություն։ Լեսթերին զբաղեցնում էին ուրիշ հարցեր ևս, օրինակ՝ իսկապե՞ս տիեզերքը կառավարում է մեկ միասնական աստված, պետական ո՞ր ձևն է լավ՝ հանրապետությո՞ւնը, միապետությո՞ւնը, թե՞ արիստոկրատիայի կառավարումը։ Կարճ ասած, բոլոր նյութական, սոցիալական ու բարոյական պրոբլեմները ընկել էին նրա մտքի հերձադանակի տակ և միայն կիսով չափ բացված էին մնացել։ Կյանքում նրա համար անվիճելի ոչինչ չկար։ Ոչ մի դրույթ նա չէր ընդունում որպես վերջնական ու անհերքելի, եթե չհաշվենք այն համոզմունքը, որ

պետք է կարգին մարդ լինել։ Մնացած ամեն ինչին նա կասկածում էր, հարցնում, հետաձգում, թողնելով, որ իրեն անհանգստացնող պրոբլեմները լուծեն ժամանակը և տիեզերքը շարժող գաղտնի ուժերը։ Այո, Լեսթեր Քեյնը կրոնական ու հասարակական պայմանների և հասկացողությունների արդյունք էր և այն էլ՝ համակված մեր ժողովրդին հատուկ ազատության ոգով, մի ոգի, որ ծնունդ է տալիս մտքերի ու արարքների համարյա անսահման ազատության։ Այդ երեսունվեցամյա մարդը, որ առերևույթ այնքան արտասովոր էր, եռանդուն ու խոհական, ըստ էության մի վայրենի էր, որին դաստիարակությունն ու միջավայրը որոշ փայլ էին տվել։ Ինչպես այն հարյուրավոր իռլանդացիները, որոնք նրանից մի սերունդ առաջ երկաթուղիներ էին կառուցում, աշխատում էին հանքահորերում, ջրանցքներ էին փորում, երիտասարդ երկրի անթիվ-անհամար կառույցներում աղյուս էին կրում ու կիր շաղախում, Լեսթերն էլ ուժեղ մարդ էր, ինքնավստահ ու սրախոս։

— Ցանկալի՞ է ձեզ, որ եկող տարի էլ ես վերադառնամ այստեղ,— հարցրեց նա միսթեր Ամբրոզիային, երբ այդ սրբազան հայրը ցանկանում էր ինչ-որ մի զանցանքի համար պատժել տասնութամյա դպրոցականին։

Միսթերը զարմացած նայեց նրան։

— Դա կախված կլինի ձեր հոր կամքից,— ասաց նա։

— Ամենևին ոչ. դա իմ հոր կամքից չի լինի կախված,— առարկեց Լեսթերը։— Եթե դուք ձեր մտրակով դիպչեք ինձ, ես ինքս կվճռեմ իմ գործերը։ Ես արժանի չեմ պատժի և այլևս երբեք չեմ թույլ տա ծեծել ինձ։

Դժբախտաբար խոսքերն այս անգամ սրբազան հորը չհամոզեցին, բայց, ահա, ուժեղ բռունցքներն օգնեցին. կարճ ընդհարման մեջ Լեսթերը մտրակը կոտրեց, և դա դպրոցական կարգապահության այնպիսի լուրջ խախտում էր, որ նա ստիպված եղավ իրերը հավաքել ու հեռանալ։ Դրանից հետո նա հորը կտրական հայտարարեց, թե այլևս սովորելու միտք չունի։

— Ես ուզում եմ գործի անցնել,— բացատրեց նա։—

Դասական կրթությունն ինձ համար չէ։ Վերցրու ինձ քո գրասենյակը և համոզված եղիր, որ ես կարող եմ գործից գլուխ հանել։

Ծերունի Արչիբալդ Քեյնը, որ ամբողջովին իր գործով տարված անբասիր համբավով մի խելացի մարդ էր, չհակառակեց նրան։

— Լավ, արի գրասենյակ,— ասաց նա։— Քեզ համար երևի այնտեղ մի զբաղմունք կգտնվի։

Տասնութ տարեկան հասակում իր գործունեությունն սկսելով՝ Լեսթերն աշխատում էր մեծ ջանասիրությամբ, և հայրն աստիճանաբար այնպիսի լավ կարծիք կազմեց նրա մասին, որ նրան իր անձնական ներկայացուցչի նման մի բան դարձրեց։ Երբ հարկավոր էր լինում պայմանագիր կընքել, որևէ կարևոր քայլ անել կամ մի լուրջ գործարքի համար ֆիրմայի ներկայացուցչին ուղարկել, միշտ էլ ընտրությունն ընկնում էր Լեսթերի վրա։ Հայրը կուրորեն հավատում էր նրան, և Լեսթերն էլ իր պարտականությունները կատարում էր այնպես խելացի ու ճարպկորեն, այնպիսի հափշտակությամբ, որ այդ հավատը երբեք չէր սասանվում։

«Գործը գործ է»,— այս էր նրա սիրելի խոսքը, և հենց միայն այս խոսքերն արտասանելու ձևից ու տոնից կարելի էր հասկանալ, թե ինչպիսի մարդ է նա։

Անզուսպ ուժեր էին եռում նրա մեջ, և բոցը նորից ու նորից դուրս էր ժայթքում, թեև Լեսթերը հավատացած էր, թե կարող է զսպել այն։ Նա, օրինակ, մոլություն ուներ գինու նկատմամբ, ըստ որում ինքը խորապես համոզված էր, թե չափն իմանում է։ Նա, ինչպես ինքը ենթադրում էր, խմում էր ո՛չ այնքան շատ, միայն ընկերական շրջապատում և ամենևին չափը չէր անցնում։ Մյուս թուլությունն արմատացել էլ նրա զգայմունքների մեջ, բայց այստեղ էլ նա համոզված էր, թե ինքն է իր գլխի տերը. նա դյուրությամբ պատահական կապեր է ստեղծում կանանց հետ, բայց միշտ իմանում էր, թե որտեղ է վտանգը։ Եթե մարդիկ հասկանային, որ այդպիսի կապերն իրենց բնույթով իսկ պետք է կարճատև լինեն, այդքան շատ անհաճո բարդություններ չէին ծագի։ Վերջա-

պես Լեսթեր Քեյնը իրեն մխիթարում էր այն մտքով, թե ինքը տիրապետում է իսկական կյանքի գաղտնիքին։ Ամբողջ խնդիրն այն է, որ հասարակական պայմաններն ընդունվեն այնպես, ինչպես կան, միայն որոշ վերապահումներով, և վարվել այնպես, ինչպես քեզ ավելի հարմար է։ Համբերությունից դուրս չգալ, դատարկ բանի համար մեծ աղմուկ չբարձրացնել, քնքշություններ չբանեցնել, այսպիսին էր նրա կենսափիլիսոփայությունը, և նա գերազանց էր համարում այդ։

Նրա հետաքրքրությունը Ջեննիի նկատմամբ սկզբում զուտ էգոիստական էր։ Բայց այժմ, երբ նա հայտարարեց իր տղամարդկային իրավունքները, և աղջիկը, համենայն դեպս, մասամբ հնազանդվեց, Լեսթերն սկսեց հասկանալ, որ դա սովորական աղջիկ չէ, մի ժամվա խաղալիք չէ։

Որոշ տղամարդկանց կյանքում լինում է ժամանակ, երբ նրանք սկսում են անգիտակցաբար գնահատել կնոջ երիտասարդությունն ու գեղեցկությունը ո՛չ այնքան երազելով իդեալական երջանկություն, որքան նայելով շրջապատի միջավայրի պայմանականությանը։

— Մի՞թե ես,— հարց են տալիս նրանք իրենք իրենց, երբ մտածում են, թե չամուսնանա՞ն արդյոք,— մի՞թե ես ստիպված եմ լինելու ենթարկվել ընդհանուրի կողմից ընդունված բարոյականությանը, պահպանել հասարակության օրենքները, կամովին դառնալ զուսպ ու համեստ, ուրիշին իրավունք տամ խառնվել իմ գործերին և այս ամենը միայն նրա համար, որ դրկիս մեջ եմ առնում նույնքան հեղհեղուկ էակ, որքան ես ինքս եմ, մի կին, որի ցանկություններն ու քմահաճույքները այնքան ավելի համառ ու տաղտկալի են դառնալու, որքան չբանալու է նրա գեղեցկությունն ու հրապույրը։

Այդ մարդիկ, չցանկանալով ենթարկվել այն բոլոր հնարավոր պատահականություններին, որ իր հետ բերում է օրինական ամուսնությունը, հակված են ընդունելու ո՛չ այնքան ծանրաբեռնող ժամանակավոր կապի առավելությունները։ Նրանք ջանում են կյանքի վայելքներին տիրանալ՝ առանց

դրանց դիմաց վճարելու։ Հետագայում, մտածում են նրանք, կարելի կլինի ավելի հաստատուն ու վայելուչ հարաբերություններ ստեղծել՝ խուսափելով կշտամբանքներից կամ ինչ-որ բան արմատապես ուղղելու և կարգավորելու անհրաժեշտությունից։

Լեսթեր Քեյնի համար պատանեկան հրապուրանքների ժամանակն անցել էր, և նա այդ գիտեր։ Անփորձ պատանու միամիտ երազանքներն ու իդեալներն անհետ չքացել էին։ Նրան ցանկալի էր կնոջ մոտիկությունը, բայց նա շատ քիչ հակում ուներ դրա համար զիջել իր ազատությունը։ Ինչո՞ւ շղթաներ հագնել ոտքերին, եթե կարելի է ապատ թռչուն մնալով ստանալ ամեն բան, ինչ ուզում ես։ Իհարկե, նա պետք է գտնի այնպիսի մի կին, որը լիովին համապատասխաններ իրեն, և նրան թվում էր, որ այդպիսին գտել է ի դեմս Ջեննիի։ Այդ աղջկա մեջ ամեն ինչ համապատասխանում էր նրա ցանկություններին ու ճաշակին, նա դեռ երբեք այդպիսի կնոջ չէր հանդիպել։ Նրա հետ ամուսնանալը ոչ միայն անհնարին է, այլև պարտադիր չէ։ Բավական է նրան ասել՝ «գնանք», և նա պետք է հնազանդվի, այդպես է նրա բախտը։

Լեսթերը հանգիստ ու անտարբեր խորհում էր այս ամենի մասին։ Նա անցավ Ջեննիի ապրած աղքատիկ փողոցով, նայեց այդ աղջկան օթևան ծառայող խղճուկ տնակին։ Նրա սիրտը շարժվեց, որ Ջեննին այդպես ազնիվ ու դժվար ապրում է այդպիսի աղքատ պայմաններում։ Պետք չէ՞, որ ինքն էլ նրա հետ վարվի մեծահոգաբար, արդար ու ազնվորեն։ Ապա աղջկա չքնաղ գեղեցկության հիշողությունը համակեց նրան և փոխեց նրա այդ միտքը։ Ո՛չ, հարկավոր է աշխատել տիրանալ նրան՝ այսօր, հենց հիմա, անհապաղ։ Ահա թե Լորրի-սթրիթ փողոցում զբոսանք կատարելուց հետո ինչպիսի տրամադրությամբ նա վերադարձավ միսիս Բրայսբրիջի տուն։

ԳԼՈՒԽ XVIII

Իսկ Ջեննին անսահման տագնապով էր բռնված, ինչպես մի մարդ, որի առաջ հանկարծակի մի բարդ ու դժվարին խնդիր է ծառացել։ Նա պետք է մտածեր երեխայի մասին, հոր, եղբայրների և քույրերի մասին։ Ի՞նչ է անում նա։ Մի՞թե նորից սխալ կգործի և արատավոր, ապօրինի կապի մեջ կմտնի։ Ի՞նչ ասել հարազատներին այդ մարդու մասին։ Իհարկե, նա չի ամուսնանա իր հետ, եթե իմանա իր անցյալի մասին։ Ասենք, առանց այդ էլ նա չի ամուսնանա իր հետ, նա այնպիսի բարձր դիրք է զբաղում։ Բայց և այնպես ինքը լսում էր նրան։ Ի՞նչ անել։ Ամբողջ երեկոն Ջեննին նրա մասին էր մտածում և սկզբում ուզում էր փախչել, բայց հետո սոսկումով հիշեց, որ ինքը իր հասցեն տվել է Քեյնին։ Հետո նա որոշեց իր ամբողջ արիությունը ժողովել և մերժել նրան, ասել, որ ինքը չի կարող, չի ցանկանում դործ ունենալ նրա հետ։ Հարցի այսպիսի լուծումը նրան բավական հասարակ էր թվում, քանի դեռ Քեյնը իր կողքին չէր։ Ինքը գործի կմտնի մի ուրիշ տեղ, որտեղ նա չի կարող իրեն հետապնդել։ Երբ երեկոյան Ջեննին հագնվում էր, որ տուն գնա, ամեն ինչ շատ հասարակ էր թվում։

Սակայն նրա եռանդուն երկրպագուն դրա մասին իր նկատառումներն ուներ։ Ջեննիից բաժանվելուց հետո նա ամեն ինչ մանրամասնորեն խորհել էր։ Նա որոշել էր անհապաղ գործի անցնել։ Ջեննին կարող է ամեն ինչ պատմել իր հարազատներին կամ միսիս Բրայսբրիջին, կարող է հեռանալ Քլիվլենդից։ Ինքն ուզում է մանրամասն իմանալ, թե ինչպիսի պայմաններում է ապրում նա, իսկ դրա համար կա մեկ միջոց՝ խոսել նրա հետ։ Ինքը պետք է նրան համոզի իր մոտ գալ։ Նա երևի կհամաձայնի։ Նա խոստովանեց, որ ինքը դուր է գալիս նրան։ Ջեննիին հատուկ մեղմությունն ու հեզությունը, որոնք միանգամից հրապուրել էին Լեսթերին, ըստ երևույթին, դյուրին հաղթանակ էին խոստանում։ Բավական է միայն ցանկանալ, և ինքը առանց դժվարության կնվաճի

նրան։ Եվ նա որոշեց փորձել, որովհետև, իրոք որ ինքը շատ էր ձգտում այդ աղջկան։

Ժամը հինգն անց կեսին նա վերադարձավ Բրայսբրիջ-ների տուն, որպեսզի տեսնի՝ չի՞ գնացել Ջեննին։ Ժամը վեցին նրան հաջողվեց աննկատելիորեն ասել աղջկան.

— Ես քեզ կուղեկցեմ տուն։ Սպասիր ինձ փողոցի մոտակա անկյունում, լա՞վ։

— Այո,— պատասխանեց աղջիկը՝ զգալով, որ չի կարող շհնազանդվել։

Հետո նա ինքնիրեն ասաց, որ պետք է խոսի նրա հետ, կտրականապես հայտնի, որ ինքը վճռել է այլևս շհանդիպել նրա հետ, ուրեմն էլ ինչո՞ւ չօգտագործել այս առիթը բացատրվելու համար։

Վեցն անց կեսին Լեսթերն ինչ-որ պատճառով դուրս եկավ տնից— հիշեց, որ գործով մեկին պիտի տեսնի— և ժամը ութին արդեն փակ կառքով սպասում էր Ջեննիին պայմանավորված տեղում։ Նա հանգիստ էր, միանգամայն վստահ իր հաջողությանը, բայց այդ երևութական հանգստության ու հավասարակշռության տակ թաքնված էր արտասովոր մի հուզմունք, ասես նա ներշնչում էր ինչ-որ հրաշալի բուրմունք, որ քնքուշ էր, անուշ ու թովիչ։

Ժամը իննի սկզբին նա տեսավ Ջեննիին։ Գազալապտերի աղոտ լույսն էլ բավական էր, որ Քեյնը ճանաչի նրան։ Քնքշանքի մի ալիք բարձրացավ նրա մեջ, այնքան մեծ էր այդ աղջկա հմայքը։ Երբ Ջեննին մոտեցավ, նա դուրս եկավ կառքից և կանգ առավ աղջկա առաջ։

— Գնանք,— ասաց նա։— Կառք նստիր, ես քեզ կտանեմ տուն։

— Ոչ,— պատասխանեց աղջիկը,— չեմ կարող։

— Գնանք, ես կտանեմ քեզ։ Այսպես մեզ համար ավելի հարմար կլինի խոսել։

Եվ նորից նրա ուժի ու իշխանության նույն զգացողությունը, որին դիմադրել չի լինի։ Աղջիկը ենթարկվեց, զգալով, որ չկամք է անելը այդ։ Քեյնը կառապանին ձայն տվեց.

— Քշիր առայժմ ուր ուզում ես։

Ջեննին նստեց նրա կողքին, և նա իսկույն ասաց.

— Լսի՛ր, Ջեննի, դու ինձ պետք ես։ Պատմիր ինձ քո մասին։

— Ես պետք է խոսեմ ձեզ հետ,— պատասխանեց աղջիկը, ջանալով իրեն պահել այնպես, ինչպես մտածել էր։

— Ինչի՞ մասին,— հարցրեց Լեսթերը, փորձելով կիսախավարի մեջ տեսնել նրա դեմքի արտահայտությունը։

— Այսպես շարունակել չի կարելի,— հուզմունքով մրմնջաց աղջիկը։— Ես այսպես չեմ կարող։ Դուք ոչինչ չգիտեք։ Ես չպետք է անեի այն, ինչ առավոտյան արի։ Ես այլևս չպետք է հանդիպեմ ձեզ, Ճշմարիտ, չպետք է հանդիպեմ։

— Այն, ինչ դու արիր առավոտյան, դո՛ւ չարիր,— սրախոսեց Լեսթերը նրա խոսքից բռնելով։— Այդ ե՛ս արի։ Իսկ որ դու չես ուզում ինձ հետ հանդիպել... բայց ես ուզում եմ հանդիպել քեզ հետ։— Նա բռնեց աղջկա ձեռքը։— Դու դեռ ինձ չես ճանաչում, բայց ես սիրում եմ քեզ։ Ես գժվում եմ քեզ համար։ Դու ստեղծված ես ի՛նձ համար։ Հիմա լսիր։ Դու պետք է իմը լինես։ Կդա՞ս ինձ մոտ։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ,— սրտի ցավով գոչեց աղջիկը։— Ես չեմ կարող, միստր Քեյն։ Խնդրում եմ լսեցեք ինձ։ Դա անկարելի է։ Դուք չգիտեք։ Ա՜խ, դուք չգիտեք։ Ես չեմ կարող ձեր ուզածն անել։ Ես չեմ ուզում։ Եվ եթե նույնիսկ ուզենայի, չէի կարող։ Դուք չգիտեք, թե ինչ պատճառ կա։ Բայց ես չեմ ուզում վատ վարվել։ Ես չպետք է անեմ այդ։ Չե՛մ կարող։ Չե՛մ ուզում։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Թողեք ինձ տուն գնամ։

Այս հուսակտուր աղաչանքը Լեսթերը լսեց ո՛չ առանց կարեկցության, նա նույնիսկ մի քիչ խղճաց Ջեննիին։

— Ինչո՞ւ չես կարող, այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց նա հետաքրքրությամբ։

— Չեմ կարող ասել ձեզ,— պատասխանեց աղջիկը։— Խնդրում եմ, մի հարցնեք։ Դուք այդ չպետք է իմանաք։ Բայց ես այլևս չպետք է հանդիպեմ ձեզ հետ։ Դա ոչ մի լավ բանի չի հասցնի։

— Բայց չէ՞ որ ես քեզ դուր եմ գալիս։

— Այո, այո։ Ես դրա դեմ ոչինչ չունեմ։ Բայց դուք պետք է թողնեք ինձ։ Խնդրում եմ։

Դատավորի լրջությամբ Լեսթերը մի անգամ էլ մտքում ծանրութեթև արավ իր առաջարկությունը։ Նա գիտեր, որ ինքը դուր է գալիս այդ աղջկան. ըստ էության նա սիրում է իրեն, որքան էլ կարճ է իրենց ծանոթությունը։ Եվ ինքն էլ ձգտում է այդ աղջկան, գուցե և ո՛չ այնքան անհաղթահարելի, բայց արտակարգ ուժով։ Ի՞նչն է խանգարում նրան գիջել, մանավանդ, որ ինքն էլ ուզում է այդ։ Տղայի մեջ հետաքրքրություն արթնացավ։

— Լսի՛ր, Ջեննի,— ասաց նա,— ես քեզ լսեցի։ Ես չեմ հասկանում, ինչո՞ւ ես ասում «չեմ կարող», եթե ինքդ էլ ուզում ես գալ ինձ մոտ։ Դու ասում ես, որ ես քեզ դուր եմ գալիս։ Էլ ինչո՞ւ ես համառում։ Դու հենց այն ես, ինչ ինձ հարկավոր է։ Մենք շատ լավ կհարմարվենք իրար։ Դու հենց իմ ուզած բնավորությունն ունես։ Ես կուզեի, որ դու ինձ հետ լինես։ Ինչո՞ւ ես ասում, թե չես կարող։

— Ես չեմ կարող,— կրկնեց աղջիկը։— Չեմ կարող։ Չեմ ուզում։ Չպետք է անեմ այդ։ Ա՜խ, խնդրում եմ այլևս չհարցնեք։ Դուք չգիտեք։ Ես ձեզ բացատրել չեմ կարող։

Նրա մտքում իր երեխան էր։

Լեսթեր Քեյնի մեջ խիստ զարգացած էր արդարության զգացմունքը և ամեն խաղ ազնվորեն վարելու կարողությունը։ Ուրիշ մարդկանց հետ ունեցած իր հարաբերությունների մեջ նա ամենից առաջ ցանկանում էր կարգին մարդ լինել։ Եվ այժմ էլ նա ցանկանում էր ուշադիր ու քնքուշ լինել, բայց գլխավորը՝ ինքը պետք է նվաճի այդ աղջկան։ Եվ նա նորից բոլոր «թեր» ու «դեմ»-երը մտքում ծանրութեթև արեց։

— Լսիր,— ասաց նա վերջապես, դեռևս Ջեննիի ձեռքը բռնած։— Ես քեզ չեմ ստիպում անհապաղ վճռել։ Ես ուզում եմ, որ ամեն ինչի մասին մտածես։ Բայց դու ստեղծված ես ինձ համար։ Դու էլ դեպի ինձ անտարբեր չես։ Ինքդ խոստովանեցիր այս առավոտ։ Եվ ես գիտեմ, որ այդ այդպես է։ Էլ ինչո՞ւ ես համառում։ Դու ինձ դուր ես գալիս, և ես շատ բան

կարող եմ անել քեզ համար։ Էլ ինչո՞ւ մենք առայժմ մտերիմներ չդառնանք։ Իսկ մնացածի մասին հետո կխոսենք։

— Բայց ես չպետք է վատ վարվեմ,— կրկնում էր աղջիկը։— Ես չեմ ուզում։ Խնդրում եմ թողեք ինձ։ Ես չեմ կարող ձեր ուզածն անել։

— Ա՜յ ինչ,— խոսեց Լեսթերը,— դու այն չես ասում, ինչ մտածում ես։ Հապա ինչո՞ւ էիր ասում, որ ես քեզ դուր եմ գալիս։ Մի՞թե արդեն կարծիքդ փոխել ես։ Նայիր ինձ (Ջեննին հայացքը ցած դցեց)։ Նայիր ինձ։ Մի՞թե դու միտքդ փոխել ես։

— Ա՜խ, ո՛չ, ո՛չ,— ասաց աղջիկը համարյա արտասվելով, ենթարկվելով ինչ-որ ավելի ուժեղ բանի։

— Էլ ուրեմն ինչո՞ւ ես համառում։ Ես սիրում եմ քեզ, լսո՞ւմ ես, դժվում եմ քեզ համար։ Ահա թե ինչու եմ եկել այս անգամ։ Ես ուզում էի քեզ տեսնել։

— Իսկապե՞ս,— զարմացած հարցրեց Ջեննին։

— Այո։ Ես էլի ու էլի կգայի, եթե հարկավոր լիներ։ Ասում եմ, չէ՞. գժի պես սիրում եմ քեզ։ Դու պետք է իմը լինես։ Խոստացիր, որ դու ինձ հետ կլինես։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ,— կրկնում էր աղջիկը։ Ես չեմ կարող։ Ես պետք է աշխատեմ։ Ես ուզում եմ աշխատել։ Ես չեմ ուզում վատ վարվել։ Աղաչում եմ, մի՛ խնդրեք։ Խնդրում եմ, հարկավոր չէ։ Դուք պետք է թողնեք ինձ։ Ճշմարիտ, ես չեմ կարող ձեր ուզածն անել։

— Ասա ինձ, Ջեննի,— հանկարծ հարցրեց Լեսթերը,— ինչո՞վ է զբաղվում քո հայրը։

— Ապակի փչող բանվոր է։

— Այստե՞ղ, Քլիվլենդո՞ւմ։

— Ոչ, նա աշխատում է Յանգսթաունում։

— Իսկ մայրդ կենդանի՞ է։

— Այո, սըր։

— Դու նրա հե՞տ ես ապրում։

— Այո, սըր։

Լեսթերը ժպտաց։

— Ինձ «սըր» մի՛ կոչիր, Ջեննի,— կոպտաբար ասաց

նա,— և «միստր» Քեյն մի կոչիր։ Ես այլևս քեզ համար միստր չեմ։ Դու իմն ես, լսո՞ւմ ես, աղջիկ։

Եվ նա աղջկան քաշեց իր կողմը։

— Խնդրում եմ, հարկավոր չէ, միստր Քեյն,— աղաչեց աղջիկը։— Օ՜, խնդրում եմ, հարկավոր չէ։ Ես չեմ կարող։ Չեմ կարող։ Թողեք ինձ։

Բայց Լեսթերն ամուր համբուրեց նրա շուրթերը։

— Լսիր ինձ,— կրկնեց նա իր սիրած խոսքը։— Քեզ ասում եմ՝ դու իմն ես։ Բոպե առ բոպե դու ավելի ու ավելի ես դուր գալիս ինձ։ Ես դեռ քեզ լավ չեմ ճանաչում։ Բայց քեզանից չեմ հրաժարվի։ Վերջ ի վերջո դու կգաս ինձ մոտ։ Եվ ես չեմ ուզում, որ դու ծառայես որպես սպասուհի։ Դու չես կարող մնալ այդտեղ։ Գուցե թե միայն շատ կարճ ժամանակ։ Ես քեզ որևէ տեղ կտանեմ։ Եվ փող կտամ քեզ, լսո՞ւմ ես։ Դու պետք է վերցնես փողը։

«Փող» բառի վրա Ջեննին ցնցվեց և ձեռքը ետ քաշեց։

— Ո՜չ, ո՜չ,— ասաց նա։— Չե՛մ վերցնի։

— Կվերցնես։ Մորդ կտաս։ Ես ամենևին էլ քեզ գնել չեմ ուզում։ Ես գիտեմ, թե ինչ ես մտածում դու։ Բայց դա ճիշտ չէ։ Ես քեզ օգնել եմ ուզում։ Ուզում եմ օգնել քո հարազատներին։ Ես գիտեմ, թե որտեղ ես ապրում դու։ Այսօր ես եղել եմ այնտեղ։ Քանի՞ հոգի եք ձեր ընտանիքում։

— Վեց,— հազիվ լսելի պատասխանեց աղջիկը։

«Օ՜հ, այս չքավորների ընտանիքնե՞րը»,— մտածեց Լեսթերը։

— Դե ուրեմն վերցրու,— համառորեն կրկնեց նա քսակը հանելով գրպանից։— Եվ շատ շուտով մենք նորից կտեսնվենք։ Դու իմ ձեռքից դուրս չես պրծնի, թռչնիկս։

— Ո՜չ, ո՜չ,— բողոքեց Ջեննին։— Չեմ ուզում։ Ինձ հարկավոր չէ։ Դուք այդ մի՛ խնդրեք ինձանից։

Քեյնը փորձեց պնդել իր ասածը, բայց աղջիկն անսասան էր, և վերջ ի վերջո տղան ստիպված եղավ փողը գրպանը դնել։

— Մի բան կասեմ ես, Ջեննի. դու իմ ձեռքից չես պրծնի,— հանգիստ ասաց նա։— Վաղ թե ուշ, միևնույն է,

դու ինձ հետ ես լինելու։ Ախր դու ինքդ էլ այդ զգում ես և գիտես, դա երևում է ամեն ինչից։ Ես քեզանից հրաժարվելու միտք չունեմ։

— Ա՜խ, եթե դուք իմանայիք, թե ինչպես եք տանջում ինձ։

— Մի՞թե, իսկապե՞ս, ես տանջում եմ քեզ,— հարցրեց նա։— Մի՞թե։

— Այո, տանջում եք։ Ես երբեք ձեր ուզածը չեմ անի։

— Կանե՞ս, կանե՞ս,— ջերմորեն գոչեց Լեսթերը։— Հենց միայն այն մտքից, որ որսը փախչում է ձեռքից, նրա կիրքը բռնկեց նոր ուժով։— Դու ի՞մը կլինես։

Եվ նա ամուր գրկեց Ջեննիին, չնայած նրա բոլոր բողոքներին։

— Դե, տեսա՞ր,— ասաց նա, երբ կարճ պայքարից հետո նրանց միացնող խորհրդավոր զգացմունքը նորից խոսեց Ջեննիի մեջ, և նա դադարեց դիմադրել։ Աղջկա աչքերում արցունքներ կային, բայց Լեսթերը դրանք չնկատեց։— Մի՞թե դու ինքդ չես տեսնում։ Ես էլ քեզ եմ դուր գալիս։

— Ես չեմ կարող,— հեծկլտանքով կրկնեց Ջեննին։

Նրա ակներև հուսահատությունից Քեյնն զգացվեց։

— Ինչո՞ւ ես լալիս, աղջիկ,— հարցրեց նա։

Ջեննին պատասխան չտվեց։

— Լավ, ներիր ինձ,— ասաց Լեսթերը։— Այսօր ես էլ ոչինչ չեմ ասի քեզ։ Ահա, համարյա հասանք։ Վաղը ես գնալու եմ, բայց շուտով մենք նորից կհանդիպենք։ Այո՛, անուշը։ Հիմա ես քեզանից ձեռք քաշել չեմ կարող։ Ես ամեն հնարավոր բան կանեմ, որպեսզի քեզ համար դժվար չլինի, բայց ձեռք քաշել քեզանից չեմ կարող, լսո՞ւմ ես։

Աղջիկը գլուխն օրորեց։

— Այստեղ դու պետք է իջնես,— ասաց նա, երբ կառքը հասավ փողոցի անկյունին։ Նա տեսավ Գերհարդների վառագուրած լուսամուտների լույսը։— Ցտեսություն,— ավելացրեց նա, երբ Ջեննին դուրս էր գալիս կառքից։

— Ցտեսություն,— մրմնջաց աղջիկը։

— Հիշիր,— ասաց նա,— սա միայն սկիզբն է։

— Օ՜, ո՛չ, ո՛չ,— աղաչանքով ասաց աղջիկը։

Լեսթերը նայեց նրա ետևից։

— Ի՞նչ գեղեցիկն է,— գոչեց նա։

Ջեննին տուն մտավ հոգնած, շփոթված, ամոթահար։ Այս ի՞նչ արեց նա։ Իհարկե ինքն անուղղելի սխալ է գործել։ Նա կվերադառնա։

Նա կվերադառնա։ Եվ նա փող էր առաջարկում իրեն։ Դա ամենից ավելի վատն է։

ԳԼՈՒԽ XIX

Թեպետև այս հուզիչ հանդիպումից հետո երկուսի մեջ էլ մնաց այն զգացողությունը, թե ինչ-որ բան լրիվ չի ասվել, ո՛չ Լեսթերը, ո՛չ Ջեննին ամենևին չէին կասկածում, որ դրանով գործը չի վերջանում։ Քեյնն զգում էր, որ աղջիկը կատարելապես հմայել է իրեն։ Դա հիասքանչ աղջիկ է։ Լեսթերը չէր էլ պատկերացնում, թե նա այդքան անուշ է։ Նրա տատանումները, աղաչանքը, այն երկչոտ «ոչ, ոչ, ոչ»-երը, հուզում էին Լեսթերին ինչպես երաժշտություն։ Անտարակույս այդ աղջիկն իր համար է ստեղծված, և ինքը կհասնի նրան։ Նա անչափ չքնաղ աղջիկ է, անկարելի է ձեռքից բաց թողնել։ Իր ի՛նչ գործն է, թե ինչ կասեն հարազատները և ամբողջ աշխարհը։

Զարմանալի բան, Քեյնը հաստատ հավատացած էր, որ վաղ թե ուշ Ջեննին իրեն կզիջի նաև ֆիզիկապես, ինչպես արդեն զիջեց հոգու խորքում։ Նա չէր կարող բացատրել, թե ինչից է գալիս այդ հավատը։ Ջեննիի մեջ ինչ-որ մի բան՝ նրա արտասովոր քնքշությունը, շիտակ ու անկեղծ հայացքը՝ ստիպում էր մտածել, որ նա ընդունակ է մի կրքի, որի մեջ ոչ մի կոպիտ ու անբարոյական բան չկա։ Դա մի կին էր, որ ստեղծված էր տղամարդու համար, մեն միակ տղամարդու համար։ Անբաժանելիորեն նրա հետ էր կապված սիրո, քնքշության, հեզության պատկերացումը։ Թող միայն երևան գա այն միակը, և Ջեննին կսիրի նրան ու կգնա նրա ետևից։ Այս-

պես էր հասկանում նրան լեսթերը։ Նա զգում էր այդ։ Ջեննին պետք է հնազանդվի իրեն, որովհետև ինքը նրա համար այն միակն է։

Իսկ Ջեննին նախազգում էր ամեն տեսակ բարդություններ, գուցե և՝ կործանում։ Եթե լեսթերն իրեն հետամտի, իհարկե, ամեն ինչ կիմանա։ Ինքը նրան Բրենդերի մասին ոչինչ չէր ասել, որովհետև դեռ դուրս պրծնելու ազոտ հույս ուներ։ Լեսթերից բաժանվելուց հետո նա գիտեր, որ էլի կվերադառնա։ Եվ ակամա խոստովանում էր, որ ինքն էլ այդ է ուզում։ Եվ այնուամենայնիվ զգում էր, որ չպետք է զիջի, պետք է առաջվա պես ազնիվ, աշխատանքային և միապաղաղ կյանք վարի։ Սա պատիժ է իր անցյալի համար։ Ինքը պիտի հնձի այն, ինչ ցանել է։

Ցինցիննատիում Քեյների խոշոր առանձնատունը, ուր Ջեննիից բաժանվելուց հետո վերադարձավ Լեսթերը, Գերհարդների տան լիակատար հակապատկերն էր։ Դա առանց անորոշ ոճի մի ահագին երկհարկանի շենք էր, որ հիշեցնում էր ֆրանսիական դղյակ, բայց կառուցված էր կարմիր աղյուսով ու ավազաքարով։ Նրան շրջապատող հողամասն իր ծառերով ու ծաղիկներով նման էր իսկական զբոսայգու, և հենց քարերն էլ ասես խոսում էին հարստության, արժանապատվության ու նրբագեղ շքեղության մասին։ Արչիբալդ Քեյնը՝ ընտանիքի հայրը, հսկայական կարողություն էր կուտակել և այն ո՛չ թե կողոպուտի միջոցով, ո՛չ թե որևէ լկտի ու անաղնիվ եղանակով, այլ շնորհիվ նրա, որ կարողացել էր ձեռնամուխ լինել այն ժամանակներում ամենակարևոր, ուստի և ձեռնտու գործին։ Դեռ երիտասարդ հասակում նա հասկացել էր, որ Ամերիկան երիտասարդ, զարգացող երկիր է։ Նշանակում է ամեն տեսակ կառքերի, ֆուրգոնների, սայլակների վիթխարի պահանջ է լինելու և որևէ մեկը պետք է բավարարի այդ պահանջը։ Նա մի փոքրիկ արհեստանոց բացեց և աստիճանաբար այն դարձրեց մի պատկառելի ձեռնարկություն։ Նա լավ կառքեր էր բաց թողնում և վաճառում էր լավ շահույթով։ Ինչպես կարծում էր Արչիբալդ Քեյնը,

մարդիկ մեծ մասամբ աղնիվ են։ Նա հավատացած էր, որ նրանց հարկավոր են լավորակ, խղճմտանքով պատրաստած իրեր, և եթե նրանց այդպիսի իրեր առաջարկես, նրանք սիրով կգնեն քեզանից և նորից ու նորից քեզ կդիմեն, մինչև որ դու դառնաս հարուստ ու ազդեցիկ մարդ։ Նա գտնում էր, որ առևտրի մեջ պետք է առատաձեռն լինել և միշտ վաճառելիս մի բան էլ ավելի տալ։ Ամբողջ կյանքում, մինչև ծերություն, բոլոր իրեն ճանաչողների մեջ նա լավ համբավ ուներ։ «Արչիբալդ Քե՞յնը,— ասում էին նրա մրցակիցները։— Օ՜, դա հիանալի մարդ է։ Ճարպիկ է, բայց՝ աղնիվ։ Դա մե՜ծ մարդ է»։

Արչիբալդ Քեյնը երկու տղա և երեք աղջիկ ուներ, բոլորն էլ առողջ, գեղեցիկ, օժտված մեծ խելքով, բայց նրանցից ոչ մեկը չուներ այնպիսի լայն բնավորություն, այնքան ուժ ու եռանդ, որքան սույն հարգարժան պատրիարքը։ Քառասնամյա Ռոբերտը՝ Քեյնի ավագ որդին, ֆինանսական հարցերում վաղուց արդեն դարձել էր հոր աջ թևը։ Նա խորաթափանց էր, գծուծ, հատկություններ, որոնք խիստ էական են գործարարի համար, որովհետև գործի մեջ առանց ստորության յուլա գնալ չի լինի։ Ռոբերտը միջահասակ էր, նիհարավուն, լայն ճակատով, և արդեն սկսել էր ճաղատանալ։ Նա ուներ բաց երկնագույն աչքեր, արծվի քիթ և բարակ, համառ ու անտարբեր սեղմված շրթունքներ։ Նա սակավախոս էր, իր գործերի մեջ դանդաղկոտ և լրջորեն խորհում էր ամեն մի քայլի մասին։ Որպես փոխպրեզիդենտ մի խոշոր ձեռնարկության, որը քաղաքի ծայրամասում փռվել էր ամբողջ երկու փողոցի վրա, նա համարյա նույնքան բարձր դիրք էր գրավում, որքան իր հայրը։ Ռոբերտ Քեյնը չոր մարդ էր, մեծ ապագա խոստացող գործարար. նրա հայրը լավ գիտեր այս։

Երկրորդ որդին՝ Լեսթերը, հոր սիրելին էր։ Չլինելով այնքան փայլուն ֆինանսիստ, ինչպես Ռոբերտը, դրա փոխարեն նա ավելի լավ էր հասկանում այն թաքնված զսպանակները, որոնք շարժում են աշխարհը։ Նա մեղմ էր, ավելի մարդկային, նա բոլորի հետ ավելի բարեհոգի էր վերաբերվում։ Եվ

որքան էլ տարօրինակ է, ծերունի Արչիբալդը հավատում էր նրան և հիանում էր նրանով։ Նա սիրով Ռոբերտին էր դիմում, երբ իր առջև ծառանում էր որևէ խճճված ֆինանսական խնդիր, բայց որպես զավակի՝ Լեսթերին ավելի էր սիրում։

Աղջիկներից ավագը էմին էր, երեսուներկու տարեկան մի գեղեցիկ կին, որն արդեն մի տղա ուներ։ Քսանութամյա Իմոջինը նույնպես արդեն ամուսնացած էր, բայց դեռ երեխա չուներ։ Կրտսեր դուստրը՝ քսանհինգամյա Լուիզան, դեռ ամուսնացած չէր։ Դա քույրերի մեջ ամենագեղեցիկն էր, բայց և ամենապաղն էր ու անհանդուրժողը։ Նա բոլորից ավելի էր փափագում շուք ու հարգանք, ամենից ավելի էր բարձր գնահատում ընտանիքի հեղինակությունը և երազում էր, որ Քեյները նսեմացնեն ամբողջ շրջապատը։ Նա շատ էր պարծենում ընտանիքի հասարակական բարձր դիրքով և իրեն այնպես գոռոզ ու մեծամիտ էր պահում, որ երբեմն դա զզվարճացնում էր Լեսթերին, երբեմն էլ՝ ջղայնացնում։ Լեսթերը սիրում էր այդ քրոջը, թերևս նույնիսկ մյուսներից ավելի, բայց գտնում էր, որ նա կարող էր ավելի պակաս գոռոզանալ և դրանից ընտանիքի արժանապատվությունն ամենևին չի տուժի։

Նրանց մայրը՝ վաթսունամյա միսիս Քեյնը, մի համեստ ու արժանավոր կին էր։ Ամուսնության առաջին տարիները համեմատաբար չքավորության մեջ անցկացրած լինելով՝ հիմա այնքան էլ չէր ձգտում բարձրաշխարհիկ կյանք վարել։ Բայց սիրելով իր երեխաներին ու ամուսնուն՝ նա միամտաբար հպարտանում էր նրանց դիրքով ու հաջողություններով։ Անձամբ իրեն բավական էր և նրանց փառքի արտացոլումը։ Դա մի բարեսիրտ կին էր, լավ ամուսին և լավ մայր։

Լեսթերը Ցինցիննատի ժամանեց իրիկնադեմին և իսկույն գնաց տուն։ Նրա առաջ դուռը բաց արեց իռլանդացի ծերունի ծառան։

— Ա՜, միստր Լեսթեր,— ուրախացավ նա։— Ա՜յ լավ եք արել, որ վերադարձել եք։ Թույլ տվեք ձեր վերարկուն վերցնել։ Այո՛, այո՛, այստեղ սքանչելի եղանակ էր։ Այո՛,

այո՛, տանը բոլորը ողջ-առողջ են։ Ինչպես չէ, ձեր բույրը՝ միսիս Էմին, իր տղայի հետ այստեղ էր,՝ հենց նոր գնացին։ Ձեր մայրիկը վերևն է, իր սենյակում։ Ինչպես չէ, ինչպես չէ։

Լեսթերն ուրախ ժպտաց նրան և բարձրացավ մոր մոտ։ Ոսկեգույն զարդերով սպիտակ սենյակում, որի լուսամուտները դեպի հարավ ու արևելք նայում էին այգուն, նա գտավ միսիս Քեյնին, որը մի բարետես կին էր, բարի և փոքր-ինչ հոգնած դեմքով, ողորկ սանրված ճերմակ մազերով։ Երբ դուռը բացվեց, նա գլուխը բարձրացրեց, մի կողմ դրեց ձեռքի գիրքը, որ կարդում էր, և վեր կացավ որդուն ընդառաջելու։

— Բարև, մայրիկ,— ասաց Լեսթերը գրկելով ու համբուրելով մորը։— Ինչպե՞ս է առողջությունդ։

— Էլի առաջվա պես, Լեսթեր։ Դու ինչպե՞ս ճամփորդեցիր։

— Հիանալի։ Էլի մի քանի օր եղա Բրայսբրիջների մոտ։ Ֆլիվլենդ էի գնացել Պարսոններին տեսնելու։ Բոլորը քո մասին էին հարցնում։

— Ինչպե՞ս է Միննին։

— Էլի նույնը։ Կարծես ամենևին չի փոխվել։ Եվ էլի սիրով հյուրեր է ընդունում ինչպես միշտ։

— Շա՜տ խելացի աղջիկ է,— ասաց մայրը, միսիս Բրայսբրիջին հիշելով ջահել հասակում, երբ դեռ նա Ցինցինատիումն էր ապրում։— Նա ինձ միշտ էլ դուր է եկել։ Այնքա՜ն խելամիտ է։

— Նա հիմա էլ այդպիսին է,— բազմանշանակ ասաց Լեսթերը։

Միսիս Քեյնը ժպտաց և սկսեց որդուն զանազան նորություններ պատմել ընտանեկան կյանքից։ Իմոջինի ամուսինն ինչ-որ գործով գնացել է Սենտ-Լուիս։ Ռոբերտի կինը հիվանդ է. մրսել է։ Մեռել է ծերունի Ցվինգլը՝ գործարանի պահակը, որ քառասուն տարի աշխատել էր միստր Քեյնի մոտ։ Միստր Քեյնը գնալու է նրա թաղմանը։ Լեսթերը լսում էր հարգանքով, թեպետև մտացրիվ։

Ցած իջնելով, նա հանդիպեց Լուիզային։ Նա փառահեղ

տեսք ուներ. ավելի հարմար բառ չես գտնի։ Ուլունքազարդ սև մետաքսե շորը ամուր սեղմում էր նրա բարետես իրանը, սուտակե զարդը շատ էր սազում նրա թուխ մաշկին ու սև մազերին։ Սև աչքերի հայացքն ասես ծակում-անցնում էր։

— Ա՜, դո՞ւ ես, Լեսթեր,— գոչեց նա։— Ե՞րբ ես վերադարձել։ Համբուրելիս զգույշ, ես հյուր եմ գնում և արդեն դիմափոշի եմ քսել։ Ա՛խ դու, ա՛ղջ։

Լեսթերն ամուր գրկեց նրան և շշմփոցով համբուրեց։ Քույրը դժվարությամբ ետ հրեց նրան։

— Ես այնքան էլ շատ դիմափոշի չթափեցի,— ասաց նա։— Դու էլ շպարափնչիկդ վերցրու և նորից քսիր,— և նա անցավ իր սենյակը, որպեսզի շորերը փոխի ճաշի նստելու համար։

Ճաշելու համար շորը փոխելը Քեյնի ընտանիքում սովորություն էր դարձել վերջին տարիներս։ Հյուրեր այնքան հաճախ էին լինում, որ դա մի տեսակ անհրաժեշտություն էր դարձել, և այդ կողմից Լուիզան առանձնապես ջծախնդիր էր։ Այդ երեկո սպասում էին Ռոբերտին և Բարնեթ ամուսիններին, որոնք հոր ու մոր հին մտերիմներն էին, այնպես որ, իհարկե, ճաշը հանդիսավոր էր լինելու։ Լեսթերը գիտեր, որ հայրը տանն է, բայց չէր շտապում տեսնել նրան։ Նա մտածում էր Քլիվլենդում անցկացրած վերջին երկու օրերի մասին և մտորում էր, թե էլի երբ կտեսնի Ջեննիին։

ԳԼՈՒԽ XX

Հագուստը փոխելուց հետո Լեսթերը ցած իջավ և հորը գտավ գրադարանում՝ թերթ կարդալիս։

— Բարև, Լեսթե՛ր,— ասաց հայրը ակնոցի վերևից նայելով նրան և ձեռքն առաջ մեկնելով։— Այդ որտեղի՞ց։

— Քլիվլենդից,— ժպիտով պատասխանեց որդին ամուր սեղմելով հոր ձեռքը։

— Ռոբերտն ասում էր, որ դու եղել ես Նյու-Յորքում։

— Այո, եղել եմ։

— Ինչպե՞ս է իմ հին բարեկամ Առնոլդը։

— Էլի նույնը,— պատասխանեց Լեսթերը։— Նա ամենևին չի ծերանում։

— Դե պարզ է,— ուրախ ասաց Արչիբալդ Քեյնը, ասես գովասանք լսելով իր սեփական ամուր առողջության մասին։— Նա միշտ էլ զուսպ մարդ է եղել։ Իսկակա՞ն ջենտլմեն։

Հայրը որդու հետ միասին անցավ հյուրասենյակ։ Նրանք խոսում էին գործերի և ընտանեկան նորությունների մասին, մինչև Հոլլի ժամացույցի զարկը վերևում հավաքվածներին ազդարարեց, որ ճաշը մատուցված է։

Լեսթերն իրեն շատ լավ էր զգում շքեղ սեղանատանը, որ կահավորված է Լյուդովիկոս XV-ի ոճով։ Նա սիրում էր իր տունը, տնեցիներին՝ մորը, հորը, քույրերին ու ընտանիքի հին բարեկամներին։ Եվ ահա նա ժպտում էր ու արտակարգ ուրախ էր։

Լուիզան ասաց, որ երեքշաբթի օրը Լիվերինդները պարահանդես են սարքում և հարցրեց, թե Լեսթերը կգնա՞։

— Դու հո գիտես, որ ես չեմ պարում,— չոր-չոր ասաց եղբայրը։— Գնամ ի՞նչ անեմ այնտեղ։

— Չե՞ս պարում։ Ավելի լավ է ասա՝ չեմ ուզում պարել։ Դու պարզապես շատ ծույլն ես դարձել։ Եթե Ռոբերտը պարում է, դու ավելի լավ կարող ես։

— Ես Ռոբերտին կարո՞ղ եմ հասնել. ես նրա պես կայտառ չեմ,— անհոգ ասաց Լեսթերը։

— Եվ ոչ էլ նրա պես սիրալիր,— խայթեց Լուիզան։

— Կարող է պատահել,— ասաց Լեսթերը։

— Կռիվ մի՛ սարքի, Լուիզա,— խելամտորեն միջամտեց Ռոբերտը։

Ճաշից հետո նրանք անցան դրադարան, և Ռոբերտը եղբոր հետ մի քիչ խոսեց գործերի մասին։ Հարկավոր էր որոշ պայմանագրեր վերանայել։ Նա ուզում էր Լեսթերի կարծիքն իմանալ։ Լուիզան պատրաստվում էր հյուր գնալ, նրան կառք մատուցեցին։

— Ուրեմն դու չե՞ս գալիս,— հարցրեց նա անբավականություն արտահայտող ձայնով։

— Ո՛չ, շատ եմ հոգնած,— անփութորեն ասաց Լեսթերը։— Իմ կողմից ներողություն խնդրիր միսիս Նոուլզից։

— Լետտի Նեյսը վերջերս քո մասին էր հարցնում,— ասաց Լուիզան արդեն դռան միջից։

— Շատ հաճելի է։ Անչա՞փ շոյված եմ։

— Լետտին հիանալի աղջիկ է, Լեսթեր,— վրա բերեց հայրը, որ կանգնած էր բուխարու մոտ։— Կուզեի, որ դու ամուսնանաս նրա հետ և տունը նստես։ Նա լավ կին կլինի քեզ համար։

— Աննման աղջիկ է,— հաստատեց միսիս Քեյնը։

— Այդ ի՞նչ է, խոսքերդ մե՞կ եք արել,— կատակեց Լեսթերը։— Գիտե՞ք ինչ, ընտանեկան կյանքի համար ես անպետք եմ։

— Այդ ես շատ լավ գիտեմ,— կես-կատակ, կես-լուրջ ասաց միսիս Քեյնը։— Եվ դա շատ ցավալի է։

Լեսթերը խոսակցությունը շուտ տվեց ուրիշ նյութի։ Այդպիսի դիտողությունները նրան դուր չէին գալիս։ Եվ նորից միտքը եկավ Ջեննին, նրա ողբագին՝ «Ախ, ոչ, ոչ»-ը։ Այ թե ով է նրա սրտովը։ Այդպիսի կինը, իրոք, արժանի է ուշադրության։ Հաշվենկատ չէ, շահախնդիր չէ, շրջապատված չէ խիստ հսկողությամբ և որպես թակարդ դրված տղամարդու ճանապարհին, այլ շքնաղ աղջիկ է, շքնաղ, ինչպես մի ծաղիկ, որն աճում է առանց որևէ մեկի պաշտպանության։ Այդ երեկո իր սենյակը վերադառնալով՝ նա մի նամակ գրեց Ջեննիին, բայց ամսաթիվը դրեց մի շաբաթով ավելի ուշ, որովհետև չէր ուզում չափից ավելի անհամբեր երևալ և ինքն էլ մտածում էր առնվազն երկու շաբաթ մնալ Ցինցիննատիում։

«Իմ սիրելի Ջեննի,

Թեև արդեն մի շաբաթ է անցել, իսկ ես իմ մասին քեզ տեղեկություն չեմ տվել, բայց, հավատա, քեզ չեմ մոռացել։ Դու շա՞տ վատ կարծիք ունես իմ մասին։ Ես այնպես կանեմ, որ այդ կարծիքը կփոխվի դեպի լավը, որովհետև ես սիրում եմ քեզ, աղջիկս, ճշմարիտ սիրում եմ։ Իմ սեղանին մի ծաղիկ կա, որը շատ է հիշեցնում քեզ. սպիտակ է, քնքուշ, շքնաղ։ Ահա դու էլ այդպիսին ես. քո պատկերը շարունակ իմ

մաքումն է։ Ինձ համար դու ամենաշքնաղի մարմնացումն ես։ Դու ես, որ կարող ես ծաղիկներ ցանել իմ ճանապարհին, միայն թե ցանկանաս։

Հիմա ուզում եմ քեզ ասել, որ 18-ին ես լինելու եմ Քլիվլենդում և հույս ունեմ հանդիպել քեզ հետ։ Կգամ հինգշաբթի երեկոյան։ Ուրբաթ օրը կեսօրին ինձ սպասիր «Դորնթոն» հյուրանոցի կանանց հյուրասրահում։ Լա՞վ։ Մենք միասին կնախաճաշենք։

Դու չուզեցիր, որ ես գամ ձեր տուն։ Ինչպես տեսնում ես, ես կատարում եմ քո ցանկությունը։ (Այսուհետև էլ կկատարեմ, միայն մի պայմանով)։ Լավ բարեկամներն իրարից չպետք է բաժանվեն, դա վտանգավոր է։ Գրիր, որ ինձ սպասելու ես։ Հույս դնում եմ քո մեծահոգության վրա։ Բայց ես չեմ կարող քո «ոչ»-ն ընդունել որպես վերջնական որոշում։

Քեզ նվիրված Լեսթեր Քեյն»

Նա նամակը փակեց և հասցեն գրեց։ «Իսկապես որ նա չքնաղ աղջիկ է,— մտածեց նա։— Ուղղակի չքնաղ»։

ԳԼՈՒԽ XXI

Այդ նամակը եկավ կարճ լռությունից հետո, երբ Ջեննին արդեն կարողացել էր շատ բան մտածել, և խորապես հուզեց նրան։ Ի՞նչ անի հիմա։ Ինչպե՞ս վարվի։ Ինչպե՞ս վերաբերվի ինքն այդ մարդուն։ Ուզո՞ւմ է արդյոք պատասխանել նամակին։ Եվ եթե պատասխանել, ապա ի՞նչ պատասխանել։ Մինչև այժմ նրա բոլոր արարքները, նույնիսկ երբ ինքը Կոլումբուսում իրեն զոհաբերեց ի սեր Բասսի, կարծես թե ոչ ոքի չէին վերաբերում, բացի իրենից։ Այժմ պետք է մտածել և ուրիշների մասին. հարազատների և ամենից առաջ՝ իր երեխայի մասին։ Փոքրիկ Վեստան արդեն մեկուկես տարեկան էր։ Դա խարտյաշ մազերով, խոշոր, երկնագույն աչքերով մի սիրունիկ աղջիկ էր, որ խոստանում էր դառնալ իր մորը շատ նման։ Դրա հետ միասին նա կայտառ էր ու խելամիտ։ Միսիս Գերհարդը նրան սիրում էր ամբողջ

սրտով։ Գերհարդ-հայրը շատ դանդաղ էր փափկում և նույնիսկ հիմա բացահայտ հետաքրքրություն չէր ցուցաբերում դեպի իր թոռնիկը, բայց և այնպես բարի էր նրա նկատմամբ։ Եվ հոր մեջ այդ փոփոխությունը տեսնելով՝ Ջեննին ամբողջ սրտով ցանկանում էր իրեն այնպես պահել, որ այլևս երբեք չվշտացնի նրան։ Եթե նա որևէ անխելք քայլ անի, դա ոչ միայն ստոր ապերախտություն կլինի հոր նկատմամբ, այլև հետագայում կվնասի իր աղջկան։ Իմ սեփական կյանքն անհաջող եղավ, մտածում էր Ջեննին, բայց Վեստայի կյանքն ուրիշ բան է, և չի կարելի այնպիսի բան անել, որը կարողանար փչացնել նրա կյանքը։ Գուցե թե հարկավոր է Լեսթերին գրել և ամեն ինչ բացատրել նրան։ Ինքը նրան ասել է, որ վատ վարվել չի ուզում։ Ենթադրենք ինքը խոստովանում է նրան, որ երեխա ունի և խնդրում է նրան հանգիստ թողնել իրեն։ Կլսի՞ արդյոք նա։ Հազիվ թե։ Եվ արդյոք ուզո՞ւմ է ինքը, որ նա իր իսկ խոսքով բռնացնի իրեն։

Այդ խոստովանությունն անելու անհրաժեշտությունը Ջեննիի համար տանջալից բան էր։ Ահա թե ինչու նա տատանվում էր, ուզում էր նամակ սկսել, որով փորձում էր ամեն ինչ բացատրել, բայց պատառոտեց այն։ Իսկ հետո բախտն ինքը միջամտեց. անակնկալ տուն վերադարձավ հայրը, որը Յանգթաունում գործարանում պատահած մի դժբախտ դեպքի ժամանակ լուրջ վնասվածք էր ստացել։

Գերհարդից նամակը եկավ օգոստոսի սկզբին, չորեքշաբթի օրը։ Բայց դա սովորական, գերմաներեն գրված նամակ չէր, հայրական հարցուփորձով ու խրատներով, հինգ գոլլարը մեջը դրած։ Ծրարի մեջ մի քանի տող էր, գրված անծանոթ ձեռագրով, տեղեկություն, որ դժբախտություն է տեղի ունեցել. գործարանում հալված ապակիով լի շերեփը շուռ է եկել, որից Գերհարդի ձեռքերը լրջորեն այրվել են։ Հետո երկտողի մեջ ասված էր, որ հետևյալ առավոտյան նա տանն է լինելու։

— Դե ի՞նչ կասես սրան,— գոչեց Ուիլյամը շշմած։

— Խե՜ղճ հայրիկ,— ասաց Վերոնիկան, և նրա աչքերը լցվեցին արցունքով։

Միսիս Գերհարդն ընկավ աթոռին, ձեռքերը դցեց ծունկներին և հայացքը հառեց հատակին։ «Ի՞նչ պիտի անենք հիմա»,— հուսահատ կրկնում էր նա։ Նրա համար սարսափելի էր նույնիսկ մտածել, թե ինչ պիտի անեն, եթե Գերհարդն ընդմիշտ հաշմանդամ մնա։

Բասսը տուն վերադարձավ ժամը վեցն անց կեսին, Ջեննին՝ ութին։ Բասսը նորությունը լսեց աչքերը չռած։

— Ա՜յ վատ բան,— գոչեց նա։— Իսկ նամակում ասված չէ՞, թե այրվածքը շա՞տ է ծանր։

— Ասված չէ,— պատասխանեց միսիս Գերհարդը։

— Դե, ես կարծում եմ չարժե շատ տխրել,— ասաց Բասսը։— Դրանից ոչ մի օգուտ չկա։ Մի կերպ յոլա կգնանք։ Ես լինեի քո տեղը, այդպես տրամադրություն չէի գցի։

Եվ իրոք, նա շատ էլ տրամադրություն չգցեց. այդպիսի բնավորություն չուներ նա։ Կյանքը նրա համար թեթև էր անցնում։ Նա ընդունակ չէր դեպքերի նշանակության մասին խորհել և կանխատեսել նրանց հետևանքները։

— Գիտեմ,— ասաց միսիս Գերհարդը ջանալով ինքն իրեն տիրապետել։— Բայց ոչինչ չեմ կարող անել։ Մտածիր ախր. դեռ մի կարգին չէր կարգավորվել մեր կյանքը, և ահա մի նոր դժբախտություն։ Ասես նզովք կա մեզ վրա։ Ուղղակի ոչինչ չի հաջողվում։

Երբ Ջեննին եկավ, մայրն իսկույն զգաց, որ նա իր միակ հենարանն է։

— Ի՞նչ է պատահել, մայրիկ,—դեռ դռան միջից հարցրեց Ջեննին, մոր դեմքը տեսնելուն պես։— Դու ինչո՞ւ ես լաց եղել։

Միսիս Գերհարդը նայեց նրան և երեսը շուռ տվեց։

— Հայրիկի ձեռքերն այրվել են,— հատիկ-հատիկ ասաց Բասսը։ —Վաղը նա գալիս է։

Ջեննին շուռ եկավ և սարսափով նայեց եղբորը։

— Ձեռքերն այրվե՞լ են։

— Այո,— ասաց Բասսը։

— Այդ ինչպե՞ս է եղել։

— Հալված ապակու շերեփն է շուռ եկել։

Ջեննին նայեց մորը, և նրա աչքերը լցվեցին արցունքով։ Նա միսիս Գերհարդի վրա ընկավ և գրկեց նրան։

— Մի՛ լար, մայրիկ,— ասաց նա՝ ինքն էլ հազիվ զրաստելով իրեն։— Հարկավոր չէ վշտանալ։ Ես գիտեմ, թե որքան ծանր է քեզ համար, բայց ամեն ինչ կանցնի։ Մի՛ լար։

Այստեղ նրա շրթունքները դողացին, և նա այնքան էլ շուտ չժողովեց իր ուժերը, որպեսզի նոր դժբախտության դեմքին նայի։ Եվ ահա իր կամքից անկախ հանկարծ նոսա մեջ մի գաղտուկ ու աննահանջ միտք ծագեց։ Լեսթերը... Չէ՞ որ նա իր օգնությունն էր առաջարկում։ Նա սեր բացատրվեց իրեն։ Չգիտես ինչու, հիմա այնպես վառ իր միտքը եկավ նա և նրա ուշադրությունը, և օգնելու պատրաստակամությունը, և կարեկցությունը... Այդպես էր վարվում և Բրենդերը, երբ Բասսը բանտ էր ընկել։ Գուցե իրեն վիճակված է նորի՞ց զոհաբերել իրեն։ Եվ, իսկապես, միևնույն չէ՞։ Չէ՞ որ առանց այդ էլ իր կյանքը չհաջողվեց։ Այսպես էր մտածում նա՝ նայելով մորը, որը նստել էր լուռ, ճնշված, վշտից շվարած։ «Ինչո՞ւ սա ստիպված է այսքան տանջվել,— մտածում էր Ջեննին։— Մի՞թե գեթ մի փոքր բախտ բաժին չի ընկնելու սրան»։

— Պետք չէ այդպես մորմոքվել,— ասաց նա քիչ մնալուց հետո։— Գուցե հայրիկն այնքան էլ ուժեղ չի այրել ձեռքերը։ Դե հո նամակում ասվա՞ծ է, որ վաղն առավոտյան գալու է։

— Այո,— հաստատեց միսիս Գերհարդն ուշքի գալով։

Այժմ նրանք սկսեցին մի քիչ ավելի հանգիստ խոսել, և երբ իրենց հայտնի բոլոր մանրամասնությունները քննարկվեցին, աստիճանաբար հանգստացան, ասես լռեցին սպասումով։

— Հարկավոր է, որ որևէ մեկը առավոտյան գնա կայարան՝ հայրիկին դիմավորելու,— ասաց Ջեննին Բասսին։— Ես կգնամ։ Կարծում եմ միսիս Բրայսբրիջը բան չի ասի։

— Ոչ,— մոայլ առարկեց Բասսը,— դու մի՛ գնա։ Ես ինքս կդիմավորեմ։

Այս նոր հարվածի համար նա չարանում էր բախտի վրա

և այդ թաքցնել չէր կարողանում։ Նա մոայլ անցավ իր սենյակը և դուռը փակեց։ Ջեննին ու մայրը երեխաներին ուղարկեցին քնելու, իսկ իրենք գնացին խոհանոց։

— Չգիտեմ, թե հիմա ինչ պիտի լինի մեր օրը,— ասաց միսիս Գերհարդը, պատկերացնելով, թե ինչպիսի նյութական դժվարություններ է բերելու այս նոր դժբախտությունը։

Նա թվում էր բոլորովին վշտաբեկ և անօգնական, և Ջեննին սիրտը ցավելու չափ խղճաց նրան։

— Մի՛ վշտանա, մայրիկ,— քնքշանքով ասաց նա, ղգալով, որ իր մեջ մի որոշում է հասունանում։

Աշխարհն այնքա՞ն մեծ է։ Եվ աշխարհում կան մարդիկ, որոնք ուրիշներին էլ առատաբուռն բաժին են հասցնում ամեն բարիքից։ Դե հո իրենք միշտ այդպես կուշ չեն գալու դժբախտությունների ճնշման տակ։

Ջեննին նստել էր մոր կողքին և թվում էր, թե արդեն լսում է գալիք ձախորդությունների ահավոր քայլերը։

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ է լինելու մեր օրը,— կրկնեց մայրը, տեսնելով, որ Քլիվլենդում բարեկեցիկ կյանք ստեղծելու իր ամբողջ երազանքը փուլ է գալիս աչքի առաջ։

— Ոչինչ,— պատասխանեց Ջեննին, արդեն պարզ հասկանալով, թե ինչ պիտի անել,— ամեն ինչ կանցնի։ Մի՛ վշտացիր։ Ամեն ինչ կլավանա։ Մի կերպ կկարգավորենք։

Այժմ նա զգում էր, որ բախտը պատասխանատվության ամբողջ լուծը դրել է իր վրին։ Ինքը պետք է զոհաբերի իրեն, ուրիշ ելք չկա։

Հաջորդ առավոտյան Բասսը կայարանում դիմավորեց հորը։ Գերհարդը շատ գունատ էր և, ըստ երևույթին, շատ էր տանջվել. նրա այտերը ներս էին ընկել, դեմքն ավելի էր սրվել։ Նրա ձեռքերը փաթաթված էին և ամբողջ տեսքն այնքան ողորմելի էր, որ երբ նա Բասսի հետ կայարանից տուն էր գնում, անցորդները շուռ էին գալիս ու ետևից նայում։

— Թո՛ւհ, գրողը տանի,— ասաց նա որդուն։— Ո՞նց վառեցի ձեռքերս։ Այնպես էին ցավում, որ կարծում էի չեմ դիմանա։ Ի՞նչ ցավեր էին, գրողը տանի։ Մինչև գերեզման մոռանալ չի լինի։

Նա մանրամասն պատմեց, թե ինչպես պատահեց փորձանքը և ավելացրեց, թե հիմա չի իմանում, երբևիցե կարո՞ղ է ձեռքերը բանեցնել առաջվա պես։ Աջ ձեռքի բութ մատը և ձախի երկու մատը վառվել են մինչև ոսկորը։ Ձախ ձեռքի առաջին հոդերն ստիպված եղան կտրել, բութ մատը հաջողվեց փրկել, բայց կարող է պատահել, որ մատները ցցված մնան։

— Եվ այս հենց այն ժամանակ, երբ ինձ այնքան փող է հարկավոր,— ավելացրեց նա։— Ա՛յ քեզ փորձանք, փորձա՞նք ու փորձա՞նք։

Երբ նրանք տուն հասան, և միսիս Գերհարդը դուռը բացեց, ծերունի բանվորը, կնոջ լուռ վիշտը հասկանալով, իրեն զսպել չկարողացավ ու արտասվեց։ Միսիս Գերհարդը նույնպես սկսեց հեկեկալ։ Նույնիսկ Բասսը մի բոպե կորցրեց իրեն, բայց և շուտով ուշքը հավաքեց։ Փոքր երեխաները լաց ու կական էին բարձրացրել, մինչև որ Բասսը գոռաց նրանց վրա։

— Լացը թող,— զվարթ տոնով ասաց նա հորը։— Արցունքը ցավին չի օգնի։ Եվ հետո մի առանձին սարսափելի բան էլ չի։ Դու շուտով կլավանաս։ Մի կերպ կապրենք։

Բասսի խոսքերը միաժամանակ բոլորին հանգստացրին, և հիմա, երբ ամուսինը տուն եկավ, միսիս Գերհարդի հոգին նորից խաղաղվեց։ Ճիշտ է, նրա ձեռքերը փաթաթանների մեջ են, բայց նա ոտքի վրա է, ուրիշ ոչ մի տեղը չի վառվել ու չի վիրավորվել և այդ էլ մխիթարություն է։ Գուցե և նա նորից կարող լինի ձեռքերն աշխատեցնել և մի որևէ թեթև գործի անցնի։ Համենայն դեպս, պետք է հուսալ, որ լավ կլինի։

Երբ Ջեննին երեկոյան տուն վերադարձավ, նրա առաջին ցանկությունն էր նետվել հոր մոտ, արտահայտել նրան իր ամբողջ սերն ու նվիրվածությունը, բայց վախենում էր, թե հայրը էլի այնպես սառն կընդունի իրեն, ինչպես անցյալ անգամ։

Գերհարդը նույնպես հուզված էր։ Նա դեռ չէր մոռացել այն խայտառակությունը, որ պատճառել էր իրեն դուստրը։

Նա կուզենար ներողամիտ լինել, բայց ոչ մի կերպ չէր կարողանում դուրս գալ իր զգացմունքների խառնաշփոթից և ինքն էլ չգիտեր, թե ինչ անի և ինչ ասի։

— Հայրիկ,— խոսեց Ջեննին վախվխելով մոտենալով հորը։

Գերհարդը շփոթվելով փորձեց որևէ ամենահասարակ խոսք ասել, բայց այդ նրան չհաջողվեց։ Իր անօգնական վիճակի գիտակցությունը, այն միտքը, որ աղջիկը սիրում է իրեն ու խղճում և ինքն էլ չի կարող նրան չսիրել, այս ամենը վեր էր նրա ուժերից։ Եվ նա չդիմացավ ու նորից լաց եղավ։

— Ներիր ինձ, հայրիկ,— աղաչում էր Ջեննին։— խընդրում եմ, ներիր ինձ։

Գերհարդը նույնիսկ սիրտ չարեց աղջկան նայել, բայց հանդիպման շփոթմունքով համակված՝ մտածեց, որ իսկապես կարող է ներել նրան։

— Ես աղոթել եմ,— կտրված ձայնով ասաց նա։— Լավ, մոռանանք այդ։

Երբ ուշքի եկավ, նա արդեն ամաչում էր իր հուզմունքից, բայց նրանց միջև արդեն մոտիկություն ու փոխըմբռնողություն էր հաստատվել։ Այդ օրվանից, թեպետև նրանց հարաբերությունների մեջ դեռ մի որոշ զսպվածություն մնացել էր, Գերհարդն այլևս չէր աշխատում Ջեննիին չնկատել, իսկ նա հոր հետ պարզ էր ու սիրալիր, ինչպես վայել է դրսևորը, բոլորովին այնպես, ինչպես հին ժամանակներում։

Այսպիսով տան մեջ նորից խաղաղություն հաստատվեց, բայց երևան եկան ուրիշ հոգսեր։ Ինչպե՞ս ապրել, երբ եկամուտը պակասել է շաբաթական հինգ դոլլարով, իսկ ծախսերը Գերհարդի ներկայության պատճառով ավելացել են։ Բասը կարող էր իր շաբաթական վաստակից ավելին տալ, քան տալիս էր, բայց իրեն պարտավոր չէր զգում այդ անել։ Եվ այսպես շաբաթական ինը դոլլարը պետք է բավականացներ և՛ բնակարանի վարձին, և՛ ուտելիքին, և՛ ածուխին, էլ չենք խոսում պատահական ծախսերի մասին, որոնք ծանր բեռ էին դարձել։ Գերհարդն ամեն օր պետք է գնար բժշկի մոտ՝ վիրակապության։ Ջորջի կոշիկները մաշվել էին։ Կամ պետք է

որևէ տեղից փող ճարեին, կամ թե ընտանիքը նորից պարտքերի տակ էր մտնելու և նորից պիտի ապրեր կարիքի բոլոր տանջանքները։ Այս հանգամանքների ազդեցության տակ Ջեննիի որոշումը վերջնականապես հաստատվեց։

Լեսթերի նամակն անպատասխան էր մնում։ Նշանակված օրը մոտենում էր։ Արդյոք չգրե՞լ նրան։ Նա կօգնի իրենց։ Չէ՞ որ նա ուզում էր անպայման փող տալ իրեն։ Վերջ ի վերջո Ջեննին որոշեց, որ իր պարտքն է օգտվել առաջարկված օգնությունից։ Եվ նա Լեսթերին մի կարճ նամակ գրեց։ Լավ, ինքը կհանդիպի նրան, բայց խնդրում է իրենց տուն չգալ։ Նա նամակն ուղարկեց և մի տարօրինակ զգացմունքով՝ երկյուղի դողի և ուրախ հույսի խառնուրդի զգացմունքով սկսեց սպասել վճռական օրվան։

ԳԼՈՒԽ XXII

Հասավ ճակատագրական ուրբաթ օրը, և Ջեննին դեմ առավ նոր լուրջ դժվարությունների, որոնք բարդացնում էին նրա համեստ գոյությունը։ Ուրիշ ընտրություն չկա, մտածում էր նա։ Կյանքն ինձ չժպտաց։ Ինչո՞ւ շարունակել դիմադրությունը։ Եթե նա կարողանար երջանկացնել իր հարազատներին, կրթություն տալ Վեստային, թաքցնել իր անցյալը և Վեստայի գոյությունը, գուցե թե... գուցե թե... Չի՞ պատահում, որ հարուստ մարդիկ ամուսնանում են աղքատ աղջիկների հետ, իսկ Լեսթերն այնքա՜ն բարի է, և ինքն էլ՝ իհարկե, դուր է գալիս նրան։ Ժամը յոթին նա գնաց միսիս Բրայսբրիջի մոտ։ Կեսօրին գնալու թույլտվություն խնդրեց, պատճառ բերելով, թե մորն օգնելու գործ ունի և գնաց հյուրանոց։

Լեսթերը Ցինցիննատիից դուրս էր եկել մի քանի օր շուտ, քան ենթադրում էր դուրս գալ, ուստի և Ջեննիի պատասխանը չէր ստացել։ Նա Քլիվլենդ հասավ մռայլ տրամադրությամբ և աշխարհում ամեն ինչից դժգոհ։ Դեռ էլի մի աղոտ հույս ուներ, թե Ջեննիի նամակը հյուրանոցում է

սպասում իրեն, բայց այնտեղ նրանից ոչ մի տող չկար։ Լեսթերը հեշտությամբ հուսահատվողներից չէր, բայց այսօր նա էլ քիթը կախեց և մռայլ տրամադրությամբ բարձրացավ իր սենյակը՝ շորերը փոխելու։ Ընթրիքից հետո նա փորձեց բիլյարդ խաղալով զվարճանալ և ընկերներից բաժանվեց միայն այն ժամանակ, երբ սովորականից շատ ավելի էր խմել։ Մյուս օրն առավոտյան նա վերև բարձրացավ այն մըռայլ մտքով, թե ստիպված կլինի ձեռք քաշել այդ գործից, բայց ժամանակն անցնում էր, մոտենում էր նշանակված ժամը, և Լեսթերը մտածեց, թե գուցե հարկավոր է մի քիչ էլ սպասել։ Մեկ էլ տեսար՝ հանկարծ Ջեննին եկավ։ Եվ ահա նշանակված ժամից քառորդ ժամ առաջ նա իջավ հյուրասրահ։ Եվ որքա՜ն մեծ եղավ նրա ուրախությունը, երբ տեսավ Ջեննիին. նա նստել ու սպասում էր, և դա նշան էր, որ նա հնազանդվել է։ Լեսթերն արագ մոտեցավ նրան գոհ, ուրախ, ժպիտը դեմքին։

— Դու, այնուամենայնիվ, այստե՞ղ ես,— ասաց նա աղջկան նայելով այնպիսի մի մարդու հայացքով, որը նորից ձեռք է բերել իր կորցրած գանձը։— Հապա ինչո՞ւ ինձ չէիր գրել։ Դու այնպես համառորեն էիր լռել, որ ես մտածեցի, թե իմ երեսը տեսնել չես ուզի։

— Ես գրել եմ,— պատասխանեց Ջեննին։

— Ո՞ւր։

— Այն հասցեով, որ դուք տվել եք ինձ։ Երեք օր առաջ եմ գրել։

— Ա՜, ա՛յ թե ինչ։ Նամակդ ինձ չի հասել։ Հարկավոր էր ավելի շուտ գրել։ Լավ, դո՞ւ ինչպես ես։

— Լավ եմ,— պատասխանեց Ջեննին։

— Կարծես ինչ-որ դրան նման չէ։ Տեսքդ հոգնածի տեսք է։ Ի՞նչ է պատահել, Ջեննի։ Ինչպե՞ս են տնեցիք, ամեն ինչ կարգի՞ն է։

Լեսթերն այս հարցը բոլորովին պատահաբար տվեց, նա ինքն էլ չգիտեր, թե ինչո՞ւ տվեց այդ հարցը։ Բայց նրա հարցը Ջեննիին օգնեց իմանալ նրա մասին, ինչ ամենից ավելի էր հուզում իրեն։

— Հայրս հիվանդ է,— ասաց նա։

— Իսկ ի՞նչ է եղել։

— Գործարանում նրա ձեռքերը վառվել են։ Մենք սոսկալի վախեցանք։ Կարծես թե նա այլևս երբեք չպիտի կարողանա ազատորեն տիրապետել իր ձեռքերին։

Ջեննին լռեց, և նրա դեմքն արտահայտում էր նրա հուսահատության ամբողջ խորությունը։ Լեսթերը հասկացավ, որ նա անելանելի դրության մեջ է։

— Շատ եմ ցավում,— ասաց նա։— Շատ ցավալի բան է։ Այդ ե՞րբ է պատահել։

— Մոտ երեք շաբաթ կլինի։

— Հը՞մ։ Լավ չի։ Դե, ինչ որ է, արի նախաճաշենք։ Սա ուզում եմ խոսել քեզ հետ։ Իմ գնալուց հետո միշտ ուզեցել եմ իմանալ, թե ինչպես է ապրում ձեր ընտանիքը։

Նա Ջեննիին տարավ ռեստորան և այնտեղ մի առանձնացած փոքրիկ սեղան ընտրեց։ Ցանկանալով աղջկա մտքերը փարատել՝ նա առաջարկեց նրան նախաճաշ պատվիրել, բայց Ջեննին շատ էր մտազբաղ ու ամաչկոտ, և Լեսթերն ստիպված եղավ ինքն զբաղվել ճաշատեսակների թերթիկով։ Եվ այդ գործը վերջացնելուց հետո ուրախ-ուրախ դարձավ աղջկան։

— Դե՛, Ջե՛ննի, ես ուզում եմ, որ դու ամեն ինչ պատմես ինձ ձեր ընտանիքի մասին։ Անցյալ անգամ ես շատ թե քիչ հասկացա, իսկ հիմա ուզում եմ ինչպես պետքն է մանրամասն իմանալ։ Ասում ես, որ հայրդ ապակի փչող բանվոր է, և հիմա ստիպված է այդ աշխատանքը թողնել. դա սարդ է։

— Այո,— ասաց Ջեննին։

— Ընտանիքում քանի՞ երեխա եք, բացի քեզանից։

— Հինգ։

— Մեծը դո՞ւ ես։

— Ոչ, մեծը Սեբաստյանն է։ Նա քսաներկու տարեկան է։

— Ինչո՞վ է զբաղվում նա։

— Վաճառող է ծխախոտի խանութում։

— Ջրիտե՞ս որքան է վաստակում։

— Կարծեմ տասներկու դոլլար,— քիչ մտածելուց հետո պատասխանեց Ջեննին։

— Իսկ մյուս երեխանե՞րը։

— Մարթան ու Վերոնիկան չեն աշխատում, նրանք դեռ շատ փոքր են։ Ջորջն աշխատում է Ուիլսոնի խանութում։ Նա երեքուկես դոլլար է ստանում։

— Իսկ դո՞ւ որքան ես ստանում։

— Ես՝ չորս։

Լեսթերը մի պահ լռեց՝ մտքում հաշվելով, թե որքան եկամուտ ունեն նրանք ապրուստի համար։

— Ինչքա՞ն եք վճարում բնակարանին,— հարցրեց նա։

— Քսան դոլլար։

— Մայրդ երևի արդեն ջահել չէ՞։

— Շուտով հիսուն տարեկան կլինի։

Լեսթերը մտախոհ՝ պատառաքաղն էր շուռումուռ տալիս։

— Ճիշտն ասած, Ջեննի, ես մոտավորապես այդպես էլ պատկերացնում էի,— ասաց նա վերջապես։— Քո մասին ես շատ եմ մտածել։ Հիմա ինձ համար ամեն ինչ պարզ է։ Դու միայն մի ելք ունես, և դա այնքան էլ վատ ելք չի, եթե դու վստահես ինձ։

Նա լռեց, սպասելով հարցի, բայց Ջեննին ոչ մի հարց չտվեց։ Նա խորասուզված էր իր հոգսերի մեջ։

— Դու չե՞ս ուզում իմանալ, թե որն է ելքը,— հարցրեց նա։

— Ուզում եմ,— մեքենայորեն պատասխանեց աղջիկը։

— Այդ ես եմ,— ասաց Լեսթերը։— Դու պետք է թույլ տաս ինձ օգնել ձեզ։ Ես այդ անցյալ անգամ էի ուզում անել։ Բայց հիմա դու պետք է ընդունես իմ օգնությունը, լսո՞ւմ ես։

— Ես կարծում էի բանը դրան չի հասնի,— պարզորեն ասաց Ջեննին։

— Ես գիտեմ, թե դու ինչ էիր կարծում,— առարկեց Լեսթերը։— Մոռացիր այդ։ Ես քո ընտանիքի մասին կհոգամ։ Եվ այդ կանեմ հենց հիմա, առանց հետաձգելու։

Նա քսակը հանեց և նրա միջից դուրս քաշեց մի քանի

տասն ու քսանհինգ դոլլարանոց թղթադրամ, ընդամենը երկու հարյուր հիսուն դոլլար։

— Վերցրու,— ասաց նա։— Սա միայն սկիզբն է։ Ես կհետևեմ, որ սրանից հետո ձեր ընտանիքն ապահովված լինի։ Ձեռքդ տուր։

— Ո՛չ, ո՛չ,— գոչեց Ջեննին։— Այդքան շատ հարկավոր չէ։ Այդքան մի՛ տվեք։

— Մի՛ վիճիր,— ասաց Լեսթերը։— Հապա, ձեռքդ տուր։

Նրա հայացքին հնազանդվելով՝ Ջեննին ձեռքը մեկնեց, և Լեսթերը փողն աղջկա բուռը դնելով՝ նրա մատները թեթևակի սեղմեց։

— Վերցրու, անուշս։ Ես սիրում եմ քեզ, ի՛մ չքնաղ։ Ես չեմ ուզում, որ դու կարիքի մեջ լինես, ինչպես և քո հարազատները։

Ջեննին շրթունքը կծեց և համր շնորհակալությամբ նայեց նրան։

— Չգիտեմ, ինչպես շնորհակալ լինեմ ձեզնից,— վերջապես ասաց նա։

— Եվ պետք էլ չէ,— պատասխանեց Լեսթերը։— Հավատա, ես եմ, որ պիտի շնորհակալ լինեմ քեզանից։

Նա լռեց և նայեց աղջկան՝ նրա գեղեցկությամբ հմայված։ Ջեննին գլուխը չէր բարձրացնում, սպասում էր, թե էլի ինչ է լինելու։

— Լավ չէ՞ր լինի, որ դու աշխատանքդ թողնեիր,— հարցրեց Լեսթերը։— Ամբողջ օրն ազատ կլինեիր։

— Չեմ կարող,— պատասխանեց աղջիկը։— Հայրիկս չի թույլ տա։ Նա գիտե, որ ես պետք է փող վաստակեմ։

— Ճիշտ որ,— ասաց Լեսթերը։— Բայց ի՞նչ օգուտ քո աշխատանքից։ Տեր աստված. շաբաթական չորս դոլլար։ Ես ուրախությամբ քեզ հիսուն անգամ ավելին կտայի, եթե իմանայի, որ դու կարող ես օգտվել այդ փողերից։

Նա մտացրիվ մատները թխկթխկացրեց սեղանին։

— Չեմ կարող,— ասաց Ջեննին։— Ես այս փողն էլ չգիտեմ ինչ պիտի անեմ։ Մերոնք գլխի կընկնեն։ Ստիպված եմ ամեն ինչ մորս պատմել։

Ջեննիի այս խոսքերից Լեսթերը եզրակացրեց, որ մայրն ու աղջիկը շատ մտերիմ են, քանի որ աղջիկը կարող է այդպիսի խոստովանություն անել մորը։ Լեսթերը չոր մարդ չէր, և սրանից նա զգացվեց։ Բայց նա ամենևին մտադիր չէր հրաժարվել իր մտքից։

— Որքան ես հասկանում եմ, կա միայն մեկ ելք,— մեղմորեն շարունակեց նա։— Դու սպասուհի չպետք է լինես։ Դա քեզ վայել չէ։ Ես դրան դեմ եմ։ Ամեն ինչ թող և արի ինձ հետ գնանք Նյու-Յորք։ Ես քո մասին կհոգամ։ Ես քեզ սիրում եմ և ուզում եմ, որ դու ինձ հետ լինես։ Եվ դու էլ այլևս քո հարազատների մասին չես անհանգստանա։ Դու կարող ես նրանց համար մի լավ տուն գնել և կահավորել քո ճաշակով։ Մի՞թե դու այսպիսի բան չես ուզում։

Նա լռեց, և Ջեննին իսկույն մտածեց մոր մասին, իր սիրելի մոր մասին։ Ամբողջ կյանքում միսիս Գերհարդը հենց դրա մասին էր խոսում, այդպիսի մի սիրուն տան մասին։ Որքա՞ն երջանիկ կլիներ նա, եթե ունենային մի քիչ ավելի մեծ մի տուն, լավ կահույք, մի պարտեզ։ Այդպիսի տան մեջ նա ազատված կլիներ բնակարանի վարձի հոգսից, անհարմար կահույքից, ստորացուցիչ աղքատությունից. նա այնպե՞ս երջանիկ կլինի։ Մինչ Ջեննին խորհում էր սրա մասին, Լեսթերը, որ ուշադիր հետևում էր նրան, հասկացավ, որ դիպել է նրա ամենանուրբ զգացմունքին։ Դա հաջող միտք էր՝ առաջարկել նրան մի կարգին տուն գնել իր հարազատների համար։ Նա էլի մի քանի րոպե սպասեց, ապա ասաց։

— Ուզեմն դու ինձ թույլ կտա՞ս այդ անել։

— Դա շատ լավ կլիներ,— ասաց Ջեննին։— Բայց հիմա անկարելի է։ Ես տանից գնալ չեմ կարող։ Հայրս կուզենա ճիշտն իմանալ, թե ուր եմ գնում ես։ Ի՞նչ կասեմ նրան։

— Իսկ ինչո՞ւ չասել, թե դու Նյու-Յորք ես գնում միսիս Բրայսբրիջի հետ,— առաջարկեց Լեսթերը։— Սրա դեմ ոչ ոք չի կարող առարկել, չէ՞։

— Այո, եթե տանը ճշմարտությունը չիմանան,— զարմացած նրան նայելով ասաց Ջեննին։— Իսկ եթե հանկարծ իմանա՞ն։

— Չեն իմանա,— հանգիստ պատասխանեց Լեսթերը։— Նրանք միսիս Բրայսբրիջի գործերը չգիտեն։ Քի՞չ տիրուհիներ են լինում, որոնք երկար ժամանակով տեղ գնալիս իրենց հետ տանում են սպասուհիներին։ Ուղղակի ասա, որ քեզ առաջարկել են գնալ, որ դու պետք է գնաս, և մենք կգնանք։

— Կարծում եք այդպես կարելի՞ է,— հարցրեց աղջիկը։

— Իհարկե,— պատասխանեց Լեսթերը։— Այստեղ ի՞նչ կա որ։

Քիչ մտածելուց հետո Ջեննին որոշեց, որ թերևս դա իրագործելի է։ Բայց հետո մտածեց, որ այդ մարդու հետ մոտիկություն անելը կարող է նորից իր համար մայրությամբ վերջանալ։ Ինչպիսի՞ ողբերգություն՝ կյանք տալ երեխայի... ո՛չ, ինքը չի կարող նորից այդպիսի բան անել, համենայն դեպս, ո՛չ այնպես հապճեպ, ինչպես առաջին անգամ։ Նա չէր կարող նրան պատմել Վեստայի մասին, բայց պետք է խոսեր այդ անհաղթահարելի խոչընդոտի մասին։

— Ես...— սկսեց նա և կանգ առավ չկարողանալով շարունակել։

— Դո՞ւ...— կրկնեց Լեսթերը։— Հետո՞։

— Ես...— և Ջեննին նորից լռեց։

Լեսթերին հիացնում էին նրա ամոթխածությունը, նրա քնքուշ շրթունքները, որոնք սիրտ չէին անում պետք եղած խոսքն ասել։

— Դե, ի՞նչ,— հարցրեց նա սիրտ տալով։— Դու պարզապես սքանչելի աղջիկ ես։ Վախենո՞ւմ ես ինձ ասել։

Ջեննիի ձեռքը դրված էր սեղանին։ Լեսթերը կռացավ և նրա ձեռքի վրա դրեց իր ուժեղ, թուխ ձեռքը։

— Ինձ ամենևին չի կարելի երեխա ունենալ,— վերջապես ասաց Ջեննին հայացքը ցած գցելով։

Լեսթերը սևեռուն նայում էր նրան և զգում, որ նրա հմայիչ անկեղծությունը մի արժանիք է, որ նա պահպանել է նույնիսկ այսքան դժվարին պայմաններում, կենսական կարևորագույն երևույթները պարզ ու անմիջականորեն ընդունելու նրա կարողությունը նրան բարձրացնում են իր աչքում։

— Դու արտասովոր աղջիկ ես, Ջեննի,— ասաց նա։— Ուղղակի հրաշք ես դու։ Բայց մի՛ վախեցիր։ Դա կարելի է կարգավորել։ Դու երեխա չես ունենա, քանի որ ինքդ չես ուզում, և հենց ես ինքս էլ չեմ ուզում։

Ջեննիի զարմացած ու ամոթից կարմրած դեմքը տարակուսանք էր արտացոլում։

— Այո՛, այո՛,— ասաց Լեսթերը։— Դու ինձ հավատում ես, չէ՞։ Ես գիտեմ, թե ինչ եմ ասում, դու ի՞նչ ես կարծում։

— Ա-այո,— կմկմալով պատասխանեց աղջիկը։

— Դե, ուրեմն։ Համենայն դեպս ես չեմ թողնի, որ քեզ մի վատ բան պատահի։ Ես քեզ կտանեմ այստեղից։ Եվ հետո, ես ամենևին էլ երեխա չեմ ուզում։ Հիմա նրանք ինձ ամենափոքր բավականություն անգամ չեն պատճառի։ Գերադասում եմ դա հետաձգել։ Բայց այդպիսի բան չի էլ լինի, թող դա քեզ չանհանգստացնի։

— Լավ,— հազիվ լսելի պատասխանեց Ջեննին։

Հիմա նա ոչ մի գնով չէր ցանկանա, որ իր հայացքը հանդիպի նրա հայացքին։

— Լսիր, Ջեննի,— ասաց Լեսթերը քիչ սպասելուց հետո։— Դու ինձ սիրում ես, չէ՞։ Մի՞թե ես կսկսեի խնդրել քեզ, եթե չսիրեի, ի՞նչ ես կարծում դու։ Ես ուղղակի գլուխս կորցրել եմ քեզ համար, սա զուտ ճշմարտություն է։ Ուղղակի հարբել եմ քո սիրով, ինչպես գինով կհարբեն։ Դու պետք է գաս ինձ հետ։ Պետք է գաս և այն էլ՝ շուտ։ Ես գիտեմ, խանգարողը քո հարազատներն են, բայց դա կարելի է հարթել։ Գնանք միասին Նյու-Յորք, իսկ հետո մի որևէ բան կմտածենք։ Ես կծանոթանամ քո հարազատների հետ։ Ես կձևացնեմ, թե սիրատածում եմ քեզ, ամեն ինչ կանեմ, միայն թե գնանք առանց հետաձգելու։

— Բայց հո հենց հիմա չէ՞,— հարցրեց Ջեննին համարյա վախեցած։

— Եթե կարելի է՝ վաղը։ Ամենաուշը՝ երկուշաբթի։ Դու կսարքես այդ։ Ի՞նչն է քեզ խանգարում։ Չէ՞ որ եթե միսիս Բրայսբրիջը քեզ առաջարկեր մեկնել, դու իսկույն կպատ-

բաստվեիր, և ոչ ոք ոչ մի խոսք չէր ասի քեզ։ Ճիշտ չե՞մ ասում։

— Այո,— մի պահ մտածելով պատասխանեց Ջեննին։

— Դե ուրեմն էլ ի՞նչ կա։

— Միշտ այնքան դժվար է, երբ ստիպված ես լինում սուտ խոսել,— մտախոհ խոսեց Ջեննին։

— Գիտեմ, բայց և այնպես դու կարող ես գալ, չէ՞։

— Գուցե դուք մի քիչ կսպասե՞ք,— հարցրեց Ջեննին։— Այնքան անսպասելի բան է սա։ Ես վախենում եմ։

— Ոչ մի օր սպասել չեմ կարող, անո՞ւշս։ Մի՞թե ինքդ չես տեսնում, որ այլևս սպասելու ուժ չունեմ։ Նայիր աչքերիս։ Կգնա՞նք։

— Լավ,— պատասխանեց աղջիկը տխուր, բայց և այնպես նրա սրտի խորքում այդ մարդու նկատմամբ քնքշանքի մի տարօրինակ զգացմունք շարժվեց։— Կգնանք։

ԳԼՈՒԽ XXIII

Մեկնումի համար ամեն ինչ հաջողվեց շատ ավելի հեշտ, քան կարելի էր սպասել։ Ջեննին որոշել էր ամբողջ ճշմարտությունը մորն ասել, իսկ հորը կարելի էր միայն ասել, թե միսիս Բրայսբրիջը գնում է և ուզում է, որ Ջեննին ուղեկցի իրեն։ Հայրը, իհարկե, կսկսի հարցուփորձ անել, բայց հաղիվ թե որևէ կասկած ծագի նրա մեջ։ Այդ օրը տուն վերադառնալիս նա Լեսթերի հետ մտավ ունիվերսալ խանութ, և Լեսթերը նրա համար գնեց մի սնդուկ, մի ճամպրուկ, ճանապարհորդական զգեստ և մի գլխարկ։ Իր հաղթանակով նա շատ հպարտ էր։

— Երբ Նյու-Յորք հասնենք, ես քեզ համար ավելի լավ բաներ կառնեմ,— ասաց նա։— Դու դեռ ինքդ էլ չգիտես քո գինը, բոլորը պիտի շուռ գան քեզ նայեն։

Նա կարգադրեց, որ գնումները դարսեն սնդուկի մեջ և ուղարկեն հյուրանոց, իր համարը։ Հետո Ջեննիի հետ պայմանավորվեց, որ երկուշաբթի օրը մեկնելուց առաջ նա կգա հյուրանոց և շորերը կփոխի։

Տուն վերադառնալով՝ Ջեննին մորը գտավ խոհանոցում, և նա, ինչպես միշտ, ուրախացավ աղջկան տեսնելով։

— Այսօր աշխատանքդ ծա՞նր էր,— գորովանքով հարցրեց նա։— Շատ հոգնած ես երևում։

— Ոչ,— ասաց Ջեննին,— հոգնած չեմ։ Բանն այդ չէ։ Պարզապես ես այնքան էլ լավ չեմ զգում ինձ։

— Ի՞նչ է պատահել որ։

— Ախ, մայրիկ, ես քեզ մի բան պիտի ասեմ։ Դա այնքան դժվար է որ...

Նա լռեց հարցական հայացքով մորը նայելով, ապա հայացքը հեռացրեց նրանից։

— Դե ասա, ի՞նչ է եղել,— անհանգստացած հարցրեց միսիս Գերհարդը։ Նրանց գլուխն արդեն այնքան շատ դժբախտություն էր եկել, որ խեղճ կինը ապրում էր շարունակ մի նոր դժբախտություն սպասելով։— Չլինի՞ տեղիցդ ես գրկվել։

— Ոչ,— պատասխանեց Ջեննին՝ ջանալով ցույց չտալ իր հուզմունքը,— բայց ուզում եմ այնտեղից դուրս գալ։

— Չի՛ կարող լինել,— գոչեց մայրը։— Բայց ինչո՞ւ։

— Ես գնում եմ Նյու-Յորք։

Մայրը զարմանքից աչքերը չռեց։

— Ինչո՞ւ այդպես հանկարծ։ Այդ ե՞րբ ես վճռել,— հարցրեց նա։

— Այսօր։

— Դու լո՞ւրջ ես ասում։

— Այո, մայրիկ։ Լսիր ինձ։ Ես ուզում եմ մի բան պատմել քեզ։ Դու հո գիտես, թե որքան ծանր է մեր կյանքը։ Միևնույն է, մենք ոչ մի կերպ չենք կարող մեր գործերը կարգի բերել։ Իսկ հիմա գտնվել է մի մարդ, որն ուզում է մեզ օգնել։ Նա ասում է, որ սիրում է ինձ և ուզում է, որ երկուշաբթի օրը իր հետ գնամ Նյու-Յորք։ Ես որոշել եմ գնալ։

— Ո՛չ, Ջեննի, ո՛չ մի պայմանով,— գոչեց մայրը։— Ինչպե՞ս ես ուզում նորից նույնպիսի քայլ անել։ Մտածիր հորդ մասին։

— Ես արդեն ամեն ինչի մասին մտածել եմ,— հաստա-

տակամ ասաց Ջեննին։— Այդպես ավելի լավ կլինի։ Նա լավ մարդ է, ես գիտեմ։ Եվ շատ փող ունի։ Նա ուզում է, որ ես իր հետ գնամ, և ես կգնամ։ Իսկ երբ վերադառնանք, նա մեզ համար մի նոր տուն է գնելու և ընդհանրապես կօգնի մեզ։ Դու հո ինքդ էլ գիտես, ոչ ոք ինձ հետ չի ամուսնանա։ Թող այդպես լինի։ Նա ինձ սիրում է։ Ես էլ նրան եմ սիրում։ Ինչո՞ւ չգնամ որ։

— Իսկ նա Վեստայի մասին գիտե՞,— զգուշությամբ հարցրեց մայրը։

— Ոչ,— մեղավորի տոնով պատասխանեց Ջեննին։— Ես կարծում եմ ավելի լավ է չասել նրան։ Ես կաշխատեմ Վեստային չխառնել այս բանին։

— Վախենում եմ, որ նոր փորձանքի կգաս, Ջեննի։ Մի՞թե կարծում ես, թե դա երբեք չի բացվի։

— Ես մտածել եմ, որ նա կապրի այստեղ, ձեզ հետ, մինչև դպրոց գնալու ժամանակը կգա,— ասաց Ջեննին։— Իսկ հետո երևի ես կկարողանամ որևէ տեղ ուղարկել նրան սովորելու։

— Այդ այդպես է,— համաձայնեց մայրը,— բայց գուցե ավելի լավ կլինի միանգամից ասել նրան։ Եթե դու նրան ճշմարտությունն ասես, նա քո մասին ավելի լավ կարծիքի կլինի։

— Բանն այդ չէ։ Բանը Վեստան է,— ջերմորեն ասաց Ջեննին։— Ես չեմ ուզում նրան խառնել այս բանի մեջ։

Մայրը գլուխն օրորեց։

— Որտե՞ղ ես ծանոթացել նրա հետ,— հարցրեց նա։

— Միսիս Բրայսբրիջի մոտ։

— Վաղո՞ւց է։

— Այո, մոտ երկու ամիս։

— Եվ դու ոչ մի անգամ ոչ մի խոսք չես ասել նրա մասին,— կշտամբեց նրան միսիս Գերհարդը։

— Ես չգիտեի, որ նա այդպես է վերաբերում ինձ,— մեղավորի տոնով ասաց Ջեննին։

— Բայց գուցե կսպասե՞ս։ Ինչո՞ւ նա առաջ մեզ մոտ չի գալիս,— հարցրեց մայրը։— Այն ժամանակ ամեն ինչ

ավելի պարզ կլինի։ Չէ՞ որ, միևնույն է, եթե դու գնաս, հայրը դարձարտությունը կիմանա։

— Ես ուզում եմ ասել, որ գնում եմ միսիս Բրայսբրիջի հետ։ Այն ժամանակ հայրիկը չի առարկի։

— Այո, թերևս,— մտախոհ համաձայնեց մայրը։

Նրանք լուռ իրար էին նայում։ Միսիս Գերհարդը փորձում էր իր երևակայության մեջ պատկերացնել այդ նոր զարմանալի մարդուն, որն այժմ մտել է Ջեննիի կյանքի մեջ։ Նա հարուստ է։ Նա ուզում է Ջեննիին տանել։ Նա ուզում է իրենց համար մի լավ տուն դնել։ Ա՜յ քեզ պատմություն։

— Եվ էլի ա՛յ ինչ տվեց նա ինձ,— ավելացրեց Ջեննին՝ ինչ-որ հոտառությամբ կռահելով մոր մտքերը։

Նա հանեց երկու հարյուր հիսուն դոլլար, որ պահված էր ծոցում, և դրեց միսիս Գերհարդի բուռը։

Մայրը զարմանքով հայացքը հառեց փողին։ Այդ կանաչ ու դեղին թղթերը կփրկեն ուտելիքի, հագուստի, ածուխի ու բնակարանի վարձի հոգսերից։ Եթե տանը շատ փող լինի, Գերհարդն այնքան էլ չի վշտանա, որ ձեռքերը վառվելու պատճառով աշխատել չի կարող։ Ջորջի, Մարթայի ու Վերոնիկայի համար լավ-լավ բաներ կգնեն, որ նրանք այնքա՞ն են ուզում։ Ջեննին կարգին կհագնվի, Վեստան կրթություն կստանա։

— Դու կարծում ես, որ նա երբևիցե կամուսնանա՞ քեզ հետ,— վերջապես հարցրեց մայրը։

— Չգիտեմ,— պատասխանեց Ջեննին։— Գուցե թե։ Ես գիտեմ միայն, որ նա ինձ սիրում է։

— Դե ինչ ասեմ,— մի պահ լռելուց հետո խոսեց միսիս Գերհարդը,— եթե դու ուզում ես հորդ ասել, որ գնում ես, ուրեմն մի հետաձգիր։ Առանց այն էլ նրան շատ տարօրինակ կթվա։

Ջեննին հասկացավ, որ հաղթանակն իրեն մնաց։ Հանգամանքների ուժը մորն ստիպեց հաշտվել եղածի հետ։ Նա վշտացած է, բայց և այնպես նրան արդեն թվում է, թե գուցե և այդ լավ կլինի։

— Ես քեզ կօգնեմ,— հառաչելով ասաց նա աղջկան։

Միսիս Գերհարդի համար հեշտ չէր սուտ խոսել, բայց նա սուտ խոսեց այնպիսի անբռնազբոսիկ տեսքով, որ ցրեց ամուսնու բոլոր կասկածները։ Նորությունը հայտնեցին նաև երեխաներին, բոլորն աշխույժ քննարկում էին այդ հարցը, իսկ երբ հետո Ջեննին էլ հորը հայտնեց այդ հերյուրանքը, ամեն ինչ բավական բնական ստացվեց։

— Երկա՞ր ժամանակով ես գնում,— հարցրեց հայրը։

— Մի երկու-երեք շաբաթով,— ասաց Ջեննին։

— Հաճելի ճանապարհորդություն է դա,— ասաց Գերհարդը։— Ես եղել եմ Նյու-Յորքում հազար ութ հարյուր քառասունչորս թվականին։ Այն ժամանակ դա մի շատ փոքրիկ քաղաք էր, այն չէր, ինչ հիմա է։

Հոգու խորքում նա շատ ուրախ էր, որ Ջեննիի բախտն այդպես բերել է։ Ինչպես երևում է, տիրուհին նրանից գոհ է։

Հասավ երկուշաբթի օրը։ Վաղ առավոտյան Ջեննին հրաժեշտ տվեց հարազատներին և գնաց «Դորնթոն» հյուրանոց, որտեղ նրան սպասում էր Լեսթերը։

— Ահա և դու եկար,— ուրախ գոչեց նա, Ջեննիին դիմավորելով կանանց հյուրասրահում։

— Այո,— պարզ պատասխանեց աղջիկը։

— Դու իմ ազգականուհին ես,— շարունակեց Լեսթերը։— Ես քեզ համար սենյակ եմ պատվիրել իմ սենյակի կողքին։ Հիմա մարդ կուղարկեմ բանալին բերելու, և դու շուրերդ կփոխես։ Երբ պատրաստ կլինես, ես քո սնդուկը կուղարկեմ կայարան։ Գնացքը մեկնում է ժամը մեկին։

Ջեննին գնաց հագնվելու, իսկ Լեսթերը, չիմանալով ինչպես ժամանակն սպանել, կարդում էր, ծխում և, վերջապես, նրա դուռը բախեց։ Ջեննին արդեն հագնվել էր և խոշոր դուռը բացեց։

— Դու չքնաղ ես,— ասաց Լեսթերը ժպտալով։

Աղջիկը հայացքը ցած դցեց, նրա հոգին ծանրաբեռնված էր և անհանգիստ։ Նա ստիպված էր եղել այնքան խորամանկել, սուտ խոսել, հուզվել, որպեսզի իր դերը խաղա. այս ամենը նրա համար հեշտ չէր եղել։ Նրա դեմքը հոգնած էր ու տառապած։

— Մի՞թե դու վշտացած ես,— հարցրեց Լեսթերը ուշադիր նայելով նրան։

— Ո-ոչ,— պատասխանեց աղջիկը։

— Դե, անուշս, հարկավոր չէ այդպես։ Ամեն ինչ լավ կլինի։

Նա գրկեց աղջկան ու համբուրեց, և նրանք ցած իջան։ Լեսթերը զարմացել էր, տեսնելով, թե որքան լավիկն է նա նույնիսկ այդ համեստ հագուստի մեջ, որը, սակայն, նրա հագածներից ամենալավն էր։

Նրանք արագ հասան կայարան։ Լեսթերը տեղերը նախապես էր պատվիրել, որպեսզի իրենք գան հենց ճիշտ ընացքի մեկնելու ժամանակ։ Նրանք նստեցին պուլմանյան վագոն, և Լեսթերին համակեց մեծագույն գոհունակության մի զգացմունք։ Կյանքը նրան վարդագույն էր երևում։ Ջեննին իր կողքին էր։ Ինքը հասել էր ցանկացածին։ Ի՞նչ լավ կլիներ, եթե ամեն բան այսպես հաջողվեր։

Գնացքը շարժվեց, և Ջեննին սկսեց մտախոհ դուրս նայել լուսամուտից։ Դուրսը փռված էին անծայրածիր դաշտերը՝ պաղ անձրևից փոնավ ու դեղնած, աշնանային մերկ անտառները, հարթ դաշտավայրում երևում էին մանրիկ ֆերմաներ՝ ցածրիկ տանիքով տնակներ, որոնք ասես ջանում էին ավելի ամուր կպչել գետնին։ Գնացքը սլանում էր մանրիկ գյուղերի մոտով. դրանք պարզապես գորշ ու դեղին խրճիթների խումբեր էին, որոնց տանիքները սևացել էին անձրևից։ Տնակներից մեկը Ջեննիին հիշեցրեց Գերհարդների հին տունը Կոլումբուսում։ Նա աչքերը թաշկինակով ծածկեց ու կամացուկ լաց եղավ։

— Դու լալի՞ս ես, Ջեննի,— հանկարծ ասաց Լեսթերը՝ դադարեցնելով ձեռքի նամակի ընթերցումը։— Կամա՞ց, կամա՞ց,— շարունակեց նա, տեսնելով, որ աղջիկն ամբողջ մարմնով դողում է։— Այդպես չի կարելի։ Խելացի եղիր։ Ի՞նչ օգուտ արցունքից։

Աղջիկը չէր պատասխանում, և Լեսթերն ակամա կարեկցեց այդ խոր, համր վշտին։

— Մի՛ լար, —հանգստացնում էր նա։— Ես ասացի չէ՞,

ամեն ինչ լավ կլինի։ Ոչ մի բանի մասին մի՛ անհանգստանա։

Ջեննին դժվարությամբ իրեն հավաքեց և սկսեց աչքերը սրբել։

— Պետք չէ այդպես հուզվել,— շարունակեց Լեսթերը։— Դրանից ոչ մի օգուտ չկա։ Ես հասկանում եմ, քեզ համար դժվար է տանից հեռանալ, բայց արցունքը չի օգնի։ Եվ հո մշտապես չես հեռանում։ Շուտով կվերադառնաս։ Եվ դու էլ ինձ սիրում ես, չէ՞, անուշս։ Ես քեզ համար մի բան նշանակո՞ւմ եմ։

— Այո,— պատասխանեց Ջեննին աշխատելով ժպտալ։

Լեսթերը նորից սկսեց նամակները կարդալ, իսկ Ջեննին մտածում էր Վեստայի մասին։ Նա իրեն վատ էր զգում այն գիտակցությունից, որ գաղտնիք է պահել այդ մարդուց, որն արդեն իր համար թանկ է դարձել։ Նա գիտեր, որ պետք է Լեսթերին պատմի երեխայի մասին, բայց հենց միայն այս միտքը նրա սիրտը դող էր գցում։ Գուցե թե երբևիցե այնքան քաջություն կունենա, որ կխոստովանի նրան։ «Ես պետք է նրան ասեմ,— հուզմունքով մտածում էր նա. հանկարծ նրա մեջ արթնացավ այդ պարտքի գիտակցության ամբողջ լրջությունը։— Եթե ես հիմա չխոստովանեմ, և մենք սկսենք միասին ապրել, իսկ հետո նա ամեն ինչ իմանա, երբեք չի ների ինձ։ Նա կարող է ինձ վռնդել, իսկ ո՞ւր կգնամ ես։ Ես այլևս տուն չունեմ։ Այն ժամանակ ինչպե՞ս կպահեմ Վեստային»։

Նա շուտ եկավ և Լեսթերին նայեց սոսկալի նախազգացումով, բայց նրա առաջ նստած էր սոսկ մի պատկառատես, փափկասուն տղամարդ՝ խորասուզված նամակների ընթերցանության մեջ. ոչ նրա նոր սափրված վարդագույն այտերին, ոչ ամբողջ տեսքում, որը գոհունակություն էր շնչում, չկար ցասումնալից Նեմեզիսը* հիշեցնող ոչ մի բան։ Հազիվ էր Ջեննին իր հայացքը հեռացրել, երբ իր հերթին նրան նայեց Լեսթերը։

---

* Նեմեզիս — հին հունական վրիժառության աստվածուհին (Ս. Թ.)։

— Դե՛, ինչպե՞ս, լացեցի՞ր քո բոլոր մեղքերը,— ուրախ հարցրեց նա։

Ջեննին պատասխանեց մեղմ ժպիտով։ Ակնարկն ակամա ճիշտ նշանակետին էր դիպել։

— Հույս ունեմ՝ այո,— ասաց նա։

Լեսթերն սկսեց խոսել ուրիշ բաների մասին, իսկ Ջեննին նայում էր լուսամուտից և մտածում, թե ինչպես հիմա կուզենար ասել նրան ճշմարտությունը, բայց, ահա, չի ստացվում։ «Չի կարելի երկար հետաձգել»,— մտածում էր նա մխիթարելով իրեն այն մտքով, որ գուցե շուտով սիրտ կանի ու նրան կպատմի ամեն ինչ։

Մյուս օրը նրանք հասան Նյու-Յորք, և Լեսթերի առաջ մի լուրջ հարց ծառացավ. որտե՞ղ իջևանել։ Նյու-Յորքը մեծ քաղաք է, հազիվ թե որևէ մի ծանոթ հանդիպի այստեղ, բայց Լեսթերը գերադասում էր ոչիսկ չանել։ Դրա համար էլ նա կառապանին պատվիրեց քշել ամենաշքեղ հյուրանոցներից մեկը և մի քանի սենյակից բաղկացած համար վերցրեց, որտեղ նրանք մնալու էին երկու-երեք շաբաթ։

Այն պայմանները, որոնց մեջ այժմ ընկել էր Ջեննին, այնքան արտասովոր էր, այնքան կուրացուցիչ, որ նրան թվում էր, թե ինքը փոխադրվել է ինչ-որ մի նոր աշխարհ։ Քեյնը չէր սիրում էժանագին ճոճճացող շքեղություն։ Նա միշտ իրեն շրջապատում էր պարզ ու գեղեցիկ իրերով։ Նա միանգամից հասկացավ, թե ինչ է հարկավոր Ջեննիին և նրա համար ամեն ինչ ընտրեց հոգատարությամբ և ճաշակով։ Եվ Ջեննին, որպես իսկական կին, սրտանց ուրախանում էր գեղեցիկ հագուստներով և զարդերով, որ առատորեն տվել էր նրան Լեսթերը։ Մի՞թե սա Ջեննի Գերհարդն է, լվացարարուհու դուստրը, հարցնում էր նա ինքն իրեն, հայելու մեջ տեսնելով իր բարեկազմ կերպարանքը կապույտ թավշե հագուստով, որի օձիքն ու թևքերը զարդարված էին ֆրանսիական ոսկեգույն ժանյակներով։ Մի՞թե այս իր ոտքերն էին թեթև, գեղեցիկ կոշիկների մեջ, որոնք տասը դոլլար արժեն, այս ի՞ր ձեռքերն են, որ շոշշոզում են թանկագին ակնեղենի մեջ։

Ուղղակի հրաշք է, որ իր վրա այսպիսի հարստություն է թափվել։ Եվ Լեսթերը խոստացել է, որ նրա մորն էլ որոշ բան բաժին կընկնի։ Արցունքով լցվեցին Ջեննիի աչքերը, երբ նա մտածեց դրա մասին։ Սիրելի՜, թանկագի՜ն մայրիկ։

Լեսթերին մեծ բավականություն էր պատճառում, երբ նրան այնպես էր հագցնում, որ իրեն վայել դույզ լինի։ Նա գործի էր դրել իր բոլոր ընդունակությունները, և արդյունքն իր ամենահամարձակ սպասումից էլ գերազանցեց։ Միջանցքներում, ռեստորաններում, փողոցում մարդիկ շուռ էին գալիս և հայացքով ուղեւորում նրա ուղեկցուհուն։

— Ի՜նչ չքնաղ կին է,— լսում էր նա ամեն կողմից։

Չնայած Ջեննիի դրությունն այսպես հիմնովին փոխվել էր, նա չէր շլացել և չէր կորցրել առողջ բանականությունը։ Նա այնպիսի զգացմունք ուներ, ասես կյանքը իր բարիքները միայն ժամանակավորապես է թափել իր վրա, իսկ հետո նորից կխլի։ Ճշմիմ անափառությունը հատուկ չէր նրան։ Լեսթերը համոզվել էր դրանում նրան գիտելով։

— Դու հիանալի կին ես,— ասում էր նա։— Դու դեռ ավելի կփայլես։ Մինչև այժմ կյանքը քեզ երես չի տվել։

Նրան անհանգստացնում էր այն միտքը, թե այս նոր կապը ինչպե՞ս բացատրի իր հարազատներին, եթե նրանք որևէ բան իմանան։ Եթե տուն վարձի Չիկագոյում կամ Սենտ-Լուիսում (որի մասին արդեն մտածել էր), կհաջողվի՞ արդյոք գաղտնի պահել այս։ Եվ մեկ էլ արդյոք ինքն ուզո՞ւմ է գաղտնիք դարձնել այդ։ Նա համարյա համոզված էր, որ Ջեննիին իսկապես, անկեղծորեն սիրում է։

Երբ վերադարձի ժամանակը եկավ, Լեսթերն սկսեց Ջեննիի հետ միասին քննարկել հետագա անելիքների ծրագիրը։

— Աշխատիր ինձ հորդ ներկայացնել որպես ծանոթի,— ասում էր նա։— Այդպես հեշտ կլինի։ Ես կգամ ձեզ մոտ։ Եվ հետո, երբ դու նրան կասես, որ մենք ուզում ենք ամուսնանալ, նա չի զարմանա։

Ջեննին մտածեց Վեստայի մասին և ներքուստ ցնցվեց։ Բայց, դուցե, կհաջողվի՞ հորը համոզել, որ բան չասի։

Լեսթերը հեռատեսաբար Ջեննիին առաջարկել էր Քլիվ-

լենդի իր հին հագուստը պահել, որպեսզի կարողանա նրանով էլ տուն գնալ։

— Մյուս իրերի մասին մի անհանգստացիր,— ասաց նա։— Ես սրանք կպահեմ, մինչև որ մենք ուրիշ կերպ կտեղավորվենք։

Ամեն ինչ կարգավորվեց շատ հեշտ ու հասարակ. Լեսթերը հիանալի ստրատեգ էր։

Քանի դեռ նրանք Նյու-Յորքում էին, Ջեննին համարյա ամեն օր նամակ էր գրում տուն և այդ նամակների մեջ մի կարճ երկտող էր գնում, որոնք միայն մոր համար էին։ Մի անգամ նա հայտնել էր, թե Լեսթերն ուզում է իրենց տանը լինել, և միսիս Գերհարդին խնդրել էր հորը նախապատրաստել դրան։ Պետք էր պատմել, որ Ջեննին հանդիպել է մի մարդու, որը սիրում է նրան։ Ջեննին գրում էր նաև Վեստայի հետ կապված դժվարությունների մասին, և մայրն իսկույն սկսեց ծրագրեր կազմել, թե Գերհարդին ինչպես ստիպի ոչինչ չասել։ Հարկավոր է, որ այս անգամ ամեն ինչ հարթ անցնի։ Հարկավոր է Ջեննիին իր բախտը դասավորելու հնարավորություն տալ։ Վերջապես Ջեննին եկավ, և բոլորն ուրախացան։ Հասկանալի է, նա չէր կարող վերադառնալ նախկին աշխատանքին, բայց միսիս Գերհարդն ամուսնուն բացատրեց, թե միսիս Բրայսբրիջը Ջեննիին երկու շաբաթվա վարձ է տվել, որպեսզի նա իր համար ավելի լավ տեղ գտնի ավելի բարձր ռոճիկով։

ԳԼՈՒԽ XXIV

Ժամանակավորապես կարգավորելով Գերհարդների գործերը և իր փոխհարաբերությունները նրանց հետ, Քեյնը վերադարձավ Ցինցիննատի՝ իր պարտականությունները կատարելու։ Նա անկեղծորեն հետաքրքրվում էր վիթխարի ձեռնարկության կյանքով, որը քաղաքի ծայրամասում ամբողջ երկու փողոց էր զբաղեցնում, և ֆիրմայի բոլոր հաջողություններն ու հեռանկարները նրա համար նույնքան սրտին մոտ բաներ

էին, որքան հոր և եղբոր համար։ Նրան դուր էր գալիս իրեն զգալ այդ վիթխարի և շարունակ աճող ձեռնարկության մի անհրաժեշտ մասնիկը։ Երբ երկաթուղագծերում նա ապրանքատար վագոնի էր հանդիպում «Քեյն ընկերություն, Ցինցիննատի» մակագրությամբ կամ զանազան քաղաքներում խոշոր խանութների լուսամուտների ետևը իրենց ֆիրմայի արտադրած տեսակ-տեսակ կառքեր էր տեսնում, ջերմ ու հրճվալից գոհունակություն էր զգում։ Դե հո կատակ բան չէ՝ լինել այդպիսի հուսալի, հարգարժան ու գովական ձեռնարկության ներկայացուցիչ։ Այն ամենը հիանալի էր, բայց այժմ Լեսթերի անձնական կյանքում սկսվել էր մի նոր ժամանակաշրջան. կարճ ասած, այժմ երևան էր եկել Ջեննին։ Հայրենի քաղաքը վերադառնալիս նա գիտակցում էր, որ այդ կապը կարող է անհաճո հետևանքներ ունենալ։ Նա երկյուղ էր կրում, թե դրան ինչպես կվերաբերվի հայրը, իսկ գլխավորը՝ պետք էր մտածել եղբոր մասին։

Ռոբերտը պաղ ու բծախնդիր մարդ էր, օրինակելի գործարար, անբասիր և՛ հասարակության մեջ, և՛ անձնական կյանքում։ Նա երբեք չէր անցնում օրինականացված կարգի խստորեն հաստատված սահմանները, աչքի չէր ընկնում կարեկցությամբ կամ մեծահոգությամբ և ըստ էության ընդունակ էր ամեն տեսակ խարդախության, որը կարող էր ինքն իր համար արդարացնել մի որևէ բարետես պատճառաբանությամբ կամ թեկուզ անհրաժեշտությամբ։ Թե այդ ժամանակ ինչպես էր դատում նա՝ Լեսթերը չգիտեր. նա չէր կարող ըմբռնել տրամաբանության բոլոր խորամանկությունները, որոնք գործարարի դաժան արարքները հաշտեցնում են բարոյականության խստագույն կանոնների հետ, բայց Ռոբերտը կարողանում էր դրանք զուգակցել իրար։ «Նա քարոզում է որպես շոտլանդացի պրեսբիտերական* և շահի հոտն առնում է, ինչպես ասացի»,— մի անգամ մեկի հետ խոսելիս այսպես էր ասել իր եղբոր մասին Լեսթերը, և դա միանգամ-

* Պրեսբիտերականություն — բողոքական եկեղեցու մի դավանություն Անգլիայում (Ս. Թ.)։

մայն ճիշտ բնորոշում էր։ Եվ այսուամենայնիվ նա չէր կարողանում ոչ Ռոբերտին ցած գցել իր դիրքերից, ոչ էլ վեճի մեջ մտնել նրա հետ, որովհետև մեծամասնության կարծիքը եղբոր կողմն էր։ Ռոբերտը վարվում, թերևս և դատում էր հենց այնպես, ինչպես ընդունված է։

Արտաքուստ եղբայրներն ամենամտերմական հարաբերությունների մեջ էին, ներքուստ՝ խորապես խորթ միմյանց։ Ռոբերտն ընդհանրապես վատ չէր վարվում եղբոր հետ, բայց ֆինանսական հարցերը հասկանալու նրա ընդունակությանը չէր վստահում։ Մյուս կողմից էլ եղբայրները խիստ տարբեր մարդիկ էին և կյանքին միատեսակ նայել չէին կարող։ Լեսթերը սրտի խորքում արհամարհում էր եղբորը, նրա համար, որ սա պաղարյուն կերպով ու համառորեն ամենազոր դոլլարների ետևից էր ընկել։ Իսկ Ռոբերտը համոզված էր, որ Լեսթերի թեթևամտությունը դատապարտելի է, և վաղ թե ուշ նրան փորձանքի կհասցնի։ Գործի մեջ նրանք լուրջ ընդհարում չէին ունենում, քանի որ մինչև այժմ ամեն ինչ կառավարում էր հայրը, բայց միշտ էլ մանր տարաձայնություններ ունենում էին, և դժվար չէր հասկանալ, թե քամին որտեղից է փչում։ Լեսթերն այն կարծիքին էր, որ առևտրական գործերը պետք է վարել բարեկամական հարաբերությունների, անձնական ծանոթությունների ու զիջողությունների հիման վրա։ Ռոբերտը գտնում էր, որ պետք է խստագույն գիծ վարել, արտադրության ծախսերն իջեցնել և այնքան էժան վաճառել, որ ամեն մի մրցակցություն խեղդվի։

Ներունի գործարանատերը միշտ աշխատում էր խաղաղություն ու հանդարտություն ստեղծել, բայց նախատեսում էր, որ երբևիցե մեծ վեճ է բռնկելու, և այն ժամանակ որդիներից որևէ մեկը կամ գուցե և երկուսն էլ ստիպված կլինեն դուրս գալ գործից։ «Հարկավոր է, որ դուք ավելի հաշտ լինեք իրար հետ»,— հաճախ ասում էր նա։

Լեսթերին անհանգստացնում էր մի բան ևս. հոր հայացքը ամուսնության վերաբերյալ, ավելի ճիշտ, իր՝ Լեսթերի ամուսնության վերաբերյալ։ Արչիբալդ Քեյնը շարունակ ասում էր, որ Լեսթերը պետք է ամուսնանա և որ նա մեծ

սխալ է գործում ամուսնությունը հետաձգելով։ Մյուս բոլորը, բացի Լուիզայից, բարեհաջող ամուսնացել կամ մարդու են գնացել։ Ինչո՞ւ նա, իր սիրելի որդին չպիտի հետևի նրանց օրինակին։ Ծերունին համոզված էր, որ դա ամեն կողմից վնասում է Լեսթերին։

— Ընդունված բան է, որ քո դիրքն ունեցող մարդն ամուսնացած լինի,— հաճախ ասում էր նա որդուն։— Դա քեզ ավելի պատկառելի կդարձնի մարդկանց աչքում։ Մի լավ կին գտիր քեզ համար և ընտանիք կազմիր։ Ի՞նչ պիտի անես դու անտուն, անզավակ, երբ իմ հասակին դառնաս։

— Ինչո՞ւ որ։ Եթե համապատասխան աղջիկ հանդիպի, կամուսնանամ,— պատասխանում էր Լեսթերը։— Բայց առայժմ այդպիսին չի հանդիպել։ Ուրեմն ի՞նչ անեմ ես քո կարծիքով։ Ով էլ պատահի հետն ամուսնանա՞մ։

— Չէ, իհարկե, բայց քի՞չ կան լավ աղջիկներ։ Եթե ցանկանայիր, դու քեզ համապատասխան կին կգտնեիր։ Փեյսը, օրինակ, ինչո՞վ է վատ։ Նա միշտ էլ քեզ դուր է եկել։ Այդպես չպետք է շարունակել, Լեսթեր, դա լավ բանի չի հասցնի։

Որդին ի պատասխան միայն ժպտում էր։

— Լավ, հայրիկ, այս թողնենք։ Երբևիցե երևի խելքի կգամ։ Բայց մարդ որպեսզի ջուր խմի, նախ պետք է ծարավ զգա։

Ծերունին միաժամանակ զիջում էր, բայց դա նրա ցավոտ տեղն էր։ Նա այնքա՜ն էր ուզում, որ որդին դառնա ծանրակշիռ, իսկական գործարար մարդ։

Լեսթերը հասկանում էր, որ իրերի այս դրությունը իրեն թույլ չի տա իր հարաբերությունները Ջեննիի հետ կառուցել շատ թե քիչ հաստատուն հիմքի վրա։ Նա մանրամասնորեն գործողությունների ծրագիր մշակեց։ Անկասկած ինքը Ջեննիից չի հրաժարվի, ինչ ուզում է լինի։ Բայց պետք է զգուշություն պահպանել։ Չպետք է իզուր տեղը ռիսկի դիմել։ Բերել նրան Ցինցիննատի՞։ Բայց ի՞նչ աղմուկ կբարձրանա, եթե երբևիցե այդ գործը բացվի։ Նրան տեղավորել քաղաքից դուրս, մի կոկիկ տնակո՞ւմ։ Իհարկե, հարազատների մեջ վաղ

թե ուշ կասկած կծագի։ Իր բազմաթիվ ուղևորությունների ժամանակ իր հետ վերցնե՞լ նրան։ Առաջին անգամ ՆյուՅորք գնալը հաջող անցավ։ Բայց մի՞շտ այդպես կլինի։ Նա նորից ու նորից խորհում էր սրա մասին։ Դժվարությունները միայն զրգռում էին նրան։ Վերջ ի վերջո գուցե ամենահարմար տեղը որևէ մի ուրիշ քաղաքն է. Սենտ-Լուիսը, Չիկագոն կամ Պիտսբուրգը։ Նա հաճախ էր եղել այդ քաղաքներում, մանավանդ Չիկագոյում։ Ի վերջո նա որոշեց Ջեննիին տեղավորել Չիկագոյում։ Նա միշտ էլ կարող է որևէ առիթով այցելել այնտեղ և դա ընդամենը մեկ գիշերվա ճանապարհ է։ Այո՛, Չիկագոն ամենից լավն է։ Այդպիսի խոշոր, աշխույժ եռուզեռով քաղաքում դժվար չէ հետքը կորցնել։ Երկու շաբաթ Ցինցիննատիում մնալուց հետո Լեսթերը Ջեննիին գրեց, որ շուտով կգա Քլիվլենդ, աղջիկը պատասխանեց, թե նա կարող է գալ իրենց տուն։ Լեսթերի մասին նա հորն ասել է։ Նա անմտություն էր համարել տանը մնալը և ծառայության է մտել մի խանութում շաբաթական չորս դոլլարով։ Լեսթերն այս կարգալով ժպտաց, բայց նրա եռանդն ու ազնվությունը դուր եկավ նրան։ «Կեցցե՛ նա,— ասաց Լեսթերն ինքընիրեն։— Ես դեռ այդպիսի աղջիկ չեմ տեսել»։

Առաջին իսկ շաբաթ օրը նա եկավ Քլիվլենդ, մտավ այն խանութը, որտեղ ծառայում էր Ջեննին, և պայմանավորվեց երեկոյան հանդիպել նրան։ Նա ցանկանում էր, որ որքան կարելի է շուտ վերջանա իրեն որպես Ջեննիի երկրպագու ներկայացնելը։ Գերհարդների տան խղճուկությունը և նրանց աչքի զարնող աղքատությունը համարյա ղղվանք էին առաջացնում Լեսթերի մեջ, բայց Ջեննին ինքը նրան թվում էր նույնքան չքնաղ, ինչպես միշտ։ Նա մի քանի բոպե նստեց սեղանատանը, ապա ներս մտան Գերհարդն ու իր կինը՝ նրան ողջունելու, բայց Լեսթերը համարյա ոչ մի ուշադրություն չդարձրեց նրանց վրա։ Մերունի գերմանացին նրան շատ հասարակ մարդ թվաց. այդպիսիներին իր հոր գործարանում հարյուրներով էին վարձում ամենահամեստ պաշտոնի։ Մի քիչ դեսից-դենից խոսելուց հետո Լեսթերը Ջեննիին առաջարկեց գնալ զբոսանքի։ Ջեննին գլխարկը ծածկեց, և

նրանք դուրս գնացին։ Բայց իրականում նրանք գնացին Լեսթերի վարձած բնակարանը, որտեղ առայժմ պահվում էին Ջեննիի նոր զգեստները։ Ջեննին վերադարձավ երեկոյան ժամը ութին, և տնեցիները դրա մեջ ոչ մի վատ բան չտեսան։

ԳԼՈՒԽ XXV

Մի ամիս անց Ջեննին հայտնեց, թե Լեսթերն ուզում է իր հետ ամուսնանալ։ Հասկանալի է, նրա այցելությունները հող էին պատրաստել, և դա բոլորին բավական բնական թվաց։ Միայն Գերհարդն էր, որ ասես մի քիչ կասկածում էր։ Նրա համար պարզ չէր, թե դրանից ինչ կստացվի։ Գուցե և ամեն ինչ լավ կլինի, Լեսթերը կարծես, իրոք որ վատ մարդ չէ, և վերջ ի վերջո ինչո՞ւ պիտի նա չսիրի Ջեննիին։ Չէ՞ սրանից առաջ Բրենդերը կար։ Եթե Միացյալ Նահանգների սենատորը կարող էր սիրահարվել նրան, ինչո՞ւ նույնը չի կարող լինել մի գործարանատիրոջ տղայի հետ։ Մնում է միայն մեկ խոչընդոտ՝ երեխան։

— Նա Վեստայի մասին ասե՞լ է նրան,— հարցրեց Գերհարդը կնոջը։

— Դեռ ոչ,— պատասխանեց միսիս Գերհարդը։

— Դեռ ո՞չ, դեռ ո՞չ։ Միշտ մի ինչ-որ բան պակաս։ Դու կարծում ես նա կուզենա՞ ամուսնանալ նրա հետ, եթե իմանա։ Ահա թե ինչ է ստացվում, երբ աղջիկն իրեն վատ է պահում։ Հիմա նա պիտի դուրս պրծնելու ճանապարհ փնտրի ղողի պես։ Երեխան նույնիսկ մի ազնիվ անուն չունի։

Գերհարդը նորից քիթը խրեց լրագրի մեջ, բայց տխուր մտքերը հաղթում էին նրան։ Նա գտնում էր, որ իր կյանքը բոլորովին անհաջող եղավ և միայն հույս ուներ գեթ այնքան լավանալ, որ կարելի լինի մի որևէ գործ գտնել, ասենք թեկուզ պահակի տեղ։ Նա ուզում էր հեռու լինել այս բոլոր խորամանկություններից ու խաբեություններից։

Մի երկու շաբաթ անց Ջեննին մորը խոստովանեց, որ Լեսթերը նամակով իրեն կանչում է Չիկագո։ Նա այնքան էլ

առողջ չէ և Քլիվլենդ գալ չի կարող։ Մայրն ու աղջիկը Գերհարդին ասացին, որ Ջեննին դնում է միստր Քեյնի հետ պսակվելու։ Գերհարդը բորբոքվեց, և նրա բոլոր կասկածները նորից արթնացան։ Բայց նրան մնում էր միայն փնթփընթալ. այս ամբողջ պատմությունը լավ վախճան չի ունենա, սրանում նա միանգամայն համոզված էր։

Հասավ մեկնելու օրը, և Ջեննին ստիպված եղավ գնալ՝ առանց հորը հրաժեշտ տալու։ Գերհարդը մինչև երեկո քաղաքում շրջում էր աշխատանք գտնելու համար, և աղջիկն ստիպված եղավ կայարան գնալ դեռ նա չեկած։

— Ես նրան այնտեղից կգրեմ,— ասաց Ջեննին։

Նա նորից ու նորից համբուրեց աղջկան։

— Լեսթերը շուտով մեզ համար սրանից ավելի լավ տուն կվարձի,— ուրախ-ուրախ ասում էր նա։— Նա ուզում է, որ մենք տեղափոխվենք։

Եվ ահա գիշերային գնացքը նրան տանում է Չիկագո։ Վերջացավ նախկին կյանքը և սկսվում է նորը։

Հետաքրքիր է, որ թեև Լեսթերի ողորմածությամբ ընտանիքն այժմ այնքան փողի կարիք չէր զգում, երեխաներն ու Գերհարդը ոչինչ չէին նկատում։ Միսիս Գերհարդն առանց դժվարության խաբում էր ամուսնուն, գնելով միայն առաջին անհրաժեշտության առարկաներ և առայժմ սիրտ չէր անում որևէ շռայլություն անել, որ հիմա կարելի էր թույլատրել իրեն։ Նրան վախն էր զսպում։ Բայց Ջեննին մի քանի օր Չիկագոյում մնալուց հետո մորը գրեց, թե Լեսթերը պնդում է, որ իրենք մի ուրիշ տուն փոխադրվեն։ Նամակը ցույց տվին Գերհարդին, որը հենց միայն աղջկա վերադարձին էր սպասում, որ մի լավ կռիվ սարքի։ Նա հոնքերը կիտեց, բայց չգիտես ինչու այդ առաջարկությունը նրան թվաց մի վկայություն, որ ամեն ինչ կարգին է։ Եթե Քեյնը ամուսնացած չլիներ Ջեննիի հետ, ինչո՞ւ պիտի օգներ նրա ընտանիքին։ Երևի նրանք իսկապես բարեհաջող ամուսնացել են։ Երևի Ջեննին իսկապես բարձր դիրքի է հասել և այժմ կարող է հարաղատ-

ներին օգնել։ Գերհարդը համարյա պատրաստ էր մեկ անգամ ընդմիշտ ամեն ինչ ներել նրան։

Այսպես ուրեմն, նոր տան հարցը լուծված էր, և Ջեննին վերադարձավ Քլիվլենդ, որպեսզի տեղափոխվելիս մորն օգնի։ Նրանք միասին շրջում էին քաղաքում, որ մի հաճելի, խաղաղ թաղ գտնեն և, վերջապես, հարմար տեղ գտան։ Ամսական երեսուն դոլլարով վարձեցին ինը սենյակից բաղկացած մի տուն՝ իր բակով։ Կահավորեցին ինչպես հարկն է. գնեցին սեղանատան, հյուրասենյակի հարմարավետ կահույք, գեղեցիկ աթոռներ, բազկաթոռներ, մահճակալներ և ամեն բան, ինչ հարկավոր էր ամեն մի սենյակի։ Խոհանոցն ամեն հարմարություն ուներ, նույնիսկ վաննա կար, մի շքեղություն, որ Գերհարդները առաջ երբեք չէին տեսել։ Մի խոսքով, տունը շատ լավն էր, թեպետև համեստ, և Ջեննին ուրախ էր, որ հիմա ծնողների տեղը լավ ու հարմարավետ է լինելու։

Երբ տեղափոխվելու ժամանակը եկավ, միսիս Գերհարդն ուրախությունից ուղղակի խելքը թռցրել էր. չէ՞ որ այդ իր երազանքն էր կատարվում։ Երկար տարիներ, ամբողջ իր կյանքում նա սպասում էր, և ահա ուզածին հասավ։ Նոր տուն, նոր կահույք, տեղը լայն, իրերը՝ հիանալի, որպիսիք նա երազում էլ չէր տեսել, էլ ի՞նչ էր ուզում։ Նոր մահճակալներին, սեղաններին, պահարաններին և մյուս իրերին նայելիս նրա աչքերը փայլում էին ուրախությունից։

— Աստվա՞ծ իմ, ի՞նչ հիանալի է,— գոչում էր նա։— Ի՞նչ գեղեցիկ է, չէ՞։

Ջեննին գոհունակ ժպտում էր, ջանալով հուզմունքը թաքցնել, բայց նրա աչքերը շուտ-շուտ արցունքով էին լցվում։ Նա այնպե՞ս էր ուրախացել մոր համար։ Պատրաստ էր Լեսթերի ոտքերը համբուրելու, որ նա այդքան բարի է իր հարազատների նկատմամբ։

Այն օրը, երբ կահույքը բերին, միսիս Գերհարդը, Մարթան ու Վերոնիկան իսկույն սկսեցին դասավորել ու կարգի բերել։ Ընդարձակ սենյակներ, բակում ձմեռային ամայություն, բայց, իհարկե, գարնանն այնտեղ այնքա՞ն լավ ու

կանաչ կլինի, նոր հիանալի կահույք, և այս ամենը բոլորին ցնծություն էր պատճառում։ Որքա՜ն գեղեցիկ է, որքա՜ն ընդարձակ։ Ջորջը ման էր գալիս նոր զորգերի վրա, Բասսը քննադատաբար էր նայում կահույքին։

— Փառավոր է,— ասաց նա վերջապես։

Միսիս Գերհարդը թափառում էր տանը ինչպես երազում։ Նրա հավատը չէր գալիս, որ ինքն իսկապես այդ հիանալի ննջարանների, գեղեցիկ հյուրասենյակի և սեղանատան տիրուհին է։

Գերհարդը վերջինը եկավ։ Որքան էլ աշխատում էր, նրան չէր հաջողվում թաքցնել իր հիացմունքը։ Սեղանատանը սեղանի վերևը կախված կլոր, փայլատ լուսամփոփի տեսքը վերջին կաթիլն էր.

— Մի տես է՛, գա՜ղ,— ասաց Գերհարդը։

Թավ հոնքերի տակից նա մռայլորեն նայեց շուրջը. ոտքերի տակի զորգին, բացովի կաղնե սեղանին, որ ծածկված էր սպիտակ սփռոցով, վրան շարված նոր-նոր ափսեներ, նայեց պատերին կախված նկարներին, և գլուխն օրորեց։

— Թո՛ւ, գրողը տանի։ Այ լավ է հա՜,— ասաց նա։— Շա՜տ լավ է։ Այո՛, շա՜տ լավ։ Պետք է զգույշ լինել, որ ոչինչ չկոտրվի։ Բավական է, որ իրը չանգռեցիր, արդեն նրա վերջն է։

Այո, նույնիսկ Գերհարդը գոհ էր։

ԳԼՈՒԽ XXVI

Իմաստ չունի շարքով պատմել այդ երեք տարիների բոլոր անցքերը, նկարագրելով, թե ինչպես ընտանիքը ծայրահեղ կարիքից աստիճանաբար անցավ համեմատաբար կայուն վիճակի, որ, իհարկե, հիմնված էր Ջեննիի ակներև բարեհաջողության և նրա հեռավոր ամուսնու մեծահոգության վրա։ Ժամանակ առ ժամանակ երևում էր և ինքը՝ Լեսթերը, այդ պատկառելի գործարարը, որ գործով լինում էր նաև Քլիվլենդում։ Երբեմն նա իջևանում էր Գերհարդների մոտ, որտեղ նրան ու Ջեննիին միշտ երկրորդ հարկում սպասում էին եր-

կու լավագույն սենյակները։ Մեկ-մեկ էլ նա Ջեննիին կանչում էր հեռագրով, և նա շտապ գնում էր Չիկագո, Սենտ-Լուիս կամ Նյու-Յորք։ Ամենից ավելի Լեսթերը սիրում էր սենյակներ վարձել մոդայիկ կուրորտներից մեկում՝ Հոթ-Սփրինգսում, Մաունթ-Քլեմենսում կամ Սարատոգում, և մի երկու շաբաթ ժամանակ անցկացնել Ջեննիի հետ ամուսիններ-ի անվան տակ։ Լինում էր նաև, որ Լեսթերը Քլիվլենդ էր գալիս ընդամենը մեկ օրով՝ Ջեննիի հետ տեսնվելու համար։ Նա միշտ գիտակցում էր, որ բավականին դժվարին դրության ամբողջ ծանրությունը Ջեննիի ուսերին է գցում, բայց չէր պատկերացնում, թե հիմա ինչպես կարելի է ուղղել այդ։ Եվ արդյոք պե՞տք էր ուղղել։ Նրանց համար այսպես էլ վատ չէր միասին լինել։

Գերհարդների ընտանիքում այս ամենի նկատմամբ շատ յուրահատուկ վերաբերմունք էր ստեղծվել։ Սկզբում, ինչ էլ լիներ, դրությունը բավական բնական էր թվում։ Ջեննին ասել էր, որ ինքն ամուսնացել է։ Նրա ամուսնական վկայականը ոչ ոք չէր տեսել, բայց նա այդպես էր ասել, և իսկապես, նա իրեն պահում էր ճիշտ ինչպես ամուսնացած կին։ Բայց և այնպես նա երբեք չէր գնացել Ցինցիննատի, որտեղ ապրում էր Լեսթերի ընտանիքը, և նրա հարազատներից էլ ոչ մեկը երբեք չէր եղել Ջեննիի մոտ։ Եվ հենց Լեսթերն ինքն էլ իրեն շատ տարօրինակ էր պահում, թեև նրա առատաձեռնությունն սկզբնական շրջանում կուրացրել էր Գերհարդներին։ Նույնիսկ նման չէր, թե նա ամուսնացած մարդ է։ Այնքան անփույթ էր լինում։ Լինում էին շաբաթներ, երբ Ջեննին նրանից միայն հակիրճ երկտողներ էր ստանում։ Պատահում էր, որ Ջեննին նրա մոտ էր գնում ընդամենը մի քանի օրով։ Վերջապես պատահում էր, որ աղջիկը բացակայում էր երկար ժամանակով, և դա միակ ծանրակշիռ ապացույցն էր նրանց հարաբերությունների հաստատունության, այն էլ, թերևս, տարօրինակ ապացույց։

Բասսն արդեն քսանհինգ տարին լրացրել էր, նա մի որոշ գործնական հոտառություն ուներ և առաջ գնալու բուռն ցանկություն, և նրա մեջ որոշ կասկածներ էին ծագել։ Նա

կյանքը վատ չէր ճանաչում և զգում էր, որ այստեղ ինչ-որ մի բան կարգին չէ։ Տասնիննամյա Ջորջին հաջողվել էր ինչ-որ դիրք գրավել պաստառների ֆաբրիկայում ու նա երազում էր առաջադիմել այդ բնագավառում, և նրան ևս անհանգստացնում էր քույրը։ Նա կասկածում էր, որ աղջկա ո՛չ բոլոր գործերն են բարեհաջող անցնում ինչպես հարկն է։ Տասնյոթամյա Մարթան, Ուիլյամն ու Վերոնիկան դեռ սովորում էին դպրոցում։ Նրանց հնարավորություն էր տրվել սովորել ինչքան ցանկանում են։ Բայց նրանք էլ մի ինչ-որ աղոտ անհանգստություն էին զգում։ Ջեննիի երեխայի պատմությունը նրանք գիտեին. երևում է, հարևաններն իրենց գործն արել էին։ Գերհարդների հետ համարյա ոչ ոք ծանոթություն չէր պահպանում։ Նույնիսկ Գերհարդ-հայրը վերջ ի վերջո սկսեց դլիսի ընկնել, որ բանը լավ չէ, բայց չէ՞ որ նա ինքն էր թույլ տվել այդ, և այժմ արդեն բողոքելն ուշ է։ Երբեմն նա ուզում էր հարցուփորձ անել Ջեննիին, ստիպել, որ գործն ուղղի, եթե հնարավոր է, բայց չէ՞ որ վատագույնն արդեն կատարվել էր։ Այժմ ամեն ինչ կախված էր Լեսթերից։ Գերհարդն այդ հասկանում էր։

Ջեննիի և հարազատների հարաբերությունների մեջ աստիճանաբար վճռական բեկում էր հասունանում, բայց հանկարծ ինքը կյանքը խառնվեց գործին։ Միսիս Գերհարդի առողջությունը խախտվեց։ Դեռ վերջերս առույգ ու գործունյա այդ գիրուկ կինը վերջին տարիներս ուժերի նվազում էր զգում և դանդաղաշարժ էր դարձել։ Մյուս կողմից նրա ի բնե անհանգիստ միտքը ճնշում էին բազմաթիվ ձախորդություններն ու ծանր տագնապները, և ահա այժմ դա հասցրել էր դանդաղ, բայց անտարակուսելի մարումի։ Նա ծանր էր շարժվում, շուտ էր հոգնում այն թեթև աշխատանքից, որ դեռ բաժին էր մնացել իրեն և, վերջապես, Ջեննիին զանգատվում էր, որ շատ է դժվարանում սանդուղքով բարձրանալ։

— Ինչ-որ լավ չեմ զգում ինձ,— ասաց նա։— Չլինի՞ թե հիվանդանամ։

Ջեննին տագնապ բարձրացրեց և առաջարկեց մորը

տանել մոտակա կուրորտը, բայց միսիս Գերհարդը հրաժարվեց։

— Հազիվ թե դա ինձ օգնի,— ասաց նա։

Նա նստում էր պարտեզում կամ աղջկա հետ կառքով զբոսանքի էր գնում, բայց աշնան տրտում պատկերները ճնշում էին նրան։

— Չեմ սիրում աշնանը հիվանդանալ,— ասում էր նա։— Նայում եմ, թե ինչպես են տերևները թափվում և շարունակ թվում է, թե երբեք չեմ լավանա։

— Է՛, ինչե՛ր ես ասում, մայրիկ,— պատասխանում էր Ջեննին, իր երկյուղը թաքցնելով։

Ամեն տուն հաստատված է նախ և առաջ մոր վրա, բայց այդ հասկանում են միայն այն ժամանակ, երբ արդեն վախճանը մոտիկ է։ Բասսը, որ պատրաստվում էր ամուսնանալ և ընտանիքից անջատվել, առժամանակ հրաժարվեց այդ մտքից։ Գերհարդն ինքը հուզված ու անչափ ճնշված թափառում էր տանը ինչպես մի մարդ, որը սոսկումով սպասում էր անխուսափելի աղետի։ Ջեննին երբեք մոտիկից մահ չէր տեսել և չէր հասկանում, որ կարող է մորը կորցնել։ Նրան թվում էր, թե ինքը կարող է մի կերպ փրկել մորը։ Ակներևին հակառակ հույսով լցված՝ նա անքուն գիշերներ էր անցկացնում մոր անկողնի մոտ որպես մարմնավորված համբերություն, հոգատարություն և ուշադրություն։

Վախճանը վրա հասավ առավոտյան, մի ամբողջ ամսվա հիվանդությունից հետո։ Մի քանի օր միսիս Գերհարդը գիտակցությունը կորցրել էր։ Տանը խոր լռություն էր տիրում, բոլորը ման էին գալիս մատների ծայրերի վրա։ Վերջին րոպեներին միսիս Գերհարդի գիտակցությունը պարզեց, և նա վախճանվեց՝ հայացքը չհեռացնելով Ջեննիի դեմքից։ Ջեննին նայում էր նրա աչքերին թախիծով ու սոսկումով համակված։

— Մայրի՛կ, մայրի՛կ,— գոռաց նա։— Ա՜խ, ո՛չ, ո՛չ։

Գերհարդը բակից ներս վազեց և անկողնի առաջ ծունկների վրա ընկավ հոսակտուր կոտրտելով իր նիհար ձեռքերը։

— Ինչո՞ւ ես ավելի շուտ չմեռա,— նորից ու նորից ասում էր նա։— Ինչո՞ւ ես ավելի շուտ չմեռա։

Մոր մահը արագացրեց ընտանիքի քայքայումը։ Բասսն արդեն վաղուց քաղաքում հարսնացու ուներ, և նա պատրաստվում էր անհապաղ ամուսնանալ։ Մարթան, որն սկսել էր կյանքին նայել ավելի զգոն ու գործնական, նույնպես ուզում էր շուտ հեռանալ ընտանիքից։ Նրան թվում էր, թե ինչ-որ նզովք է ծանրացած իրենց տան վրա և հենց իր վրա, քանի դեռ ինքն էլ այստեղ է։ Նա պատրաստվում էր ուսուցչուհի գառնալ, հուսալով, որ դպրոցում աշխատելը իրեն ինքնուրույն գոյության հնարավորություն կտա։ Միայն ծերունի Գերհարդն էր, որ չգիտեր ինչ անի։ Նա էլի աշխատում էր որպես գիշերային պահակ։ Մի անգամ Ջեննին նրան գրտավ խոհանոցում լալիս, և ինքն էլ իսկույն արտասվեց։

— Հարկավոր չէ, հայրիկ,— հորդորում էր նա։— Դե հո ամեն ինչ այնքան էլ վատ չէ։ Հո գիտես, որ քանի դեռ ես միջոց ունեմ, դու անօթևան չես մնա։ Դու կարող ես ինձ հետ գալ։

— Ոչ, ոչ,— առարկեց հայրը։ Նա իսկապես չէր ուզում նրա հետ գնալ։— Բանն այդ չէ։ Իմ ամբողջ կյանքն է խորտակվել։

Բասսը, Ջորջն ու Մարթան էլի մի որոշ ժամանակ ապրեցին տանը, բայց, վերջապես, մեկը մյուսի ետևից վնացին, և տանը մնացին միայն Ջեննին, հայրը, Վերոնիկան, Ուիլյամը և ամենափոքրիկը՝ Վեստան, Ջեննիի աղջիկը։ Լեսթերը, հասկանալի է, ոչինչ չգիտեր Վեստայի ծագման մասին և հետաքրքիր է, որ նույնիսկ ոչ մի անգամ նրան չէր տեսել։ Այն դեպքում, երբ նա ամենաշատը երկու-երեք օրով պատիվ էր անում լինելու Գերհարդների տանը, միսիս Գերհարդն ամեն կերպ հոգում էր, որ Վեստան նրա աչքին չերևա։ Մանկական սենյակը հենց ուղիղ տանիքի տակն էր գտնվում, և երեխային թաքցնելն այնքան էլ դժվար չէր։ Լեսթերը համարյա շարունակ իր հարկաբաժնումն էր մնում, նույնիսկ ճաշը մատուցում էին նրան որպես հյուրասենյակ ծառայող սենյակում։ Նա շատ էլ հետաքրքրասեր չէր և չէր աշխատում հանդիպել ընտանիքի մյուս անդամների հետ։ Նա միշտ սիրալիր բարևում էր նրանց ու մի քանի պատահական խոսքեր

փոխանակում, ուրիշ ոչինչ։ Բոլորը հասկանում էին, որ փոքրիկը չպետք է երևա և հաջողությամբ թաքցնում էին նրան։

Ծերունիներին ու երեխաներին միշտ կապում է մի ինչոր անբացատրելի բարեկամություն, մի սքանչելի և հուզիչ ներքին մտերմություն։ Լորրի-սթրիթ փոխադրվելուց հետո առաջին տարին Գերհարդը գաղտնաբար սիրալիր կմշտում էր Վեստայի վարդագույն թշիկները, իսկ երբ տանը ոչ ոք չէր լինում, նստեցնում էր ուսերին և սենյակներում ման բերում։ Երբ երեխան այնքան մեծացավ, որ սկսեց քայլել, Գերհարդը սրբիչը նրա թևատակերով կապած՝ համբերությամբ ման էր ածում սենյակում, մինչև որ երեխան սովորեց ինքնուրույնաբար մի քանի քայլ անել։ Իսկ երբ այնքան մեծացավ, որ կարող էր կարգին քայլել, Գերհարդը նրան հորդորում էր քայլել, հորդորում էր գաղտուկ, հոնքերը կիտած, բայց միշտ սիրալիր։ Բախտի քմահաճույքով այդ պստլիկ աղջիկը, որ ընտանիքի խայտառակությունն էր, ընդունված բարոյականության տեսակետից մի անշնչելի բիծ, իր մանկական մանրիկ մատների մեջ էր առել պապի հոգու ամենազգայուն լարերը։ Ծերունին այդ փոքրիկ, մերժված էակին էր տալիս իր սրտի ամբողջ բոցը և իր բոլոր հույսերը։ Աղջիկը նրա ինքնամփոփ, անուրախ կյանքում միակ լուսո շողն էր, և Գերհարդը շատ վաղ իրեն պատասխանատու զգաց նրա կրոնական դաստիարակության համար։ Չէ՞ հենց նա էր, որ պահանջում էր երեխային մկրտել։

— Ասա՝ «Հայր մեր»,— հաճախ պահանջում էր նա, երբ թոռնիկի հետ մենակ էր մնում։

— Հայլ մել,— թոթովելով կրկնում էր երեխան։

— Որ հերկինս ես...

— Ալ հելկինս ես,— կրկնում էր աղջիկը։

— Ինչո՞ւ ես այդպես շուտ սովորեցնում դրան,— երբեմն միջամտում էր միսիս Գերհարդը, երբ տեսնում էր, թե երեխան ինչպես է շարշարվում դժվար հնչյուններն արտասանելիս։

— Նրա համար որ քրիստոնյա մեծանա,— վճռական տոնով պատասխանում էր Գերհարդը։— Նա պետք է աղոթք-

ներ իմանա։ Եթե հիմա չսկսի, երբեք էլ աղոթք չի սովորի։

Միսիս Գերհարդն ի պատասխան ժպտում էր։ Ամուսնու շատ ու շատ կրոնական տարօրինակություններ միայն զվարճացնում էին նրան։ Միևնույն ժամանակ նրան դուր էր գալիս, որ նա այդպես սրտին մոտ է ընդունում Թոմնիկի դաստիարակությունը։ Եթե միայն նա երբեմն այդպես խիստ, այդպես կամակոր չլինե՞ր։ Նա իրեն էլ էր տանջում, շրջապատի բոլոր մարդկանց էլ։

Նորից գարունը բացվեց, և վաղ առավոտյան, արևի առաջին ճառագայթի հետ Գերհարդը Վեստային դուրս էր տանում, որպեսզի նա տեսնի լույս աշխարհը։

— Դե,— ասում էր նա,— գնանք մի քիչ զբոսնենք։

— Բոսբոսնենք,— թոթովում էր Վեստան։

— Այո, զբոսնենք,— կրկնում էր Գերհարդը։

Միսիս Գերհարդը աղջկան լավ շոր էր հագցնում (այդ ժամանակ Ջեննին հոգում էր, որ իր աղջիկը գեղեցիկ շորեր շատ ունենա), և նրանք ճանապարհ էին ընկնում։ Վեստան անվստահորեն օրորվում էր, իսկ Գերհարդը շատ զգոն արտով նրան տանում էր ձեռքից բռնած, իր ոտքերն էլ հազիվ շարժելով, որպեսզի հարմարվի նրա քայլին։

Մի անգամ, երբ Վեստան չորս տարեկան էր, մայիսյան մի գեղեցիկ օր նրանք գնացին զբոսանքի։ Բնությունն ուրախ էր գարնան գալուն, ծառերի վրա բողբոջները բացվում էին, թռչունները ճռվողում էին՝ տոնելով իրենց վերադարձը հարավից։ Ամեն մի մժեղ շտապում էր վայելել իր կարճատև կյանքը։ Ճնճղուկները ճռվողում էին ճանապարհի վրա, շիկահավերը ոստոստում էին խոտերի մեջ, ծիծեռնակները բույն էին հյուսում տների կտուրների տակ։ Գերհարդը մեծ բավականություն էր զգում, երբ Վեստային ցույց էր տալիս բնության հրաշքները, և երեխան աշխուժորեն արձագանքում էր ամեն բանի։ Ամեն ինչ, որ նա տեսնում ու լսում էր, հետաքրքրում էր նրան։

— Օ՛յ-օ՛յ,— գոչեց երեխան քիչ բարձրում տեսնելով կարմրավուն թռչնակին, երբ մոտիկ ճյուղից թռավ շիկահավը։

Նա ձեռքը վեր բարձրացրեց, աչքերը բոլորովին կլորացան։

— Այո,— ասաց Գերհարդը այնպես երջանիկ, որ ասես ինքն էլ կյանքում առաջին անգամն էր տեսնում այդ հրաշալի թռչունը։— Դա շիկահավ է։ Թռչուն։ Շիկահավ։ Ասա՝ շի՛-կա՛-հա՛վ։

— Սի-կա-վավ,— արձագանքի պես կրկնեց Վեստան։

— Այո՛, շիկահավ,— կրկնեց Գերհարդը։— Նա թռավ գնաց որդեր որոնելու։ Իսկ մենք կփորձենք նրա բույնը գտնել։ Ես, կարծեմ, այստեղ մի ծառի վրա տեսա նրա բույնը։

Նա դանդաղ քայլելով դիտում էր ծառերի ճյուղերը, որոնցից մեկի վրա քիչ առաջ մի լքյալ բույն էր տեսել։

— Ահա, ահա,— ասաց նա վերջապես մոտենալով դեռ չտերևակալած մի ցածրիկ ծառի, որի ճյուղին երևում էին ձմեռվա ընթացքում կիսաքանդ եղած թռչնաբնի մնացորդները։— Ահա, արի նայիր։— Եվ աղջկան վերև բարձրացնելով ցույց տվեց շոր խոտի փունջը։— Տես՝ բույն։ Սա թռչունի բնիկ է։ Նայի՛ր։

— Օ-օ՞յ,— ծոր տվեց Վեստան նույնպես մատը մեկնելով բնի վրա։— Օ-օ՞յ, բուլիկ։

— Այո,— հաստատեց Գերհարդը նորից գետնին իջեցնելով նրան։— Դա այն թռչունի բույնն է, որին կոչում են ցախսարեկ։ Իսկ հիմա բոլորը սրա միջից թռել գնացել են և այլևս չեն վերադառնա։

Եվ նրանք առաջ գնացին։ Պապը նորանոր հրաշքներ էր ցույց տալիս երեխային, իսկ նա ամեն բանից զարմանում էր մանկորեն։ Էլի մի քանի փողոց անցնելուց հետո նրանք դանդաղորեն շուռ եկան դեպի ետ, ասես արդեն աշխարհի ծայրն էին հասել։

— Մենք պետք է տուն գնանք,— ասաց նա։

Եվ այսպես Վեստան մեծացավ մինչև հինգ տարեկանը, դառնալով ավելի սիրելի, ավելի խելացի ու կայտառ։ Գերհարդին հիացմունք էին պատճառում նրա հարցերն ու ենթադրությունները, որ նա տեղում էր անթիվ-անհաշիվ։

— Ի՞նչ աղջիկ է,— ասում էր Գերհարդը կնոջը։— Ամեն

բան ուզում է իմանալ։ Ինձ հարցնում է. որտե՞ղ է տպրում աստվածը։ Ի՞նչ է անում նա։ Ոտքերի տակ դնելու փոքրիկ աթոռակ ունի՞։ Մարդ ծիծաղից կթուլանա նրա հարցերը լսելով։

Գերհարդն ինքն էր հագցնում թոռնիկին, երբ նա առավոտյան արթնանում էր, երեկոյան էլ սպասում էր, որ աղոթքն ասի, ապա պառկեցնում էր քնելու։ Ամբողջ օրը նրա հետ էր անցկացնում, և թոռնիկը դարձել էր նրա ամենամեծ ուրախությունն ու մխիթարությունը։ Եթե Վեստան չլիներ, կյանքը Գերհարդի համար որքա՞ն ավելի ծանր բեռ կլիներ։

ԳԼՈՒԽ XXVII

Բոլոր այդ երեք տարիներին Լեսթերը երջանիկ էր Ջեննիի հետ։ Թեպետև եկեղեցու և հասարակության աչքում նրանց կապն օրինական չէր, բայց նրան հանգիստ ու հարմարություն էր տալիս, և Լեսթերը շատ գոհ էր ու գտնում էր, որ իր փորձը հաջողվել է։ Ցինցիննատիում նրա հետաքրքրությունը աշխարհիկ կյանքի նկատմամբ հավասարվել էր զրոյի, և նա համառորեն մերժում էր իրեն ամուսնացնելու ամեն մի փորձ։ Հոր ֆիրման Լեսթերի համար հիանալի ասպարեզ կլիներ, որտեղ նա, անտարակույս, կարող էր առաջ գնալ, եթե միայն կարողանար կառավարել այն։ Բայց նա հասկանում էր, որ այդ անհնարին է։ Ռոբերտի շահերը միշտ դեմ էին առնում նրա ճանապարհին, և, նրանց հայացքներին վերաբերեր այդ թե նրանց նպատակին, ամեն բանում եղբայրներն այժմ ավելի հեռու էին իրարից, քան երբևիցե եղել էր։ Մի երկու անգամ Լեսթերը մտածել էր որևէ ուրիշ գործով զբաղվել կամ ընկերանալ կառքեր արտադրող որևէ ուրիշ ֆիրմայի, բայց այդ անելու քաջություն չուներ։ Լեսթերը տարեկան տասնհինգ հազար էր ստանում որպես հոր ֆիրմայի քարտուղար ու գանձապահ (եղբայրը փոխպրեզիդենտ էր) և բացի դրանից, հինգ հազար էլ նրան տալիս էր զանազան տյժեթղթերի մեջ դրած կապիտալը։ Նա Ռոբերտի

չափ հաջողակ ու ճարպիկ գործարար չէր։ Այդ հինգ հազար եկամուտից բացի ուրիշ ոչինչ չուներ։ Ընդհակառակն, Ռոբերտն, անտարակույս, «արժեր» երեք հարյուր կամ նույնիսկ չորս հարյուր հազար դոլլար, չհաշված իր ապագա բաժինը հոր ձեռնարկությունից։ Երկու եղբայրն էլ հույս ունեին, որ ժառանգությունը բաժանելու է իրենց համար որոշ առավելությամբ. իրենք կստանան չորրորդական մաս, իսկ քույրերը՝ վեցերորդական։ Միանգամայն բնական էր թվում, որ ավագ Քեյնն այդպես էլ կանի, քանի որ փաստորեն ամբողջ գործը եղբայրներն էին վարում։ Բայց և այնպես լիակատար վստահություն չկար։ Ծերունին կարող է վարվել ինչպես ինքը կցանկանա։ Շատ հավանական է, որ նա վերին աստիճանի բարի ու արդարամիտ կլինի։ Միևնույն ժամանակ Ռոբերտը ակներևաբար կարողանում է որքա՞ն ավելի շատ վերցնել կյանքից։ Եվ ուրեմն ի՞նչ էր մնում անելու Լեսթերին։

Ամեն մի խոհուն մարդու կյանքում լինում է ժամանակ, երբ նա նայում է անցյալին և ինքն իրեն հարց է տալիս, թե ի՞նչ արժեք ունի ինքը և՛ մտավոր, և՛ բարոյական, և՛ ֆիզիկական, և՛ նյութական տեսակետներից։ Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ պատանեկան խելահեղ ժամանակներն արդեն անցել են, երբ առաջին ինքնուրույն քայլերն ու ամենաեռանդուն ջանքերն արդեն արված են, և այն ամենը, ինչին ձգտել ես ու հասել, քո աչքում դառնում են անճիշտ ու անհաստատ։ Եվ շատերի գիտակցության մեջ սողոսկում է հոգին ցամաքեցնող մի միտք կյանքի ունայնության մասին, մի միտք, որ ամենից լավ արտահայտել է Եկլեսիաստեսը[1]։

Սակայն Լեսթերը փորձում էր փիլիսոփա լինել։ «Միևնույն չէ՞,— հաճախ ասում էր նա ինքն իրեն,— Սպիտակ տանն եմ ապրում ես, այստեղ, իմ տանը, թե «Գրանդ-Պասիֆիկ» հյուրանոցում։— Բայց այս հարցը տալն իսկ արդեն ցույց էր տալիս, որ կյանքում կան բաներ, որոնց հասնել նրան չի հաջողվել։ Սպիտակ տունը խոշոր հասարակական

---

[1] Եկլեսիաստես — Հին կտակարանի խրատական գրքերից մեկը և նրա հեղինակը (Ս. Թ.)։

գործչի փայլուն կարիերայի սիմվոլ էր։ Իր տունը և փառահեղ հյուրանոցը մարմնավորում էին այն, ինչ տրվել էր Լեսթերին՝ առանց նրա ջանքերի։

Եվ ահա,— դա մոտավորապես այն ժամանակ էր, երբ մեռավ Ջեննիի մայրը,— Լեսթերը որոշեց փորձ անել մի կերպ կայունացնելու իր դրությունը։ Նա վերջ կտա անգործությանը՝ Ջեննիի հետ միասին այդ անվերջ ճամփորդությունները քիչ ժամանակ չեն խլում նրանից։ Նա իր փողը ներդնելու տեղ կգտնի։ Եթե եղբայրը կարողանում է եկամուտն ավելացնելու ինչ-որ լրացուցիչ աղբյուրներ գտնել, նշանակում է ինքն էլ կարող է։ Նա պետք է ամրապնդի իր իրավունքը, նա կաշխատի ամրապնդել իր հեղինակությունը հայրական ձեռնարկության մեջ և Ռոբերտին թույլ չի տա աստիճանաբար ամեն ինչ իր ձեռքն առնել։ Արդյոք հարկ չի՞ լինի Ջեննիին զոհաբերել. այս միտքն էլ էր գալիս նրա գլուխը։ Ջեննին Լեսթերի վրա ոչ մի իրավունք չունի։ Նա բողոքել չի կարող։ Բայց, չգիտես ինչու, նա չէր պատկերացնում, թե ինչպես կարող է ինքն անել այդ։ Դա և՛ անողոք է, և՛ անիմաստ։ Իսկ գլխավորը (թեպետև նրա համար անհաճո էր խոստովանել այդ նույնիսկ իրեն), դա նրան շատ ու շատ հարմարություններից կզրկեր։ Ջեննին նրան դուր էր գալիս, նա թերևս նույնիսկ սիրում էր նրան յուրովի, էգոիստաբար։ Նա դժվար էր պատկերացնում, թե ինքն ինչպես կարող է լքել նրան։

Հենց այդ ժամանակ էլ նա լուրջ տարաձայնություններ ունեցավ եղբոր հետ։ Ռոբերտը ցանկանում էր կապերը խզել Նյու-Յորքի մի հին ու հարգարժան ֆաբրիկայի հետ, որը Քեյն ֆիրմային ներկեր էր մատակարարում, և կապեր ստեղծել Չիկագոյի մի կոնցեռնի հետ, որը նոր ձեռնարկություն էր և մեծ ապագա ուներ։ Լեսթերը լավ ճանաչում էր Նյու-Յորքի ձեռնարկության ներկայացուցիչներին, գիտեր, որ նրանց վրա կարելի է հույս դնել, որ նրանք Քեյն ֆիրմայի հետ կապված են վաղեմի և բարեկամական հարաբերություններով, ուստի և Ռոբերտի առաջարկությանը հակառակվում էր։ Հայրն սկզբում կարծես թե Լեսթերի կողմն

էր։ Բայց Ռոբերտը իրեն հատուկ սառը տրամաբանությամբ շարադրեց իր պատճառաբանությունները՝ իր խիստ կապուտակ աչքերով սևեռուն նայելով եղբոր երեսին։

— Մենք չենք կարող միշտ կպած մնալ հին բարեկամներին հենց միայն նրա համար, որ հայրիկը նրանց հետ գործեր է ունեցել, կամ նրա համար, որ դու համակրում ես նրանց,— ասաց նա։— Փոփոխություններ են հարկավոր։ Անհրաժեշտ է գործն ամրապնդել. մենք պետք է ուժեղ մրցության դիմանանք։

— Թող հայրիկը վճռի,— վերջապես ասաց Լեսթերը։— Դա ինձ քիչ է հետաքրքրում։ Այսպես լինի թե այնպես՝ ինձ համար միևնույն է։ Դու ասում ես, թե դրանից ֆիրման կշահի։ Ես ճիշտ հակառակն էի ապացուցում։

— Ես հակված եմ կարծելու, որ Ռոբերտն իրավացի է,— հանգիստ ասաց Արչիբալդ Քեյնը։— Մինչև այժմ նա ինչ որ առաջարկել է, արդարացրել է իրեն։

Արյունը խփեց Լեսթերի դեմքին։

— Է՛հ, ի՛նչ կա որ, սրա մասին էլ չենք խոսի,— ասաց նա և իսկույն վեր կենալով դուրս գնաց դրասենյակից։

Այս պարտությունը, որ տեղի ունեցավ հենց ճիշտ այն ժամանակ, երբ Լեսթերը որոշել էր խելքը գլուխը ժողովել, մեծ հարված եղավ նրա համար։ Դեպքն ինքնին չնչին բան էր, բայց մի տեսակ վերջին կաթիլը դարձավ, իսկ է՛լ ավելի խոցող էր հոր դիտողությունը գործերում Ռոբերտի խորաթափանցության մասին։ Լեսթերն սկսեց ինքն իրեն հարց տալ, թե ժառանգությունը բաժանելիս արդյոք հայրը գերադասություն չի՞ տա Ռոբերտին։ Գուցե նա որևէ բա՞ն է լսել Ջենիի հետ ունեցած իր կապի մասին։ Կամ գուցե բարկանո՞ւմ է իր երկար բացակայությունների համար, գտնելով, որ դրանք վնասում են գործին։ Լեսթերը կարծում էր, որ անարդարացի կլիներ մեղադրել իրեն, թե քիչ ուշադրություն է դարձնում ֆիրմայի շահերի վրա կամ պակաս ընդունակություններ ունի։ Նա լավ է կատարում իր գործը։ Նա հիմա էլ ուսումնասիրում է ֆիրմայի ստացած բոլոր առաջարկու-

թյունները, խնամքով ծանոթանում է պայմանագրերին, մընում է որպես հոր և մոր հուսալի խորհրդատուն, բայց իրեն համառորեն դուրս են մղում։ Ինչո՞վ կվերջանա սա։ Նա շատ էր մտածում սրա մասին, բայց ոչ մի եզրակացության չհասավ։

Միևնույն տարին, մի քիչ ավելի ուշ, Ռոբերտը ձեռնարկության ամբողջ ղեկավարումը վերակառուցելու պլան առաջ քաշեց։ Նա առաջարկեց Չիկագոյում, Միչիգան ավենյուում կառուցել մի հսկայական ցուցադրադահլիճ ու պահեստ և պատրաստի արտադրանքի մի մասն այնտեղ ուղարկել։ Չիկագոն ավելի խոշոր կենտրոն է, քան Ցինցիննատին։ Արևմուտքի գնորդների և գավառական առևտրականների համար ավելի հարմար կլինի այնտեղ գալ և գործեր սկսել Քեյն ֆիրմայի հետ։ Դա շատ լավ ռեկլամ կլինի և հիանալի ապացույց, որ ֆիրման հաստատուն է և բարգավաճում է։ Հայրը և Լեսթերն իսկույն հավանություն տվին այդ նախագծին։ Երկուսն էլ լիովին գնահատեցին դրա արժանիքները։ Ռոբերտը Լեսթերին առաջարկեց զբաղվել նոր շենքի կառուցումով։ Թերևս լավ կլիներ, որ նա ժամանակի մի մասն անցկացներ Չիկագոյում։

Եղբոր այդ միտքը շատ դուր եկավ Լեսթերին, թեպետև նա հասկանում էր, որ իրեն առաջարկում են համարյա բոլորովին կտրվել Ցինցիննատիից։ Դա պատվավոր բան էր նրա համար և բարձրացնում էր ֆիրմայի հեղինակությունը։ Նա կկարողանա տեղավորվել Չիկագոյում և իր մոտ բերել Ջեննիին։ Հիմա առանց դժվարության կարելի է իրականացնել նախկին ծրագիրը՝ բնակարան վարձել իր համար և նրա համար։ Եվ նա պաշտպանեց Ռոբերտի առաջարկությունը։ Ռոբերտը ժպտաց։

— Ես համոզված եմ, որ դա ֆիրմային օգտակար կլինի,— ասաց նա։

Քանի որ շինարարական աշխատանքները շուտով սկսվելու էին, Լեսթերը որոշեց անհապաղ փոխադրվել Չիկագո։ Նա կանչեց Ջեննիին, և նրանք միասին բնակարան ընտրեցին Հյուսիսային կողմում։ Տունը գտնվում էր մի իա-

ղաղ փողոցում, լճից ոչ հեռու, բնակարանը շատ հարմար էր, և Լեսթերն այն կահավորեց իր ճաշակով։ Նա հաշվի էր առել, որ Չիկագոյում ապրելու է որպես ամուրի մարդ, ուրեմն և բարեկամներ չի հրավիրելու իր մոտ։ Նրանց հետ միշտ էլ կարող է հանդիպել գրասենյակում, ակումբում կամ հյուրանոցում։ Նրա կարծիքով ամեն ինչ շատ լավ էր դասավորվում։

Հասկանալի է, որ երբ Ջեննին Քլիվլենդից գնաց, Գերհարդների կյանքը հիմնովին փոխվեց։ Ինչպես երևում է, ընտանիքը վերջնականապես կազմալուծվում էր, բայց Գերհարդը դրան վերաբերվում էր փիլիսոփայաբար։ Նա արդեն ծեր է և միևնույն է, թե որտեղ կապրի. Բասսը, Մարթան ու Ջորջն արդեն ոտքի են կանգնել։ Վերոնիկան և Ուիլյամը դեռ սովորում են դպրոցում, բայց կարելի է մի կերպ դասավորել, որ նրանք ապրեն հարևանների մոտ։ Գերհարդին և Ջեննիին լուրջ անհանգստացնում էր միայն մեկ բան՝ Վեստան։ Գերհարդը բնականորեն մտածում էր, որ Ջեննին աղջկան կվերցնի իր հետ։ Կարո՞ղ է մայրը այլ կերպ վարվել։

— Դու նրան պատմե՞լ ես Վեստայի մասին,— հարցրեց նա, երբ արդեն նշանակված էր Ջեննիի մեկնելու օրը։

— Ոչ, բայց շուտով կպատմեմ,— հանգստացրեց նա հորը։

— Միշտ «շուտո՞վ, շուտո՞վ»,— փնթփնթաց Գերհարդը։

Նա գլուխն օրորեց։ Արցունքները խեղդում էին նրան։

— Վատ բան է,— շարունակեց նա մի քիչ լռելուց հետո։— Դա մեծ մեղք է։ Վախենում եմ, որ աստված կպատժի քեզ։ Երեխային խնամք է հարկավոր։ Այսքան ծեր չլինեի, ես նրան ինձ մոտ կպահեի։ Հիմա արդեն չկա մեկը, որ ինչպես հարկն է պահի նրան,— և նա նորից գլուխն օրորեց։

— Գիտեմ, —կամացուկ ասաց Ջեննին։— Ես ամեն ինչ կկարգավորեմ։ Շուտով նրան ինձ մոտ կտանեմ։ Դու գիտես, որ ես նրան չեմ լքի։

— Հապա անո՞ւն ինչպես,—ասաց Գերհարդը։—Աղջկան անուն է պետք։ Եկող տարի նա դպրոց է գնալու։ Մար-

դիկ կուզեն իմանալ՝ ով է նա։ Հո չի կարող միշտ այսպես շարունակվել։

Ջեննին ինքն էլ լավ հասկանում էր այդ։ Նա գժի պես սիրում էր իր աղջկան։ Հաճախակի անջատումները և նույնիսկ Վեստայի գոյությունը թաքցնելու անհրաժեշտությունը ծանր խաչ էին Ջեննիի համար։ Դա անարդար բան էր երեխայի նկատմամբ, բայց Ջեննին այլ կերպ վարվելու հնարավորություն չէր տեսնում։ Վեստային նա լավ հագցնում էր, աղջիկն ամեն ինչ առատորեն ուներ։ Համենայն դեպս, ոչ մի բանի պակաս չէր զգում։ Ջեննին հույս ուներ, որ լավ կրթություն կտա նրան։ Ա՜խ եթե նա հենց սկզբից ճշմարտությունն ասած լիներ Լեսթերին։ Հիմա գուցե արդեն շատ ուշ է, բայց և այնպես նա զգում էր, որ այն ժամանակ նա վարվել է այնպես, ինչպես ամենալավն էր։ Վերջապես նա որոշեց Չիկագոյում մի որևէ լավ կին կամ ընտանիք գտնել, որը վճարով պահեր, խնամեր Վեստային։ Լասսալ-սթրիթից դեպի արևմուտք շվեդական թաղում նա գտավ մի հասակավոր կին, որը բոլոր առաքինությունների մարմնացումն էր թվում՝ մաքրասեր, համեստ, ազնիվ։ Նա այրի էր, օրավարձով աշխատանք էր կատարում և ուրախությամբ համաձայնեց այդ գործը թողնել և իր ամբողջ ժամանակը նվիրել Վեստայի խնամքին։ Ջեննին որոշեց, որ աղջիկը կսկսի մանկապարտեզ հաճախել, հենց որ հաջողվի համապատասխան մանկապարտեզ գտնել։ Նա շատ խաղալիքներ կունենա, լավ խնամք։ Միսիս Օլսենը անպայման Ջեննիին իմաց կտա, եթե երեխան ամենափոքր տկարություն անգամ ունենա։ Ջեննին մտածում էր ամեն օր այցելել Վեստային, իսկ երբեմն էլ, երբ Լեսթերը Չիկագոյից ուրիշ տեղ գնա, երեխային իր մոտ բերել։ Չէ՞ որ Քլիվլենդում Վեստան ապրում էր իրենց հետ, իսկ Լեսթերը դրա մասին չէր էլ կասկածում։

Միսիս Օլսենի հետ պայմանավորվելուց հետո Ջեննին առաջին իսկ հարմար առիթով գնաց Քլիվլենդ՝ Վեստային բերելու։ Գերհարդը խոր վիշտ էր ապրում առաջիկա անջատումի առթիվ և շատ էր անհանգստանում թոռնիկի ապագայի մասին։

— Նա պետք է հիանալի աղջիկ դառնա,— ասաց Ջեննիին։— Հարկավոր է լավ կրթություն տալ նրան, ախր շատ խելացի երեխա է։

Նա ասաց նաև, որ լավ կլիներ Վեստային լութերական եկեղեցական դպրոց տալ, բայց Ջեննին այնքան էլ համոզված չէր դրան։ Ժամանակը և Լեսթերի հետ ունեցած շփումը նրան բերել էին այն հետևության, որ սովորական տարրական դպրոցը ամեն մի մասնավոր հաստատությունից ավելի լավ է։ Չի կարելի ասել, թե Ջեննին դեմ էր եկեղեցուն, բայց նա արդեն չէր գտնում, որ եկեղեցու ուսմունքով կարելի է ղեկավարվել կյանքի բոլոր գործերում։ Եվ էլ ինչո՞ւ պիտի այլ կերպ մտածեր նա։

Հենց մյուս օրը Ջեննին պիտի վերադառնար Չիկագո։ Ուրախ ու անհամբեր Վեստան արդեն պատրաստ էր ճանապարհ ընկնելու։ Երբ Ջեննին հագցնում էր նրան, Գերհարդն անհանգիստ թափառում էր տան մեջ։ Այժմ, երբ անջատումի ժամը եկել էր, նա ամեն կերպ աշխատում էր տիրապետել իրեն։ Նա տեսնում էր, որ հինգ տարեկան երեխան ամենևին չի հասկանում, թե ինչ դրության մեջ է ինքը։ Նա անսահման երջանիկ էր և շարունակ բլբլացնում էր, թե ինչպես են գնալու կառքով, հետո էլ՝ գնացքով։

— Խելոք կմնաս,— ասաց Գերհարդը նրան վեր բարձրացնելով ու համբուրելով։— Տես, չմոռանաս հավատո հանգանակը սովորել և աղոթել։ Դու քո պապիկին չես մոռանա, չէ՞։

Նա ուզում էր էլի ինչ-որ բան ավելացնել, բայց ձայնը դավաճանեց նրան։

Ջեննին, որի սիրտը կտոր-կտոր էր լինում հոր համար, աշխատում էր իր հուզմունքը թաքցնել։

— Դե լավ, լավ...— ասաց նա։— Եթե ես գիտենայի, որ դու այդպես հուզվելու ես...

Նա խոսքը չավարտեց։

— Գնացեք,— արիաբար ասաց Գերհարդը։— Գնացեք։ Այդպես ավելի լավ կլինի։

Նա լուռ ճանապարհ դրեց նրանց հայացքով։ Հետո գնաց

իր սիրած անկյունը՝ խոհանոց, այնտեղ կանգ առավ ու քար կտրեց՝ չտեսնող աչքերը հառած հատակին։ Նրանք մեկը մյուսի ետևից լքեցին իրեն՝ միսիս Գերհարդը, Բասսը, Մարթան, Ջեննին, Վեստան։ Հին սովորությամբ նա ձեռքերն ամուր սեղմեց և երկար ժամանակ կանգնած՝ գլուխն էր օրորում։

— Ահա թե ի՞նչ,— կրկին ու կրկին ասում էր նա։— Ահա թե ի՞նչ։ Բոլորը հեռացան ինձնից։ Ամբողջ կյանքս փուլ եկավ։

ԳԼՈՒԽ XXVIII

Այն երեք տարվա ընթացքում, երբ Լեսթերն ու Ջեննին ապրում էին միասին, նրանց կապը և փոխադարձ ըմբռնողությունն ավելի աճեց ու ամրապնդվեց։ Լեսթերը իսկապես յուրովի սիրում էր նրան։ Այդ ուժեղ, ինքնավստահ, տարակուսանքներ ու տատանումներ չճանաչող զգացմունքը, որ հիմնված էր բնական ու անհաղթահարելի հրապույրի վրա, մոտենում էին իսկական հոգեկան հարազատության։ Քնքուշ հեզությունը, որ այնքան հատուկ էր Ջեննիին, հրապուրում ու կապված էր պահում Լեսթերին։ Ջեննին այնքա՞ն նվիրված էր, բարի, անսահման քնքուշ։ Լեսթերը վարժվել էր հավատալ նրան, հույս էր դնում նրա վրա, և տարեցտարի նրա զգացմունքն ավելի էր խորանում։

Իսկ Ջեննին անկեղծորեն, խոր ու նվիրված սիրել էր այդ մարդուն։ Սկզբում, երբ նա մրրիկի պես խուժեց նրա կյանքի մեջ, խռովություն գցեց նրա հոգում և օգտվելով նրա դառն կարիքից ասես շղթայով կապեց նրան իր հետ, Ջեննին մի փոքր կասկածում էր նրան, մի փոքր վախենում էր նրանից, թեև նա միշտ դուր էր գալիս իրեն։ Բայց այդ տարիներին ապրելով նրա հետ և ավելի լավ ճանաչելով՝ աստիճանաբար սիրեց նրան։ Նա այնքա՞ն ուժեղ է, գեղեցիկ, նա այնպիսի՞ հիանալի ձայն ունի։ Նրա հայացքները ամեն ինչի մասին, նրա կարծիքը միշտ այնքա՞ն ծանրակշիռ են։ Նրա սիրած նշանաբանը՝ «Քայլիր շեշտակի, առանց ետ նայելու», ապշեցնում

էր Ջեննիի երևակայությունը։ Երևում է՝ նրա համար ոչինչ սարսափելի չէ—ո՛չ մարդիկ, ո՛չ աստված, ո՛չ սատանան։ Հաճախ նա իր թուխ մատներով բռնում էր Ջեննիի կզակը, նայում նրա աչքերին և ասում.

— Դու չքնաղ ես, ինչ խոսք, միայն թե մի քիչ ավելի համարձակություն ու հանդգնություն ունենայիր։ Այդ է, որ քեզ պակասում է։

Եվ Ջեննին նրան պատասխանում էր լուռ, քնքուշ հայացքով։

— Ասենք՝ ոչինչ,— ավելացնում էր Լեսթերը,—դրա փոխարեն դու ուրիշ արժանիքներ ունես,— և համբուրում էր նրան։

Նրան շատ էր հուզում, որ Ջեննին այնպես միամտորեն աշխատում էր թաքցնել իր դաստիարակության ու կրթության պակասները։ Նա բավականաչափ գրագետ չէր գրում, և ահա մի անգամ Լեսթերը գտավ մի թերթ թուղթ, որի վրա Ջեննիի ձեռքով գրված էին այն դժվար բառերն ու նրանց նշանակությունը, որ Լեսթերը գործ էր ածում խոսակցության ժամանակ։ Լեսթերը ժպտաց և դրա համար ավելի ևս սիրեց նրան։ Մի ուրիշ անգամ Սենտ-Լուիսում «Հարավային հյուրանոցում» նա ձևացրեց, թե ուտել չի ուզում, վախենալով, թե ուտելու իր շարժուձևերն այնքան էլ լավ չեն, և հարևան սեղանների վրա ճաշողները կարող են նկատել այդ։ Նա միշտ վստահ չէր լինում, թե կվերցնի հենց այն պատառաքաղը և այն դանակը, որ պետք է վերցնել, և արտաքուստ անսովոր ճաշերը շփոթության մեջ էին գցում նրան. ինչպե՞ս պիտի ուտել ծնեբեկը։ Իսկ արտիճո՞ւկը։

— Ինչո՞ւ բան չես ուտում,—ուրախ հարցրեց Լեսթերը։— Չէ՞ որ քաղցած ես։

— Այնքան էլ չէ։

— Երևի քաղցած ես։ Լսիր, Ջեննի, ես գիտեմ պատճառն ինչ է։ Բայց դու իզուր ես անհանգստանում։ Դու հիանալի շարժուձևեր ունես։ Հակառակ դեպքում ես քեզ այստեղ չէի բերի։ Եվ ճիշտ հոտառություն ունես։ Մի՛ վարանիր։ Սթե որևէ բան ճիշտ չանես, ես իսկույն կուղղեմ։

Լեսթերի խաժ աչքերը ուրախ ու սիրալիր շողում էին։

Ջեննին պատասխանեց շնորհակալ ժպիտով։

— Ես իսկապես որ երբեմն ինձ մի քիչ լավ չեմ զգում,— խոստովանեց նա։

— Հարկավոր չէ,— ասաց Լեսթերը։— Ամեն ինչ կարգին է։ Մի՛ անհանգստացիր։ Ես ամեն ինչ քեզ ցույց կտամ։

Եվ նա այդպես էլ անում էր։

Ջեննին աստիճանաբար սովորեց բարձրաշխարհիկ կանոններն ու սովորությունները։ Գերհարգների տանը, բացի ամենաանհրաժեշտ բաներից, ուրիշ ոչինչ չէր լինում։ Հիմա նա ուներ ամեն բան, ինչ ցանկանար, հագուստներ, արդուզարդի ամեն տեսակ մանրուքներ, այն ամենը, ինչով ստեղծվում է իսկական շքեղությունը, և թեև այդ նրան դուր էր գալիս, բայց նա չէր կորցնում իրեն հատուկ չափի զգացումը և ամեն ինչի մասին առողջ դատելու կարողությունը։ Նրա մեջ սնափառության ոչ մի կաթիլ չկար, նա միայն ուրախանում էր, որ բախտը ժպտացել է իրեն։ Նա այնքա՜ն շնորհակալ էր Լեսթերից այն ամենի համար, ինչ նա արել ու անում էր իր համար։ Եթե միայն կարողանար ընդմիշտ պահել նրան...

Վեստային միսիս Օլսենի մոտ տեղավորելուց հետո Ջեննին խորասուզվեց իր տնային հոգսերի մեջ։ Լեսթերն անթիվ-անհամար գործերով զբաղված լինելով՝ մերթ գալիս էր, մերթ գնում։ Նա մի լյուքս համար էր վարձել Չիկագոյի ամենալավ հյուրանոցում՝ «Գրանդ-Պասիֆիկ»-ում, և ենթադրվում էր, թե այստեղ էլ ապրում է։ Նա նախաճաշում էր «Յունիոն-ակումբ»-ում և այստեղ էլ երեկոները հանդիպում էր իր բարեկամների և գործարար ծանոթների հետ։ Առաջիններից մեկը գնահատելով հեռախոսի արժանիքը՝ նա հեռախոս էր դրել իր բնակարանում և ամեն րոպե կարող էր խոսել Ջեննիի հետ։ Տանը նա գիշերում էր շաբաթական երկու-երեք անգամ, երբեմն՝ ավելի հաճախ։ Սկզբում նա պնդում էր, որ Ջեննին տնտեսությունը վարելու գործը մի սպասուհու թողնի, բայց հետո համաձայնեց, որ ավելի խելամիտ կլինի պայմանավորվել որևէ աղջկա հետ, որը դա միայն ամենասև աշխատանքը կատարելու։ Ջեննին սիրում էր, որ ինքը վարի

տնտեսությունը, դա բացատրվում էր նրա բնածին աշխատասիրությամբ և կարգասիրությամբ։

Լեսթերը սիրում էր նախաճաշել առավոտյան ճիշտ ժամը ութին։ Նա վարժվել էր, որ ճաշը մատուցվի ուղիղ յոթին։ Նրան դուր էին գալիս արծաթը, հախճապակին, ճենապակին, շքեղության ամեն տեսակ իրերը։ Նրա հագուստն ու ճամպրուկները պահվում էին տանը, Ջեննիի մոտ։

Առաջին ամիսներին ամեն ինչ հարթ ու խաղաղ էր անցնում։ Երբեմն-երբեմն Լեսթերը Ջեննիին թատրոն էր տանում, և եթե որևէ ծանոթ էր հանդիպում, նրան միշտ ներկայացնում էր որպես միսս Գերհարդ։ Եթե նրանք որևէ հյուրանոցում իջևանում էին որպես ամուսիններ, Լեսթերը կլերկին որևէ մտացածին անուն էր տալիս, իսկ եթե իրենց ճանաչելու վտանգ չէր լինում, եկվորների մատյանում հանգիստ դնում էր իր իսկական անունը։ Եվ այսպես առայժմ ամեն ինչ հարթ էր անցնում։

Ջեննին շարունակ վախենում էր մի բանից՝ չլինի՞ Լեսթերը որևէ կերպ բացի իր սուտը և իմանա Վեստայի մասին։ Բացի դրանից, նա անհանգստանում էր հոր և տան համար։ Վերոնիկայի նամակներից կարելի էր հասկանալ, որ նա և Ուիլյամն ուզում են փոխադրվել Մարթայի մոտ, որն այժմ ապրում էր նույն Քլիվլենդում, կահավորված վարձու սենյակներում։ Ջեննիին անհանգստացնում էր, որ հայրը մենակ կմնա։ Նա շատ էր ցավում հոր համար։ Հաշմանդամ դառնալով՝ նա կարող էր պետք գալ միայն որպես գիշերային պահակ, և Ջեննին սոսկումով էր պատկերացնում, թե նա ինչպես պիտի ապրի բոլորովին մենակ։ Լավ չի՞ լինի, որ նա գա այստեղ, իր մոտ։ Բայց Ջեննին գիտեր, որ հիմա նա դրան չի համաձայնի։ Եվ արդյոք Լեսթերն էլ կուզենա՞, որ Գերհարդն ապրի իրենց հետ։ Նա հավատացած չէր դրան։ Մյուս կողմից էլ, եթե հայրը գա, անխուսափելիորեն հարկ կլինի Լեսթերին պատմել Վեստայի մասին։ Այս ամենը շատ էր տանջում Ջեննիին։

Այո, Վեստայի հարցը այնքան էլ հասարակ չէր։ Իրեն խորապես մեղավոր զգալով՝ Ջեննին առանձնապես սուր էր

ապրում այն ամենը, ինչ վերաբերում էր իր աղջկան։ Նա ամեն կերպ աշխատում էր քավել այն մեծ անարդարությունը, որ պարտական էր իր երեխային, որովհետև իր այդ ամենամեծ պարտքը կատարելու ուժ չուներ։ Ամեն օր նա լինում էր միսիս Օլսենի մոտ, բերում էր խաղալիքներ, քաղցրավենի, մի խոսքով, այն ամենը, ինչ իր կարծիքով կարող էր զվարճացնել և ուրախացնել երեխային։ Նա սիրում էր երկար ժամանակ նստել Վեստայի մոտ, նրան պատմություններ էր անում կախարդների ու հսկաների մասին, և աղջիկը հափշտակված լսում էր նրա հեքիաթները։ Վերջապես Ջեննին այնքան սրտապնդվեց, որ մի անգամ, երբ Լեսթերը գնաց Ցինցինատի՝ ծնողներին այցելության, ինքը աղջկան բերեց իր մոտ, և հետո, ամեն անգամ, երբ Լեսթերը քաղաքից գնում էր, նա Վեստային տուն էր բերում։ Ժամանակն անցնում էր, Ջեննին ուսումնասիրում էր Լեսթերի սովորությունները և քիչ-քիչ ավելի հանգուգն էր դառնում, թեև «հանգուգն» բառը հաղիվ թե սազի Ջեննիին։ Նա քաջացել էր, որքան կարող է քաջ լինել մինչիկը։ Նա սիրտ էր անում Վեստային իր մոտ բերել նույնիսկ այն ժամանակ, երբ Լեսթերը քաղաքից գնում էր ընդամենը երկու-երեք օրով։ Նա նույնիսկ իր մոտ որոշ խաղալիքներ էր թողնում, որպեսզի Վեստան զբաղվելու բան ունենա։

Այն սակավ օրերին, երբ երեխան տանն էր լինում, Ջեննին առանձնապես ուժեղ էր զգում, թե ինչպիսի երջանկություն կլիներ, եթե ինքը օրինական կին ու մայր լիներ։ Վեստան հաղվադեպ հետաքրքրասեր երեխա էր։ Նա իր անմեղ մանկական հարցերով շուտ-շուտ փորփրում էր Ջեննիի սրտի անբուժելի վերքը։

— Իսկ կարելի՞ է, որ ես միշտ քեզ հետ ապրեմ,— ամենից հաճախ հարց էր տալիս նա։

Ջեննին պատասխանում էր, թե առայժմ չի կարելի, բայց շատ-շուտով, հենց որ կարելի լինի, ինքը նրան մշտապես կվերցնի իր մոտ։

— Իսկ այդ ե՞րբ կլինի,— հարցնում էր Վեստան։

— Ճիշտն ասել չեմ կարող, բալիկս։ Բայց շուտով կլինի։

Դու էլի մի քիչ համբերիր։ Մի՞թե միսիս Օլսենի մոտ լինելը քեզ դուր չի գալիս։

— Դուր է գալիս,— պատասխանում էր Վեստան,— միայն թե նրա մոտ ոչ մի լավ բան չկա։ Ամեն ինչ արդեն հնացած է։

Ջեննիի սիրտը մղկտում էր։ Նա Վեստային տանում էր խանութ և տեսակ-տեսակ խաղալիքներ առնում նրա համար։

Լեսթերը, հասկանալի է, ոչ մի բան չէր կասկածում։ Նա համարյա չէր նկատում, թե ինչ է կատարվում տանը։ Նա զբաղվում էր իր գործերով, զվարճանում էր, հաստատ հավատալով, որ Ջեննին լիովին անկեղծ է իր հետ և մինչև հոգու խորքը նվիրված է իրեն։ Նրա մտքովն էլ չէր անցնում, թե Ջեննին կարող է որևէ բան թաքցնել իրենից։ Մի անգամ նա իրեն լավ չէր զգում, կեսօրին վերադարձավ տուն և Ջեննիին տանը չգտնելով՝ սպասեց նրան ժամը երկուսից մինչև հինգը։ Նա սրտնեղել էր և փնթփնթաց, երբ Ջեննին եկավ, բայց նրա անբավականությունը ոչինչ բան էր համեմատած Ջեննիի զարմանքի ու վախի հետ, երբ նա ներս մտավ ու տեսավ, որ Լեսթերը տանն է։ Նա սփրթնեց այն մտքից, որ Լեսթերը կարող է որևէ բան կասկածել, և շտապեց իր բացակայությունը բացատրել որքան կարելի է ճշմարտանման։ Եղել է լվացարարուհու մոտ, հետո խանութներ է գնացել, դրա համար էլ ուշացել է։ Նրա մտքով էլ չի անցել, թե Լեսթերը տանը կլինի։ Շատ է ցավում, որ ժամանակին չի խնամել նրան։ Եվ այս անգամ Ջեննին հասկացավ, որ ամբողջը կործանելու վտանգի տակ է դնում։

Անցավ էլի երեք շաբաթ, և Լեսթերը նորից մի շաբաթով գնաց Ցինցիննատի, իսկ Ջեննին նորից Վեստային իր մոտ բերեց։ Չորս օր մայր ու աղջիկ միասին էին և կատարելապես երջանիկ։

Ամեն ինչ լավ կանցներ, եթե չլիներ Ջեննիի մի անփութությունը, որի հետևանքների համար հետո նա դառնորեն ցավեց։ Վեստան ուներ մի խաղալիք-գառնուկ, որի վզին կապած երկնագույն ժապավենից կախված փոքրիկ զանգուկը զնգզնգում էր ամենաթեթև շարժումից անգամ։ Չգիտես ին-

չու՝ երեխայի խելքին փչել էր այդ գառնուկը գցել հյուրասենյակում դրված կաշվե լայն բազմոցի ետևը, որի վրա հաճախ սիգար ծխելով հանգստանում էր Լեսթերը, և Ջեննին այդ չէր նկատել։ Վեստային ճանապարհելիս մայրը հավաքել էր նրա բոլոր իրերը, բայց գառնուկն այդպես էլ մոռացվել էր և իր տեղը կանգնած՝ ուլունքե աչքերով խաղալիքների աշխարհի արևաշող դաշտերին էր նայում, երբ վերադարձավ Լեսթերը։

Այդ երեկոյան Լեսթերը լրագիրը ձեռքին՝ բազմոցին պառկած իր համար սիգար էր ծխում, և հանկարծ վառված սիգարն ընկավ բազմոցի ետևը։ Վախենալով, թե որևէ բան կայրվի՝ Լեսթերը կռացավ ու բազմոցի տակը նայեց, բայց սիգարը չերևաց։ Այն ժամանակ նա վեր կացավ, բազմոցը քաշեց և հանկարծ տեսավ գառնուկը կանգնած այնտեղ, որ գցել էր Վեստան։ Լեսթերը խաղալիքը վերցրեց և սկսեց ձեռքում շուռումուռ տալ, չհասկանալով, թե այն ինչպես է ընկել այստեղ։

«Որտեղի՞ց պիտի այստեղ ընկած լինի այս խաղալիքը։ Երևի բերել է որևէ հարևանի երեխա, որի հետ Ջեննին մրտերմություն ունի,— մտածեց Լեսթերը։— Արի մի քիչ ջրկրացնեմ նրան»։

Սրտանց ծիծաղելու ցանկությամբ նա գառնուկը վերցրեց, մտավ սեղանատուն, որտեղ բուֆետի մոտ ինչ-որ բան էր անում Ջեննին, և կոմիկական հանդիսավորությամբ գոչեց.

— Որտեղի՞ց է սույնը։

Ջեննին, որ այդպիսի հանցանիշի գոյության մասին չէր էլ կասկածում, շուռ եկավ և խսկույն պատկերացրեց, թե Լեսթերն արդեն ամեն ինչ իմացել է և հիմա իր գլխին կտեղա արդարացի զայրույթը։ Նա կաս-կարմիր կորեց, ապա վայրկենապես սփրթնեց։

— Այդ ես... ես... գնել եմ... դա խաղալիք է...— կըմկըմաց նա։

— Տեսնում եմ, որ խաղալիք է,— ուրախ ասաց Լեսթերը, նկատելով Ջեննիի մեղավոր շփոթմունքը, սակայն նշա-

նակություն չտալով դրան։— Բայց այս խեղճի համար տխուր կլինի մեն-մենակ այնտեղ արածել։

Եվ Լեսթերը մատը դիպցրեց գառնուկի վզի զանգուլակին։ Զանգուլակը զնգզնգաց, և Լեսթերը նորից նայեց Ջեննիին, որը կանգնել էր նրա առաջ, ոչ չունենալով մի խոսք ասել։ Լեսթերի բարեհոգի տեսքից Ջեննին հասկացավ, որ նա ոչինչ չի կասկածում, բայց ոչ մի կերպ իրեն ժողովել չէր կարողանում։

— Ի՞նչ պատահեց քեզ,— հարցրեց Լեսթերը։

— Ոչինչ,— պատասխանեց նա։

— Դու այնպիսի դեմք ունես, որ կարծես այս գառնուկը սոսկալի վախեցրեց քեզ։

— Ես ուղղակի մոռացել էի հեռացնել այն,— ակամա դուրս թռավ Ջեննիի բերանից։

— Սա բավական մաշված տեսք ունի,— ավելացրեց Լեսթերը արդեն ո՛չ կատակի տոնով և նկատելով, որ խոսակցությունը հաճելի չէ Ջեննիին, դադարեցրեց այն։ Եվ այս գառնուկից ոչ մի զվարճություն չստացվեց։

Լեսթերը վերադարձավ հյուրասենյակ, պառկեց բազմոցին և մտքի մեջ ընկավ։ Ի՞նչն այնպես հուզեց Ջեննիին։ Ինչո՞ւ նա, խաղալիքը տեսնելով, այնպես սփրթնեց։ Եթե, ասենք, տանը մենակ մնալով որևէ հարևանի երեխա է բերում և զբաղվում նրանով, դրա մեջ, իհարկե, ոչ մի վատ բան չկա։ Ինչո՞ւ պիտի նա այնպես հուզվեր։ Նա մտքում նորից վերհիշեց այդ ամենը, բայց ոչ մի եզրակացության չեկավ։

Գառնուկի մասին այլևս ոչ մի խոսք չեղավ։ Գուցե և ժամանակի ընթացքում Լեսթերը բոլորովին մոռանար այդ դեպքը, եթե ուրիշ ոչ մի բան կասկած չհարուցեր նրա մեջ, բայց, երևում է, փորձանքը երբեք մենակ չի գալիս։

Մի երեկո, երբ Լեսթերը սովորականից մի քիչ ավելի ուշ ուզում էր տանից դուրս գնալ, դռան զանգը տվին։ Ջեննին խոհանոցում զբաղված էր, և Լեսթերն ինքը գնաց դուռը բանալու։ Նա իր առաջ տեսավ մի տարեց կին, որն անհանգիստ տարակուսանքով նրան նայեց և կոտրտված անգլերենով հարցրեց, թե կարելի՞ է տիրուհուն տեսնել։

— Սպասեք մի րոպե,— ասաց Լեսթերը և նախասենյակ դուրս գալով կանչեց Ջեննիին։

Դեռ շեմքից ճանաչելով այցելուին՝ Ջեննին շտապ մտավ ընդունարան և դուռը իր ետևից ծածկեց։ Սա Լեսթերին իսկույն կասկածելի թվաց։ Նա հոնքերը կիտեց և որոշեց պարզել, թե դա ի՛նչ բան է։ Մի րոպե անց սենյակ վերադարձավ Ջեննին։ Նա գունատ էր քաթանի պես, դողդոջուն մատներն ասես բռնելու մի բան էին փնտրում։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Լեսթերը. նա գրգռված էր և ձայնը հնչեց բավական խիստ։

Ջեննին միանգամից պատասխանելու ուժ չունեցավ։

— Ես պետք է կարճ ժամանակով մի տեղ գնամ,— վերջապես ասաց նա։

— Դե լավ, գնա,—դժկամորեն համաձայնեց Լեսթերը։— Բայց մի՞թե դու չես կարող ինձ ասել, թե ինչ է պատահել քեզ և ուր ես գնում։

— Ես... ես...— կմկմալով սկսեց Ջեննին։— Ես... ես մի...

— Ի՞նչ,— մռայլ հարցրեց Լեսթերը։

— Ես մի գործ ունեմ,— խոսքը վերջացրեց Ջեննին։— Ինձ... ինձ հարկավոր է հենց հիմա գնալ։ Երբ վերադառնամ, ամեն ինչ կպատմեմ քեզ, Լեսթեր։ Միայն խնդրում եմ, հիմա ոչինչ մի հարցնի։

Նա արագ նայեց Լեսթերին. նրա դեմքին պարզ կարդացվում էր մտահոգություն, շուտ գնալու անհամբեր ցանկություն։ Լեսթերը, որ երբեք նրան այդպես կենտրոնացած ու համառ չէր տեսել, և զգացված էր, և՛ սրտնեղած։

— Լավ,— ասաց նա,— բայց ինչի՞ ես դու գաղտնի պահում։ Ինչո՞ւ ուղղակի չասել, թե ինչ է պատահել քեզ։ Ինչո՞ւ պիտի դռան ետևը փսփսայիք։ Ո՞ւր ես գնում դու։

Նա լռեց և ինքն էլ հանկարծ զարմացավ իր այդ խստությունից։ Իսկ Ջեննին, որ հենց նոր իրեն հայտնած տեղեկությունից և այդ անսպասելի հանդիմանությունից կորցրել էր հավասարակշռությունը, հանկարծ մի չտեսնված վճռականության հորդում զգաց։

— Ես քեզ ամեն ինչ կասեմ, Լեսթեր, ամեն ինչ,— գոչեց նա։— Միայն թե ո՛չ հիմա։ Ոչ մի բոպե ժամանակ չունեմ։ Երբ վերադառնամ, ամեն ինչ կպատմեմ։ Խնդրում եմ, մի՛ ուշացնի ինձ։

Նա նետվեց հարևան սենյակը, որ հագնվի։ Լեսթերը, որ հիմա էլ չէր կարողանում կարգին հասկանալ, թե այդ ամենն ինչ կարող է նշանակել, գնաց նրա ետևից։

— Լսիր,— կոպտաբար գոչեց նա,— ի՞նչ հիմարություն է դա։ Ի՞նչ է պատահել։ Ես ուզում եմ իմանալ։

Նա կանգնած էր շեմքում որպես մարմնավորված կռիվ ու վճռականություն, որպես մի տղամարդ, որը սովոր էր, որ իրեն ենթարկվեն։

— Իմ աղջիկը մեռնում է, Լեսթեր,— գոչեց Ջեննին։— Ես հիմա խոսել չեմ կարող։ Խնդրում եմ մի՛ ուշացնի ինձ։ Ես քեզ ամեն ինչ կբացատրեմ, երբ վերադառնամ։

— Քո աղջի՞կը,— կրկնեց շշմած Լեսթերը։— Գրողը տանի, այդ ի՞նչ ես ասում դու։

— Ես մեղավոր չեմ,— պատասխանեց Ջեննին։— Ես վախենում էի... ես վաղուց պետք է ասած լինեի։ Եվ ուզում էի ասել, միայն թե... միայն թե... ա՜խ, թող ինձ, շուտ։ Երբ վերադառնամ, ամեն ինչ կպատմեմ քեզ։

— Լավ, գնա,— արդեն ցածր ձայնով ասաց Լեսթերը։— Գուցե ուղեկցե՞մ քեզ։

— Ոչ,— պատասխանեց Ջեննին։— Ինձ սպասում են, մենակ չեմ գնալու։

Նա դուրս վազեց սենյակից, իսկ Լեսթերը մնաց մտքի մեջ ընկած։ Մի՞թե սա այն նույն կինն է, որին ինքը իր կարծիքով լավ ճանաչում էր։ Բանից դուրս է գալիս, որ այս բոլոր տարիներին նա խաբել է իրեն։ Եվ այդ Ջեննի՞։ Մարմնավորված անկեղծությունը՝ անառա՞կ։

— Ա՜խ, գրողը տանի ինձ,— մրմնջաց նա, և նրա կոկորդը սեղմվեց։

ԳԼՈՒԽ XXIX

Պարզվեց, որ այս ամբողջ իրարանցման պատճառը սովորական մանկական հիվանդություններից մեկն էր, որոնց սկիզբն ու ելքը ոչ ոք չէր կարող գուշակել նույնիսկ երկու ժամ առաջ։ Այդ օրը հանկարծ Վեստան ուժեղ անգինա էր ընկել, և աղջիկ վիճակն այնքան արագ էր վատացել, որ պառավ տիրուհին խիստ վախեցել էր և հարևանուհուն խնդրել՝ իսկույն գնալ միսիս Քեյնին կանչելու։ Հարևանուհին էլ մտածելով միայն, որ Ջեննիին շուտ բերի, առանց այլևայլության ասել էր, թե Վեստայի վիճակը շատ վատ է և հարկավոր է շտապել։ Այս լուրից ցնցված Ջեննին մտածել էր, թե աղջիկը մեռնում է և, ինչպես տեսանք, սոսկումի ու հուսահատության բռնկումով համարձակվեց ճշմարտությունը շպրտել Լեսթերի երեսին։ Նա համարյա վազում էր փողոցով, մորմոքվելով բազմաթիվ վտանգներից և մտածելով միայն, որ ժամանակին հասնի, տեսնի իր աղջկան, քանի դեռ մահը չի տարել նրան։ Ի՞նչ կլինի, եթե ուշանա։ Ի՞նչ կլինի, եթե Վեստան արդեն կենդանի չէ։ Ջեննին ինքնաբերաբար ավելի ու ավելի էր արագացնում քայլերը, փողոցի լապտերների լույսերը նրա առաջն էին գալիս ու նորից սահում ետ, խավարի մեջ։ Նա արդեն չէր հասկանում Լեսթերի խոսքերի խստությունը, չէր վախենում, թե նա իրեն կվռնդի, և ինքը վիթխարի քաղաքում կմնա բոլորովին մենակ, երեխան գրկին։ Նա մոռացել էր ամեն ինչ, բացի մի բանից, նրա Վեստան ծանր հիվանդ է, գուցե և մեռնում է, և մեղավորն ինքն է, որ իրենք միասին չեն։ Գուցե եթե ինքը խնամեր իր երեխային, աղջիկը հիմա առողջ կլիներ։

«Միայն թե հասնեմ,— կրկնում էր նա ինքն իրեն, և, ինչպես բոլոր մայրերը, ծանր վշտից դատելու ընդունակությունը կորցնելով՝ կշտամբում էր իրեն.— ես պետք է իմանայի, պետք է իմանայի, որ աստված ինձ կպատժի իմ մեղքի համար։ Ես պետք է իմանայի, պետք է իմանայի...»։

Նա արագ բացեց ծանոթ դռնակը, բակի շավիղով վազեց դեպի տուն և ներս ընկավ այն սենյակը, որտեղ պառկած էր

Վեստան՝ գունատ, լուռ ու թուլացած։ Բայց հիմա նա շատ ավելի լավ էր։ Սենյակում կային էլի մի քանի հարևանուհի և մի տարեց բժիշկ։ Նրանք բոլորը հետաքրքրությամբ նայեցին Ջեննիին, որը համարյա վայր ընկավ անկողնի գլխավերևը և սկսեց ինչ-որ բաներ ասել աղջկան։

Եվ ահա Ջեննին վերջնական որոշում ընդունեց։ Ինքը մեղավոր է իր աղջկա առաջ, ծանր մեղք ունի, բայց հիմա կաշխատի իր մեղքը քավել։ Լեսթերը իր համար շատ թանկ է, բայց ինքն այլևս չի շարունակի խաբել նրան, և եթե նույնիսկ նա լքի իրեն (այս մտքից նրա սիրտը ճմլվում էր), միևնույն է, ինքը կվարվի այնպես, ինչպես պետք է։ Վեստան այլևս մերժված չպետք է լինի։ Նրա տեղը մոր կողքին է։ Ջեննիի տունը պետք է լինի նաև Վեստայի տունը։

Պառավ շվեդուհու տան մեջ աղջկա անկողնի կողքին նստած՝ Ջեննին հասկացավ, թե որքան անպտուղ է եղել իր սուտը, դրա համար որքան անհանգստություն ու շարշարանք է եղել ծնողների տանը, ինչպես է ինքը տանջվել ու շարունակ վախեցել Լեսթերի հետ ապրելու ընթացքում, ինչպիսի տառապանք կրեց այսօր երեկոյան, իսկ ինչի՞ համար։ Միևնույն է, ճշմարտությունը երևան եկավ։ Ջեննին նստել էր տխուր մտքերի մեջ խորասուզված, մտածելով, թե ինչ է սպասում իրեն, իսկ այդ ժամանակ Վեստան կամաց-կամաց հանդարտվեց և քնեց խոր, առողջ քնով։

Երբ Լեսթերը այս շշմեցուցիչ նորությունից հետո մի փոքրը ուշքի եկավ, նրա միտքը եկան միանգամայն բնական հարցեր. քանի՞ տարեկան է աղջիկը։ Ո՞վ է նրա հայրը։ Ինչպե՞ս է երեխան Ջիկագո ընկել և ո՞վ է խնամում նրան։ Լեսթերը միայն այսպիսի հարցեր տալ կարող էր, բայց պատասխաններ չէր գտնում. չէ՞ որ նա ոչինչ չգիտեր։

Զարմանալի բան. այդ մտքերով տարված՝ հանկարծ նա հիշեց իր առաջին հանդիպումը Ջեննիի հետ, միսիս Բրայսբրիջի տանը։ Ինչո՞ւ այն ժամանակ ինքն այնպիսի մղում ուներ դեպի Ջեննին։ Ի՞նչը այդպես շուտ, համարյա առաջին խսկ հայացքից իրեն հուշեց, որ կարող է հասնել նրան։ Ի՞նչ զգաց ինքը Ջեննիի մեջ. բարոյական սանձարձակությո՞ւն,

անկայունությո՞ւն, թուլությո՞ւն։ Այս ամբողջ տխուր պատմությունը չի անցել առանց խորամանկության, առանց հմուտ կեղծավորության և, խաբելով իրեն, Ջեննին ոչ միայն խաբել է, այլև եղել է ապերախտ։

Պետք է ասել, որ Լեսթերն արհամարհում ու ատում էր ապերախտությունը, այն համարելով ստոր արարածներին հատուկ ամենանողկալի ու զզվելի գիծը, և տհաճ զարմանք էր զգում, որ այդ հատկությունը բացվել է Ջեննիի մեջ։ Ճիշտ է, առաջ երբեք նրա մեջ այդ բանը չէր նկատել, ավելի ճիշտ՝ հակառակն էր տեսել, բայց այժմ անձամբ համոզվեց նրա ապերախտությանը և խորապես վրդովված էր։ Ինչպե՞ս է համարձակվել նա այդպես վիրավորել իրեն։ Իրեն, որը, կարելի է ասել, մարդ է դարձրել նրան և բարձրացրել իր մակարդակին։

Լեսթերը վեր կացավ, բազկաթոռը ետ հրեց և սկսեց լուռ ու դանդաղ անկյունից-անկյուն քայլել։ Այն, ինչ տեղի ունեցավ, շատ լուրջ բան է, և այժմ հարկավոր է ճիշտ և հաստատուն որոշում ընդունել։ Ջեննին հանցավոր է, և ինքն իրավունք ունի նրան դատապարտելու։ Նա մեղավոր է նրանում, որ հենց սկզբից իրենից թաքցրել է ճշմարտությունը և կրկնակի մեղավոր է, որ այդպես էլ շարունակել է խաբել։ Վերջապես նրա գլուխը եկավ այն միտքը, որ նա իր սերը կիսել է իր և երեխայի միջև. ոչ մի տղամարդ իր դրության մեջ չէր կարող հանգիստ հաշտվել դրա հետ։ Լեսթերը ցնցվեց այս մտքից, նա ձեռքերը գրպանները խրեց և շարունակեց քայլել սենյակում։

Լեսթերի բնավորությունն ունեցող մարդը ինչպե՞ս կարող էր իրեն վիրավորված համարել հենց միայն նրա համար, որ Ջեննին թաքցրել է իր երեխայի գոյությունը, որն աշխարհ է եկել ճիշտ նույնպիսի զանցանքի հետևանքով, ինչպիսին նա կատարեց հետագայում, զիջելով իրեն՝ Լեսթերին։ Սա մի օրինակ է այն անբացատրելի մոլորությունների ու սխալների, որոնցից, ինչպես երևում է, ընդունակ չէր խուսափել մարդկային միտքը, այդ դաժան պահակն ու դատավորը, երբ հարցը վերաբերում է ուրիշ մարդկանց պատվին։ Մոռանալով իր

սեփական արարմունքը (տղամարդիկ հազվադեպ են հաշվի առնում այն), Լեսթերը այն հավատն ուներ, որ կինը պետք է իր սիրած միակ մարդու առաջ բաց անի իր ամբողջ հոգին, և նրան շատ էր վշտացնում, որ Ջեննին այդպես չի վարվել։ Մի անգամ նա փորձել էր իմանալ Ջեննիի անցյալի բոլոր մանրամասնությունները։ Այն ժամանակ Ջեննին աղաչել էր հարցուփորձ չանել։ Ահա թե երբ նա պետք է ասեր երեխայի մասին։ Իսկ հիմա... Լեսթերը գլուխն օրորեց։

Երբ նա ամեն ինչի մասին մտածեց, առաջին միտքը եղավ հեռանալ և այլևս Ջեննիին չտեսնել։ Միևնույն ժամանակ ուզում էր իմանալ, թե ինչով վերջացավ բանը։ Այսուամենայնիվ նա վերարկուն հագավ, գլխարկը ծածկեց և դուրս գնաց տանից։ Խմելու ցանկություն զգալով՝ նա մտավ առաջին իսկ հանդիպած վայելուչ պանդոկը։ Հետո գնաց ակումբ։ Այնտեղ նա սենյակից-սենյակ թափառեց, հանդիպեց ծանոթներից ոմանց, զրուցեց նրանց հետ։ Անհանգստությունն ու սրտնեղությունը չէին անցնում։ Վերջապես երեք ժամ մտածումների մեջ անցկացնելուց հետո նա կառք վարձեց և վերադարձավ տուն։

Ջեննին երկար ժամանակ տխուր-տրտում նստել էր քընած աղջկա անկողնի մոտ և, վերջապես, հասկացավ, որ վրտանգն անցել է։ Այժմ նա Վեստայի համար ոչինչ անել չէր կարող, և քիչ-քիչ միտքը եկան տան հոգսերը։ Նա զգաց, որ պետք է կատարի Լեսթերին տված խոստումը և մինչև վերջին բոպեն տանտիրուհու իր պարտականությունները կրի։ Հնարավոր է, որ Լեսթերն սպասում է իրեն։ Երևի նա ընդմիշտ բաժանվելուց առաջ կուզենա լսել ամբողջ ճշմարտությունն իր անցյալի մասին։ Ջեննին սրտի ցավով ու երկյուղով էր մտածում, որ Լեսթերը, իհարկե, կապերը կխզի իր հետ, բայց դա համարում էր արդարացի պատիժ իր բոլոր զանցանքների համար. ինքը լիովին արժանի է դրան։

Ջեննին տուն վերադարձավ ժամը տասնմեկին։ Սանդուղքի լույսն արդեն չէր վառվում։ Նա դռան բռնակը քաշեց, ապա իր բանալիով բացեց։ Մի պահ կանգ առնելով և ոչ մի ձայն չլսելով՝ նա ներս մտավ, սպասելով, որ իրեն կդիմա-

վորի զայրացած Լեսթերը։ Բայց Լեսթերը չկար։ Նա պարզապես մոռացել էր սենյակի լույսը մարել։ Ջեննին արագ շուրջը նայեց, բայց սենյակը դատարկ էր։ Ջեննին մտածեց, թե Լեսթերն ընդմիշտ հեռացել է, և տեղում քարացավ անօգնական ու մոլորված։

«Գնացե՞լ է»,— մտածեց նա։

Բայց այդ րոպեին սանդուղքի վրա լսվեցին Լեսթերի քայլերը։ Նրա գլխարկը քաշված էր աչքերին, վերարկուն լրիվ կոճկած։ Առանց Ջեննիի կողմը նայելու, նա վերարկուն հանեց, կախեց կախարանից։ Հետո առանց շտապելու գլխարկը վերցրեց ու կախեց։ Դրանից հետո միայն նա դարձավ դեպի Ջեննին, որը աչքերը չռած հետևում էր նրան։

— Ես ուզում եմ իմանալ ամեն ինչ, սկզբից մինչև վերջ,— ասաց նա։— Ո՞ւմն է այդ երեխան։

Ջեննին մի պահ տատանվեց, ասես պատրաստվում էր հուսակտուր թռիչք գործել դեպի մութ անդունդը, ապա խոսեց ցամաքած շուրթերով։

— Սենատոր Բրենդերինը։

— Սենատոր Բրենդերի՞նը,— զարմանքով կրկնեց Լեսթերը. նա ամենևին չէր սպասում, թե այդպիսի դղրդուն անուն կլսի։— Ինչպե՞ս ես դու կարողացել հանդիպել նրա հետ։

— Ես ու մայրս նրա լվացքն էինք անում,— պարզ պատասխանեց Ջեննին։

Լեսթերը լռեց։ Ջեննիի պատասխանների շիտակությունը ուշքի բերեց նրան, և նրա ցասումն իջավ։ «Սենատոր Բրենդերի երեխա՞ն»,— մտածում էր նա։ Նշանակում է հասարակ ժողովրդի շահերի այդ նշանավոր պաշտպանը գայթակղեցրել է լվացարարուհու աղջկան։ Ահա քեզ մի բնորոշ ողբերգություն չքավորների կյանքից։

— Վաղո՞ւց է եղել այդ,— հոնքերը կիտելով մռայլ հարցրեց Լեսթերը։

— Արդեն համարյա վեց տարի կլինի,— պատասխանեց Ջեննին։

Լեսթերը մտքում հաշվեց, թե որքան ժամանակ է իրենք ծանոթ են, ապա հարցրեց.

— Քանի՞ տարեկան է երեխան։

— Վեցի մեջ է։

Լեսթերը գլխով արեց։ Զանալով կենտրոնանալ՝ այժմ նա խոսում էր ավելի տիրական ձայնով, բայց առանց առաջվա զայրույթի։

— Իսկ որտե՞ղ է եղել նա այսքան ժամանակ։

— Մինչև անցյալ գարուն նա ապրում էր տանը, մերոնց մոտ, իսկ երբ դու գնացիր Ցինցիննատի, ես նրան բերի այստեղ։

— Եվ երբ ես Քլիվլենդ էի գալիս, նա ձեզ հետ էր ապրում։

— Այո,— պատասխանեց Ջեննին,— միայն թե ես հետևում էի, որ նա քո աչքին չերևա։

— Ես կարծում էի դու ձերոնց ասել ես, որ մենք ամուսնացել ենք,— գոչեց Լեսթերը, չհասկանալով, թե ինչպես են Ջեննիի հարաբատները հաշտվել այդ երեխայի գոյության հետ։

— Ես այդպես ՝Ն ասել եմ նրանց,— պատասխանեց Ջեննին,— բայց ես չէի ուզում քեզ ասել աղջկա մասին։ Իսկ մերոնք շարունակ մտածում էին, թե ահա որտեղ որ է կպատմեմ քեզ։

— Իսկ ինչո՞ւ չէիր պատմում։

— Որովհետև վախենում էի։

— Ինչի՞ց։

— Դե ես հո չգիտեի, ինչ է պատահելու ինձ, երբ գալիս էի քեզ հետ, Լեսթեր։ Ես այնպես ուզում էի պահպանել իմ աղջկան, ոչ մի վնաս չտալ նրան։ Հետո էլ ամաչում էի։ Իսկ երբ դու ասացիր, որ երեխա չես սիրում, ես վախեցա։

— Վախեցար, թե քեզ կլքե՞մ։

— Այո։

Լեսթերը լռեց։ Ջեննին պատասխանում էր այնպես պարզ ու շիտակ, որ նրա սկզբնական կասկածը, թե Ջեննին դիտմամբ կեղծել ու խաբել է իրեն, մասամբ փարատվեց։ Վերջ ի վերջո ամբողջ պատճառը հանգամանքների դժբախտ ընթացքն է, Ջեննիի փոքրոգությունը և նրա ընտանիքի բարքե-

բր։ Ա՛յ թե ընտանիք է հա՞։ Միայն անմիտ ու բարոյազուրկ մարդիկ կարող էին այդպիսի դրություն հանդուրժել։

— Մի՞թե դու չէիր հասկանում, որ վերջ ի վերջո ամեն ինչ պիտի բացվի,— վերջապես հարցրեց նա։— Հո չէիր կարող մտածել, թե այդպես էլ կմեծացնես նրան։ Ինչո՞ւ հենց սկզբից ինձ չասացիր ճշմարտությունը։ Այն ժամանակ ես շատ հանգիստ կվերաբերվեի դրան։

— Գիտեմ,— ասաց Ջեննին։— Բայց ես ուզում էի, որ նրա համար ավելի լավ լինի։

— Հիմա որտե՞ղ է նա։

Ջեննին բացատրեց։

Լեսթերի հարցերն այնպես չէին հարմարվում նրա ձայնին ու դեմքի արտահայտությանը, որ Ջեննին բոլորովին իրեն կորցրեց։ Նա փորձեց ամեն ինչ բացատրել, բայց Լեսթերը հասկանում էր միայն մի բան. Ջեննին հիմարություն է արել, բայց ամենևին չի խորամանկել. դա այնքան պարզ էր, որ եթե Լեսթերն ուրիշ դրության մեջ լիներ, սրտանց կխղճար նրան։ Բայց հիմա Բրենդերի հայտնությունը նրա գլխից դուրս չէր գալիս, և նա նորից դարձավ այդ հարցին։

— Ուրեմն ասում ես մայրդ նրա համար լվա՞ցք էր անում։ Իսկ ինչպե՞ս պատահեց, որ դու նրա հետ ընկար։

Մինչև այժմ Ջեննին համբերությամբ տանում էր այդ տանջալից հարցաքննությունը, բայց այս հարցի վրա նա ցնցվեց, ինչպես հարվածից կցնցվեն։ Լեսթերը դիպել էր նրա կյանքի ամենադառն ու դժվարին ժամանակի դեռ չապաքինված հիշողությանը։ Նրա վերջին հարցը, երևում է, կատարյալ անկեղծություն էր պահանջում։

— Չէ՞ որ ես այն ժամանակ ջահել աղջիկ էի, Լեսթեր,— տխուր ասաց նա։— Հազիվ տասնութ տարեկան էի։ Ես ոչինչ չգիտեի։ Գնում էի նրա մոտ, հյուրանոց, լվացքի սպիտակեղենը վերցնում, իսկ հետո էլ տանում էի։

Նա լռեց, բայց տեսնելով, որ Լեսթերը աթոռն առաջ քաշեց և նստեց երկար ու մանրամասն պատմություն լսելու պատրաստ մարդու տեսքով, նորից սկսեց խոսել։

— Այն ժամանակ մենք այնպիսի կարիքի մեջ էինք։ Նա հաճախ ինձ փող էր տալիս, որ մորս տամ։ Ես չգիտեի...

Նա նորից լռեց։ Լեսթերը տեսնելով, որ նա ուժ չունի պատմելու, նորից սկսեց հարցեր տալ նրան, և աստիճանաբար ամբողջ տխուր պատմությունը պարզ դարձավ նրա համար։ Բրենդերը ցանկացել է ամուսնանալ նրա հետ։ Նա գրել է Ջեննիին, պետք է նրան կանչեր իր մոտ, բայց չի հասցրել. անակնկալ մահն ընդհատել է ամեն ինչ։

Խոսակցությունը վերջացած էր։ Ամբողջ հինգ րոպե երկուսն էլ լուռ էին։ Լեսթերը բուխարիկին հենված նայում էր մի կետի, իսկ Ջեննին սպասում էր, չիմանալով, թե ինչ է լինելու և չփորձելով գեթ մի խոսք ասել իրեն պաշտպանելու համար։ Ժամացույցը բարձր շրկ-շրկում էր։ Լեսթերի անշարժ դեմքին չէր կարելի կարդալ ո՛չ նրա զգացմունքները, ո՛չ մտքերը։ Այժմ նա բոլորովին հանգիստ էր ու անվրդով և մտածում էր, թե ինչպես վարվի։ Ջեննին նրա առաջ կանգնած էր ինչպես հանցագործը դատարանում։ Լեսթերը որպես մարմնացած արդարություն, բարոյականություն, սրտի անաղարտություն՝ գրավում էր դատավորի տեղը։ Այսպես ուրեմն, պետք է դատավճիռ ընդունել, որոշել Ջեննիի հետագա բախտը։

Ի՛նչ ասել կուզի, զզվելի գործ է, կեղտոտ պատմություն, որին պետք չէ, որ խառնված լինի Լեսթերի դիրքն ու հարգությունն ունեցող մի մարդ։ Այդ երեխան պարզապես անհնարին է դարձնում նրա հարաբերությունները Ջեննիի հետ... բայց և այնպես Լեսթերը դեռ ոչինչ չէր կարողանում ասել։ Բուխարիկի վերևը ժամացույցը խփեց երեքը։ Լեսթերը շուռ եկավ և հիշեց Ջեննիին, որը գունատ ու շփոթված դեռ անշարժ կանգնած էր նրա առաջ։

— Գնա պառկիր,— ասաց նա վերջապես և նորից սկսեց մտածել իր դժվարին խնդրի մասին։

Բայց Ջեննին տեղից չշարժվեց։ Նա կանգնած Լեսթերին էր նայում լայն բացված անշարժ աչքերով, պատրաստ ամեն րոպե լսելու իր դատավճիռը։ Բայց նա իզուր էր սպասում։

Երկար խորհելուց հետո Լեսթերը վեր կացավ և գնաց դեպի վախարանը։

— Գնա պառկիր,— պաղ կրկնեց նա։— Ես գնում եմ։

Ջեննին ակամա մի քայլ արեց դեպի նա. նույնիսկ այդ սոսկալի րոպեին ուզում էր որևէ բանով օգտակար լինել նրան, բայց Լեսթերը նրա շարժումը չնկատեց։ Նա դուրս գնաց, այլևս ոչ մի խոսքի չարժանացնելով նրան։

Ջեննին նայում էր նրա ետևից և լսում նրա հեռացող քայլերը սանդուղքի վրա այնպիսի զգացմունքով, ասես իր մահավճիռն է կայացված և արդեն թաղման զանգն է հնչում իր գերեզմանի վրա։ Այս ի՞նչ արեց ինքը։ Եվ հիմա ի՞նչ է անելու Լեսթերը։ Խոր հուսահատություն էր համակել նրան, և երբ ցածում դուռը շրխկաց, նա թախիծով ու հուսակտուր ձեռքերը տարածեց։

«Գնա՞ց,— մտածեց նա։— Գնա՞ց»։

Լուսամուտներում արդեն արշալույս էր առկայծում, իսկ Ջեննին դեռ նստել էր դառն մտքերով տարված. նրա դրությունն այնքան էր լուրջ, որ արցունքին էլ ազատություն տալ չէր կարող։

ԳԼՈՒԽ XXX

Մռայլ, միշտ այնքան տրամաբանորեն դատող Լեսթերը մինչև ամենևին վստահ չէր, թե ինքն ինչ է նախաձեռնելու։ Նրա տրամադրությունը շատ էր ընկել, բայց չէր կարող ճիշտ որոշել, թե ինչն է իրեն հուզում։ Հասկանալի է, որ երեխայի գոյությունը բավական բարդացնում էր գործը։ Ինչի՞ էր պետք Ջեննիի երբեմնի մեղքերի այդ կենդանի վկայությունը։ Ասենք, Լեսթերն ընդունում է, որ եթե ինքը իսկապես ցանվանար, վաղուց կարող էր Ջեննիից իմանալ նրա ամբողջ անցյալը։ Նա, իհարկե, չէր խաբի։ Ինքը հենց սկզբում կարող էր հարցնել նրան, ինքն այդ չի արել, իսկ հիմա արդեն շատ ուշ է։ Մի բան պարզ է. Ջեննիի հետ ամուսնանալու մասին մտածել անգամ չի կարելի։ Դա բացառված է, նկատի

ունենալով նրա դիրքը հասարակության մեջ։ Ամենալավ ելքն է՝ Ջեննին նյութապես ապահովել և նրանից բաժանվել։ Երբ Լեսթերը հյուրանոց էր գնում, այս որոշումն ընդունված էր, թեպետև նա չէր մտածում անհապաղ իրականացնել այդ։

Նման դեպքերում որքա՜ն ավելի հեշտ է դատողություն անել, քան գործել։ Ժամանակն ամրապնդում է մեր ցանկություններն ու զգացմունքները, իսկ Ջեննին Լեսթերի համար միայն սովորություն չէր։ Չորս տարվա անընդհատ հաղորդակցության ընթացքում նա այնպես լավ էր ճանաչել նրան ու իրեն, որ հնարավոր չէր համարում հեշտ ու արագ անջատվել նրանից։ Դա շատ ցավալի բան կլիներ։ Այդպիսի միտք նա կարող էր ունենալ ցերեկը, իր գրասենյակի եռուզեռի մեջ, բայց ո՛չ երեկոները, երբ մենակ էր մնում։ Նա իր մեջ հայտաբերեց նույնիսկ կարոտելու ընդունակություն, և այդ խրոովում էր նրա հոգին։

Այդ օրերին նրան անհանգստացնում էր նաև Ջեննիի թեորիան, թե իբր նրա և մոր հետ միասին ապրելը կարող էր վնասել Վեստային։ Ինչպե՞ս է նա մտածել այդ։ Չէ՞ որ Լեսթերը որքա՜ն ավելի նախանձելի հասարակական դիրք է գրավում, քան Ջեննին։ Բայց հետո Լեսթերը հասկացավ նրա տեսակետը։ Ջեննին այն ժամանակ չգիտեր, թե ով է նա և ինչ բախտ է պատրաստում իր համար։ Լեսթերը կարող էր շատ շուտով լքել նրան։ Այս բանը նախատեսելով՝ նա ցանկացել է իր երեխային ապահովել այդ վտանգից։ Դա այնքան էլ վատ չէ։ Եվ մեկ էլ Լեսթերը ցանկանում էր իմանալ, թե ինչպիսին է այդ աղջիկը։ Սենատորի դուստրը. դա կարող է հետաքրքիր լինել։ Բրենդերը փայլուն մարդ էր, իսկ Ջեննին՝ չքնաղ կին։ Այս միտքը Լեսթերի մեջ առաջացնում էր և՛ վրդովմունք, և՛ հետաքրքրություն։ Մերթ նրան թվում էր, թե հարկավոր է վերադառնալ Ջեննիի մոտ և աղջկան տեսնել— վերջ ի վերջո այդ իր իրավունքն է— մերթ տատանվում էր, հիշելով, թե ինքն ինչպես ընդունեց աղջկա գոյության մասին ստացած տեղեկությունը։ Նա նորից ինքն իրեն համոզում էր, թե պետք է վերջ դնել, և այդ ներքին վեճը շարունակվում էր անվերջ։

Իրականում նա ի վիճակի չէր Ջեննիից բաժանվելու։ Այդ տարիների ընթացքում Ջեննին նրա համար անհրաժեշտություն էր դարձել։ Երբևիցե նա ունեցե՞լ էր այդպիսի մոտիկ մարդ։ Մայրը սիրում է իրեն, բայց այդ սիրո մեջ գերակշռում է փառասիրությունը։ Հա՞յրը. հայրն էլ իր նման մի տղամարդ է։ Քույրերը նրանով հետաքրքրվելու ժամանակ չունեն. նրանցից յուրաքանչյուրն իր կյանքն ունի։ Ռոբերտը միշտ օտար է եղել նրա համար։ Ջեննիի հետ նա առաջին անգամ իմացավ, թե ինչ բան է իսկական երջանկությունը, իսկական մտերմությունը։ Ջեննին հարկավոր է նրան. Ջեննիից հեռու անցկացրած ամեն մի ժամին նա ավելի ու ավելի ուժեղ էր զգում այդ։ Վերջապես նա որոշեց սրտաբաց խոսել Ջեննիի հետ և որևէ համաձայնության գալ։ Թող աղջկան իր մոտ վերցնի ու նրան խնամի։ Ջեննին պետք է հասկանա, որ վաղ թե ուշ ինքը հեռանալու է նրանից։ Հարկավոր է նրան ներշնչել, որ այժմ իրենց հարաբերությունների մեջ շատ բան է փոխվել, թեև դա անհապաղ խզում չի նշանակում։ Նույն երեկոյան նա գնաց իր բնակարանը։ Ջեննին լսեց, թե ինչպես նա դուռը բաց արեց, և սիրտն անհանգիստ թպրտաց։ Ինքն իրեն հավաքելով՝ նա իր սենյակից դուրս եկավ նրան դիմավորելու։

— Որքան ես հասկանում եմ, այսպես պիտի վարվել,— սկսեց Լեսթերը իրեն հատուկ շիտակությամբ։— Աղջկաղ բեր այստեղ, և թող քեզ հետ ապրի։ Իմաստ չունի օտար մարդկանց մոտ թողնել։

— Լավ, Լեսթեր,— հնազանդորեն պատասխանեց Ջեննին։— Ես միշտ ցանկացել եմ այդ։

— Եթե այդպես է, հետաձգելու հարկ չկա։— Նա գրպանից հանեց երեկոյան լրագիրը և անցավ դեպի լուսամուտը։ Հետո շուռ եկավ։— Մենք պետք է պայմանավորվենք, Ջեննի։ Ես հասկանում եմ ինչպես է տեղի ունեցել այդ։ Ես մեծ անփութություն եմ գործել, որ ժամանակին հարցուփորձ չեմ արել քեզ, չեմ ստիպել ամեն ինչ պատմել։ Իսկ դու իզուր ես լռել, նույնիսկ եթե չես ցանկացել, որ ես քո երեխայի կյանքի

մեջ մտնեմ։ Դու պետք է հասկանայիր, որ այդպիսի բանը, միևնույն է, թաքցնել չի լինի։ Ասենք, հիմա սա կարևոր չէ։ Ես ուրիշ բան եմ ուզում ասել. իմ և քո այսպիսի հարաբերությունների պայմաններում իրարից գաղտնիք պահել չի կարելի։ Ես կարծում էի, թե մենք ամեն բան վստահում ենք իրար։ Իսկ հիմա չգիտեմ՝ կարո՞ղ եմ երբևիցե ամրապնդել մեր հարաբերությունները։ Շատ խճճված դրություն է ստեղծվել։ Մեղադրելու և բամբասանքների համար շատ հիմքեր կան։

— Ես այդ գիտեմ,— ասաց Ջեննին։

— Հասկացիր, ես մտադիր չեմ շտապել։ Իմ կարծիքով ամեն ինչ կարող է շատ թե քիչ առաջվա նման մնալ, մոտ ժամանակներս, իհարկե, բայց ես ուզում եմ, որ դու իրերին զգոն նայես։

Ջեննին հառաչեց։

— Գիտեմ, Լեսթեր, գիտեմ։

Շուտ գալով դեպի լուսամուտը՝ Լեսթերը նայեց բակում աղջամուղջի մեջ պարուրված ծառերին։ Ապագայի միաքը սարսափեցնում էր նրան. նա սիրում էր իր տնային պայմանները։ Մի՞թե այդ ամենին պիտի հրաժեշտ տա ու գնա ակումբ։

— Արի ճաշենք,— վերջապես սառն ասաց նա, շուտ գալով լուսամուտից։ Բայց հոգու խորքում նա Ջեննիի վրա չէր բարկանում։ Ուղղակի խայտառակություն է. որքա՜ն վատ է կառուցված կյանքը։

Նա անցավ հյուրասենյակ, իսկ Ջեննին շտապեց տնտեսության գործերով զբաղվել։ Նա մտածում էր Վեստայի մասին, Լեսթերի նկատմամբ իր ապերախտության մասին, նրա վերջնական որոշման մասին, որ իր հետ չի ամուսնանա։ Իր անմտությամբ նա ինքն է խորտակել իր նվիրական բաղձանքը։

Նա սեղան բացեց, արծաթե գեղեցիկ մոմակալների մեջ մոմեր վառեց, պատրաստեց Լեսթերի սիրած թխվածքը, ոչխարի միս դրեց տապակելու և սալաթ լվաց։ Վերջին տարին Ջեննին ջանասիրությամբ ուսումնասիրել էր մի խոհարարա-

կան գիրք, իսկ առաջ էլ շատ բան մորիցն էր սովորել։ Եվ ամբողջ ժամանակ նա չէր դադարում մտածել, թե հիմա ինչ պատկեր կստանա իր կյանքը։ Վաղ թե ուշ Լեսթերն իրեն կըլքի, սա պարզ է։ Նա իրենից կհեռանա և կամուսնանա ուրիշի հետ։

«Ի՜նչ արած,— մտածեց նա վերջապես,— դեռ լավ է, որ առայժմ նա ինձ չի լքում։ Վեստան էլ ինձ հետ է լինելու»։ Նա հառաչեց և ճաշը սեղանատուն տարավ։ Ի՜նչ լավ կլիներ, եթե և՛ Լեսթերը մնար իր հետ, և՛ Վեստան... բայց այս հույսը խորտակված էր ընդմիշտ։

ԳԼՈՒԽ XXXI

Այս փոթորկից հետո միաժամանակ տանը խաղաղություն ու հանդարտություն տիրեց։ Ջեննին հենց հեռակայալ օրը Վեստային բերեց իր մոտ։ Աղջկա հետ միանալու ուրախությունը սքողեց նրա բոլոր հոգսերն ու վիշտը։ «Այժմ ես կարող եմ իսկական մայր լինել նրա համար»,— մտածում էր Ջեննին և օրվա մեջ մի քանի անգամ մեկ էլ տեսնում էր, որ ինքնաբերաբար մի ուրախ երգ է սկսել։

Լեսթերը սկզբում միայն շատ հազվադեպ էր գալիս նրա մոտ։ Նա փորձում էր իրեն համոզել, որ պետք է աստիճանաբար նախապատրաստել իր մտածած փոփոխությունն իր կյանքում՝ Ջեննիից հեռացումը։ Նրա համար հաճելի չէր երեխայի ներկայությունը իր տանը, և առավել ևս՝ հենց այդ երեխայի։ Միաժամանակ նա համառորեն ինքն իրեն ստիպում էր չլինել Հյուսիսային կողմում, բայց հետո սկսեց ավելի հաճախ երևալ այնտեղ։ Ինչ էլ որ լիներ, այստեղ խաղաղ էր, հանդարտ, միայն այստեղ նա իրեն լավ էր զգում։

Ջեննիի համար հեշտ չէր այնպես անել, որ իր նյարդային, աշխույժ ու չարաճճի աղջիկը չխանգարի հավասարակշռված, հանգիստ, իր գործերով զբաղված Լեսթերին։ Երբ նա առաջին անգամ հեռախոսով նախազգուշացրեց, որ գալու է, Ջեննին խստությամբ խոսեց Վեստայի հետ, նրան ասաց, որ

գալու է մի շատ բարկացկոտ քեռի, որը երեխաներ չի սիրում և որին չի կարելի ձանձրացնել։

— Խելոք կլինես,— խրատում էր նա։— Շատ չխոսես և ոչինչ չխնդրես։ Մայրիկը քեզ կտա ինչ որ պետք է։ Իսկ գըլխավորը՝ ձեռքդ չմեկնես բան վերցնելու։

Վեստան խոստացավ այդպես էլ անել, բայց իր մանկական խելքով հազիվ թե հասկացավ այդ խրատների ամբողջ կարևորությունը։

Լեսթերը եկավ ժամը յոթին։ Ջեննին, աշխատելով որքան կարելի է գեղեցիկ հագցնել Վեստային, ինքը հենց նոր գնացել էր իր ննջարանը՝ իր շորը փոխելու։ Վեստան պետք է խոհանոցում լիներ։ Բայց նա կամացուկ դուրս պրծավ մոր ետևից և կանգ առավ հյուրասենյակի շեմքում, որտեղ և նըրան տեսավ Լեսթերը, երբ վերարկուն և գլխարկը նախասենյակում կախելուց հետո ուղղվեց դեպի սենյակները։ Աղջիկը չքնաղ էր, Լեսթերն այս ընդունեց առաջին իսկ հայացքից։ Նա հագին ուներ սպիտակ պուտիկներով երկնագույն ֆլանելե շոր՝ ետ ծալված օձիքով ու մանժետներով, սպիտակ գուլպաներ ու կոշիկներ։ Բաց գույնի գանգուր մազերը շրջանակում էին նրա դեմքը՝ կապուտակ աչքերը, ալ շրթունքներն ու կարմիր թշիկները։ Լեսթերը զարմացած ուզեց ինչ-որ բան ասել, բայց իրեն զսպեց։ Վեստան վախվխելով հեռացավ։

— Շատ սիրունիկ աղջիկ է,— ասաց Լեսթերը, երբ Ջեննին գնաց նրա մոտ։— Քեզ համար դժվա՞ր է նրան պահել։

— Այնքան էլ չէ,— պատասխանեց Ջեննին։

Նա անցավ սեղանատուն, և Լեսթերը լսեց այսպիսի մի խոսակցություն.

— Այդ ո՞վ է,— հարցրեց Վեստան։

— Ս-ս՞... Նա քո քեռի Լեսթերն է։ Ես հո քեզ ասացի, որ շատախոսել չի կարելի։

— Նա քո քեռին է՞լ է։

— Ոչ, բալիկս։ Շատ մի խոսիր, վազիր խոհանոց։

— Նա միայն ի՞մ քեռին է։

— Այո։ Դե, վազիր։

— Լավ։

Լեսթերն ակամա ժպտաց։

Դժվար է ասել, թե ինչ ընթացք կստանար գործը, եթե Վեստան այլանդակ, լալկան տաղտկալի երեխա լիներ, կամ եթե Ջեննին այնպիսի տակտ չցուցաբերեր։ Բայց աղջկա հրապուրիչ լինելը և մոր ջանքերը՝ մեղմորեն նրան ետին պլանը մղելու՝ ստեղծում էին անաղարտության ու ջահելության տպավորություն, որը միշտ հաճելի ազդեցություն է ունենում։ Լեսթերը հաճախ էր մտածում, որ այս բոլոր տարիներին Ջեննին մայր է եղել։ Նա ամիսներով չի տեսել իր երեխային, ոչ մի խոսք չի ասել նրա մասին։ Բայց և այնպես տարակույս չկար, որ նա սիրում է Վեստային։ «Զարմանալի է,— ասում էր Լեսթերն ինքն իրեն։— Նա արտասովոր կին է»։

Մի անգամ առավոտյան, երբ Լեսթերը լրագիր էր կարդում, ինչ-որ խշխշոց լսվեց։ Նա շուռ եկավ և զարմանքով տեսավ մի կապուտակ աչք, որը կիսաբաց դռան ճեղքից սևեռուն նայում էր իրեն։ Թվում էր, թե հանցանքի մեջ բռնված աչքն անմիջապես պետք է անհետանար, բայց ո՛չ, նա քաջաբար մնաց իր տեղում։ Լեսթերը թերթի էջը շուռ տվեց, նորից ետ նայեց։ Աչքը էլի իրեն էր նայում։ Նա նորից կրկնեց իր շարժումը։ Աչքը չհեռացավ։ Լեսթերը իր դիրքը փոխեց, ոտքը ոտքի վրա գցեց։ Երբ նա նորից գլուխը բարձրացրեց, տեսավ, որ աչքն անհետացել է։

Որքան էլ աննշան էր այս էպիզոդը, նրա մեջ մի ինչ-որ կոմիկական բան կար, իսկ այդ միշտ արձագանք էր գտնում Լեսթերի հոգում։ Եվ այժմ, երբ նա ամենևին հակված չէր իջնելու իր անմատչելի բարձունքից, զգաց, որ խորհրդավոր աչքը զվարճացրեց իրեն։ Նրա շրթունքները ցնցվեցին և քիչ մնաց պիտի տարածվեին որպես ժպիտ։ Նա չենթարկվեց այդ նոր տրամադրությանը և չդադարեց լրագիրը կարդալ, բայց պարզորեն մտքում պահեց այդ աննշան դեպքը։ Դա առաջին դեպքն էր, որ փոքրիկ չարաճճին իսկապես իր վրա էր դարձնում նրա ուշադրությունը։

Դրանից հետո շատ չանցած, երբ մի օր Լեսթերը նախաճաշի նստած առանց շտապելու ուշնչացնում էր ծեծած կոտլետը և լրագրի վերնագրերն էր նայում, նրա հանգիստը նո-

րից խախտվեց։ Ջեննին արդեն կերակրել էր Վեստային և մինչև Լեսթերի գնալը նրան թողնելով մենակ իր խաղալիքների հետ, ինքը սուրճ էր լցնում։ Հանկարծ դուռը բացվեց, և Վեստան լուրջ տեսքով սկսեց անցնել սեղանատան միջով։ Լեսթերը գլուխը բարձրացրեց, Ջեննին կարմրատակեց ու վեր կացավ։

— Ի՞նչ ես ուզում այստեղ, Վեստա,— հարցրեց նա։

Վեստան մինչ այդ մտավ խոհանոց, այնտեղից վերցրեց փոքրիկ ավելը և ետ վերադարձավ՝ իր ամբողջ տեսքով զբաղված ավելի վճռականություն արտահայտելով։

— Ինձ իմ ավելն է հարկավոր,— զրնգուն ձայնով պատասխանեց նա և անվրդով քայլեց դեպի իր սենյակը, իսկ Լեսթերն զգաց, թե ինչպես իր մեջ ինչ-որ մի բան արձագանքեց այդ խիզախությանը, և այս անգամ նա չկարողացավ զսպել իր մեղմ ժպիտը։

Այսպես աստիճանաբար հալվում էր Լեսթերի անբարյացակամ զգացմունքն աղջկա նկատմամբ, իր տեղը զիջելով զիջողամտության և այն գիտակցության, որ նա մարդկային փոքրիկ էակի բոլոր իրավունքներն ունի։

Հետագա վեց ամիսների ընթացքում Լեսթերի անբավականությունը համարյա բոլորովին չքացավ։ Չի կարելի ասել, թե նա հաշտվեց փոքր-ինչ աննորմալ մթնոլորտի հետ, որի մեջ ապրում էր այժմ, բայց տանն այնքան հարմարավետ էր, որ նա չէր կարող հեշտությամբ հեռանալ։ Շատ անուշ կյանք էր վարում նա։ Շատ էր աստվածացնում նրան Ջեննին։ Նրան շատ էր դուր գալիս լիակատար ազատությունը, հին ծանոթների հետ անարգել շփվելու հնարավորությունը՝ զուգակցված խաղաղ հարմարավետության ու սրտակցության հետ, որոնք սպասում էին նրան տանը։ Եվ նա շարունակ հապաղում էր և արդեն սկսում էր մտածել, թե գուցե և հարկավոր չէ որևէ բան փոխել։

Այդ ժամանակամիջոցում աննկատելիորեն ամրապնդվեց նրա մտերմությունը փոքրիկ Վեստայի հետ։ Նա աղջկա արարքների մեջ նկատեց անկեղծ հումոր և հետաքրքրություն էր սպասում դրա նորանոր արտահայտություններին։

Վեստան միշտ զբաղված էր լինում որևէ հետաքրքիր բանով, և թեպետ Ջեննին նրան հետևում էր չթուլացող խստությամբ, որ ինքնին արդեն հայտնություն էր Լեսթերի համար, այնուամենայնիվ անդադրում Վեստան միշտ կարողանում էր որևէ զվարճալի խոսք գցել։ Այսպես, մի անգամ Լեսթերը, տեսնելով, թե ինչպես աղջիկը մեծ դանակով եռանդով մի կտոր միս է սղոցում, Ջեննիին ասաց, որ լավ կլիներ նրա համար մանկական դանակ-պատառաքաղ գնել։

— Նրա համար դժվար է այդպիսի դանակ գործածել։

— Այո,— իսկույն արձագանքեց Վեստան։— Ինձ փոքրիկ դանակ է հարկավոր։ Իմ թաթիկը, տես, ինչքա՜ն փոքրիկ է։

Եվ նա մատները չուեց։ Ջեննին վախենալով, թե նա էլի որևէ բան կասի, շտապեց նրա ձեռքն իջեցնել սեղանին, իսկ Լեսթերը դժվարությամբ զսպեց ծիծաղը։

Մի ուրիշ անգամ տեսնելով, թե ինչպես Ջեննին շաքար է գցում Լեսթերի բաժակը, Վեստան պահանջեց.

— Ինձ էլ երկու կտոր, մայրի՛կ։

— Ոչ, սիրելիս,— պատասխանեց Ջեննին,— քեզ շաքար հարկավոր չէ։ Դու կաթ ես խմում։

— Իսկ քեռի Լեսթերի բաժակը դու երկու կտոր գցեցիր։

— Այո, այո,— ասաց Ջեննին,— բայց դու դեռ փոքր ես։ Եվ, խնդրեմ, սեղանի վրա մի շատախոսիր։ Հանգիստ նստիր։

— Քեռի Լեսթերը շատ շաքար է ուտում,— անհապաղ հետևեց պատասխանը, և Լեսթերը, որը քաղցր սիրում էր, սրտանց ժպտաց։

— Դե, ես չգիտեմ, —ասաց Լեսթերը առաջին անգամ խոսելով աղջկա հետ։— Գուցե դու նման ես այն աղվեսի՞ն, որն ասում էր՝ խաղողը խակ է։

Վեստան ի պատասխան նույնպես ժպտաց, և այժմ, երբ սառույցը կոտրված էր, առանց քաշվելու սկսեց նրա հետ խոսել։ Այսպես էլ սկսվեց, և, վերջապես, Լեսթերն սկսեց աղջկա հետ վարվել հարազատի պես։ Նա նույնիսկ պատ-

ռաստ էր նրան տալու այն ամենը, ինչի ճանապարհ բացում էր իր հարստությունը, իհարկե, այն պայմանով, որ ինքն առաջվա պես ապրի Ջեննիի հետ և իրենք մի միջոց հնարեն, թե ինչպես ինքը, այնուամենայնիվ, կապ պահպանի իր աշխարհի հետ, որի մասին նա չպետք է մոռանար և ոչ մի րոպե։

ԳԼՈՒԽ XXXII

Գարնանը ցուցադահլիճների ու պահեստի կառուցումն ավարտվեց, և Լեսթերն իր գրասենյակը փոխադրեց նոր շենքը։ Մինչև այժմ նրա գործարար կյանքն ընթանում էր «Գրանդ-Պասիֆիկ» հյուրանոցում և ակումբում։ Այժմ նա զգում էր, որ հաստատորեն հիմնավորվել է Չիկագոյում, որ այսուհետև ինքը մշտապես այստեղ է ապրելու։ Նրա վրա լուրջ պարտականություններ էին ընկած՝ ղեկավարել գրասենյակի մեծաթիվ ծառայողներին և խոշոր գործարքներ կնքել։ Դրա փոխարեն նա ազատվել էր ճամփորդություններից. դրանք հանձնարարված էին Էմիի ամուսնուն, որը գործում էր Ռոբերտի ցուցումներով։ Վերջինս բոլոր ուժերով աշխատում էր առաջ անցնել, նա ջանում էր իր կողմը քաշել քույրերին և արդեն նախաձեռնել էր գործարանի վերակառուցումը։ Մի քանի ծառայողների, որոնք Լեսթերի անձնական համակրանքն էին վայելում, արձակում էր սպառնում։ Բայց Լեսթերն այդ չգիտեր, իսկ ծերունի Քեյնը հակված էր Ռոբերտին գործողությունների լիակատար ազդեցություն տալու։ Տարիներն իրենց գործը տեսել էին։ Նա գոհ էր, որ իր գործը մնալու է ամուր, հուսալի ձեռքերում։ Լեսթերը կարծես անբավականություն չէր արտահայտում։ Թվում էր, թե նրա և Ռոբերտի հարաբերությունները լավացել են։

Հնարավոր է դրանից հետո էլ ամեն ինչ հարթ ու խաղաղ անցներ, եթե չլիներ այն հանգամանքը, որ Լեսթերի անձնական կյանքը չէր կարող միշտ գաղտնի մնալ։ Պատահում էր, որ բաց կառքով Ջեննիի հետ տեղ գնալիս նրանց տեսնում էին բարձր շրջանի կամ գործարար մարդիկ։ Բայց այդ նրան չէր

անհանգստացնում. չէ՞ որ ինքն ամուրի էր և ազատ էր ժամանակ անցկացնելու ում հետ ցանկանար։ Ինչո՞ւ չէր կարելի ենթադրել, որ Ջեննին հարգարժան ընտանիքի մի ջահել կին է, որին սիրատածում է նա։ Նա մտադիր չէր որևէ մեկի հետ ծանոթացնել Ջեննիին և միանգամ ընդմիշտ կառապանին պատվիրել էր որքան կարելի է արագ քշել, որպեսզի ոչ ոք չփորձի նրան ձայն տալ ու հետը խոսել։ Իսկ թատրոնում հանդիպողների համար Ջեննին, ինչպես արդեն ասել ենք, պարզապես «միսս Գերհարդ» էր։

Դժբախտաբար Լեսթերի ծանոթներից շատերն աչքի էին ընկնում սուր դիտողականությամբ։ Նրանք ամենևին էլ միտք չունեին դատապարտել նրա վարքը։ Պարզապես հիշում էին, որ անցած տարիներին, ուրիշ քաղաքներում էլ նրան տեսել են այդ նույն կնոջ հետ։ Երևում է, նա այդ կնոջ հետ ապօրինի կապ է պահպանում։ Հետո ի՞նչ կա որ։ Հարստությունն ու երիտասարդությունը շատ բանի իրավունք են տալիս։ Որոշ լուրեր հասել էին նաև Ռոբերտին, բայց նա հարկ չէր համարել իր ենթադրությունները հայտնել որևէ մեկին։ Սակայն վաղ թե ուշ ամեն ինչ պիտի բացվեր։

Այդ պատահեց մոտ մեկուկես տարի հետո այն օրից, ինչ Լեսթերն ու Ջեննին տեղավորվել էին Հյուսիսային կողմում։ Աշնան խոնավ եղանակին Լեսթերը գրիպով հիվանդացավ։ Տկարության առաջին նշաններն զգալով՝ նա մտածեց, թե դա դատարկ բան է և տաք լոգանքն ու մի կարգին բաժին խինինը իսկույն իրեն ոտքի կկանգնեցնի։ Բայց դուրս եկավ, որ հիվանդությունը լուրջ է։ Առավոտյան նա անկողնից ելնել չկարողացավ, ջերմությունը բարձր էր, և գլուխը սաստիկ ցավում էր։

Վերջին ժամանակներս շարունակ ապրելով Ջեննիի հետ, նա անզգույշ էր դարձել։ Հարկ էր, որ նա գնա հյուրանոց և մենակ քաշի իր հիվանդությունը։ Բայց տանը, Ջեննիի հետ լինելը նրան շատ ավելի հաճելի էր։ Նա զանգահարեց գրասենյակ և իմաց տվեց, որ վատառողջ է և մի քանի օր դալ չի կարող, ապա երանությամբ անձնատուր եղավ իր համբերատար հիվանդապահի հոգատարությանը։

Հասկանալի է, Ջեննին ուրախ էր, որ Լեսթերն իր հետ է, հիվանդ լինի թե առողջ։ Նա Լեսթերին համոզեց բժիշկ հրավիրել և դեղեր ընդունել։ Նա կիտրոնով տաք թեյ էր տալիս Լեսթերին, գիշեր-ցերեկ սառը թրջոց էր դնում նրա ճակատին ու ձեռքերին։ Իսկ երբ Լեսթերն սկսեց ապաքինվել, նրա համար համեղ արգանակ ու խաշիլ եփեց։

Ահա այդ հիվանդության ժամանակ էլ տեղի ունեցավ առաջին լուրջ տհաճ դեպքը։ Լեսթերի քույր Լուիզան, որ հյուր էր գնացել Սենտ-Պոլ իրենց մի ծանոթին և եղբորը նախազգուշացրել էր, թե մտադիր է վերադարձի ճանապարհին այցելել նրան, որոշել էր ավելի շուտ վերադառնալ, քան նախատեսվում էր։ Նա Չիկագո հասավ Լեսթերի հիվանդության հենց ամենալուրջ պահին և հեռախոսով գրասենյակից իմանալով, որ նա էլի մի քանի օր գրասենյակ չի գալու, հարցրեց, թե ինչպես կարելի է կապվել նրա հետ։

— Կարծեմ նա ապրում է «Գրանդ-Պասիֆիկ» հյուրանոցում, և մի քիչ վատառողջ է,— լեզվից թոցրեց մի ինչ-որ անզգույշ քարտուղար։

Լուիզան անհանգստացած զանգահարեց «Գրանդ-Պասիֆիկ», որտեղից իմացավ, որ միստր Քեյնին արդեն մի քանի օր է, ինչ չեն տեսել, և ընդհանրապես նա հյուրանոցում լինում է ամենաշատը շաբաթական մեկ-երկու անգամ։ Այն ժամանակ քույրը, որի հետաքրքրությունը շարժվել էր դրանից, զանգահարեց ակումբ։

Հակառակի պես հեռախոսին մոտեցավ հենց այն տղան, որը Լեսթերի հանձնարարությամբ մի քանի անգամ եղել էր նրա բնակարանում։ Տղան չգիտեր, որ Լեսթերի հասցեն գաղտնի պիտի պահել. մինչև այժմ դրանով ոչ ոք չէր հետաքրքրվել։ Երբ Լուիզան ասաց, որ ինքը Լեսթերի քույրն է և շատ է ուզում նրան տեսնել, տղան պատասխանեց.

— Նա ապրում է Շիլլերի հրապարակում, համար տասնիններորդ տանը։

— Այդ ո՞ւմ հասցեն ես տալիս,— հարցրեց կլերկը, որ գտնվում էր հեռախոսի մոտ։

— Միստր Քեյնի։

— Ոչ մի հասցե տալ չի՛ կարելի։ Ի՞նչ է, դու չգիտե՞ս այդ։

Տղան շփոթվեց ու ներողություն խնդրեց, բայց Լուիզան արդեն լսափողը կախել էր։

Այսպիսով Լուիզան զարմանքով պարզեց, որ իր եղբայրն ունի նաև երրորդ հասցեն, և մի ժամ հետո արդեն Շիլլերի հրապարակումն էր։ Կանգ առնելով երկհարկանի տան առաջ, նա երկրորդ հարկը տանող դռանը կպցրած փոքրիկ տախտակին կարդաց «Քեյն» ազգանունը, վերև բարձրացավ և զանգը քաշեց։ Զանգի վրա Ջեննին դուրս եկավ և շատ զարմացավ իր առաջ մի շքեղազարդ կին տեսնելով։

— Այստե՞ղ է ապրում միստր Քեյնը, —գոռոզաբար հարցրեց Լուիզան՝ բաց դռան միջով նայելով դեպի սենյակի ներսը։ Կնոջ ներկայությունը մի փոքր զարմացրել էր նրան, բայց նրա կասկածները դեռ ազդա էին։

— Այո,— պատասխանեց Ջեննին։

— Նա, կարծեմ, հիվա՞նդ է։ Ես նրա քույրն եմ։ Կարելի՞ է ներս մտնել։

Եթե Ջեննին մտքերը ժողովելու ժամանակ ունենար, մի որևէ մերժողական պատասխան կհնարեր, բայց դեռ նա մի խոսք էլ չէր հասցրել ասել, երբ Լուիզան, որ երես առած էր իր դիրքի շնորհիվ և սովոր էր ուզածին պես վարվելու, արդեն նրա մոտով շորորալով անցավ սենյակ։ Լեսթերի պառկած ննջարանին կից հյուրասենյակում նա ետ նայեց։ Վեստան, որ խաղում էր մի անկյունում, տեղից վեր կացավ և հետաքրքրությամբ նայեց հյուրին։ Ննջարանի բաց դռան միջով Լուիզան տեսավ Լեսթերին։ Նա պառկած էր անկողնում, աչքերը փակ, ձախ կողմից լուսավորված պատուհանից ներս հորդացող արեգակի ճառագայթներով։

— Ա՜յ թե որտեղ ես դու,— գոչեց Լուիզան արագ մըտնելով ննջարան։— Ի՞նչ է պատահել քեզ։

Նրա ձայնը լսելուն պես Լեսթերն աչքերը բացեց և իսկույն ամեն ինչ հասկացավ։ Նա բարձրացավ արմունկի վրա, բայց ոչ մի բառ արտասանել չկարողացավ։ Վերջապես դժվարությամբ խոսեց.

— Բարև, Լուիզա։ Այդ որտեղի՞ց լույս ընկար դու։

— Սենտ-Պոլեից։ Ես իմ որոշած օրից ավելի շուտ դուրս եկա,— խոսեց նա արագ ու մի քիչ զգոված, զգալով, որ այստեղ մի ինչ-որ բան կա։— Ես հազիվ գտա քեզ։ Այդ ինչ...— նա ուզում էր ասել «լավիկ տնտեսուհի ունես», բայց նա նայելով տեսավ Ջեննիին, որը տխուր, շփոթված գեմքով ինչ-որ բան էր հավաքում հյուրասենյակում։

Լեսթերը պատասխանի փոխարեն հազաց։

Լուիզան ուշի-ուշով նայեց սենյակի ներսը։ Նրա աչքից չվրիպեց ընտանեկան բնակարանի մթնոլորտը, որ գուրեկան էր, բայց վտանգավոր մտքեր էր հարուցում։ Աթոռին ընկած էր Ջեննիի շորը, որը տեսնելով միսս Քեյնը զզվանքով շրջազգեստի փեշը հավաքեց։ Նա նայեց եղբորը և նրա աչքերում կարդաց մի տարօրինակ արտահայտություն, ասես նա մի փոքր շփոթված էր, բայց միաժամանակ հանգիստ և մարտի պատրաստ։

— Իզուր ես դու այստեղ եկել,— ասաց Լեսթերը, ժամանակ չտալով, որ Լուիզան տա իր լեզվի ծայրի հարցը։

— Ինչո՞ւ իզուր,— գոչեց նա եղբոր հանգուգն անկեղծությունից վրդովված։— Դու իմ եղբայրն ես, չէ՞։ Իսկ եթե եղբայրս ես, ես կարող եմ քեզ մոտ գալ որտեղ էլ լինես։ Սրրա՞ն նայեցեք։ Եվ դու ինձ այդպիսի բաներ՞ ես ասում։

— Լսիր, Լուիզա,— շարունակեց Լեսթերը ավելի վեր բարձրանալով արմունկի վրա։— Դու փոքրիկ աղջիկ չես։ Եվ միտք չունի, որ մենք կուվենք։ Ես չգիտեի, որ դու կգաս, թե չէ որոշ միջոցներ ձեռք կառնեի։

— Որոշ միջոցնե՞ր,— ցգրացրեց նա չարությամբ։— Դե պարզ է։ Ուրիշ ինչպե՞ս։

Լուիզան զգում էր, որ ծուղակի մեջ է ընկել, դրա համար զայրանում էր Լեսթերի վրա։

Իսկ Լեսթերը բարկությունից նույնիսկ կարմրել էր։

— Իզուր ես դու քիթդ ցցում,— վճռականորեն ասաց Լեսթերը։— Ես ամենևին չեմ արդարանում քո առաջ։ Ասում եմ, որ որոշ միջոցներ ձեռք կառնեի, բայց դա ամենևին չի

նշանակում, թե ես ներողություն եմ խնդրում։ Եթե դու քաղաքավարի խոսել չես ուզում, կամքը քոնն է։

— Դե, գիտե՞ս ինչ, Լեսթեր,— բռնկեց Լուիզան։— Ես այդ քեզանից չէի սպասում։ Ես կարծում էի, դու կամաչես բացարձակորեն ապրել մի...— Նա կմկմաց, սիրտ չանելով արտասանել սոսկալի բառը,— երբ Զիկագոն լիքն է մեր ծանոթներով։ Դա սոսկալի բան է։ Ես կարծում էի, այնուամենայնիվ, դու պատշաճության զգացմունք ունես և կհարգես հասարակական...

— Գրողի ծո՛ցը քո այդ պատշաճությունը,— բռնկեց Լեսթերը։— Վերջապես հասկացիր, որ ես քեզանից ներողություն չեմ խնդրում։ Եթե այստեղ քեզ դուր չի գալիս, ինքդ շատ լավ գիտես, թե ինչ պիտի անես։

— Օ՜, աստվա՜ծ իմ,— գոչեց քույրը։— Եվ այս ասում է իմ եղբայրը։ Եվ ամբողջն այն փուչ կենդանո՞ւ համար։ Ո՞ւմն է այն երեխան,— հանկարծ հարցրեց նա կատաղորեն, բայց և հետաքրքրությամբ։

— Կարող ես հանգիստ լինել, իմը չէ։ Ասենք, թեկուզեն իմը լինի. քո ի՛նչ գործն է։ Խնդրում եմ քեզ՝ չխառնվել իմ անձնական կյանքին։

Ջեննին լսում էր այս ամենը, ինչպես և իր հասցեին ասված վիրավորական ակնարկները, և նրա սիրտը ճմլվում էր ցավով։

— Հանգստացիր, ես այլևս քո կյանքին չեմ խառնվի,— փոթորկեց Լուիզան։— Կասեմ միայն, որ ումից սպասեիչսպասեի, քեզանից այս չէի սպասի։ Եվ այն էլ մի կնոջ հետ, որն այնպես ակնհայտորեն ցածր է քեզանից։ Սկզբում ես կարծում էի, թե նա...— Լուիզան էլի ուզում էր ասել «քո տնտեսուհին է», բայց Լեսթերը ցասումից իրեն կորցրած կոպտորեն ընդհատեց նրան.

— Ինձ համար միևնույն է, թե դու ինչ ես մտածել նրա մասին։ Նա ավելի լավն է ուրիշ շատերից, որոնք իրենց բարձր արարած են երևակայում։ Գիտեմ, թե դու ինչ ես մտածում։ Դրանք բոլորը դատարկ բաներ են։ Ես անում եմ այն, ինչ ցանկանում եմ, և քո քննադատության հետ գործ

չունեմ։ Ես ինքս եմ ինձ համար պատասխանատու և խնդրում եմ իմ մասին մի հոգա։

— Եվ չեմ էլ հոգա, կարող ես համոզված լինել,— վրա բերեց Լուիզան։— Որ ընտանիքը քեզ համար ոչ մի նշանակություն չունի, դա հիմա ինձ համար պարզ է։ Բայց եթե գեթ մի կաթիլ խիղճ ունենայիր, երբեք չէիր թույլ տա, որ քո քույրն այսպիսի վիճակի մեջ ընկնի։ Ես ուղղակի զզվում եմ, և մյուսներն էլ, երբ իմանան, միևնույնը կասեն, ուրիշ ոչինչ։

Նա կտրուկ շուռ եկավ կրունկի վրա և դուրս գնաց, ճանապարհին մի սպանիչ հայացք գցելով Ջեննիի վրա, որը հակառակի պես հյուրասենյակի դռան մեջ էր գտնվում։ Վեստան սենյակում չկար։ Քիչ սպասելուց հետո Ջեննին մտավ Լեսթերի սենյակը և դուռն իր ետևից ծածկեց։ Ասելու ոչինչ չուներ։ Լեսթերը թավ մազերը լայն ճակատից ետ տված՝ բարձին պառկել էր հոգնած ու մռայլ։ «Հենց այս էր պակաս»,— մտածում էր նա։ Հիմա կգնա տուն ու բոլորին կպատմի։ Հայրիկս կիմանա, մայրս, Ռոբերտը, Իմոջինը, Էմին—բոլորը կիմանան։ Եվ ժխտել էլ չի լինի. Լուիզան բավական բան տեսավ։ Լեսթերը մտախոհ հայացքը հառել էր պատին։

Մինչ այդ Ջեննին իր տնային գործերով զբաղված՝ նույնպես խոհերի մեջ էր ընկել։ Ահա թե իր մասին ինչպիսի կարծիքի է մի ուրիշ կին։ Հիմա հասկանալի է, թե ինչ է մտածում աշխարհը։ Լեսթերի ընտանիքն իր համար նույնքան հեռու է, որքան մի ուրիշ մոլորակ։ Նրա ծնողների, եղբայրների, քույրերի համար ինքը վատ կին է, Լեսթերից անչափ ցած հասարակության մեջ ունեցած իր դիրքով, նրանից անսահման ցած բարոյապես ու մտավոր կարողություններով, ինքը փողոցային լիրբ է, փուչ արարած։ Այնինչ ինքը հույս էր դրել, թե ժամանակին կվերականգնի իր վարկը։ Այս միտքը նրա համար ամենից ավելի ցավոտն էր և վիրավորում էր նրան դանակի հարվածի պես։ Այո, ինքն, իսկապես, փուչ ու ստոր արարած է Լուիզայի աչքում, աշխարհի աչքում, գլխավորը՝ Լեսթերի աչքում։ Կարո՞ղ է այլ կերպ լինել։ Նա լուռ էր և չէր գանգատվում, բայց ստորացման ցավն ու ամոթը չէին վերանում։

Ա՜խ, եթե կարելի լիներ մի կերպ արդարանալ այդ բոլոր մարդկանց աչքում, ապրել ազնվորեն, դառնալ կարգին կին։ Ինչպե՞ս անել այդ։ Դրան հասնելն անհրաժեշտ է, բայց ինչպե՞ս։

ԳԼՈՒԽ XXXIII

Լուիզան իրենց ընտանեկան հպարտությունը խորապես խոցված զգալով՝ իսկույն վերադարձավ Ցինցիննատի, որտեղ իր հայտնագործությունը պատմեց ամենայն մանրամասնությամբ։ Նրա ասելով, իր առաջ դուռը բացեց «բոլորովին հասարակ, հիմարի տեսքով մի կին», որը լսելով, թե ով է եկողը, նույնիսկ ներս չհրավիրեց, այլ քար կտրեց տեղում «դեմքի ամենամեղավոր արտահայտությամբ»։ Լեսթերը նույնպես իրեն շատ անխիղճ պահեց, նա իսկույն դուրս տվեց ամբողջ ճշմարտությունը։ Երբ Լուիզան հարցրեց՝ ումն է այդ երեխան, որ ապրում է իրենց հետ, նա հրաժարվեց պատասխանել։ «Իմը չէ»,— ահա ամբողջը, որ նա ասաց։

— Ա՜խ, աստվա՜ծ իմ,— հառաչեց միսիս Քեյնը, որն առաջինն իմացավ նորությունը։— Իմ որդի՜ն, իմ Լե՜սթերը։ Ինչպե՞ս է նա այդպիսի բան արել։

— Եվ այնպիսի մի ստոր արարա՜ծ է,— չէր դադարում բացականչել Լուիզան, ասես ցանկանալով անվերջ կրկնությունով ավելի շատ համոզիչ դարձնել իր խոսքերը։— Ես այնտեղ դնացի պարզապես նրա համար, որ ուզում էի օգնել իրեն,— շարունակեց նա։— Ինձ ասացին, որ նա վատառողջ է, մտածեցի՝ գուցե լուրջ հիվանդ է։ Կարո՞ղ էի այսպիսի բան ենթադրել...

— Խե՜ղճ Լեսթեր,— գոչեց մայրը։— Ո՞ւմ մտքով կանցներ, թե նա կարող է այդտեղ հասնել։

Միսիս Քեյնը փորձեց լուծել այս դժվարին խնդիրը, բայց չիմանալով ինչ չափանիշով մոտենալ հարցին, հեռախոսով կանչեց ամուսնուն, որը գործարանից եկավ և պատմությունը լսեց լուռ, քարացած դեմքով։ Այդպես ուրեմն, Լեսթերը բա-

ցահայտորեն ապրում է մի կնոջ հետ, որի մասին իրենք մինչև այժմ ոչինչ չեն լսել։ Հիմա ի՞նչ պիտի անել։ Մնողական հեղինակությունը չի օգնի։ Լեսթերն ինքն է իր համար հեղինակություն, նա ուժեղ բնավորություն ունի և կշտամբանքներին կպատասխանի անտարբերությամբ կամ գուցե և հակահարված կտա։ Եթե ուզում ես նրա վրա ազդել, հարկավոր է գործի դնել քաղաքականությունը։

Արչիբալդ Քեյնը գործարան վերադարձավ դառնացած և զայրացած, որևէ բան նախաձեռնելու հաստատ վճռականությամբ։ Երեկոյան նա զրույց ունեցավ Ռոբերտի հետ, որը խոստովանեց, թե իրեն արդեն որոշ լուրեր հասել էին, բայց ինքը գերադասել էր լռել։ Միսիս Քեյնը մի միտք հայտնեց, թե լավ չի՞ լինի, եթե Ռոբերտը գնա Չիկագո՝ Լեսթերի հետ խոսելու։

— Նա չի կարող չհասկանալ, որ իր վարմունքով անուղղելի վնաս է հասցնում իրեն,— ասաց ծերունի Քեյնը։— Այդպիսի բաները ոչ ոքի համար անպատիժ չեն մնում։ Նա պետք է կամ ամուսնանա այդ կնոջ հետ, կամ կապերը կտրի նրանից։ Այդպես էլ ասա նրան իմ անունից։

— Այդ ամենը շատ լավ,— ասաց Ռոբերտը,— բայց ո՞վ է նրան համոզելու։ Ես, ճիշտն ասած, ցանկություն չունեմ դրանով զբաղվելու։

— Ես հույս չեմ կտրում,— ասաց ծերունին։— Դու գնա, փորձիր։ Դրանից վնաս չի լինի։ Եվ գուցե նա խելքի կգա։

— Հազիվ թե,— առարկեց Ռոբերտը։— Նա շատ համառ մարդ է։ Այդպիսի խոսակցությունների մեջ ես մի առանձին օգուտ չեմ տեսնում։ Բայց քանի որ դու ասում ես, իհարկե, կգնամ։ Մայրիկն էլ է ուզում այդ։

— Այո, այո,— վերջապես ասաց դառնացած հայրը։— Այսուամենայնիվ դու գնա։

Եվ Ռոբերտը գնաց Չիկագո։ Իր այդ ձեռնարկության հաջողության ոչ մի հույս չունենալով՝ նա, համենայն դեպս, բավականություն էր զգում, որ բարոյականությունն ու արդարությունն իր կողմն է։

Չիկագո հասնելով, Լուիզայի այցելությունից հետո եր-

որդ օրվա առավոտյան, նա զանգահարեց պահեստ, բայց Լեսթերն այնտեղ չէր։ Այն ժամանակ նա զանգահարեց նրա տուն և քաղաքավարի առաջարկեց որևէ տեղ հանդիպել։ Լեսթերը դեռ լիովին չէր ապաքինվել, բայց գերադասեց գնալ գրասենյակ։ Ռոբերտին նա բարևեց սովորականի պես առույգ, և միառժամանակ նրանք խոսում էին գործերի մասին։ Ապա տիրեց լարված լռություն։

Ռոբերտը հեռվից սկսեց։

— Դու երևի գիտե՞ս, թե ինչի համար եմ ես այստեղ եկել։

— Կռահում եմ,— պատասխանեց Լեսթերը։

— Տանը քո հիվանդության մասին իմանալով, բոլորը շատ են անհանգստացել, մանավանդ մայրիկը։ Հիվանդության կրկնություն չի՞ սպառնում քեզ։

— Կարծում եմ՝ ոչ։

— Լուիզան պատմում էր, որ քեզ գտել է մի քիչ յուրահատուկ ընտանեկան պայմաններում։ Դու, իհարկե, ամուսնացած չե՞ս։

— Ոչ։

— Այն կինը, որ տեսել է Լուիզան, երևի հենց այնպես...— Ռոբերտը արտահայտիչ ձևով ձեռքի մի շարժում արեց օդում։

Լեսթերը գլխով արավ։

— Ես չեմ ուզում քեզ հարցաքննել, Լեսթեր։ Ես դրա համար չեմ եկել։ Պարզապես մերոնք խնդրեցին տեսնվել քեզ հետ։ Մայրիկն այնպիսի հուսահատության մեջ էր, որ ես պարտավոր էի այդ անել թեկուզ հենց նրա սիրույն...

Նա լռեց, և Լեսթերն այդպիսի հարգալից ու արդարացի դիտողությունից զգացված՝ մտածեց, որ բացատրություններից կտրականապես հրաժարվելը պարզապես անհարմար կլիներ։

— Հազիվ թե կարողանամ որևէ մխիթարական բան ասել քեզ,— դանդաղորեն սկսեց նա։— Ասենք, ասելու բան էլ չունեմ։ Այդ կինը գոյություն ունի, և ես ապրում եմ նրա հետ,

իսկ մերոնց այդ դուր չի գալիս։ Ամենից վատը գուցե այն է, որ մի դժբախտ պատահականությամբ դուք այդ իմացել եք։

Նա լռեց, թողնելով, որ Ռոբերտը խորհի իր զգաստ դատողություններ մասին։ Լեսթերն, ըստ երևույթին, իր դրությանը հանգիստ էր վերաբերվում։ Եվ նրա խոսքերը, ինչպես միշտ, հնչում էին առողջ ու համոզիչ։

— Դու մտադիր չե՞ս ամուսնանալ նրա հետ,— անվճռական հարցրեց Ռոբերտը։

— Առայժմ ոչ,— պաղարյուն պատասխանեց Լեսթերը։

Մի րոպե նրանք լուռ նայում էին իրար, ապա Ռոբերտը հայացքը դարձրեց լուսամուտից դուրս տարածված քաղաքի վրա։

— Երևի միտք էլ չունի հարցնել քեզ, թե սիրո՞ւմ ես դու նրան,— համարձակվեց ասել նա։

— Ճիշտն ասած, չգիտեմ, թե ես ինչպես կքննարկեի այդ ոչ երկրային զգացմունքը,— մռայլ ասաց Լեսթերը։— Ես այդպիսի զգացմունք ունենալու բախտ չեմ ունեցել։ Գիտեմ միայն, որ այդ կինը ինձ լիովին հարմար է։

Ռոբերտը նորից լռեց։

— Ինչ կա որ,— ասաց նա վերջապես,— խոսքը վերաբերում է քո բարեկեցությանը և ընտանիքի հանգստությանը։ Ընդունենք, որ բարոյականությունն այստեղ դեր չունի, համենայն դեպս, ես ու դու չենք, որ պիտի քննենք գործի այդ կողմը։ Քո զգացմունքները վերաբերում են միայն քեզ։ Բայց քո ապագայի հարցը, ինձ թվում է, այնքան է լուրջ, որ պետք է խոսել դրա մասին։ Ընտանիքի լավ անունն ու արժանապատվությունը պահպանելու մասին նույնպես արժե մտածել։ Մեր հայրը ընտանիքի պատիվը շատ ավելի բարձր է գնահատում, քան ուրիշ շատ մարդիկ։ Հասկանալի է, այս բանը քեզ նույնքան լավ հայտնի է, որքան ինձ։

— Ես գիտեմ, թե դրան ինչպես է նայում հայրիկը,— պատասխանեց Լեսթերը։— Ամեն ինչ ինձ համար նույնքան պարզ է, որքան ձեզանից որևէ մեկին, բայց հիմա ես ուղղակի ոչինչ առաջարկել չեմ կարող։ Այսպիսի հարաբերությունները մեկ օրում չեն ստեղծվում, և միանգամից դրանց

վերջ տալն անհնարին է։ Այդ կինը գոյություն ունի։ Մասամբ ես ինքս եմ դրանում մեղավոր։ Մանրամասնությունների մասին խոսելու միտք չունեմ. այդպիսի գործերում շատ բան միշտ էլ թաքնված է լինում կողմնակի աչքից։

— Ես, իհարկե, ձեր հարաբերությունների մասին դաղափար չունեմ,— ասաց Ռոբերտը,— և միտք էլ չունեմ հարցուփորձ անել քեզ, բայց քեզ չի՞ թվում արդյոք, որ դու այնքան էլ ազնվորեն չես վարվում... եթե միայն միտք չունես ամուսնանալ նրա հետ,— ավելացրեց նա հողը շոշափելու համար։

Եղբոր պատասխանը շվարեցրեց նրան։

— Գուցե և ես այդ էլ անեի,— ասաց Լեսթերը,— եթե դրա մեջ որևէ օգուտ տեսնեի։ Ամենագլխավորն այն է, որ այդ կինը գոյություն ունի, և ամբողջ ընտանիքին այդ հայտնի է։ Եթե այստեղ հարկավոր է որևէ բան նախաձեռնել, ապա այդ միայն ես պիտի անեմ։ Իմ փոխարեն ոչ ոք չի կարող գործել։

Լեսթերը լռեց, իսկ Ռոբերտը վեր կացավ և սկսեց սենյակում ետ ու առաջ քայլել։ Ապա նա նորից մոտեցավ եղբորը և ասաց.

— Դու ասում ես, որ մտադիր չես նրա հետ ամուսնանալ, կամ, ավելի ճիշտ, որ դեռ այդտեղ չի հասել։ Խորհուրդ չեմ տալիս, Լեսթեր։ Ինձ թվում է դա ճակատագրական սխալ կլիներ։ Ես քեզ խրատել չեմ ուզում, բայց ինքդ մտածիր, թե քո դրության մեջ գտնվող մարդուն ինչ է սպառնում այդ։ Դու իրավունք չունես վտանգելու քեզ։ Էլ չխոսենք ընտանիքի մասին, բայց դու փխստ շատ բան ես վտանգի ենթարկում։ Դու պարզապես կործանում ես քո կյանքը...

Նա լռեց՝ աջ ձեռքն առաջ մեկնելով, նրա սովորական շարժումը, երբ որևէ բան առանձնապես մոտ էր ընդունում իր սրտին,— և Լեսթերն զգաց նրա խոսքերի պարզ անկեղծությունը։ Ռոբերտն արդեն դատավորի դերում չէր հանդես գալիս։ Նա կոչ էր անում եղբոր բանականությանը, իսկ դա խիստ փոխում էր գործը։

Սակայն Լեսթերն այդ կոչին չարձագանքեց, և Ռոբերտը

փորձեց ուրիշ լարի խփել։ Նա Լեսթերին հիշեցրեց, թե հայրը որքան է սիրում նրան, ինչպես հուսով էր, որ Լեսթերը Ցինցիննատիում կամուսնանա մի հարուստ աղջկա հետ, թեկուզև կաթոլիկ չլինի, եթե նա ուզում է, բայց, համենայն դեպս, իր շրջանի աղջկա հետ։ Միսիս Քեյնը նույնպես միշտ փայփայում էր այդ հույսը, բայց ինչ ասել կուզի, Լեսթերն ինքն էլ ամեն ինչ իմանում է։

— Այո, ես գիտեմ, թե նրանք ինչպես են նայում այդ բանին,— ընդհատեց նրան Լեսթերը,— բայց, ճիշտն ասած, չգիտեմ, թե հիմա ինչ վարելի է փոխել։

— Դու ուզում ես ասել, որ առայժմ նպատակահարմար չե՞ս համարում նրանից բաժանվել։

— Ես ուզում եմ ասել, որ նրանից բացառիկ վերաբերմունք եմ տեսել, և, որպես կարգին մարդ, ես պարտավոր եմ ամեն հնարավոր բան անել նրա համար։ Բայց թե ինչ՝ դեռ ինքս էլ չգիտեմ։

— Դու գտնում ես, որ պարտավոր ես նրա հե՞տ ապրել,— սառն հարցրեց Ռոբերտը։

— Համենայն դեպս՝ փողոց չգցել նրան, քանի որ նա վարժվել է ինձ հետ ապրել,— պատասխանեց Լեսթերը։

Ռոբերտը նորից նստեց բազկաթոռին, ասես հաշտվելով այն մտքի հետ, որ իր կոչն անպատասխան մնաց։

— Մի՞թե ընտանիքում առաջացող բարդությունները բավական պատճառ չեն, որպեսզի բարեկամաբար խոսես նրա հետ և բաց թողնես։

— Ո՛չ ավելի շուտ, քան ես մինչև վերջ կխորհեմ այդ հարցի մասին։

— Եվ դու նույնիսկ ինձ չե՞ս խոստանում մոտ ժամանակներս վերջ տալ դրան, որպեսզի ես տուն գնալով կարողանամ հանգստացնել մեր ծնողներին։

— Ես ուրախությամբ կթեթևացնեի նրանց վիշտը, բայց ճշմարտությունը մնում է ճշմարտություն, և քեզ հետ խոսելիս ես հարկ չեմ համարում խորամանկության դիմել։ Ինչպես արդեն ասացի, այդպիսի հարաբերությունները քննարկել չի լինի. դա ուղղակի անթույլատրելի է և՛ իմ, և՛ այդ կնոջ վե-

բաբերմամբ։ Այստեղ նույնիսկ շահագրգռված կողմերը երբեմն չեն իմանում, թե ինչպես վարվեն, ուր մնաց կողմնակի մարդիկ։ Ես պարզապես սրիկա կլինեի, եթե հիմա քեզ խոսք տայի որևէ որոշակի քայլ անել։

Ռոբերտը նորից սենյակում ետ ու առաջ քայլեց։

— Ուրեմն դու գտնում ես, որ հիմա ոչինչ չի՞ կարելի անել։

— Առայժմ ոչինչ։

— Դե, ուրեմն, ես գնամ։ Կարծես մենք այլևս խոսելու բան չունենք։

— Գուցե դու կնախաճաշե՞ս ինձ հետ։ Ես հիմա ազատ եմ, գնանք միասին հյուրանոց։

— Ոչ, շնորհակալ եմ,— ասաց Ռոբերտը։—Կարծում եմ, ես կհասնեմ ժամը մեկին Ցինցիննատի մեկնող գնացքին։ Համենայն դեպս կփորձեմ։

Նրանք կանգնած էին դեմ-դիմաց, Լեսթերը՝ գունատ ու փոքր-ինչ թոռոմած, Ռոբերտը՝ թուխ, ուղիղ ձգված, խելքը գլխին, և երևում էր, թե տարիներն ինչպես են փոխել և՛ մեկին, և՛ մյուսին։ Ռոբերտն ամբողջ կյանքում գործել էր պարզ ու վճռական, Լեսթերին շարունակ հաղթահարել էին տարակուսանքները։ Ռոբերտի մեջ մարմնացել էին եռանդն ու գործարարի թափը, Լեսթերի մեջ՝ հաջողակ հարուստի անձնապաստանությունը՝ կյանքի նկատմամբ փոքր-ինչ հոռետես հայացքով։ Նրանք միասին հանդիսանում էին մի երևելի պատկեր, անկախ նրանից, թե հիմա ինչ մտքեր էին պտտվում նրանց գիտակցության մեջ։

— Դե, ի՛նչ ասեմ,— կարճ լռությունից հետո ասաց ավագ եղբայրը,— ավելացնելու ոչինչ չունեմ։ Ես հույս ունեի, թե կկարողանամ քեզ ներշնչել մեր տեսակետը, բայց դու, իհարկե, քո ասածին ես մնում։ Քանի որ ինքդ չես հասկանում, թե ինչ ես անում, ես չեմ, որ քեզ պիտի խելքի բերեմ։ Մեկ բան կասեմ. իմ կարծիքով, դու խելացի չես վարվում։

Լեսթերը լսում էր լուռ, և նրա դեմքն արտահայտում էր համառ վճռականություն։

Ռոբերտը գլխարկը վերցրեց, և նրանք միասին ուղղվեցին դեպի դուռը։

— Ես կաշխատեմ բանը նրանց ներկայացնել ամենալավ գույներով,— ասաց Ռոբերտը և դուրս գնաց։

ԳԼՈՒԽ XXXIV

Մեզ հայտնի աշխարհում կենդանական թագավորության բոլոր ներկայացուցիչների կյանքն ընթանում է որոշակի մթնոլորտում կամ միջավայրում, ասես դրանից դուրս նրանք չէին կարող գոյություն ունենալ մոլորակի վրա, որը անսասան օրենքի ուժով պտտվում է արեգակի շուրջը։ Այսպես, ձուկը ոչնչանում է, եթե հեռանում է իր տարերքից, իսկ թռչունը շատ թանկ կհատուցի, եթե փորձի թափանցել ձկան համար նախատեսված թագավորությունը։ Բոլոր կենդանի արարածները, սկսած ծաղկի վրա մակաբույծ կյանք վարող լվիճից մինչև արևադարձային անտառների ու ծովի խորքերի հրեշները, ցույց են տալիս, որ բնությունը նրանց գործունեությունը սահմանափակել է որոշակի միջավայրով, և մեզ մընում է միայն նշել, թե այդ սահմաններից դուրս պրծնելու ամեն մի փորձը ինչ անհեթեթ ու ճակատագրական հետևանքների է հասցնում նրանց։

Սակայն մարդու նկատմամբ միջավայրի սահմանափակության այս տեսությունը նույնքան ակնառու չի երևում։ Հասարակական կյանքը ղեկավարող օրենքները դեռ մինչև վերջ չեն հասկացվել և մեզ ընդհանրացումների հիմք չեն տալիս։ Բայց և այնպես հասարակության կարծիքը, պահանջներն ու դատողությունները նույնպես ծառայում են որպես յուրատեսակ սահմաններ, որոնք թեկուզև շոշափելի չեն, բայց միանգամայն իրական են։ Երբ տղամարդը կամ կինը մեղանչում է, այլ խոսքով ասած՝ անցնում է սահմանված շրջանի գիծը, նրա համար պատրաստված պատիժը նման չէ այն պատժին, որ կհասնի թռչունին, եթե նա փորձի ապրել ջրի տակ, կամ վայրի գազանին, եթե նա սկսի թափառել մարդաբնակ վայրե-

ռում։ Նրան անմիջապես կործանում չի սպասում։ Մարդիկ միայն զարմանքով հոնքերը կբարձրացնեն կամ կծու քմծիծաղ կտան և կամ վրդովված՝ ձեռքերը կթափահարեն։ Եվ այսուամենայնիվ հասարակական կյանքի սահմանները յուրաքանչյուրի համար այնքան որոշակի են գծված, որ դրանից դուրս եկող ամեն ոք դատապարտված է։ Այս կամ այն միջավայրում ծնված ու դաստիարակված մարդը դրանից դուրս գոյություն ունենալու համար պիտանի չէ։ Նա նման է թռչունի, որը սովոր է ապրել օդի որոշակի խտության պայմաններում և չի կարող կյանք վայելել ո՛չ ավելի խիտ, ո՛չ ավելի նոսր մթնոլորտում։

Եղբորը ճանապարհ դնելուց հետո Լեսթերը լուսամուտի մոտ նստեց բազկաթոռին և սկսեց դիտել արագորեն աճող երիտասարդ քաղաքի տեսարանը։ Լուսամուտից դուրս ընթանում էր կյանքն իր ամբողջ եռուն գործունեությամբ, հույսերով, հարստությամբ ու վայելքներով, իսկ ինքը ասես քամու մի անակնկալ կատաղի պոթկումով մի կողմ է շպրտվել ու միաժամանակ մնացել մեկուսի, և իր բոլոր ծրագրերն ու մտահղացումներն ասես մարել են։ Կարո՞ղ է արդյոք ինքը առաջվա պես անհոգ ընթանալ իր սովոր ճամփով։ Ընտանիքի հակազդեցությունը չի՞ անդրադառնա արդյոք իր հարաբերությունների վրա Ջեննիի հետ։ Մի՞թե անդառնալիորեն անցյալի գիրկն է քաշվել հայրական տունը, որտեղ առաջ ինքն իրեն այնքան թեթև ու ազատ էր զգում։ Այո՛, նախկին հարաբերությունները տնեցիների հետ, այն պարզ ու մտերմական հարաբերություններն այլևս չեն վերադարձնի։ Եվ արդյոք հոր հայացքի մեջ առաջվա պես կկարդա՞ այն հավանությունն ու հրապարտությունը։ Հարաբերությունները Ռոբերտի հետ, հոր ֆաբրիկայի աշխատողների հետ, ամեն ինչ, այն ամենը, որ առաջ իր կյանքն էր կազմում, տուժեց Լուիզայի այն չարաբաստիկ ներխուժումից։

«Ձախողվեց»,— որոշեց նա մտովին և անառարիա խոհերից կտրվելով սկսեց մտածել, թե ինչ գործնական քայլեր կարող է նախաձեռնել ինքը։

Տուն վերադառնալով՝ նա Ջեննիին ասաց.

— Ուզում եմ վաղը կամ մյուս օրը կարճ ժամանակով գնալ Մաունթ-Քլեմենս։ Ինչ-որ լավ չեմ զգում ինձ. այնտեղ կհանգստանամ ու կկազդուրվեմ։

Նա ուզում էր մենակ լինել իր մտքերի հետ։ Նշանակված ժամին Ջեննին պատրաստեց նրա ճամպրուկը, և նա գնաց մռայլ ու մտասույզ։

Հետևյալ շաբաթվա ընթացքում նա առանց շտապելու ամեն ինչի մասին մտածեց և եկավ այն հետևության, որ առայժմ ոչ մի վճռական քայլ անել հարկավոր չէ։ Էլի մի երկու-երեք ամիսը նշանակություն չունի։ Քիչ է հավանական, որ Ռոբերտը կամ ընտանիքից որևէ մեկը ցանկանա նորից տեսնվել իր հետ։ Գործնական ծանոթությունները նա կշարունակի առաջվա պես, քանի որ դրանք կապված են ֆիրմայի բարգավաճման հետ։ Իր նկատմամբ ոչ ոք հարկադրական միջոցներ չի ձեռք առնի։ Եվ այնուամենայնիվ ընտանիքի հետ անհուսալի պառակտման գիտակցությունը ճնշում էր Լեսթերին։ «Բանը վատ է,— մտածում էր նա,— բանը վատ է»։ Բայց և իր կյանքը չփոխեց։

Այսպիսի անորոշ վիճակը շարունակվեց էլի մի ամբողջ տարի։ Կես տարի Լեսթերը Ցինցիննատիում չերևաց, հետո գնաց այնտեղ կարևոր գործնական խորհրդակցության, որտեղ նրա ներկայությունն անհրաժեշտ էր, և իրեն պահում էր այնպես, որպես թե ոչինչ չի պատահել։ Մայրը համբուրեց նրան քնքշորեն, թեպետև տրտում։ Հայրը ամեն անգամի պես ամուր սեղմեց նրա ձեռքը։ Ռոբերտը, Լուիզան, Էմին և Իմոջինը ասես խոսք մեկ արած ոչ մի բառ չասացին այն միակ հարցի մասին, որն իրենց հետաքրքրում էր։ Բայց խորթացման զգացմունքը չէր անցել։ Այս մի անգամից հետո Լեսթերն ամեն կերպ խուսափում էր իր հայրենի քաղաքը գնալուց։

ԳԼՈՒԽ XXXV

Այդ նույն ժամանակ Ջեննին հոգեկան բարդ բեկում էր ապրում։ Եթե չհաշվենք իր ընտանիքի հետ ունեցած տարաձայնությունը, որը խորապես վշտացնում էր նրան, այս առա-

ջին անգամն էր, որ նա ընդհարվեց աշխարհի կարծիքի հետ։ Այժմ նրա համար պարզ էր. ինքը վատ կին է։ Երկու անգամ նա զիջեց հանգամանքների ուժին, մինչդեռ կարող էր պայքարել նրանց դեմ։ Ա՜խ, եթե միայն ավելի շատ արիություն ունենար։ Եթե նրան չճնշեր այդ մշտական վախը։ Եթե նա կարողանար սիրտ անել վարվել այնպես, ինչպես բանականությունն էր թելադրում... Լեսթերը երբեք իր հետ չի ամուսնանա։ Նրան այդ հարկավոր չէ։ Ինքը նրան սիրում է, բայց կարող է հեռանալ, այդպես ավելի լավ կլինի նրա համար։ Եթե ինքը վերադառնա Քլիվլենդ, հայրը երևի կհամաձայնի իր հետ միասին ապրել։ Այդ ճիշտ, թեպետև ուշացած քայլով հոր հարգանքին կարժանանա։ Բայց և այնպես նա ցնցվում էր հենց միայն այն մտքից, որ Լեսթերից պիտի հեռանա. նա այնքա՜ն շատ բան է արել իր համար։ Իսկ հայրը... հայրը գուցե և չուզենա ընդունել իրեն։

Լուիզայի շարաբաստիկ • այցելությունից հետո Ջեննին սկսեց մտածել, թե մի քիչ փող ետ չգցի՞ արդյոք փշուր-փշուր հավաքելով Լեսթերի տվածից։ Ծախսերի համար Լեսթերը փող չէր խնայում, և մինչև հիմա Ջեննին իր հարազատներին շաբաթական տասնհինգ դոլլար էր ուղարկում. այդքան փողով նրանք մի ժամանակ ապրում էին ամբողջ ընտանիքով, առանց կողմնակի օգնության։ Քսան դոլլար նա ծախսում էր ուտելիքի վրա. Լեսթերը պահանջում էր, որ իր սեղանին ամեն ինչ ամենալավը լինի՝ միրգը, քաղցրեղենը, միսը, գինին։ Բնակարանին վճարում էին ամսական քսանհինգ դոլլար, հագուստի և ամեն տեսակ շտապ ծախսերի համար որոշակի գումար չէր սահմանված։ Լեսթերը նրան շաբաթական հիսուն դոլլար էր տալիս, և, չգիտես ինչու, դրանից ոչինչ չէր մնում։ Բայց և շուտով Ջեննին հրաժարվեց տնտեսելու մտքից։ Եթե պիտի գնալ, ավելի լավ է դատարկ ձեռքով գնալ։ Այլ կերպ՝ լավ չի լինի։

Լուիզայի հայտնվելուց հետո նա շաբաթ շաբաթի ետևից մտածում էր դրա մասին, աշխատելով սրտապնդվել, որպեսզի մի որևէ վճռական բան ասի կամ անի։ Լեսթերը նրա հետ առաջվա պես մեծահոգի էր ու սիրալիր, բայց երբեմն

Ջեննին զգում էր, թե ասես նա ինչ-որ բան է սպասում իրենից։ Նա մտացրիվ էր լինում, մտախոհ։ Ջեննիին թվում էր, թե Լուիզայի հետ խոսակցություն ունենալուց հետո նա մի քիչ փոխվել է։ Որքա՜ն լավ կլիներ ասել նրան, որ ինքը գոհ չէ իր կյանքից, և հետո հեռանալ։ Բայց չէ՞ որ երբ Վեստայի գոյությունը հայտնի դարձավ, լեսթերը պարզ հասկանալ տվեց, որ նրա կարծիքն իր համար շատ էլ նշանակություն չունի, քանի որ նա որոշել է, որ երեխան անհաղթահարելի արգելք է իրենց ամուսնության համար։ Ջեննին իրեն հարկավոր է, բայց ո՛չ որպես օրինական կին։ Իսկ նրա հետ վիճելը դժվար է, այնքա՜ն իշխող է նա։ Վերջապես Ջեննին որոշեց, որ ավելի լավ կլինի իր հեռանալու պատճառը նրան բացատրել նամակով։ Այն ժամանակ նա, երևի, կների իրեն և կմոռանա։

Գերհարդ ընտանիքի գործերն առաջվա պես վատ էին գնում։ Մարթան ամուսնացել էր։ Մի քանի տարի ուսուցչություն անելուց հետո նա ծանոթացել էր մի երիտասարդ ճարտարապետի հետ, և շուտով նրանք դարձել էին փեսացու և հարսնացու։ Մարթան միշտ էլ մի քիչ ամաչում էր իրենց ընտանիքի դրությունից, իսկ հիմա, նոր կյանքի հույսով տարված, աշխատում էր որքան կարելի է քիչ շփվել հարազատների հետ։ Նա միայն թեթևակի իմաց տվեց նրանց, որ շուտով ամուսնանալու է, իսկ Ջեննիին ընդհանրապես չգրեց և հարսանիքին հրավիրեց միայն Բասսին ու Ջորջին։ Գերհարդը, Վերոնիկան և Ուիլյամը նեղացել էին։ Գերհարդն այդ վիրավորանքը լուռումունջ կրեց. առանց այդ էլ կյանքում նա շատ էր ծեծկվել։ Բայց Վերոնիկան լուրջ զայրացել էր և միայն առիթի էր սպասում քրոջը հատուցելու։ Ուիլյամը երկար չմնաց ուռած. նա տարված էր իր ծրագրերով. ուսումնասիրում էր էլեկտրատեխնիկան, որի մասին ուսուցչուհիներից մեկը դպրոցում ասել էր, թե դա շատ հետաքրքիր ու ձեռնտու մասնագիտություն է։

Ջեննին Մարթայի ամուսնության մասին իմացավ բավական ուշ, Վերոնիկայի նամակից։ Նա սրտանց ուրախացավ Մարթայի համար, բայց տխրությամբ մտածեց, որ եղբայրներն ու քույրերը ավելի ու ավելի են հեռանում իրենից։

Որոշ ժամանակից հետո Վերոնիկան ու Ուիլյամը փոխադրվեցին Ջորջի մոտ։ Այդ տեղի ունեցավ Գերհարդի մեղքով։ Կնոջ մահից և ավագ զավակների հեռանալուց հետո նա խոր վհատության մեջ էր ընկել, և երբեմն ժամերով նրանից ոչ մի խոսք լսել չէր կարելի։ Նա զգում էր, որ իր կյանքը վերջանում է, թեև ընդամենը վաթսունհինգ տարեկան էր։ Բարեկենցիկ կյանքի երազները, որ մի ժամանակ փայփայում էր նա, փշուր-փշուր էին եղել։ Սեբաստյանը, Մարթան ու Ջորջը ինքնուրույն մարդիկ էին դարձել, ինքը նրանց համար ոչ մի նշանակություն չուներ, և նրանք ոչինչ չէին բերում տուն։ Օգնում էր միայն Ջեննին, որից նա, եթե ճիշտն ասենք, ոչ մի դոլլար չպետք է ընդուներ։ Վերոնիկան և Ուիլյամն ըմբոստանում էին։ Նրանք հրաժարվում էին դպրոցը թողնել և գնալ աշխատելու, ըստ երևույթին դերադասելով ապրել այն փողով, որ, ինչպես արդեն վաղուց որոշել էր Գերհարդը, ձեռք էին բերվում անաղնիվ ճանապարհով։ Գերհարդը համարյա բոլորովին չէր կասկածում, թե ինչպիսին են Ջեննիի և Լեսթերի հարաբերությունները։ Սկզբում նա հավատացել էր, թե նրանք ամուսնացել են, բայց տեսնելով, թե ինչպես Լեսթերն ամիսներով չի մտաբերում Ջեննիին, ինչպիսի հնազանդությամբ Ջեննին առաջին իսկ կանչով վազում է նրա մոտ, իսկապես է վախենում պատմել նրան Վեստայի մասին, աստիճանաբար սկսել էր հակառակը համոզվել։ Նա իր դստեր հարսանիքին չէր եղել, չէր տեսել նրա ամուսնական վիճակը։ Նա, իհարկե, կարող էր ամուսնացած լինել Քլիվլենդից գնալուց հետո, բայց Գերհարդը դրան էլ չէր հավատում։

Այժմ նա ծայր աստիճանի մռայլ էր ու կովարար, և երեխաների համար ավելի ու ավելի դժվար էր դառնում նրա հետ ապրել։ Վերոնիկան և Ուիլյամը կամակորում էին և փքվում։ Նրանց դուր չէր գալիս, որ երբ Մարթան ամուսնացավ ու գնաց, հայրը տան ծախսերն իր ձեռքն առավ։ Նա փնթփնթում էր, թե երեխաները խիստ շատ են ծախսում հագուստի ու զվարճությունների վրա, համառորեն պնդում էր, թե հարկավոր է փոխադրվել մի ուրիշ ավելի փոքր տուն, իսկ Ջեննիի ուղարկած փողերից ամեն անգամ մի մասը պահում էր

ինչ-որ անհասկանալի նպատակով։ Գերհարդն իսկապես փող էր ետ գցում. նա մտածել էր ժամանակին Ջեննիին վերադարձնել նրանից ստացածը։ Նա գտնում էր, որ նրա փողով ապրելը մեղք բան է, իսկ իր շնչին վաստակով, իհարկե, չէր կարող հաշիվ մաքրել նրա հետ։ Նրան կրծում էր այն միտքը, որ եթե մյուս երեխաները հոր նկատմամբ իրենց պարտքը կատարեին, ինքն ստիպված չէր լինի ծերության հասակում ողորմություն ընդունել այն աղջկանից, որը, չնայած իր բոլոր արժանիքներին, մեղսալից կյանք է վարում։ Եվ ընտանեկան վեճերը չէին դադարում։

Վերջապես մի ձմեռ Ջորջը լսեց եղբոր ու քրոջ գանգատները և համաձայնեց նրանց իր մոտ վերցնել այն պայմանով, որ նրանք աշխատեն։ Գերհարդն սկզբում իրեն կորցրեց, բայց հետո առաջարկեց կահ-կարասին վերցնել և գնալ ուր ուզում են։ Նրա այդ մեծահոգությունը ամաչեցրեց նրանց, և նրանք նույնիսկ ակնարկեցին, թե գուցե հայրն էլ կուզենար ապրել իրենց հետ, բայց Գերհարդը կտրականապես հրաժարվեց։ Ինքը կգնա գործարան, որտեղ աշխատում է որպես պահակ, վարպետից թույլտվություն կխնդրի քնել տանիքում որևէ տեղ։ Գործարանում իրեն սիրում են ու վստահում։ Մյուս կողմից էլ դա խնայողություն կլինի։

Նա բորբոքված լինելով այդպես էլ արեց, և ձմեռային երկար գիշերներին կարելի էր տեսնել մենավոր ծերունուն, որը հերթապահում էր ամայի փողոցում, հեռու կենտրոնական աշխույժ թաղերից։ Նրան մի անկյուն էին հատկացրել պահեստի տանիքում, որը մի փոքր հեռու էր գործարանի աղմուկից և իրարանցումից։ Այստեղ նա քնում էր ցերեկը, աշխատանքից հետո։ Երեկոյան դեմ նա դուրս էր գալիս մի քիչ զբոսնելու կամ քաղաքի կենտրոնում, կամ Կիխոգի գետի և կամ լճի ափին։ Նա դանդաղ ման էր գալիս ձեռքերը մեջքին դրած, գլուխը կախ։ Երբեմն խոսում էր ինքն իրեն։ Նրա ընկճված վիճակը երբեմն արտահայտվում էր այսպիսի դառն խոսքերով. «Թո՛ւ, գրողը տանի» կամ «Ա՛յ, անիծվա՛ծ»։ Մութը ընկնելուն պես նա իր տեղն էր գրավում գործարանի դարպասի առաջ։ Սնվում էր ոչ հեռու գտնվող բանվորական

ճաշարանում, որը ամենահարմար տեղն էր համարում իր համար։

Ծերունի գերմանացու խոհերը սովորաբար լինում էին վերացական և խիստ մռայլ։ Ի՞նչ է կյանքը։ Այնքան չարչարանք, այնքան վիշտ ու հոգսեր, իսկ վերջ ի վերջո ի՞նչ է մնում։ Եվ որտե՞ղ է այն, ինչ այլևս չկա։ Մարդիկ մեռնում են և այլևս ոչ մի դերպ չեն շփվում կենդանի մնացածների հետ։ Վերցնենք թեկուզ իր կինը։ Նա մեռավ, իսկ ո՞ւր թռավ նրա հոգին։

Բայց Գերհարդը դեռ խիստ պահպանում էր մանկությունից սովոր կանոնները։ Նա հավատում էր, որ դժոխք կա, և մեղապարտները մահից հետո այնտեղ են ընկնում։ Լավ, իսկ միսիս Գերհա՞րդը։ Իսկ Ջեննի՞ն։ Նրա կարծիքով այս երկուսն էլ ծանր մեղսագործներ են։ Նա հավատում էր նաև, թե արդարներին սպասում է դրախտի երանությունը։ Բայց որտե՞ղ են այդ արդարները։ Միսիս Գերհարդը բարի սիրտ ուներ։ Ջեննին ինքը մեծահոգությունն է։ Իսկ իր որդի Սեբաստյա՞նը։ Սեբաստյանը լավ տղա է, բայց չոր սիրտ ունի, իսկ որդիական սիրո հետքն էլ չկա նրա մեջ։ Մարթան փառասեր է, մտածում է միայն իր մասին։ Դուրս է գալիս, որ իր բոլոր երեխաները, բացի Ջեննիից, եսասերներ են։ Բասսը ամուսնանալուց հետո ընտանիքի համար մատը մատին չի խփել։ Մարթան հավատացնում է, թե իր վաստակը իրեն հազիվ է բավականացնում, Ջորջն սիզբում գոնե մի քիչ օգնում էր, իսկ հետո ձեռք քաշեց։ Վերոնիկան և Ոսիլյամը հանգիստ ապրում էին Ջեննիի փողով, քանի դեռ ինքն այդ թույլ էր տալիս, թեև գիտեին, որ լավ չեն անում։ Իսկ իր՝ Գերհարդի վիճակը մի՞թե ցույց չի տալիս երեխաների եսասիրությունը։ Ինքն էլ առաջվա ուժը չունի։ Նա տրտում գլուխն էր օրորում։ Հանելուկ է, ուրիշ ոչինչ։ Կյանքում ամեն ինչ անհասկանալի է, խորհրդավոր, անհաստատ։ Բայց և այնպես երեխաներից ոչ մեկի հետ նա չի ուզում ապրել։ Նրանք արժանի չեն իրեն, բոլորը, բացի Ջեննիից, իսկ Ջեննին էլ մեղապարտ կյանք է վարում։ Այսպես էր վշտից մորմոքվում ծերունի Գերհարդը։

Ջեննին այս բոլոր տխուր դեպքերի մասին միանգամից

չիմացավ։ Առաջ նա իր նամակները հասցեագրում էր Մարթային, հետո, երբ քույրն ամուսնացավ, սկսեց գրել ուղղակի հորը։ Կրտսեր երեխաների հեռանալուց հետո Գերհարդը նրան գրեց, որ այլևս փող չուղարկի. Վերոնիկան և Ուիլյամն ապրելու են Ջորջի մոտ, ինքը գործարանում լավ տեղ ունի, այնտեղ էլ առայժմ բնակարան ունի։ Նա Ջեննիին վերադարձրեց այն ամենը, ինչ կարողացել էր ետ գցել՝ հարյուր տասնհինգ դոլլար, բացատրելով, թե այդ փողերն իրեն պետք չեն գա։

Ջեննին ոչինչ չհասկացավ, բայց, իմանալով հոր համառությունը, որոշեց չվիճել նրա հետ, մանավանդ որ եղբայրներն ու քույրերը լռում էին։ Սակայն ժամանակի ընթացքում նա սկսեց ավելի պարզ պատկերացնել, թե ինչ է կատարվել տանը, և լրջորեն անհանգստացավ։ Նա ուզում էր գնալ հոր մոտ, բայց և չէր ուզում հեռանալ Լեսթերից, անկախ նրանից, թե ինչպես կդասավորվեն իրենց հարաբերությունները։ Արդյոք հայրը կհամաձայնի՞ ապրել իր մոտ։ Այժմ, հասկանալի է, ոչ։ Եթե Ջեննին ամուսնանա, հնարավոր է, եթե մենակ մնա, համարյա հաստատ կհամաձայնի։ Բայց եթե ինքը լավ վաստակ չունենա, դժվար կապրեն։ Ամեն ինչ հանգում էր միևնույն հարցին՝ ի՞նչ անել։ Բայց և այնպես նա որոշեց։ Եթե շաբաթական հինգ-վեց դոլլարով աշխատանք գտնի, կարող են ապրել։ Իսկ սկզբնական շրջանում կունենան այն հարյուր տասնհինգ դոլլարը, որ հավաքել է հայրը։

ԳԼՈՒԽ XXXVI

Ջեննիի ծրագրերի մեջ մի թերություն կար. նա բավականաչափ հաշվի չէր առել Լեսթերի դիրքը։ Լեսթերն անպայման թանկ էր գնահատում Ջեննիին, թեպետև չէր կարող դուրս պրծնել այն աշխարհի պայմանականությունների փաղ շրջանից, որի մեջ նա դաստիարակվել էր։ Սակայն, եթե նույնիսկ նա Ջեննիին այնքան չէր սիրում, որ հասարակության կարծիքին հակառակ պսակվի նրա հետ այն պարզ պատճառով, որ ինքը իր սրտովն է կին ընտրել իր համար, ապա,

այսուամենայնիվ, Ջեննին նրա կյանքում շատ մեծ տեղ էր գրավում, և առայժմ նա ամենևին մտադիր չէր վերջնականապես կապերը կտրել նրանից։

Լեսթերն արդեն այն հասակումն էր, երբ կանանց նկատմամբ մի անգամ ստեղծված հայացքը հազվադեպ է փոխվում։ Մինչև այժմ իր շրջանի ոչ մի կին նրան այնքան դուր չէր եկել, որքան Ջեննին։ Ջեննիի մեջ կային կանացիություն, մեղմություն, բնական խելք, նա կանխազդում էր Լեսթերի ամեն մի ցանկությունը։ Հասարակության մեջ իրեն պահելու շնորհքը Լեսթերն ինքն էր սովորեցրել նրան, այնպես որ հիմա կարող էր նրա հետ երևալ որտեղ էլ կամենար։ Այս ամենը հարմար էր ու հաճելի, էլ ուրեմն ի՞նչ էր մնում նրան ցանկանալ։

Բայց և այնպես Ջեննիի անհանգստությունն աճում էր օր առ օր։ Փորձելով իր մտքերը շարադրել թղթի վրա՝ նա մի քանի անգամ նամակ գրել սկսեց ու ոչնչացրեց և վերջապես, ինչպես իրեն թվում էր, կարողացավ գեթ մասամբ արտահայտել այն, ինչ զգում էր։ Նամակը երկար ստացվեց. նա դեռ երբեք այդքան չէր գրել։

«Լեսթե՛ր, սիրելիս, երբ դու այս նամակն ստանաս, ես այստեղ չեմ լինի, և խնդրում եմ քեզ, իմ մասին վատ բան չմտածես, մինչև որ լրիվ չկարդաս։ Ես գնում եմ և ինձ հետ ստանում եմ Վեստային, կարծում եմ այդպես լավ կլինի։ Իսկապես, Լեսթե՛ր, այդպես է հարկավոր։ Երբ դու իմ կյանքում հայտնվեցիր, մենք շատ չքավոր էինք, և իմ դրությունն էլ այնպես էր, որ ես մտածում էի, թե ոչ մի կարգին մարդ ինձ հետ չի ամուսնանա։ Իսկ դու ասացիր, թե սիրում ես ինձ, և ես բոլորովին գլուխս կորցրի, իսկ հետո ես էլ սիրեցի քեզ, ինքս էլ չգիտեմ ինչպես եղավ այդ։

Ես հո այն ժամանակ քեզ ասում էի, որ այլևս չեմ ուզում վատ վարվել և որ ես լավ կին չեմ, բայց երբ դու ինձ հետ էիր, ես ուղղակի չէի կարող որևէ բանի մասին մտածել և չգիտեի ինչպես հեռանալ քեզնից։ Հենց այդ ժամանակ էլ հայրս հիվանդացավ, և տանը բոլորը նստած էին քաղցած։ Մենք գրոշներ էինք վաստակում։ Իմ եղբայր Ջորջը կոշիկ

չուներ, մայրիկս բոլորովին հալից ընկել էր։ Հաճախ ես մտածում եմ, Լեսթեր, որ եթե մորս վրա այնքան հոգս ու վիշտ չծանրանար, գուցե հիմա էլ նա ողջ կլիներ։ Ես մտածեցի, թե քանի որ ես քեզ դուր եմ գալիս, դու էլ ինձ ես դուր գալիս,— ես քեզ սիրում եմ, Լեսթեր,— գուցե և մեծ մեղք չի լինի։ Չէ՞ որ դու միանգամից ասացիր, որ ուզում ես օգնել իմ ընտանիքին, և ես մտածեցի, թե գուցե հարկավոր է այդպես էլ վարվել։ Ախր մենք շատ աղքատ էինք ապրում։

Լեսթեր, սիրելիս, ես ամաչում եմ հեռանալ քեզանից։ Քեզ կարող է թվալ, թե սա շատ զզվելի արարք է, բայց եթե իմանայիր, թե վերջին ժամանակներս ես ինչ ապրումներ եմ ունեցել, կներեիր ինձ։ Ես սիրում եմ քեզ, Լեսթե՛ր, այնքա՜ն եմ սիրում։ Բայց այս բոլոր ամիսներին, այն օրից, երբ եկել էր քո քույրը, ես զգում եմ, որ վատ եմ վարվում և որ այլևս այսպես ապրել չի կարելի, քանի որ ես ինքս էլ գիտեմ, որ այսպես վատ է։ Ես մեղավոր եմ այն բանի համար, ինչ եղել է իմ և սենատոր Բրենդերի միջև, բայց ես գեռ շատ ջահել էի, ես բոլորովին չէի հասկանում, թե ինչ եմ անում։ Ես մեղավոր եմ, որ հենց սկզբից քեզ չպատմեցի Վեստայի մասին, թեև այն ժամանակ ինձ թվում էր, թե ճիշտ եմ անում։ Ես շատ մեղավոր եմ, որ քեզանից ծածուկ նրան բերի Չիկագո, բայց ես վախենում էի քեզանից, Լեսթեր, վախենում էի նրանից, ինչ դու կասես կամ կանես։ Այս ամենը ինձ համար պարզ դարձավ նրանից հետո, երբ քո քույրը եղավ այստեղ, և այն օրվանից ես հաստատ գիտեմ, որ այսպես ապրելը լավ բան չէ։ Բայց ես քեզ չեմ մեղադրում, Լեսթեր, ես մեղադրում եմ միայն ինձ։

Ես քեզ չեմ խնդրում ամուսնանալ ինձ հետ։ Ես գիտեմ, թե դու ինչպես ես վերաբերվում ինձ և ինչպես ես վերաբերվում քո ընտանիքին, և ինքս էլ չեմ գտնում, թե դա գործին կօգներ։ Քո հարազատներն այդ չեն ուզում, և ես էլ ոչինչ չեմ ուզում խնդրել քեզանից։ Իսկ այնպես, ինչպես մենք ապրում ենք հիմա, այլևս ապրել չի կարելի, այս ինձ համար պարզ է։ Վեստան մեծանում է, շուտով նա ամեն ինչ կհասկանա։ Առայժմ նա կարծում է, թե դու իսկապես իր քեռին ես։ Ես

այնքա՞ն եմ մտածել, այնքա՞ն եմ ցանկացել խոսել քեզ հետ, բայց երբ քո դեմքը լուրջ է լինում, ես սարսափում եմ և ոչ մի խոսք ասել չեմ կարող։ Եվ ահա ես որոշեցի՝ ավելի լավ է դրեմ ու հեռանամ, և այն ժամանակ դու ամեն ինչ կհասկանաս։ Դու հասկացա՞ր, Լեսթեր, հասկացա՞ր։ Դու չե՞ս բարկանում ինձ վրա։ Ես գիտեմ, որ այսպես ավելի լավ կլինի և՛ քեզ համար, և՛ ինձ համար։ Այսպես է հարկավոր։ Ներիր ինձ, Լեսթեր, խնդրում եմ ներիր և մոռացիր ինձ։ Ես մի կերպ կապրեմ։ Բայց ես այնպես եմ սիրում քեզ, այնպե՞ս եմ սիրում, և հավիտյան երախտապարտ կլինեմ քեզ այն ամենի համար, ինչ դու արել ես ինձ համար։ Ցանկանում եմ քեզ երջանկություն։ Ներիր ինձ, Լեսթեր։ Ես սիրում եմ քեզ։

Ջեննի։

P. S. Ես գնում եմ Քլիվլենդ, հորս մոտ։ Ես նրան հարկավոր եմ։ Նա բոլորովին մենակ է մնացել։ Բայց, խնդրում եմ, Լեսթեր, չգաս իմ ետևից։ Հարկավոր չէ»։

Ջեննին նամակը ծրարի մեջ դրեց, փակեց և առժամանակ թաքցրեց մի հուսալի տեղ։

Էլի մի քանի օր նա իրեն սրտապնդում էր, որպեսզի իր ծրագիրն իրականացնի, և, վերջապես, երբ մի օր Լեսթերը հեռախոսով նրան նախազգուշացրեց, թե երկու-երեք օր տանը չի լինելու, Ջեննին մի քանի ճամպրուկի մեջ դասավորեց իր և Վեստայի համար ամենաանհրաժեշտ բաները և մարդ ուղարկեց կառք կանչելու։ Նա մեկ ուզում էր հորը հեռագրել իր մեկնելու մասին, բայց հիշեց, որ նա գործարանումն է ապրում և մտածեց, թե ինքը կգտնի նրան։ Գերհարդը գրել էր, որ Վերոնիկան և Ուիլյամը ամբողջ կահ-կարասին չեն տարել, մի մասը պահ է տված։ Նշանակում է մի փոքրիկ բնակարան կահավորելու բան կլինի։ Մեկնումի պատրաստությունները վերջացնելով Ջեննին նստեց ու սկսեց կառքի սպասել, բայց հենց այդ ժամանակ դուռը բացվեց, և ներս մտավ Լեսթերը։

Վերջին րոպեին նա իր ծրագիրը փոխել էր։ Նա մի առանձին ինտուիցիա չուներ, բայց այս անգամ ասես ինչ-որ բան էր զգացել։ Մի ծանոթի հետ պայմանավորվել էր, որ գնան Չիկագոյից դեպի հարավ Քանկակի ճահիճներում բաղ որսա-

լու, բայց հանկարծ միտքը փոխել էր և նույնիսկ որոշել էր դրասենյակից սովորականից շուտ դուրս գալ։ Ի՞նչն էր նրան դրդել այդպես անել, նա ինքն էլ չէր կարող ասել։

Նրա համար նույնիսկ տարօրինակ էր, որ այդ վաղ ժամին տուն է վերադարձել։ Նախասենյակի մեջտեղը դրված երկու ճամպրուկ տեսնելով՝ նա զարմանք կարեց։ Այս ի՞նչ է նշանակում։ Ջեննին ճամփորդական զգեստով է, բոլորովին պատրաստ մեկնելու։ Վեստան նույնպես հագնված էր։ Լեսթերի խած աչքերը զարմանքից չռվեցին։

— Այդ ո՞ւր,— հարցրեց նա։

— Ես... ես...— ետ-ետ քաշվելով կմկմաց Ջեննին,— ես...գնում եմ։

— Ո՞ւր։

— Ես ուզում էի գնալ Քլիվլենդ։

— Ինչո՞ւ։

— Ես... ես միշտ էլ ուզում էի քեզ ասել, Լեսթեր, որ իմ կարծիքով, այլևս ինձ չի կարելի այստեղ մնալ։ Լավ բան չէ սա։ Ես միշտ ուզում էի քեզ հետ խոսել, բայց սիրտ չէի անում։ Ես քեզ նամակ եմ գրել։

— Նամա՞կ,— գոչեց Լեսթերը։— Ոչինչ չեմ հասկանում։ Որտե՞ղ է այդ նամակը, գրողը տանի։

— Ահա,— ասաց Ջեննին ձեռքը մեքենայաբար մեկնելով դեպի փոքրիկ սեղանը, որտեղ մի հաստ գրքի վրա դրված էր իր նամակը։

— Եվ դու ուզում էիր ինձնից հեռանալ միայն մի նամակ թողնելո՞վ,— հարցրեց Լեսթերն արդեն ավելի խիստ տոնով։— Ո՛չ, ես հրաժարվում եմ քեզ հասկանալ։ Ի՞նչ է պատահել վերջապես։— Նա ծրարը պատռեց և աչքի անցկացրեց նամակի առաջին տողերը։— Հապա մի այստեղից դուրս տար Վեստային,— ասաց նա։

Ջեննին հնազանդվեց։ Հետո վերադառնալով նա կանգ առավ սենյակի մեջտեղը՝ գունատ, շփոթված և մտացրիվ հայացքը գցեց պատերին, առաստաղին, ճամպրուկներին, Լեսթերին։ Լեսթերը երբեմն միայն մի ոտքից մյուսին հենվելով ուշի-ուշով նամակը կարդաց և ապա նետեց հատակին։

— Լսի՛ր, Ջե՛ննի,— խոսեց նա հետաքրքրությամբ նայելով նրան և չիմանալով, թե իսկապես ինչ ասի։ Ահա և հիմա հնարավորություն է ստեղծվել վերջ տալու այդ կապին։ Բայց նա ամենևին չի ուզում այդ, ամեն ինչ այնքան լավ ու խաղաղ է ընթացել։ Նրանք այնքան տարի են միասին ապրել, որ այժմ բաժանվելն ուղղակի ծիծաղելի կլինի։ Բացի այդ, ինքը սիրում է նրան, պարզ է, որ սիրում է։ Բայց նրա հետ ամուսնանալ չի ուզում, թերևս և չի էլ կարող։ Ջեննին այդ գիտե։ Ապացույց՝ նրա նամակը։

— Դու ինչ-որ բան շփոթում ես,— շարունակեց նա դանդաղորեն։— Չգիտեմ, ինչ քամի է փչել գլխիդ, բայց դու բոլորովին սխալ հայացք ունես իրերի մասին։ Չէ՞ ես ասել եմ, որ քեզ հետ ամուսնանալ չեմ կարող, համենայն դեպս՝ հիմա։ Կան շատ կարևոր հանգամանքներ, որոնց մասին դու հասկացողություն էլ չունես։ Որ ես քեզ սիրում եմ, այդ դու գիտես։ Բայց անհրաժեշտ է հաշվի առնել նաև իմ ընտանիքը և մեր ֆիրմայի շահերը։ Դու չես հասկանում, թե դա որքան բարդ բան է, իսկ ես հասկանում եմ։ Բայց քեզանից բաժանվել ես չեմ ուզում, դու ինձ համար շատ թանկ ես։ Իհարկե, քեզ զոռով պահել չեմ կարող, դու իրավունք ունես գնալու։ Բայց, ինձ թվում է, դա լավ բան չի լինի։ Եվ մի՞թե, իսկապես, դու ուզում ես գնալ։ Հապա նստիր մի րոպե։

Ջեննին, որ հույս ուներ, թե դուրս կպրծնի առանց բացատրությունների, բոլորովին շփոթվեց։ Ինչո՞ւ է նա սկսել այդ լուրջ խոսակցությունը և այնպես է խոսում, ասես ինչ-որ բան է խնդրում։ Նրա սիրտը ցավեց։ Նա՝ լեսթերը, համոզում է իրեն մնալ, երբ ինքն է նրան այնքան սիրում։

Ջեննին մոտեցավ նրան, և նա բռնեց Ջեննիի ձեռքը։

— Լսիր ինձ,— ասաց նա։— Իսկապես այժմ քո հեռանալը ոչ մի իմաստ չունի։ Դու ո՞ւր էիր ուզում գնալ։

— Քլիվլենդ։

— Եվ ինչպե՞ս պիտի ապրեիր այնտեղ։

— Ես մտածում էի հայրիկիս ինձ մոտ կվերցնեմ, եթե համաձայնի, հիմա նա բոլորովին մենակ է, և մի որևէ աշխատանք կգտնեմ։

— Բայց ի՞նչ կարող ես անել դու, Ջեննի, բացի նրանից, որ առաջ անում էիր։ Մի՞թե դու նորից կգնաս սպասուհի կդառնաս։ Կամ խանութում վաճառողուհի՞ կդառնաս։

— Գուցե մի կերպ կարող էի որպես տնտեսուհի տեղավորվել,— երկչոտությամբ ասաց Ջեննին։ Դա ամենալավն էր, որ հնարավոր աշխատանքի մասին երկար մտածումների ժամանակ նրա միտքն էր եկել։

— Ոչ, ոչ,— ասաց Լեսթերը գլուխն օրորելով։— Դա բանի պետք չէ։ Քո բոլոր ծրագրերը բանի պետք չեն, ցնորք են։ Եվ բարոյական բավարարություն էլ դա քեզ չի տա։ Անցածը փոխել չի լինի։ Եվ կարևոր էլ չէ։ Հիմա ես քեզ հետ ամուսնանալ չեմ կարող։ Հետագայում՝ գուցե, բայց ես ոչինչ խոստանալ չեմ ուզում։ Բայց իմ կամքով ես քեզ բաց չեմ թողնի, իսկ եթե դու գնաս, ես չեմ ուզում, որ վերադառնաս քո նախկին կյանքին։ Այսպես թե այնպես ես քեզ կապահովեմ։ Բայց մի՞թե դու իսկապես ուզում ես ինձանից հեռանալ, Ջեննի։

Լեսթերի տիրական հաստատակամության և նրա բուռն պատճառաբանությունների առաջ Ջեննին անզոր էր։ Բավական էր, որ Լեսթերը դիպչեր նրա ձեռքին, և նրա որոշումներից ոչինչ չմնաց։ Եվ նա արտասվեց։

— Մի՛ լար, Ջեննի,— ասաց Լեսթերը։— Ամեն ինչ կարող է ավելի լավ ընթացք ստանալ, քան դու կարծում ես։ Մի քիչ սպասիր։ Դե, հանիր վերարկուդ ու գլխարկդ։ Դու ինձանից չես հեռանա, չէ՞։

— Չեմ հեռանա,— հեծկլտաց Ջեննին։

Լեսթերը նրան քաշեց, նստեցրեց իր ծնկին։

— Առայժմ ոչ մի բան չենք փոխի,— շարունակեց նա։— Կյանքը բարդ բան է։ Միանգամից ոչինչ չի լինի։ Իսկ հետո ամեն ինչ մի կերպ կկարգավորվի։ Ես էլ հիմա հաշտվում եմ այն բանի հետ, ինչի մի ուրիշ ժամանակ ոչ մի դեպքում չէի համաձայնի։

Ջեննին աստիճանաբար հանգստացավ և արցունքների միջից տխուր ժպտաց։

— Իսկ հիմա այս ամենը դիր իրենց տեղերը,— սիրալիր

ասաց Լեսթերը՝ մատնացույց անելով ճամպրուկները։— Եվ, խնդրում եմ, խոստացիր ինձ մի բան։

— Ի՞նչ,— հարցրեց Ջեննին։

— Այսուհետև ինձանից ոչ մի բան չթաքցնել, հասկանո՞ւմ ես։ Ոչինչ չորոշել առանց ինձ և ոչինչ չանել առանց իմ գիտության։ Եթե քեզ որևէ միտք տանջում է, ասի՛ ինձ մոտ և ասա։ Ես քեզ չեմ ուզի։ Կարող ես ինձ հետ խոսել քո բոլոր հոգսերի մասին։ Ես քեզ կօգնեմ նրանցից ազատվել, իսկ եթե օգնել չկարողանամ էլ, համենայն դեպս մենք իրարից ոչ մի գաղտնիք չենք ունենա։

— Գիտեմ, Լեսթեր,— ասաց Ջեննին լուրջ նայելով նրա աչքերին։— Խոստանում եմ, որ այլևս ոչ մի բան չեմ թաքցրնի քեզնից, ազնիվ խոսք։ Առաջ ես վախենում էի, իսկ հիմա չեմ վախենա։ Ճիշտ եմ ասում։

— Այ, այդպես լավ է,— ասաց Լեսթերը։— Ես քեզ հավատում եմ։

Եվ նա բաց թողեց Ջեննիին։

Այս խոսակցության առաջին արդյունքը եղավ այն, որ մի քանի օրից հետո խոսք բացվեց Գերհարդի վիճակի մասին։ Ջեննին արդեն վաղուց էր անհանգստանում նրա մասին, իսկ հիմա որոշեց իր մտքերը հայտնել Լեսթերին, և մի երեկո ճաշի ժամանակ պատմեց նրան, թե ինչ է տեղի ունեցել Քլիվլենդում։

— Երևակայում եմ, թե հիմա որքան դժվար է նրա համար բոլորովին մեն-մենակ։ Երբ ես ուզում էի գնալ Քլիվլենդ, մտադիր էի նրան ինձ մոտ վերցնել։ Իսկ հիմա ուղղակի չգիտեմ ինչ անել։

— Դու նրան փող ուղարկիր,— ասաց Լեսթերը։

— Նա ինձանից փող վերցնել չի ուզում,— բացատրեց Ջեննին։— Նա գտնում է, որ ես վատ կին եմ և մեղսալից կյանք եմ վարում։ Նա չի հավատում, թե ես ամուսնացած եմ։

— Դրա համար նա հիմքեր ունի,— հանգիստ ասաց Լեսթերը։

— Նույնիսկ սոսկալի է մտածել, որ նա քնում է ինչ-որ

մի տեղ գործարանում։ Նա այնքան ծեր է և բոլորովին մենակ։

— Իսկ մյուս զավակնե՞րը։ Ինչո՞ւ նրանք չեն հոգում նրա մասին։ Որտե՞ղ է քո եղբայր Բասսը։

— Երևի նրանք չեն ուզում նրա մասին հոգալ. հայրս այնքան դյուրագրգիռ է,— ասաց Ջեննին պարզամտորեն։

— Դե, այդ դեպքում արդեն ես չգիտեմ ինչ խորհուրդ տամ,— ժպտաց Լեսթերը։— Նա պետք է մի քիչ ավելի հարմարվող լիներ։

— Այո, իհարկե,— ասաց Ջեննին,— բայց նա այնքան ծեր է և այնպիսի ծանր կյանք է ունեցել։

Լեսթերը մի պահ պատառաքաղը պտտեցնում էր ձեռքում։

— Ես գիտե՞ս ինչ եմ մտածում,— վերջապես ասաց նա։ — Քանի որ մենք որոշել ենք չբաժանվել իրարից, ավելի լավ է այս բնակարանից հեռանանք։ Ես արդեն մտածել եմ. մի տուն չվարձե՞նք Հայդ-Պարկում։ Ճիշտ է, իմ գրասենյակից հեռու կլինի, բայց այստեղ ապրելը ինձ մի տեսակ ձանձրացրել է։ Եվ քեզ ու Վեստայի համար էլ վատ չի լինի սեփական բակ ունենալ։ Ա՛յ, այն ժամանակ դու կարող ես հորդ էլ բերել քեզ մոտ։ Նա մեզ չի խանգարի։ Տնտեսությամբ կզբաղվի, կօգնի տունը կարգին պահել։

— Ա՜խ, դա հենց իսկը նրա սրտովը կլինի,— հառաչեց Ջեննին։— Նա այնպե՞ս է սիրում ամեն ինչ նորոգել, գազոններն էլ կհնձի և ջեռուցմանը կհսկի։ Բայց նա ոչ մի պայմանով չի գա, եթե համոզված չլինի, որ մենք ամուսնացած ենք։

— Այո, դա գործը բարդացնում է, քանի որ դու ամուսնական վկայական չես կարող ներկայացնել նրան։ Ծերունին, երևում է, անկարելին է երազում։ Նրա համար դժվար կլինի քաղաքից դուրս գտնվող տան ջեռուցումը կարգավորել,— ավելացրեց նա մի պահ լռելուց հետո։

Ջեննին նրա խոսքերն ականջի ետև գցեց։ Նա նորից սկսեց մտածել, թե որքան վատ ու անշնորհք է դասավորվել իր կյանքը։ Գերհարդը չի գա, եթե նույնիսկ իրենք հիանալի տուն ունենան, որտեղ նա կարող էր ապրել։ Իսկ որքա՞ն լավ

կլիներ նրա համար Վեստայի հետ։ Նա ուղղակի հարություն կառներ։

Նա տխուր-տխուր լռել էր, մինչև որ Լեսթերը, ասես նրա մտքերին պատասխանելով, ասաց.

— Իսկապես, չգիտեմ ինչ մտածեմ։ Ամուսնական վկայականի բլանկ ձեռք բերելն այնքան էլ հեշտ բան չէ։ Կեղծումը պատժվում է օրենքով։ Ես, ճիշտն ասած, չէի ցանկանա այդպիսի գործի մեջ մտնել։

— Ի՞նչ ես ասում, Լեսթեր, մի՞թե կարելի է։ Ես ուղղակի ցավում եմ, որ հայրիկն այդպես համառն է։ Երբ մի բան նրա գլուխն է մտնում, էլ ոչինչ անել չես կարող։

— Արի սպասենք, մինչև նոր տանը տեղավորվելը,— առաջարկեց Լեսթերը։— Այն ժամանակ դու կգնաս Քլիվլենդ և ինքդ կխոսես նրա հետ։ Գուցե և քեզ կհաջողվի համոզել նրան։

Լեսթերին դուր էր գալիս, որ Ջեննին այդպես նվիրված է հորը, և պատրաստ էր օգնել նրան իր մտածածն իրականացնելու։ Մերունի Գերհարդը շատ էլ հետաքրքիր անձ չէր, բայց և զզվելի չէր, և եթե նա ցանկանար աշխատել մեծ տնտեսության մեջ, խնդրե՞մ, Լեսթերը դեմ չէ։

ԳԼՈՒԽ XXXVII

Հայդ-Պարկ փոխադրվելու մասին ասված խոսքերը դատարկ բան չէին։ Երբ երկու-երեք շաբաթից հետո ամեն ինչ նորից կարգի էր բերվել, Լեսթերը Ջեննիին առաջարկեց իր հետ գնալ այնտեղ՝ տուն տեսնելու։

Առաջին իսկ այցին նրանք գտան այն, ինչ հարկավոր էր. ասնամեկ խոշոր սենյակից բաղկացած մի հին տուն, շրջապատված գաղոններով և ստվերախիտ ծառերով, որոնք տրնկվել էին, երբ քաղաքը դեռ նոր էր սկսել կառուցվել։ Այստեղ դեղեցիկ էր, հարմարավետ, խաղաղ։ Ջեննին հիացած էր այդ ընդարձակ, համարյա գյուղական դաստակերտով, թեպետև նրան ճնշում էր այն գիտակցությունը, որ ինքը իր նոր տունն

է մտնելու ո՛չ որպես լիարժեք տիրուհի։ Երբ նա պատրաստվում էր Լեսթերից հեռանալ, դեռ մի աղոտ հույս ուներ, թե նա կգա իր ետևից և կամուսնանա։ Այժմ դրա վրա էլ խաչ էր դրվել։ Նա խոստացել էր մնալ, և հարկավոր էր ամեն ինչի համակերպվել։ Նա ուզեց ասել, թե այդպիսի հսկա տունը իրենց պետք չէ, բայց Լեսթերը նրան չլսեց։

— Շատ հնարավոր է, որ մենք հյուրեր կընդունենք,— ասաց նա։— Համենայն դեպս հարկավոր է տունը կահավորել և տեսնել, թե ինչ կստացվի։

Նա կապալառուին պատվիրեց պայմանագիր կնքել հինգ տարով, հետագայում ժամկետը երկարաձգելու իրավունքով, և հողամասում անհապաղ աշխատանքներն սկսվեցին։

Տունը դրսից ներկեցին, ներսը կարգավորեցին, գազոնները հարթեցին, և ամեն ինչ շքեղ, տոնական տեսք ստացավ։ Առաջին հարկում տեղավորեցին մի մեծ գրադարան, նույնքան ընդարձակ սեղանատունը, ընդունելությունների հյուրասենյակը, մի ավելի փոքր հյուրասենյակ, ահագին խոհանոց և բուֆետը։ Երկրորդ հարկում ննջարանները, լոգարանները և սպասուհու սենյակը։ Ամեն ինչ հարմար էր, ամեն ինչ աչք էր շոյում, և նոր տան մեջ տեղավորվելու հոգսերը Ջեննիին բավականությամբ ու հպարտությամբ էին համակում։

Տեղափոխվելուց հետո անմիջապես Ջեննին Լեսթերի թույլտվությամբ հորը գրեց և հրավիրեց նրան տեղափոխվել իրենց մոտ։ Իրենց ամուսնության մասին նա ոչ մի խոսք չասաց, թողնելով, որ նա ինքը հարկ եղած հետևությունն անի։ Դրա փոխարեն մանրամասն նկարագրեց, թե ինչպիսի գեղեցիկ տեղ է ապրում և ինչպիսի հարմար տուն ու ընդարձակ այգի ունի ինքը։ «Այստեղ այնքան լավ է, հայրիկ,— գրում էր նա,— քեզ երևի դուր կգա։ Վեստան արդեն դպրոց է գնում։ Արի մեզ մոտ, միասին կապրենք։ Դա որքա՞ն ավելի լավ կլինի, քան գործարանում ապրելը։ Եվ ես էլ այնքա՞ն ուրախ կլինեմ»։

Գերհարդն այս նամակը կարդաց և տարակուսանքով հոնքերը կիտեց։ Մի՞թե սա ճիշտ է։ Բայց եթե նրանք ամուսնացած չլինեին, մի՞թե այդպիսի մեծ տուն կփոխադրվեին։ Այս-

քան տարիներից հետո, այս բոլոր ստից հետո՞։ Գուցե ինքը սկզբի՞ց սխալված է եղել։ Դե, ինչ կա որ, ավելի լավ է ուշ, քան երբեք, բայց արժե՞ արդյոք, որ ինքը գնա նրանց մոտ։ Ինքն արդեն վարժվել է մենակ ապրել։ Մի՞թե հիմա արժե տեղափոխվել Չիկագո, Ջեննիի մոտ։ Նա անտարբեր չմնաց դստեր հրավերին, բայց և այնպես որոշեց հրաժարվել։ Նա չէր կարող այդպես բացահայտորեն ընդունել, որ իրենց գժտության մեղքի մի մասն էլ իր վրա է ընկնում։

Հոր մերժումը Ջեննիին խիստ վշտացրեց։ Նա Լեսթերի հետ խորհրդակցեց և որոշեց անձամբ գնալ Քլիվլենդ։ Գտնելով կահույքի ֆաբրիկան, որտեղ աշխատում էր Գերհարդը,— դա քաղաքի ամենաաղքատ թաղերից մեկում շենքերի մի անկարգ-անկանոն կուտակում էր,— Ջեննին գրասենյակում հարցրեց հոր մասին։ Կլերկը նրան ուղարկեց դեպի առանձնացած պահեստը, և Գերհարդին հայտնեցին, թե մի ինչ-որ տիկին ուզում է տեսնել նրան։ Ծերունին վեր կացավ իր խրճուկ մահճակալից և իջավ բակը, հետաքրքրվելով, թե այդ ով կարող է լինել։ Ջեննիի սիրտը ճմլվեց, երբ մթին դռնից դուրս եկավ ծերունի հայրը՝ ճերմակած մազերով, թավ հոնքերով, փոշոտ, ճմրթված հագուստով։ «Խե՜ղճ հայրիկ»,— մտածեց նա։ Հայրը մոտեցավ նրան, և նրա զննող հայացքը մեղմացավ, երբ հասկացավ, թե ինչպիսի բարի մղում է նրան բերել այստեղ։

— Այդ ինչի՞ ես եկել այստեղ,— հարցրեց նա մի որոշ երկյուղով։

— Ես ուզում եմ քեզ ինձ մոտ տանել, հայրիկ,— ասաց Ջեննին։— Քեզ այլևս չի կարելի այստեղ մնալ։ Ուղղակի անտանելի է մտածել, թե դու ինչպես ես ապրում այստեղ մենամենակ։

— Օ՜,— ասաց հայրը շփոթվելով,— ուրեմն դրա համա՞ր ես եկել։

— Այո,— պատասխանեց Ջեննին։— Գնանք ինձ հետ։ Հարկավոր չէ այստեղ մնալ։

— Ես լավ անկյուն ունեմ,— ասաց հայրը ասես արդարանալով։

— Գիտեմ, գիտեմ, բայց մենք հիմա մի մեծ տուն ունենք, և Վեստան էլ մեզ հետ է ապրում։ Մի՞թե դու չես գա։ Լեսթերն էլ հրավիրում է քեզ։

— Դու ինձ մի բան ասա,—պահանջեց հայրը,— ամուսնացա՞ծ եք դուք, թե ոչ։

— Իհարկե,— քաջաբար ասեց նա։— Վաղուց ամուսնացած ենք։ Կուզես՝ Լեսթերին հարցրու, երբ կգաս։

Մեծ ջանք էր հարկավոր Ջեննիին հոր հայացքին դիմանալու համար, բայց նա իր հայացքը ցած չդցեց, և հայրը հավատաց նրան։

— Լավ, ի՛նչ կա որ,— ասաց նա,— վաղուց դրա ժամանակն էր։

— Ուրեմն կգա՞ս, հայրիկ,— նորից հարցրեց Ջեննին։

Գերհարդը անօգնական ձեռքերը տարածեց։ Ջեննիի սիրալիր համառությունից նա զգացվեց մինչև հոգու խորքը։

— Այո, կգամ,— ասաց նա և շուռ եկավ, բայց նրա ուսերը ցնցվում էին, և Ջեննին հասկացավ, որ նա լաց է լինում։

— Հենց հիմա՞, ինձ հե՞տ։

Պատասխանի փոխարեն հայրը ներս մտավ պահեստի մթին դռնով, նա գնաց իր իրերը հավաքելու։

ԳԼՈՒԽ XXXVIII

Ջեննիի մոտ բնակություն հաստատելուց հետո Գերհարդն անհապաղ ձեռնամուխ եղավ իր բազմապիսի պարտականությունների կատարմանը, որոնք, նրա կարծիքով, հատկապես իր համար էին նախատեսված։ Նա իր վրա վերցրեց ջեռուցման ու հողամասի խնամքի հոգսը, մտքովն անգամ չանցկացնելով, թե կարելի է մի ուրիշ մարդու դրա համար ռոճիկ վճարել, երբ ինքն այստեղ պարապ նստած է։ Տան շուրջը եղած ծառերը խայտառակ վիճակում են, ասաց նա աղջկան։ Հարկավոր է սղոց և այգու դանակ ճարել, և գարնանն ինքը կզբաղվի դրանցով։ Գերմանիայում լավ են հասկանում այդպիսի բա-

ների օգուտը, իսկ այս ամերիկացիներն անշնորհք, անգործնական մարդիկ են։ Հեռո Գերհարդը պահանջեց մեխ ու առաղձագործական գործիքներ և աստիճանաբար նորոգեց բոլոր պահարաններն ու դարակները։ Նա պարզեց, որ տանից մի երկու մղոն հեռավորության վրա լութերական եկեղեցի կա և գտավ, որ դա ավելի լավն է, քան Քլիվլենդի եկեղեցին, ուր հաճախում էր ինքը, իսկ պաստորն իսկապես որ աստվածահաճո մարդ է։ Նա պահանջեց, որ Վեստան ամեն շաբաթ իր հետ եկեղեցի գնա և ոչ մի առարկություն լսել անգամ չուզեց։

Հայդ-Պարկում նոր կյանք սկսելով՝ Ջեննին ու Լեսթերն այնքան էլ հանգիստ չէին. նրանք գիտեին, որ իրենց բանը դյուրին չի լինելու։ Հյուսիսային կողմում Ջեննին առանց դժվարության խուսափում էր ծանոթություններից և հարևանների հետ զրուցելուց։ Բայց այստեղ իրենց վարձած տունն աչքի առաջ էր։ Պետք էր սպասել, որ հարևանները իրենց պարտքը կհամարեն այցելության գալ, և Ջեննին ստիպված կլինի հմուտ տանտիրուհու դեր կատարել։ Նա Լեսթերի հետ այս հարցը մանրամասն քննարկեց և Լեսթերը որոշեց, թե՝ թող հարևաններն իրենց մարդ ու կին համարեն։ Վեստային կներկայացնեն որպես Ջեննիի աղջիկը առաջին ամուսնուց՝ միստր Սթովերից (միսիս Գերհարդի օրիորդական ազգանունը), որը մեռել է երեխան ծնվելուց անմիջապես հետո։ Հայդ-Պարկը Չիկագոյի շքեղ կենտրոնից այնքան հեռու էր, որ Լեսթերն իրեն ապահովված էր համարում քաղաքի ծանոթներին հանդիպելուց։ Նա Ջեննիին բացատրեց, թե ինչպես պիտի պահի իրեն, որպեսզի առաջին հյուրը նրան անակնկալի չբերի։

Երկու շաբաթ էլ չանցած՝ առաջին հյուրը իսկապես երևաց. դա միսիս Սթենդլն էր, մի տիկին, որ հարևանների մեջ մեծ հարգանք էր վայելում և ապրում էր Ջեննիենցից հինգ տուն այն կողմը, նույնպես գազոններով շրջապատված մի գեղեցիկ առանձնատան մեջ։ Նա եկավ սեփական կառքով, որով շրջելիս էր եղել խանութներում։

— Տա՞նն է միսիս Քեյնը,— հարցրեց նա նոր սպասուհի Ժաննետին։

— Տանն է, մեմ,— պատասխանեց նա։— Հաճեցեք ձեր այցետոմսը տալ։

Եվ նա այցետոմսը տարավ Ջեննիին, որը հետաքրքրությամբ կարդաց անծանոթ անունը։

Երբ Ջեննին մտավ հյուրասենյակ, միսիս Սթենգլը, որ հետաքրքիր աչքերով մի բարձրահասակ շիկահեր կին էր, սրտանց ողջագուրվեց նրա հետ։

— Ես որոշեցի համարձակություն անել և խանգարել ձեր մենությունը,— ասաց նա հրապուրիչ սիրալիր ձայնով։— Ես ձեր հարևանուհին եմ, ապրում եմ ձեր դիմացը՝ մի քիչ վերև։ Սպիտակ քարե դարպասը, գուցե նկատած կլինեք։

— Այո, իհարկե, —պատասխանեց Ջեննին։— Լավ գիտեմ այդ տունը։ Դեռ առաջին անգամ, երբ եկել էինք այստեղ, ես ու միստր Քեյնը հիացել էինք նրանով։

— Ձեր ամուսնու ազգանունը ես, իհարկե, լսել եմ։ Իսկ իմ ամուսինը կապված է «Ուիլկս և Ընկ». էլեկտրական ֆիրմայի հետ։

Ջեննին գլխով արեց։ Միսիս Սթենգլի խոսելու տոնից երևում էր, որ դա շատ մեծ և եկամտաբեր ձեռնարկություն է։

— Մենք արդեն մի քանի տարի է, ինչ ապրում ենք այստեղ, և ես շատ լավ եմ հասկանում, թե մարդ որքան անհարմար է զգում իրեն քաղաքի նոր թաղամասում։ Հուսով եմ, դուք կայցելեք ինձ։ Ես շատ ու շատ ուրախ կլինեի։ Իմ ընդունելության օրը հինգշաբթին է։

— Հաճույքով,— պատասխանեց Ջեննին ներքուստ ցնցվելով, երբ կանխատեսում էր այդ տանջալից արարողությունը։— Դուք շատ սիրալիր եք եղել, որ անցել եք մեզ մոտ։ Միստր Քեյնը խիստ զբաղված է, բայց հենց որ մի քիչ ազատվի, մենք երկուսս էլ շատ ուրախ կլինենք մեզ մոտ տեսնելու ձեզ և ձեր ամուսնուն։

— Դուք ես մի կերպ երկուսով եկեք մեզ մոտ մի երեկո,— ասաց միսիս Սթենգլը։— Մենք շատ խաղաղ ենք ապրում։ Ամուսինս թատրոնների և ճամփորդությունների սիրա-

հար չէ։ Բայց հարևանների հետ ամենամտերմական հարաբերություններ ենք պահպանում։

Ջեննին սիրալիր ժպտաց։ Հյուրը վեր կացավ գնալու, և Ջեննին նրան ճանապարհ դրեց մինչև դուռը։

— Որքա՜ն ուրախ եմ ես, որ դուք այդքան հիանալի կին եք,— անկեղծորեն ասաց միսիս Սթենդլը նրա ձեռքը սեղմելով։

— Շնորհակալ եմ ձեզնից,— ասաց Ջեննին կարմրելով։— Ճիշտն ասած, ես այդպիսի գովասանքի արժանի չեմ։

— Դե, ուրեմն ես ձեզ կսպասեմ։ Ցտեսություն։

Եվ նա ժպտալով ձեռքը թափահարեց որպես հրաժեշտ։

«Կարծես վատ չանցավ,— մտածեց Ջեննին հեռացող կառքի ետևից նայելով։— Նա դուրեկան կին է։ Հարկավոր է Լեսթերին պատմել»։

Նրանց մոտ եղան նաև ոմն միստր ու միսիս Քարմայքլ Բերքեր և միսիս Ֆիլդ և միսիս Բոլլինգեր։ Նրանք կամ իրենց այցեատոմսերն էին թողնում, կամ ներս էին մտնում մի քիչ նստելու և զրուցելու։ Ջեննին տեսնելով, որ իրեն հարգարժան կին են համարում, ամեն կերպ աշխատում էր խայտառակ չլինել։ Եվ այդ նրան հիանալի հաջողվում էր։ Նա հյուրասեր էր և սիրալիր։ Նրա ժպիտի մեջ բարություն էր երևում, շարժուձևերը լիովին բնական էին։ Նա հիանալի տպավորություն էր թողնում։ Իր հյուրերին պատմում էր, թե վերջին ժամանակներս ապրել է Հյուսիսային կողմում, որ իր ամուսին միստր Քեյնը վաղուց փափագում էր բնակություն հաստատել Հայդ-Պարկում, որ իր հետ ապրում են իր հայրը և աղջիկը, որ առաջին ամուսնությունից է։ Նա հույս էր հայտնում, որ այսուհետև էլ ծանոթություն կպահպանի իր լավ հարևանների հետ։

Երեկոները նա Լեսթերին զեկուցում էր իր հյուրերի մասին։ Լեսթերը չէր փափագում ծանոթանալ այդ մարդկանց հետ։ Բայց Ջեննին աստիճանաբար համի էր ընկնում։ Ծանոթություններ հաստատելը նրան դուր էր գալիս և հույս ուներ, որ նոր պայմաններում Լեսթերը կվարժվի իրեն համարել լավ

կին և կյանքի իդեալական ընկերուհի։ Եվ այն ժամանակ գուցե և ամուսնանա իր հետ։

Սակայն առաջին տպավորությունները միշտ էլ հաստատուն չեն լինում, և Ջեննին շուտով համոզվեց դրանում։ Հարևանները նրան իրենց հասարակության մեջ ընդունեցին, թերևս, շատ հապճեպ, իսկ հետո սկսեցին լուրեր շրջել։ Ոմն միսիս Սոմմերվիլ, հյուր լինելով միսիս Քրեյգի մոտ, որը Ջեննիի ամենամոտիկ հարևանն էր, խոսակցության մեջ ակնարկեց, թե Լեսթերի մասին իրեն որոշ բաներ են հայտնի։

— Այո, այո։ Գիտե՞ք ինչ, սիրելիս, նրա համբավը մի քիչ...— նա հոնքերը վեր քաշեց և մատով սպառնական նշան արեց։

— Ի՞նչ եք ասում,— ցնցվեց միսիս Քրեյգը։— Իսկ որ նայես, նա այնքա՞ն դրական և լուրջ մարդ է։

— Մասամբ այդ այդպես էլ կա,— ասաց միսիս Սոմմերվիլը։— Նա հիանալի ընտանիքից է։ Բայց ամուսինս ինձ պատմում էր, թե նա կապեր է ունեցել մի ջահել կնոջ հետ։ Բայց չգիտեմ՝ ա՞յս կինն է դա, թե՞ ոչ։ Նրա հետ նրանք որպես մարդ ու կին ապրել են Հյուսիսային կողմում ինչ-որ մի տեղ, և նա այն կնոջը բոլորին ներկայացրել է որպես միսս Գորվուդ, թե ինչ-որ այդպիսի մի բան։

— Ի՞նչ եք ասում,— և միսիս Քրեյգը զարմանքից լեզուն ճլթացրեց։— Իսկ գիտե՞ք, գուցե սա հենց այն կինն է։ Սրա հոր ազգանունը Գերհարդ է։

— Գերհա՞րդ,— գոչեց միսիս Սոմմերվիլը։— Այո՛, այո՛, ճիշտ այդպես։ Եվ առաջ էլ այդ կինը, կարծեմ մի ինչ-որ խայտառակ պատմություն է ունեցել, համենայն դեպս երեխա է ունեցել։ Գուցե և հետո Քեյնը ամուսնացել է նրա հետ, այդ չգիտեմ։ Բայց նրա ընտանիքը, որքան ինձ հայտնի է, լսել անգամ չի ուզում այդ կնոջ գոյության մասին։

— Դա շատ հետաքրքիր բան է,— գոչեց միսիս Քրեյգը։— Մտածեցեք մի, և այնուամենայնիվ նա ամուսնացել է նրա հետ։ Բայց գուցե և չի՞ ամուսնացել։ Մեր ժամանակներում որքա՞ն դժվար է իմանալ, թե ում հետ գործ ունես։

— Դուք միանգամայն իրավացի եք։ Երբեմն ուղղակի

անհնարին է բան հասկանալ։ Բայց նա կարծես թե շատ լավ կին է։

— Հիանալի կին է,— հաստատեց միսիս Քրեյգը։—Այն-քա՞ն միամիտ։ Նա ինձ ուղղակի հմայել է։

— Բայց գուցե դա այն նույն կինը չէ,— շարունակեց հյուրը։— Գուցե ես սխալվում եմ։

— Հազիվ թե։ Գերհարդ։ Նա ինքն էլ ինձ ասել է, որ իրենք ապրել են Հյուսիսային կողմում։

— Դե ուրեմն, նշանակում է, նա է։ Ի՞նչ տարօրինակ է, որ դուք նրա մասին հիշատակեցիք։

— Շատ՞, շա՞տ տարօրինակ է,— ասաց միսիս Քրեյգը, արդեն ինքն իրեն մտածելով, թե սրանից հետո ինչպես պիտի պահի իրեն Ջեննիի հետ։

Լուրեր հասնում էին նաև ուրիշ աղբյուրներից։ Ինչ-որ մեկը Ջեննիին Լեսթերի հետ միասին կառք նստած տեսել էր Հյուսիսային կողմում, ինչ-որ մեկին Ջեննիին ներկայացրել էին որպես միսս Գերհարդ, ինչ-որ մեկը տեղյակ էր Քեյնի ընտանիքում եղած տարաձայնությանը։ Հասկանալի է, որ Ջեննիի ներկա վիճակը՝ հիանալի տունը, Լեսթերի հարստությունը, Վեստայի գեղեցկությունը՝ այս ամենը բարենպաստ ազդեցություն էր ունենում աշխարհի կարծիքի վրա։ Ջեննին իրեն այնքան լավ էր պահում, ակներևորեն այնքան լավ կին էր ու մայր, որ նրա վրա բարկանալն անհնարին էր դառնում։ Բայց նա անցյալ է ունեցել, և այդ չէին մոռանում։

Վերահաս վտանգը Ջեննին առաջին անգամ զգաց, երբ Վեստան դպրոցից վերադառնալով անսպասելիորեն հարց տվեց նրան.

— Մայրիկ, իսկ ո՞վ է եղել իմ հայրիկը։

— Նրա ազգանունը Սթովեր էր,— պատասխանեց մայրը, իսկույն զգալով, որ բանը լավ չէ, որ ինչ-որ մեկը ավելորդ մի խոսք է թոցրել բերանից։— Իսկ ինչո՞ւ ես հարցնում։

— Որտե՞ղ եմ ծնվել ես,— շարունակեց Վեստան առանց մոր հարցին պատասխանելու և, ըստ երևույթին, ցանկանալով ոչքան կարելի է շատ բան իմանալ իր մասին։

— Կոլումբուսում, բալիկս, Օհայո նահանգում։ Իսկ ի՞նչ կա որ։

— Անիտա Բոլլինգերն ասաց, որ ես ոչ մի հայրիկ էլ չեմ ունեցել, և որ նույնիսկ, երբ ես ծնվել եմ, դու ամուսնացած չես եղել։ Նա ասում է, որ ես իսկական աղջիկ չեմ, իսկի հայտնի էլ չէ, թե ով եմ։ Ես այնպես բարկացա, որ նրան ծեծեցի։

Ջեննին լուռ, քար կտրած դեմքով նայում էր առաջ։ Միսիս Բոլինգերը իր մոտ հյուր էր եղել և բոլորից ավելի սրտանց էր առաջարկել իր մտերմությունը Ջեննիի հետ, իսկ հիմա նրա աղջիկն այդպիսի բաներ է ասում Վեստային։ Այդ որտեղի՞ց է լսել նա։

— Դու նրա վրա ուշադրություն մի՛ դարձնի,— վերջապես ասաց Ջեննին։— Նա ոչինչ չգիտե։ Քո հայրիկը միստր Սթովերն էր, և դու ծնվել ես Կոլումբուսում։ Իսկ կռվելը լավ բան չէ։ Երբ աղջիկները կռվում են, ամեն տեսակ վիրավորական խոսքեր իրար ասում են հենց այնպես, տաքացած բոպեին։ Դու նրան ձեռք մի տուր և մի էլ մոտենա նրան, այն ժամանակ նա քեզ ոչինչ չի ասի։

Բացատրությունն այնքան էլ հաջող չստացվեց, բայց միաժամանակ գոհացրեց Վեստային, որը միայն ասաց.

— Եթե նա փորձի ինձ խփել, ես էլ նրան կզխկեմ։

— Դու բոլորովին էլ մի մոտեցիր նրան, հասկանո՞ւմ ես։ Այն ժամանակ նա քեզ չի խփի։ Քո դասերի մասին մտածիր, իսկ նրան մի էլ մոտեցիր ու մի կռվիր նրա հետ։ Եվ նա էլ քեզ հետ չի կռվի։

Վեստան դուրս վազեց, իսկ Ջեննին խոր մտքի մեջ ընկավ։ Հարևանները բամբասում են։ Իր անցյալը ոչ ոքի համար գաղտնիք չէ։ Որտեղի՞ց են իմացել նրանք։

Վեստայի հետ ունեցած խոսակցությունից Ջեննիի սրտին հասած վերքը դեռ չէր ապաքինվել, երբ նա նոր հարվածներ ու ծակոցներ ստացավ։ Մի անգամ Ջեննին մի քանի բոպեով այցելության գնաց իր մոտիկ հարևանուհի միսիս Ֆիլդին, երբ սա մի գավաթ թեյի էր նստած իր մի ուրիշ հարևանուհու՝ միսիս Բեյքերի հետ։ Միսիս Բեյքերի ականջին

լուրեր էին հասել Ջեննիի Հյուսիսային կողմում անցկացրած կյանքի և նրա նկատմամբ Քեյն ընտանիքի վերաբերմունքի մասին։ Այդ չորուկ-մորուկ, եռանդոտ ու ոչ հիմար կինը, որ մասամբ միսիս Բրայսբրիջին էր հիշեցնում, ծանոթներ ընտրելիս խիստ զգուշավոր էր։ Նա միշտ այն կարծիքին էր եղել, որ միսիս Ֆիլդն էլ իր պես է մտածում, և նրա մոտ Ջեննիին հանդիպելով խիստ վրդովվեց, թեպետև արտաքին հանգստություն պահպանեց։

— Ծանոթացեք, սա միսիս Քեյնն է,— ասաց միսիս Ֆիլդը սիրալիր ժպիտով։

Միսիս Բեյքերը Ջեննիին չափեց այնպիսի մի հայացքով, որը ոչ մի լավ բան չէր խոստանում։

— Միսիս Լեսթեր Քե՞յնը,— հարցրեց նա։

— Այո,— պատասխանեց միսիս Ֆիլդը։

— Ա՜յ թե ինչ,— շարունակեց միսիս Բեյքերը սառն տոնով։— Ես շատ բան եմ լսել միսիս... միսիս... Լեսթեր Քեյնի մասին։

Եվ ասես Ջեննիի գոյությունը մոռանալով, նա շուռ եկավ դեպի տանտիրուհին և նրա հետ գաղտնի խոսակցություն ըսկըսեց, որին Ջեննին մասնակցել չէր կարող։ Ջեննին մնացել էր լուռ և չգիտեր ինչպես պահի իրեն այդպիսի փափուկ դրության մեջ։ Միսիս Բեյքերը շուտով ոտքի ելավ, թեպետև մըտադիր էր երկար մնալ այդտեղ։

— Ոչ մի կերպ, ոչ մի կերպ չեմ կարող մնալ,— ասաց նա վեր կենալով։— Ես միսիս Նեյլին խոստացել եմ, որ այսօր անպայման իր մոտ անցնեմ։ Եվ մեկ էլ, երևի, ես առանց այն էլ ձանձրացրի ձեզ։

Նա գնաց դեպի դուռը և միայն շեմքում շուռ եկավ Ջեննիի կողմը և պաղ-պաղ գլուխ տվեց նրան։

— Ում ասես, որ մարդ չի հանդիպում,— ասաց նա տանտիրուհուն հրաժեշտ տալիս։

Միսիս Ֆիլդը հնարավոր չհամարեց Ջեննիին պաշտպան կանգնել, որովհետև ինքն էլ մի բան չէր, և ինչպես հատուկ է հենց նոր հարստացած կանանց, ամեն կերպ աշխատում էր լավ հասարակության մեջ խցկվել։ Իսկ միսիս Բեյքերն այդ

հասարակության մեջ որքա՞ն ավելի պատվավոր դիրք էր գրավում, քան Ջեննին, այնպես որ միսիս Ֆիլդը նրա հետ գժտվել չէր ուզում։ Վերադառնալով այն սեղանի մոտ, որի առաջ նստած էր Ջեննին, միսիս Ֆիլդը ժպտաց փոքր-ինչ մեղավորի ժպիտով, բայց երևում էր, որ իրեն անհարմար է զգում։ Բնականաբար Ջեննիի տրամադրությունն էլ ընկած էր, և շուտով մի ինչ-որ պատճառաբանությամբ հրաժեշտ տվեց ու գնաց։ Նա իրեն խորապես վիրավորված էր զգում և հասկանում էր, որ միսիս Ֆիլդն արդեն զզջում է, որ մտերմական հարաբերություններ ունի իր հետ։ Ծանոթություններից մեկը վերջացած էր. Ջեննին դրան չէր կասկածում։ Նորից նրան համակեց այն ճնշող գիտակցությունը, որ իր կյանքը ձախողակ է։ Այժմ արդեն ոչինչ չէր կարելի ուղղել, իսկ ապագան անհուսալի էր։ Լեսթերը չի ցանկանա նրա հետ ամուսնանալ և փրկել նրա անունը վարկաբեկումից։

Ժամանակն անցնում էր, առանց որևէ փոփոխություն բերելու իր հետ։ Նայելով գեղեցիկ առանձնատանը, կանոնավոր դաղոններին ու ստվերախիտ ծառերին, պատշգամբի՝ վայրի վազի կանաչով պարուրված սյուներին, տեսնելով, թե Գերհարդն ինչպես է պրպտում այգում, ինչպես է Վեստան վերադառնում դպրոցից, իսկ Լեսթերն ամեն առավոտ դուրս է գնում իր շքեղ երկանիվ կառքով, ամեն ոք կկարծեր, որ այստեղ գոհունակություն ու խաղաղություն է թագավորում, որ վշտին ու հոգսին տեղ չկա այս չքնաղ բնակարանում։

Եվ իրոք, կյանքը տան մեջ ընթանում էր խաղաղ, առանց ցնցումների։ Ճիշտ է, հարևանները համարյա դադարել էին այցելել Լեսթերին ու Ջեննիին, և աշխարհիկ զվարճությունները վերջացել էին, բայց դա նրանց համար զրկանք չէր, որովհետև իրենց շորս պատերի մեջ էլ նրանք բավական ուրախություններ ունեին և մտքի սնունդ էին ստանում։ Վեստան սովորում էր դաշնամուր նվագել և մեծ առաջադիմություն էր ցույց տալիս. նա հիանալի լսողություն ուներ։ Ջեննին երկնագույն, մանուշակագույն, մուգ-կանաչ տնային ըզգեստներ հագած, որոնք շատ էին սազում նրան, զբաղվում

էր տնտեսական գործերով, կարում էր, լվանում, փոշին մաքրում, Վեստային գպրոց էր տանում, ծառաներին հետևում։ Գերհարդն աշխատում էր առավոտից մինչև գիշեր. տնային բոլոր գործերն անպայման նրա ձեռքով պիտի անցնեին։ Նրա պարտականություններից մեկն էլ, որ ինքն էր իր վրա դրել, Լեսթերի և ծառաների ետևից ման գալն էր, որպեսզի անջատի գազը կամ էլեկտրական լամպերը, եթե որևէ մեկը մոռանում էր մարել դրանք, մի բան, որ նրա ասելով հանցավոր շռայլություն էր։

Խնայողություն սիրող ծերունուն դառնացնում էր և այն, որ Լեսթերը սովորություն ուներ նույնիսկ ամենաթանկագին շորը հագնել միայն մի քանի ամիս, իսկ հետո դեն էր նետում։ Նա քիչ էր մնում լաց լինի, երբ Լեսթերը հիանալի կոշիկն այլևս հագնել չէր ուզում հենց միայն նրա համար, որ կրունկները մի թեթև մաշված էին լինում կամ երեսի կաշին տեղ-տեղ ճմրթված։ Գերհարդը գտնում էր, որ դրանք պետք է նորոգելու տալ, բայց նրա բոլոր փնթփնթոցին ու հորդորներին Լեսթերը պատասխանում էր, թե այդ կոշիկն իր համար անպետք է դարձել։

— Ինչպիսի՜ շռայլություն,— գանգատվում էր Գերհարդը Ջեննիին։— Ինչքա՜ն բարիք է իզուր կորչում։ Ա՛յ, կտեսնես, վերջը վատ կլինի, դրան ոչ մի փող չի բավականացնի։

— Նա ուրիշ կերպ անել չի կարող, հայրիկ,— արդարանում էր Ջեննին։— Այդպես են դաստիարակել նրան։

— Ա՛յ թե դաստիարակություն է հա՜։ Այս ամերիկացիները խնայողությունից ոչինչ չեն հասկանում։ Նրանք պետք է Գերմանիայում ապրեին, այն ժամանակ դոլլարի գինը կիմանային։

Լեսթերն այս խոսակցությունները Ջեննիից իմանալով՝ միայն ժպտում էր։ Ծերունի Գերհարդը զվարճություն էր պատճառում նրան։

Ծերունին հաշտվել չէր կարողանում նաև լուցկին անտեղի վատնելու Լեսթերի սովորության հետ։ Պատահում էր, որ Լեսթերը լուցկին շրթացնում էր և, փոխանակ սիգարը վառելու, միաժամանակ ձեռքին բռնած խոսում էր որևէ մեկի

հետ և վառած լուցկին ցած էր գցում ու մի նորը վառում։ Կամ թե ծխել սկսելուց դեռ շատ առաջ սկսում էր իրար ետևից լուցկիներ շրթացնել։ Պատշգամբում կար մի անկյուն, որտեղ նա սիրում էր ամառային երեկոներին Ջեննիի հետ զրուցել ու ծխել։ Շուտ-շուտ լուցկի վառելով նա իրար ետևից դրանք նետում էր այդի։ Մի անգամ գազոնը հնձելիս Գերհարդը սարսափով գտավ կիսափտած լուցկիների մի ամբողջ կույտ։ Նա բոլորովին շվարեց և հանցանքի այդ իրեղեն ապացույցները լրագրի մեջ հավաքելով տարավ սենյակ, որտեղ Ջեննին նստած կար էր անում։

— Տես, թե ինչ եմ գտել ես,— ասաց նա։— Դու մի այստեղ նայիր։ Այդ մարդը խնայողությունից ավելի չի հասկանում, քան... քան...— նա այդպես էլ պետք եղած խոսքը չգտավ։— Նստում ու ծխում է, իսկ լուցկիների հետ տես թե ինչպես է վարվում։ Ախր սրա տուփը հինգ ցենտ փող արժի, հինգ ցենտ։ Հետաքրքիր է, ինչպե՞ս է նա մտածում ապրել այսպիսի ծախսեր անելով։ Չէ՛, չէ՛, դու մի տես, սա ի՞նչ բան է։

Ջեննին նայեց և գլուխն օրորեց։

— Այո, Լեսթերն ամենևին խնայողություն չգիտե,— ասաց նա։

Գերհարդը լուցկիները տարավ ներքնատուն։ Գոնե վառարանում այրել սրանք. այդ էլ մի օգուտ է։ Նա կարող էր նրանցով իր ծխամորճը վառել, բայց դրա համար շատ ավելի հարմար էին հին լրագրերը, որոնք ամբողջ կույտերով էին հավաքվում և այդ նույնպես ցույց էր տալիս տան տիրոջ շռայլումները։ Գերհարդը սրտի մորմոքով գլուխն էր օրորում։ Դե ինչպե՞ս աշխատի այստեղ։ Ամեն ինչ իր դեմ է։ Բայց նա զենքը ցած չէր դնում և չէր դադարում փորձեր անել այդ մեղավոր վատնումները կանխելու։ Նա ինքը ամենախիստ խնայողությամբ էր շարժվում։ Երկու տարի կիրակի օրերը հագնում էր Լեսթերի վերակարված սև կոստյումը, որի վրա նա իր ժամանակին բռով փող էր ծախսել։ Հագնում էր նրա հին կոշիկները, ձևացնելով, թե հենց իսկը իր ոտին են, և նրա փողկապները, միայն թե սևերը. ուրիշ փողկապ Գեր-

հարդը չէր սիրում։ Նա Լեսթերի վերնաշապիկն էլ կսկսեր հագնել, եթե կարողանար վերակարել իր վրա հարմարեցնելով, բայց սպիտակեղենը հիանալի հարմարեցնում էր իր օգտագործման համար, օգտվելով խոհարարուհու բարեկամական ծառայությունից։ Գուլպաների մասին արդեն խոսելն էլ ավելորդ է։ Այսպիսով Գերհարդի հագուստի վրա ոչ մի ցենտ չէր ծախսվում։

Մյուս իրերը, որոնք Լեսթերն արդեն մաշված էր համարում՝ կոշիկներ, վերնաշապիկներ, կոստյումներ, փողկապներ, օձիքներ— նա հավաքում ու պահում էր շաբաթներով, ամիսներով, իսկ հետո մռայլ վճռականությամբ տանում էր դերձակի կամ հնավաճառի մոտ՝ անխղճորեն բարձրացնելով գները։ Նա այն կարծիքին էր, որ բոլոր հնավաճառները արնախում տզրուկներ են, որ նրանց ոչ մի խոսքին հավատալ չի կարելի։ Նրանք բոլորը խաբում են։ Գանգատվում են, թե աղքատ են, այնինչ լող են տալիս փողի մեջ։ Գերհարդն անձամբ էր համոզվել դրանում. նա հետևել էր հնավաճառներին և տեսել, թե նրանք ինչպես են վարվում իրենից գնած իրերի հետ։

— Սրիկաներ են,— զայրացած ասում էր նա։— Մի զույգ կոշիկի համար ինձ տասը ցենտ են առաջարկում, իսկ իրենք այդ նույն կոշիկներն իրենց խանութում գնահատում են երկու դոլլար։ Ավազակներ են, ուրիշ ոչինչ։ Գոնե մի դոլլար տային ինձ։

Ջեննին ժպտում էր։ Միայն նա էր, որ լսում էր Գերհարդի գանգատները. նա Լեսթերից կարեկցանք տեսնելու հույս էլ չուներ։ Իր սեփական գրոշները նա համարյա ամբողջությամբ տալիս էր եկեղեցուն, և պաստորը նրան համարում էր հեզության, բարոյականության, բարեպաշտության օրինակ, մի խոսքով՝ բոլոր առաքինությունների մարմնացում։

Եվ այսպես, չնայած մարդկանց չարագույժ քրթմնջոցին ու փսփսոցին, այդ տարիներն ամենաերջանիկն էին Ջեննիի կյանքում։

Լեսթերը, թեպետև երբեմն տարակուսանքներ էր ունենում, թե ճի՞շտ է արդյոք իր բռնած ուղին, բայց միշտ սիրա-

լիր և ուշադիր էր Ջեննիի նկատմամբ և բոլորովին գոհ էր իր ընտանեկան պայմաններից։

— Ամեն ինչ կարգի՞ն է,— հարցնում էր Ջեննին, երբ նա երեկոյան վերադառնում էր տուն։

— Իհարկե,— պատասխանում էր Լեսթերը և սիրալիր թփթփացնելով նրա այտին՝ սենյակներն էր անցնում, երբ ժրաջան Ժաննետը նրա վերարկուն ու գլխարկն էր կախում։

Ամեռը նրանք նստում էին գրադարանում, վիթխարի բուխարիկի առաջ։ Գարնանը, ամառն ու աշնանը Լեսթերը գերադասում էր վերանդան, որտեղից մի գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի այգու բացատն ու խաղաղ փողոցը։ Այստեղ նա ծխում էր իր մինչճաշյան սիգարը, իսկ Ջեննին նրա բազկաթոռի թևին նստած՝ նրա գլուխն էր շոյում։

— Քո մազերը բոլորովին չեն նոսրացել,— ասում էր նա։— Դու գո՞հ ես։— Կամ թե կշտամբում էր նրան.— Ինչո՞ւ ես ճակատդ կնճռոտում։ Մի՞թե կարելի է։ Եվ ինչո՞ւ այսօր առավոտյան դու փողկապդ չէիր փոխել։ Չէ՞ որ ես նորն էի դրել մոտդ։

— Մոռացել էի,— պատասխանում էր Լեսթերը և ճակատի կնճիռները հարթում կամ ծիծաղելով ասում, թե շուտով ինքը մի ահագին ճաղատ կունենա։

Հյուրասենյակում, Վեստայի և Գերհարդի ներկայությամբ ևս Ջեննին նրա հետ սիրալիր էր լինում, բայց մի փոքր ավելի զուսպ։ Ջեննին սիրում էր խաղեր ու գլուխկոտրոցներ՝ ապակու տակ գնդիկներ, ռեբուսներ, սեղանի բիլիարդ։ Լեսթերը նույնպես մասնակցում էր այդ պարզ խաղերին։ Երբեմն նա ժամերով նստում էր որևէ գլուխկոտրոցի վրա։ Ջեննին արտակարգ ճարպկությամբ մասնակցում էր նրա զբաղմունքին և հպարտ ու երջանիկ էր զգում իրեն, երբ նա դիմում էր իր օգնությանը։ Իսկ եթե Լեսթերն ուզում էր, որ անպայման ինքը մենակ լուծի հանելուկը, Ջեննին լուռ հետևում էր նրան ձեռքը վզովը գցած և կզակը նրա ուսին դրած։ Լեսթերին այդ դուր էր գալիս, նրան հաճույք էր պատճառում Ջեննիի սերը, որ նա այնպես առատորեն ցուցաբերում էր, և չէր դադարում հիանալ նրա ջահելությամբ ու գեղեցկությամբ։ Ջեննիի հետ

նա ինքն էլ իրեն երիտասարդ էր զգում, իսկ կյանքում ամենից ավելի Լեսթերին սարսափեցնում էր անիմաստ ծերության մոտեցումը։ Հաճախ նա ասում էր.

— Ես ուզում եմ երիտասարդ մնալ կամ մեռնել երիտասարդ հասակում։

Եվ Ջեննին հասկանում էր նրան։ Սիրելով Լեսթերին՝ հիմա նա ինքն էլ զոհ էր, որ այնքան երիտասարդ է նրանից։

Ջեննիին առանձնապես ուրախացնում էր այն, որ Լեսթերն ավելի ու ավելի էր կապվում Վեստայի հետ։ Հաճախ երեկոները նրանք հավաքվում էին գրադարանում։ Վեստան ահագին սեղանի առաջ նստած դասերն էր պատրաստում, Ջեննին կար էր անում, Գերհարդն իր անվերջանալի գերմանական լրագրերն էր կարդում։ Ծերունուն վշտացնում էր, որ Վեստային թույլ չէին տալիս սովորել լութերական եկեղեցուն կից ծխական դպրոցում, բայց Լեսթերը դրա մասին լսել անգամ չէր ուզում։

— Որպեսզի նրան ինչ-որ գերմանացիներ սովորեցնեն։ Այդ էր պակաս,— ասաց նա, երբ Ջեննին պատմեց նրան ծերունու նվիրական ցանկության մասին։— Սովորում է տարրական դպրոցում, ինչպես բոլոր երեխաները, և հիանալի է։ Ասա նրան, որ հանգիստ թողնի երեխային։

Երբեմն նրանք չորսը միասին առանձնապես լավ էին զգում իրենց։ Լեսթերը սիրում էր ջրաացնել յոթամյա դպրոցականին։ Երկու ծնկների մեջ առնելով Վեստային՝ նա սկսում էր թարսել հասարակ ճշմարտությունները և գիտել, թե աղջկա գիտակցությունն ինչպես է ընկալում նրա պարադոքսները։

— Ի՞նչ է ջուրը,— հարցնում էր նա և լսելով պատասխանը՝ «այդ այն է, որ մենք խմում ենք», զարմացած աչքերը չռում էր ու շարունակում հարցումները.—լավ, բայց թե ինչ է դա, այդ չգիտե՞ս։ Հապա էլ ի՞նչ են սովորեցնում ձեզ դպրոցում։

— Բայց չէ՞ որ մենք ջուրը խմում ենք,— չէր նահանջում Վեստան։

— Խմելը՝ խմում ենք, բայց թե ինչ բան է ջուրը՝ դու չգիտես։ Հարցրու քո ուսուցչուհուն, գուցե նա քեզ կասի։

Եվ նա թողնում էր, որ երեխան գլուխ կոտրի այդ գծվածին հարցի վրա։

Աղջկա սնունդը, ամանները, հագուստը լեսթերը պատրաստ էր ամեն ինչ քիմիական տարրերի բաժանել, և Վեստան, աղոտ կերպով ինչ-որ բան տեսնելով ծանոթ առարկաների արտաքին կեղևի եռակը, սկսում էր նույնիսկ վախենալ նրանից։ Առավոտյան դպրոց գնալուց առաջ նա գալիս էր Լեսթերին երևալու, որովհետև նա շատ բծախնդիր էր երեխայի արտաքինի նկատմամբ։ Սիրում էր միշտ նրան տեսնել զուգված, երկնագույն վիթխարի բանտը մազերին կապված, պատվիրում էր նրան հագցնել մերթ փապուճներ, մերթ ճբոկավոր կոշիկներ, նայած եղանակին, շոր հագցնելիս ընտրել նրա դեմքին ու բնավորությանը համապատասխան գույներ։

— Աղջիկն ուրախ-զվարթ բնավորություն ունի,— ասաց նա մի անգամ։— Ոչ մի մուգ բան նրան մի՛ հագցրեք։

Ջեննին տեսնում էր, որ այդ հարցում էլ պետք է խորհրդակցել Լեսթերի հետ և հաճախ աղջկանն ասում էր։

— Գնա, թող քեզ քեռին տեսնի։

Վեստան գալիս էր և սկսում պտույտ գալ նրա առաջ ասելով.

— Տես։

— Այդպե՞ս, այդպե՞ս։ Ամեն ինչ կարգին է։ Կարող ես գնալ։

Եվ նա դուրս էր վազում։

Լեսթերն սկսեց ուղղակի պարծենալ Վեստայով։ Կիրակի օրերն զբոսանքի դուրս գալիս նա միշտ Վեստային նստեցնում էր իր և Ջեննիի միջև։ Նա պնդում էր, որ երեխային տան պարեր սովորելու, և Գերհարդը վշտից ու ցասումից գլուխը կորցնում էր։

— Ինչպիսի՞ մեղք,— գանգատվում էր նա Ջեննիին։— Հենց միայն սատանայի սրտովն է։ Պարե՞լ է պետք նրան։ Ինչի՞ համար է։ Որպեսզի նրանից մի ինչ-որ պատվո՞ղ դուրս գա, որպեսզի հենց մե՞նք հետագայում ամոթանք տանք նրան։

— Դու էլ ի՛նչ ես ասում, հայրիկ,— առարկում էր Ջեն-

նին։— Սրա մեջ ոչ մի զարհուրելի բան չկա։ Դպրոցը շատ լավն է։ Լեսթերն ասում է, որ Վեստայի համար օգտակար է սովորել։

— Օ՛հ, այդ Լեսթերն էլ... Շա՜տ բան է հասկանում, թե որն է օգտակար երեխային։ Ինքը թուղթ է խաղում, վիսկի է խմում։

— Կամաց, կամաց, հայրիկ, այդպես խոսել չի հարկավոր,—հանգստացնում էր նրան Ջեննին։—Լեսթերը լավ մարդ է, դու ինքդ էլ գիտես այդ։

— Որոշ կողմերով լավ է, բայց ո՛չ ամեն բանում։ Օ՛հ, ո՛չ ամեն բանում։

Եվ նա հեռանում էր անբավական փնթփնթալով։ Լեսթերի ներկայությամբ նա սուս էր մնում, իսկ Վեստան ինչ ուզենար, այն էլ անում էր պապի հետ։

— Պապիկ,— ասում էր նա Գերհարդի թևից քաշելով կամ նրա կոշտ այտը շոյելով, և պապը զիջում էր ամեն բանում։ Նա անզոր էր թոռան շոյանքի առաջ, մի ինչ-որ բան կոկորդն էր գալիս ու խեղդում նրան։

— Գիտե՞մ ես քեզ, չարաճճի՛,— ասում էր նա։

Իսկ Վեստան մեկ էլ տեսար նրա ականջը կսմթեց։

— Դե վե՛րջ տուր,— փնթփնթում էր նա։— Բավական է չարությունն անես։

Բայց ամեն ոք կարող էր նկատել, որ Վեստան դադարում էր միայն այն ժամանակ, երբ ինքն էր ձանձրանում չարություններից։ Գերհարդը պաշտում էր թոռնիկին և կատարում էր նրա ամենափոքր ցանկությունն անգամ։ Նա թոռնիկի հլու ստրուկն էր։

ԳԼՈՒԽ XXXIX

Այս ամբողջ ժամանակամիջոցում շարունակում էր աճել Լեսթերի ընտանիքի անբավականությունը, որ առաջացել էր նրա անկանոն կյանքից։ Հարազատների համար պարզ էր, որ վաղ թե ուշ խայտառակությունն անխուսափելի է։ Արդեն

շարագույժ լուրեր էին պատվում։ Թվում էր, թե բոլորին ամեն ինչ հայտնի է, թեև ոչ ոք բացարձակ ոչինչ չէր ասում։ Ավագ Քեյնը ուղղակի զարմանում էր, թե ինչպես կարող էր իր որդին այդպես դեմ գնալ հասարակությանը։ Գոնե մի բացառիկ հետաքրքիր կին լիներ նա, որևէ հայտնի դերասանուհի, նկարիչ, բանաստեղծուհի լիներ, էլի կարելի էր Լեսթերի մոլորությունը մի կերպ բացատրել, եթե ո՞չ արդարացնել։ Բայց, ինչպես Լուիզան է նկարագրում, դա մի շատ հասարակ կին է, որ ոչ գեղեցկությամբ է փայլում, ոչ տաղանդով. անհասկանալի է, ուղղակի անհասկանալի։

Լեսթերը, իր որդին, իր սիրելին։ Որպիսի՞ ցավ, որ նա իր կյանքը մարդավայել չդասավորեց։ Ցինցիննատիում նա շատ կանանց էր դուր գալիս։ Վերցնենք թեկուզ Լետտի Պեյսը։ Ա՛յ թե ում հետ պիտի ամուսնանար նա։ Գեղեցիկ է, խելոք, սիրտն էլ՝ բարի։ Ծերունի Քեյնը վշտանում էր ու տրրտնջում, իսկ հետո էլ սկսեց զայրանալ։ Ամո՛թ Լեսթերին, որ այդպես նեղացնում է հորը։ Նրա վարմունքն անբնական է, աններելի, վերջապես անթույլատրելի։ Արշիբալդ Քեյնը երկար ժամանակ տանջվում էր այս մտքից և վերջապես զգաց, որ այսպես շարունակել չի կարող, թեև կդժվարանար ասել, թե որը պիտի լինի փոփոխությունը։ Լեսթերն ինքնագլուխ մարդ է և դիտողություններ չի հանդուրժի։ Դուրս է գալիս, որ ոչինչ չի կարելի անել։

Մի շարք հանգամանքներ խնդրի լուծումն արագացրին։ Լուիզան դեպի Չիկագո կատարած իր շարաբաստիկ ճամփորդությունից շատ չանցած՝ ամուսնացավ, և ծերունիների տունը դատարկվեց, երբեմն միայն հյուր էին գալիս թոռնիկները։ Լեսթերը Լուիզայի հարսանիքին ներկա չէր, թեև հրավեր ստացել էր։ Հետո մեռավ միսիս Քեյնը, և նրա մահվան կապակցությամբ ծերունի Արշիբալդն ստիպված էր իր կտակը փոխել։ Դրա համար պահանջվում էր Լեսթերի ներկայությունը։ Լեսթերը եկավ ճնշված այն գիտակցությունից, որ վերջին ժամանակներս այնքան քիչ է տեսնվել մոր հետ և այնքան շատ վիշտ է պատճառել նրան, բայց իր գործերի մասին ոչ մի խոսք չասաց։ Հայրը մեկ մտածեց խոսել որդու հետ, բայց

հետո միտքը փոխեց. շատ մոայլ տրամադրության մեջ էր նա։ Լեսթերը վերադարձավ Չիկագո, և միաժամանակ նորից ամեն ինչ խաղաղվեց։

Լուիզայի ամուսնությունից և կնոջ մահից հետո ծերունի Քեյնը փոխադրվեց Ռոբերտի մոտ, որովհետև ծեր հասակում նրա ամենամեծ ուրախությունը թոռնիկներն էին։ Այժմ Ռոբերտն իր ձեռքն էր առել ֆիրմայի բոլոր գործերը, թեև դրամագլխի վերջնական բաժանումը կարող էր տեղի ունենալ միայն ծերունու մահից հետո։ Հուսալով, թե վերջ ի վերջո ամբողջ ձեռնարկության գլուխն է դառնալու՝ Ռոբերտն առանց ուժերը խնայելու ամեն կերպ սիրաշահում էր հորը, քույրերին ու նրանց ամուսիններին։ Ճիշտ չէր լինի ասել, թե նա քծնում էր նրանց, պարզապես դա գործարարի սառն հաշվենկատություն էր, շա՜տ ավելի խորամանկ, քան կարող էր ենթադրել Լեսթերը։ Ռոբերտի անձնական կարողությունը արդեն կրկնակի չափով ավելի էր մյուս դավակների կարողությունից, բայց նա դա գաղտնի էր պահում և ձևացնում էր, թե շատ համեստ միջոցներ ունի։ Նա գիտեր, որ աղգականների նախանձը կարող է իրեն վնասել, և սպարտական կյանք էր վարում՝ առժամանակ հույսը դնելով կանխիկ դրամի վրա, որ աննկատելի էր, բայց և հուսալի։ Մինչ Լեսթերը լող էր տալիս հոսանքի հետ, Ռոբերտն աշխատում ու աշխատում էր առանց ձեռքերը ծալելու։

Այն հանգամանքը, որ Ռոբերտը եղբորը ֆիրմայի ղեկավարությունից հեռացնելու միտքն էր փայփայում, առանձին նշանակություն չուներ, քանի որ ծերունի Քեյնը Լեսթերի Չիկագոյում վարած կյանքի մասին երկար խորհելուց հետո ինքն էր հանգել այն եզրակացության, որ նրան դրամագլխի մի զգալի մաս տալն անմտություն կլիներ։ Երևում է՝ ինքը գերագնահատել է Լեսթերին։ Գուցե և Լեսթերն ավելի խելացի և ավելի բարեսիրտ է եղբորից, էսթետիկական պահանջների և հասարակության մեջ ունեցած հաջողության կողմից նրա հետ համեմատել անգամ չի կարելի, բայց Ռոբերտը հիանալի գործարար թափ ունի։ Նա կարողանում է առանց ազմուկի իր ուզածն անել։ Եթե Լեսթերը հիմա խելք

չգա, էլ ի՞նչ կարելի է սպասել։ Ավելի լավ չէ՞ դրամագլուխը թողնել նրան, ով կարող է նրա մասին հոգալ։ Եվ Արշիբալդ Քեյնն արդեն պատրաստ էր իր հավատարմատարին կարգադրություն անել ու կտակը փոխել այնպես, որ Լեսթերը, եթե չուզվի, բացի տարեկան չնչին եկամուտից, ուրիշ ոչ մի ժառանգություն չստանա։ Բայց նա որոշեց Լեսթերին էլի մի հնարավորություն տալ. պահանջել, որ նա հրաժարվի իր մեղսալից կյանքից և հասարակության մեջ իրեն վայել տեղը գրավի։ Գուցե դեռ ուշ չէ։ Չէ՞ որ նա ապագայի այնպիսի հիանալի հեռանկարներ ունի։ Մի՞թե նա ինքն իր թշնամին է։ Ներումի Արշիբալդը Լեսթերին գրեց, որ ինքը կուզենար խոսել նրա հետ, երբ իրեն հարմար կլինի, և երեսունվեց ժամից հետո Լեսթերն արդեն Ցինցիննատիումն էր։

— Ես ուզում եմ էլի մի անգամ խոսել քեզ հետ մի հարցի մասին, Լեսթեր,— սկսեց Ներումին,— թեև դա ինձ համար հեշտ չէ։ Դու, իհարկե, գիտես ինչ նկատի ունեմ ես։

— Գիտեմ,— հանգիստ պատասխանեց Լեսթերը։

— Երբ ես դեռ շատ երիտասարդ էի, մտածում էի, որ ոչ մի դեպքում չեմ միջամտի իմ զավակների անձնական գործերին, բայց տարիների ընթացքում կարծիքս փոխվեց։ Իմ գործի ընկերներից օրինակով ես տեսա, թե խելամիտ ամուսնությունը որքան է օգնում մարդուն, և այն ժամանակ շատ ցանկացա, որ իմ զավակները, որքան կարելի է, հաջող ամուսնանան։ Ես անհանգստանում էի քո մասին, Լեսթեր, և մինչև օրս էլ անհանգստանում եմ։ Քո ներկայիս կապը ինձ շատ ծանր բոպեներ է պատճառել։ Եվ քո մորն էլ մինչև իր մահը հանգիստ չէր տալիս։ Ուրիշ ոչ մի բան այդքան չի վշտացրել նրան։ Արդյոք չե՞ս կարծում, որ ամեն ինչ սահման ունի։ Լուրերը նույնիսկ մեր քաղաքն են հասել։ Չիկագոյի մասին չգիտեմ, բայց կարծում եմ, որ դա այնտեղ ոչ ոքի համար գաղտնիք չէ։ Իսկ դա անպայման վնասում է Չիկագոյի մեր բաժանմունքի շահերին։ Եվ քեզ էլ է վնասում։ Դա արդեն այնքան երկար է շարունակվել, որ այժմ քո ամբողջ ապագան սպառնալիքի տակ է, իսկ դու առաջվա պես համառում ես։ Ինչո՞ւ։

— Երևի նրա համար, որ սիրում եմ նրան,— պատասխանեց Լեսթերը։

— Չեմ հավատում, թե դու այդ լուրջ ես ասում,— առարկեց հայրը։— Եթե նրան սիրեիր, հենց սկզբից հետը կամուսնանայիր։ Տարիներով չէիր ապրի մի կնոջ հետ, խայտառակելով թե՛ նրան, թե՛ քեզ, և միայն խոսքով համոզելով, թե սիրում ես նրան։ Գուցե դա կիրք է, բայց ամենևին ո՛չ սեր։

— Որտեղի՞ց գիտես, որ ես նրա հետ չեմ ամուսնացել,— անվրդով հարցրեց Լեսթերը։ Նրան հետաքրքիր էր իմանալ, թե հայրն ինչպես կընկալի այդպիսի հնարավորությունը։

— Ճիշտ չէ՛,— ծերունին նույնիսկ մի փոքր բարձրացավ բազկաթոռից։

— Այո, ճիշտ չէ,— ասաց Լեսթերը,— բայց և կարող է ճիշտ դառնալ։ Ես, կարող է պատահել, ամուսնանամ նրա հետ։

— Չեմ հավատում,— գոչեց հայրը։— Չեմ կարող հավատալ, որ խելքը գլխին մարդն այդպիսի հիմարություն անի։ Ախր որտե՞ղ է քո գլուխը, Լեսթեր։ Այսքան տարի մեղսալից կենակցությունից հետո դեռ ամուսնության մասի՞ն ես խոսում։ Եթե այդպիսի միտք ունեիր, ասա խնդրեմ, ինչո՞ւ հենց սկզբից չամուսնացար նրա հետ։ Խայտառակեցիր ծնողներիդ, մորդ սիրտը փշրեցիր, գործին վնաս հասցրիր, բամբասանքի առարկա դարձար, իսկ հիմա ուզում ես ամուսնանա՞լ։ Չե՛մ հավատում։

Ծերունի Արչիբալդը վեր կացավ և ուղղվեց։

— Մի՛ հուզվիր, հայր,—շտապեց ասել Լեսթերը։— Այդպես մենք ոչ մի բանի չենք հասնի։ Ես կրկնում եմ, որ կարող է պատահել՝ ամուսնանամ նրա հետ։ Նա վատ կին չի, և ես շատ եմ խնդրում քեզ՝ վատ բան մի ասիր նրա մասին։ Դու նրան երբեք չես տեսել և ոչինչ չգիտես նրա մասին։

— Միանգամայն բավականաչափ գիտեմ,— վճռականորեն առարկեց ծերունին։— Ես գիտեմ, որ ոչ մի կարգին կին նրա պես չէր վարվի։ Ախր նա, անուշիկս, քո փողերի ետևից է ընկած։ Ուրիշ ոչինչ նրան հարկավոր չի. այդ ամեն մի հիմար էլ կհասկանա։

— Ինչի՞ համար են այդպիսի խոսքերը, հայր,— խուլ ձայնով խոսեց Լեսթերը։— Դու հո նրան չես ճանաչում, երեսն էլ չես տեսել։ Լուիզան եկել է ու դուրս տվել գլխին փչածը, դուք էլ հավատացել եք։ Նա ամենևին էլ այնպիսին չէ, ինչպես դու մտածում ես, և իզուր ես նրա մասին այդպես խիստ արտահայտվում։ Իզուր տեղը վիրավորում ես կնոջը, չգիտես ինչո՛ւ չես ուզում մի լավ բան մտածել։

— Լավ բա՞ն,— ընդհատեց նրան Արչիբալդը։— Իսկ դու ինքդ լա՞վ ես վարվում։ Այդ լա՞վ բան է քո ընտանիքի, քո հանգուցյալ մոր նկատմամբ՝ փողոցից մի կին վերցնել ու նրա հետ ապրել։ Լա՞վ է այդ...

— Բավակա՛ն է, հա՛յր,— գոչեց Լեսթերը ձեռքը բարձրացնելով։— Նախազգուշացնում եմ քեզ՝ ես հրաժարվում եմ այդպիսի բաներ լսել։ Դու խոսում ես մի կնոջ մասին, որի հետ ես ապրում եմ, որի հետ գուցե և ամուսնանամ։ Ես քեզ սիրում եմ, բայց թույլ չեմ տա սխալ բան ասել։ Ես նրան փողոցում չեմ գտել։ Դու շատ լավ գիտես, որ այդպիսի կնոջ հետ ես չէի ապրի։ Կամ մենք հանգիստ կքննարկենք ամեն ինչ, կամ ես այստեղ չեմ մնա։ Ներիր ինձ։ Շատ եմ ափսոսում, բայց այս տոնով խոսակցությունը շարունակելուց հրաժարվում եմ։

Ծերունի Արչիբալդը հանդարտվեց։ Ինչ էլ որ լիներ, նա հարգում էր իր անհնազանդ որդուն։ Նա ետ ընկավ բազկաթոռի թիկնակին և հայացքը ցած գցեց։ Հիմա ի՞նչ աներ։

— Դու էլի այնտե՞ղ ես ապրում,— հարցրեց նա վերջապես։

— Ոչ, մենք փոխադրվել ենք Հայդ-Պարկ։ Այնտեղ ես տուն եմ վարձել։

— Լսել եմ, որ երեխա էլ կա։ Քո՞ երեխան է։

— Ոչ։

— Իսկ ինքդ երեխաներ ունե՞ս։

— Ոչ։

— Դե գոնե դրա համար փառք աստծո։

Լեսթերը լուռ կզակը տրորեց։

— Եվ դու հաստատո՞ւմ ես, որ ամուսնանում ես նրա հետ։

— Ես այդպիսի բան չասացի։ Ես ասացի՝ գուցե թե ամուսնանամ։

— Գուցե՞ թե,— գոչեց ծերունին նորից բռնկվելով զայրույթով։— Ինչպիսի՞ ողբերգություն։ Եվ այդ՝ ունենալով քո ապագան, քո հնարավորությունները։ Ի՞նքդ դատիր. կարո՞ղ եմ ես իմ կարողության մի մասը վստահել մի մարդու, որը թքում է աշխարհի կարծիքի վրա։ Դուրս է գալիս, որ և՛ մեր ֆիրման, և՛ մեր ընտանիքը, և քո վարկը՝ այս ամենը քեզ համար դատարկ բա՞ն են։ Որտե՞ղ է քո հպարտությունը, Լեսթեր։ Ոչ, դա մի ինչ-որ անհավատալի, արտառոց ցնորք է։

— Սա դժվար է բացատրել, հայր, ես ուղղակի չեմ կարող բացատրել։ Մի բան ինձ պարզ է. ես ինքս եմ սկսել այս պատմությունը և պարտավոր եմ մինչև վերջ տանել։ Ամեն ինչ կարող է վերջանալ միանգամայն բարեհաջող։ Գուցե ես կամուսնանամ, գուցե՝ չէ։ Այժմ որոշակի ոչինչ չեմ կարող ասել։ Դու պետք է սպասես։ Իսկ ես կանեմ, ինչ կարող եմ։

Ծերունի Արչիբալդը կշտամբանքով գլուխն օրորեց։

— Դու, ես տեսնում եմ, բոլորովին փճճվել ես, Լեսթեր։ Էլ դրանից դենը տեղ չկա։ Եվ, որքան ես հասկանում եմ, մտադիր ես քո ասածին մնալ։ Ինչ էլ ես ասելու լինեմ, միևնույն է, երևում է, քեզ խելքի բերել չի լինի։

— Ես շատ եմ ցավում, բայց հիմա դա ճշմարտություն է, հայր։

— Դե ուրեմն նկատի ունեցիր, որ եթե դու հարկ եղած հարգանքը չցուցաբերես մեր ընտանիքին և հենց քեզ՝ որպես մեր ֆիրմայի ներկայացուցչի, ես ստիպված կլինեմ փոխել իմ կտակը։ Ներողամիտ լինելով քո կեղտոտ արարքների նկատմամբ՝ վերջ ի վերջո ես ինքս էլ դրանց մասնակից եմ դառնում։ Այդ լինել չի՛ կարող։ Բաժանվիր նրանից կամ ամուսնացիր հետը։ Բայց դու պարտավոր ես անել այս կամ այն։ Առաջին դեպքում՝ ամեն ինչ լավ կլինի։ Դու կարող ես հիանալի ապահովել նրան. խնդրե՞մ, ես չեմ առարկում։ Ուրախությամբ դրա համար փող կտամ, որքան ցանկանաս։ Եվ

դու ժառանգության քո բաժինը կստանաս մյուս զավակներիս հավասար, ինչպես և միշտ ենթադրվել է։ Բայց եթե դու ամուսնանաս, բանն ուրիշ կլինի։ Ինքդ ընտրիր։ Եվ ինձ վրա մի բարկացիր։ Ես քեզ սիրում եմ։ Ես քո հայրն եմ։ Ես վարվում եմ այնպես, ինչպես թելադրում է իմ պարտքի զգացումունքը։ Մտածիր այս ամենի մասին և ինձ հայտնիր քո որոշումը։

Լեսթերը հառաչեց։ Նա հասկանում էր, որ վիճելն անօգուտ է։ Հայրը, երևում է, կատակ չի անում, բայց ինչպե՞ս թողնել Ջեննիին։ Ինքը երբեք իրեն չէր ների այդպիսի ստորությունը։ Դե լավ, մի՞թե հայրն իրոք իրեն կզրկի ժառանգությունից։ Ոչ, իհարկե։ Մերոնին նրան սիրում է, ինչ էլ լինի, այդ երևում է։ Լեսթերը շփոթվել էր ու վրդովվել։ Նա հարկադրանք չէր հանդուրժում։ Մի մտածեցեք. նրան, Լեսթեր Քեյնին մղում են դեպի այդպիսի ստորություն՝ լքել Ջեննիին։ Նա գլուխը կախեց և մռայլադեմ լռեց։

Մերոնի Արչիբալդը հասկացավ, որ նետը նպատակակետին է դիպել։

— Ի՞նչ արած,— վերջապես ասաց Լեսթերը,— հիմա մենք այլևս խոսելիք չունենք. այս կարծես պարզ է։ Ես չգիտեմ, թե ինչպես կվարվեմ։ Հարկավոր է մտածել։ Միանգամից ոչինչ վճռել չեմ կարող։

Նրանք նայեցին իրար։ Լեսթերը ցավում էր, որ աշխարհի կարծիքն իր դեմ է, և հայրն այդպես ծանր ապրումներ է ունենում դրա համար։ Մերոնին էլ խղճում էր որդուն, բայց հաստատ որոշել էր իր գիծը մինչև վերջ տանել։ Նա վստահ չէր, թե իրեն հաջողվել է խելքի բերել Լեսթերին, բայց և հույսը չէր կտրում. գուցե թե որդին դեռ միտքը կփոխի։

— Ցտեսություն, հայր,— ասաց Լեսթերը ձեռքը մեկնելով։— Կարծեմ ես ժամը երկուսի գնացքին կհասնեմ։ Ուրիշ որևէ բանի համար քեզ պետք չե՞մ։

— Ոչ։

Լեսթերի գնալուց հետո Մերոնին երկար ժամանակ նստել էր մտքի մեջ ընկած։ Այսպես կործանե՞լ իր ապագան։ Հրաժարվել այսպիսի հնարավորությունների՞ց։ Այսպիսի

կույր համառություն ցույց աբերել մեղքի ու մոլորության մեջ։ Նա գլուխն օրորեց։ Ո՛չ, Ռոբերտն ավելի խելացի է։ Նա իսկապես ընդունակ է գլխավորելու խոշոր ձեռնարկությունը։ Նա զգուշավոր է, խելամիտ։ Ա՜խ, եթե Լեսթերն ունենար այդ արժանիքները։ Ներունին նստել էր անշարժ և մտածում էր, մտածում, գաղտուկ զգալով, որ մոլորված որդին առաջվա պես առաջին տեղն է գրավում իր սրտում։

ԳԼՈՒԽ XL

Լեսթերը վերադարձավ Չիկագո։ Նա իրեն հաշիվ էր տալիս, որ հորը լուրջ վիրավորեց։ Դեռ երբեք ծերունի Արչիբալդը նրա հետ այդպես դայրացած չէր խոսել։ Բայց հիմա էլ Լեսթերը համոզված չէր, թե գործն անուղղելի է։ Այն միտքը, թե ինքը կարող է հոր սերն ու վստահությունը պահպանել, եթե միայն որևէ որոշակի բան վճռի, ուղղակի չէր տեղավորվում նրա գլխում։ Ինչ վերաբերում է «աշխարհի կարծիքին», ապա թող մարդիկ շատախոսեն ինչ ցանկանում են և որքան կարող են։ Ինքը կարող է յոլա գնալ առանց նրանց էլ։ Բայց, ի դեպ, այդպե՞ս է արդյոք։ Ամեն մի թուլություն, նույնիսկ թուլության նշան խրտնեցնում է մարդկանց։ Նրանք բնազդաբար հեռու են փախչում ձախորդներից, խուսափում են նրանցից, ասես վախենալով, թե կվարակվեն։ Լեսթերն առիթ ունեցավ իր վրա ստուգելու այդ նախապաշարմունքի ուժը։

Մի անգամ նա հանդիպեց Բերրի Դոջին, որը միլիոնատեր էր և «Դոջ, Հոլբրուք և Քինսբերի» ֆիրմայի ղեկավարը։ Այդ ֆիրման տեքստիլ արդյունաբերության մեջ նույնպիսի տեղ էր գրավում, ինչպես «Քեյն ընկերությունը» կառքերի արտադրության մեջ։ Լեսթերը Դոջին համարում էր իր լավագույն բարեկամներից մեկը, նրա հետ նույնքան մտերիմ էր, ինչպես Քլիվլենդում Հենրի Բրայսբրիջի հետ կամ Ցինցինատիում Ջորջ Նոուլզի հետ։ Նա հաճախ էր եղել Դոջի առափնյա սքանչելի տանը, նրանք միշտ հանդիպել էին մերթ գոր-

ծերով, մերթ աշխարհիկ ընդունելությունների ժամանակ։ Բայց Լեսթերի Հայդ-Պարկ փոխադրվելուց հետո նրանց մտերմությունը ի չիք էր դարձել։ Եվ ահա նրանք հանդիպեցին Միչիգան փողոցում, Քեյն ֆիրմայի բաժանմունքի մոտ։

— Օ՜, Լեսթեր, վաղուց չենք տեսնվել,— ասաց Դոջը քաղաքավարությամբ ձեռքը մեկնելով։ Նրա խոսքի տոնը Լեսթերին սովորականից սառն թվաց։— Լսել եմ՝ այս ժամանակամիջոցում դու ամուսնացե՞լ ես։

— Այդպիսի բան չկա,— պատասխանեց Լեսթերը այն մարդու տոնով, որը ցանկանում է, որ իր խոսքերը հասկացվեն ընդհանուրի կողմից ընդունված իմաստով։

— Ի՞նչ կարիք կա գաղտնի պահել,— շարունակեց Դոջը և ուզում էր ժպտալ, բայց միայն շրթունքները ծռմռեց. նա շատ էր ուզում մտերմական տոնը պահպանել և պատվով դուրս գալ այդ փափուկ դրությունից։— Այդպիսի բաները մենք սովորաբար չենք թաքցնում։ Մտերիմ ընկերներին կարելի էր ասել։

— Դե, իսկ ես որոշեցի շեղվել այդ կանոնից,— ասաց Լեսթերը, զգալով, թե ինչպես թունավոր սեպ է խրվում իր մեջ,— ես չեմ գտնում, որ այդպիսի դեպքերը պետք է թմբկահարել։

— Ճաշակի հարց է,— անփույթ խոսեց Դոջը;— դու, իհարկե, քաղաքո՞ւմն ես ապրում։

— Հայդ-Պարկում։

— Լավ արվարձան է։ Է՛, իսկ ընդհանրապես գործե՞րդ ինչպես են։

Եվ նա ճարպկորեն խոսակցության նյութը փոխեց, ապա և շուտով հրաժեշտ տվեց Լեսթերին ձեռքն անփութորեն թափահարելով։

Լեսթերին ասես դանակով կտրեց այն միտքը, որ եթե Դոջը, իրոք, իրեն ամուսնացած մարդ համարեր, անպայման բազմաթիվ հարցեր կտեղար։ Որպես մոտիկ ընկեր՝ նա կուզենար շատ բան իմանալ նոր միսիս Քեյնի մասին։ Կսկսվեր մի թեթև զրույց, որ սովորական է միևնույն շրջանի մարդկանց միջև։ Դոջը նրան կնոջ հետ միասին հյուր կհրավիրեր

և կխոսանար, որ ինքն էլ կանցնի նրանց մոտ։ Բայց հիմա՝ ոչ մի խոսք։ Լեսթերը հասկացավ, որ սա իր իմաստն ունի։

Նույն ձևով վարվեցին նաև Մուր ամուսինները, Օլդրիջները և մի շարք ուրիշ ծանոթներ։ Նրանք բոլորն էլ որպես թե համարում էին, որ նա ամուսնացած է և լրջացած։ Հարցնում էին, թե որտեղ է ապրում, կատակում էին նրա ծածկամտության առթիվ, բայց համառորեն հետաքրքրություն չէին ցուցաբերում ենթադրյալ միսիս Քեյնի նկատմամբ։ Լեսթերն ըստ երևույթին էր համոզվել, որ նրանց բռնած գիծը ոչ մի լավ բան չի խոստանում։

Ամենաղգալի հարվածներից մեկը ո՛չ դիտավորյալ, ուստի և առանձնապես դաժանորեն, հասցրեց նրան իր հին ծանոթ Ուիլյամ Ուիթնին։ Մի օր երեկոյան Լեսթերը գնաց ակումբ՝ ճաշելու։ Վերարկուն հանելով, նա ուղղվեց դեպի ծխախոտի կրպակը՝ սիգար գնելու և այդտեղ, ընթերցարանում հանդիպեց Ուիթնիին։ Դա ակումբի մշտական հաճախորդ էր՝ բարձրահասակ, նիհարավուն, մաքուր սափրված, անբասիր հագնված, փոքր-ինչ ցինիկ մի մարդ, բացի դրանից, այդ երեկո էլ գլուխը մի քիչ տաք էր։

— Օհո՛, Լեսթեր,— ձայն տվեց նա։— Այդ ի՞նչ բույն ես հյուսել դու Հայդ-Պարկում։ Երևում է, ժամանակ չե՞ս կորցնում։ Իսկ այդ ամենն ինչպե՞ս կբացատրես կնոջդ, երբ խելքիդ փչի ամուսնանալ։

— Ես ոչինչ պարտավոր չեմ բացատրել,— վրդովված պատասխանեց Լեսթերը։— Եվ ինչո՞ւ են այդքան հետաքրքրքրում քեզ իմ գործերը։ Որքան գիտեմ, դու ինքդ էլ սուրբ չես։

— Հա՛, հա՛, հա՛։ Այդ շատ լավ է, ազնիվ խոսք լավ է։ Չլինի՞ դու ամուսնացել ես այն գեղեցկուհու հետ, որի հետ միշտ զբոսնում էիր Հյուսիսային կողմում, հը՞։ Հա՛-հա՛-հա՛։ Ա՜յ քեզ բան։ Ամուսնացե՞լ ես։ Բայց գուցե մարդիկ փչո՞ւմ են։

— Լռի՛ր, Ուիթնի,— ընդհատեց նրան Լեսթերը։— Հիմարություններ ես դուրս տալիս։

— Ներողություն,— ասաց Ուիթնին հանդգնորեն, բայց

արդեն սկսելով խելքի գալ։ Ներողություն եմ խնդրում։ Դու մի՛ մոռացիր, ախր ես մի քիչ հարբած եմ։ Ութ բաժին վիսկի հենց նոր կուլ տվի բուֆետում։ Ներիր։ Մենք կխոսենք, երբ իմ խելքը գլխիս կլինի, չէ՞ Լեսթեր։ Հա՛-հա՛-հա՛, իսկապես որ ես մի քիչ հարբած եմ։ Դե՛, հաջողություն քեզ։ Հա՛-հա՛-հա՛։

Այդ այլանդակ ծիծաղը երկար ժամանակ Լեսթերի ականջից դուրս չէր գալիս։ Այն հնչում էր որպես վիրավորանք, թեպետև Ուիթնին հարբած էր։ «Գեղեցկուհին, որի հետ դու զբոսնում էիր Հյուսիսային կողմում։ Չլինի՞ ամուսնացել ես նրա հետ»։ Լեսթերը վրդովմունքով էր մտաբերում Ուիթնիի լպիրշ ակնարկները։ Գրող ու ցավ։ Այս արդեն չափից դուրս է։ Իրեն՝ Լեսթեր Քեյնին, այսպիսի բաներ՞ ասեն... Նա մտքի մեջ ընկավ։ Այո, շատ թանկ է վճարում ինքը, որ որոշել է Ջեննիի հետ վարվել ինչպես վայել է կարգին մարդուն։

ԳԼՈՒԽ XLI

Բայց դա վատագույնը չէր։ Ամերիկյան հասարակությունը սիրում է բամբասել սույն աշխարհի ուժեղներին, իսկ Քեյնները հարուստ էին և բոլորի աչքի առաջ։ Եվ ահա լուր տարածվեց, թե Լեսթերը, ֆիրմայի գլխավորի անմիջական ժառանգներից մեկը, ամուսնացել է մի սպասուհու հետ։ Եվ այդ նա՞, միլիոնատիրոջ որդին։ Հնարավո՞ր բան է։ Ահա, իսկապես, մի հրապուրիչ պատառ՝ լրագրողների համար։ Եվ թերթերը չհապաղեցին թռցնել այդ գրգռիչ լուրը։ «Հարավային կողմի նորություններ» աշխարհիկ թերթը, առանց Լեսթերի անունը տալու գրեց «Ցինցիննատիի կառքերի նշանավոր հարուստ գործարանատիրոջ որդու մասին» և համառոտակի շարադրելով նրա սիրավեպը, վերջում ավելացրեց. «Միսիս ***-ի մասին հայտնի է միայն, որ նա առաջ Քլիվլենդում որպես սպասուհի ծառայելիս է եղել մի հարգարժան ընտանիքում, իսկ դրանից առաջ էլ աշխատել է Կոլումբուսում, Օհայոյի նահանգում։ Ո՞վ կհամարձակվի պնդել, թե ռոմանտի-

կան մահացել է, երբ բարձր հասարակության մեջ այսպիսի գունագեղ էպիզոդներ են տեղի ունենում»։

Լեսթերը կարդաց այդ լուրը։ Նա ինքը «Նորություններ» չէր ստանում, բայց ինչ-որ մի բարի սիրտ հոգացել էր նրա մասին, և նա փոստով ստացավ մի օրինակ, որի մեջ հարկավոր սյունակում կարմիր մատիտով ընդգծում էր արված։ Լեսթերը բարկացավ, կասկածելով, թե ուզում են իրենից դրամ շորթել, բայց չգիտեր ինչպես վարվի։ Նա, իհարկե, կուզենար վերջ տալ լրագրային այդ շատախոսությանը, բայց մտածեց, որ եթե ինքը բողոքի, դրանից գործը կարող է ավելի վատանալ։ Եվ ոչ մի բան չարեց։ «Նորություններ»-ի լուրը, ինչպես և պետք էր սպասել, ուրիշ թերթերի ուշադրությունն էլ գրավեց։ Սա մի հարուստ նյութ էր, և կիրակնօրյա թերթի մի ձեռներեց խմբագիր որոշել էր այդ նյութից քամել բոլորը, ինչ հնարավոր է։ Այդ ռոմանտիկ պատմությունը ծավալել մի ամբողջ էջի վրա՝ աղաղակող վերնագրով, ինչպես օրինակ՝ «Միլիոնները զոհաբերեց սպասուհու սիրո համար», տալ Լեսթերի, Ջեննիի պատկերները, Հայդ-Պարկի տան, Քեյնի Ցինցիննատիի ֆաբրիկայի, Միչիգան ավենյուի պահեստի նկարները և ահա սենսացիան ապահովված է։ «Քեյն ընկերությունը» մամուլում հայտարարություններ չէր տալիս։ Թերթը ոչնչով պարտական չէր նրան։ Եթե Լեսթերը նախազգուշացված լիներ, կարող էր այդ մտադրության իրականացումը կանխել թերթին մի հայտարարություն ուղարկելով կամ հրատարակչի հետ խոսելով։ Բայց նա ոչինչ չգիտեր, ուստի և ոչինչ չէր արել։ Իսկ խմբագիրն աշխատել էր ինչպես պետք է։ Ցինցիննատիի, Քլիվլենդի և Կոլումբուսի թղթակիցներին առաջարկվել էր հեռագրով հաղորդել, թե այդ քաղաքներում հայտնի՞ է արդյոք Ջեննիի պատմությունը։ Քլիվլենդում դիմեցին Բրայսբրիջներին, որպեսզի իմանան՝ Ջեննին աշխատե՞լ է արդյոք նրանց տանը։ Կոլումբուսից խիստ աղավաղված լուրեր ստացվեցին Գերհարդների ընտանիքի մասին։ Պարզվեց, որ իր ենթադրյալ ամուսնությունից առաջ Ջեննին մի քանի տարի ապրել է Հյուսիսային կողմում։ Այսպես պատառիկ-պատառիկ վերականգնվեց ամբողջ պատմությունը։

Խմբագրի մտքովն էլ չէր անցնում խարազանել կամ վրդովվել, ավելի շուտ նա կարծում էր, թե սիրալիր գործ է անում։ Բաց թողնվեցին մի շարք անհաճո մանրամասնություններ. այն, որ Վեստան, ամենայն հավանականությամբ, ապօրինի երեխա է, որ Լեսթերն ու Ջեննին, ըստ երևույթին, երկար ժամանակ ապօրինի կենակցության մեջ են եղել, որ Լեսթերի ամուսնությունից նրա ընտանիքի բոլորին հայտնի անբավականությունը ծանրակշիռ հիմքեր ունի։ Խմբագիրը յուրահատուկ մի Ռոմեո և Ջուլիետի պատմություն հորինեց, որի մեջ Լեսթերը պատկերվում էր որպես բոցավառ, անձնուրաց սիրական, իսկ Ջեննին որպես ժողովրդի ծոցից ելած մի աղքատ, բայց թովիչ աղջիկ, որին միլիոնատիրոջ անձնվեր սերը հարստացրել է ու դարձրել նշանավոր։ Թերթի նկարիչը պատկերել էր վեպի հաջորդական փուլերը։ Լեսթերի նկարը լավ վարձատրությամբ ստացել էին Ցինցիննատիի լուսանկարչից, իսկ Ջեննիին ֆոտոթղթակիցը աննկատելիորեն լուսանկարել էր զբոսանքի ժամանակ։ Մի խոսքով ամեն ինչ արվել էր բուվարային մամուլի փորձված ձևերով։

Եվ ահա լույս տեսավ լրագիրը՝ ամբողջովին քծնանք ու քաղցր խոսքեր, բայց տողերի արանքից զգացվում էր տխուր ու մռայլ աստառը։ Ջեննին միանգամից չիմացավ այդ։ Լեսթերը պատահաբար նկատեց այդ ճակատագրական էջը և շտապեց պոկել այն։ Նա անչափ զարմացած ու վրդովված էր։ Սա ի՞նչ բան է, որ մի գրողի տարած լրագիր այսպես է վարվում մի կողմնակի անձի հետ, մի մարդու հետ, որը հանգիստ ապրում է առանց որևէ մեկին խանգարելու։ Իր սրտնեղության դառն զգացմունքը չմատնելու համար նա տանից դուրս գնաց։ Նրա ճանապարհը գնում էր ոչ թե դեպի քաղաքի աշխույժ կենտրոնը, այլ նրանից հեռու, Կոստեջ—Գրոուվ ավենյուով դեպի բաց պրերիա։ Տրամվայի նստարանին օրորվելով նա աշխատում էր պատկերացնել, թե հիմա ինչ են մտածում իր նախկին բարեկամները՝ Դոջը, Բերնհեմ Մուրը, Հենրի Օլդրիջը։ Այո, սա իսկական հարված է։ Ի՞նչ անել։ Ատամները սեղմել ու լռե՞լ, թե՞ անտարբեր ձեռք թափ տալ այդ նոր հոգսի վրա։ Մի բան նրան պարզ էր. այդպիսի բան այլևս

չի հանդուրժի։ Նա տուն վերադարձավ բավական հանգիստ վիճակում և սկսեց անհամբեր սպասել երկուշաբթի օրվան, որպեսզի տեսնվի իր հավատարմատարի՝ միստր Ուոթսոնի հետ։ Ի դեպ, երբ նրանք հանդիպեցին, երկուսն էլ շուտով հանգեցին այն որոշման, որ դատարան տալն անմտություն է։ Ավելի լավ է լռությամբ մատնել։

— Բայց այլևս այդպիսի բան չպիտի կրկնվի,— խոսքն ավարտեց Լեսթերը։

— Դրա մասին ես կհոգամ,— հանգստացրեց նրան հավատարմատարը։

Լեսթերը վեր կացավ։

— Սատանան գիտե, թե ինչպիսի երկրում ենք ապրում մենք,— գոչեց նա։— Եթե մարդ հարուստ է, ոչ մի տեղ թաքնվել չի կարող, ասես հուշարձան լինի կանգնած քաղաքի հրապարակում։

— Եթե մարդ հարուստ է,— ասաց միստր Ուոթսոնը,— նա հիշեցնում է զանգակը վզից կախված կատվին։ Ամեն մի մուկ ճիշտ գիտե, թե որտեղ է նա և ինչ է անում։

— Այո, հարմար համեմատություն է,— մրթմրթաց Լեսթերը։

Ջեննին էլի մի քանի օր անտեղյակ էր մնացել։ Լեսթերը դիտմամբ այդ ցավոտ հարցը չէր շոշափում, իսկ Գերհարդը կիրակնօրյա մեղսալից թերթեր չէր կարդում։ Բայց հետո հարևանուհիներից մեկը խոսակցության մեջ անտակտորեն ասաց Ջեննիին, թե կարդացել է նրա մասին գրված այն շատ հետաքրքիր պատմությունը։ Ջեննին սկզբում ոչինչ չհասկացավ։

— Իմ մասի՞ն,— զարմացած գոչեց նա։

— Այո, այո, ձեր մասին և միստր Քեյնի,— պատասխանեց հյուրը։— Ձեր ամբողջ սիրավեպը։

Ջեննին բռնկեց։

— Ես ոչինչ չգիտեմ,— ասաց նա։— Իսկ դուք համոզվա՞ծ եք, որ այդ մեր մասին էր։

—Դե, իհարկե,— ծիծաղեց միսիս Սթենդը։— Սխալվել ես ոչ մի կերպ չէի կարող։ Թերթն էլ մոտս մնում է։ Եթե

ուղում եք, աղջկաս ձեռքով ուղարկեմ ձեզ։ Նկարում դուք հիանալի եք դուրս եկել։

Ջեննին ամբողջովին կուչ եկավ։

— Ես շատ շնորհակալ կլինեմ ձեզանից,— թոթովեց նա։

Նրան տանջում էր այն միտքը, թե որտե՞ղ կարող են վերցրած լինել իր նկարը և ինչ է գրած լրագրում։ Իսկ գլխավորը՝ ի՞նչ կասի Լեսթերը։ Արդյոք նա տեսե՞լ է թղթակցությունը։ Ինչո՞ւ իրեն ոչինչ չի ասել։

Հարևանուհու աղջիկը թերթը բերեց, և Ջեննիի սիրտը պաղեց, երբ նա նայեց սոսկալի էջին։ Ահա այն, սևով սպիտակի վրա գրված։ Ձախ կողմը Լեսթերի պատկերն է, աջում՝ Ջեննիի, իսկ մեջտեղը՝ խոշոր տառերով վերնագիրն է և ալաքներ. «Ահա այս միլիոնատերը հրապուրվել է ահա այս սպասուհիով»։ Տեքստում բացատրվում էր, որ Լեսթերը՝ ցինցինատիի կառքերի հայտնի գործարանատիրոջ որդին, զոհաբերել է իր նախանձելի հասարակական դիրքը, որպեսզի ամուսնանա սիրած կնոջ հետ։ Ապա դալիս էին նկարները՝ Լեսթերը Ջեննիի հետ զրուցում է միսիս Բրայսբրիջի առանձնատանը, Լեսթերը Ջեննիի կողքին կանգնել է խստատես հարգարժան պաստորի առաջ, Լեսթերը Ջեննիի հետ զբոսնում է շքեղ կառքով, Ջեննին շքեղ կահավորված դահլիճի լուսամուտի առաջ կանգնած (դահլիճի շքեղությունը վկայում են ծանր վարագույրների ծալքերը) նայում է հեռվում հազիվ երևացող համեստ տնակին։

Ջեննին զգաց, որ պատրաստ է ամոթից գետնի տակն անցնելու։ Նա տանջվում էր ոչ այնքան իր, որքան Լեսթերի համար։ Ի՞նչ ապրումներ է ունենալու նա։ Իսկ նրա հարազատնե՞րը։ Հիմա նրանց ձեռքին մի նոր զենք կա իր և Լեսթերի դեմ։ Նա աշխատում էր հանգստանալ, տիրապետել իր զգացմունքներին, բայց արցունքները նորից ու նորից լցվում էին աչքերը։ Դրանք հուզմունքի արցունքներ էին։ Ինչո՞ւ են հալածում իրեն, թունավորում իր կյանքը։ Մի՞թե չեն կարող հանգիստ թողնել իրեն։ Ինքը որքա՞ն է աշխատում լավ վարվել։ Մի՞թե մարդիկ չէին կարող օգնել իրեն, փոխանակ դեպի անդունդը հրելու...

ԳԼՈՒԽ XLII

Այդ նույն երեկոյան Ջեննին համոզվեց, որ Լեսթերին վաղուց է հայտնի ամեն ինչ. նա ինքը չարաբաստիկ թերթը տուն բերեց, հասուն խոհականությամբ մտածելով, որ պարտավոր է անել այդ։ Իր ժամանակին նա Ջեննիին ասաց, որ իրենց միջև գաղտնիք չպետք է լինի, և այժմ նա իրեն իրավունք չէր համարում թաքցնել նրանից այն, ինչ այդպես անսպասելի ու կոպիտ կերպով խախտեց իրենց հանգիստը։ Նա Ջեննիին կասի, որ չանհանգստանա, որ դա ոչ մի նշանակություն չունի, բայց իր համար դա վիթխարի նշանակություն ուներ։ Գարշելի լրագիրը նրան անուղղելի վնաս հասցրեց։ Շատ թե քիչ խելամիտ մարդիկ— իսկ դրանց շարքումն էին իր բոլոր ծանոթներն ու մեծ թվով անծանոթները—հիմա կհասկանան, թե ինչպես է ապրել ինքն այս տարիներին։ Լրագրում ասված էր, որ նա Ջեննիի եռանից Բլիվլենդից գնացել է Չիկագո, որ Ջեննին ամաչկոտ է եղել ու անմատչելի, որ Լեսթերը երկար ժամանակ սիրահետել է նրան, մինչև որ ստացել է նրա համաձայնությունը։ Դա պետք է բացատրեր նրանց հանկեցությունը Հյուսիսային կողմում։ Նրանց հարաբերությունների իսկական պատմությունը գունագեղելու այս ապուշ փորձը կատաղեցնում էր Լեսթերին, թեպետև նա հասկանում էր, որ դա, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան այս կամ այն լիտի հարձակումը։ Հյուրասենյակ մտնելով՝ նա լրագիրը գրպանից հանեց և փռեց սեղանին։ Ջեննին, որ գիտեր, թե հիմա ինչ է լինելու, նրա կողքին կանգնած ուշադիր հետևում էր նրա շարժումներին։

— Այստեղ քեզ համար հետաքրքիր մի բան կա,— չորչոր ասաց նա, ցույց տալով թերթի նկարազարդ էջը։

— Ես արդեն տեսել եմ, Լեսթեր,— հոգնած պատասխանեց Ջեննին։— Հենց այսօր միսիս Սթենդլը ցույց տվեց ինձ այդ համարը։ Չգիտեի միայն, դու տեսե՞լ ես այդ թե ոչ։

— Ա՜յ թե նախշել են ինձ, խոսք չունեմ ասելու։ Ես չէի էլ կարծում, թե կարող եմ այդպիսի կրակոտ Ռոմեո լինել։

— Ես շատ եմ ցավում, Լեսթեր,— ասաց Ջեննին այդ

ուրախ կատակի տակ կռահելով նրա ծանր տրամադրությունը։ Նա վաղուց գիտեր, որ Լեսթերը չի սիրում և չի կարողանում խոսել իր իսկական զգացմունքների և լուրջ հոգսերի մասին։ Դեմ առնելով անխուսափելիին ու անհաղթահարելիին՝ նա գերադասում էր կատակի տալ այն։ Եվ հիմա էլ նրա խոսքերը նշանակում էին. «Քանի որ, միևնույն է, գործին օգնել չենք կարող, տրամադրություններս չգցենք սրա համար»։

— Ես ամենևին էլ սա մի ողբերգություն չեմ համարում,— շարունակեց նա։— Բայց ոչ մի բան նախաձեռնել չի կարելի։ Նրանք երևի լավագույն մտադրությունն են ունեցել։ Պարզապես հիմա մենք շատ ենք աչքի ընկել։

— Հասկանում եմ, Լեսթեր,— ասաց Ջեննին մոտենալով նրան։— Բայց և այնպես ես շատ եմ ցավում։

Հենց այդ ժամանակ կանչեցին ճաշելու, և խոսակցությունն ընդհատվեց։

Բայց Լեսթերը չէր կարող ինքն իրենից թաքցնել, որ իր գործը լավ չէ։ Հայրը բավական պարզ հասկանալ տվեց այդ վերջին զրույցի ժամանակ, իսկ հիմա էլ, ի լրումն ամենի, իրենցով մամուլն է զբաղվում։ Այլևս կարիք չկա ձևացնել, թե իբր ինքն առաջվա պես մոտիկ է իր շրջանի մարդկանց։ Նրանք իրեն ճանաչել էլ չեն ուզում, համենայն դեպս, նրանք, ովքեր շատ թե քիչ խիստ հայացքներ ունեն։ Կան, իհարկե, և ուրախ ամուրիներ, և ամուսնացած քեֆ սիրողներ, և փորձված կանայք՝ ամուսնացուներ ու միայնակներ, որոնք ճշմարտությունն իմանալով շարունակում են լավ վերաբերվել նրան։ Բայց այդ մարդիկ չեն կազմում նրա «հասարակությունը»։ Ըստ էության նա իր ուղուց դուրս ընկածի վիճակում էր, և ոչ մի բան չէր կարող նրան փրկել, բացի իր ներկայիս կենսաձևերից վճռականապես հրաժարվելը։ Այլ խոսքով ասած՝ նա պետք է կապերը խզեր Ջեննիի հետ։

Բայց Ջեննիից կտրվել նա չէր ուզում։ Հենց միայն դրա մասին մտածելը խորապես անտանելի էր նրա համար։ Ջեննին անդադրում ընդարձակում էր իր մտահորիզոնը։ Հիմա նա շատ բան Լեսթերից վատ չէր հասկանում։ Ջեննին պարզապես մի ինչ-որ փառասեր անձ չէր։ Նա մի արտասովոր կին

էր, և բարեսիրտ։ Նրան լքելը ստորություն կլինի, բացի դրանից, նա ինքնին լավ կին էր։ Լեսթերը քառասունվեց տարեկան էր, Ջեննին՝ քսանինն, բայց տեսքով՝ քսանհինգից ավելի չէր։ Հազվադեպ երջանկություն է, եթե այն կնոջ մեջ, որի հետ ապրում ես, գտնում ես ջահելություն, գեղեցկություն, խելք, մեղմաբարո բնավորություն և քո սեփական հայացքները, միայն ավելի մեղմ ու հուզական ձևով։ Հայրն իրավացի էր. նա ինքն էր կառուցել իր կյանքը, ինքն էլ ապրում է ինչպես կարող է։

Լրագրի այս անհաճո դեպքից շատ չանցած՝ Լեսթերն իմացավ, որ հայրը ծանր հիվանդ է, և բոպե առ բոպե սպասում էր, որ իրեն կկանչեն Ցինցիննատի։ Բայց գործերը նրան պահում էին գրասենյակում, և նա դեռ Չիկագոյումն էր, երբ հոր մահվան լուրը եկավ։ Լեսթերն այդ լուրից ցնցված՝ շտապեց Ցինցիննատի։ Հոր պատկերն աննահանջ կանգնած էր նրա աչքի առաջ։ Անկախ իրենց անձնական հարաբերություններից՝ հայրը միշտ էլ նրա համար եղել էր մեծ մարդ, հետաքրքիր և նշանավոր։ Նա հիշեց, թե ինչպես մանուկ հասակում հայրն իրեն նստեցնում էր ծնկներին, ինչպես էր պատմում Իռլանդիայում անցկացրած իր պատանեկության մասին, ինչպիսի ջանքեր է թափել մարդամեջ դուրս գալու համար, իսկ հետո գործնական սկզբունքներ էր ներշնչում նրան, որոնք նրա մեջ առաջացել էին սեփական փորձի հիման վրա։ Ծերունի Արչիբալդն արդարամիտ և աղնիվ մարդ էր։ Նրա նման Լեսթերն էլ ակնարկումներ ու խորամանկություններ չէր հանդուրժում։ «Երբեք մի՛ ստիր,— միշտ ասում էր Արչիբալդը։— Երբեք մի՛ փորձիր փաստերն այնպես չներկայացնել, ինչպես ինքդ ես տեսնում։ Ճշմարտությունը կյանքի շունչն է, բոլոր արժանիքների հիմքը, և գործի մթնոլորտում էլ այն լավ համբավ է ապահովում նրա համար, ով հաստատորեն ճշմարտության կողմն է պահում»։ Լեսթերը հավատում էր այդ սկզբունքին։ Նա միշտ հիանում էր հոր մարտական ուղղամտությամբ և այժմ վիշտ էր ապրում իր կորուստի համար։ Նա ցավում էր, որ հայրը չապրեց մինչև իր հետ հաշտվելը։ Նրան արդեն սկսել էր թվալ, որ եթե ծերունին Ջեննիին տեսներ, նա դուր

կգար հորը։ Նա չէր պատկերացնում, թե ինչպես կարող էր ամեն ինչ կարգավորվել, պարզապես զգում էր, որ Ջեննին ծերունու սրտովը կլիներ։

Երբ նա հասավ Ցինցիննատի, ուժեղ ձյուն էր տեղում։ Քամին ծակծկող փաթիլներ էր շպրտում մարդու երեսին։ Ձյունը խլացնում էր փողոցի սովորական աղմուկը։ Կայարանում Լեսթերին դիմավորեց Էմին։ Չնայած իրենց անցյալի պառակտմանը, նա եղբորը տեսնելով ուրախացավ։ Քույրերի մեջ նա ամենից ավելի հանդուրժելին էր։ Լեսթերը նրան գըրկեց և համբուրեց։

— Ինչ խելոքն ես դու, որ ինձ դիմավորեցիր, Էմի,— ասաց նա։— Ասես առաջվա ժամանակներն են վերադարձել։ Է՞, ինչպե՞ս են մերոնք։ Երևի բոլորը հավաքվել են։ Խե՜ղճ հայրիկ, քո ժամն էլ հասավ։ Բայց նա մեծ և լի կյանք վարեց։ Երևի գոհ էր այն ամենից, ինչ կարողացել էր անել։

— Այո,— ասաց Էմին,— բայց մայրիկի մահից հետո նա շատ տխուր էր։

Նրանք կայարանից տուն էին գնում մտերմաբար զրուցելով և անցյալը վերհիշելով։ Հին տանը արդեն հավաքվել էին բոլոր մոտիկ ու հեռու ազգականները։ Լեսթերը նրանց հետ սովորական ցավակցական արտահայտություններ փոխանակեց, բայց ինքը շարունակ մտածում էր, որ հայրը երկար կյանք ապրեց։ Նա հասավ իր նպատակին և մեռավ, ինչպես խնձորն է հասունանում և գետին ընկնում։ Հսկայական հյուրասենյակի մեջտեղը սև դագաղի մեջ պառկած հոր տեսքը Լեսթերի մեջ հարուցեց վազուց մոռացված մանկական սիրո զգացմունքը։ Նա նույնիսկ ժպտաց, նայելով խիստ դիմագծերով այն վճռական դեմքին, որն ասես իր պարտքը կատարած լինելու գիտակցությունն էր արտահայտում։

— Լավ մարդ էր,— ասաց նա կողքին կանգնած Ռոբերտին։— Այդպիսի մի ուրիշին շուտով չես հանդիպի։

— Դու իրավացի ես,— հանդիսավորապես հաստատեց Ռոբերտը։

Թաղումից հետո որոշվեց կտակը կարդալ առանց հետաձգելու։ Լուիզայի ամուսինն շտապում էր տուն՝ Բուֆալո

գնալ, Լեսթերը՝ Չիկագո։ Եվ ահա երկրորդ օրը ազգականները հավաքվեցին «Նայթ, Քիթլի և Օ'Բրայեն» իրավաբանական գրասենյակում, որը վարում էր ծերունի Քեյնի գործերը։

Լեսթերն այդ ժողովին էր գնում այն հավատով, որ հայրը իր կտակի մեջ չէր կարող իրեն անտեսած լինել։ Նրանց վերջին խոսակցությունը տեղի էր ունեցել նորերս։ Ինքը հորն ասել էր, որ ամեն ինչի մասին լավ մտածելու համար իրեն ժամանակ է հարկավոր, և հայրը ժամանակ էր տվել։ Հայրը միշտ էլ սիրում էր Լեսթերին և հավանություն էր տալիս նրա ամեն մի քայլին, բացի Ջեննիի հետ ունեցած կապերից։ Լեսթերի խելամտությունը գործի մեջ՝ ֆիրմային քիչ օգուտ չէր բերել։ Նա որոշակի զգում էր, որ հայրը հիմք չունի իր հետ ավելի վատ վարվելու, քան մյուս զավակների։

Միստր Օ' Բրայենը, որ հաստամարմին ու անհանգիստ մի մարդ էր, սրտանց սեղմում էր գրասենյակ մտնող բոլոր ժառանգների և իրավատեր անձանց ձեռքը։ Քսան տարի նա եղել էր Արչիբալդ Քեյնի անձնական հավատարմատարը, գիտեր նրա բոլոր համակրանքներն ու հակակրանքները, նրա բոլոր քմահաճույքները և իրեն նրա նկատմամբ խոստովանահոր նման մի բան էր համարում։ Եվ սիրում էր նրա զավակներին, մանավանդ՝ Լեսթերին։

— Դե, ահա կարծես բոլորը հավաքվել են,— ասաց նա գրպանից հանելով եղջերաշրջանակ խոշոր ակնոցը և մտահոգ նայելով ներկաներին։— Շատ լավ։ Կարելի է գործի անցնել։ Ես կտակը կկարդամ առանց որևէ նախաբանի ու ներածականի։

Նա սեղանից վերցրեց մի մեծ թերթ թուղթ, հազաց և սկսեց կարդալ։

Փաստաթուղթը այնքան էլ սովորական ձևով չէր կազմված։ Սկզբում թված էին այն մանր գումարները, որ տրվելու էին երկարամյա ծառայողներին, տնային սպասավորներին և բարեկամներին։ Այնուհետև՝ ետմահու նվերները զանազան հիմնարկությունների և, վերջապես, ամենամոտիկ ազգականներին թողնված ժառանգությունը՝ սկսած դուստրերից։ Իմոջինին, որպես սիրելի և նվիրված դստեր՝ կտակված

էր ֆաբրիկայի մեջ դրված դրամագլխի մեկ վեցերորդ մասը և հանգուցյալի մնացած գույքի մեկ վեցերորդ մասը, որ կազմում էր մոտ ութ հարյուր հազար դոլլար։ Ճիշտ նույնքան էլ ստանում էին Էմին և Լուիզան։ Թոռներին չափահաս դառնալուց հետո ոչ շատ մեծ ընծաներ էին հասնում լավ վարքի համար։ Այնուհետև խոսքը վերաբերում էր Ռոբերտին և Լեսթերին։

«Նկատի ունենալով իմ որդի Լեսթերի գործերում երևան եկած մի շարք բարդացումները, ես իմ պարտքն եմ համարում հատուկ ցուցումներ տալ, որոնցով պետք է ղեկավարվել իմ մնացած գույքը բաշխելիս, այն է. «Քեյն արդյունաբերական ընկերության» դրամագլխի մեկ քառորդ մասը և մնացած ամբողջ շարժական ու անշարժ գույքի, կանխիկ դրամի, արժեթղթերի ու բաժնետոմսերի մեկ քառորդ մասը կտակում եմ իմ սիրելի որդի Ռոբերտին՝ որպես պարգև իր պարտքն անշեղորեն կատարելու համար, իսկ «Քեյն արդյունաբերական ընկերության» դրամագլխի մեկ քառորդ մասը և մնացած իմ մյուս շարժական ու անշարժ գույքի, կանխիկ դրամի և արժեթղթերի ու բաժնետոմսերի մեկ քառորդ մասը ես կտակում եմ նրան՝ կառավարելու ի օգուտ իր եղբայր Լեսթերի մինչև այն ժամանակ, երբ կատարված կլինեն ներքոհիշյալ պայմանները։ Եվ ես ցանկանում ու պահանջում եմ, որ իմ բոլոր երեխաները աջակցեն նրան «Քեյն արդյունաբերական ընկերությունը» և նրան վստահված մյուս դրամագլուխները կառավարելու գործում, քանի դեռ նա ինքը չի ցանկանա իր վրայից վայր դնել այդպիսիների կառավարումը, կամ ցույց չտա այն իրականացնելու մի ուրիշ ավելի լավ եղանակ»։

Լեսթերը կամացուկ փնթփնթաց։ Նա սփրթնեց, բայց տեղից չշարժվեց. դե հո չէր կարող աղմուկ սկսել։ Բանից դուրս էր գալիս, որ նա կտակի մեջ նույնիսկ առանձին հիշատակված չէ։

«Ներքոհիշյալ պայմանները» չընթերցվեցին բոլոր հավաքվածների ներկայությամբ, որ, միստր Օ'Բրայենի ասելով համապատասխանում էր հանգուցյալի կամքին։ Սակայն

Լեսթերին և մյուս ղավակներին նա ընթերցելու տվեց հենց նույն օրը։ Լեսթերն իմացավ, որ երեք տարի շարունակ ստանալու է տարեկան տասը հազար դոլլար և այդ ժամկետն անցնելուց հետո նա պետք է ընտրություն անի. կամ կբաժանվի Ջեննիից, եթե դեռ չի ամուսնացել նրա հետ և դրանով իր կյանքը համապատասխան կդարձնի հոր ցանկությանը։ Այդ դեպքում անհապաղ Լեսթերին կտրվի նրա բաժին ժառանգությունը։ Կամ նա կամուսնանա Ջեննիի հետ, եթե դեռևս այդ չի արել, և այդ դեպքում տարեկան տասը հազար դոլլարը կստանա ցմահ։ Բայց նրա մահից հետո Ջեննին, միևնույն է, ոչ մի ցենտ չի ստանա։ Հիշյալ տասը հազարը երկու բաժնետոմսերի տարեկան եկամուտն է, որոնք նույնպես վստահվում էին Ռոբերտին, մինչև որ Լեսթերը վերջնական որոշում ընդուներ։ Իսկ եթե Լեսթերը Ջեննիի հետ չամուսնանա, բայց և չբաժանվի նրանից, երեք տարին լրանալուց հետո կդադարի որևէ բան ստանալ։ Նրա մահից հետո այն բաժնետոմսերը, որոնց եկամուտն ստանում էր նա, հավասարապես բաժանվում են այդ ժամանակ ողջ մնացած եղբայրների և քույրերի միջև։ Ամեն մի ժառանգ կամ իրավատեր անձ, որ կվիճարկի այս կտակը, դրանով իսկ կզրկվի իր բաժին ժառանգությունից»։

Լեսթերը զարմացել էր, թե հայրը որքան մանրամասն է նախատեսել բոլոր հնարավորությունները։ Եզրափակիչ պայմանները կարդալիս նրա մեջ նույնիսկ կասկած ծագեց, թե դրանց ձևակերպմանը չի՞ մասնակցել արդյոք Ռոբերտը։ Բայց, հասկանալի է, նա այդ բանը վստահորեն պնդել չէր կարող. Ռոբերտը երբեք նրա նկատմամբ թշնամական զգացմունքներ չէր ցուցաբերել։

— Ո՞վ է կազմել այս կտակը,— հարցրեց նա Օ՝ Բրայենին։

— Մենք բոլորս էլ քիչ-քիչ աշխատել ենք,— պատասխանեց նա մի փոքր շփոթված։— Դա հեշտ բան չէր։ Դուք հո գիտեք, միստր Քեյն, ձեր հայրիկին իր ասածին հակառակ որևէ բան համոզելը դժվար բան էր։ Կայծքար էր նա, ոչ թե մարդ։ Այս կետերից մի քանիսը նա համարյա թե հենց իր

կամքին հակառակ է սահմանել։ Կտակի ոգու համար մենք, իհարկե, պատասխանատվություն չենք կրում։ Դա արդեն վերաբերում է միայն ձեզ և ձեր հորը։ Ինձ համար շատ ծանր էր նրա ցուցումները կատարել։

— Ես ձեզ լիովին հասկանում եմ,— ասաց Լեսթերը։— Խնդրում եմ մի անհանգստացեք։

Միստր Օ' Բրայենը իր խորին երախտագիտությունն արտահայտեց։

Լեսթերը, որ շարունակ նստած էր անշարժ, ասես բազկաթոռին կպած լիներ, այժմ մյուս զավակների հետ վեր կացավ և անտարբեր տեսք ընդունեց։ Ռոբերտը, Էմին, Լուիզան, Իմոջինը՝ բոլորը զարմացած էին, բայց չի կարելի ասել, թե խղճում էին Լեսթերին։ Ինչ էլ լինի՝ նա իրեն շատ վատ էր պահել։ Նա հորը դժգոհ լինելու բավականաչափ առիթներ էր տվել։

— Ներունին, կարծում եմ, ծայրահեղության է հասել,— ասաց Ռոբերտը, որ նստած էր Լեսթերի կողքին։— Ես ամենևին չէի սպասում, թե նա այդքան հեռուն կգնա։ Ես կարծում եմ, ամեն ինչ կարելի էր այլ կերպ դասավորել։

— Կարևոր չէ,— մռայլ քմծիծաղով փնչացրեց Լեսթերը։

Քույրերն ուզում էին մխիթարել նրան, բայց չգիտեին, թե ինչ ասեն։ Վերջ ի վերջո մեղավորն ինքը՝ Լեսթերն էր։

— Ինձ թվում է, հայրիկն այնքան էլ ճիշտ չի վարվել,— ասել փորձեց Էմին, բայց Լեսթերը կտրուկ ընդհատեց նրան։

— Մի կերպ կապրեմ։

Նա արագորեն մտքում հաշվեց, թե որքան կլինեն իր եկամուտները, եթե ինքը չկատարի հոր կամքը։ Նրա երկու հարյուր բաժնետոմսերը բորսայում արժեն հատը հազար դոլլարից մի քիչ ավելի և հինգից վեց տոկոս եկամուտ են տալիս։ Այո, տարեկան տասը հազարից ավելի ոչ մի կերպ չի ստացվի։

Ազգականները ցրվեցին իրենց տները։ Լեսթերը գնաց քրոջ մոտ, բայց շտապելով գուրս պրծնել հայրենի քաղաքից՝ հրաժարվեց նախաճաշի հրավերից, պատճառաբանելով, թե

անհետաձգելի գործեր ունի, և առաջիկա գնացքով մեկնեց Չիկագո։

Ամբողջ ճանապարհին մտքերը նրան հանգիստ չէին տալիս։

Ահա, ուրեմն, որքան քիչ է սիրելիս եղել իրեն հայրը։ Հնարավո՞ր բան է սա։ Նրան՝ Լեսթեր Քեյնին, մի տասը հազար են շպրտել, այն էլ ընդամենը երեք տարով, իսկ հետո նա այդ գումարը պիտի ստանա, եթե միայն Ջեննիի հետ ամուսնանա։ «Տարեկան տասը հազար,— մտածում էր նա,— այն էլ ընդամենը երեք տարով։ Տե՜ր իմ աստված, ախր այդքան ամեն մի կարգին գրասենյակային աշխատող կարող է վաստակել։ Կարելի՞ էր մտածել, որ հարազատ հայրս այսպես վարվի ինձ հետ»։

ԳԼՈՒԽ XLIII

Ոչ մի բան չէր կարող Լեսթերին այդպես ուժեղ դեմ դուրս բերել իր հարազատներին, ինչպես հարկադրանքի այդ փորձը։ Վերջին ժամանակներս նրա համար պարզ էր դարձել, որ ինքը երկու լուրջ սխալ է գործել. նախ՝ որ սկզբում չամուսնացավ Ջեննիի հետ, որը նրան կաղատեր բամբասանքներից ու մեղադրանքներից, երկրորդը՝ որ չհամաձայնեց բաց թողնել Ջեննիին, երբ նա ինքն էր փորձում հեռանալ իրենից։ Այո՛, ինչ ուզում ես ասա, նա խճճվել է անհուսալիորեն։ Նա չի կարող համաձայնել, որ կորցնի իր ամբողջ կարողությունը։ Իր սեփական փողը շատ քիչ է։ Ջեննին դժբախտ է, այդ իսկույն երևում է։ Ասենք, ուրիշ կերպ էլ չի կարող լինել, որովհետև հենց ինքն էլ դժբախտ է։ Կարո՞ղ էր արդյոք նա հաշտվել տարեկան մի ինչ-որ տասը հազար ստանալու մտքի հետ, եթե նույնիսկ ամուսնանա Ջեննիի հետ։ Համաձա՞յն է արդյոք կորցնել Ջեննիին, թողնել, որ նա ընդմիշտ հեռանա իր կյանքից։ Սա խիստ բարդ խնդիր էր։ Նա չէր կարողանում հակվել ո՛չ մեկ, ո՛չ մյուս կողմը։

Երբ Լեսթերը թաղումից վերադարձավ, Ջեննին իսկույն

նկատեց, որ ինչ-որ վատ բան է եղել, որ նրան տանջում է ո՛չ միայն հոր մահվան բնական վիշտը։ Ի՞նչ կարող է լինել այդ։ Ջեննին փորձում էր իր կարեկցանքն արտահայտել նրան, բայց նրա վերքը բուժելն այնքան էլ հեշտ չէր։ Երբ Լեսթերի հպարտությունը վիրավորված էր լինում, նա շարունչյամբ լցված փակվում էր ինքն իր մեջ, իսկ բարկանալով կարող էր և մարդու հարվածել։ Ջեննին աչքը չէր հեռացնում նրանից, ամբողջ սրտով ցանկանում էր օգնել, բայց Լեսթերն իր վիշտը չէր հայտնում նրան։ Նա տանջվում էր, և Ջեննիին մնում էր միայն տանջվել նրա հետ։

Օրերն անցնում էին իրար նման, և հասավ ժամանակը, երբ Լեսթերը ծերունի Արշիբալդի մինչմահյան կամքի կապակցությամբ պետք է լրջորեն մտածեր իր ֆինանսական վիճակի մասին։ Ֆաբրիկայի կառավարումը վերակառուցվելու է։ Ռոբերտը հոր կամքին համաձայն դառնալու է ֆիրմայի պրեզիդենտը։ Հարց կծագի՝ ճշտելու հենց իր՝ Լեսթերի դերը և մասնակցությունը գործին։ Եթե նա չփոխի իր հարաբերությունները Ջեննիի հետ, ապա նույնիսկ փայատեր լինել չի կարող։ Ավելի ճիշտ ասած՝ ինքն ընդհանրապես ոչինչ է։ Որպեսզի այսուհետև ևս քարտուղարի և գանձապահի պաշտոնը վարի, նա պետք է ընկերության գեթ մեկ բաժնետոմսունենա։ Ռոբերտը կամ քույրերից որևէ մեկը կցանկանա՞ արդյոք իր բաժնետոմսերի մի մասը տալ իրեն։ Կհամաձայնե՞ն արդյոք նրանք, վատագույն դեպքում, վաճառել իրեն այդ բաժնետոմսերը։ Թե՞ հարազատները ոչ մի քայլ չեն անի ի վնաս Ռոբերտի նոր արտոնությունների։ Նրանք բոլորն էլ այժմ Լեսթերի նկատմամբ ավելի շատ թշնամաբար են տրամադրված։ Այո, այս խճճված վիճակից դուրս գալու միակ միջոցն է լքել Ջեննիին։ Եթե ինքը նրան լքի, էլ կարիք չի ունենա բաժնետոմսեր խնդրելու։ Եթե չլքի, դա կլինի հոր վերջին կամքի խախտում, և այն ժամանակ ինքը պետք է պատրաստ լինի ամեն տեսակ հետևանքի։ Նա նորից ու նորից համեմատում էր այս հակասական վիճակները, և պատկերն ավելի պարզ էր դառնում։ Ինքը պետք է հրաժարվի կամ Ջեննիից, կամ իր ապագայից։

Ռոբերտը թեկուզև ասում էր, թե ամեն ինչ կարելի էր այլ կերպ դասավորել, ինքը շատ գոհ էր ստեղծված հանգամանքներից։ Նրա ծրագիրն արդեն մոտենում էր իրականացման, իսկ նա վաղուց արդեն մանրամասն ծրագիր էր մշակում, մտածելով ոչ միայն վերակառուցել հոր գործը, այլև ընդարձակել այն՝ կառքերի արտադրության ուրիշ ընկերությունների հետ միաձուլվելով։ Երկրի արևմուտքում և արևելքում երկու-երեք խոշոր ձեռնարկությունների հետ այդպիսի միավորումը հնարավորություն կտար իջեցնել վաճառքի գները, խուսափել գերարտադրությունից և զգալիորեն կրճատել ընդհանուր ծախսերը։

Նյու-Յորքի իր ներկայացուցչի միջոցով Ռոբերտն արդեն ուրիշ ընկերությունների մի որոշ քանակությամբ բաժնետոմսեր էր ձեռք բերել և այժմ համարյա պատրաստ էր գործելու։ Ամենից առաջ հարկավոր էր, որ իրեն ընտրեն Քեյն ընկերության պրեզիդենտ։ Դրանից հետո, քանի որ Լեսթերին կարելի էր հաշվի չառնել, նա մտադիր էր փոխպրեզիդենտի պաշտոնը տալ Էմիի ամուսնուն և գուցե նաև քարտուղարի ու գանձապահի պաշտոնում Լեսթերի փոխարեն նշանակել մի ուրիշին։ Ըստ կտակի պայմանների Ռոբերտի պարտականությունների մեջ էր մտնում նաև կառավարել Լեսթերի համար առանձնացված ժառանգության բաժինը, մինչև նրա խելքի գալը։ Երևում է՝ հայրը հույս է ունեցել, թե Ռոբերտն իրեն կօգնի ներգործելու եղբոր վրա։ Ռոբերտին մի փոքր զզվեցնում էր այդպիսի տգեղ դերը, բայց խնդիրն ինքը մի մեծ դժվարություն չէր։ Որոշ տեսակետից դա նույնիսկ պատվավոր պարտականություն էր։ Լեսթերը կամ պետք է խելքի գա, կամ թողնի, որ ավագ եղբայրը ֆիրման ղեկավարի իր հայեցողությամբ։

Չիկագոյի ֆիլիալում իր պարտականությունները կատարելիս Լեսթերն արդեն զգում էր նոր հովերը։ Նա տեսնում էր, որ ինքը ղեկավարությունից դուրս է ընկել, որ ինքն ընդամենը մի բաժանմունքի կառավարիչ է, ծառայում է իր հարուստ եղբորը, և այդ գիտակցությունը կատաղեցնում էր նրան։ Ռոբերտը որևէ փոփոխության մասին ոչ մի խոսքով

չհիշատակեց։ Թվում էր, թե ամեն ինչ ընթանում է առաջվա պես։ Բայց պարզ էր, որ այժմ Ռոբերտի ամեն մի ցուցումն օրենք էր։ Ըստ էության Լեսթերը ծառայում էր եղբոր մոտ և նրանից ոռճիկ էր ստանում։ Դա ստորացուցիչ էր և զզվելի։

Մի քանի շաբաթից հետո նա զգաց, որ այլևս դիմանալ չի կարող. չէ՞ որ մինչև հիմա նա գործում էր բոլորովին ինքնուրույն։ Մոտենում էր փայատերերի տարեկան ժողովի օրը։ Առաջ այդ ժողովը սոսկ մի ձևականություն էր, քանի որ հայրը բոլոր գործերը կատարում էր միանձնյա։ Այժմ նախագահելու էր Ռոբերտը, քույրերին, ամենայն հավանականությամբ, ներկայացնելու էին իրենց ամուսինները, իսկ ինքը նույնիսկ ներկա չի լինելու։ Քանի որ Ռոբերտը նրան բաժնետոմսեր չառաջարկեց կամ գոնե չվաճառեց, որոնք նրան իրավունք կտային վարչության անդամ դառնալ և որևէ կարևոր պաշտոն գրավել, ուստի նա որոշեց, որքան էլ ծանր էր իր ինքնասիրության համար, եղբորը դիմում ուղարկել իր հրաժարականի մասին։ Դա մթնոլորտը կպարզեցնի։ Ռոբերտը կհասկանա, որ ինքը՝ Լեսթերը, չի ցանկանում նրանից շնորհ ընդունել և համաձայն է օգտվել միայն նրանից, ինչ կվաստակի իր ընդունակությունների շնորհիվ և հարազատների լիակատար համաձայնությամբ։ Իսկ եթե ինքը Ջեննիին լքի և վերադառնա նորից մասնակցելու գործերին, ապա դա արդեն կլինի ամենևին էլ ո՛չ որպես ֆիլիալի կառավարիչ։ Եվ նա թելադրեց մի պարզ, գործնական նամակ.

«Թանկագին Ռոբերտ։ Ես գիտեմ, որ մոտ ժամանակներս ընկերությունը քո ղեկավարությամբ վերակառուցվելու է։ Քանի որ ես բաժնետոմսեր չունեմ, ես իրավունք չունեմ ո՛չ վարչության անդամ լինելու, ո՛չ էլ քարտուղարի և գանձապահի պաշտոնը գրավելու։ Խնդրում եմ այս նամակը համարիր պաշտոնական հայտարարություն, որ ես հրաժարվում եմ այդ երկու պաշտոններից, և թող վարչությունը որոշի ինչպես այդ պաշտոններում. փոխարինող մարդ նշանակելու, այնպես էլ հետագայում իմ ծառայություններն օգտագործելու հարցը։ Ֆիլիալի կառավարչի պաշտոնը ես, որպես այդպիսին, առանձնապես չեմ գնահատում, բայց և ոչ մի դեպքում

չեմ ուզում խախտել քո ծրագրերը։ Այս բոլոր ասածներից քեզ համար պիտի պարզ լինի, որ ես առայժմ չեմ ուզում կատարել մեր հոր կտակում նշված պայմանը։ Ես կուզենայի ճշգրիտ իմանալ, թե դու ինչպես ես նայում այս գործին։ Սպասում եմ քո պատասխանին։

Քո Լեսթեր»։

Ցինցիննատիի իր գրասենյակում Ռոբերտը երկար մտածեց այս նամակի մասին։ Այսպես ուրեմն, Լեսթերը պահանջում է լիակատար պարզություն. այդ նման է նրան։ Այսպիսի ուղղամտության հետ մի քիչ էլ ավելի շրջահայացություն ունենար՝ երևելի մարդ կլիներ։ Բայց նա նենգություն, նրբաբանկատություն չունի։ Նա երբեք խաբեբայության չի դիմի, իսկ Ռոբերտը հոգու խորքում գտնում էր, որ առանց դրան իսկական հաջողության հասնել չի լինի։ «Երբեմն հարկավոր է նաև ճկունություն և դաժանություն,— մտածում էր նա հաճախ։— Ինչո՞ւ մարդ այդ չխոստովանի ինքն իրեն, երբ խոշոր քայլ ես անում»։ Եվ նա բավական հաստատորեն այդ կանոնին էր հետևում։

Այժմ Ռոբերտն զգում էր, որ թեև Լեսթերը հիանալի աղա է և այն էլ իր եղբայրը, բայց նրան պակասում է որոշ ճկունություն։ Նա չափից ավելի ուղղամիտ է, չափից ավելի սիրում է վիճել։ Երբ Լեսթերը ենթարկվի հոր ցանկությանը և իր բաժին ժառանգությունն ստանա, անպայման ֆիրմայի վարչության ակտիվ մասնակիցը կդառնա։ Նա կկապկպի ավագ եղբոր ձեռքերը։ Ուզո՞ւմ էր արդյոք այդ Ռոբերտը։ Անտարակույս՝ ոչ։ Նրա համար շատ ավելի ձեռնտու էր, որ Լեսթերը, համենայն դեպս, առաջիկա ժամանակաշրջանում, Ջեննիի հետ մնա և այդպիսով ինքն իրեն հեռու պահի գործերից։

Այս ամենի մասին ինչպես հարկն է խորհելուց հետո Ռոբերտը շատ քաղաքավարի մի նամակ թելադրեց։ Նա դեռ հավատացած չէ, թե ինչ կարծիքի են փեսաները։ Հարկավոր է նրանց հետ խորհրդակցել։ Անձամբ ինքը շատ կուզենար Լեսթերին թողնել որպես քարտուղար ու գանձապահ, եթե

միայն հաջողվի այդ անել։ Ավելի լավ չի՞ լինի վերջնական որոշում ընդունելը հետաձգել։

Լեսթերը բարկացավ։ Ինչի՞ համար է Ռոբերտը պոչ խաղացնում ու ձգձգում։ Նա հո շատ լավ գիտե, թե ինչպես կարելի է սարքել այդ։ Լեսթերին մի բաժնետոմս տալ, և նա լիիրավ փայատեր կլինի։ Ռոբերտը վախենում է նրանից, ահա թե որտեղ է թաղված շան գլուխը։ Դե՛, ի՛նչ արած, ֆիլիալի կառավարչի դերում ինքը չի մնա, կարող եք հանգիստ լինել։ Ինքն անհապաղ հրաժարական կտա։

Եվ Լեսթերը Ռոբերտին գրեց, որ ամեն ինչի մասին մտածել է և որոշել գործի ասպարեզում իր բախտը փորձել ինքնուրույն կերպով։ Թող Ռոբերտը մարդ ուղարկի Չիկագո, որին ինքը կարողանա գործերը հանձնել։ Ինքը պատրաստ է մի ամիս սպասել, բայց ո՛չ ավելի։ Մի քանի օրից հետո պատասխանը եկավ։ Ռոբերտը գրում էր, որ շատ է ափսոսում, բայց եթե այդ է Լեսթերի որոշումը, ինքն էլ իր հերթին չի ուզում խանգարել նրա նոր ծրագրերի իրականացմանը։ Իմոջինի ամուսինը՝ Ջեֆերսոն Միջլին վաղուց Չիկագո փոխադրվելու ցանկություն է հայտնել։ Սկզբնական շրջանում ֆիլիալի ղեկավարությունը կարելի է նրան հանձնել։

Լեսթերը ժպտաց։ Ռոբերտն, ըստ երևույթին, փորձում է օգուտ քաղել ստեղծված բարդությունից։ Ռոբերտը գիտե, որ ինքը՝ Լեսթերը կարող է դատարան տալ և վիճարկել փեսայի նշանակումը, բայց նա գիտե և այն, որ Լեսթերն ամենից քիչ այդ կցանկանա։ Ամբողջ պատմությունը լրագրերի մեջ կընկնի։ Նորից կսկսվեն արդեն լռած խոսակցությունները Ջեննիի հետ ունեցած իր հարաբերությունների մասին։ Լավագույն ելքը կլիներ բաժանվել նրանից։ Այդպես ամեն ինչ նորից կվերադառնար սկզբնական վիճակին։

ԳԼՈՒԽ XLIV

Լեսթերի քառասունվեց տարին լրացավ։ Այդ հասակում տաղտկալի և մի քիչ էլ սոսկալի է լինել բոլորովին մենակ, առանց բարեկամների ու գործարար կապերի, նույնիսկ եթե

կա տարեկան տասնհինգ հազար եկամուտը (ներառյալ հոր կտակով ստացվող տասը հազարը)։ Նա հասկանում էր, որ եթե ինքը մոտիկ ապագայում որևէ ոսկեբեր երակ չգտնի, իր կարիերան վերջացած է։ Հասկանալի է, կարելի է ամուսնանալ Ջեննիի հետ։ Դա նրան ցմահ կապահովեր տասը հազար եկամուտով, բայց միաժամանակ կզրկեր Քեյն ընկերության դրամագլխից իր բաժինն ստանալու վերջին հույսից։ Մյուս կողմից՝ նա կարող էր ծախել իր բաժնետոմսերը— այդպիսիք նա ուներ յոթանասունհինգ հազարի. հենց դրանից էլ նա մոտ հինգ հազար դոլլար տոկոս էր ստանում—և փողը դնել որևէ ձեռնարկության մեջ,՝օրինակ՝ կառքեր արտադրող մի ուրիշ ֆիրմայի մեջ։ Բայց արդյոք ուզո՞ւմ է ինքը մրցության մեջ մտնել հայրական ընկերության հետ։ Մյուս կողմից էլ դա շատ դժվար բան կլիներ։ Մրցությունն առանց այն էլ օրեցօր սրվում էր, ըստ որում Քեյն ընկերությունը համառորեն գրավում էր առաջին տեղը։ Լեսթերի ամբողջ դրամագլուխը կազմում էր յոթանասունհինգ հազար դոլլար։ Իմաստ կա՞ մարտի մեջ մտնել այդպիսի չնչին միջոցներով։ Ներկա պայմաններում արտադրության այդ ճյուղում ամրապնդվելու համար խոշոր գումարներ են հարկավոր։

Լեսթերը, օժտված լինելով հարուստ երևակայությամբ և արտասովոր խելքով, ի դժբախտություն իր՝ չուներ իր գերազանցության բութ, ինքնահավան վստահությունը, որ այնքան անհրաժեշտ է առևտրական գործերում լուրջ հաջողությունների հասնելու համար։

Գործարար աշխարհում սովորաբար նշանավոր տեղ գրավել հաջողվում է միայն մեկ գաղափարով տարված մարդուն, որը հաստատ համոզված է, թե նախախնամությունն ինքն է փայլուն ապագա նախապատրաստել իր համար իր ընտրած այս կամ այն ասպարեզում։ Օճառի մի նոր տեսակ, կամ պահածոների առուփեր բանալու մի դանակ, կամ անվրտանգ ածելի, կամ արագության հոսանքափոխիչ—մի ինչոր բան լիովին տիրում է մարդու երևակայությանը, այրում է նրան շիկացած ածուխի պես և պռնկեպռունկ լցնում նրա

էությունը։ Այդպես այրվելու համար հարկավոր է աղքատություն և երիտասարդություն։ Այն բանը, որին որոշել է նվիրել իր ամբողջ կյանքը, պետք է նրա առաջ ճանապարհ բացանի դեպի անհամար հնարավորությունները և անհամար բերկրանքները։ Եվ նպատակը պետք է լինի երջանկությունը, այլ կերպ՝ կրակը բավական պայծառ չի վառվի, շարժիչ ուժը բավականաչափ զորեղ չի լինի և հաջողությունը լիակատար չի ստացվի։

Բայց Լեսթերն այդպիսի այրման ընդունակ չէր։ Նա արդեն ճաշակել էր՝ այսպես կոչված՝ կյանքի բերկրանքների մեծ մասը։ Նրան այլևս չէին հրապուրում այն պատրանքները, որոնք այնքան հաճախ հաճույք անունն են կրում։ Փող, իհարկե, անհրաժեշտ է, և նա փող ունի, համենայն դեպս, այնքան, որ բավական է անկարիք գոյության համար։ Բայց ի՞նչ, մի՞թե ռիսկի ենթարկել այն։ Եվ ինչո՞ւ չէ։ Որքա՜ն ավելի սոսկալի է կյանքի ամբողջ մնացորդը ձեռքերը ծալած նստել և նայել, թե ուրիշներն ինչպես են առաջ գնում։

Վերջ ի վերջո նա որոշեց իր ուժերի զորձադրության տեղ գտնել։ Ինքն իրեն համոզում էր, որ շտապելու հարկ չկա, որ ինքը ոչ մի անփութություն չի թույլ տա։ Որպես սկիզբ հարկավոր էր մեծաքանակ կառքեր արտադրող արդյունաբերողների շրջանում հայտնի դարձնել, որ ինքն այլևս կապված չէ հոր ձեռնարկության հետ և պատրաստ է ուրիշների առաջարկությունները լսելու։ Եվ նա բոլորին լայնորեն ազդարարեց, որ ինքը դուրս է գալիս Քեյն ընկերությունից և գնում է Եվրոպա՝ հանգստանալու։ Նա երբեք արտասահմանում չէր եղել, և Ջեննիին էլ հարկավոր էր մի քիչ բավականություն պատճառել։ Վեստային կարելի էր թողնել տանը, սպասուհու և Գերհարդի մոտ, իսկ Ջեննին թող մի քիչ ման գա, տեսնի, թե Եվրոպայում ինչ հետաքրքիր բան կա։ Լեսթերը որոշեց լինել Վենետիկում, Բադեն-Բադենում և մյուս կուրորտներում, որոնց մասին շատ բան էր լսել։ Նա վաղուց էր ցանկանում տեսնել նաև եգիպտական քաղաքները և Պարթենոնը։ Նա կշրջի օտար երկրներում, կթարմանա, իսկ հետո, տուն վերադառնալով, լրջորեն կզբաղվի որևէ նոր գործով։

Ճանապարհորդությունը տեղի ունեցավ գարնանը, ծերունի Քեյնի մահվան տարին։ Լեսթերը Չիկագոյի պահեստի գործերը հանձնեց և, առանց շտապելու, մեծ բավականությամբ սկսեց իր երթուղին մշակել, շարունակ խորհրդակցելով Ջեննիի հետ։ Ճանապարհի համար ամեն անհրաժեշտ բան վերցնելով՝ նրանք Նյու-Յորքից շոգենավով մեկնեցին Լիվերպուլ, մի քանի շաբաթ մնացին Անգլիայում, ապա գընացին Եգիպտոս։ Վերադարձի ուղին անցնում էր Հունաստանի ու Իտալիայի վրայով դեպի Ավստրիա, ապա Շվեյցարիայի վրայով՝ Փարիզ և Բեռլին։ Նորանոր տպավորությունները հաճելի էին Լեսթերի համար, բայց և այնպես նրանից չէր հեռանում այն անհաճո զգացմունքը, որ ինքը իզուր ժամանակ է ծախսում։ Ճանապարհորդելով, խոշոր գործարար ձեռնարկություն չես ստեղծի, իսկ իր առողջությունը կարգի բերելու կարիք նա չուներ...

Բայց Ջեննին ուղղակի հիանում էր իր բոլոր տեսածներով և հրճվում նոր կյանքով, Լուկսորում և Քարնաքում, որոնց գոյության մասին նա առաջ չգիտեր էլ, նրա առաջ բացվեց հնադարյան հզոր, բազմակողմանի ու ավարտուն կուլտուրան։ Այստեղ միլիոնավոր մարդիկ ապրել ու մահացել են հավատալով ուրիշ աստվածների, կառավարման ուրիշ ձևերով, կյանքի ուրիշ կանոններով։ Ջեննին առաջին անգամ գիտակցեց, թե որքան ընդարձակ է երկիրը։ Մտածելով անցյալի գիրկն անցած Հունաստանի, կործանված հռոմեական կայսրության, մոռացության գիրկն անցած Եգիպտոսի մասին՝ նա հասկացավ, թե որքան չնչին ու մանր են մեր հոգսերը և կարծիքները։ Հոր լութերական բարեպաշտությունն արդեն նրան չէր թվում այնպես նշանակալից, իսկ Օհայո նահանգում Կոլումբուս քաղաքի հասարակական կառուցվածքը՝ անսասան։ Մայրը միշտ հսկայական նշանակություն էր տալիս նրան, թե ինչ կասեն մարդիկ, ինչ կմտածեն հարևանները, իսկ այստեղ Ջեննին տեսնում էր անթիվ-անհամար գերեզմաններ, որոնց մեջ հանգչում էին և՛ վատ, և՛ լավ մարդիկ։ Լեսթերը նրան բացատրում էր, որ բարոյական չափանիշների տարբերություններն առաջանում են մերթ կլիմա-

յի, մերթ կրոնի պատճառով, երբեմն էլ որևէ բացառիկ անձի երևան գալով, ինչպիսին էր Մահմեդը։ Լեսթերը սիրում էր նշել, թե պայմանականությունները որքան քիչ նշանակություն ունեն այս աշխարհի մասշտաբների մեջ, որն այնքան անծայրածիր է իրենց սովորական փոքրիկ աշխարհի համեմատությամբ, և Ջեննին յուրովի էր հասկանում այդ։ Վերցնենք թեկուզ նրա անցյալը։ Ասենք, թե նա վատ է վարվել։ Մարդկանց մի ինչ-որ խմբի համար գուցե և դա կարևոր է, բայց մարդկության ամբողջ պատմության առումով, աշխարհը շարժման մեջ դնող բոլոր ուժերի առումով դա ի՞նչ նշանակություն ունի։ Կանցնի մի քիչ ժամանակ, ու բոլորը կմեռնեն՝ և՛ նա, և՛ Լեսթերը, և՛ այդ մարդիկ։ Ոչ մի բան չկա իրական և հավիտենական, բացի բարությունից, սրտագին, մարդկային բարությունից։ Մնացած ամեն ինչը անցողական է երազի պես։

ԳԼՈՒԽ XLV

Այնպես պատահեց, որ արտասահմանում, նախ՝ Լոնդոնում, ապա՝ Կահիրեում, Լեսթերը նորից հանդիպեց այն միակ կնոջը, որը, եթե չհաշվենք Ջեննիին, մի ժամանակ իսկապես դուր էր գալիս նրան։ Լետտի Պեյսին նա վաղուց չէր տեսել, մոտ չորս տարի նա եղել էր Մալկոլմ Ջերալդի կինը, իսկ հետո արդեն երկու տարի էր, ինչ նա հրապուրիչ այրի կին էր։ Մալկոլմ Ջերալդը, որ Ցինցիննատիում եղել էր բանկատեր և բորսային գործարար, իր կնոջը մեծ կարողություն էր թողել։ Նա մի երեխա ուներ, մի փոքրիկ աղջիկ, որին հանձնել էր հուսալի դայակի խնամքին, իսկ ինքը ապրում էր շարունակ շրջապատված երկրպագուներով՝ քաղաքակիրթ աշխարհի բոլոր մայրաքաղաքների ծաղիկով։ Լետտի Ջերալդը շնորհալի կին էր, գեղեցիկ, նրբակազմ, նա ոտանավորներ էր գրում, շատ էր կարդում, արվեստն էր ուսումնասիրում և ամբողջ հոգով հիացած էր Լեսթեր Քեյնով։

Իր ժամանակին Լետտին իսկապես սիրում էր Լեսթերին։

որովհետև ուշի-ուշով դիտելով մարդկանց՝ նրանից լավը չէր գտնում։ Նա Լետտիին թվում էր այնքա՜ն հավասարակշռված, այնքա՜ն հանգիստ։ Լեսթերը կեղծավորությունն ատում էր։ Աշխարհիկ խոսակցությունների անպարկեշտ թեթևությունը նրան չէր հրապուրում, նա գերադասում էր խոսել պարզ ու կոնկրետ նյութերի մասին։ Քանի՜-քանի անգամ է պատահել, որ նրանք պարահանդեսի դահլիճից դուրս պրծնելով, ըսկըսել են զրուցել պատշգամբի մի անկյունում, նայելով Լեսթերի սիգարի ծխին։ Լեսթերը նրա հետ խոսում էր փիլիսոփայական թեմաների մասին, վիճում էր գրքերի մասին, պատմում էր քաղաքականության և ուրիշ քաղաքների հասարակական կյանքի մասին, մի խոսքով, նրան վերաբերվում էր ինչպես մի խելամիտ մարդկային արարածի հետ, և Լետտին երկար ժամանակ ու համառորեն հույս էր տածում, թե նա իրեն առաջարկություն կանի։ Քանի՜-քանի անգամ նայելով նրա խոշոր գլխին, կարճ խուզած խիտ մազերին՝ դժվարությամբ էր զըսպել իրեն, որ չշոյի նրա գլուխը։ Լեսթերի Ջիկագո փոխադրվելը Լետտիի համար ծանր հարված էր եղել. այն ժամանակ նա դեռ ոչինչ չգիտեր Ջեննիի մասին, բայց բնաղդաբար զգացել էր, որ Լեսթերն իր համար կորած է։

Եվ հենց այդ ժամանակ Մալկոլմ Ջերալդը՝ նրա ամենահավատարիմ ու բորբոքուն երկրպագուներից մեկը, քսաներորդ թե երեսուներորդ անգամ՝ նրան առաջարկություն արեց, և Լետտին համաձայնեց։ Նա Մալկոլմին չէր սիրում, բայց հո հարկավո՞ր էր որևէ մեկի հետ ամուսնանալ։ Մալկոլմը քառասունհինգ տարեկան էր և Լետտիի հետ ապրեց ընդամենը չորս տարի, որի ընթացքում վերջնականապես համոզվեց, որ իր կողակիցը չքնաղ և շատ զիջողամիտ կին է և կարողանում է լայն նայել իրերին։ Իսկ հետո նա մեռավ թոքերի բորբոքումից, և միսիս Ջերալդը մնաց որպես հարուստ այրի կին։ Լինելով խիստ հրապուրիչ, աշխարհիկ գործերում մեծահմուտ, նա ստարված էր միայն մեկ հոդսով՝ ինչպես ծախսել իր փողերը։

Բայց նա փողերը քամուն տալու հակում էլ չուներ։ Ջահել հասակից նրա համար տղամարդու իդեալը եղել էր Լեսթերը։ Ջնչին կոմսերը, լորդերը, բարոնները, որոնց նա հան-

դիպել էր աշխարհում (իսկ տարիների ընթացքում նա խիստ լայն ծանոթություններ ու կապեր էր հաստատել), ամենևին չէին հետաքրքրում նրան։ Նրան մահու չափ ձանձրացրել էր արտաքին փայլն այն տիտղոսավոր որսորդների, որոնք արտասահմանում հանդիպելով իրեն՝ իր դոլլարների ետևից էին ընկել։ Նա լավ էր ճանաչում մարդկանց, շատ էր դիտել, կարողանում էր ըմբռնել տեսածի թե՛ սոցիալական, թե՛ հոգեբանական կողմը և, բնականաբար, մի առանձին իլյուզիա չուներ այդ պարոնների և նրանց մեջ մարմնացած «քաղաքակրթության» նկատմամբ։

— Նույնիսկ աղքատիկ խրճիթում ես կարող էի երջանիկ լինել մի մարդու հետ, որին ճանաչում էի Ցինցիննատիում,— ասաց նա մի անգամ իր տիտղոսավոր բարեկամուհուն, որը ծնունդով ամերիկուհի էր։— Դա մե՞ծ մարդ էր, պայծառ մրքի և անաղարտ հոգու տեր մարդ։ Եթե նա ինձ առաջարկություն աներ, կամուսնանայի նրա հետ, թեկուզև ստիպված լինեի ինքս փող վաստակել։

— Իսկ նա շա՞տ աղքատ էր,— հարցրեց բարեկամուհին։

— Ամենևին։ Նա բավական հարուստ էր։ Բայց ինձ համար դա ոչ մի նշանակություն չուներ։ Ինձ պետք էր նա ինքը։

— Ժամանակի ընթացքում դա, այնուամենայնիվ, որոշ դեր կխաղար։

— Է՜, մի՛ ասեք,— առարկեց միսիս Ջերալդը։— Ես լավ գիտեմ։ Ես շատ տարիներ նրան էի սպասում։

Լեսթերը նախկին Լետտի Պեյսի մասին ամենահաճելի հիշողություններ ուներ։ Մի ժամանակ Լետտին նրան շատ էր դուր գալիս։ Ինչո՞ւ չամուսնացավ նրա հետ։ Շատ անգամ էր նա այս հարցը տվել իրեն։ Նա իր համար ամենահամապատասխան կինը կլիներ, հայրը հավանություն կտար այդ ամուսնությանը, բոլորը գոհ կլինեին։ Իսկ նա ձգձգում էր ու ձգձգում, հետո էլ երևան եկավ Ջեննին, և Լետտին արդեն դադարեց զբաղեցնել նրա միտքը։ Այժմ վեց տարվա ընդհատումից հետո նրանք նորից հանդիպեցին։ Լեսթերը գիտեր, որ նա ամուսնացել է։ Լետտիին էլ աղոտ լուրեր էին հասել

Լեսթերի կապերի մասին և որ նա վերջ ի վերջո ամուսնացել է իր սիրուհու հետ և ապրում է Հարավային կողմում։ Լեսթերի ֆինանսական դժվարությունների մասին Լետտին ոչինչ չգիտեր։ Առաջին անգամ նրանք հանդիպեցին հունիսյան մի երեկո, «Կարլտոն» հյուրանոցում։ Լուսամուտները բաց էին, այգուց ներս հորդող ծաղիկների բուրմունքի մեջ նոր կյանքի երջանկություն կար, որ գարնան բացվելու հետ համակում է ամբողջ աշխարհը։ Առաջին րոպեին Լետտին շվոթվեց, նրա շունչը բռնվեց։ Բայց և նա արագորեն տիրապետեց իրեն և անբռնազբոսիկ ձևով ձեռքը մեկնեց։

— Տ՚եր իմ աստված, սա հո Լեսթեր Քե՚յնն է,— զոչեց նա։— Դե՛, բարև ձեզ, որքա՚ն ուրախ եմ ձեզ տեսնելուս։ Իսկ սա միսիս Քե՚յնն է։ Երջանիկ եմ ձեզ հետ ծանոթանալու։ Որքա՚ն հաճելի է հանդիպել հին բարեկամին, ասես մարդու երիտասարդությունն է վերադառնում։ Դուք ինձ ներեցեք, միսիս Քեյն, բայց, ճիշտն ասած, ես շատ ուրախ եմ ձեր ամուսնուն տեսնելուս համար։ Նույնիսկ ամոթ է ասել, Լեսթեր, թե քանի՚ տարի մենք չենք տեսնվել։ Ես ինձ բոլորովին պառաված եմ զգում։ Ախր մի մտածեցեք. վեց տարուց ավելի է անցել։ Այդ ժամանակամիջոցում ես ամուսնացել եմ, աղջիկ եմ ունեցել, և խեղճ միստր Ջերալդը վախճանվել է և, տե՚ր իմ աստված, ինչե՚ր ասես, որ չի պատահել։

— Ձեզ նայելով այդպես ասել չի կարելի,— ժպտալով պատասխանեց Լեսթերը։

Նա ուրախ էր այդ հանդիպմանը. մի ժամանակ նրանք լավ բարեկամներ էին։ Լեսթերը հիմա էլ դուր էր գալիս Լետտին, այդ իսկույն երևում էր, և հենց Լետտին ինքն էլ դուր էր գալիս Լեսթերին։

Ջեննին, Լեսթերի հին բարեկամուհուն նայելով, սիրալիր ժպտաց։ Մերկացրած սքանչելի ձեռքերով այդ կինը, որ հագին բաց վարդագույն մետաքսե կտորից կարված ժանեկազարդ քղանցքով շոր ուներ և գոտկում մի կարմիր վարդ, նրան թվաց գերկատարելություն։ Լեսթերի նման նա էլ սիրում էր նայել գեղեցիկ կանանց, հաճախ ինքն էր մտանացույց

անում նրանց և կատակով Լեսթերին ձեռ էր առնում, թե դիմանո՞ւմ է նրանց թովչանքին։

— Դու գնայիր մի ծանոթանայիր նրա հետ, Լեսթեր, թե չէ՝ շարունակ իմ կողքին ես նստած,— ասում էր նա առանձնապես հետաքրքիր ու տպավորիչ կին տեսնելով։

— Ոչի՞նչ, ինձ համար այստեղ էլ լավ է,— կատակի էր տալիս Լեսթերը, նայելով նրա աչքերին կամ թե հառաչում էր.— է՛հ, տարիքս առաջվանը չէ, թե չէ՝ նրա ետևից կընկնեի։

— Վազի՛ր, վազի՛ր,— զրդռում էր նա։— Ես քեզ կսպասեմ։

— Իսկ ի՞նչ կասեիր դու, եթե ես իսկապես վազեի։

— Ոչինչ չէի ասի։ Երևի էլի կվերադառնայիր ինձ մոտ։

— Եվ քեզ համար դա միևնո՞ւյն է։

— Դու շատ լավ գիտես, որ միևնույն չէ։ Բայց քեզ խանգարել չէի ուզի։ Ես ամենևին չեմ գտնում, թե քեզ համար ես միակ կինը պիտի լինեմ, եթե մկայն դու ինքդ չես ուզում այդ։

— Որտեղի՞ց է քեզ այդպիսի հասկացողությունը, Ջեննի,— հարցրեց նա մի անգամ նրա հայացքների լայնությունից զարմացած։

— Իսկապես՝ չգիտեմ։ Ի՞նչ է որ։

— Քո հայացքների մեջ այնքան համբերություն ու բարեսրտություն կա։ Շատերը չէին համաձայնի քեզ հետ։

— Իմ կարծիքով, Լեսթեր, եսասիրաշտ լինել չի կարելի։ Ինքս էլ չգիտեմ ինչու ինձ այդպես է թվում։ Որոշ կանայք այլ կերպ են մտածում, բայց եթե տղամարդն ու կինը չեն ուզում միասին ապրել, ինչո՞ւ պիտի միմյանց հարկադրեն։ Դու համաձայն չե՞ս սրան։ Եվ նույնիսկ եթե տղամարդը մի կարճ ժամանակով հեռանա և հետո էլի վերադառնա, այդ այնքան էլ սարսափելի բան չէ։

Լեսթերը ժպտաց. նա չէր կարող նրան չհարգել այդպիսի մարդկային զգացմունքների համար։

Այն երեկոյան էլ, նկատելով, որ Լետտին Լեսթերին տեսնելով այնքան ուրախացավ, Ջեննին իսկույն հասկացավ, որ նրանք շատ բանի մասին կուզենան խոսել, և նա ինքն իրեն Ֆավատարիմ մնաց։

— Դուք ինձ ներեցեք, ես մի կարճ ժամանակով ձեզ մենակ կթողնեմ,— ասաց նա ժպտալով։— Մեր համարում որոշ բաներ ունեմ կարգի բերելու։ Ես շուտ կվերադառնամ։

Նա գնաց իրենց սենյակում նստեց որքան հնարավոր էր համարում, իսկ Լեսթերն ու Լետտին միանգամից աշխույժ զրույց սկսեցին։ Լեսթերը պատմեց իր մասին, բաց թողնելով որոշ մանրամասնություններ, իսկ Լետտին վերջին տարիների իր կյանքը նկարագրեց նրան։

— Հիմա, երբ դուք ամուսնացած եք և անմատչելի,— համարձակորեն ասաց նա,— ես կարող եմ խոստովանել. ես միշտ երազում էի, որ հենց դուք առաջարկություն կանեք ինձ, բայց այդպես էլ չեղավ այդ։

— Գուցե ես համարձակություն չունեցա,— ասաց Լեսթերը նայելով նրա չքնաղ սև աչքերին և ինքն իրեն հարց տալով՝ գիտե՞ արդյոք, թե՞ չգիտե նա, որ ինքն ամուսնացած չէ։

Նրան թվում էր, թե Լետտին ավելի է գեղեցկացել, որ հիմա նա ինքը կատարելագործությունն է, նրբագեղ, ինքնավստահ, սրամիտ, աշխարհիկ կնոջ իդեալ, որը կարողանում է ամեն մեկին մոտենալ ու ամեն մեկին հմայել։

— Դե լավ։ Ես գիտեմ, թե ինչով էր զբաղված ձեր միտքը. ձեր նվիրական միտքը հենց նոր նստած էր այս սեղանի մոտ։

— Մի՛ շտապեք եզրակացություններ անել, սիրելիս։ Թե ինչ մտքեր ունեի ես՝ այդ դուք իմանալ չեք կարող։

— Այսպես թե այնպես, ես բարձր եմ գնահատում ձեր ճաշակը. նա չքնաղ կին է։

— Ջենիի մեջ լավ բան շատ կա,— ասաց նա հասարակ ձևով։

— Դուք երջանի՞կ եք։

— Այս կամ այն չափով։ Ոչ, իհարկե, երջանիկ եմ, որքան այդ հնարավոր է մարդու համար, եթե նա ապրում է բաց աչքերով։ Իսկ ես, ձեզ հայտնի է, իլյուզիաներ շատ չունեմ։

— Ուզում եք ասել՝ ոչ մի իլյուզիա չունե՞ք։

— Թերևս և ոչ մի, Լետտի։ Երբեմն ես ցավում եմ, որ այդպես է։ Իլյուզիաներով ավելի հեշտ է ապրել։

— Ձեզ լրիվ հասկանում եմ։ Իսկ ես ընդհանրապես գլխանում եմ, որ իմ կյանքը հաջողակ չեղավ, թեպետև փող համարյա այնքան ունեմ, որքան Կրեսոսն ուներ, գուցե միայն մի քիչ պակաս։

— Տե՛ր իմ ասված։ Եվ այդ ասում եք դուք, ունենալով ձեր գեղեցկությունը, տաղանդն ու հարստությո՞ւնը։

— Ինչի՞ս են պետք դրանք։ Աշխարհ-աշխարհ ման գալ, փուչ խոսակցություններ ունենալ, վախեցնել այն ապուշների՞ն, որոնք աչք են տնկում իմ դոլլարների վրա։ Ա՜խ, որքա՜ն տաղտկալի ու ձանձրալի է այդ։

Լեստին նայեց Լեսթերին։ Ջեննին չխանգարեց, որ նրա սրտում արթնանա նախկին զգացմունքը։ Ինչո՞ւ Լեսթերն իրեն բաժին չընկավ։ Նրանք լավ են իրար հետ, կարծես թե վաղուց են ամուսնացել կամ հենց նոր են սեր բացատրվել միմյանց։ Ջեննին ի՞նչ իրավունք ուներ Լեսթերին վերցնել իրեն։ Լեստիի աչքերը բառերից ավելի պարզ էին խոսում։ Լեսթերը տխուր քմծիծաղ տվեց։

— Ահա գալիս է իմ կինը,— ասաց նա։— Ստիպված ենք խոսակցության նյութը փոխել։ Իսկ Ջեննին կարող է ձեզ հետաքրքրել։

— Գիտեմ,— պատասխանեց նա և Ջեննիին նայեց մի շողշողուն ժպիտով։

Ջեննիի մեջ մի թույլ կասկած արթնացավ։ Գուցե սա Լեսթերի հին սե՞րն է։ Ա՛յ թե ինչպիսի կին պետք է ընտրեր նա իր համար։ Նա իր շրջանի մարդ է, նրա հետ Լեսթերը պակաս երջանիկ չէր լինի, կամ գուցե և ավելի երջանիկ կլիներ։ Արդյոք նա ինքն էլ դրա մասին չի՞ մտածում։ Հետո նա մի կողմ նետեց այդ անհանգիստ միտքը։ Մեկ էլ տեսար սկսեց խանդել, իսկ դա ստորություն կլինի։

Միսիս Ջերալդը Քեյնի հետ վարվում էր շատ սիրալիր։ Հետևյալ օրը նա նրանց հրավիրեց իր հետ միասին Հայդ-Պարկ գնալ, մի անգամ նրանք ճաշեցին «Քլերիջ» հյուրանոցում, իսկ հետո եկավ Լեստիի մեկնելու օրը։ Նա պայմանավորվեց ծանոթների հետ հանդիպել Փարիզում։ Նա սրտագին հրաժեշտ տվեց Քեյներին, հույս հայտնելով, որ նորից կհան-

դիպեն։ Նա տխուր էր, նախանձում էր Ջեննիի բախտին։ Լեսթերը նրա համար չէր կորցրել իր երբեմնի թովչանքը։ Ավելի շուտ նրան թվում էր, թե Լեսթերն ավելի դուրեկան է դարձել, զիջող ու խելամիտ։ Նա շատ էր ցավում, որ Լեսթերն ազատ չէ։ Եվ Լեսթերն էլ, գուցե, անգիտակցաբար միանում էր նրա ափսոսանքին։

Ասես հետևելով նրա մտքերին՝ Լեսթերը պատկերացնում էր, թե ինչպես կլիներ, եթե ինքը ամուսնանար նրա հետ։ Կյանքի մասին, արվեստի, առօրյա հարցերի մասին նրանց հայացքները զարմանալիորեն զուգադիպում էին։ Պատկանելով միևնույն հասարակական շրջանին, նրանք կես խոսքից իրար հասկանում էին մինչև ամենափոքր նրբություն, որ Ջեննին ոչ կարող էր որսալ, ոչ էլ արտահայտել։ Նրա միտքն այնքան արագ չէր աշխատում, որքան միսիս Ջերալդինը։ Իր բնավորությամբ Ջեննին ընդունակ էր և ավելի խոր զգացմունքի ու ավելի սրտագին ըմբռնողության, բայց աշխարհիկ զրույցի մեջ նա իրեն ցույց տալ չէր կարողանում։ Նա միշտ անկեղծ էր մինչև վերջ. և նրա հենց այդ հատկությունն էլ երևի հրապուրել էր Լեսթերին։ Բայց հիմա, ինչպես և նույնանման ուրիշ դեպքերում, նա դրանից տուժում էր։ Եվ Լեսթերին արդեն սկսում էր թվալ, որ ինքն ավելի լավ արած կլիներ, եթե իր ընտրությունը կանգնեցրած լիներ Լետտի Պեյսի վրա։ Համենայն դեպս, դա վատ չէր լինի, և հիմա իրեն չէր տանջի իր ապագայի միտքը։

Երկրորդ անգամ նրանք միսիս Ջերալդին հանդիպեցին Կահիրեում։ Լեսթերը սիգարը բերանին շրջում էր հյուրանոցի այգում և հանկարծ դեմառդեմ եկավ նրան։

— Ա՜յ քեզ հաջողություն,— գոչեց նա։— Այդ որտեղի՞ց։

— Երևակայեցեք՝ Մադրիդից։ Մինչև անցյալ հինգշաբթի ես ինքս էլ չգիտեի, որ այստեղ կընկնեմ։ Էլլիկոտները համոզեցին ինձ ընկերանալ իրենց։ Ես էլ մտածում էի, թե հիմա դուք որտեղ կլինեք, հետո հիշեցի, որ ուզում էիք Եգիպտոս գալ։ Որտե՞ղ է ձեր կինը։

— Ներկա րոպեին նա ամենայն հավանականությամբ վաննայի մեջ է։ Այստեղ այնքան շոգ է, որ Ջեննին պատ-

լաստ է ջրից դուրս չգալու։ Եվ ես ինքս էլ դեմ չեմ ջուրն ընկնելու։

Նա նորից զմայլված նայեց միսիս Ջերալդին։ Նա հագին երկնագույն մետաքսե շոր ուներ, ձեռքին՝ նույնպես երկնագույն, սպիտակ զոլերով մի շքեղ հովանոց։

— Ա՜խ, ասովա՜ծ իմ,— հանկարծ գոչեց Լեստին։— Ուղղակի չգիտեմ, թե ինչ անեմ։ Հո չե՛մ կարող շարունակ թափառել։ Արդեն մտածում եմ՝ չվերադառնա՞մ Նահանգները։

— Ի՞նչ է պատահել որ։

— Իսկ սա ի՞նչ կտա ինձ։ Ամուսնանալ չեմ ուզում։ Հիմա ես ո՞ւմ հետ կարող եմ ամուսնանալ։

Նա արտահայտիչ ձևով նայեց Լեսթերին և շուռ եկավ։

— Դե լավ, որևէ մեկը կգտնվի,— ոչ այնքան քաղաքավարությամբ ասաց Լեսթերը։— Ձեր գեղեցկությունն ու փողն ունենալով՝ միևնույն է, չեք փրկվի։

— Հարկավոր չէ, Լեսթեր։

— Լավ, թող ձեր ասածը լինի։ Բայց ես գիտեմ, թե ինչ եմ ասում։

— Դուք էլի պարո՞ւմ եք,— հարցրեց Լեստին մի ուրիշ, աշխարհիկ տոնով, հիշելով, որ այդ երեկո հյուրանոցում պարահանդես է լինելու։ Մի ժամանակ Լեսթերը հիանալի պարում էր։

— Դե մի նայեցեք ինձ։

— Թողե՞ք, Լեսթեր, մի՞թե դուք հրաժարվել եք այդպիսի հիանալի զբաղմունքից։ Ես մինչև հիմա էլ այնքա՞ն եմ սիրում պարել։ Իսկ միսիս Լեսթե՞ը։

— Ոչ, նա պար չի սիրում։ Համենայն դեպս, չի տարվում պարերով։ Թերևս դա մասամբ իմ մեղքն է։ Վերջին ժամանակներս ես մոռացել էլ եմ, որ կարելի է պարել։

Նա մտածեց, որ վերջին ժամանակներս ընդհանրապես դադարել է հասարակության մեջ լինել։ Դրա համար նրա կապը անհաղթահարելի արգելք էր։

— Եկեք այսօր երեկոյան պարենք։ Ձեր կինը դեմ չի լինի։ Դահլիճն այստեղ հիանալի է. առավոտյան ես այն տեսել եմ։

— Տեսնենք,— պատասխանեց Լեսթերը։— Ես երկի՛մ-ռացած կլինեմ պարել։ Իմ տարիքում այնքան հեշտ չի լինի նորից սկսել։

— Է՜, ի՛նչ եք ասում, Լեսթեր,— առարկեց Լետտին։— Դուրս է գալիս, որ ի՞նձ էլ արդեն չի կարելի պարել։ Այդպես ծանրաբարո մի՛ եղեք։ Ձեր ասելով՝ բոլորովին ծեր եք։

— Հենց այդպես էլ կա. եթե դատելու լինենք կենսական փորձով, ես արդեն ծեր եմ։

— Դե ի՛նչ կա որ, դա ավելի հետաքրքիր է,— կոտրատվելով ասաց միսիս Ջերալդը։

ԳԼՈՒԽ XLVI

Այդ նույն երեկոյան, երբ վիթխարի հյուրանոցի այգու արմավենիների ծառուղուն նայող պարասրահում արդեն նվագում էր նվագախումբը, միսիս Ջերալդը Լեսթերին գտավ վերանդաներից մեկում։ Նրա կողքին նստած էր Ջեննին՝ սպիտակ ատլասի շորով ու սպիտակ կոշիկներով, թավ մազերը ճակատից վերև պսակ կազմած։ Լեսթերը ծխում էր և խորհում Եգիպտոսի բախտի մասին, իրար փոխարինած մարդկային սերունդների մասին, որոնք տանջվել են ուժից վեր աշխատանքով։ Մտածում էր Նեղոսի ափերի նեղլիկ հողաշերտի մասին, որը սնել է այդ սերունդներին, արևադարձային գոտու զարմանալի կյանքի և այս հյուրանոցի մասին՝ իր ժամանակակից հարմարություններով և տուրիստների խայտաբղետ ամբոխով, որ ծագել է այս հնադարյան հոգնած ու հյուծված երկրում։ Առավոտյան նա Ջեննիի հետ գնացել էր պիրամիդները դիտելու։ Տրամվայով հասել էին մինչև սֆինքսի ստորոտը։ Նրանք տեսել էին խառնակ բուրմունքներով ու վառ գույներով լի նեղլիկ փողոցներ, որտեղ վխտում էին գչլտած, կիսամերկ, տարօրինակ հագուստներով տղամարդիկ ու երեխաներ։

— Շատ դժվար է սրանցից բան հասկանալ,— ասաց Ջեննին։— Նրանք այնքա՜ն կեղտոտ են, սոսկալի։ Հետա-

քրքիր է նայել նրանց, բայց նրանք բոլորը միաձուլվում, մի կծիկ են դառնում որդի պես։

Լեսթերը ժպտաց։

— Դու մասամբ իրավացի ես։ Բայց դրա պատճառը կլիման է։ Շոգը։ Արևադարձը։ Դա սովորաբար թուլացնում է, ղգայականություն է առաջացնում։ Մարդիկ մեղավոր չեն։

— Դե իհարկե, ես նրանց չեմ էլ մեղադրում։ Պարզապես շատ տարօրինակ են։

Այժմ Լեսթերն այս խոսակցությունն էր հիշում նայելով արմավենիներին, որոնք ողողվել էին լուսնի պայծառ կախարդական լույսով։

— Վերջապե՞ս գտա ձեզ,— գոչեց միսիս Ջերալդը։— Ճաշին ես ուշացա։ Էքսկուրսիան շատ երկարեց։ Ես ձեր սմուսնուն համոզել եմ ինձ հետ պարել, միսիս Քեյն,— շարունակեց նա ժպիտով։

Նա ևս, ինչպես Լեսթերն ու Ջեննին, մեղկացել էր հարավային ջերմ երեկոյին։ Օդը հագեցած էր այգիների ու անտառների սուր բուրմունքով։ Թույլ լսվում էին զանգուլակների զնգոց և տարօրինակ ձայներ՝ «Այա՞, ո՞ւշ, ո՞ւշ». այդ հեռվում, նեղլիկ փողոցներով ուղտեր էին քշում։

— Այդ շատ լավ է,—սիրալիր պատասխանեց Ջեննին։— Թող պարի։ Ես ինքս էլ հաճույքով կկամենայի, բայց պարել չգիտեմ։

— Քեզ հարկավոր է հենց հիմա մի քանի դաս առնել,— աշխույժ արձագանքեց Լեսթերը։— Եվ ես էլ քեզ կընկերանամ։ Իհարկե, ես բավական ծանրացել եմ, բայց երևի մի բան դուրս կգա։

— Լավ, ես այնքան էլ չեմ ուզում պարել,— ժպտաց Ջեննին։— Բայց դուք գնացեք, իսկ ես շուտով կբարձրանամ վերև, մեր համարը։

— Բայց գուցե դու դահլիճո՞ւմ կնստես,— ասաց Լեսթերը վեր կենալով։— Դե ես մի երկու պտույտից ավելի չեմ անի, իսկ հետո մենք ուրիշներին կնայենք։

— Ոչ։ Ավելի լավ է ես այստեղ կմնամ. այստեղ այնքա՞ն լավ է։ Իսկ դու գնա։ Տարեք սրան, միսիս Ջերալդ։

Լեսթերը և Լեոտին գնացին։ Դա չափազանց տպավորիչ մի զույգ էր։ Միսիս Ջերալդի մուգ մանուշակագույն շորը, որի վրա կայծկլտում էին սև-սև փայլքերը, ավելի էր շեշտում նրա բաց թևերի ու պարանոցի սպիտակությունը։ Նրա մուգ մազերի մեջ մի ահագին ադամանդ էր շողշողում։ Վարդագույն հյուսեղ շրթունքները կախարդիչ ժպիտ կազմելով բաց էին արել սպիտակ համաչափ ատամների շարքը։ Լեսթերը ֆրակ ուներ հագին, որն ընդգծում էր նրա ամուր, բարեձև կազմվածքը։

«Ա՛յ թե ում հետ պետք է ամուսնանար նա»,— մտածեց Ջեննին, երբ նա անցավ հյուրանոցի դռան ետևը։ Եվ նա ըսկըսեց մտաբերել իր ամբողջ կյանքը։ Երբեմն նրան թվում էր, թե իր ամբողջ անցյալը երազ է եղել, իսկ երբեմն էլ մտածում էր, որ երազը մինչև այժմ էլ շարունակվում է։ Կյանքի ձայները նրան էին հասնում այնպես անորոշ, ինչպես այդ գիշերվա ձայները։ Նա լսում էր միայն ամենաբարձր ճիչերը, տեսնում էր սոսկ ամենաանդհանուր գծերը, իսկ դրանց ետևը, ասես երազում, միմյանց փոխարինելով լող էին տալիս անորսալի ստվերներ։ Ինչո՞ւ տղամարդիկ այդպես հրապուրվում էին իրենով։ Ինչո՞ւ Լեսթերն այնպես համառորեն ձգտում էր իրեն։ Կարո՞ղ էր ինքը իր ժամանակին դեմ կանգնել նրա ցանկությանը։ Նա հիշեց, թե ինչպես էր ապրում Կոլումբուսում, ինչպես էր գնում ածուխ հավաքելու։ Իսկ հիմա ինքը Եգիպտոսումն է, այս վիթխարի հյուրանոցում, իր տրամադրության տակ է մի քանի սենյակից բաղկացած մի շքեղ համար, և Լեսթերն առաջվա պես սիրում է իրեն։ Որքա՞ն է տևժել նա իր պատճառով։ Իսկ ինչո՞ւ։ Մի՞թե ինքը մի արտակարգ կին է։ Մի ժամանակ Բրենդերն այդպես էր ասում։ Լեսթերը ևս նույնն էր ասում։ Եվ այնուամենայնիվ նա խոնարհաբար զգում էր, որ ինքն այստեղ իր տեղում չէ, ասես ձեռքում ունի մի բուռ թանկագին քարեր, որոնք իրեն չեն պատկանում։ Հաճախ նա ունենում էր նույն զգացողությունը, որ ունեցել էր առաջին անգամ Լեսթերի հետ Նյու-Յորք գնալիս, որպես թե այս հեքիաթային կյանքը երկար չի տևելու։ Բախտը դարանակալել է իրեն։ Կպատահի մի ինչ-որ բան, և ինքը

նորից կընկնի այնտեղ, որտեղ եղել է. մի խուլ փողոցում, աղքատիկ տան մեջ, հնամաշ շորը հագին։

Հետո նրա մտքերը տեղափոխվեցին Ջիկագո, նա մտաբերեց Լեսթերի ծանոթներին, և իր համար պարզ դարձավ, որ հենց այդպես էլ լինելու է։ Իրեն չեն ընդունի հասարակության մեջ, եթե նույնիսկ Լեսթերն ամուսնանա իր հետ։ Այժմ նա հասկանում է նաև դրա պատճառը։ Նայելով այն կնոջ, ժպտուն դեմքին, որի հետ հենց նոր գնաց Լեսթերը, նա կարդում էր այսպիսի մի միտք. «Դու գուցե և շատ սիրունիկն ես, բայց նրա շրջանից չես»։ Եվ հիմա էլ Լեսթերի հետ պարելիս միսիս Ջերալդը երևի մտածում է, թե ինքը որքա՞ն ավելի համապատասխան կին կլիներ Լեսթերի համար։ Նրան հարկավոր է այնպիսի կին, որ աճած լինի իր հարազատ միջավայրում։ Ջեննիից նա չէր էլ կարող սպասել, որ նա կիմանա և ճիշտ կգնահատի այն բոլոր մանրունքները, որոնց ինքը վարժվել է մանկությունից։ Հիմա նա շատ բան էր հասկանում։ Նա արագորեն սովորեց ըմբռնել իրադրության, արդուզարդի, շարժուձևերի, աշխարհիկ սովորությունների նրբությունները, բայց դա նրա համար ձեռքբերովի էր և ոչ թե բնածին։

Եթե ինքը հեռանա, Լեսթերը կվերադառնա իր նախկին աշխարհը, որտեղ թագավորում է այն գեղեցիկ, խելացի, անբասիր դաստիարակությամբ կինը, որը հիմա վալս է պարվում նրա հետ։ Ջեննիի աչքերն արցունքով լցվեցին, հանկարծ նա մեռնելու ցանկություն զգաց։ Ճիշտ որ այդպես ավելի լավ կլիներ։

Այդ ժամանակ Լեսթերը պարում էր միսիս Ջերալդի հետ, իսկ ընդմիջումներին զրուցում էր նրա հետ ծանոթ վայրերի ու մարդկանց մասին։ Նա նայում էր Լետտիին և հիանում նրա գեղեցկությամբ ու ջահելությամբ։ Այնպես բարալիկ չէր, ինչպես դեռատի հասակում, բայց հիմա էլ բարեկազմ էր, Դիանայի պես հոյատես։ Նրա փափկասուն մարմնի մեջ ուժ էր զգացվում, սև-սև աչքերը շողշողում էին խոնավ փայլով։

— Ազնիվ խոսք, Լետտի,— չիարդացավ զսպել նա

իրեն,— դուք ավելի եք լավացել։ Դուք չքնաղ եք։ Դուք ավելի ու ավելի եք գեղեցանում։

— Իսկապե՞ս ձեզ այդպես է թվում,— ժպտաց Լեսթին մի հայացք գցելով նրա վրա։

— Դուք շատ լավ գիտեք, որ այլ կերպ՝ ես այդ չէի ասի։ Դատարկ հաճոյախոսություններից ես հեռու եմ։

— Ա՜խ, Լեսթեր, արջ եք դուք, արջ, ձեզ հետ մի քիչ կոտրատվե՞լ էլ չի կարելի։ Մի՞թե չգիտեք, որ կանայք սիրում են գովասանքը վայելել կաթիլ-կաթիլ և ոչ թե միանգամից կուլ տալ։

— Ինչո՞ւ որ,— հարցրեց նա։ —Ես ի՞նչ ասացի որ։

— Ոչինչ։ Դուք պարզապես արջ եք։ Մեծ երեխա, անմիջական ու համառ։ Բայց գրանք դատարկ բաներ են։ Դուք ինձ դուր եք գալիս։ Այս բավակա՞ն է ձեզ։

— Միանգամայն,— ասաց նա։

Երաժշտությունը լռեց, և նրանք դուրս եկան այգի։ Լեսթերը քնքշորեն սեղմում էր նրա ձեռքը։ Նա չէր կարող իրեն զսպել։ Նա այնպիսի զգացմունք ուներ, ասես այդ կինն իրեն էր պատկանում։ Իսկ Լեսթին ամբողջ ուժով աշխատում էր այդ ներշնչել նրան։ Նրա հետ այգում նստած, ծառերի միջև կախված լապտերներին նայելով՝ Լեսթին մտածում էր. եթե նա ազատ լիներ և իրեն կանչեր, ինքը կգնար նրա ետևից։ Ինքը նրա ետևից կգնար նաև այսպես, միայն թե նա երևի չի ցանկանա։ Նա այնպիսի՞ պուրիտանն է, այնպե՞ս է հոգում պատշաճության մասին։ Նա նման չէ իրեն ծանոթ ուրիշ տղամարդկանց, նա երբեք ստորություն չի անի։ Երբե՛ք։

Վերջապես Լեսթերը վեր կացավ և սկսեց հրաժեշտ տալ։ Առավոտյան Ջեննիի հետ գնալու են Նեզոսի հոսանքն ի վեր, դեպի Կաֆնակ և Թեբե, և դեպի Ֆիլե կղզի, որտեղ տաճարները դուրս են գալիս ուղիղ ջրի միջից։ Պետք է վեր կենալ լուսածեգին, այնպես որ, ժամանակն է գնալ քնելու։

— Իսկ ե՞րբ եք մտադիր նահանգներ գնալ,— տրտում հարցրեց միսիս Ջերալդը։

— Սեպտեմբերին։

— Տոմսեր արդեն պատվիրե՞լ եք։

— Այո, մենք մեկնելու ենք Համբուրգից ամսի իններին, «Ֆուլդա» շոգենավով։

— Երևի ես էլ աշնանը կգնամ տուն,— ծիծաղելով ասաց Լեոտին։— Զզարմանաք, եթե շոգենավի վրա էլ հանդիպենք։ Ճիշտն ասած, ես դեռ ոչինչ չեմ որոշել։

— Չէ, իսկապես, միասին գնանք,— ասաց Լեսթերը։— Հույս ունեմ՝ ձեր միտքը չեք փոխի... Գուցե մենք վաղն առավոտյան էլ հանդիպենք։

Նա լռեց, և Լեոտին մի տխուր-հարցական հայացք գցեց նրա վրա։

— Մի՛ վշտացեք,— ասաց Լեսթերը և սեղմեց նրա ձեռքը։— Քի՞չ բան է լինում կյանքում։ Երբեմն թվում է, թե բանը բոլորովին վատ է, այնինչ շուտ է գալիս դեպի լավը։

Նա մտածում էր, որ Լեոտին, ըստ երևույթին, ցավում է, որ կորցնելու է իրեն, իսկ ինքն էլ ցավում էր, որ նրա ցանկությունն անիրականանալի է։ Եվ էլի նա ինքն իրեն ասում էր, որ դրությունից այդպիսի ելքը իր համար անընդունելի է, այնինչ այդ մի ելք էր։ Ինչո՞ւ ինքն այդ չի արել շատ տարիներ առաջ։

Բայց այն ժամանակ Լեոտին այնքան լավիկը չէր, որքան այժմ, և այսքան խելացի ու այսքան հարուստ չէր...Ա՜խ, եթե որ... Բայց ինքը չի կարող դավաճանել Ջեննիին կամ շարիք ցանկանալ նրան։ Առանց այն էլ Ջեննին շատ բան է կրել և քաջաբար տարել է իր լուծը։

ԳԼՈՒԽ XLVII

Վերադարձի ճանապարհին Լեսթերն ու Ջեննին, իրոք, էլի մի ամբողջ շաբաթ եղան միսիս Ջերալդի հետ, որը մտածել էր, թե կփորձի մի քիչ ժամանակ ապրել ծննդավայրում։ Նա Ցինցիննատի էր գնում անցնելով Չիկագոյով, հուսալով, որ հետագայում էլ երբեմն կհանդիպի Լեսթերին։ Ջեննին շատ զարմացավ, երբ նրան տեսավ շոգենավում, և տագնապալից մտքերը նորից սկսեցին տանջել նրան։ Այժմ դրությունը նրա

համար պարզ էր. չիներ ինքը, միսիս Ջերալդն, անկասկած, կամուսնանար Լեսթերի հետ։ Իսկ հիմա... դժվար է որևէ բան ասել։ Լեստին իր ծագումով, դաստիարակությամբ, հասարակության մեջ ունեցած դիրքով ամենահարմար կինն էր Լեսթերի համար։ Բայց ավելի լայն մարդկային ըմբռնողությամբ Ջեննին, այնուամենայնիվ, ավելի մոտ էր Լեսթերին. այդ նա զգում էր անսխալ։ Գուցե ժամանակը կօգնի լուծել այդ բարդ հարցը։ Իսկ առայժմ նրանք երեքն էլ առաջվա պես մնում էին որպես բարեկամներ։ Ձիկագոյում նրանք բաժանվեցին. միսիս Ջերալդը ճանապարհը շարունակեց դեպի Ցինցիննատի, իսկ Լեսթերն ու Ջեննին նորից տեղավորվեցին Հայդ-Պարկի իրենց տանը։

Եվրոպայից վերադառնալուց հետո Լեսթերը լրջորեն ըսկըսեց գործունեության նոր ասպարեզ որոնել իր համար։ Խոշոր ընկերություններից ոչ մեկը նրան առաջարկություն չէր անում գլխավորապես այն պատճառով, որ նա ուժեղ ու տիրակալ մարդու համբավ ուներ, որն այս կամ այն ձեռնարկությունը մտնելով անպայման կցանկանար ղեկավար դեր խաղալ այնտեղ։ Նրա ֆինանսական վիճակի փոփոխության մասին ոչինչ հայտնի չէր։ Մանր ընկերությունները, որոնց մասին նա տեղեկություններ հավաքեց, ողորմելի գոյություն էին քարշ տալիս կամ բաց էին թողնում նրա կարծիքով անպետք արտադրանք։ Ճիշտ է, Ինդիանա նահանգի հյուսիսի մի փոքրիկ քաղաքում նա գտավ մի ձեռնարկություն, որը կարծես ինչ-որ հեռանկարներ ուներ։ Այդ ձեռնարկության գլուխ էր կանգնած մի հմուտ կառագործ վարպետ, որպիսին մի ժամանակ Լեսթերի հայրն էր եղել, սակայն նա էլ մի առանձին գործարար ընդունակություններ չուներ։ Նա շատ համեստ շահույթ էր ստանում տասնհինգ հազար դոլլարից, որ դրված էր մի քըսանհինգ հազար արժեքով ձեռնարկության մեջ։ Լեսթերը որոշեց, որ համապատասխան մեթոդներ կիրառելու և իսկական գործարար եռանդ լինելու դեպքում այստեղ կարելի է մի բանի հասնել։ Արագ հաջողությունների մասին խոսք էլ չէր կարող լինել, խոշոր շահույթները, եթե նույնիսկ հնարավոր էին, ապա կարող էին լինել միայն հեռավոր ապագայում։

Բայց և այնպես, Լեսթերը մտածում էր բանակցությունների մեջ մտնել այդ ձեռնարկության տիրոջ հետ, երբ նրան լուր հասավ, թե ստեղծվել է կառաշինական տրեստը։

Այդ ամբողջ ժամանակամիջոցում Ռոբերտը եռանդով զբաղվում էր կառքերի արտադրությունն արմատապես վերակառուցելու իր վաղուց մտածած խնդրով։ Նա ամեն կերպ աշխատում էր իր մրցակիցներին ապացուցել, որ միավորումը որքա՞ն ավելի մեծ օգուտներ է խոստանում իրենց, քան թե մրցությունը և մեկը մյուսին շուկայից դուրս մղելու ձգտումը։ Նրա պատճառաբանություններն այնքան համոզիչ էին, որ խոշոր ընկերություններն իրար ետևից համաձայնում էին։ Մի քանի ամսից հետո համաձայնությունը ձևակերպվեց, և Ռոբերտը դարձավ «Կառքերի արտադրության միավորյալ ասոցիացիայի» պրեզիդենտ, որը տասը միլիոն դոլլար փայատիրական դրամագլուխ ուներ և այդ գումարի երեք քառորդին հասնող հիմնական միջոցներ։ Նա հասել էր իր նպատակին և երջանիկ էր։

Լեսթերն այդ լուրջ փոփոխություններից բոլորովին անտեղյակ էր։ Կառքերի արտադրության մի շարք ձեռնարկությունների միաձուլման մասին լրագրական մի քանի հակիրճ լուրերը նրա ձեռքը չէին ընկել, որովհետև այդ ժամանակ նա եղել էր արտասահմանում։ Վերադառնալով Չիկագո՝ նա իմացավ, որ Իմոջինի ամուսինը՝ Ջեֆերսոն Միջլին, առաջվա պես վարում է Չիկագոյի բաժանմունքը և ապրում է Իվենստոնում։ Սակայն հարազատների հետ գժտությունը Լեսթերին խանգարեց որևէ տեղեկություն ստանալ առաջին բերանից։ Շուտով մի պատահականություն նրա աչքերը բացեց այն ամենի առաջ, ինչ տեղի էր ունեցել, և պետք է ասել՝ այդ տեղի ունեցավ բավական անհաճո հանգամանքներում։

Շշմեցուցիչ նորությունը նրան հայտնեց ոչ այլ ոք, քան քլիվլենդցի միստր Հենրի Բրայսբրիջը, որին Լեսթերն ակամբում հանդիպեց Եվրոպայից վերադառնալուց մի ամիս հետո։

— Դու, ինչպես լսել եմ, անջատվել ես հայրական ընկերությունից,— սիրալիր ժպիտով ասաց Բրայսբրիջը։

— Այո,— ասաց Լեսթերը։— Անջատվել եմ։

— Իսկ հիմա ի՞նչ ծրագրեր ունես։

— Մտածում եմ մի գործի մասին։ Ուզում եմ իմ սեփական ձեռնարկությունն ստեղծել։

— Բայց, իհարկե, հպիվ թե եղբորդ դեմ գնաս։— Նա վատ չի մտածել իր այդ ասոցիացիան։

— Ի՞նչ ասոցիացիա, ես ոչինչ չեմ լսել։ Հենց նոր եմ վերադարձել Եվրոպայից։

— Օ՜յ, Լեսթեր, ուրեմն դու բոլորովին քնած ես,— ասաց Բրայսբրիջը։— Եղբայրդ ձեր արգյունաբերության ճյուղի մեծագույն տրեստն է ստեղծել։ Ես կարծում էի, դու տեղյակ ես։ Միավորվել են բոլոր խոշոր ընկերությունները՝ Վուդսը, Լայման-Ուինտրոպը, Մայեր-Բրուքսը։ Եղբայրդ սրբեղիգենտ է ընտրվել։ Նա երևի հենց միայն բաժնետոմսերի բաշխումից մի երկու միլիոն վաստակած կլինի։

Լեսթերը հոնքերը վեր քաշեց, նրա աչքերը նայում էին տառն։

— Դե, ի՛նչ կա որ, ուրախ եմ Ռոբերտի հաջողությանը։

Բրայսբրիջը հասկացավ, որ Լեսթերի ցավոտ տեղին է դիպել։

— Ցտեսություն, սիրելիս, իմ գնալու ժամանակն է,— ասաց նա։— Երբ Քլիվլենդ գաս, անցիր մեզ մոտ։ Ես և կինս սիրում ենք քեզ, դու հո գիտես։

— Գիտեմ,— ասաց Լեսթերը։— Ցտեսություն։

Նա դանդաղ քայլեց դեպի ծխարան։ Իր այս լսածից հետո իր նոր մտահղացումը կորցնում էր ամեն մի հեսաքրքրքրություն։ Մե՞ծ բան կլինի ինքը մի խղճուկ ֆաբրիկայի տիրոջ դերում, երբ իր եղբայրը կառաջինական տրեստի դիրեկտոր է։ Այո, մի տարի չանցած՝ Ռոբերտն իրեն մուրացկան կդարձնի։ Մի ժամանակ ինքն էր երազում այդպիսի ասոցիացիայի մասին։ Ինքը երազում էր, իսկ Ռոբերտը վերցրեց ու ստեղծեց այն։

Ուրիշ բան է շնորհալի մարդկանց գլխին տեղացող բախտի հարվածները կրել, երբ դու երիտասարդ ես, համարձակ և մարտական շնչով տոգորված։ Եվ բոլորովին ուրիշ բան է, երբ երիտասարդությունդ արդեն անցել է, երբ քո հիմնական

կարողությունը դուրս է պրծնում ձեռքիցդ, իսկ հարստության ու հաջողության հասնելու նոր ճանապարհները իրար ետևից փակվում են քո առաջ։ «Հասարակության» բացահայտ չկամությունը՝ ընդունել Ջեննիին, նրա շուրջն ստեղծված լրագրային աղմուկը, գժտությունը հոր հետ և նրա մահը, կարողության կորուստը, հայրական ձեռնարկությունից անջատումը, Ռոբերտի վարքագիծը, վերջապես այս նոր տրեստը—այս ամենը վհատեցնում, ճնշում էր Լեսթերին։ Նա աշխատում էր ցույց չտալ այդ, և մինչև այժմ կարծես թե հաջողվում էր, բայց հիմա հանկարծ զգաց, որ ամեն բան սահման ունի։ Նա տուն վերադարձավ ամպից էլ ավելի սևակնած։ Ջեննին խուսուն զգաց այդ, ավելի ճիշտ՝ նա սպասում էր դրան։ Ամբողջ երեկոյի ընթացքում, երբ Լեսթերը տանը չէր, նրան տանջում էր մի ինչ-որ անհասկանալի թախիծ։ Եվ ահա Լեսթերը վերադարձավ, և նա հասկացավ. Լեսթերին լուրջ անախորժություն է պատահել։ Նրա առաջին ցանկությունը եղավ հարցնել. «Ի՞նչ է պատահել, Լեսթեր», բայց խելացիորեն զսպեց իրեն և մտածեց, որ նա ինքը կպատմի ամեն ինչ, եթե ցանկանա։ Նա ձևացրեց, թե ոչինչ չի նկատել և աշխատում էր գուրգուրանքով ցրել նրա մտքերը։

— Վեստան այսօր շատ գոհ է իրենից,— սկսեց նա։— Գերազանց գնահատականներ է բերել գպրոցից։

— Այդ լավ է,— մռայլ ասաց Լեսթերը։

— Եվ հիանալի պարել է սկսել։ Հենց քիչ առաջ նա ինձ ցույց էր տալիս իր նոր սովորած պարերը։ Ի՞նչ հիանալի է պարում, ուզղակի չես կարող պատկերացնել։

— Շատ ուրախ եմ,— փնթփնթաց Լեսթերը։— Ես հասասում էի, որ նա պետք է սովորի։ Եվ երևի ժամանակն է, որ նրան փոխադրենք մի ուրիշ, ավելի լավ դպրոց։

— Իսկ հայրիկը շարունակ բարկանում է, նույնիսկ ծիծաղելի է։ Վեստան նույնիսկ ջղայնացնում է նրան, այդ շարաճճին։ Այսօր ամբողջ օրը կպել է օձիքից, թե՝ արի քեզ պարել սովորեցնեմ։ Հայրիկն այդքան որ սիրելիս չլիներ նրան, ականջները կպոկեր։

— Երևակայում եմ,— ժպտաց Լեսթերը։— Մեր պապը՝ պարելիս։ Ա՜յ թե պատկեր կլինի։

— Նա փնթփնթում է, գայրանում, իսկ Վեստայի հոգն էլ չէ։

— Կեցցե՛ աղջիկը,— ասաց Լեսթերը։

Նա անկեղծորեն սիրում էր Վեստային և ավելի ու ավելի էր հետաքրքրվում նրանով։

Ջեննին շարունակում էր շատախոսել, և նրան հաջողվեց մի փոքր ցրել Լեսթերի մռայլ տրամադրությունը։ Իսկ երբ պառկել-քնելու ժամանակը եկավ, նա ինքը, վերջապես, սկսեց խոսել իր հոգսերի մասին։

— Երբ մենք արտասահմանում ենք եղել, Ռոբերտն այստեղ մի շատ լավ ֆինանսական գործ է տեսել։

— Ի՞նչ գործ,— հետաքրքրվեց Ջեննին։

— Կառաջինական տրեստ է կազմել, ոչ ավել, ոչ պակաս։ Հիմա նրա տրեստը իր մեջ կընդգրկի այդ գծով երկրում եղած բոլոր շատ թե քիչ նշանակալից ձեռնարկությունները։ Բրայսբրիջն ինձ ասաց, որ Ռոբերտը պրեզիդենտ է ընտրվել և որ նրանք համարյա ութ միլիոն դրամագլուխ ունեն։

— Ի՞նչ ես ասում,—գոչեց Ջեննին։—Այդ դեպքում երեվի շարժե, որ դու մտնես այն նոր ընկերության մեջ, որի մասին խոսում էիր։

— Այո, հիմա դա անմիտ բան կլիներ։ Գուցե թե հետագայում, չգիտեմ։ Առայժմ պետք է սպասել. տեսնենք ինչ դուրս կգա այդ նոր տրեստից։ Ո՛վ գիտե, ի՛նչ ուղղություն կվերցնի նա։

Ջեննին վշտացած էր մինչև հոգու խորքը։ Առաջ նա երբեք Լեսթերից տրտունջի ոչ մի խոսք չէր լսել։ Նա շատ էր ուզում սփոփել Լեսթերին, բայց հասկանում էր, որ դա իր ուժերից վեր է։

— Դե ի՛նչ կա որ,— ասաց նա։— Աշխարհում ուրիշ շատ հետաքրքիր բաներ էլ կան։ Ես լինեի քո տեղը, չէի շտապի։ Դու դեռ ժամանակ ունես։

Ավելին նա սիրտ չարեց ասել, բայց Լեսթերը հանկարծ զգաց, որ, իրոք, տանջվելու կարիք չկա։ Վերջ ի վերջո էլի

երկու տարի ինքն ապահովված է միանգամայն բավարար եկամուտով։ Ցանկության դեպքում այն կարելի է և բազմապատկել։ Եվ, այսուամենայնիվ, Լեսթերին կրծում էր այն միտքը, որ եղբայրն արագ թափով վեր է բարձրանում, իսկ ինքը մնացել է տեղում կամ, ավելի ճիշտ, լող է տալիս հոսանքն ի վար։ Դա ցավալի էր, իսկ գլխավորը՝ նա սկսեց ըզգալ, որ կորցնում է իր ոտքի տակի հողը։

ԳԼՈՒԽ XLVIII

Որքան էլ Լեսթերը զլուխ էր կոտրում, չէր կարողանում մի հնար գտնել, թե ինչպես նորից գործարար կյանքի մեջ մտնի։ Իմանալով, որ Ռոբերտն իր տրեստն է ստեղծել, նա իսկույն հրաժարվեց Ինդիանայի գործարանատիրոջ համեստ ձեռնարկությանը մասնակցելու մտքից։ Նա բավական հըպարտություն և չափի զգացում ուներ, որ հասկանար, թե որքան անհեթեթ կլիներ չափվել եղբոր հետ, որն անվիճելիորեն գերազանցում էր իր ֆինանսական հնարավորություններով։ Նա տեղեկություններ հավաքեց նոր ասոցիացիայի մասին և համոզվեց, որ Բրայսբրիջն ամենևին էլ չի չափազանցրել նրա թափն ու հզորությունը։ Դա միլիոնանոց գործ էր։ Առանձին գործող մանր ֆաբրիկանտների համար իրենց գոյությունը պահելու ամենաչնչին հույս անգամ չէր մնացել։ Ուրեմն մի՞թե պիտի քարշ գար իր նշանավոր եղբոր պոչից։ Ո՛չ, դա արդեն չափազանց ստորացուցիչ է։ Այս ու այն կո՞ղմն ընկնել, շուռումո՞ւռ գալ նոր տրեստի դեմ անհավասար պայքար մղելիս, իմանալով, որ հարազատ եղբայրդ կարող է ճզմել քեզ կամ խնայել, և որ քո դեմ օգտագործվում է հենց քեզ պատկանող դրամագլուխը։ Ո՛չ, անկարելի է։ Ավելի լավ է մի փոքր սպասել։ Երևի մի դուռ կբացվի։ Առայժմ ապրելու միջոց կա, և ինքն էլ իրավունք ունի, եթե ցանկանա նորից Քեյն ընկերության փայատեր դառնալու։ Բայց ցանկանո՞ւմ է ինքն այդ։ Ահա մի հարց, որին Լեսթերը ոչ մի կերպ պատասխանել չէր կարող։

Նա դեռ իր կասկածների ու տատանումների գերին էր, երբ մի գեղեցիկ օր նրան ներկայացավ ոմն Սեմյուել Ռոս, անշարժ գույքի վաճառման գործակալ, որի վիթխարի ռեկլամները տախտակե վահանակների վրա շարված էին Չիկագոն շրջապատող ամբողջ պրերիայում։ Լեսթերն այդ մարդուն մի երկու անգամ հանդիպել էր ակումբում, լսել էր, որ նա համարձակ ու հաջողակ գործարար է, և հիշում էր նրա գրասենյակի ճչացող ճակատը Վաշինգտոն և Լա-Սալ փողոցների անկյունում։ Ռոսը մոտ հիսուն տարեկան մարդ էր, նա ուշադրություն էր գրավում իր արտաքինով. բարձրահասակ էր, սև մորուքով, սև-սև աչքերով, արծվաքիթ էր և գանգուր մազեր ուներ։ Լեսթերը հիշեց նրա փափուկ, կտավային քայլվածքը և երկար մատներով արտահայտիչ նեղ ու սպիտակ ձեռքերը։

Միստր Ռոսը միստր Քեյնին ներկայացել էր գործնական առաջարկությամբ։ Միստր Քեյնը, իհարկե, գիտե, թե ով է ինքը։ Միստր Ռոսն էլ իր հերթին լիովին տեղյակ է միստր Քեյնի մասին։ Հայտնի՞ է արդյոք միստր Քեյնին, որ բոլորովին նորերս նա՝ Ռոսը, նպարեղենի «Իեյլ, Սիմփսոն և Ռայս» մեծաքանակ առևտրի ընկերության ներկայացուցիչ միստր Նորման Իեյլի հետ ստեղծել է քաղաքի «Իեյլվուդ» նոր արվարձանը։

Այո, միստր Քեյնին այդ հայտնի էր։

Դեռ վեց շաբաթ էլ չանցած՝ Իեյլվուդի վերջին հողամասերն էլ վաճառվեցին։ Միջին հաշվով դա քառասուներկու տոկոս շահույթ բերեց։ Ռոսը թվեց անշարժ գույքի հետ իր կատարած էլի մի քանի գործարքները, որոնց մասին ևս Լեսթերը որոշ բան լսել էր։ Ռոսն անկեղծորեն խոստովանեց, որ իր գործի մեջ անհաջողություններ էլ են լինում։ Նա ինքը երկու անգամ տուժել է։ Բայց, ինչպես հայտնի է, շատ ավելի հաճախ անշարժ գույքի հետ կատարված գործարքները եկամուտ են տալիս։ Եվ ահա, քանի որ Լեսթերն այլևս կապված չէ Քեյնի ընկերության հետ, դուցե դեմ չի լինի լավ գործի մեջ դնելու իր փողերը։ Հետաքրքիր առաջարկություն կա։ Լեսթերը համաձայնեց ունկնդրել միստր Ռոսին, և նա կտավի աչքերի նը-

ման կլոր աչքերը ճպճպացնելով սկսեց բացատրել բանի էությունը։

Նրա խոսքը հանգում էր այն բանին, որ Լեսթերին առաջարկում էր իր հետ միասին գնել ու շահագործել քառասուն ակրից բաղկացած մի ընդարձակ հողամաս, որ գտնվում էր քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում, հիսունհինգերորդ, յոթանասունմեկերորդ և Հոլսթեդ ու Էշլենդ փողոցների միջև։ Այդ շրջանում հողի գինն անխուսափելիորեն բարձրանալու էսպասվում է իսկական բում, այն էլ երկար ժամանակով։ Քաղաքային վարչությունն արդեն որոշել է սալահատակել Հիսունհինգերորդ փողոցը։ Ենթադրվում է Հոլսթեդ փողոցով տրամվայի գիծը շարունակել։ Մոտիկով անցնող Չիկագո-Բեռլինգտոն-Քուինսի երկաթուղագծի ընկերությունն, անտարակույս, կուզենա նոր արվարձանում մարդատար գնացքների կայարան կառուցել։ Հողի համար պետք է վճարվի քառասուն հազար դոլլար, այդ ծախսը իրենք հավասար կկիսեն։ Հողամասի հարթեցումը, մաս-մաս բաժանելը, փողոցների սալահատակումը, ծառերի տնկումը, լապտերներ կանգնեցնելը՝ այս ամենը կնստի մոտ քսանհինգ հազար։ Հարկավոր կլինի երկու կամ երեք տարվա ընթացքում ռեկլամի վրա որոշ գումար ծախսել, ներդրած կապիտալի տասը տոկոսը, ընդամենը տասնինն-քսան հազար դոլլար։ Ընդհանուր առմամբ նրանք երկուսով գործի մեջ կդնեն իննսունհինգ, ամենաշատը՝ հարյուր հազար դոլլար, որից Լեսթերին բաժին կընկնի հիսուն հազար։ Հետո միստր Ռոսն սկսեց շահույթները թվել։

Վերոհիշյալ հողի վաճառքի հեռանկարների և նրա գնի բարձրացման մասին կարելի է դատել նրան կից Հիսունհինգերորդ փողոցից դեպի հյուսիս և Հոլսթեդ-սթրիթից դեպի արևելք ընկած հողամասերով։ Վերցնենք թեկուզ Մորտիմերի հողամասը Հոլսթեդ և Հիսունհինգերորդ փողոցների անկյունում։ 1882 թվականին այդտեղ հողը վաճառվում էր ակրը քսառասունհինգ դոլլարով։ Չորս տարի հետո արդեն ակրն արժեր հինգ հարյուր դոլլար. 1866 թվականին այդ հողամասի համար այդպիսի գին է վճարել միստր Ջոն Սլոսսենը։ 1889 թվականին, այսինքն՝ էլի երեք տարի հետո, նա հողը միստր

Մորտիմերին ծախեց ակրը հազար դոլլարով։ Այժմ այդպիսի գնով է առաջարկվում դեռևս չմշակված նոր հողամասը։ Այն կարելի է բաժանել 50 ոտնաչափ լայնք և 100 ոտնաչափ երկարություն ունեցող հողակտորների և վաճառել հինգ հարյուրական դոլլարով։ Միթե՞ սա ապահովված շահույթ չէ։

Լեսթերը համաձայնեց, որ շահույթը, իսկապես, կաթսես ապահովված է։

Ռոսը մի քիչ էլ պարծենկոտությամբ սկսեց բացատրել, թե ինչպես են փող կուտակում անշարժ գույքի գործարքներով։ Անտեղյակ մարդը չպետք է խցկվի այդ գործի մեջ։ Մի քանի շաբաթում, նույնիսկ մի քանի տարվա ընթացքում չի կարելի հասնել այն հմտության, որ ունեն իր նման մարդիկ, որն իր փորձը կուտակել է քառորդ դարի ընթացքում։ Այստեղ կարևոր է և՛ հեղինակությունը, և՛ ճաշակը, և՛ հոտառությունը։ Եթե իրենք համաձայնության գան և սկսեն գործել, գործերի ղեկավարությունը ինքը կվերցնի իր վրա։ Նա իր տրամադրության տակ ունի ենթակաների լավ վարժված մարդկանց մի հաստիք և խոշոր կապալառուներ։ Նա ծանոթություններ ունի հարկային վարչությունում, ջրամատակարարման վարչությունում, մի խոսքով, քաղաքային տնտեսության բոլոր բաժիններում, որոնցից կախված է նոր շրջանի բախտը։ Եթե Լեսթերն ընկերանա իր հետ, նա՝ Ռոսը, երաշխավորում է շահույթը. թե որքան կլինի այդ՝ ճշգրիտ ասել չի կարող. ամենաքիչը հիսուն հազար դոլլար, բայց ավելի շուտ՝ հարյուր հիսուն կամ երկու հարյուր։ Հենց որ Լեսթերը իր ցանկությունը հայտնի, նա նրան կծանոթացնի բոլոր մանրամասնություններին և կբացատրի իր ծրագիրը կենսագործելու կարգը։

Մի քանի օր մտածելուց հետո Լեսթերը որոշեց, որ միտքը Ռոսի նախագիծը արժանի է ուշադրության։

ԳԼՈՒԽ XLIX

Թվում էր, թե այդ գործի հաջողությանը կասկածելու ոչ մի հիմք չկար։ Միստր Ռոսի վիթխարի փորձը և առողջ դատողությունը նրա ամեն մի նախաձեռնության հաջողության երաշխիք էր։ Նա մանրամասնորեն ուսումնասիրել է իր գործը։ Նա կարողանում էր համոզել ում ուզենար և ինչ ուզենար, միայն թե նրան ժամանակ տրվեր մանրամասնորեն լուսաբանելու հարցի բոլոր կողմերը։

Լեսթերն այնքան էլ հեշտությամբ չհրապուրվեց այդ գործով, թեև, ընդհանուր առմամբ, անշարժ գույքի առևտուրը նրա սրտով բան էր։ Հողը հետաքրքրում էր նրան։ Նա գտնում էր, որ դա դրամագլուխը գործադրելու պատկառելի բնագավառ է, եթե չափից ավելի չցրվես։ Մինչև այժմ նա չէր փորձել փող դնել հողամասերի գործի մեջ, բայց միայն նրա համար, որ այդ գործից հեռու գտնվող շրջանների մեջ էր լինում։ Նա «հոշաղուրկ» մարդ էր, իսկ հիմա էլ՝ որոշ իմաստով նաև գործաղուրկ։

Միստր Ռոսը նրան դուր էր գալիս. նա, երևում էր, հասկանում է իր բռնած գործը։ Դժվար չէր ստուգել նրա պնդումները, և Լեսթերը չհապաղեց դրանով զբաղվել։ Բացի այդ, նա հիշում էր Ռոսի ռեկլամ-վահանները պրերիայում և նրա հայտարարությունները թերթերում։ Վերջապես ժամանակն էր վերջ տալու այս ձգձգվող անգործությանը և գեթ մի փոքր մեծացնելու իր դրամագլուխը։

Ցավոք սրտի, Լեսթերը վերջին ժամանակներս այնքան էլ չէր խորանում մանրամասնությունների մեջ։ Հոր ձեռնարկությունում գործելու հենց սկզբից նրան հանձնարարվում էին ընդհանուր բնույթի խնդիրներ՝ խոշոր քանակությամբ ապրանքների գնում, մեծաքանակ պատվերների բաշխում, այնպիսի հարցերի քննարկում, որոնք վերաբերում էին ֆիրմայի ամբողջ աշխատանքին և հեռու էին ավելի մանր առևտրականների համար առաջնակարգ նշանակություն ունեցող գործնական մանրամասնություններից։ Ֆաբրիկայում ոչ թե նա, այլ Ռոբերտն էր մինչև վերջին ցենտը հաշվում արտադրու-

թյան բոլոր ծախսերը, հեռնում, որ ոչ մի տեղ ամենաշնչին կորուստ անգամ չլինի։ Իսկ Լեսթերը բարեխղճորեն և հավիշտակությամբ կատարում էր ավելի ընդհանուր կարգի հանձնարարություններ։ Եվ այժմ, երբ խորհում էր Ռոսի առաջարկության մասին, նրան հետաքրքրում էին լայն հեռանկարները և ոչ թե մանրուքները։ Նա շատ լավ գիտեր, որ Չիկագոն արագորեն աճում է, և հողի գինը չի կարող չբարձրանալ։ Այնտեղ, ուր այժմ մերկ դաշտ է, շատ շուտով, մի քանի տարուց հետո, խիտ շենքերով բնակելի արվարձաններ են լինելու։ Անհնարին է ենթադրել, թե հողի գինը կարող է ընկնել։ Հողակտորների վաճառքը կարող է ձգձգվել, և գներն էլ գուցե միշտ միահավասար չբարձրանան, բայց ընկնել չեն կարող։ Այս էր համոզում նրան Ռոսը, և ինքը՝ Լեսթերն էլ համոզված էր դրանում։

Նա չէր նախատեսել մի ամբողջ շարք պատահականություններ։ Նա չէր մտածել, որ ինքը՝ միստր Ռոսն էլ հավերժական չէ, որ ներկայումս բնակելի արվարձանի համար իդեալական թվացող շրջանին կարող են վնասել նրա հարևանությամբ կառուցվող թաղամասերը, որ անբարենպաստ ֆինանսական իրադրությունը կարող է հողի գնի իջեցում առաջացնել, ավելին. կարող է առաջացնել հողակտորները չնչին գներով ծախսելու խուճապային տենդենց, որին դիմանալ չեն կարող նույնիսկ այնպիսի փորձված մակլերները, ինչպիսին էր միստր Սեմյուել Ռոսը։

Մի քանի ամիս Լեսթերն ուսումնասիրում էր իր նոր դաստիարակի ու գիդի նկարագրած իրադրությունը, ապա զալով այն եզրակացության, որ ռիսկը եթե կա էլ, ապա շատ աննշան է, որոշեց ծախել իր բաժնետոմսերի մի մասը, որոնք իրեն բերում էին ողորմելի վեց տոկոս եկամուտ, և այդ փողը դնել նոր ձեռնարկության մեջ։ Նրա առաջին մուծումը եղավ քսանհինգ հազար դոլլար՝ հողի արժեքի կեսը, որի համար նրանք, ինչպես համաձայնել էին Ռոսի հետ, հավասարաչափ էին վճարում։ Այդ համաձայնությունը պետք է ուժի մեջ մնար, քանի դեռ չէին վաճառվել բոլոր հողակտորները։ Հետո նա տասներկուևկես հազար դոլլար տվեց աշխատանք-

ների կատարման համար, իսկ հետո՝ էլի երկուսակես հազար գոլլար՝ հարկերի վճարման և զանազան չնախատեսված ծախսերի համար։ Պարզվեց, որ հողի յուրահատկության պատճառով համահարթումն ավելի թանկ է նստում, քան նախատեսված է եղել, որ ծառերը միշտ էլ առաջին իսկ տնկումով չեն կսլշում, որ մի շարք աշխատանքներ հաջողությամբ ավարտելու համար հարկավոր է քաղաքային տնտեսության գաղային կամ ջրմուղի բաժիններում որոշ մարդկանց «յուղել»։ Այս ամենով զբաղվում էր միստր Ռոսը, բայց քանի որ դա ծախսերի ավելացման պատճառ էր լինում, նա չէր կարող Լեսթերին տեղյակ չպահել։

Նրանց առաջին զրույցից մոտ մեկ տարի հետո հողակտորները պատրաստ էին, բայց նրանց մասին համապատասխան ռեկլամ անելու համար հարկավոր էր սպասել մինչև գարուն։ Ռեկլամի ծախսերի համար էլ Լեսթերը երրորդ մուծումը պիտի աներ, և նա ծախեց էլի տասնհինգ հազարի բաժնետոմսեր, գտնելով, որ հարկավոր է գործը հասցնել մինչև վերջը և հետո արդեն սպասել խոստացված եկամուտին։

Սկզբում Լեսթերը բոլորովին գոհ էր իր ծրագրերի իրականացումից։ Ռոսը, անտարակույս, նրան թվաց խելամիտ ու խորաթափանց գործարար, որը կարողանում է ընդգրկել բազմապիսի մանրուքներ։ Հողակտորները մշակվել էին հիանալի։ Նոր թաղամասին տրվել էր հրապուրիչ անուն՝ Գրինվուդ, այսինքն՝ Կանաչ Անտառ, թեև, ինչպես Լեսթերը նկատեց, այնտեղ անտառի հետք էլ չկար։ Բայց Ռոսը նրան հավատացնում էր, որ քաղաքամերձ հողամաս որոնող մարդկանց այդպիսի անունը դուր կգա, իսկ երբ տեսնեն, թե ինչպիսի եռանդով ծառեր են տնկվում, որոնք հետագայում դառնալու են ստվերախիտ ծառուղիներ ու այգիներ, նրանք հեշտությամբ երազանքն իրականության տեղ կդնեն։ Լեսթերն այս բացատրությունների վրա միայն ժպտաց։

Գրինվուդի ոլայծառ ապագան մոայլող առաջին ստվերը այն լուրն էր, թե «Ինտերնացիոնալ կոնսերվայինը»— միակոնսերվ տրեստի մեջ միավորված խոշորագույն ընկերու-

թյուններից մեկը—որոշել է տրեստից անջատվել և ինքնուրույն ձեռնարկություն հիմնել։ Լրագրերում գրում էին, որ «Ինտերնացիոնալ»-ը մտադիր է հիմնավորվել Հոլսթեդ-սթրիթից և Երեսուներկուերորդ փողոցից դեպի հարավ, ամենայն հավանականությամբ Հիսունհինգերորդ փողոցի և Էշլենդ ավենյուի շրջանում։ Այդ թաղամասը արևմտյան կողմում անմիջականորեն կից էր Լեսթերի հողերին, իսկ հենց միայն այն կասկածը, որ մոտերքում պահածոների գործարան է բացվելու, բավական էր, որ կործանի ծնունդ առնող ամառանոցային թաղամասի հեռանկարները։

Ռոսը կատաղությունից իրեն կորցրել էր։ Դրությունն արագ գնահատելով, նա որոշեց, որ միակ ելքն է լրագրերում ավելի լայն ռեկլամ անել նոր հողակտորների մասին և աշխատել շուտ ծախել դրանք, քանի դեռ նոր ձախորդություններ էլ չեն ծագել։ Նա իր տեսակետը հայտնեց Լեսթերին, և սա համաձայնեց, որ այդպես ամենից ավելի լավ կլինի։ Նրանք արդեն ռեկլամի վրա վեց հազար դոլլար էին ծախսել, իսկ հիմա էլ տասն օրվա ընթացքում ծախսեցին էլի երեք հազար, որպեսզի այն տպավորությունն ստեղծեն, թե Գրինվուդը իդեալական թաղամաս է՝ սարքավորված ըստ ժամանակակից տեխնիկայի վերջին խոսքի, իր գեղեցկությամբ և անդորրությամբ Չիկագոյում իրեն հավասարը չունի և ապագայում էլ չի ունենալու։ Բայց դա չօգնեց։ Մի քանի հողակտորի գընորդ գտնվեց, բայց «Ինտերնացիոնալ կոնսերվայինի» ծրագրերի շարագույժ լուրերը համառորեն շարունակվում էին։ Այժմ արդեն Գրինվուդը, թերևս, պետք լիներ միայն որպես օտարերկրացի բանվորների ավան։ Իսկ ամառանոցային թաղամասի միտքը բացահայտ ձախողում էր կրել։

Այս նոր հարվածը Լեսթերին լիակատար հուսահատության մեջ գցեց։ Հիսուն հազար դոլլար, իր կարողության երկու-երրորդ մասը, եթե չհաշվենք հոր կտակով սահմանված տարեկան եկամուտը, անշարժության էր մատնվել։ Հարկավոր էր հարկեր վճարել, նորոգումներ կատարել և միաժամանակ պատրաստ լինել այն բանին, որ հողի գները կսկսեն ընկնել։ Նա մի միտք հայտնեց, թե մնացած հողակտորները

կարելի է ծախել ինքնարժեքով կամ գրավ դնել, հրաժարվելով հետագա շահագործումից։ Բայց Ռոսն այդ գործին շատ ավելի մռայլ էր նայում։ Մի երկու անգամ նա արդեն ընկել էր այդպիսի դժվարությունների մեջ։ Նա սնոտիապաշտ մարդ էր և գտնում էր, որ եթե գործը հենց սկզբից հարթ չի ընթացել, նշանակում է դա իրենց բախտից է և ինչ էլ որ անես, միևնույն է, չես ուղղի։ Իր դառն փորձից նա գիտեր, որ իր կոլեգաներից շատերն էլ հենց այդպես են մտածում։

Էլի մի երեք տարի նրանք այդպես մնացին, իսկ հետո արդեն հողակտորները աճուրդով ծախեցին։ Լեսթերին, որը հիսուն հազար դոլլար էր դրել գործի մեջ, բաժին ընկավ տասնութ հազարից մի քիչ ավելի։ Եվ կյանքի փորձ ունեցող մարդկանցից ոմանք հավատացնում էին նրան, թե շատ լավ է պրծել։

ԳԼՈՒԽ L

Քաղաքամերձ հողամասերի կարգավորման ամենաեռուն շրջանն էր, երբ միսիս Ջերալդը որոշեց փոխադրվել Չիկագո։ Ապրելով Ցինցիննատիում՝ նա շատ բան էր իմացել Լեսթերի կյանքի հանգամանքների մասին, որոնք այնքան բամբասանքների ու կշտամբանքների պատճառ էին դարձել։ Այն հարցը, թե Լեսթերն ամուսնացա՞ծ է Ջեննիի հետ թե ոչ, այդպես էլ անորոշ էր մնացել։ Բայց միսիս Ջերալդին էր հասել Ջեննիի ամբողջ պատմությունը, ճիշտ է, աղավաղված ձևով, և տեղեկություններ այն մասին, թե ինչպես Չիկագոյի մի լրագիրը Լեսթերին պատկերել է սիրո համար իր ամբողջ կարողությունը զոհաբերող միլիոնատիրոջ դերում, ինչպես և միանգամայն ճշգրիտ տեղեկություններ, որ Ռոբերտը եղբորը հեռացրել է «Քեյն ընկերության» գործերին մասնակցելուց։ Եվ միսիս Ջերալդը ցավում էր, որ Լեսթերը կործանում է իրեն։

Անցավ մի տարի, բայց Լեսթերը ոչինչ չարեց։ Կանցնի

ևս երկու տարի, և արդեն շատ ուշ կլինի։ Լոնդոնում նա Լեստրին ասում էր, որ ինքը համարյա այլևս իլյուզիաներ չունի։ Գուցե թե Ջեննին միակ իլյուզիա՞ն է։ Ի՞նչ է, նա իրո՞ք սիրում է նրան, թե՞ պարզապես խղճում է։ Լեստրի համար շատ հետաքրքիր էր պարզել այս հարցը։

Չիկագոյում Լեստրին մի շքեղ առանձնատուն վարձեց Դրեքսել բուլվարի վրա։ «Այս ամեռ ես Ձեր կողմերում եմ ապրելու,— գրում էր նա Լեսթերին,— և հուսով եմ, որ մենք հաճախ կհանդիպենք։ Ցինցիննատիում մեռնում եմ ձանձրույթից։ Եվրոպայից հետո այստեղ այնքան... դե, Դուք հասկանում եք։ Շաբաթ օրը տեսա միսիս Նոուլզին, նա Ձեր մասին էր հարցնում։ Նկատի ունեցեք, որ նա շատ լավ է վերաբերվում Ձեզ։ Գարնանը նրա աղջիկն ամուսնանալու է Ջիմ Սեվրենսի հետ»։

Լեսթերը միսիս Ջերալդի գալուն սպասում էր բավականության և անհարմարության խառն զգացմունքով։ Նա, իհարկե, իր մոտ երեկույթներ և ընդունելություններ կսարքի։ Ի՞նչ կլինի, եթե նրա խելքին փչի իրեն էլ հրավիրել Ջեննիի հետ միասին։ Բայց ոչ, հաղիվ թե։ Պետք է ենթադրել, որ հիմա արդեն նա իմացել է, թե ինչ դրություն է։ Նրա նամակից էլ այդ երևում է։ Նա «մտադիր է հաճախ հանդիպել իր հետ», նշանակում է՝ իր հետ և ոչ թե Ջեննիի։ Լեսթերը որոշեց ամեն ինչ անկեղծորեն պատմել Լեստրին և թողնել, որ նա ինքը որոշի, թե հետագայում ինչպիսին են լինելու իրենց հարաբերությունները։

Անկեղծ խոսակցության համար նա ընտրեց այն պահը, երբ ինքը հարմարավետ հյուրասենյակում նստած էր Լեստրի հետ, որը բաց դեղնավուն մետաքսե շորի մեջ ասես մի չքնաղ տեսիլք լիներ։ Հենց այդ ժամանակ էլ Լեսթերն սկսել էր կասկածել իր հողային գործերի հաջողությանը, տրամադրությունը վատ էր, և նա, ավելի քան երբևէ, կարեկցության և ըմբռնման կարիք ուներ։ Իր հոգսերի մասին նա Ջեննիին դեռ ոչ մի խոսք չէր ասել։

Երբ սպասուհին տիրուհուն թեյ մատուցեց, իսկ Լեսթե-

ին՝ կոնյակ ու սոդաջուր և հեռացավ, Լետտին որոշեց օգնել նրան և ինքը խախտեց լռությունը։

— Իսկ ես, Լեսթեր, Եվրոպայից վերադառնալուց հետո շատ բան եմ լսել ձեր մասին։ Պատմեցեք ինձ ձեր մասին։ Դուք հո գիտեք, թե որքան սրտիս մոտ եմ ընդունում ես այն ամենը, ինչ վերաբերում է ձեզ։

— Դուք ի՞նչ եք լսել, Լետտի,— հանգիստ հարցրեց Լեսթերը։

— Նախ՝ լսել եմ ձեր հոր կտակի մասին և որ դուք այլևս չեք մասնակցում ընկերության գործերին, և էլի ամեն տեսակ բամբասանքներ միսիս Քեյնի մասին, որոնք ինձ առանձնապես չեն հետաքրքրում։ Դուք ինձ հասկանում եք։ Բայց մի՞թե դուք չեք ուզում կարգավորել ձեր կյանքը, որպեսզի ստանաք այն, ինչ իրավամբ ձեզ է պատկանում։ Ինձ թվում է, դա այնպիսի մի հսկայական զոհաբերություն է, եթե, իհարկե, դուք իսկական խոր զգացմունք չունեք։ Ճիշտ չե՞մ ասում, Լեսթեր,— հարցրեց նա խորամանկորեն։

Լեսթերը միանգամից պատասխան չտվեց։

— Զգիտեմ նույնիսկ, թե ինչ ասեմ ձեզ, Լետտի։ Երբեմն ինձ թվում է, թե սիրում եմ նրան, երբեմն էլ ամենևին չեմ հավատում դրան։ Ես ձեզ հետ միանգամայն անկեղծ կխոսեմ։ Կյանքումս երբեք ես այսպիսի դժվարին դրության մեջ չեմ եղել։ Դուք ինձ հետ այնպես լավ եք վարվում, իսկ ես... չեմ ասի, թե ինչ կարծիքի եմ ձեր մասին։ Բայց, համենայն դեպքս, չեմ ուզում ձեզանից գաղտնիք ունենալ։ Ես ամուսնացած չեմ։

Նա լռեց։

— Ես այդպես էլ մտածում էի,— ասաց Լետտին։

— Եվ ամուսնացած չեմ նրա համար, որ շատ երկար ժամանակ եմ տատանվել։ Երբ առաջին անգամ Ջեննիին տեսա, մտածեցի, որ դրանից ավելի հրապուրիչ կին աշխարհում չկա։

— Այն ժամանակ ես ձեզ համար մի մեծ բան չէի,— ընդհատեց նրան միսիս Ջերալդը։

— Եթե ուզում եք, որ ես խոսեմ, մի ընդհատեք ինձ,— ժպտաց Լեսթերը։

— Միայն մի բան ասացեք ինձ, և ես այլևս ոչինչ չեմ հարցնի։ Այդ Քլիվլենդո՞ն էր։

— Այո։

— Ինձ այդպես էլ ասել են,— հաստատեց նա։

— Նրա մեջ կար այնպիսի մի...

— Սեր առաջին հայացքից,— նորից չհամբերեց Լետտին. նրա հոգին շատ էր դառնացել։— Այդպես լինում է։

— Դուք ինձ կթողնե՞ք խոսել։

— Ներեցեք ինձ, Լեսթեր։ Ի՞նչ կարող եմ անել, եթե անցյալը հիշելով տրտմություն իջավ վրաս։

— Եվ, ընդհանրապես, գլուխս կորցրի։ Ես նրա մեջ տեսնում էի իդեալ, կատարելություն, թեպետև գիտեի, որ իմ շրջանի մարդ չէ նա։ Մենք ապրում ենք դեմոկրատական երկրում։ Ես մտածում էի՝ կկենակցեմ նրա հետ, իսկ հետո... Դե, դուք գիտեք, թե ինչպես է լինում այդ։ Եվ ահա, դրանով էլ ես սխալ թույլ տվի։ Երբեք ես չէի մտածում, թե սա այսպես լուրջ կստացվի։ Մինչ այդ, ինձ դուր չէր եկել ոչ մի կին, բացի ձեզանից, այն էլ,— անկեղծ կլինեմ,— ես ամենևին համոզված չէի, թե կոզենայի ամուսնանալ ձեզ հետ։ Ինձ թվում էր, թե ընդհանրապես ամուսնությունն ինձ համար չի։ Եվ ինքս ինձ ասացի. թող միայն Ջեննին իմը դառնա, իսկ հետո, երբ կձանձրացնի, կարելի է և բաժանվել։ Ես կհոգամ, որ նա կարիքի մեջ չլիներ։ Մնացած ամեն ինչը ինձ համար նշանակություն չուներ։ Նրա համար ևս։ Հասկանո՞ւմ եք։

— Հասկանում եմ,— պատասխանեց Լետտին։

— Եվ ահա, Լետտի, դրանից ոչինչ դուրս չեկավ։ Նա բոլորովին ուրիշ խառնվածքի կին է։ Նրա հոգեկան աշխարհը արտասովոր հարուստ է։ Նա կրթված չէ մեր ըմբռնողությամբ, բայց բնածին նրբանկատություն և տակտ ունի։ Նա հիանալի տանտիրուհի է, անբասիր մայր։ Նա մարդկանց նկատմամբ սիրո մի անսպառ աղբյուր ունի։ Նա ամբողջ հոգով նվիրված էր հորն ու մորը։ Իր աղջկան—այն նրա աղջիկն է, և ոչ թե իմը—նա սիրում է անսահմանորեն։ Նրբ-

բակրթություն նա ամենևին չունի։ Նա երբեք չի փայլի մի դիպուկ խոսքով, ընդունակ չէ մասնակցելու թեթև, սրամիտ խոսակցության։ Եվ հավանորեն արագ էլ չի մտածում։ Նույնիսկ նրա ամենալուրջ մտքերը միշտ չէ, որ արտահայտվում են բառերով, բայց դժվար չէ հասկանալ, որ նա միշտ մըտածում է և զգում։

— Դուք հիանալի եք խոսում նրա մասին, Լեսթեր,— ասաց միսիս Ջերալդը։

— Հապա էլ ինչպե՞ս, Լետտի,— պատասխանեց նա։— Ջեննին լավ կին է։ Բայց ինչ էլ որ ասեմ, երբեմն ինձ թվում է, որ նրա հետ ինձ կապում է միայն խղճահարությունը։

— Կասկածում եմ,— ասաց Լետտին, մատով սպառնալով նրան։

— Այո, այո, բայց ես շատ բան եմ կրել։ Հիմա եմ տեսնում, որ պետք է միանգամից ամուսնանայի նրա հետ։ Բայց հետո այնպիսի բարդություններ առաջացան և այնքան վեճեր ու հորդորներ եղան, որ ես մի տեսակ խճճվեցի։ Իսկ հետո էլ՝ հորս կտակը։ Ես, եթե ամուսնանամ, կորցնում եմ ութսուն հազար, այսինքն՝ նույնիսկ շատ ավելի, քանի որ ընկերությունն այժմ վերակազմվել է որպես տրեստ։ Այո, ավելի ճիշտ՝ երկու միլիոն։ Եթե չամուսնանամ, երկու տարուց հետո, նույնիսկ ավելի շուտ, կզրկվեմ կտրականապես ամեն ինչից։ Իհարկե, կարելի էր ձևացնել, թե ես նրանից բաժանվել եմ, բայց ստել չեմ ուզում։ Դա շատ տանջալից բան կլիներ նրա ինքնասիրության համար, նա արժանի չէ այդպիսի վերաբերմունքի։ Ջեռքս սրտիս վրա դնելով, ես հիմա նույնիսկ չեմ կարող ասել՝ ուզո՞ւմ եմ նրանից բաժանվել թե ոչ։ Անկեղծ ասած՝ ուզղակի չգիտեմ, թե ինչ անեմ։

Լեսթերը լռեց, սիգար վառեց և ցրիվ հայացքն ուղղեց լուսամուտից դուրս։

— Այո, դա շա՞տ, շատ դժվար խնդիր է,— ասաց Լետտին, հայացքը ցած գցելով։

Հետո տեղից վեր կացավ և Լեսթերին մոտենալով՝ ձեռքը դրեց նրա խոշոր, գեղեցիկ գլխին։ Անուշահոտ ջրով օծված նրա հագուստի մետաքսը դիպավ Լեսթերի մեջքին։

— Խե՜ղճ Լեսթեր,— ասաց նա։— Ա՛յ թե հանգույցի եք դեմ առե՜լ։ Բայց դա գորդյան հանգույցն է, սիրելիս, և հարկավոր է կտրել այն։ Ինչո՞ւ դուք այս ամենը չեք քննարկում հենց նրա հետ, ահա, ինչպես հիմա ինձ հետ եք խոսում, և չեք պարզում, թե ինչ է մտածում նա ինքը։

— Դա շատ դաժան բան կլիներ,— ասաց Լեսթերը։

— Բայց հո մի բան պետք է անել, Լեսթեր, հավատացնում եմ ձեզ,— պնդեց Լետտին։— Չի կարելի այլևս լող տալ հոսանքն ի վար։ Դրանով դուք ձեզ խիստ կվնասեք։ Ամուսնանալ՝ ես ձեզ չեմ կարող խորհուրդ տալ։ Եվ ճիշտ որ ես իմ մասին չեմ հոգում։ Ասենք, ի դեպ, ես ուրախությամբ կամուսնանայի ձեզ հետ, թեև մի ժամանակ դուք անտեսում էիք իմ սերը։ Չեմ թաքցնի։ Միևնույն է, կգաք դուք ինձ մոտ թե չէ՝ ես ձեզ սիրում եմ և միշտ պիտի սիրեմ։

— Ես այդ գիտեմ,— ասաց Լեսթերը։

Նա վեր կացավ, Լետտիի երկու ձեռքն էլ առավ իր ձեռքերի մեջ և նայեց նրա աչքերին։ Հետո շուռ եկավ։ Լետտին նրա հայացքից հուզված՝ խոր շունչ քաշեց։

— Ոչ, Լեսթեր,— շարունակեց նա,— ձեզ պես մեծ մարդը չի կարող զոհանալ տարեկան տասը հազար եկամուտով։ Եվ չի կարելի, որ դուք ձեռքներդ ծալած նստեք. ձեզ շատ լավ են ճանաչում։ Դուք պետք է նորից ձեր տեղը գրավեք և՛ գործարար աշխարհում, և՛ հասարակության մեջ։ Ոչ ոք ձեզ խոչընդոտ չի լինի, ոչ մի ծպտուն չի հանի ձեր անցյալի մասին։ Միայն ստացեք հայրական ունեցվածքից ձեր բաժինը, և դուք ինքներդ կարող եք պայմաններ թելադրել։ Իսկ Ջեննին, եթե ճշմարտությունն իմանա, երևի չի առարկի։ Եթե նա ձեզ սիրում է, ինչպես ասում եք դուք, ուրախությամբ զոհաբերության կգիմի։ Սրան ես չեմ կասկածում։ Դուք, հասկանալի է, առատորեն կապահովեք նրան։

— Ջեննիին փողը չի հարկավոր,— մռայլ առարկեց Լեսթերը։

— Դե, միևնույն է, նա կարող է առանց ձեզ էլ ապրել, իսկ եթե փող շատ ունենա, ավելի հեշտ ու հետաքրքիր կապրի։

— Քանի ես ողջ եմ, նա ոչ մի բանի պակասություն չի ունենա,— հանդիսավոր ձևով ասաց Լեսթերը։

— Դուք պետք է նրանից հեռանաք, պետք է հեռանաք,— պնդում էր Լետտին ավելի ու ավելի համառորեն։— Ամեն մի օրը թանկ է։ Ինչո՞ւ այդ շորոշել և չանել հենց հիմա, հենց այսօր։ Ինչո՞ւ։

— Մի՛ շտապեք,— առարկեց Լեսթերը։— Դա հեշտ բան չէ։ Ճիշտ որ ասեմ, ինձ սարսափեցնում է Ջեննիի հետ բաժանվելու միտքը։ Դա այնքա՞ն անարդարացի է նրա նկատմամբ, այնքա՞ն դաժան։ Ախր ես, սովորաբար, իմ անձնական գործերի մասին շատ եմ խոսում։ Եվ մինչև այժմ ես ոչ ոքի հետ չէի ուզում խոսել, նույնիսկ ծնողներիս հետ։ Բայց, չգիտես ինչու, ես ձեզ միշտ մոտիկ մարդ եմ զգացել, իսկ մեր վերջին հանդիպումից հետո միշտ մտածում էի, թե հարկավոր է ձեզ այս ամենը պատմել։ Եվ ուզում էի։ Դուք շատ թանկ եք ինձ համար։ Չգիտեմ, գուցե սա ձեզ տարօրինակ թվա ներկա պայմաններում, բայց այդպես է։ Նույնիսկ մտքովս չէր անցնում, որ դուք այդքան մոտիկ եք ինձ և՛ որպես մարդ, և՛ որպես կին։ Մի՛ կիսեք ձեր հոնքերը։ Չէ՞ որ դուք ուզում էիք ճշմարտությունը լսել։ Ահա ձեզ ճշմարտությունը։ Իսկ հիմա, եթե կարող եք, բացատրեցեք ինձ. ի՞նչ եմ ես։

— Ես չեմ ուզում ձեզ հետ վիճել, Լեսթեր,— ասաց Լետտին քնքշորեն դիպչելով նրա ձեռքին։— Ես միայն ուզում եմ սիրել ձեզ։ Ես հիանալի հասկանում եմ, թե այդ ամենն ինչպես է ստացվել։ Ես վշտանում եմ ինձ համար։ Եվ ձեզ համար եմ վշտանում։ Վշտանում եմ և...— նա կարկամեց,— միսիս Քեյնի համար։ Նա հմայիչ կին է։ Ինձ շատ է դուր գալիս։ Բայց նա այն կինը չէ, որ հարկավոր է ձեզ, Լեսթեր։ Հավատացեք ինձ, ձեզ ուրիշն է հարկավոր։ Լավ չէ, իհարկե, որ ես ու դուք նրա մասին այսպիսի բաներ ենք ասում, բայց չէ՞ որ սա ճշմարտություն է։ Ամեն ոք իր արժանիքներն ունի։ Եվ ես համոզված եմ, որ եթե դուք նրան ամեն ինչ ասեք այնպես, ինչպես հիմա ինձ ասացիք, նա կհասկանա և կհամաձայնի։ Եթե ես լինեի նրա տեղը, Լեսթեր, ճշմարիտ եմ ասում, բայց կթողնեի ձեզ։ Նրա համար էլ ցավալի կլինի, բայց

ձեզ բաց կթողնի։ Հավատացնում եմ ձեզ։ Ինձ թվում է, ես նրան ձեզանից վատ չեմ հասկանում, նույնիսկ ավելի լավ եմ հասկանում, որովհետև ես կին եմ։ Ա՜խ,— ավելացրեց նա մի պահ լռելուց հետո, —եթե ես կարողանայի ինքս խոսել նրա հետ։ Ես ամեն ինչ կբացատրեի նրան։

Լեսթերը նայում էր Լետտիին և զարմանում նրա եռանդով։ Նա գեղեցիկ էր, հրապուրիչ, նա այնքա՜ն շատ բան էր խոստանում...

— Մի՛ շտապեք,— կրկնեց Լեսթերը։— Թողեք, որ մտածեմ։ Ես դեռ շատ ժամանակ ունեմ։

Լետտին տրտմեց, բայց և համառեց.

— Պետք է գործել հենց հիմա,— կրկնեց նա Լեսթերին դարձնելով հայացքը, որի մեջ իր ամբողջ հոգին էր դրել։ Նա ձգտում էր այդ մարդուն և չէր ամաչում այդ ցույց տալ նրան։

— Դե ես կմտածեմ,— շփոթված ասաց Լեսթերը և շտապ նրան հրաժեշտ տալով հեռացավ։

ԳԼՈՒԽ LI

Լեսթերն արդեն բավական երկար և լրջորեն խորհել էր իր դրության մասին։ Նա գույք և որոշ քայլեր կաներ, և այն էլ շատ շուտով, եթե նրա տան կյանքը չմոայլեր այն տխուր հանգամանքներից մեկը, որոնք այնքան հաճախ խանգարում են մեր ծրագրերը։ Գերհարդի առողջությունն արագորեն սկսեց վատանալ։

Նա ստիպված եղավ աստիճանաբար ձեռք քաշել տան մեջ ունեցած իր բոլոր պարտականություններից, իսկ հետո էլ անկողին ընկավ։ Ջեննին հոգատարությամբ խնամում էր նրան, Վեստան նրան այցելում էր օրական մի քանի անգամ, երբեմն այցելում էր և Լեսթերը։ Գերհարդի մահճակալը դրված էր լուսամուտի մոտ, և նա ժամերով դիտում էր այգու ծառերը և նրանց ետևից երևացող փողոցը, մտածելով, թե հիմա ինչ վիճակում է տնտեսությունը առանց իր հսկողու-

թյան։ Նա համոզված էր, որ կառապան վուզոը լավ չի մաքրում ձիերին ու ձիասարքը, որ փոստատարը կանոնավոր չի բերում թերթերը, իսկ հնոցապանը խիստ շատ ածուխ է ծախսում, այնուամենայնիվ, տունն այնքան էլ տաք չէ։ Նրա ամբողջ կյանքը կազմում էին այս մանր հոգսերը։ Նա բնածին տնտես էր։ Ինքն անշեղորեն կատարում էր կամովին ստանձնած բոլոր պարտականությունները, և այժմ լրջորեն անհանգստանում էր, թե առանց իրեն ամեն ինչ թարս կգնա։ Ջեննին կապույտ մետաքսից կարված բամբակամեջ մի շքեղ խալաթ էր ընծայել նրան և մի զույգ տնային տաք մուճակներ, բայց ծերունին դրանք համարյա չէր հագնում։ Նա գերադասում էր մահճակալին պառկել, աստվածաշունչ ու լուսերական լրագրեր կարդալ և ընտանեկան նորություններ լսել Ջեննիից։

— Լավ կլիներ, մի դու իջնեիր ներքնատուն, տեսնեիր ինչ է անում այն սրիկան։ Մի տես, ինչ ցուրտ է սենյակներում,— գանգատվում էր Գերհարդը։— Ես գիտեմ, հիմա ինչով է զբաղված նա. նստել ու գիրք է կարդում, իսկ հնոցը վառելու մասին այն ժամանակ է մտածում, երբ լցրած ամբողջ ածուխն արդեն վերջացած է լինում։ Եվ գարեջուրն էլ այնտեղ հենց նրա ձեռքի տակ է։ Լավ կլիներ, դու մառանը փակեիր։ Ի՞նչ գիտես, թե ինչ մարդ է նա։ Գուցե սրիկայի մեկն է։

Ջեննին փորձում էր հորը համոզել, որ տանը բավական տաք է, որ հնոցապանը շատ լավ մարդ է, միանգամայն կարգին ամերիկացի, որ թե նա մի բաժակ գարեջուր էլ խմի, մի մեծ վնաս չի լինի։ Բայց Գերհարդն իսկույն սկսում էր բարկանալ։

— Ա՛յ, դուք միշտ այդպես եք,— տաքացած կրկնում էր նա։— Տնտեսությունից ոչինչ չեք հասկանում։ Բավական է, որ ես ձեռքս ետ քաշեմ, ամեն ինչ շուռ կգա։ «Լա՞վ մարդ է». որտեղի՞ց գիտես, որ նա լավ մարդ է։ Հնոցը վառո՞ւմ է ինչպես հարկն է։ Ո՛չ։ Ծառուղիներն ավլո՞ւմ է։ Ո՛չ։ Լա՞վ պտուղներ են դրանք։ Աչք է հարկավոր դրանց, հսկող աչք։ Դու ինքդ պետք է տնտեսությանը հսկես։

— Լավ, հայրիկ, ես կհսկեմ,— սիրալիր հանգստացնում էր նրան Ջեննին։— Դու մի՛ անհանգստացիր։ Իսկ գարեջուրը կվակեմ։ Մի գավաթ սուրճ չբերե՞մ քեզ պաքսիմատով։

— Ոչ,— հառաչում էր Գերհարդը,— իմ ստամոքսն ինչ-որ կարգին չէ։ Գոնե մի շուտ լավանայի։

Ջեննին հորը նայելու հրավիրեց բժիշկ Մեյկինին, մի հասակավոր, փորձված բժիշկ, որ լավագույնն էր համարվում քաղաքի այդ մասում։ Նա ասաց, որ հիվանդին հարկավոր է հանգիստ, կարելի է տալ տաք կաթ, սրտային կաթիլներ, բայց Ջեննիին նախազգուշացրեց, որ լիակատար առողջանալու հույս լինել չի կարող։

— Ինչ էլ լինի՝ տարիներն իրենցն անում են։ Նա շատ է թուլացած։ Մի քսան տարի առաջ լիներ՝ ես նրան ոտի կը-կանգնեցնեի, բայց այսպես... Ասենք, բանն այնքան էլ վատ չէ։ Հնարավոր է, որ դեռ կապրի, գուցե և անկողնից վեր կը-կենա, թեև սրան ես չեմ երաշխավորում։ Դե գիտեք, էլի՛, ոչ ոք հավիտենական չէ։ Այ, ես ամենևին չեմ անհանգստանում, որ ինձ քիչ կյանք է մնացել։ Ապրել եմ մինչև ծերություն, այդքանն էլ բավական է։

Հոր մոտալուտ մահվան միտքը տխրեցնում էր Ջեննի-ին, բայց նրան սփոփում էր այն, որ հայրն իր վերջին օրերն անց է կացնում հանգիստ, ամեն ինչ ունի և շրջապատված է հոգատարությամբ։

Շուտով բոլորի համար պարզ դարձավ, որ Գերհարդը իր վերջին օրերն է ապրում, և Ջեննին որոշեց եղբայրներին ու քույրերին տեղեկություն տալ։ Հոր հիվանդության մասին նա գրեց Բասսին, բայց սա պատասխան նամակով հայտ-նեց, որ խիստ զբաղված է և հազիվ թե կարողանա գալ, եթե միայն անմիջական վտանգ չկա։ Նա գրում էր նաև, որ Ջոր-ջը ապրում է Ռոչեստերում, աշխատում է, կարծեմ, Շեֆֆ-Ջեֆերսոն ընկերության պաստառի ֆաբրիկայում, Մարթան ամուսնու հետ գնացել է Բոստոն, ապրում են Բալթիմորում, դա քաղաքամերձ թաղ է, կենտրոնից ոչ շատ հեռու։ Ուիլյամն Օմախումն է, աշխատում է էլեկտրական ընկերությունում որպես տեխնիկ։ Վերոնիկան ամուսնացել է, նրա ամուսին

Ալբերտ Շերիդինը ծառայում է Քլիվլենդում, դեղատնային ապրանքների պահեստում։ «Նա ինձ մոտ երբեք չի լինում,— նեղացած ավելացնում էր Բասսը,— բայց ես նրան իմաց կտամ»։ Ջեննին բոլորին մի-մի նամակ գրեց։ Քույրերից հակիրճ պատասխաններ եկան. նրանք շատ են ցավում, և եթե մի բան պատահի, թող Ջեննին իմաց տա իրենց։ Հորջը գըրեց, թե ինքը մտածել անգամ չի կարող Չիկագո հասնել, եթե հոր վիճակը բոլորովին վատ չէ, և խնդրում էր իրեն տեղյակ պահել։ Ուիլյամը, ինչպես հետո իմացավ Ջեննին, նրա նամակը չէր ստացել։

Ջեննին ծանր էր ապրում հոր դանդաղ մահը։ Անցյալում նրանք սառն էին եղել իրար հետ, բայց վերջին տարիներս շատ էին մտերմացել։ Գերհարդը վերջապես հասկացել էր, որ իր կողմից մերժված դուստրը ինքը բարությունն է, մանավանդ, իր նկատմամբ ունեցած վերաբերմունքով։ Ջեննին երբեք չէր վիճում հոր հետ, ոչ մի բանում չէր հակառակվում նրան։ Հիվանդության ժամանակ նա ամեն օր շատ ու շատ անգամ մտնում էր հոր մոտ, հարցնում էր, թե ինչ է ուզում, հավանե՞ց արդյոք ճաշը կամ նախաճաշը։ Երբ հայրն ավելի ծանրացավ, Ջեննին երկար ժամանակ նստում էր նրա կողքին գիրքը կամ կարը ձեռքին։ Մի անգամ, երբ Ջեննին հոր բարձն էր ուղղում, նա աղջկա ձեռքը բռնեց ու համբուրեց։ Ջեննին զարմացած՝ գլուխը բարձրացրեց, նրա սիրտը թրթռաց։ Գերհարդի տեսքն անօգնական էր ու խղճուկ, նրա աչքերում արցունք էր շողում։

— Դու բարի աղջիկ ես, Ջեննի,— ասաց հայրը կերկերուն ձայնով։— Դու լավ ես վարվում ինձ հետ։ Ես հաճախ եմ բարկանում ու փնթփնթում, բայց չէ՞ որ ես ծեր եմ։ Դու նեբիր ինձ։

— Ի՞նչ ես ասում, հայրիկ,—համարյա լալագին աղաչել սկսեց աղջիկը։— Ի՞նչը պիտի ներեմ ես։ Ես եմ, որ պետք է ներողություն խնդրեմ քեզանից։

— Ոչ, ոչ,— ասաց հայրը։ Ջեննին ծունկ չոքեց նրա մահճակալի առաջ և սկսեց լալ։ Հայրը ցամաքած, դեղնած ձեռքով շոյեց նրա գլուխը։— Մի լար,— մեղմ ասաց նա,—

հիմա ես շատ բան եմ հասկանում։ Մարդ ինչքան ապրի, այնքան բան կսովորի։

Ջեննին դուրս գնաց սենյակից, ասելով, թե ուզում է լվացվել, և երբ մենակ մնաց, ազատություն տվեց արցունքներին։ Մի՞թե, վերջապես, հայրը ներեց իրեն։ Իսկ ինքը որքա՞ն է խաբել նրան։ Նա ջանում էր ավելի մեծ հոգատարությամբ խնամել հորը, բայց դա հազիվ թե հնարավոր էր։ Իսկ Գերհարդն այդ հաշտությունից հետո կարծես ավելի երջանիկ դարձավ, ավելի անդորր, և նրանք միասին շատ լավ ժամեր անցկացրին։ Մի անգամ հայրն ասաց նրան.

— Գիտե՞ս, ես ինձ այնպես եմ զգում, ասես մի ջանել տղա լինեմ։ Եթե ոսկորներս չցավեին, ասես հենց հիմա պարել կսկսեի կանաչ խոտի վրա։

Ջեննին ժպտաց ու հեկեկաց։

— Շուտով դու կլավանաս, հայրիկ,— ասաց նա։— Կլավանաս, այն ժամանակ մենք միասին կառքով զբոսանքի կգնանք։

Նա նորից ուրախություն զգաց, որ իր շնորհիվ Գերհարդն իր վերջին տարիներին հոգս ու կարիք չունեցավ։

Լեսթերը ծերունու նկատմամբ ուշադիր էր և սիրալիր։ Ամեն երեկո նրա առաջին հարցն էր լինում. «Է՛, այսօր ինչպե՞ս է նա»,— և ճաշից առաջ անպայման մի քանի րոպեով մտնում էր հիվանդի սենյակը։

— Նրա տեսքը՝ ոչինչ,— ասաց նա Ջեննիին։— Կարծում եմ, որ դեռ երկար կապրի։ Դու մի՛ անհանգստանա։

Վեստան նույնպես շատ ժամանակ էր անցկացնում պապի մոտ, որի հետ կապվել էր քնքշորեն։ Նա պապի սենյակում բարձրաձայն սովորում էր իր դասերը, եթե այդ նրան չէր խանգարում, կամ թե նրա դուռը բաց թողնելով՝ դաշնամուր էր նվագում։ Լեսթերը Վեստային մի գեղեցիկ երաժշտական տուփիկ էր ընծայել, և նա երբեմն այդ տուփիկը լարում ու նվագում էր Գերհարդի սենյակում։ Պատահում էր, որ նրան ճնշում էր բոլորի ներկայությունը, բացի Ջեննիից։ Նա ուզում էր Ջեննիի հետ մենակ մնալ։ Այն ժամանակ Ջեն-

նին ձեռագործը վերցրած՝ սուսիկ-փուսիկ նստում էր նրա կողքին։ Նրա համար պարզ էր, որ շուտով վախճանը կգա։

Գերհարդն իրեն հավատարիմ մնալով խորհել էր ամեն ինչի մասին, թե ինչ պիտի անել իր մահից հետո։ Նա ցանկություն հայտնեց, որ իրեն թաղեն հենց այստեղ, Հարավային կողմի լութերական փոքրիկ գերեզմանատանը և որ հոգեհանգիստը կատարի իր հաճախած եկեղեցում իրեն դուր եկած պաստորը։

— Թող ամեն ինչ հասարակ լինի,— ասաց նա։— Ինձ կհագցնեք սև կոստյում և իմ կիրակնօրյա կոշիկները։ Փողկապս էլ թող լինի սև, քուղավոր։ Ուրիշ բան ինձ հարկավոր չէ։ Այդպես լավ կլինի։

Ջեննին նրան խնդրում էր այդպիսի բաների մասին չխոսել, բայց դա նրան բավականություն էր պատճառում։ Մի օր, ցերեկվա ժամը չորսին, նա խիստ թուլություն զգաց։ Ջեննին հոր ձեռքերը բռնած հետևում էր նրա ծանր շնչառությանը։ Մի երկու անգամ ծերունին աչքերը բացեց ու ժպտաց նրան։

— Ես մահից չեմ վախենում,— ասաց նա։— Ես արի ինչ կարող էի։

— Պետք չէ խոսել մահվան մասին, հայրիկ,— հառաչեց Ջեննին։

— Միևնույն է, վերջս հասել է,— ասաց հայրը։— Դու բարի ես եղել դեպի ինձ։ Դու լավ կին ես։

Սրանք նրա վերջին խոսքերն էին։ Ժամը հինգին մոտ նա վախճանվեց։

Այդ ծանր կյանքի հանգիստ ու պայծառ վախճանը խորապես ցնցեց Ջեննիին։ Նրա բարի, կարեկից սրտի մեջ Գերհարդն ապրում էր ոչ միայն որպես հայր, այլև որպես բարեկամ ու խորհրդատու։ Այժմ հայրը նրան պատկերանում էր իր իսկական տեսքով. ազնիվ, աշխատասեր մի գերմանացի, որ իր բոլոր ուժերը գործադրում էր, որպեսզի բարձրացնի իր ընտանիքը և անարատ կյանք վարի։ Ջեննին նրա ամենածանր բեռն էր, բայց այդպես էլ մինչև վերջ նա չիմացավ ամբողջ ճշմարտությունը նրա մասին։ Եվ Ջեննին մտածում էր, թե

սրտեղ է հիմա նա, դիտե՞ արդյոք, որ ինքը խաբել է նրան։ Եվ ներե՞լ է արդյոք։ Չէ՞ նա ասաց, որ Ջեննին լավ կին է։

Բոլոր զավակներին հեռագիր ուղարկեցին։ Բասսը պատասխանեց և հենց հետևյալ օրն էլ եկավ։ Մյուսները հեռագրեցին, թե գալ չեն կարող և խնդրում էին հաղորդել բոլոր մանրամասնությունները։ Ջեննին նրանց նամակներ գրեց։ Լութերական քահանան հանգուցյալի վրա աղոթքներ կարդաց և պայմանավորվեց թաղման օրվա մասին։ Թաղման կազմակերպումը հանձնարարվեց թաղման արարողությունների բյուրոյի գործակալին, որ մի հաստլիկ ու ինքնաբավ մարդ էր։ Եկան նաև հարևաններից ոմանք. ինչ էլ լիներ, բոլորը չէին խզել իրենց ծանոթությունն այդ տան հետ։ Թաղումը տեղի ունեցավ երրորդ օրը։ Լեսթերը Ջեննիի, Վեստայի և Բասսի հետ միասին գնաց լութերական աղյուսաշեն փոքրիկ եկեղեցին և քաջաբար նստած մնաց մինչև այդ տրտում ու շոր արարողության վերջը։ Նա հնազանդորեն լսեց անդրշիրիմյան կյանքի երանության մասին ասված երկար քարոզը և ամեն անգամ սրտնեղած կուչ էր գալիս, երբ դժոխքն էր հիշատակվում։ Բասսը նույնպես ձանձրանում էր, բայց իրեն պահում էր հավուր պատշաճի։ Գերհարգը վաղուց արդեն նրա համար օտար մարդ էր դարձել։ Միայն Ջեննին էր, որ անկեղծորեն սգում էր հոր մահը։ Նրա աչքի առջևով անցնում էր հոր ամբողջ կյանքը՝ հոգսերով ու զրկանքներով լի երկար տարիները, այն ժամանակները, երբ հայրը դռնեդուռ ման էր գալիս փայտ սղոցելու համար և երբ ապրում էր ֆաբրիկայի պահեստի տանիքում, հիշում էր Տասներեքերորդ փողոցի խրճռուկ տնակը, Քլիվլենդում, Լորրի-սթրիթում ապրած տանջալից օրերը, այն ամբողջ վիշտը, որ պատճառել էին նրան դստեր մեղքերը և կնոջ մահը, հիշում էր նրա քնքուշ հոգատարությունը Վեստայի նկատմամբ և, վերջապես, այս վերջին շաբաթները մահվանից առաջ։

«Նա շատ լավ մարդ էր,— մտածում էր Ջեննին։— Որքա՞ն էր աշխատում, որ ամեն ինչ լավ լինի»։ Երբ մի տխուր օրհներդ երգեցին, նա հեծկլտաց։

Լեսթերը նրա թևքը քաշեց։ Նա խորապես հուզված էր Ջեննիի վշտից։

— Այդպես չի կարելի,— շշնջաց նա։— Մյուսների մասին մտածիր։ Ես քո արցունքները տեսնել չեմ կարող և քիչ է մնում վեր կենամ ու գնամ։

Ջեննին հանդարտվեց, բայց զգում էր, թե ինչպես են կտրտվում իրեն հոր հետ կապող վերջին տեսանելի թելերը, և սիրար կտոր-կտոր էր լինում։

Լութերական գերեզմանատանը, որտեղ Լեսթերի կարգադրությամբ տեղ էին գնել, հասարակ դագաղը գերեզման իջեցրին և հողով ծածկեցին։

Լեսթերը մտախոհ նայում էր մերկ ծառերին, գորշացած շոր խոտին, պրերիայի՝ բահերով փորփրված թուխ հողին։ Գերեզմանատունը խղճուկ էր, բանվոր մարդու վերջին աղքատիկ օթևանը, բայց քանի որ Գերհարդը ցանկացել էր, որ իրեն հենց այդտեղ թաղեն, ուրեմն այդպես էլ պետք է։ Լեսթերը նայում էր Բասսի նիհար, խոհուն դեմքին և մտածում, թե ինչ ծրագրեր է քաշում նա ապագայի համար։ Չգիտես ինչու, նրան թվում էր, թե ծխախոտի առևտրի մեջ նա մեծ հաջողություն կունենա։ Նա տեսնում էր, թե ինչպես Ջեննին սրբում է իր կարմրած աչքերը և նորից ասում էր ինքն իրեն. «Այո, սա զարմանալի է»։ Նրա զգացմունքն այնքա՞ն անկեղծ էր և ուժեղ։ «Լավ կին—դա անբացատրելի հանելուկ է»,— մտածում էր նա։

Նրանք բոլորը միասին տուն էին վերադառնում քամիոտ ու փոշոտ փողոցներով։

— Ջեննին չափից ավելի մոտիկ է ընդունում սրտին,— ասաց Լեսթերը։— Շատ դյուրազգաց է, դրա համար էլ կյանքը նրան շատ ավելի մռայլ է երևում, քան իրականում կա։ Մենք ամեն մեկս մեր ցավերն ունենք, մեկը՝ շատ, մեկը՝ քիչ, որոնք պետք է մի կերպ հաղթահարել։ Սխալ է, թե իբր որոշ մարդիկ շատ ավելի բախտավոր են մյուսներից։ Հոգսեր բոլորն էլ ունեն։

— Ի՞նչ կարող եմ անել,— ասաց Ջեննին,— եթե որոշ մարդկանց ես այնքան խղճում եմ։

— Ջեննին միշտ էլ զգայուն է եղել,— վրա բերեց Բասսը։

Նա շարունակ մտածում էր, թե ի՞նչ երևելի մարդ է Լեոթերը, որքա՞ն շքեղ են ապրում նրանք, ի՞նչ նշանավոր տիկին է դարձել իր քույրը։ Երևում է ինքը ժամանակին չի հասկացել, թե ինչ է ներկայացնում նա իրենից։ Որքա՞ն տարօրինակ է ստացվում կյանքում. ախր դեռ վերջերս էր, որ ինքը կարծում էր, թե Ջեննին ոչ մի բանի պետք չէ, և նրա կյանքն անհուսալիորեն կործանված է։

— Այնուամենայնիվ, դու աշխատիր քեզ հավաքել, հասկացիր, որ կյանքում կատարված ամեն մի դեպք չի կարելի որպես աղետ ընդունել,— վերջում ասաց Լեսթերը։

Բասսը համամիտ էր նրան։

Ջեննին լուռ դուրս էր նայում կառեթի լուսամուտից։ Ահա հիմա իրենք կվերադառնան իրենց հսկայական հանդարտ տունը, իսկ Գերհարդն այլևս այնտեղ չէ։ Ծանր է մտածել, որ ինքն այլևս երբեք նրան չի տեսնելու։ Կառեթը շուտ եկավ դեպի բակը։ Ժաննետը, որ արդեն հանդարտվել էր լացից, հյուրասենյակում թեյի սեղան էր բացում։ Ջեննին սկսեց զբաղվել իր սովորական գործերով։ Նրանից չէր հեռանում մի միտք՝ ինչ-որ մի բան է լինելու իր հետ մահվանից հետո։

ԳԼՈՒԽ LII

Գերհարդի մահվանը Լեսթերը բավական անտարբեր էր, նա միայն կարեկցում էր Ջեննիին։ Ինքը գնահատում էր ծնրունու անվիճելի հատկությունները, բայց անձնապես կապված չէր նրա հետ։ Նա մի տասն օրով Ջեննիին ծովափ տարավ, որպեսզի մի քիչ հանգստանա ու կազդուրվի, իսկ Չիկագո վերադառնալուց հետո շատ չանցած՝ վերջապես որոշեց տեղյակ դարձնել նրան իր գործերին և նրա հետ միասին քննել դրությունը։ Այս խնդիրը մասամբ դյուրացնում էր այն հանգամանքը, որ հողային գործերում ունեցած իր անհաջողությունը Ջեննին արդեն գիտեր։ Նրա համար գաղտնիք չէր

նաև Լեսթերի այցելությունները միսիս Ջերալդին. Լեսթերն ինքն էր ասել, որ շարունակում է այդ ծանոթությունը։ Մի անգամ միսիս Ջերալդը նրան հյուր հրավիրեց Ջեննիի հետ միասին, բայց ինքը նրանց մոտ չեկավ և, ինչպես լավ հասկանում էր Ջեննին, մտադիր էլ չէր գալ։ Հորը թաղելուց հետո Ջեննին սկսեց ավելի շատ մտածել իր հետագա վիճակի մասին։ Նա այլևս հույս չուներ, թե Լեսթերը կամուսնանա իր հետ, և Լեսթերի վարմունքի մեջ էլ ոչ մի բան այդպիսի հույսի առիթ չէր տալիս։

Պատահեց այնպես, որ այդ ժամանակ Ռոբերտն էլ հանդիպեց այն հետևության, թե հարկավոր է վճռական քայլեր անել։ Նա այլևս հնարավոր չէր համարում, թե կարող է ազդել Լեսթերի վրա—այդ ուղղությամբ նախկին փորձերն էլ բավական էին— բայց ինչո՞ւ փորձ չանել համաձայնության գալու Ջեննիի հետ։ Ամենայն հավանականությամբ նա կարող է լսել բանականության ձայնը։ Եթե մինչև այժմ Լեսթերը նրա հետ չի ամուսնացել, Ջեննին, իհարկե, հասկանում է, որ նա այդպիսի մտադրություն չունի։ Հարկավոր է, որ մի որևէ հուսալի մարդ տեսնվի նրա հետ, բացատրի դրությունը և, հասկանալի է, պատկառելի ապահովություն առաջարկի։ Գուցե նա կհամաձայնի հեռանալ Լեսթերից և վերջ տալ այս անհաճո պատմությանը։ Ինչ էլ լինի, Լեսթերն իր եղբայրն է, և ցավալի կլինի, եթե նա զրկվի իր կարողությունից։ Ռոբերտն այժմ կարող էր այդ մեծահոգի քայլն անել. նա արդեն հիմնավորապես իր ձեռքն է վերցրել նոր տրեստի գործերը։ Վերջ ի վերջո նա որոշեց, որ ամենահարմար միջնորդը կարող է լինել միստր Օ'Բրայենը «Նայթ, Քիթլի և Օ' Բրայեն» իրավաբանական գրասենյակից։ Նա սիրալիր, բարեսիրտ ու քաղաքավարի մարդ է, իզուր չէ, որ իրավաբան է։ Նա կկարողանա քաղաքավարի ձևով Ջեննիին բացատրել, թե ինչպե՞ս են նայում իրեն Լեսթերի հարազատները և թե Լեսթերն ինչից կզրկվի, եթե ձեռք չքաշի նրանից։ Եթե Լեսթերն ամուսնացած է, Օ'Բրայենը կկարողանա իմանալ այդ։ Ջեննին կապահովվի, նա կստանա հիսուն, հարյուր, թեկուզ հարյուր հիսուն հազար դոլլար։ Ռոբերտն իր մոտ հրավիրեց միստր Օ'

Բրայենին և համապատասխան հրահանգներ տվեց նրան, նախապես բացատրելով, թե քանի որ նա Արչիբալդ Քեյնի կտակակատարն է, նրա պարտականությունների մեջ է մտնում նաև հոգալ, որ Լեսթերը համապատասխան որոշում ընդունի։

Միստր Օ՝ Բրայենը մեկնեց Չիկագո։ Հենց կայարանից զանգահարեց Լեսթերին և մեծ գոհունակությամբ իմացավ, որ նա ամբողջ օրով բացակայելու է քաղաքից։ Այն ժամանակ նա գնաց Հայդ-Պարկ և Ժաննետին տվեց իր այցետոմսը։ Մի քանի րոպեից հետո ներկայացավ Ջեննին, ամենևին չկասկածելով, թե ինչպիսի կարևոր հանձնարարությամբ է իր մոտ եկել այդ մարդը։ Միստր Օ՝ Բրայենը նրան բարևեց ամենասիրալիր ձևով։

— Ես պատիվ ունեմ խոսելու միսիս Քեյնի՞ հետ,— հարցրեց նա գլուխը մի կողմի վրա թեքելով։

— Այո,— պատասխանեց Ջեննին։

— Ինչպես դուք կարող էիք համոզվել, իմ այցետոմսը տեսնելով, ես միստր Օ՝ Բրայենն եմ, «Նայթ, Քիթլի և Օ՝ Բրայեն» ֆիրմայից։ Մենք ձեր ըմմ... միստր Քեյնի հոր՝ հանգուցյալ միստր Արչիբալդ Քեյնի հավատարմատարն ենք և կտակակատարը։ Իմ այցելությունը կարող է ձեզ տարօրինակ թվալ, բայց բանն այն է, որ միստր Քեյնի հոր կտակի մեջ կան որոշ վերապահումներ, որոնք շատ են վերաբերում նրան և ձեզ։ Այդ կետերն այնքան էական են, որ ես անհրաժեշտ եմ գտնում ծանոթացնել ձեզ դրանց, եթե, իհարկե, միստր Քեյնն ինքը չի արել այդ։ Ես... ներեցեք ինձ, բայց նկատի առնելով այդ կետերի բնույթը, ես պատրաստ եմ ենթադրելու, որ նա դրանց մասին ոչինչ չի ասել։

Միստր Օ՝ Բրայենը մի պահ լռեց, իր ամբողջ կեցվածքով, դեմքի յուրաքանչյուր գծով հարցականի տեսք ընդունելով։

— Ես այնքան էլ լավ չհասկացա,— ասաց Ջեննին։— Կտակի մասին ես ոչինչ չգիտեմ։ Եթե այնտեղ կա մի բան, որ ես պետք է իմանամ, միստր Քեյնը երևի կասի ինձ։ Առայժմ նա ոչինչ չի ասել։

— Ա՜,— գոհունակությամբ շունչ առավ միստր Օ՝Բրա-

յենը։— Նշանակում է ես չեմ սխալվել։ Դե ուրեմն թույլ տվեք համառոտակի պատմեմ ձեզ գործի էությունը, որից հետո դուք ինքներդ կորոշեք՝ ցանկանո՞ւմ եք մանրամասնություններն իմանալ։ Գուցե կնստեի՞ք։

Մինչ այդ նրանք խոսում էին կանգնած։ Ջեննին նստեց, և միստր Օ' Բրայենն էլ մի աթոռ քաշելով նստեց նրա կողքին։

— Այսպես ուրեմն, սկսենք,— ասաց նա։— Ես, իհարկե, հարկ չեմ համարում ասել, որ միստր Քեյնի հայրը շատ անբարյացակամ էր նայում ձեր և իր որդու կապին։

— Ես գիտեմ...— ուզեց սկսել Ջեննին, բայց և իսկույն լռեց։

Նա շվարած ու շփոթված էր, ինչ-որ վատ բանի հոտ էր զգում։

— Իր մահից քիչ առաջ,— շարունակեց իրավաբանը,— միստր Քեյնը վրդովված էր ունեցել ձեր...ըմմ...միստր Լեսթեր Քեյնի հետ։ Իր կտակի մեջ նա իր գույքի բաժանման վերաբերյալ մի քանի պայման է դրել, որոնք իր որդու... ըմմ... ձեր ամուսնու համար մի փոքր դժվարացնում են իրեն հասանելիք բաժնի ստացումը։ Սովորական պայմաններում նա կժառանգեր «Քեյն ընկերության» դրամագլխի մեկ քառորդ մասը, որ ներկայումս կազմում է մոտ մեկ միլիոն դոլլար, գուցե և ավելի։ Ինչպես և մնացած գույքի մեկ քառորդ մասը, որ գնահատվում է մոտավորապես հինգ հարյուր հազար։ Որքան ես կարող եմ դատել, միստր Քեյնը շատ էր ցանկանում, որ իր որդին ժառանգի այդ կարողությունը։ Բայց հոր դրած պայմանի համաձայն միստր Լեսթեր Քեյնը իր բաժինն ստանալ կարող է միայն այն դեպքում, եթե կատարի... ըմմ... մահից առաջ հայտնած նրա մի ցանկությունը։

Միստր Օ'Բրայենը լռեց, միայն աչքերն էին անհանգիստ այս ու այն կողմ դառնում։ Չնայած իր կանխակալ կարծիքին, նա արդեն զղջացել էր Ջեննիի հմայքը։ Նա արդեն հասկանում էր, թե ինչու Լեսթերը, հակառակ բոլոր խորհուրդներին ու հորդորներին, չէր ցանկանում բաժանվել նրանից։

Սպասելով Ջեննիի պատասխանին՝ նա աննկատելիորեն դիտում էր նրան։

— Եվ ի՞նչ ցանկություն է այդ,— վերջապես հարցրեց Ջեննին, երբ լարված լռությունն անտանելի դարձավ նրա համար։

— Ես շատ շնորհապարտ եմ ձեր այդ հարցի համար,— ասաց միստր Օ՚Բրայենը։— Ինձ համար շատ դժվար կլիներ խոսել այդ հարցի մասին, շատ դժվար։ Ես ձեզ մոտ եմ եկել որպես ֆիրմայի ներկայացուցիչ, որպես միստր Քեյնի կտակակատարներից մեկը։ Ես գիտեմ, թե որքան ցավագին է ապրում այդ ձեր... ըմմ... միստր Քեյնը, գիտեմ, ինչպես հիվանդագին կվերաբերվեք դուք դրան։ Բայց դա մեկն է այն ծանր դեպքերից, երբ հարցն անտեսել չի լինի, երբ այս կամ այն կերպ հարցը պիտի լուծել։ Եվ որքան էլ դժվար է ինձ համար, պետք է ձեզ ասեմ, որ միստր Արչիբալդ Քեյնը իր կտակում մի վերապահում է արել, որ եթե...— նրա աչքերը նորից, այս ու այն կողմ դարձան,— եթե իր որդին անհնարին համարի բաժանվել ձեզնից...— միստր Օ՚Բրայենը ծանր շունչ առավ,— նա ոչ մի ժառանգություն չի ստանա, ավելի ճիշտ՝ կստանա միայն տարեկան տասը հազար դոլար, մի աննշան եկամուտ, և այն էլ միայն այն պայմանով, որ ամուսնանա ձեզ հետ։— Նորից լռություն։— Ավելացնեմ նաև, որ ըստ կտակի՝ վերջնական որոշում ընդունելու համար նրան երեք տարի ժամանակ է տրված։ Եվ այդ ժամկետը մոտ ժամանակներս սպառվում է։

Նա լռեց, պատրաստ լինելով դիմանալու մի փոթորկալի տեսարանի, բայց Ջեննին միայն նրան դարձրեց զարմանքից, շփոթմունքից ու վշտից մշուշված իր հայացքը։ Նա հասկացավ, որ Լեսթերն իր սիրուն զոհաբերել է իր ամբողջ կարողությունը։ Անշարժ գույքի գործարքները մի փորձ է եղել ոտքի կանգնելու և իր անկախ վիճակը վերականգնելու։ Հիմա պարզ է, թե ինչու վերջին ժամանակներս նա հաճախ մտահոգ էր լինում, տրամադրությունն ընկած, անբավական։ Հայրը պարզապես նրան զրկել է ժառանգությունից։ Նա խո-

բապես զժբախտ է, նա շարունակ մտածում է առաջիկա իր կորուստի մասին, իսկ իրեն ոչ մի խոսք չի ասում։

Միստր Օ՝ Բրայենը ևս հուզված էր ու շփոթված։ Ջեննիի այլայլված դեմքը խղճահարությամբ համակեց նրան։ Բա՝ նա պարտավոր էր ամբողջ ճշմարտությունն ասել նրան։

— Ես շատ եմ ցավում,— նորից խոսեց նա, տեսնելով, որ Ջեննին չի պատասխանում,— շատ եմ ցավում, որ ինձ է վիճակվել հայտնելու ձեզ այս անհաճո նորությունը։ Հավատացնում եմ ձեզ, իմ դրությունն այնքան էլ դյուրին չէ։ Անձամբ ես ոչ մի վատ զգացմունք չունեմ ձեր նկատմամբ. այս դուք, իհարկե, հասկանում եք։ Քեյն ընտանիքը ևս ներկայումս ոչ մի վատ զգացմունք չունի ձեր նկատմամբ. հուսով եմ՝ դուք սրան կհավատաք։ Ինչպես կտակը կարդալու օրը ես ասացի միստր Քեյնին, անձամբ ես նրա հոր որոշումն անարդար եմ համարում, բայց, լինելով սոսկ նրա կամքի կատարողը, ես, հասկանալի է, ոչինչ չէի կարող փոխել։ Եվ ես զտնում եմ, որ դուք պետք է իմանաք ամբողջ ճշմարտությունը, որպեսզի դուք, եթե հնարավոր է, օգնեք ձեր... ձեր ամուսնուն...— նա մի բազմանշանակ լռություն տվեց,— հանգել այս կամ այն որոշմանը։ Ես, ինչպես և նրա ընտանիքի անդամները, խորապես ցավում ենք, որ նա կորցնում է իր կարողությունը։

Ջեննին, որ մինչ այդ նստած էր երեսը շուռ տված և գլուխը կախ, փաստաբանին նայեց հաստատուն, հանգիստ հայացքով։

— Նա իր կարողությունը չի կորցնի,— ասաց նա։— Դա անարդար բան կլիներ։

— Ինձ համար շատ ուրախալի է այդ խոսքը լսել ձեզանից, միսիս Քեյն,— ասաց նա, առաջին անգամ, հակառակ փաստերի, համարձակորեն դիմելով նրան որպես Լեսթերի կնոջ։— Խղճով ասած՝ ես վախենում էի, թե դուք այս նորությունը բոլորովին այլ կերպ կընդունեք։ Ձեզ, իհարկե, հայտնի է, որ Քեյն ընտանիքը պսակին հսկայական նշանակություն է տալիս։ Միսիս Քեյնը՝ ձեր ամուսնու մայրը, հպարտ կին էր, նույնիսկ մի փոքր գոռոզ։ Նրա քույրերն ու եղբայրը

միանգամայն որոշակի պահանջներ են ներկայացնում նրանց, ում կարող են ընդունել իրենց ընտանիքը։ Ձեր հարաբերությունները նրանք համարում են աննորմալ և— ներեցեք իմ ասելիքս խստությունը— անթույլատրելի։ Վերջին տարիներս այդ հարցն այնքան շատ էր քննարկվել, որ միստր Արչիբալդ Քեյնն արդեն հույս չուներ, թե դա կարելի է կարգավորել ընտանեկան բանակցություններով։ Նա գտնում էր, որ իր որդին հենց սկզբից սխալ է վարվել։ Ուստի և կտակում հատուկ պայման է դրել, որ ձեր ամուսինը... ներեցեք, որ իր որդին, եթե չցանկանա բաժանվել ձեղանից և ստանալ ժառանգության իր բաժինը, ապա գոնե մի բան ստանալու համար, այսինքն՝ տարեկան այն տասը հազարն ստանալու համար, որի մասին ասացի ես... ներեցեք ինձ, եթե իմ խոսքերը կոպիտ հնչեն, ճիշտն ասած՝ դա դիտավորյալ չի լինի,— նա պետք է ամուսնանա ձեզ հետ։

Ջեննին կծկվեց։ Ի՞նչ դաժան բան էր այդ ասել իր երեսին։ Այո, առանց ամուսնությունն օրինականացնելու կենակցելու փորձը լավ վերջանալ չէր կարող։ Եվ հիմա այս տխուր խճճված վիճակից միայն մեկ ելք կա. նրանք պետք է բաժանվեն։ Լեսթերն ապրի տարեկան տասը հազար դոլլարո՞վ. դա ուղղակի անհեթեթ բան է։

Միստր Օ'Բրայենը հետաքրքրությամբ նայում էր Ջեննիին։ Նրա կարծիքով Լեսթերը միայն մի սխալ է արել. ինչո՞ւ հենց այն ժամանակ չի ամուսնացել սրա հետ։ Ջեննին հմայիչ կին է։

— Ինձ մնում է էլի միայն մեկ բան ասել ձեզ, միսիս Քեյն,— խոսեց նա սիրալիր։— Այժմ ես հասկանում եմ, որ սա ձեզ համար նշանակություն չունի, բայց ես պետք է կատարեմ ամենը, ինչ ինձ հանձնարարված է։ Հուսով եմ, դուք իմ առաջարկությունը վատ չեք մեկնաբանի։ Գիտեմ, տեղյա՞կ եք արդյոք դուք ձեր ամուսնու ֆինանսական գործերին։

— Ոչ,— պարզորեն պատասխանեց Ջեննին։

— Դա միևնույն է։ Ահա ուրեմն, եթե դուք որոշեք օգնել ձեր ամուսնուն լուծելու այս բարդ հարցը, ձեր խնդիրը դյուրացնելու համար, անկեղծորեն ասեք, եթե դուք հարկ համա-

րեք ձեր սեփական նախաձեռնությամբ հեռանալ նրանից և առանձին ապրել, ես երջանիկ եմ ձեզ հաղորդելու, որ ուզածդ գումարը... ասեք... ըմ...

Ջեննին վեր կացավ և, ձեռքերն իրար սեղմելով, կույրի նման քայլեց դեպի լուսամուտը։ Միստր Օ' Բրայենը նույնպես վեր կացավ։

— Դա կլինի ձեր հայեցողությամբ։ Բայց ինձ հանձնարարված է ձեզ ասել, որ եթե դուք որոշեք խզել ձեր կապերը, ձեզ սիրով կտրամադրվի ուզածդ գումարը, որքան դուք ցանկանայք ասել—հիսուն, յոթանասունհինգ, հարյուր հազար դոլլար...— միստր Օ'Բրայենին թվում էր, թե ինքն արտասովոր առատաձեռն է ու ազնիվ։— Այդ գումարը, այսպես ասած, կպահվի ձեզ համար, որպեսզի դուք ուզած բոպեին կարողանաք պահանջել այն։ Դուք ոչ մի բանի կարիք չպետք է զգաք։

— Բավական է, խնդրում եմ ձեզ,— ասաց Ջեննին, զգալով, որ ինքն այլևս լսելու ուժ չունի և որ սոսկալի, համարյա ֆիզիկական ցավից ինքը, որտեղ որ է, կզրկվի խոսելու ընդունակությունից։— Խնդրում եմ ձեզ, մի' շարունակեք։ Խնդրում եմ թողնեք ինձ մենակ։ Ես կարող եմ նրանից հեռանալ։ Ես այդ կանեմ։ Ամեն ինչ լավ կլինի։ Բայց, խնդրում եմ, այլևս ոչ մի խոսք մի' ասեք ինձ։

— Ես լիովին հասկանում եմ ձեր զգացմունքները, միսիս Քեյն,— ասաց միստր Օ' Բրայենը, վերջապես գիտակցելով, թե ինքը ինչպիսի տառապանք պատճառեց նրան։— Հավատացեք, ես ամբողջ հոգով կարեկցում եմ ձեզ։ Ես ասացի այն ամենը, ինչ պիտի ասեի։ Դա դժվար բան էր, շատ դժվար։ Ցավալի անհրաժեշտություն։ Ձեր մոտ կա իմ այցեքարտը։ Ուզած ժամանակ կարող եք կանչել ինձ կամ նամակ գրել։ Այլևս ձեզանից ժամանակ չեմ խլի։ Ներողություն եմ խնդրում։ Հուսով եմ, դուք հարկ չեք համարի ձեր ամուսնուն պատմել իմ այցելության մասին։ Ավելի լավ կլիներ, եթե այդ հարցը դուք ինքնուրույն լուծեիք։ Ես շատ թանկ եմ գնահատում նրա համակրանքն ինձ։ Շատ եմ ցավում, ներողություն են խնդրում։

Ջեննին կանգնել էր լուռ, գլուխը կախ։

Միստր Օ' Բրայենն ուղղվեց դեպի նախասենյակ։ Ջեննին զանգի կոճակը սեղմեց, և Ժաննետը դուրս եկավ հյուրին ճանապարհ դնելու։ Օ' Բրայենն առույգ քայլել սկսեց այգու ծառուղիով, իսկ Ջեննին, մենակ մնալով, վերադարձավ գրադարան։ Նա նստել էր կզակը ձեռքերին հենած, և թուրքական մետաքսյա գորգի խայտաբղետ նախշերի մեջ նրան տարօրինակ պատկերներ էին երևում։ Ահա ինքը մեն-մենակ, միայն Վեստայի հետ գտնվում է մի փոքրիկ կոտեջում։ Ահա Լեսթերը հեռու է, ասես մի ուրիշ աշխարհում, և նրա կողքին է միսիս Ջերալդը։ Ահա ամայացել է իրենց հիանալի մեծ տունը, իսկ հետո ձգվեցին երկար տարիները, իսկ հետո...

Նա ծանր շունչ առավ՝ հեկեկանքը զսպելով, և այրող արցունքները լցվեցին նրա աչքերը։ Հետո նա վեր կացավ։

«Այդպես է հարկավոր,— մտածեց նա։— Վաղուց հարկավոր էր վերջ տալ սրան։— Եվ իսկույն էլ հիշեց.— ի՞նչ բախտ է, որ հայրիկը մեռավ, որ չապրեց մինչև այս օրը»։

ԳԼՈՒԽ LIII

Լեսթերն այլևս հնարավոր չէր համարում մնալ առանց բացատրության, անկախ նրանից, թե դա իրենց կապի խզման կհասցնի, թե օրինականացման։ Եվ այդ բացատրությունը տեղի ունեցավ Օ' Բրայենի այցելությունից շատ չանցած։

Այդ այցելության օրը Լեսթերը գնացել էր Հեղեվիշ՝ արդյունաբերական մի փոքրիկ քաղաք Վիսքոնսինում, ուր նրան հրավիրել էին լիֆտերի նոր մոտորի փորձարկմանը. նա մտադրություն ուներ այդպիսի մոտորներ արտադրող ընկերության բաժնետեր դառնալ։ Երբ հաջորդ օրը Լեսթերը վերադարձավ Հայդ-Պարկ, ըստ սովորության պատրաստ լինելով նույնիսկ այժմ, չնայած մտադիր էր բաժանվել Ջեննիից, պատմել նրան իր ուղևորության մասին,— նրան զարմացրեց տան մեջ տիրող վհատությունը. Ջեննին թեպետև խելամիտ ու

հաստատուն որոշման էր հանգել, ուժ չուներ թաքցնելու իր զգացմունքները։ Նա սխալ-սրտում իր ծրագրի մասին էր խորհում, շարունակ հիշելով, որ հեռանալն անհրաժեշտ է, բայց վախենալով, թե քաջություն չի ունենա խոսելու Լեսթերի հետ։ Իսկ հեռանալ առանց նրա հետ խոսելու՝ չի կարելի։ Նա պետք է համաձայնություն տա խզմանը։ Ջեննիի խոր համոզմամբ դա միակ ճիշտ ելքն էր։ Այն միտքը, թե Լեսթերը կարող է այդպիսի խոշոր զոհաբերություն անել իր համար, պարզապես չէր տեղավորվում նրա գլխում։ Նրան զարմացնում էր, թե Լեսթերն ինչպե՞ս է կարողացել մինչև հիմա լռել, երբ նրա ապագան այդքան վաղուց արդեն մաղից է կախված եղել։

Լսելով, որ Լեսթերը տուն մտավ, Ջեննին փորձեց նրան դիմավորել իր սովորական ժպիտով, բայց միայն ժպիտի նըման մի բան ստացվեց։

— Ամեն ինչ կարգի՞ն է,—հարցրեց նա, ինչպես հարցրնում էր ամեն օր։

— Իհարկե,— պատասխանեց Լեսթերը։— Իսկ քե՞զ մոտ ինչպես են գործերը։

— Ինչպես միշտ։

Նրանք միասին անցան գրադարան, և Լեսթերը բուխարիկին մոտենալով սկսեց շեղջը խառնել։ Հունվարյան ցուրտ օր էր, ժամը հինգին արդեն մթնել էր։ Ջեննին լուսամուտի վարագույրն իջեցրեց։ Երբ վերադարձավ Լեսթերի մոտ, Լեսթերը հարցական նայեց նրան։

— Այսօր դու ինչ-որ ամեն օրվա պես չես,—ասաց նա, միանգամից փոփոխություն նկատելով նրա մեջ։

— Չէ, ի՛նչ կա որ,— պատասխանեց Ջեննին, բայց նրա շրթունքները դողացին, և դա չվրիպեց Լեսթերի հայացքից։

— Ինձ թվում է, դու ինչ-որ բան ես թաքցնում ինձնից,— ասաց նա հայացքը չհեռացնելով Ջեննիից։ Ի՞նչ է եղել քեզ։ Որևէ բա՞ն է պատահել։

Ջեննին շուռ եկավ, որպեսզի շունչ առնի ու մտքերը ժողովի։ Ապա նորից հայացքը դարձրեց նրան։

— Այո, պատահել է,— ասաց նա։— Ես ուզում եմ մի բան ասել քեզ։

— Այդ ես տեսնում եմ։

Նա ժպտաց, թեև զգում էր, որ նրա խոսքերի տակ ինչ-որ լուրջ բան է թաքնված։

Ջեննին էլի մի պահ լռեց, շրթունքներն էր կրծոտում, չիմանալով ինչից սկսել և, վերջապես, խոսեց.

— Երեկ այստեղ մի մարդ կար. միստր Օ' Բրայենը՝ Ցինցիննատիից։ Դու ճանաչո՞ւմ ես նրան։

— Այո, ճանաչում եմ։ Ի՞նչ էր ուզում։

— Նա եկել էր ինձ հետ խոսելու քո և քո հոր կտակի մասին։

Նա լռեց, տեսնելով, թե ինչպես մռայլվեց Լեսթերի դեմքը։

— Նրա ի՞նչ գործն էր խոսել քեզ հետ իմ հոր կտակի մասին,— գոչեց նա։— Ինչե՞ր դուրս տվեց։

— Խնդրում եմ մի բարկացիր, Լեսթեր,— հանգիստ ասաց Ջեննին, հասկանալով, որ ոչինչ չի ստացվի, եթե չկարողանա պահպանել լիակատար ինքնատիրապետումը։— Միստր Օ' Բրայենն ինձ պատմեց, թե ինչպիսի զոհաբերություն ես անում դու, և նախազգուշացրեց, որ շատ քիչ ժամանակ է մնացել, և դու կարող ես կորցնել ժառանգության քո բաժինը։ Չե՞ս գտնում դու, որ ժամանակն է գործելու, որ ժամանակն է ինձ թողնելու։

— Նզո՛վք,— չարացած գոռաց Լեսթերը։— Ինչպե՞ս է համարձակվում նա քիթը խոթել իմ գործերի մեջ։ Մի՞թե չի կարելի հանգիստ թողնել ինձ։— Նա վրդովմունքով ուսերը թոթվեց։— Նզովյա՛լ լինեն նրանք,— նորից գոռաց նա։— Դա Ռոբերտի սարքած գործն է։ «Նայթ, Քիթլի և Օ' Բրայենն» ինչո՞ւ պիտի խառնվեին իմ գործերին։ Տես ի՞նչ աղմուկ կսարքեմ նրանց գլխին։

Նա կատաղել էր, դեմքն ամբողջովին կարմրել էր, աչքերից կայծեր էին թռչում։

Ջեննին նրա ցասումից վախեցած՝ ոչ մի խոսք ասել չկարողացավ։

Փոքր-ինչ հանգստանալուց հետո Լեսթերը հարցրեց.

— Եվ ի՞նչ ասաց նա քեզ։

— Ասաց, որ եթե դու ինձ հետ ամուսնանաս, տարեկան ընդամենը տասը հազար եկամուտ կունենաս։ Իսկ եթե չամուսնանաս, բայց առաջվա պես ապրես ինձ հետ, ոչինչ չես ստանալու։ Բայց եթե ինձանից հեռանաս կամ ես հեռանամ քեզանից, դու մեկուկես միլիոն դոլլար կստանաս։ Չե՞ս կարծում դու, որ մենք հենց հիմա պետք է բաժանվենք իրարից։

Նա մտադիր չէր այդպես շուտ տալ այդ ամենազլխավոր հարցը. բառերը դուրս թռան իր կամքին հակառակ։ Եվ նույն վայրկյանին նա հասկացավ, որ եթե Լեսթերն իսկապես սիրում է իրեն, վճռականորեն կպատասխանի՝ «ո՛չ»։ Իսկ եթե նրա համար միևնույն է, կսկսի տատանվել, ձգձգել և կաշխատի հետաձգել լուծումը։

— Չգիտեմ, թե ինչու,— առարկեց Լեսթերը ջղայնացած։— Անհրաժեշտություն չեմ տեսնում ոչ միջամտության համար, ոչ շտապ քայլերի։ Ինձ կատաղեցնում է, որ նրանք գալիս են այստեղ և քիթները խոթում ուրիշի գործերի մեջ։

Ջեննին խորապես խայթվեց նրա անտարբերությունից, սիրո փոխարեն զայրույթի այդ բռնկումից։ Նրա համար կարևորն սպասվելիք անջատումն էր, իսկ Լեսթերը նորից ու նորից վերադառնում էր Օ' Բրայենի այցելությանը։ Ինչ-որ մեկը համարձակվել է խառնվել նրա գործերին, երբ ինքը դեռ որոշում չի ընդունել. ահա թե ինչը նա մոռանալ չէր կարողանում։ Այնինչ Ջեննին, ինչ էլ որ լիներ, հույս ուներ, թե այդքան տարի միասին ապրելով, երբ և՛ ուրախությունը, և՛ վիշտը կիսել էին իրար հետ, Լեսթերը խորապես սիրում է իրեն, և այդ զգացմունքը նրան թույլ չի տա բաժանվել իրենից, եթե նույնիսկ բաժանումն անհրաժեշտ դառնա։ Ինչ անենք, որ նա չի ամուսնացել իր հետ. դրա համար այնքան լուրջ պատճառներ են եղել։ Բայց հիմա, երբ ամեն ինչ վերջացել է, նա կարող էր իր սիրո մասին խոսել նրա հետ, թեկուզև բաց թողնելուց առաջ։ Ջեննիին թվաց, թե այդքան տարի նրա հետ ապրած լինելով՝ ամենևին չի ճանաչում նրան և դրա

հետ միասին նա հասկանում էր նրան։ Նա յուրովի է սիրում իրեն։ Նա զեղումների ընդունակ չէ, չի կարող խոսել զգացմունքների մասին։ Մի ժամանակ նա կարողացավ նվաճել Ջեննիին և իրենը դարձնել, բայց նրա սերը չի բավականացնում, որ հիմա էլ պահի նրան, երբ խոչընդոտներ են ծագել։ Ահա հիմա նա որոշում է Ջեննիի բախտը։ Ջեննին տանջալից ցավ է զգում, սրտից արյուն է ծորում, բայց այս անգամ նրա որոշումը հաստատուն է։ Ուզում է Լեսթերը թե ոչ՝ ինքը չի թողնի, որ նա այդպիսի զոհաբերություն անի։ Ինքը պիտի հեռանա Լեսթերից, եթե նա ինքը չհեռանա։ Կարիք չկա, որ մնա։ Պատասխանը միայն մեկ բան կարող է լինել։ Բայց մի՞թե նա մի սիրալիր խոսք չի գտնի իր համար։

— Չե՞ս գտնում արդյոք, որ ժամանակն է գործի անցնելու,— շարունակեց Ջեննին, դեռևս հուսալով, թե նա կհիշի իրեն։— Չէ՞ որ բոլորովին քիչ ժամանակ է մնացել։

Նա մեքենայորեն ետ ու առաջ էր մղում սեղանին դրված գրքերը, մտածելով՝ միայն թե կարողանա պահպանել արտաքին հանգստությունը։ Էլ ի՞նչ անի ինքը, ի՞նչ ասի։ Լեսթերի զայրույթի բռնկումները միշտ էլ սարսափեցնում էին նրան։ Բայց չէ՞ որ հիմա նրա համար այնքան էլ դժվար չէ հեռանալ. նա միսիս Ջերալդ ունի։ Միայն թե ցանկանա, իսկ նա պետք է ցանկանա։ Չէ՞ որ կարողությունը նրա համար որքա՞ն ավելի կարևոր է, քան Ջեննին։

— Դա քո գործը չի,— կտրուկ ասաց Լեսթերը դեռևս զայրույթով լցված եղբոր, քույրերի, Օ՝ Բրայենի դեմ։—Ժամանակ կա։ Ես դեռ ոչինչ չեմ որոշել։ Չէ՞, մի տես ինչպիսի՞ լկտիություն։ Դե լավ, ես այլևս չեմ ուզում դրա մասին խոսել։ Ճաշը պատրաստ է։

Հիշելով միայն իր վիրավորված ինքնասիրությունը՝ Լեսթերը նույնիսկ նեղություն չէր տալիս իրեն քաղաքավարի խոսել։ Նա բոլորովին մոռացել էր Ջեննիին, նրա զգացմունքները։ Նա ատում էր Ռոբերտին և ուրախությամբ կոլորեր Նայթի, Քիթլիի և Օ՝ Բրայենի վիզը՝ առանձին-առանձին կամ բոլորինը միասին։

Հարցը, հասկանալի է, սպառված չէր, և նորից հարուց-

վեց արդեն ճաշի վրա։ Ջեննին մի փոքր հանգստացել էր և մտքերը ժողովել։ Վեստայի և Ժաննետի ներկայությամբ նա աղատ խոսել չէր կարող, բայց և այնպես մի նոր փորձ արեց։

— Ես կարող էի մի փոքրիկ կոտեջ վարձել,— կամացուկ ասաց նա, հուսալով, որ Լեսթերն արդեն հանդարտված կլինի։— Այստեղ մնալ չեմ ուզում։ Ի՞նչ պիտի անեմ մենակ այս հսկա տան մեջ։

— Խնդրում եմ վերջ տուր այդ խոսակցությանը,— կրտրուկ ընդհատեց նրան Լեսթերը։— Տրամադրություն չունեմ շարունակելու։ Ես դեռ ոչինչ չեմ որոշել։

Նա համառում էր, դեռևս զայրացած լինելով Օ'Բրայենի վրա, և Ջեննին, վերջապես, հանգիստ թողեց նրան։ Վեստան, որ սովոր էր խորթ հորը միշտ տեսնել սիրալիր ու քաղաքավարի, այժմ զարմանքով էր նայում նրա մռայլորեն կիտած հոնքերին։

Ջեննին արդեն այն տպավորությունն էր ստացել, որ եթե ինքը ցանկանա, կարող է պահել նրան. Լեսթերը շատ էր տատանվում։ Բայց Ջեննին այդ չէր ուզում անել։ Դա Լեսթերի նկատմամբ լավ վարմունք չէր լինի։ Եվ հենց իր նկատմամբ էլ դա կլիներ վատ, անողոք ու անկարգ բան։

Եվ հաջորդ օրը նա շարունակեց համոզել Լեսթերին.

— Այդպես է հարկավոր, Լեսթեր, հավատացնում եմ քեզ։ Ես այլևս քեզ չեմ ձանձրացնի, բայց այդպես է հարկավոր։ Ուրիշ կերպ վարվել ես քեզ թույլ չեմ տա։

Այս վեճը հիմա վերսկսվում էր ամեն օր՝ մերթ ննջարանում, մերթ գրադարանում, մերթ նախաճաշին, թեպետ միշտ չէր, որ արտահայտվում էր բառերով։ Ջեննին իր անհանգստությունը չէր թաքցնում։ Նա համոզված էր, որ հարկավոր է Լեսթերին ստիպել՝ գործի անցնել։ Երբ Լեսթերը նրա նկատմամբ ավելի ուշադիր, ավելի սիրալիր դարձավ, այս համոզմունքն ավելի ամրապնդվեց նրա մեջ։ Նա չէր իմանում, թե ինչ պիտի անել, բայց տխուր-տրտում նայում էր Լեսթերին՝ աշխատելով օգնել նրան, որ որոշում ընդունի։ Նա ինքն իրեն հավատացնում էր, որ երջանիկ կլինի, երբ իրենք վերջնականապես բաժանվեն, ինքը երջանիկ կլինի այն

մտքով, որ Լեսթերը հիմա երջանիկ է։ Նա լավ մարդ է, նրան տրված է ամեն ինչ, թերևս, բացի սիրո զգացմունքից։ Նա իրեն չի սիրում ինչպես հարկն է, թերևս, չի էլ կարող այն ամենից հետո, ինչ տեղի է ունեցել, թեև ինքը՝ Ջեննին խոստովանում է սիրում է նրան։ Իսկ նրա վրա ազդել է ընտանիքի կատաղի դիմադրությունը։ Այդ Ջեննին էլ հասկացել է։ Այժմ նրա համար պարզ էր, որ Լեսթերը, չնայած իր պայծառ խելքին, չի կարող դուրս պրծնել այդ կախարդական շրջանակից։ Նա շատ կարգին մարդ է, այնպես որ չի կարող կոպտաբար հանգույցը կտրել և լքել Ջեննիին, նա այնքան նրբանկատ է, որ չի կարող բացահայտորեն հոգալ իր շահերի մասին և Ջեննիի ապագայի մասին, բայց դա նրա պարտքն է։

— Որոշիր, Լեսթեր,— նորից ու նորից կրկնում էր Ջեննին։— Բաց թող ինձ։ Ինչո՞ւ ես տատանվում։ Ինձ համար վատ չի լինի։ Գուցե թե հետո, երբ ամեն ինչ կարգի կգա, դու կուզենաս վերադառնալ ինձ մոտ։ Եվ կվերադառնաս, ես կսպասեմ քեզ։

— Ես դեռ ոչ մի որոշման չեմ հանգել,— լինում էր նրա մշտական պատասխանը։— Ես ամենևին համոզված չեմ, թե ուզում եմ բաժանվել քեզանից։ Իմ կարողությունը, իհարկե, հետաքրքրում է ինձ, բայց փողը դեռ ամեն ինչ չէ։ Եթե պետք լինի, ես կարող եմ տարեկան տասը հազարով էլ ապրել։ Դա ինձ համար նորություն չէ։

— Այո, բայց հիմա դու հասարակության մեջ այնպիսի ականավոր դիրք ունես որ,— առարկում էր Ջեննին։—Հիմա դրա մասին մտածել անգամ չի կարելի։ Հիշիր, թե հենց միայն այս տունը որքան է նստում քեզ վրա։ Իսկ այստեղ հարցը վերաբերում է մեկուկես միլիոն դոլլարի. ես ուզղակի չեմ թույլ տա, որ դու դրանից զրկվես։ Ավելի լավ է ես ինքս կհեռանամ քեզանից։

— Իսկ ո՞ւր կգնայիր դու, եթե բանը դրան հասնի,— հարցրեց նա հետաքրքրությամբ։

— Ես մի որևէ անկյուն կգտնեի։ Հիշո՞ւմ ես Սենդվուդը, Քենոշին չհասած՝ այն փոքրիկ քաղաքը։ Ես հաճախ եմ մտածել, որ այնտեղ ապրելը շատ հաճելի կլիներ։

— Ինձ համար ծանր է մտածել դրա մասին,— վերջապես ասաց նա։— Դա այնքա՜ն անարդարացի է։ Ամեն ինչ, ամեն ինչ մեր դեմ է եղել։ Երևի ես պետք է հենց միանգամից ամուսնանայի քեզ հետ։ Իզուր այդպես չեմ արել։

Ջեննին քիչ մնաց հեծկլտար, բայց իրեն զսպեց։

— Միևնույն է, ես կաշխատեմ, որ սա վերջը չլինի,— ասաց նա վերջում։

Լեսթերը մտածում էր, թե գուցե ամեն ինչ այնպես էլ անցնի։ Հարկավոր է փողն ստանալ, իսկ հետո... Բայց իրըզնի դեմ ամեն մի քայլ, ամեն մի խորամանկություն խորապես զզվելի էր նրա համար։

Վերջապես նրանք պայմանավորվեցին, որ փետրվարի վերջերին Ջեննին գնա Սենդվուդ և փորձի այնտեղ իրեն հարմար մի բան գտնել։ Լեսթերը նրան ասաց, որ ծախսերի մասին չմտածի, նա կունենա ամեն բան, ինչ հարկավոր է։ Եվ ինքն էլ մեկ-մեկ հյուր կգա նրան։ Իր մասին նա մտածեց, որ իրեն պատճառած այս ծանր բոպեների համար պատասխան տվող կլիներ։ Ինքն իր մոտ կկանչի միստր Օ'Բրայենին և խիստ խոսակցություն կունենա նրա հետ։ Դե հո հարկավո՛ր է սիրտը հանգստացնել. թող իմանա, թե ինչ են մտածում նրա մասին։

Եվ այս ամբողջ ժամանակամիջոցում նրա գիտակցության խորքում ապրում էր միսիս Ջերալդը, այն հրապուրիչ, նրբագեղ և ամեն տեսակետից կատարյալ կինը։ Լեսթերն աշխատում էր չմտածել նրա մասին, բայց նրա պատկերը մտքից հանել չէր կարողանում։ Եվ ավելի ու ավելի հաճախ էր գլխում մի միտք ծագում. «Իսկ ինչո՞ւ չէ»։ Փետրվարի սկզբներին որոշումն արդեն ընդունված էր։

ԳԼՈՒԽ LIV

Սենդվուդ փոքրիկ քաղաքը, «չհասած Քենոշին», ինչպես ասաց Ջեննին, բոլորովին մոտիկ էր Չիկագոյին, ամառանոցային գնացքով ընդամենը մեկ ու մի քառորդ ժամվա ճանապարհ։ Այն բաղկացած էր ընդամենը մի երեք հարյուր կո-

տեղից, որոնք ցրված էին լճի գեղատեսիլ ափին։ Նրա բնակչությունը հարուստ չէր։ Տները մի հինգ հազար դոլլարից ավելի չարժեին, բայց կառուցված էին մեծ ճաշակով, իսկ նրանց շրջապատող մշտադալար ծառերը քաղաքին ամառվա ուրախ տեսք էին տալիս։ Մի անգամ, շատ վաղուց, Ջեննին ու Լեսթերն անցնում էին այստեղով մի զույգ արագավազ ձի լծած կառքով, և Ջեննիին հիացմունք պատճառեցին ծառերի կանաչի մեջ թաղված սպիտակ զանգակատունը և լճի խաղաղ ջրի վրա մեղմ օրորվող մակույկները։

— Ի՞նչ հաճելի է այսպիսի տեղ ապրել,— ասել էր այն ժամանակ Ջեննին, իսկ Լեսթերը պատասխանել էր, թե իր կարծիքով սա բավական տխուր տեղ է։

— Գուցե և երբևիցե այս տեղը դուր կգա ինձ, բայց այժմ՝ ոչ։ Ջափից ավելի խաղաղ է այստեղ։

Ջեննին շատ անգամ էր հիշել նրա այս խոսքերը։ Այդ խոսքերը նրա միտն էին գալիս, երբ կյանքն առանձնապես ծանր ու դժվարին էր թվում։ Եթե ինքը մենակ մնա և միջոցներ ունենա, որքա՜ն լավ կլիներ այսպիսի մի փոքրիկ քաղաք ընկնել։ Պարտեզ, հավեր, սարեկանոցը ծայրին մի բարձրը ձող և շուրջը՝ ծաղիկներ, կանաչ, ծառեր։ Ապրել դեպի լիճը նայող մի փոքրիկ կոտեջում, ամառային երեկոներին նստել վերանդայում ու կար անել... Վեստան կվերադառնա դպրոցից։ Գուցե նոր ծանոթներ էլ կգտնվեն։ Ջեննիին արդեն սկսում էր թվալ, որ իր համար մենակ ապրելը վատ չի լինի, թեև Վեստայի ապագան չէր դադարում անհանգստացնել նրան։ Նա սիրում էր կարդալ. մի քանի անգամ կարդացել էր Վաշինգտոն Իվինգի «Ակնարկների գիրքը», Լեմբի «Էլիա»-ն, Հոտորնի «Երկու անգամ պատմած պատմությունները»։ Վեստան նրան ուրախացնում էր երաժշտության մեջ ունեցած հաջողություններով։ Աղջիկը երաժշտական բացառիկ ընդունակություն ուներ։ Նա ռիթմի բնածին զգացում ուներ, առանձնապես սիրում էր թախծալի, հուզիչ տրամադրություններով համակված երգերն ու պիեսները, և ինքն էլ վատ չէր երգում ու նվագում։ Նրա ձայնը դեռ չէր ձևավորվել, նա ընդամենը տասնչորս տարեկան էր— բայց հաճելի էր լսել նրան։

Նրա մեջ հիանալիորեն զուգորդվել էին մոր և հոր գծերը։ Ջեննիից նա ժառանգել էր մեղմ մտախոհությունը, Բրենդերից՝ մտքի եռանդն ու աշխուժությունը։ Նա միանգամայն խելամիտ զրուցում էր մոր հետ բնության, գրքերի մասին, հագուստների և սիրո մասին, և Ջեննին նրա մտքի զարգացմանը հետևելով տեսնում էր այն նոր աշխարհները, որ բացվում էին իր աղջկա առաջ։ Աղջկա սովորած առարկաներն ավելանում էին, և Ջեննին նրա հետ միասին հասկանում էր ժամանակակից դպրոցի կյանքը, նրա բազմազան ծրագիրը, որի մեջ տեղ էին գտնում և՛ երաժշտությունը, և՛ բնագիտությունը։ Երևում էր, որ Վեստան բազմակողմանի զարգացած և գործնական կին է դառնալու, ո՛չ այնքան աշխույժ, բայց լիովին ինքնուրույն։ Մորը սփոփում էր այն միտքը, որ աղջիկը կկարողանա ինքն իրեն պաշտպանել, և մեծ հույս էր կապում նրա ապագայի հետ։

Սենդվուդի այն կոտեջը, որի վրա կանգ առավ Ջեննիի ընտրությունը, միահարկ տուն էր իր մեզոնինով և վերանդայով, որ կառուցված էր կարմիր աղյուսե սյուներով և սյուները իրար միացված էին փայտե կանաչ ցանկապատով։ Բոլոր հինգ սենյակների լուսամուտները նայում էին դեպի լիճը։ Սեղանատունն ապակեպատ դուռ ուներ, ընդարձակ գրադարանի դարակներում կարող էին մեծ թվով գրքեր տեղավորվել, անկյունի հյուրասենյակը, որ երեք լուսամուտ ուներ, ամբողջ օրը ողողված էր արևի ճառագայթներով։ Տան կողքի հողամասում աճում էին մի քանի գեղեցիկ ծառեր։ Նախկին տերը այգում ծաղկաթմբեր էր սարքել և կանաչ տակառներ էր պատրաստել դեկորատիվ բույսերի ու թփերի համար։ Տունը սպիտակ էր, կանաչ խալափեղկերով և գոնտի կանաչ տանիքով։

Լեսթերն ուզեց առաջարկել Ջեննիին, որ նա իրեն պահի Հայդ-Պարկի տունը, բայց Ջեննին չուզեց։ Հենց միայն այն միտքը, որ ինքն այստեղ ապրելու է առանց Լեսթերի, անտանելի էր նրա համար. որքա՜ն հիշողություններ էին կապված այդ տան հետ։ Սկզբում նա նույնիսկ չէր ուզում իր հետ որևէ բան տանել, բայց հետո, այնուամենայնիվ, հետևեց Լեսթե-

րի խորհրդին, վերցրեց նոր բնակարանին հարկավոր կահույքը, վարագույրները և սեղանատան արծաթեղենը։

— Քի՞չ բան կարող է քեզ պետք գալ,— ասաց Լեսթերը։ —Բոլորը վերցրու։ Ինձ ոչինչ հարկավոր չէ։

Կոտեջը վարձել էին երկու տարով, վարձակալության ժամկետը երկարացնելու կամ հետագայում դնելու իրավունքով։ Ի վերջո որոշելով Ջեննիին բաց թողնել՝ Լեսթերը մեծ առատաձեռնություն ցուցաբերեց. նա չէր հանդուրժում այն միտքը, թե Ջեննին կարող է կարիքի մեջ լինել։ Նրան մտահոգում էր այն հարցը, թե Վեստային ինչպես պիտի բացատրեն իրենց կյանքում տեղի ունեցող փոփոխությունը։ Աղջիկան սիրում էր նա և ցանկանում էր հեռու պահել նրան ծանր ապրումներից։

— Գուցե կարելի է մինչև գարուն որևէ փակ դպրոցո՞ւմ տեղավորել նրան,— մի օր առաջարկեց նա։

Բայց ուսման տարվա եռուն շրջանն էր, և ստիպված եղան այդ մտքից հրաժարվել։ Այն ժամանակ որոշեցին Վեստային ասել, թե Լեսթերը երկար ժամանակով գործով գնալու է Չիկագո, իսկ՝ իրենք, մայր ու աղջիկ ավելի լավ կապրեն մի փոքրիկ քաղաքում։ Երբևիցե Ջեննին աղջկան կբացատրի, որ Լեսթերից հեռացել է, և մի պատճառ կհորինի։ Ջեննիի հոգին դառնացած էր։ Նա հասկանում էր, որ Լեսթերի որոշումը խելամիտ՞ է, բայց դրա տակ ինչպիսի՞ անսրբություն կար։ Այո, եթե նույնիսկ նա սիրում է իրեն, ապա շատ քիչ է սիրում։

Տղամարդու և կնոջ միջև եղած հարաբերությունների մեջ, որոնք մենք դիտում ենք այնպիսի ջերմ հետաքրքրությամբ, հուսալով, թե նրանց մեջ կգտնենք կյանքի գաղտնիքի մի որևէ լուծում, ամենից ավելի դժվար ու ծանր են լինում այն բոպեները, երբ փոխադարձ կապվածությունը զոհաբերվում է արտաքին հանգամանքներին, որոնք այնքան հեռու են գեղեցկությունից և հենց զգացմունքի ուժից։ Եվ Լեսթերն ու Ջեննին խորապես տանջվում էին իրենց անջատումից առաջ վերջին օրերին, երբ փուլ էր գալիս նրանց միասնական կյանքը այս տանը, որտեղ ամեն ինչ սարքած էր այնպիսի

սիրով, որտեղ նրանք այնքա՞ն երջանիկ ժամեր էին անցկացրել։ Ջեննիի սիրտը կտոր-կտոր էր լինում. չէ՞ որ նա այն հաստատուն բնավորություններից էր, որոնք ոչ մի փոփոխություն չեն որոնում, միայն թե զգաս, որ դու սիրված ես և որ դու հարկավոր ես։ Նրա ամբողջ կյանքը բաղկացած էր նվիրվածություններից ու հիշողություններից, որոնք որպես անտեսանելի թելեր զատ-զատ տպավորությունները միահյուսում էին որպես մի ներդաշնակ ու հաստատուն ամբողջություն։ Եվ այդ թելերից մեկն էլ այս տունն էր, նրա տունը, որ զարդարված էր նրա սիրով ու հոգատարությամբ դեպի տան բոլոր բնակիչները, դեպի ամեն մի աննշան իրը։ Այժմ այդ ամենի վերջն էր եկել։

Եթե առաջ էլ երբևիցե Ջեննին այսպիսի գանձեր ունեցած լիներ, այժմ նրա համար այնքան էլ դժվար չէր լինի, թեպետև նրա զգացմունքներն ամենևին էլ նյութական նկատառումները չէին ղեկավարում։ Այն սիրո մեջ, որ նա ուներ կյանքի ու մարդկանց նկատմամբ, շահամոլության սովեր անգամ չկար։ Եվ ահա նա շրջում էր սենյակներում, այստեղ մի գորգ վերցնելով, այնտեղ մի նկար կամ մի փոքրիկ սեղան իր բազմոցի ու բազկաթոռների հետ և շարունակ տանջվելով այն մտքից, որ ինքն ստիպված էր զբաղվել այդ գործով։ Հապա մի մտածեցեք. կանցնի էլի մի քիչ ժամանակ, և այլևս երեկոները լեսթերը տուն չի վերադառնա։ Առավոտները պետք չի լինի, որ ինքը առաջինը վեր կենա, որպեսզի ստուգի՝ պատրա՞ստ է սուրճը իր տիրոջ համար և շնորհքո՞վ է բացված նախաճաշի սեղանը։ Ամեն առավոտ նա սեղանին էր դնում փարթամ ծաղիկների մի փունջ, որպիսիք միայն կարելի էր գտնել ձմեռային այգում, միշտ հիշելով, որ այդ անում է նրա համար։ Հիմա ծաղիկներն էլ հարկավոր չեն լինի. նա չի տեսնի դրանք։ Երբ սովոր ես երեկոները սպասել կառքի անիվների խշշոցին, որն ավելի ու ավելի է մոտենում, երբ ականջդ միշտ ձայնի է և գիշերվա ժամը մեկին-երկուսին ուրախությամբ արթնանում ես սանդուղքի վրա լսվող քայլերի ձայնից, այդ ժամանակ անասելի տանջալից է անջատումը, որը մի հարվածով վերջ է տալիս ամե-

նին։ Եվ Ջեննին շարունակ մտածում էր, որ ամեն մի օրը, ամեն մի ժամը իրեն մոտեցնում է այդ անջատմանը։

Լեսթերը նույնպես տանջվում էր, բայց այլ կերպ։ Նրան մորմոքում էր ոչ թե մերժված, ոտնատակ տված սերը, այլ մեղքի այն ծանր գիտակցությունը, որ ունենում է մարդ, իմանալով, որ ինքն ստոր հաշիվների համար հրաժարվել է բարի, նվիրական զգացմունքից։ Այժմ նրա առաջ լայն հեռանկարներ էին բացվում։ Ջեննիին առատորեն ապահովելուց հետո այլևս կապված չլինելով նրա հետ՝ այժմ նա ազատ է իր ճամփով գնալու, նվիրվելու այն բազմապիսի պարտականություններին, որ մարդու վրա է դնում մեծ հարստությունը։ Բայց նա շարունակ մտածում էր, թե որքան շատ բան է արել իր համար Ջեննին, ինչպես նա միշտ աշխատում էր, որ Լեսթերի կյանքը լինի դուրեկան, հարմարավետ ու գեղեցիկ։ Նա շատ լավ գիտեր Ջեննիի բոլոր արժանիքները և գնահատում էր դրանք։ Այժմ ստիպված էր ընդունելու նրա էլի մի անգնահատելի հատկությունը. նա կարողանում էր տառապել առանց տրտնջալու։ Այս վերջին օրերին Ջեննին Լեսթերին վերաբերվում էր ինչպես միշտ, ո՛չ ավելի լավ, ո՛չ վատ։ Նա հիստերիկաներ չէր սարքում, ինչպես կաներ նրա տեղը լինող ամեն մի կին։ Չէր աշխատում ավելի տոկուն երևալ, քան կար իրականում, կամ դեմքին ուրախ արտահայտություն տալ այն մտքով, որ նա, այնուամենայնիվ, հասկանա նրա տառապանքը։ Նա իրեն պահում էր հանգիստ, մեղմ էր, ուշադիր, առաջվա պես հետաքրքրվում էր նրա գործերով ու ծրագրերով, բայց չէր ջղայնացնում ավելորդ հարցերով։ Լեսթերին ապշեցնում էր նրա ազնիվ վերաբերմունքը, նա հիացած էր Ջեննիով։ Ինչ էլ ասեն մարդիկ, նա սքանչելի կին է։ Ցավալի է և ամոթ, որ նրա կյանքն այդպիսի դժբախտ ընթացք ունեցավ։ Եվ միևնույն ժամանակ Լեսթերը լսում էր մյուս լայնարձակ աշխարհի կանչը։ Այդ աշխարհը միշտ էլ հյուրասեր չէր եղել, Լեսթերը հիշում էր նրա գազանային ժանիքները։ Բայց կարո՞ղ է նա ականջ չդնել այդ կանչին։

Եվ ահա նրանք արդեն հարևաններից ոմանց տեղեկացրին, թե մեկնում են արտասահման, և Լեսթերն արդեն հա-

մար էր վարձել «Աուդիտորիում» հյուրանոցում, ի պահ էր տվել ամբողջ ավելորդ ունեցվածքը, և հասել էր Հայդ-Պարկին հրաժեշտ տալու պահը։ Ջեննին Լեսթերի ուղեկցությամբ մի քանի անգամ եղել էր Սենդվուդում։ Նա մանրամասն դիտել էր քաղաքը և մնացել էր առաջին տպավորության մեջ, որ քաղաքը գեղեցիկ է, բայց՝ տխուր։ Բայց մոտենում էր գարունը, իսկ Ջեննին այնքան էր սիրում ծաղիկներ։ Նա ուզում էր մի պարտիզպան վարձել։

— Շատ լավ կանես,— ասաց Լեսթերը։— Արա ինչ ուզում ես, միայն թե այստեղ դու քեզ լավ զգաս։

Միևնույն ժամանակ նա եռանդով զբաղվում էր նաև իր գործերով։ Իր հավատարմատար միստր Ուոթսոնի միջոցով նա «Նայթ, Քիթլի, Օ'Բրայեն» գրասենյակին իմաց տվեց, որ այսինչ օրը իրեն հանձնվի հայրական բաժնետոմսերի իր բաժինը։ Քանի որ հանգամանքներն իրեն ստիպել են այս քայլին դիմել, նա որոշել էր, որ ձեռք է առնելու մի շարք ուրիշ, ո՛չ պակաս անսիրտ միջոցներ էլ։ Ամենայն հավանականությամբ նա կամուսնանա միսիս Ջերալդի հետ։ Նա կըմըտնի «Կառետաշինական տրեստի» վարչության մեջ. հիմա, երբ իր ձեռքին բաժնետոմսերի այսպիսի մի հաստ ծրար կա, նրանք չեն կարող արգելք լինել դրան։ Եթե իր տրամադրության տակ լինի նաև միսիս Ջերալդի փողը, նա իր ձեռքը կըվերցնի Ցինցիննատիի «Տրակտորային ընկերությունը», որի հետ մեծ հույսեր է կապում իր եղբայրը, ինչպես նաև «Արևմըտյան պողպատաձուլականը», որտեղ Ռոբերտը հանդիսանում է գլխավոր խորհրդական։ Այո, սա այն դիրքը չի լինի, որ ինքը գրավում էր վերջին տարիներս։

Ջեննին մենակությունից և թախծից հանգիստ չուներ։ Այս տունը այնքա՜ն շատ բան էր նշանակում նրա համար։ Երբ նրանք այստեղ փոխադրվեցին, և հարևաններն սկսեցին հյուր գալ, նա պատկերացնում էր, թե իր համար մի նոր կյանք է սկսվում, թե ժամանակին Լեսթերը կամուսնանա իր հետ։ Իսկ հետո հարվածները տեղացին իրար ետևից, և այլևս չկա նրա երազանքը, այլևս չկա տունը։ Հայրը մեռավ, ծանոթն ու մյուս ծառաներն արձակվեցին, կահույքը կապկրպ-

'ված, պահեստ է տարված, և Լեսթե՞ը, Լեսթերը հեռացել է նրա կյանքից։

Ջեննին պարզ հասկանում էր, որ նա չի վերադառնա։ Քանի որ նա կարողացավ հիմա հեռանալ իրենից, թեկուզև տատանումներով ու սրտի ցավով, էլ ի՞նչ կարելի է սպասել այն ժամանակից, երբ նա ազատ կլինի, իրենից հեռու։ Իր կարևոր գործերով տարված՝ նա ուղղակի կմոռանա իրեն։ Եվ ճիշտ էլ կանի։ Ինքը հարմար կին չէ նրա համար։ Քանի՞-քանի անգամ ինքը համոզվել է դրանում։ Այս աշխարհում սերը բավական չէ, դա բոլորի համար պարզ է։ Հարկավոր է նաև դաստիարակություն, հարստություն, իր ուզածը կատարելու և բանսարկելու կարողություն։ Իսկ ինքը դրանով ըզբաղվել չի ուզում։ Եվ չի էլ կարող։

Վերջապես մեծ տունը փակվեց, և նախկին կյանքը ետևում մնաց։ Լեսթերը Ջեննիին ուղեկցեց մինչև Սենդվուդ և մի կարճ ժամանակ նրա հետ միասին մնաց կոտեջում, ջանալով ներշնչել նրան, թե տունը հիանալի տուն է, և նա հեշտությամբ կվարժվի նոր պայմաններին։ Նա խոստացավ շուտով այցելել Ջեննիին, իսկ հետո պատրաստվեց մեկնելու, և անջատման անհրաժեշտության առաջ նրա խոսքերը միանգամից կորցրին իրենց նշանակությունը։ Ջեննին հրաժեշտ տալիս համբուրեց նրան, ցանկացավ նրան երջանկություն, հաջողություն, հոգեկան անդորր և անցավ իր ննջարանը։ Լուսամուտից տեսնելով, թե նա ինչպես է տնից հեռանում աղյուսածածկ շավիղով, ամրապինդ ու պերճաշուք, նոր կոստյումը հագին ու վերարկուն թևին գցած, որպես ինքնավստահության ու բարեբախտության մի մարմնացում, Ջեննիին թվաց, թե ինքը հենց հիմա կմեռնի։ Բայց քիչ հետո, երբ Վեստան մոր մոտ մտավ, նրա աչքերն արդեն ցամաք էին։ Մնացել էր միայն բութ, տնքող ցավը։ Այսպես սկսվեց նրա նոր կյանքը, Կյանքն առանց Լեսթերի, առանց հոր, հենց միմիայն Վեստայի հետ։

«Այնուամենայնիվ զարմանալի է իմ բախտը»,— մտածում էր նա խոհանոց իջնելով։ Նա որոշել էր, որ տնային աշխատանքների մի մասն ինքը կատարի։ Նրան հարկավոր էր

զբաղմունք ունենալ։ Չի կարելի շարունակ մտածել ու մտածել։ Վեստան չլիներ՝ նա որևէ աշխատանքի կմտներ։ Միայն թե չամփոփվի ինքն իր մեջ, թե չէ՝ կարելի է գժվել։

ԳԼՈՒԽ LV

Հետևյալ մեկ երկու տարում Չիկագոյի, Ցինցիննատիի, Քլիվլենդի և այլ քաղաքների աշխարհիկ ու գործարար շրջանները վկա եղան Լեսթեր Քեյնի յուրատեսակ վերածնությանը։ Ջեննիի հետ կապված լինելու ժամանակ նա հեռացել էր բազմաթիվ մարդկանցից ու գործերից և թվում էր, թե կորցրել է ամեն հետաքրքրություն նրանց նկատմամբ։ Բայց այժմ, Ջեննիից բաժանվելով, նա նորից հրապարակում երևաց իր հսկայական միջոցներով սպառազինված, սկսեց խորամուխ լինել ամեն գործի մեջ, որպես իր ուժերին վստահ մի մարդ, և շատ շուտով որպես հեղինակություն ճանաչվեց առևտրի ու ֆինանսների բնագավառում։ Ճիշտ է, նա տարիքն առել էր։ Որոշ տեսակետից դա արդեն նախկին Լեսթերը չէր։ Մինչև Ջեննիի հետ հանդիպելը նա աչքի էր ընկնում ինքնավստահությամբ, որ հատուկ է պարտություն չտեսած ամեն մարդու։ Երբ դու դաստիարակված ես շքեղության մեջ, երբ դու հասարակությունը տեսնում ես միայն նրա հաճելի կողմով, որ այնքան համոզիչ խաբուսիկ է, երբ գործ ունես խոշոր ձեռնարկությունների հետ ոչ նրա համար, որ ինքդ ես ստեղծել դրանք, այլ որովհետև ինքդ էլ դրանց մի մասն ես կազմում, և նրանք քեզ հետ են ծնված օրից, ինչպես այն օդը, որ շնչում ես, այդ դեպքում, բնականաբար, ստեղծվում է կենցաղի անսասանության իլյուզիա, որն ընդունակ է մթագնելու ամենապայծառ միտքն անգամ։ Դժվար է պատկերացում ունենալ նրա մասին, ինչ մենք չենք տեսել, զգալ այն, ինչ ինքներս չենք ապրել։ Ինչպես տիեզերքը մեզ հավերժական ու անսասան է թվում միայն նրա համար, որ ոչինչ չգիտենք այն ստեղծող ուժերի մասին, Լեսթերի աշխարհն էլ նրան թվում էր անսասան ու հավերժական։ Միայն երբ փո-

Թորկածին ամպերը խտացան, և մրրիկն սկսվեց, երբ նրա դեմ կռվի դուրս եկան հասարակական պայմանականության բոլոր ուժերը, միայն այդ ժամանակ նա հասկացավ, որ, թերևս, գերագնահատել է իրեն, որ իր անձնական ցանկություններն ու հայացքները ոչինչ են հասարակության կարծիքի առաջ, որ ինքն իրավացի չէ։ Նրան թվում էր, որ ժամանակի ոգին՝ Zeitgeist-ը, ինչպես կոչում են այն գերմանացիները, պաշտպան է կանգնած մի սիստեմի, որ մեր հասարակությունը կազմակերպված է մի ինչ-որ առեղծվածային, մարդու ըմբռնողությանն անհասանելի օրինակով։ Նա չկարողացավ մենամարտի բռնվել այդ հասարակության հետ։ Չկարողացավ բանի տեղ չդնել նրա հրամանները։ Նրա ժամանակակիցներն անհրաժեշտ էին գտնում այդպիսի հասարակական կառուցվածքը, և Լեսթերը համոզվեց, որ այդ օրենքները խախտելով, դժվար չէ հասարակությունից դուրս մնալ։ Բոլորը երես դարձրին նրանից՝ հայրն ու մայրը, քույրերը, ծանոթները, բարեկամները։ Ողորմա՞ծ աստված։ Ինչպիսի՞ փոթորիկ բարձրացրեց նրա արարքը։ Ասես բախտն ինքը որոշել էր պատժել նրան։ Անշարժ գույքի նրա գործառնությունը չտեսնված ձախողանք կրեց։ Ինչո՞ւ։ Մի՞թե աստվածներն էլ պաշտպան են կանգնած հասարակության այն օրենքներին, որոնք ինքն ուզում էր անտեսել։ Երևի այդպես է։ Այսպես թե այնպես, նրան ստիպեցին դիրքերը հանձնել, և ահա նա նորից իր նախկին աշխարհումն է՝ լի եռանդով ու վճռականությամբ, մի փոքր տրորված իր ապրումներից հետո, բայց և այնպես բավականաչափ խոշոր ու ազդեցիկ դեմք է։

Երկար պայքարից հետո արված այդ զիջողությունը նրա համար անպատիժ չանցավ, նա խիստ գազազել էր։ Զգում էր, որ իրեն մղել են իր կյանքում առաջին տգեղ ու դաժան վարմունքին։ Ջեննին ավելի լավ բախտի էր արժանի։ Խայտառակություն էր լքել նրան նրանից այնքա՞ն շատ ստանալուց հետո։ Ի՞նչ ասել կուզի, նա իր ազնվությամբ գերազանցեց Լեսթերին։ Իսկ գլխավորը՝ Լեսթերը չէր կարող իրեն արդարացնել, թե իբր անելանելի դրության մեջ էր։ Նա կարող էր ապրել տարեկան տասը հազարով, կարող էր յոլա գնալ

առանց այն մեկուկես միլիոնի, որ այժմ ունի։ Կարող էր յոլա գնալ նաև առանց բարձրաշխարհիկ հասարակության, որը, ինչպես երևում է, նրա համար չէր կորցրել իր ձգողական ուժը։ Կարող էր, բայց չուզեց և իր մեղքն ավելի սաստկացրեց ուրիշ կնոջ մասին մտածելով։

Ինչո՞վ է նա լավ Ջեննիից, ահա մի հարց, որ շարունակ կանգնում էր Լեսթերի առաջ։ Բարի՞ է նա արդյոք։ Մի՞թե նա ամենաբացահայտ փորձերը չէր անում՝ Լեսթերին խլելու մի կնոջից, որին պարտավոր էր նրա կինը համարել։ Եվ մի՞թե դա գովելի բան է։ Մի՞թե մեծ սիրտ ունեցող կինն այդպես կվարվեր։ Եվ, վերջապես, բավականաչա՞փ լավ է նա Լեսթերի համար։ Գուցե ընդհանրապես պետք է, որ ինքը չամուսնանա, քանի որ, եթե ոչ իրավաբանորեն, ապա բարոյապես դեռ կապված է Ջեննիի հետ։ Ի՞նչ ամուսին կարող է դուրս գալ իրենից։ Այս մտքերը նրան հանգիստ չէին տալիս, և նա չէր կարողանում ազատվել այն գիտակցությունից, որ անսիրտ ու անազնիվ քայլ է անում։

Նա անճիշտ քայլ է արել, հետևելով նյութական նկատառումներին, իսկ հիմա էլ պատրաստ է տեղի տալ բարոյական նկատառումներին։ Երկրորդ սխալով նա փորձում է ուղղել առաջինը։ Բայց արդյոք դա կգոհացնի՞ իրեն, նյութական ու բարոյական տեսակետից հոգեկան անդորրությո՞ւն կբերի իրեն։ Նա համառորեն խորհում էր սրա մասին, երբ իր կյանքը վերակառուցում էր նախկին, ավելի ճիշտ՝ նոր պայմաններին համապատասխան, բայց հանգիստ չէր գտնում։ Ավելի ճիշտ՝ ավելի էր վատանում, նրան համակում էր մրուսյալ վրիժառու զգացմունքը։ Երբեմն նա մտածում էր, որ եթե ինքը ամուսնանա Լետտիի հետ, ապա դա միայն նրա համար կլինի, որ նրա փողի օգնությամբ դաժանորեն հաշիվ տեսնի իր թշնամիների հետ, և իսկույն էլ սկսում էր արհամարհել իրեն այդպիսի մտքերի համար։ Նա ապրում էր «Աուդիտորիում» հյուրանոցում, գնում էր Ցինցիննատի՝ վարչության նիստին, որտեղ իրեն պահում էր ամբարտավան ու գրգռիչ, տանջվում էր իր ներքին տվայտանքներից և սե-

փական անտարբերությունից աշխարհում ամեն ինչի նկատմամբ։ Բայց Ջեննիի հետ առաջվա պես չէր հանդիպում։

Ինքնին հասկանալի է, որ միսիս Ջերալդն աշխույժ հետաքրքրությամբ ընդունեց Լեսթերի կյանքում տեղի ունեցած նոր շրջադարձը։ Քաղաքավարության համար մի փոքր սպասելուց հետո նա Լեսթերին մի նամակ գրեց Հայդ-Պարկի հասցեով, որպես թե չիմանալով, որ նա տեղափոխվել է։ «Որտե՞ղ եք թաքնվել դուք»,— հարցնում էր նա։ Լեսթերն այդ ժամանակ հազիվ էր սկսել վարժվել իր հետ կատարված փոփոխությանը։ Նա ինքն իրեն ասում էր, որ ըմբռնողության և կարեկցության կարիք է զգում, հասկանալի է՝ կանացի։ Հենց որ պարզվեց, որ նա մենակ է ապրում, և նրա ֆինանսական դրությունը վերականգնվել է, սկսեցին նրան հյուր հրավիրել։ Նա արդեն եղել էր մի քանի քաղաքամերձ տներում միմիայն մի ճապոնացի ծառայի ուղեկցությամբ, և դա լավագույն նշանն էր, որ նա նորից ամուրի է դարձել։ Նրա անցյալի մասին ոչ ոք ոչ մի խոսք չէր ասում։

Միսիս Ջերալդի նամակն ստանալով՝ Լեսթերը մտածեց, որ հարկավոր է այցելել նրան։ Նրա առաջ ինքը մեղավոր է. Ջեննիի մեկնումից առաջ, վերջին ամիսներս նա չէր անցել միսիս Ջերալդի մոտ։ Բայց հիմա էլ նա չշտապեց։ Քիչ ժամանակ անց՝ Լեստին հեռախոսով նրան ճաշի հրավիրեց, և այն ժամանակ, վերջապես, նա որոշեց գնալ։

Հյուրասեր տանտիրուհու դերում միսիս Ջերալդը հիանալի էր։ Նրա հյուրերի մեջ էին դաշնակահար Ալբոնին, քանդակագործ Ադամ Ռասկևիչը, անգլիացի գիտնական սըր Նելսոն Կիզը, ինչպես և, ի զարմանս Լեսթերի, միստր և միսիս Բերրի Դոջերը, որոնց հետ ահա արդեն մի քանի տարի նա հանդիպել էր միայն հարևանցիորեն։ Լեսթերը և տանտիրուհին ուրախ ողջույններ փոխանակեցին որպես իրար լավ հասկացող մարդիկ և գոհ լինելով, որ առիթ ունեն միասին ժամանակ անցկացնելու։

— Եվ դուք չե՞ք ամաչում, սըր,— ասաց Լեստին, հենց որ Լեսթերը երևաց դռան մեջ։— Մի՞թե կարելի է հին բարեկամներին մոռանալ։ Դրա համար դուք պատիժ եք կրելու։

— Ես խիստ զբաղված էի,— պատասխանեց Լեսթերը։— Իսկ ի՞նչ պատիժ է սպասվում ինձ։ Հուսով եմ՝ իննսուն մտրակը բավակա՞ն է։

— Իննսուն մտրա՞կ, ինչպե՞ս չէ,— առարկեց Լեսթին։— Ուզում եք հեշտ պրծնել։ Ես մոռացել եմ, հանցագործներին ինչպե՞ս են պատժում Սիամում։

— Երևի եռացող յուղի մեջ են գցում։

— Այ, դա այդպես է։ Բայց ես ձեզ համար մի ավելի սոսկալի պատիժ կմտածեմ։

— Դե, երբ կգտնեք, հայտնեցեք ինձ,— ծիծաղեց Լեսթերը, բայց այդ ժամանակ միտքս դը Լենկումը, որը տանտիրուհուն օգնում էր հյուրերին ընդունել, նրան մի կողմ տարավ, որպեսզի ներկայացնի անվանի օտարերկրացիներին։

Մի աշխույժ զրույց սկսվեց։ Լեսթերը, որ այսպիսի պայմաններում միշտ իրեն զգում էր ինչպես ձուկը ջրի մեջ, արտակարգ կայտառություն էր զգում։ Շուռ գալով՝ նա իր կողքին տեսավ Բերրի Դոջին։

Դոջը սիրալիր ժպտաց նրան։

— Այդ որտե՞ղ ես կորել դու,— հարցրեց նա։— Արդեն չեմ հիշում քանի տարի մենք քեզ չենք տեսել։ Գնանք միտքս Դոջի մոտ, նա ուզում է քեզ հետ խոսել։

— Այո, վաղուց չենք տեսնվել,— անփութորեն հաստատեց Լեսթերը, հիշելով իրենց վերջին հանդիպումը և Դոջի խոսելու տոնը, որ այնքա՞ն նման չէր այսօրվա նրա վերաբերմունքին։— Ապրում եմ «Աուդիտորիում» հյուրանոցում։

— Իսկ ես հենց վերջերս քո մասին էի հարցնում։ Դու ճանաչո՞ւմ ես Ջեքսոն Դյուբուին։ Դե իհարկե, ճանաչում ես։ Ահա ես ու նա պատրաստվում ենք ծլկել Կանադա՝ որս անելու։ Չե՞ս ընկերանա մեզ։

— Հիմա չեմ կարող,— պատասխանեց Լեսթերը։— Շատ զբաղված եմ։ Մի ուրիշ անգամ՝ բավականությամբ։

Դոջը նրանից չէր հեռանում։ Նորերս նա կարդացել էր, որ Լեսթերն էլի մի ընկերության վարչության մեջ է ընտրված. երևում է՝ մարդը նորից դեպի վեր է բարձրանում։ Բայց այդ ժամանակ հայտարարեցին, որ ճաշը մատուցված է, և

այնպես եղավ, որ Լեսթերն ընկավ միսիս Ջերալդի աչ կողմը։

— Դուք մտադիր չե՞ք ինձ մոտ լինել ավելի պակաս պաշտոնական այցելությամբ,— կիսաձայն հարցրեց նա, օգտագործվելով մի րոպեից, երբ սեղանի շուրջը զրույցն առանձնապես աշխուժացել էր։

— Մտադիր եմ,— պատասխանեց Լեսթերը,— և այն էլ ամենամոտ ժամանակներս։ Ճիշտն ասած՝ ես վաղուց էի ուզում ձեզ մոտ անցնել։ Բայց դուք գիտե՞ք, թե հիմա ինչ վիճակում են իմ գործերը։

— Գիտեմ։ Շատ բան եմ լսել։ Դրա համար էլ ուզում եմ, որ գաք։ Մենք խոսելու բան ունենք։

Տասն օր անց՝ Լեսթերը եկավ նրա մոտ։ Նա ուզում էր Լետտիին տեսնել։ Ջանձրույթից հանգիստ չուներ։ Ջեննիի հետ միասին մի հարկի տակ երկար տարիներ ապրելուց հետո հյուրանոցի կյանքը նրա համար սնոտանելի էր։ Հարկավոր էր իր սիրտը բանալ որևէ մեկի մոտ, իսկ որտե՞ղ կարելի է կարեկցանք գտնել, եթե ոչ այստեղ։ Լետտին հենց այդ էլ երազում էր, որ մխիթարի նրան։ Սրտին որ լսեր, նա կգրկեր նրան և երեխայի նման գլուխը կշոյեր։

— Դե,— ասաց Լեսթերը, երբ ըստ սովորության մի քանի կատակ էին փոխանակել,— ինչպիսի՞ բացատրություններ եք սպասում դուք ինձնից։

— Դուք վառե՞լ եք ձեր կամուրջները,— հարցրեց Լետտին։

— Օ՞յ, չգիտեմ,— պատասխանեց Լեսթերը մտախոհ։— Եվ ընդհանրապես չեմ կարող ասել, թե այս ամենն առանձնապես ուրախացրել է ինձ։

— Ես այդպես էլ գիտեի,— հառաչեց միսիս Ջերալդը։— Ես հո ճանաչում եմ ձեզ։ Պատկերացնում եմ, թե ինչ ապրումներ եք ունեցել դուք։ Ես հետևել եմ ձեր ամեն մի քայլին և կուզենայի միայն մեկ բան. որ դուք հոգեկան անդորր գտնեք։ Այդպիսի բաները միշտ դժվարությամբ են արվում, բայց ես հիմա էլ համոզված եմ, որ լավն այդ է։ Այն կյանքը ձեզ համար չէր։ Եվ, միևնույն է, դուք չէիք դիմանա։ Դուք չեք

կարող ապրել խխունջի պես ձեր խեցիի մեջ կուչ եկած։ Դուք դրա համար չեք ստեղծված, ինչպես և ես։ Դուք ափսոսում եք ձեր արածը, բայց եթե այդ չանեիք, ավելի շատ պիտի ափսոսայիք։ Ո՛չ, այնպիսի կյանք շարունակելը ձեզ համար անհընարին կլիներ. մի՞թե դուք համաձայն չեք սրան։

— Ճիշտն ասած, չգիտեմ, Լեոտի։ Ախր ես վաղուց էի ուզում գալ ձեզ մոտ, բայց գտնում էի, որ իրավունք չունեմ։ Արտաքուստ պայքարը վերջացած է. դուք ինձ հասկանո՞ւմ եք։

— Հասկանում եմ,— ասաց Լեոտին սիրալիր։

— Բայց ներքուստ դեռ շարունակվում է։ Ես դեռ ամեն ինչ լավ չեմ հասկացել։ Ինձ համար պարզ չէ, թե որքան է կաշկանդում ինձ իմ ֆինանսական դրությունը։ Անկեղծ ասած՝ ես նույնիսկ չգիտեմ՝ սիրո՞ւմ եմ արդյոք նրան։ Բայց նրան խղճում եմ, իսկ սա արդեն քիչ բան չէ։

— Նա, իհարկե, լավ ապահովված է։— Սա հնչեց ո՛չ որպես հարց, այլ որպես ի միջի այլոց արված դիտողություն։

— Իհարկե։ Բայց Ջեննին ուրիշ տեսակ մարդ է։ Նրան շատ բան հարկավոր չէ։ Իր բնավորությամբ նա սիրում է տանը նստել, արտաքին փայլը նրան չի հրապուրում։ Նրա համար ես մի կոտեջ եմ վարձել Սենդվուդում. դա լճի ափին է, Չիկագոյից դեպի հյուսիս։ Բայց նա գիտե, որ կարող է ապրել որտեղ ուզենա. նրա տրամադրության տակ բավականաչափ փող կա։

— Ես հասկանում եմ, թե հիմա նա ինչպես է զգում իրեն, Լեսթեր։ Եվ հասկանում եմ, թե ինչպես եք զգում դուք։ Սկզբնական շրջանում նա խիստ տանջվելու է. մենք բոլորս տանջվում ենք, երբ զրկվում ենք մեր սիրած մարդուց։ Բայց ամեն ինչ անցնում է, և մարդիկ շարունակում են ապրել։ Նույնն էլ նրա հետ է լինելու։ Սկզբում շատ ծանր կլինի, իսկ հետո կհանգստանա և այլևս սրտում վիրավորանք չի ունենա ձեր դեմ։

— Ջեննին երբեք ինձ չի կշտամբի, այդ ես գիտեմ,— ասաց Լեսթերը։— Ես ինքս կկշտամբեմ ինձ, այն էլ երկար ժամանակ։ Այդպիսի մարդ եմ ես։ Թեկուզ սպանես, հիմա ես

չեմ կարող ասել՝ այժմյան իմ այս անհանդստությունը սովորությունի՞ց է բխում, թե՞ ավելի խոր զգացմունքից։ Երբեմն ինձ թվում է, թե ես ամենաբթամիտ մարդն եմ աշխարհիս երեսին։ Ես խիստ շատ եմ մտածում։

— Խե՜ղճ Լեսթեր,— քնքշորեն ասաց Լետտին։— Ես լավ եմ հասկանում ձեզ։ Տաղտկալի՞ է ձեզ համար հյուրանոցում մենակ ապրել։

— Շա՜տ,— պատասխանեց Լեսթերը։

— Իսկ լավ չի՞ լինի, եթե մի քանի օրով գնաք Ուեստ-Բադեն։ Ես էլ այնտեղ եմ գնում։

— Ե՞րբ։

— Գալիք երեքշաբթի օրը։

— Մի րոպե,— ասաց Լեսթերը։— Հիմա կտեսնենք— Նա թերթեց իր ծոցատետրը։— Հինգշաբթի օրը կարող եմ գալ մի քանի օրով։

— Դե, հիանալի։ Ձեզ հարկավոր է մարդկանց մեջ լինել։ Այնտեղ մենք կզբոսնենք, կզրուցենք։ Ուրեմն կգա՞ք։

— Կգամ։

Լետտին մոտեցավ նրան, իր ետևից քարշ տալով բաց մանուշակագույն շորի շլեյֆը։

— Չի կարելի այդքան շատ մտածել, սըր,— անփութորեն ասաց նա։— Անպայման ուզում եք մինչև արմատը փորփրել։ Ինչի՞ համար է դա։ Ասենք՝ դուք միշտ այդպիսին եք եղել։

— Ի՛նչ արած,— պատասխանեց Լեսթերը։— Ես չեմ կարող չմտածել։

— Լավ, ես մի բան գիտեմ։— Նա թեթևակի քաշեց Լեսթերի ականջը։— Ձեր բարի զգացմունքները երկրորդ անգամ ձեզ չեն ստիպի սխալ գործել։ Ես այդ թույլ չեմ տա,— ավելացրեց նա համարձակորեն։— Դուք պետք է ազատ լինեք, մինչև ամեն ինչի մասին չխորհեք ինչպես հարկն է և չորոշեք, թե ձեզ ինչ է հարկավոր։ Այլ կերպ չի կարելի։ Իսկ ես ուզում եմ խնդրել ձեզ, որ ձեր վրա վերցնեք իմ գործերի կառավարումը։ Դուք կարող էիք ինձ շատ ավելի արժեքավոր խորհուրդներ տալ, քան իմ հավատարմատարը։

Լեսթերը վեր կացավ, քաշվեց լուսամուտի մոտ և աչքի տակով նայեց նրան։

— Թե ինչ է հարկավոր ձեզ, այդ ես գիտեմ,— ասաց նա մռայլված։

— Իսկ ինչո՞ւ չլինի այդպես,— հարցրեց Լետտին նորից մոտենալով նրան։ Նրա հայացքում և՛ աղաչանք կար, և՛ մարտակոչ։— Ինչո՞ւ չլինի այդպես։

— Դուք ինքներդ էլ չեք իմանում, թե ինչ եք անում,— մրթմրթաց Լեսթերը, բայց հայացքը չհեռացրեց նրանից։ Լետտին նրա առաջ կանգնած էր հասուն կնոջ իր ամբողջ հրմայքով, խելացի, ուշադրությունը լարած, երջանկությամբ ու սիրով լի։

— Լետտի,— ասաց Լեսթերը,— դուք իզուր եք ցանկանում ամուսնանալ ինձ հետ։— Ես դրան չարժեմ, հավատացնում եմ ձեզ։ Ես պաղ մարդ եմ, անհուսալի սկեպտիկ։ Դրանից ոչինչ չի դուրս գա։

— Իսկ իմ կարծիքով դուրս կգա,— շնահանջեց կինը։— Ես գիտեմ ինչպիսի մարդ եք դուք։ Եվ ինձ համար միևնույն է։ Դուք ինձ հարկավոր եք։

Լեսթերը նրա ձեռքը բռնեց, հետո իր կողմը քաշեց և գրկեց նրան։

— Խե՞ղճ Լետտի,— ասաց նա։— Ես դրան չարժեմ։ Տեսեք, կզղջաք։

— Ո՛չ, չե՛մ զղջա,— առարկեց Լետտին։— Ես գիտեմ ինչ եմ անում։ Ինձ համար միևնույն է, թե դուք ինչ կարծիքի եք ձեր մասին։— Նա այտը հպեց նրա ուսին։— Դուք ինձ հարկավոր եք։

— Այդպիսով, իսկապես, դուք ինձ ձեռք կբերեք,— ասաց նա և կռանալով համբուրեց նրան։

— Ա՜խ,— գոչեց Լետտին և երեսը սեղմեց նրա կրծքին։

«Լավ չէ,— մտածեց Լեսթերը նրան գրկելով,— այս բանը չպետք է անեի»։

Բայց նա էլի նրան բռնած ուներ իր գրկում, և երբ Լետտին գլուխը բարձրացնելով նորից ձգվեց դեպի նա, Լեսթերը էլի շատ ու շատ անգամ համբուրեց նրան։

ԳԼՈՒԽ LVI

Եթե չլիներ որոշ հանգամանքների ազդեցությունը, Լեսթերը, երևի, մի որոշ ժամանակից հետո կվերադառնար Ջենիի մոտ։ Նա լավ հասկանում էր, որ երբ հաստատորեն իր ձեռքը վերցնի իր կարողության ղեկավարումը և սպասի մինչև կրքերը հանդարտվեն, դրանից հետո ինքը կարող է դիվանագիտական խորամանկության դիմել և այս կամ այն ձևով վերականգնել իր հարաբերությունները Ջենիի հետ։ Բայց դրա համար նա ստիպված պիտի լիներ նահանջել իր պարտականությունները կատարելու անփոփոխ կանոնից, եթե նույնիսկ դրա մասին ոչ մի տեղ ուղղակի չի ասված։ Բացի այդ, նա չէր կարող ազատվել այն ամենալայն հնարավորությունների մտքից, որոնք կբացեր նրա առաջ Միսիս Ջերալդի հետ ամուսնանալը։ Ջեննիով անկեղծորեն հրապուրված լինելը չէր խանգարում նրան գիտակցել, թե որքան շատ բան է նշանակում նրա մրցակցությունը՝ բարձր հասարակության ամենահետաքրքիր ներկայացուցչի, անձնավորությունն ու հարբստությունը։ Իր մտքում նա շարունակ իրար հակադրում էր այդ երկու կանանց։ Մեկը՝ նրբակիրթ, զարգացած, հրապուրիչ, բարձրաշխարհիկ վարվեցողության բոլոր նրբություններին հմուտ և այնքան հարուստ, որ կարող է բավարարել իր ամեն մի քմահաճույքը, մյուսը՝ անմիջական, սիրագորով, սիրալիր, բարձրաշխարհիկ վարվեցողությունը չիմացող, բայց ամենից ավելի ընդունակ զգալու կյանքի գեղեցկությունը և այն ամենը, ինչ չքնաղ է մարդկային հարաբերությունների մեջ։ Միսիս Ջերալդը հասկանում և ընդունում էր այդ։ Դատապարտելով Լեսթերի կապը՝ նա ոչ թե Ջեննիին էր քննադատում, այլ այդ կապի անխելամտությունը Լեսթերի գործի հաջողության տեսակետից։ Ուրիշ բան է Լեսթերի ամուսնությունը իր՝ Լետտիի հետ. դա կլիներ Լեսթերի ամենափառասեր մտահղացումների իդեալական իրականացումը։ Դա լավ կլիներ բոլոր տեսակետներից։ Լեսթերն իր հետ նույնքան երջանիկ կլինի, որքան Ջեննիի հետ— համարյա նույնքան—և դեռ ավելին. Լեսթերի համար հաճելի կլինի գիտակ-

ցել, որ ինքը ամենանշանավոր դեմքն է Միջին Արևմուտքի բարձրաշխարհիկ ու ֆինանսական շրջաններում։ Նրա նյութական պրոբլեմները ևս այդ դեպքում լուծվում էին ամենալավ ձևով։ Լեսթերը շատ ու լուրջ մտածեց և, վերջապես, որոշեց, որ միտք չունի ձգձգել ու հետաձգել։ Ջեննիից բաժանվելով՝ նա արդեն անուղղելի վիրավորանք էր հասցրել նրան։ Միևնույն չէ՞, եթե այժմ դրան երկրորդն էլ ավելանա։ Ջեննին ապահովված է, նա վճռականորեն ամեն բան ունի, ինչ իրեն հարկավոր է, թերևս բացի Լեսթերից։ Նա ինքն էլ գրտնում էր, որ իրենք պետք է բաժանվեն։ Այսպես, իր անկարգ ու անհրապույր կյանքից հոգնելով՝ Լեսթերը իր համար արդարացումներ էր հնարում և աստիճանաբար հաշտվում նոր ամուսնության մտքի հետ։

Միսիս Ջերալդի հետ մշտական շփումն էլ եղավ այն վճռական հանգամանքը, որը Լեսթերին խանգարեց նորից միանալ Ջեննիի հետ։ Ամեն ինչ, կարծես դիտմամբ, այնպես էր դասավորվում, որ հենց Լետտին պիտի նրան փրկեր ներքին տանջող տվայտանքներից։ Երբ Լեսթերը միայնակ էր ապրում, կարող էր երբեմն-երբեմն հյուր գնալ, բայց դա նրան քիչ էր հետաքրքրում։ Նա այնքան ալարկոտ էր, որ ինքնուրույնաբար չէր կարող իր շուրջը հավաքել իր սրտովը մարդկանց և որոնցով իրեն շրջապատելը միսիս Ջերալդի նման կանանց համար մի հասարակ բան էր։ Երկուսով այդ բանն անելը նրանց համար առանձնապես հեշտ կլիներ։ Որտեղ էլ նրանք որոշեին ապրել, նրանց տունը միշտ լիքը կլիներ հետաքրքիր մարդկանցով։ Լեսթերին կմնար միայն ներկայանալ հյուրերին և ուրախ զրույց սկսել նրանց հետ։ Լետտին շատ լավ էր հասկանում, թե ինչպիսի կյանքն է հրապուրում Լեսթերին։ Նրան դուր են գալիս նույն մարդիկ, ինչ և Լեսթերին։ Այնքա՜ն շատ բան կա, որ հետաքրքրում է նրանց երկուսին էլ։ Կյանքը Լետտիի հետ լրիվ բավականություն կլինի։

Այսպես ուրեմն, Լեսթերը մի քանի օր անցկացրեց Ուեստ-Բադենում միսիս Ջերալդի հետ, իսկ Չիկագոյում իրեն նրա տրամադրության տակ դրեց ճաշկերույթների, զբոսանք-

ների և հասարակության մեջ դուրս գալու համար։ Լետտիի տանը նա իրեն զգում էր համարյա որպես տանտեր. Լետտին ինքն էր աշխատում, որ այդպես լինի։ Նա Լեսթերին մանրամասն պատմում էր իր գործերի մասին, բացատրելով, թե ինչու այս կամ այն հարցի վերաբերյալ իրեն հարկավոր է նրա խորհուրդը։ Նա չէր ուզում երկար ժամանակով Լեսթերին մենակ թողնել իր մտքերով ու ափսոսանքներով։ Եվ Լեսթերը նրա մոտ էր գնում, երբ ուզում էր սփոփվել, մոռացության գիրկն ընկնել, հանգստանալ հոգսերից։ Լետտիի տանը նա շատերին էր հանդիպում, և նրանց ծանոթների մեջ արդեն սկսել էին խոսել, թե նրանք պատրաստվում՞են ամուսնանալու։ Քանի որ Լեսթերի նախկին կապն այնքան խոսակցությունների առիթ էր եղել, Լետտին որոշել էր ոչ մի դեպքում հանդիսավոր հարսանիք չսարքել։ Բավական կլիներ մի փոքրիկ լուր տպել թերթերում, իսկ որոշ ժամանակ անց, երբ բոլորը կհանգստանան ու բամբասանքները կլռեն, ինքը Լեսթերի բարօրության համար ամբողջ քաղաքը կշշմեցնի իր ընդունելություններով։

— Գուցե մենք կամուսնանանք ապրիլին և ամռանն արտասահմա՞ն կգնանք,— առաջարկեց նա մի անգամ։ Որ իրենց ամուսնությունը որոշված բան է, դրան չէր կասկածում ո՛չ մեկը, ո՛չ մյուսը։— Կգնանք Ճապոնիա։ Իսկ աշնանը կվերադառնանք և տուն կվարձենք ծովափին։

Լեսթերը Ջեննիից բաժանվել էր այնքան վաղուց, որ խիղճը արդեն առաջվա չափ չէր տանջում նրան։ Ներքին ձայնը դեռ բոլորովին չէր լռել, բայց Լեսթերն աշխատում էր խլացնել այն։

— Դե ի՛նչ կա՝ որ,— պատասխանեց նա համարյա կատակի տոնով,— միայն, խնդրում եմ, առանց որևէ աղմուկի։

— Դու իսկապե՞ս համաձայն ես, սիրելիս,— գոչեց Լետտին ուրախ նայելով նրան։ Դրանից առաջ նրանք երեկոն հանգիստ անց էին կացրել ընթերցանությամբ և զրույցով։

— Ես բավական երկար եմ մտածել,— պատասխանեց Լեսթերը,— և հետաձգելու պատճառ չեմ տեսնում։

Լեստին մոտեցավ, նստեց նրա ծնկին և ձեռքերը դրեց նրա ուսերին։

— Ես ուղղակի չեմ հավատում, թե դու այդ խոսքն ասացիր,— խոսեց նա զարմանքով նայելով Լեսթերին։

— Ուրեմն ի՞նչ, ե՞տ վերցնեմ իմ խոսքը։

— Ո՛չ, ո՛չ։ Նշանակում է որոշված է, ապրիլին։ Եվ մենք կգնանք Ճապոնիա։ Հիմա այլևս դու միտքդ չես փոխի։ Եվ ոչ մի աղմուկ էլ չի լինի։ Բայց, աստվա՞ծ իմ, ինչպիսի՞ օժիտ պիտի պատվիրեմ ես ինձ համար։

Նա ուրախ-ուրախ խառնեց Լեսթերի մազերը։ Լեսթերը ժպտաց փոքր-ինչ լարված ժպիտով։ Ինչ որ մի բան պակասում էր նրա անմպ երջանկության մեջ. գուցե տարիներն էին զգացնել տալիս իրենցը։

ԳԼՈՒԽ LVII

Ջեննին այդ ժամանակ արդեն քիչ-քիչ վարժվել էր բոլորովին նոր պայմաններին, որոնց մեջ այսուհետև պիտի անցկացներ իր օրերը։ Սկզբում սարսափելի էր թվում առանց Լեսթերի ապրելը։ Ջեննին ինքն էլ արտասովոր անձնավորություն էր, բայց նրա ամբողջ գոյությունն այնպես էր միահյուսվել Լեսթերի գոյության հետ, որ թվում էր, թե այդ թելերը կտրտել ու քանդել անկարելի է։ Մտովին նա շարունակ Լեսթերի հետ էր, ասես իսկի չէին էլ բաժանվել։ Որտե՞ղ է հիմա նա, ի՞նչ է անում, ի՞նչ է ասում, ի՞նչ վիճակում է։ Առավոտները նա արթնանում էր այն զգացողությամբ, թե Լեսթերն իր կողքին է։ Երեկոները նրան թվում էր, թե չի կարելի քնել, մինչև նա չգա։ Նա շուտով պիտի վերադառնա... Ա՜խ, ո՛չ նա երբեք չի վերադառնա... Տե՜ր աստված, մտածելն անգամ ծանր է։ Երբե՛ք։ Իսկ ինքն այնպե՞ս է կարոտում նրան։

Հարկավոր էր կյանքը կարգավորել մինչև վերջին մանրուքները, և այդ էլ հեշտ բան չէր. շատ խիստ ու հիվանդագին էր եղել բեկումը։ Ամենագլխավորը՝ հարկավոր էր Վեստային մի կերպ բացատրել տեղի ունեցածը։ Աղջիկն արդեն

շատ բան էր նկատել ու շատ էր մտածում, և հիմա նա արդեն իր կասկածներն ու ենթադրություններն ուներ։ Վեստան հիշում էր այն խոսակցությունները, որ երբ ինքը ծնվել է, իր մայրն ամուսնացած չի եղել։ Իր ժամանակին նա տեսել էր այն կիրակնօրյա թերթը, որտեղ տպված էր Ջեննիի ու Լեսթերի ռոմանտիկ պատմությունը, այդ թերթը նրան ցույց էին տրվել դպրոցում. բայց նա այնքան խելացի էր եղել, որ տանը ոչինչ չէր ասել. նա զգացել էր, որ այդ մորը դուր չի գա։ Լեսթերի անհետանալը շատ զարմացրեց նրան։ Բայց վերջին երկու-երեք տարում նա համոզվել էր, թե որքան զգայուն է իր մայրը և որքան հեշտ է նրան ցավ պատճառել։ Դրա համար էլ հարցեր չէր տալիս։ Ջեննին ինքը ստիպված եղավ պատմել աղջկան, որ Լեսթերը կարող էր զրկվել իր կարողությունից, եթե իրենց չթողներ, քանի որ Ջեննին իր հասարակական դիրքով ցածր էր նրանից։ Վեստան հանգիստ լսեց նրան, բայց կասկածեց, թե դա ճիշտ է։ Նա անսահման խղճում էր մորը և տեսնելով, թե որքան է ճնշվում նա, աշխատում էր առանձնապես ուրախ ու աշխույժ երևալ։ Գիշերօթիկ դպրոց գնալուց նա կտրականապես հրաժարվեց և որքան կարելի է ավելի շատ ժամանակ էր անցկացնում մոր հետ։ Նա ընտրում էր ամենահետաքրքիր գրքերը, որպեսզի բարձրաձայն կարդա, մորը խնդրում էր իր հետ թատրոն գնալ, նրա համար դաշնամուր էր նվագում, իր նկարներն էր ցույց տալիս և հարցնում նրա կարծիքը։ Սենդվուդի հիանալի դպրոցում մի քանի աղջկա հետ մտերմանալով՝ նա երեկոները նրանց բերում էր իրենց տուն, և կոտեջը լցվում էր ուրախ աղմուկով։ Ջեննին ավելի ու ավելի շատ էր գնահատում աղջկա բնավորությունը և ավելի ու ավելի էր կապվում նրա հետ։ Լեսթերը գնաց, բայց դրա փոխարեն նա Վեստա ունի։ Ահա թե ով է լինելու նրա ապավենը կյանքի վերջալույսին։

Ջեննին գիտեր, որ հարկավոր է հարևաններին և նոր ծանոթներին բացատրել իր դրությունը։ Պատահում է, որ մարդուն հաջողվում է մենության մեջ ապրել առանց երկար ու բարակ խոսելու իր անցյալի մասին, բայց, սովորաբար, ստիպված է լինում մի որևէ բան պատմել։ Մարդիկ հետա-

քրրքրասեր են, մանավանդ, մսագործների ու հացագործների նման մարդիկ, և նրանց հարցուփորձից գլուխ ազատելը դժվար է։ Այդպես եղավ և Ջեննիի հետ։ Նա չէր կարող ասել, թե իր ամուսինը մահացել է. չէ՞ որ Լեսթերը կարող էր վերադառնալ։ Ստիպված եղավ ասել, թե իբր ինքն է հեռացել նրանից, որպեսզի այն տպավորությունն ստեղծի, թե իր կամքն է նրան թույլ տալ վերադառնալ կամ թույլ չտալ։ Դա լավ էր մտածված. սկսեցին զգայուն հետաքրքրությամբ վերաբերվել դեպի նա։ Իսկ նա ապրում էր հանդարտ ու միալար կյանքով, սպասելով անհայտ լուծումին։

Նրա գոյությունը զարդարում էին Վեստայի սերը և Սենդվուդի հեքիաթային գեղեցիկ բնությունը։ Ջեննին հիանում էր քաղաքի գեղատեսիլ շրջակայքով և գեղեցիկ լճով, որի վրա մինչև գիշեր սահում էին արագընթաց մակույկները։ Ջեննին մի շարաբան ու մի ձի ուներ, մեկը այն երկու կառքերից, որոնցով ճամփորդում էին նրանք, երբ ապրում էին Հայդ-Պարկում։ Ժամանակի ընթացքում երևան եկան ուրիշ սիրելիներ ևս, և նրանց մեջ՝ շոտլանդական մի գամփռ, որի անունը Վեստան դրել էր «Առնետ»։ Ջեննին նրան բերել էր Ջիկագոյից, երբ նա դեռ լակոտ էր, իսկ այժմ արդեն դարձել էր մի հիանալի ու խելացի բակապահ շուն։ Ունեին նաև Ջիմմի Վուդս անունով մի կատու. Վեստան այդպես էր կոչել նրան ի պատիվ իրեն ծանոթ մի տղայի, որին, նրա ասելով, կատուն շատ էր նման։ Ունեին մի երգեցիկ կեռնեխ, որին խնամքով պաշտպանում էին Ջիմմի Վուդսի գիշատիչ հարձակումներից, և ոսկե ձկնիկներով մի ակվարիում։ Եվ կյանքը կոտեջում ընթանում էր հանդարտ ու անխռով, իսկ բուռն ապրումներն ու զգացմունքները խորապես թաքցնում էին մարդկային աչքից։

Հեռանալուց հետո, սկզբնական շրջանում, Լեսթերը Ջեննիին նամակ չէր գրում. նա ամբողջովին խրվել էր առևտրական ոլորտ վերադառնալու հետ կապված գործերի մեջ, բացի այդ, գտնում էր, որ լավ չէ իզուր տեղը Ջեննիին հուզել նամակներով, որոնք, տվյալ պայմաններում, միևնույն է, ոչինչ չէին նշանակում։ Նա որոշել էր նրան էլ, իրեն էլ հան-

գիստ տալ, որպեսզի հետո լուրջ ու հանգիստ գրի իր գործերի մասին։ Մի ամբողջ ամիս նա լռեց, իսկ հետո, իսկապես, նամակով Ջեննին հայտնեց, թե մինչև կոկորդը խրված է եղել գործերի մեջ, թե մի քանի անգամ դուրս է գնացել Չիկագոյից (դա համապատասխանում էր իրականության), իսկ առաջիկայում մտածում է միայն երբեմն լինել այնտեղ։ Նա հարցնում էր Վեստայի մասին, ինչպես են ապրում Սենդվուդում։ «Կարող է պատահել, որ ես շուտով լինեմ ձեզ մոտ»,— գրում էր նա, բայց իրոք նա այդպիսի մտադրություն չուներ, և Ջեննին իսկույն հասկացավ այդ։

Անցավ էլի մի ամիս, և նա նորից մի նամակ գրեց, այս անգամ՝ բոլորովին կարճ։ Նրա առաջին նամակին պատասխանելով՝ Ջեննին մանրամասն պատմեց նրան իրենց կյանքի մասին։ Իր զգացմունքների մասին նա ոչ մի խոսք չգրեց, բայց ասաց, որ ամեն ինչից գոհ է, և Սենդվուդում իրեն շատ լավ է զգում։ Ինքը հույս ունի, որ հիմա նրա գործը դեպի լավը կգնա, և սրտանց ուրախ էր, որ, վերջապես, բոլոր դժվար հարցերը լուծվել են։ «Մի՛ մտածիր, թե ես դժբախտ եմ,— գրում էր նա,— այդ ճիշտ չէ։ Ես համոզված եմ, որ մենք ճիշտ վարվեցինք, որ ես երջանիկ չէի լինի, եթե ուզիղ կերպ վարվեինք։ Իսկ դու քո կյանքն այնպես կառուցիր, որ որքան կարելի է լավ զգաս քեզ։ Դու ավելի մեծ երջանկության ես արժանի, Լեսթեր։ Ինչ էլ որ դու անելու լինես, իմ կարծիքով լավ կլինի։ Ես նախապես համաձայն եմ»։ Նրա մտքում միսիս Ջերալդն էր, և Լեսթերը նրա նամակը կարդալով, այդ հասկանում էր, ինչպես և հասկանում էր, թե նրա մեծահոգության տակ ինչպիսի անձնազոհություն և որքան տառապանքներ են թաքնված։ Եվ հենց այդ էլ նրան ստիպել էր վճռական քայլն անելուց առաջ այնքան տատանվել։

Որքա՜ն հեռու են իրարից գրված խոսքը և գաղտնի միտքը։ Վեց ամսից հետո Լեսթերը համարյա դադարեց գրել, իսկ ութ ամսից հետո նրանց նամակագրությունը վերջնականապես դադարեց։

Մի առավոտ լրագիրն աչքի անցկացնելիս Ջեննին լուրերի բաժնում տեսավ այսպիսի մի տեղեկություն. «Երեքշաբ-

թի օրը միսիս Մալկոլմ Ջերալդը Դրեքսել բուլվարի իր № 4044 տանը հավաքված մեթոդիստական բարեկամներին հայտարարեց, որ ինքը նշանվել է ցինցիննատցի հանգուցյալ Աբշիբալդ Քեյնի կրտսեր որդի Լեսթեր Քեյնի հետ։ Հարսանիքը տեղի է ունենալու ապրիլ ամսին»։

Լրագիրը ցած քնկավ նրա ձեռքից։ Մի քանի րոպե նա անշարժ նստած մի կետի էր նայում։ «Մի՞թե սա հնարավոր է,— մտածում էր նա։— Մի՞թե այսպիսի բան է պատահել»։ Նա գիտեր, որ այդպես է լինելու, բայց և այնպես...բայց և այնպես հույս ուներ։ Ի՞նչ հույս ուներ նա և ինչո՞ւ։ Մի՞թե հենց ինքը չէր պնդում, որ Լեսթերը հեռանա իրենից։ Ինքը չէ՞ր, որ նրան հասկանալ տվեց, թե այդպես լավ կլինի։ Եվ ահա դա տեղի ունեցավ։ Հիմա ի՞նչ անի ինքը։ Մնալ այստեղ և ապրել նրա փողո՞վ։ Ո՛չ, միայն թե ո՛չ այդ։ Այնինչ Լեսթերը խոշոր միջոցներ էր գրել նրա տրամադրության տակ։ Լա-Սալեթրիթի բանկում յոթանասունհինգ հազար դոլլարի երկաթուղային բաժնետոմսեր էին դրված, որոնց տարեկան եկամուտը՝ չորսուկես հազար դոլլարի չափով տրվում էր Ջեննիին։ Կարո՞ղ էր նա հրաժարվել այդ փողից։ Չէ՞ որ հարկավոր էր մտածել Վեստայի մասին։

Ջեննին մինչև հոգու խորքը խոցված էր համարում իրեն, բայց և հասկացավ, որ բարկանալն անմտություն կլինի։ Կյանքը միշտ գաժան էր եղել նրա հետ։ Երևի մինչև վերջ այդպես էլ լինելու է։ Ասենք թե փորձեց ինքնուրույն ապրել, ինքը վաստակել իր հացը, բայց դա ի՞նչ նշանակություն կունենա Լեսթերի համար, միսիս Ջերալդի համար։ Ինքը՝ Ջեննին այս փոքրիկ քաղաքում փակված է չորս պատերի մեջ՝ աննշմար, մեն-մենակ, իսկ նա այնտեղ, լայնարձակ աշխարհում ապրում է լիակատար կյանքով, ազատություն է վայելում։ Լավ չէ այդ, անարդար է։ Բայց ի՞նչ օգուտ լացից, ի՞նչ օգուտ։

Եվ նրա աչքերը ցամաք էին, բայց հոգին արցունք էր ծորում։ Նա դանդաղորեն վեր կացավ, լրագիրը թաքցրեց ճամպրուկի հատակում և ճամպրուկը փակեց բանալիով։

ԳԼԱԽ LVIII

Այժմ, երբ Լեսթերի նշանագրությունը միսիս Ջերալդի հետ կապակցված փաստ էր դարձել, նրա համար արդեն այնքան էլ դժվար չէր հաշտվել նոր պայմանների հետ։ Այո, անտարակույս, ամեն ինչ տանում էր դեպի լավը։ Նա խորապես կարեկցում էր Ջեննիին։ Միսիս Ջերալդը նույնպես կարեկցում էր նրան, բայց մխիթարվում էր այն մտքով, որ այդպես լավ կլինի թե՛ Լեսթերի և թե՛ այդ խեղճ կնոջ համար։ Լեսթերը շատ ավելի երջանիկ կլինի, այդ արդեն հիմա էլ երևում է։ Իսկ Ջեննին ժամանակի ընթացքում կհասկանա, որ խելացի ու անձնվիրաբար է վարվել և ուրախություն կբաղի իր մեծահոգության գիտակցությունից։ Իսկ ինքը՝ միսիս Ջերալդը, որը երբեք քնքուշ զգացմունքներ չէր ունեցել իր հանգուցյալ ամուսնու նկատմամբ, իրեն յոթերորդ երկնքումն էր զգում. վերջապես իրականացավ նրա օրհորդական տարիների երազանքը, թեպետև մի քիչ ուշացումով։ Լեսթերի հետ ապրելուց ավելի լավ բան նա պատկերացնել չէր կարող։ Ուր մնաս, որ չեն գնա նրանք միասին, ինչ ասես, որ չեն տեսնի։ Եկող ամեռ ինքը՝ նորաթուխ միսիս Լեսթերը Քեյնը ամբողջ քաղաքին ցույց կտա, թե ինչպիսի պարահանդեսներ և ընդունելություններ են լինում։ Իսկ Ճապոնիան... մարդու շունչ է կտրվում, երբ մտածում ես, ինչ սքանչելի է լինելու։

Լեսթերը Ջեննիին գրեց իր առաջիկա ամուսնության մասին։ Նա ոչ մի բացատրություն չի տալիս նրան, այդ ավելորդ կլիներ։ Նա գանում է, որ ինքը պետք է ամուսնանա միսիս Ջերալդի հետ։ Եվ որ նա՝ Ջեննին, պետք է խմանա այդ։ Ինքը հույս ունի, որ նա առողջ է։ Նա պետք է միշտ հիշի, որ Լեսթերը սրտին մոտ է ընդունում նրա վիճակը։ Ինքը ամեն կերպ կաշխատի նրա կյանքը հնարավորին չափ հաճելի և դյուրին դարձնել։ Թող վատ հուշ չունենա իր մասին։ Եվ իր կողմից բարեկամ Վեստային։ Նրան հարկավոր է ամենալավ դպրոցը տալ։

Ջեննին շատ լավ էր հասկանում, թե բանն ինչպես է եղել։ Նա գիտեր, որ Լեսթերը սկսել է ձգտել միսիս Ջերալդին

այն ժամանակից, երբ նրանք հանդիպեցին Լոնդոնում, «Կառլտոն» հյուրանոցում։ Այդ կինը երկար ժամանակ նրա ետևից էր ընկել։ Եվ հիմա արդեն իր ձեռքն է զցել։ Ամեն ինչ կարգին է։ Թող բախտավոր լինի։ Ջեննին իր պատասխանում այդպես էլ գրեց, ավելացնելով, որ նշանադրության լուրը կարդացել է լրագրում։ Նրա նամակն ստանալով՝ Լեսթերը մտքի մեջ ընկավ։ Տողերի արանքում նա շատ ավելի բան կարդաց, քան գրածից։ Նույնիսկ այժմ նրան զարմացնում էր Ջեննիի հոգու ամրությունը։ Չնայած այն բոլոր վիրավորանքներին, որ ինքը հասցրել էր նրան և դեռ էլի պիտի հասցներ, նա գիտեր, որ իր զգացմունքը Ջեննիի նկատմամբ լիովին չի մարել։ Նա ազնվասիրտ, հմայիչ կին է։ Հանգամանքներն այլ կերպ դասավորվեին՝ նա հիմա չէր պատրաստվի ամուսնանալ միսիս Ջերալդի հետ։ Բայց և այնպես նա ամուսնացավ նրա հետ։

Պսակադրությունը տեղի ունեցավ ապրիլի տասնհինգին, միսիս Ջերալդի տանը։ Նրանց պսակողը կաթոլիկական քահանա էր։ Լեսթերն ամենևին էլ եկեղեցու օրինակելի զավակ չէր։ Նա հավատացյալ չէր, բայց մտածեց, թե քանի որ ինքը դաստիարակվել է եկեղեցու գրկում, միտք չկա հրաժարվել եկեղեցական պսակադրությունից։ Մի հիսուն հյուր հավաքվեց, բոլորը մոտիկ բարեկամներ։ Ծեսը կատարվեց առանց ամենափոքր անգամ խոչընդոտի։ Նորապսակներին խլացրեցին շնորհավորանքներով, նրանց վրա բռերով բրինձ ու շաղաթղթիկներ էին ցանում։ Հյուրերը դեռ քեֆ էին անում, երբ Լեսթերն ու Լետտին տնից դուրս պրծան կողքի մուտքով, որտեղ նրանց սպասում էր կառքը։ Մի քառորդ ժամ անց ուրախ խումբը նրանց ետևից ուլացավ դեպի Չիկագո—Ռոք—Այլենդ—Սան-Ֆրանցիսկո երկաթուղու կայարան։ Բայց երբ ուղևորները տեղ հասան, երջանիկ զույգն արդեն նստած էր իր կուպեում։

Նորից ծիծաղ, ուրախ բացականչություններ, շամպայն և ահա, վերջապես, գնացքը շարժվեց, նորապսակները ճանապարհ ընկան։

— Այսպես ուրեմն, դու նվաճեցիր ինձ,— ուրախ ասաց

Լեսթերը՝ Լեստիին նստեցնելով իր կողքին։— Եվ դրանից ի՞նչ։

— Ա՛յ թե ինչ,— գոչեց Լեստին և նրան ամուր գրկելով ջերմ-ջերմ համբուրեց։

Չորս օրից հետո նրանք խաղաղ օվկիանոսի ափին էին, և էլի երկու օրից հետո ամենաարագընթաց նավով արդեն սլանում էին դեպի միկադոյի աշխարհը։

Իսկ Ջեննին մենակ մնաց իր վշտի հետ։ Իմանալով, որ Լեսթերն ամուսնանալու է ապրիլին, նա սկսել էր ուշադիր աչքի անցկացնել լրագրերը, որպեսզի լրացուցիչ տեղեկություններ գտնի։ Վերջապես նա գարդաց, որ պսակադրությունը կայանալու է ապրիլի տասնհինգի կեսօրին, միսիս Ջերալդի տանը։ Չնայած նա հնազանդվել ու հաշտվել էր բախտի հետ, բայց ագահությամբ էր ձգտում դեպի այդ անհասկանալի երջանկությունը. սոված, լքյալ երեխան լուսավորված պատուհանով այդպես է նայում տոնածառին։

Հասավ ապրիլի տասնհինգը։ Ջեննին հազիվ դիմացավ, մինչև ժամը տասներկուսը զարկի։ Այդ օրվա բոլոր իրադարձությունները նա այնպես սուր էր. ապրում, ասես ինքն էր մասնակցում դրանց։ Մտքում նա տեսնում էր սքանչելի առանձնատունը, կառքերը, հյուրերին, պսակադրության ծեսը, հարսանյաց ուրախ խնջույքը։ Նա զգում էր, թե իրենց որքան լավ են զգալու նրանք շքեղ կուպեում, ինչպիսի հիանալի ուղևորություն է սպասում նրանց։ Լրագրերում ասված էր, որ նորապսակները մեղրամիսն անց են կացնելու Ճապոնիայում։ Մեղրամի՞ս։ Նրա Լե՞սթերը։ Եվ միսիս Ջերալդն էլ որքա՞ն լավն է։ Եվ նրան, նոր միսիս Քեյնին, միակ իսկական միսիս Քեյնին գրկում է Լեսթերը։ Մի ժամանակ նա նույն ձևով իրեն էր գրկում։ Նա սիրում էր իրեն։ Այո, սիրում էր։ Ջեննիի կոկորդը սեղմվում էր։ Օ՜, աստվա՜ծ իմ։ Նա հառաչում էր ձեռքերը սեղմելով ցավեցնելու չափ, բայց թեթևություն չկար ու չկար. թախիծը առաջվա պես խեղդում էր նրան։

Երբ այդ օրն անցավ, Ջեննիի սիրտը թեթևացավ. եղածը եղած է և ոչ մի կերպ փոխել չես կարող։ Վեստան, որ նույնպես կարդացել էր լրագիրը, շատ լավ էր հասկանում, թե ինչ

է կատարվել, և ամբողջ հոգով խղճում էր մորը, բայց լուռ էր մնում։ Երկու-երեք օր անց Ջեննին մի փոքր հանգստացավ, հաշտվեց անխուսափելիի հետ, բայց էլի շատ ժամանակ անցավ, մինչև որ սրտի սուր ցավը մեղմացավ, իր տեղը զիջելով սովորական խուլ թախիծին։ Ջեննին նրանց վերադարձի օրերն ու շաբաթներն էր հաշվում, թեև գիտեր, որ ինքն այլևս սպասելու բան չունի։ Բայց Ճապոնիան շատ էր հեռու, և Ջեննին, չգիտես ինչու, թեթևություն զգաց, երբ իմացավ, որ Լեսթերն արդեն մոտիկ է իրենից, Չիկագոյումն է։

Անցավ գարունը, ապա՝ ամառը և հասավ հոկտեմբեր ամիսը։ Մի քամի, ցուրտ օր Վեստան դպրոցից վերադառնալով գանգատվեց գլխացավից։ Ջեննին մոր խրատները հիշելով, նրան տաք կաթ խմացրեց, խորհուրդ տվեց ծոծրակին թաց թաշկինակ դնել, աղջիկն իր սենյակն անցնելով, պառկեց։ Հետևյալ օրը նրա ջերմությունը մի քիչ բարձրացել էր։ Տեղական բժիշկ Էմրին իսկույն որովայնային տիֆ կասկածեց. այդ շրջանում արդեն որովայնի տիֆով հիվանդանալու մի քանի դեպք էր եղել։ Բժիշկն ասաց Ջեննիին, որ աղջիկն ամուր օրգանիզմ ունի և ամենայն հավանականությամբ կհաղթահարի հիվանդությունը, բայց կարող է պատահել, որ հիվանդությունը ծանրանա։ Իր կարողությունների վրա հույս չդնելով՝ Ջեննին Չիկագոյից գթության քույր հրավիրեց, և սկսվեցին սպասումի երկար ու ձիգ օրերը, երբ արիությանը փոխարինում էր հուսահատությունը, վախին՝ հույսը։

Շուտով բոլոր կասկածները փարատվեցին. Վեստան իսկապես որովայնային տիֆ ուներ։ Ջեննին միանգամից չգրեց Լեսթերին, թեպետև կարծում էր, որ նա Նյու-Յորքումն է, թերթերի տված լուրերից երևում էր, որ նա մտադիր է ձմեռն այնտեղ անցկացնել. Բայց մի շաբաթ անց, երբ բժիշկը որոշեց, որ հիվանդությունը ծանր է, Ջեննին որոշեց, այնուամենայնիվ, գրել. ի՞նչ իմանաս, ինչ կարող է պատահել։ Լեսթերն այնքա՞ն էր սիրում աղջկան։ Երևի նա կուզենար տեղեկություն ունենալ նրա մասին։

Լեսթերն այդ նամակը չստացավ. երբ նամակը Նյու-Յորք հասավ, Լեսթերն արդեն նավարկում էր Վեստ-Ինդիայում։

Ջեննին ստիպված եղավ մեն-մենակ հերթապահել Վեստայի մահճի մոտ։ Բարեսիրտ հարևանները գրության լրջությունը հասկանալով՝ այցելում էին նրան և կարեկցանքով հարցնում հիվանդի մասին, բայց նրանք չէին կարող իսկական բարոյական սատար լինել Ջեննիին, որպիսին մարդը զգում է միայն, երբ կարեկցանքը գալիս է մոտիկ մարդկանցից։ Մի ժամանակ թվաց, թե Վեստայի դրությունը լավացել է, և՛ բժիշկը, և՛ քույրը արդեն պատրաստ էին հուսադրելու Ջեննիին։ Բայց հետո աղջիկը նկատելիորեն ուժերը կորցրեց։ Բժիշկ Էմրին բացատրեց, թե հիվանդությունը բարդացում է տվել սրտին և երիկամներում։

Եվ ահա, մահվան սավերն արդեն կախվեց տան վրա։ Բժշկի դեմքը դարձավ լուրջ ու կենտրոնացած, քույրը բոլոր հարցերին խուսափողական պատասխան էր տալիս։ Իսկ Ջեննին աղոթում էր—որովհետև էլ ի՞նչը կարելի է աղոթք համարել, եթե ոչ բուռն ցանկությունը, որի վրա կենտրոնացած են մարդու բոլոր մտքերը—միայն թե Վեստան լավանա։ Վերջին տարիներս աղջիկն այնքա՞ն էր մտերմացել մոր հետ։ Նա սիրում էր մորը, նա արդեն իր մանկական խելքով հասկանում էր, թե որքան տառապանք է կրել մայրը։ Իսկ Ջեննին ինքը նրա շնորհիվ պատասխանատվության ավելի խոր զգացմունքով էր համակվել։ Այժմ նա գիտեր, թե ինչ է նշանակում լավ մայր լինել։ Եթե Լեսթերը ցանկանար, եթե ինքը նրա օրինական կինը լիներ, որքա՞ն ուրախ կլիներ նրանից երեխաներ ունենալ։ Եվ նա միշտ իրեն պարտական էր զգում Վեստայի առաջ։ Երկար ու երջանիկ կյանք. ահա թե ինչ է պարտական տալ իր աղջկան, որպեսզի քավի նրա ծննդյան ու վաղ մանկության խայտառակությունը։ Ջեննին մեծ ուրախությամբ էր տեսնում, թե ինչպես իր փոքրիկ աղջիկը դառնում է գեղեցիկ, նազելի, խելացի օրիորդ։ Եվ ահա հիմա նա մեռնում է։ Բժիշկ Էմրին Չիկագոյից մի ծանոթ բժիշկ հրավիրեց կոնսիլիումի։ Մտախոհ, բարեսիրտ ծերունին միայն գլուխն օրորեց։

— Բուժումը ճիշտ է եղել,— ասաց նա։— Երևում է, որ-

գանիզմն այնքան էլ ամուր չէ։ Ամենքը միանման չեն պայքարում այս հիվանդության դեմ։

Բժիշկները հանգեցին մի եզրակացության. եթե երեք օրում հիվանդի դրությունը չլավանա, պետք է սպասել վախճանին։

Ճշմարտությունը Ջեննիից թաքցնել հնարավոր չհամարեցին։ Նա նստել էր աղջկա մահճի մոտ գույնը գցած, առանց մտքերի, կլանված լարի պես ձգված մեկ զգացմունքով միայն։ Թվում էր, թե նրա ամբողջ էությունն արձագանքում է Վեստայի վիճակում տեղի ունեցող ամեն մի փոփոխության, նա ֆիզիկապես զգում էր աղջկա ուժերի ամենաչնչին վերականգնումը և ամենափոքր վատացումը։

Ջեննիի հարևանուհիներից մեկը՝ միսիս Դևիսը, որ արդեն տարեց լիքը-լիքը մի կին էր, զուտ մայրական քնքշությամբ էր վերաբերվում նրան։ Խորապես կարեկցելով Ջեննիին՝ նա բժշկի և քրոջ հետ միասին հենց սկզբից ամեն ինչ անում էր, որպեսզի նա հուսահատության մեջ չընկնի։

— Լավ կլիներ դուք գնայիք ձեր սենյակը, մի քիչ պառկեիք, միսիս Քեյն,— ասում էր նա Ջեննիին, տեսնելով, որ նա աչքը չի հեռացնում Վեստայից կամ աննպատակ թափառում է սենյակներում։— Ես այստեղ ամեն ինչի կհետևեմ։ Ամեն ինչ ձեզանից վատ չեմ անի։ Ի՞նչ է, կարծում եք չե՞մ կարող։ Ես ինքս յոթ երեխա եմ ծնել և երեքին հողին հանձնել։ Մի՞թե ես չեմ հասկանում։

Մի անգամ Ջեննին, գլուխը դնելով նրա փափուկ, տաք ուսին, սկսեց լալ։ Միսիս Դևիսն էլ նրա հետ լաց եղավ։

— Խե՜ղճ, խե՜ղճ կին, կարծում եք չե՞մ հասկանում։ Դե լավ, դե լավ, եկեք գնանք միասին։

Եվ Ջեննիին տարավ ննջարան, բայց Ջեննին երկար ժամանակ մենակ մնալ չէր կարող։ Մի քանի րոպեից հետո առանց հանգստանալու նա վերադարձավ աղջկա մոտ։

Վերջապես մի անգամ, կեսգիշերին, երբ քույրը վստահորեն ասել էր, թե մինչև առավոտ ոչինչ չի կարող պատահել, հիվանդի սենյակում ինչ-որ իրարանցում սկսվեց։ Ջեննին, որ հենց նոր էր պառկել հարևան սենյակում, լսեց ու

վեր կացավ։ Վեստայի անկողնի մոտ աղոտ լույսի տակ կանգնած էին քույրը և միսիս Դևիսը։

Ջեննին ամեն ինչ հասկացավ։ Աղջկանը մոտենալով, նա երկա՞ր-երկար նայեց նրա մոմագույն դեմքին։ Վեստան հազիվ էր շնչում, նրա աչքերը փակ էին։

— Շատ է թուլացել, —շշնջաց քույրը։

Միսիս Դևիսը Ջեննիի ձեռքը բռնեց։

Բոպենին անցնում էին, նախասենյակում ժամացույցը խփեց ժամը մեկը։ Ժամանակ առ ժամանակ քույրը մոտենում էր դեղորայքի փոքրիկ սեղանին և մի շոր ջրի մեջ թրջելով թացացնում էր Վեստայի շուրթերը։ Ժամը մեկ անց կեսին հիվանդի թուլացած մարմինը շարժվեց։ Ապա լսվեց մի խոր հոգոց։ Ջեննին առաջ նետվեց, բայց միսիս Դևիսը նրան ետ քաշեց։ Քույրը նշան արեց նրանց, որ հեռանան։ Հիվանդի շունչը դադարեց։

Միսիս Դևիսն ամուր բռնեց Ջեննիի ուսերը։

— Խե՞ղճ կին, խե՞ղճ կին,— շշնջաց նա, տեսնելով, որ Ջեննին հեծկլտանքից ցնցվում է։— Դե մի՛ լար, մի՛ լար, արցունքով վերքդ չես բուժի։

Ջեննին ծունկ չոքեց մահճակալի առաջ և սկսեց շոյել աղջկա դեռևս տաք ձեռքերը։

— Վեստա՞,— աղաչում էր նա,— մի՛ հեռացիր ինձանից։

Ասես բոլորովին հեռվից նրան էր հասնում միսիս Դևիսի մեղմիկ ձայնը.

— Մի տանջվիր, սիրելիս։ Ամեն ինչ աստծո կամքն է։ Ինչ որ նա անում է, լավ մտքով է անում։

Ջեննիին թվում էր, թե գետինը պատռվում է իր ոտքերի տակ։ Բոլոր թելերը կտրտված էին։ Նրան պարուրող անծայրախավարի մեջ լույսի ոչ մի նշույլ չէր մնացել։

ԳԼՈՒԽ LIX

Անողոք բախտի այս նոր հարվածից խորտակված՝ Ջեննին նորից ընկավ այն ճնշված տրամադրության մեջ, որից

նրան քաջալերել էին Հայոց-Պարկում Լեթենքի հետ ապրած խաղաղ ու երջանիկ տարիները։ Շատ ժամանակ անցավ, մինչև որ նա պիտակցեց, թե Վեստան մեռել է։ Այն նիհարած մարմինը, որին դեռ էլի երկու օր նայում էր մարքը, ամենևին նման չէր նրա աղջկան։ Որտե՞ղ է նրա զվարթությունը, որտե՞ղ են շարժումների արագությունը և աչքերի կենդանի փայլը։ Ամեն ինչ անհետացել է։ Մնացել է դժգույն, մոմանման էությունը՝ լռությունն։ Ջեննին լաց չէր լինում, նա միայն խոր ու անանահանջ ցավ էր զգում։ Եվ չկար նրա մոտ մեկը, որ շշնջար նրան հավիտենական խաղաղության խոսքերը, այն պարզ ու սրտալի խոսքերը, թե՝ մահ չկա։

Բժիշկ Էմբեն, քույրը, մխիթ Դեմոը և մյուս հարևանները բոլորն էլ վշտակից և ուշադիր էին Ջեննիի նկատմամբ։ Մխիթ Դեմոը Լեթենքին հեռագիր տվեց Վեստայի մահվան մասին, բայց նա հեռու էր, և պատասխան չստացվեց։ Ինչ որ մեկը ճաշ էր պատրաստում և սենյակներում կարգ ու կանոն էր պահպանում. Ջեննին ինքը ոչ մի բանով չէր հետաքրքրվում։ Նա միայն ջուջուկում ու երկար-երկար նայում էր Վեստայի սիրած իրերին, որոնք մի ժամանակ նվիրել էր նրան Լեթենքը, կամ ինքն էր նվիրել, և ծանր հառաչում էր, մտածելով, որ դրանք այլևս պետք չեն գալու իր աղջկանը։

Ջեննին ասաց, որ Վեստայի մարմինը փոխադրեն Չիկագո և թաղեն Փրկչի գերեզմանատանը, որտեղ Գերհարդի մահվան ժամանակ Լեթենքը մի հողակույտ էր ձեռք բերել։ Նրա խնդրանքով գերեզմանի վրա մի քանի խոսք պիտի ասեր լութերական այն եկեղեցու քահանան, ուր միշտ հաճախում էր Գերհարդը։ Տանը, Սենդվուդում, կատարվեցին սովորական ծեսերը։ Տեղական մեթոդիստական եկեղեցու քահանան կարդաց Պողոս առաքյալի թեսալոնիկեցիներին ուղղված թղթի առաջին մասը, Վեստայի դասընկերների խումբը երգեց «Առ ի քե՞զ, տեր իմ, առ ի քե՞զ»։ Կային ծաղիկներ, սպիտակ դագաղ և անթիվ ցավակցություններ, իսկ հետո Վեստային տարան։ Դագաղը դրին մի արկղի մեջ, բարձրացրին վագոն և տարան Չիկագոյի լութերական գերեզմանատուն։

Ջեննին այդ օրերին ասես երազի մեջ լիներ։ Իր խոր վշտից շշմած՝ նա համարյա ոչինչ չէր զգում և ոչինչ չէր ընկալում։ Միսիս Դեյսը և նրա պնդումով էլի մի չորս հարեվանուհի գնացին Չիկագո՝ թաղմանը մասնակցելու։ Երբ դագաղը գերեզման էին իջեցնում, Ջեննին լուռ կանգնել էր քար կտրած և ասես ոչինչ չէր զգում։ Թաղումից հետո նա վերադարձավ Սենդվուդ, բայց այնտեղ երկար չմնաց։ Նա ուզում էր լինել Չիկագոյում, Վեստային և Գերհարդին մոտիկ։

Մենակ մնալով՝ Ջեննին մտածում էր, թե ինչպես պիտի ապրի այսուհետև։ Նա զգում էր, որ իրեն անհրաժեշտ է աշխատել, թեկուզև գրա նյութական կարիքը չկար։ Կարելի է գթության քույր դառնալ, և դրա համար հարկավոր է հենց հիմա սկսել սովորել։ Ջեննին հիշեց և իր եղբայր Ուիլյամին։ Ուիլյամն ամուսնացած չէր։ Գուցե նա կուզենար ապրել քրոջ հետ։ Բայց նրա հասցեն Ջեննիին հայտնի չէ, և Բասսն էլ չգիտե, թե որտեղ կարելի է նրան գտնել։ Ջեննին որոշեց գործ գտնել որևէ խանութում։ Հարկավոր է մի բան անել։ Նա չի կարող այստեղ մենակ ապրել և թողնել, որ հարևանները հոգան իր մասին։ Որքան էլ ծանր է իր համար, այնուամենայնիվ, ավելի հեշտ կլինի, եթե փոխադրվի Չիկագո և հյուրանոցում իջևանելով աշխատանք որոնի իր համար, կամ թե Փրկչի գերեզմանատնից ոչ հեռու մի փոքրիկ տուն վարձի։ Բայց կարող է և մի երեխա վերցնել իր խնամքի տակ։ Քաղաքում ինչքա՜ն ասես որբանոց կա։

Լեսթերը իր կնոջ հետ Չիկագո վերադարձավ Վեստայի մահվանից մի երեք շաբաթ հետո և միայն այդ ժամանակ տեսավ Ջեննիի առաջին նամակը, հեռագիրը և էլի մի հակիրճ նամակ՝ աղջկա մահվան մասին։ Նա անկեղծորեն տրխմրեց, որովհետև իսկապես կապված էր Վեստայի հետ։ Անսահման խղճալով Ջեննիին՝ նա կնոջն ասաց, որ այցելության է գնալու։ Նրան անհանգստացնում էր Ջեննիի ապագան։ Չէր կարելի, որ նա միայնակ ապրեր։ Գուցե ինքը կկարողանար որևէ օգտակար խորհուրդ տալ նրան։ Նա գնաց Սենդվուդ, բայց այնտեղ իմացավ, որ Ջեննին փո-

խաղրվել է Չիկագո, «Տրեմոնտ» հյուրանոց։ Հյուրանոցում ևս նա Ջեննիին չգտավ, նա այցի էր գնացել աղջկա գերեզմանին։ Այդ նույն օրը նա երկրորդ անգամ եկավ, և նրան ասացին, որ Ջեննին տանն է։ Երբ Լեսթերի այցետոմսը տվին Ջեննիին, նա խիստ հուզվեց, ավելի շատ հուզվեց, քան առաջներում նրան հանդիպելիս, որովհետև հիմա նա իրեն ավելի շատ էր հարկավոր։

Մինչև այժմ Լեսթերը շատ էր մտածել իր արարքի մասին. դրան չէր խանգարում ոչ նրա շատ բարեհաջող ամուսնությունը, ոչ նորից ձեռք բերած հարստությունն ու պատիվը։ Նրա տարակուսանքները և իրենից անբավականությունը մինչև այժմ էլ չէին վերացել։ Այն միտքը, թե ինքն ապահովել է Ջեննիին, նրան չէր մխիթարում, նա միշտ էլ գիտեր, թե Ջեննիի համար որքան քիչ բան է նշանակում փողը։ Սեր—ահա ինչն էր նրա կյանքի իմաստը։ Առանց սիրո նա ասես խարխուլ մակույկ լիներ բաց ծովում. Լեսթերն այդ լավ գիտեր։ Ջեննիին հարկավոր էր միայն նա ինքը, և Լեսթերը խոր ամոթ էր զգում, մտածելով, որ ինքնապահովման զգացմունքը և հարստության ծարավն իր մեջ ավելի ուժեղ եղան, քան կարեկցանքը Ջեննիի նկատմամբ։ Այն օրը, երբ նա «Տրեմոնտ» հյուրանոցի լիֆտով վեր էր բարձրանում, խիղճը դաժանորեն տանջում էր նրան, թեպետև հասկանում էր, այժմ արդեն իր ուժերից վեր է որևէ բան ուղղել։ Նա ամբողջովին մեղավոր էր և՛ նրա համար, որ հրապուրեց Ջեննիին, և՛ նրա համար, որ հակառակ ամբողջ աշխարհի կարծիքի՝ մինչև վերջ չմնաց նրա հետ։ Բայց այժմ արդեն ոչինչ անել չէր կարելի։ Հարկավոր է միայն որքան կարելի է մեղմ վարվել Ջեննիի հետ, խոսել նրա հետ և հնարավորության չափով օգնել նրան կարեկցանքով ու խորհուրդներով։

— Բարև, Ջեննի,— սիրալիր ասաց Լեսթերը, երբ Ջեննին նրա առաջ բացեց դուռը։

Որքա՜ն էին փոխել նրան իր կրած տառապանքները։ Նա նիհարել էր, գունատ այտերը ներս էին ընկել, աչքերն ասես խոշորացել էին։

— Ինչպիսի՞ զարհուրելի դժբախտություն,— խոսեց Լեսթերը շփոթված։ Ո՞վ կարող էր մտածել, թե այսպիսի բան կպատահի։

Այն ժամանակից, ինչ Վեստան մեռել էր և այն ժամանակից, ինչ Լեսթերը հեռացել էր, սրանք առաջին մխիթարանքի խոսքերն էին, որ հասան Ջեննիի սրտին։ Լեսթերի գալուստը խորապես հուզեց նրան. հուզմունքից խոսել էլ չէր կարողանում։ Արցունքի կաթիլները դողացին նրա թարթիչների վրա և գլորվեցին այտերի վրայով։

— Մի՛ լար, Ջեննի,— ասաց Լեսթերը գրկելով նրան և գլուխը գորովանքով սեղմելով իր ուսին։— Ես այնքա՞ն խղճում եմ քեզ։ Շատ բան եմ ցանկանում, բայց արդեն ուշ է դրա մասին խոսել։ Ես անսահման ցավում եմ Վեստայի համար։ Որտե՞ղ ես թաղել նրան։

— Հայրիկի կողքին,— պատասխանեց Ջեննին ու հեկեկաց։

— Այո, շատ վատ բան եղավ,— կամացուկ ասաց Լեսթերը և լռեց։

Փոքր-ինչ հանգստանալուց հետո Ջեննին ետ քաշվեց նրանից և աչքերը սրբելով հրավիրեց նստել։

— Այնքա՞ն եմ ցավում, որ այդ ժամանակ այստեղ չեմ եղել,— շարունակեց Լեսթերը։— Թե չէ շարունակ քեզ հետ կլինեի։ Հիմա երևի դու այլևս չես ուզի Սենդվուդում ապրել։

— Չեմ կարող, Լեսթեր,— ասաց նա։— Ուղղակի ուժ չկա։

— Իսկ ո՞ւր ես մտածում փոխադրվել։

— Դեռ չգիտեմ։ Այնտեղ չէի ուզում բեռ դառնալ հարեվաններիս վրա։ Մտածում էի որևէ տեղ մի փոքրիկ տուն վարձել և մի երեխա վերցնել, կամ թե աշխատանքի կմտնեմ... միայնակ ապրելն այնքա՞ն ծանր է ինձ համար։

— Այ, երեխա վերցնելը վատ միտք չէ,— ասաց Լեսթերը։— Այնքան էլ տխուր չի լինի կյանքդ։ Դու արդեն տեղեկացե՞լ ես, թե դրա համար ինչ է հարկավոր։

— Կարծում եմ ուղղակի պետք է դիմել որևէ որբանոց։

— Կարող է պատահել, որ դա մի քիչ բարդ գործ լի-

նի,— ասաց Լեսթերը մտախոհ։— Կարծում եմ ինչ-որ ձևականություններ պիտի կատարել, բայց ճիշտը չգիտեմ ինչ։ Որբանոցները պահանջում են, որ երեխան իրենց տեսադաշտում մնա, կամ ինչ-որ այդպիսի մի բան։ Դու խորհրդակցիր Ուոթսոնի հետ, նա քեզ կբացատրի։ Ինքդ միայն երեխան ընտրիր քո ճաշակով, իսկ մնացածը թող նրան։ Ես նրա հետ կխոսեմ, կնախազգուշացնեմ։

Լեսթերը հասկանում էր, թե մենակությունը որքան ծանր է Ջեննիի համար։

— Որտե՞ղ է քո եղբայր Ջորջը,— հարցրեց նա։

— Ջորջը Ռոչեստերումն է, բայց նա չի կարող ինձ մոտ գալ։ Բասսը գրել էր, որ նա ամուսնացել է։

— Իսկ ուրիշ ոչ ոք չկա՞ քո հարազատներից, որ ցանկանար քեզ հետ ապրել։

— Գուցե թե Ուիլյամը, միայն չգիտեմ, թե հիմա որտեղ է ապրում նա։

— Եթե դու մտածում ես ապրել Չիկագոյում, նայիր նոր թաղամասը Ջեկսոն-Պարկից դեպի արևմուտք,— խորհուրդ տվեց նա։— Այնտեղ, հիշում եմ, շատ փոքրիկ կոտեջներ կան։ Պարտադիր չէ, որ միանգամից գնես։ Սկզբում վարձիր մի որոշ ժամանակով, իսկ հետո արդեն կտեսնես՝ հարմա՞ր է քեզ թե ոչ։

Ջեննին մտածեց, որ դա հիանալի խորհուրդ է. չէ՞ որ այդ խորհուրդը նա Լեսթերից էր ստացել։ Որքա՞ն բարի է նա, հետաքրքրվում է նրա բոլոր գործերով։ Նշանակում է իրենք բոլորովին օտար չեն միմյանց համար։ Նա հետաքրքրքրվում է իրենով։ Ջեննին էլ սկսեց հարցուփորձ անել նրա կնոջ առողջության մասին, հարցրեց, թե գո՞հ է իր ճանապարհորդությունից, երկա՞ր է մնալու Չիկագոյում։ Իսկ Լեսթերը նրան պատասխանում էր շարունակ մտածելով, թե որքան դաժանորեն է վարվել նրա հետ։ Նա մոտեցավ լուսամուտին և սկսեց նայել ցած, մարդաշատ փողոցին։ Կառքերը, սայլերը, այս ու այն կողմ գնացող անցորդները միախառնվելով մի անհասկանալի շարժում էին դարձել։ Երա-

գում այդպես են շարժվում սավերները։ Արդեն մութն իջնում էր, և այստեղ-այնտեղ լամպեր էին վառվում։

— Ես ուզում եմ մի բան ասել քեզ, Ջեննի,— խոսեց Լեսթերը, դուրս գալով իր մտախոհ վիճակից։— Այն ամենից հետո, ինչ պատահել է, սա կարող է տարօրինակ թվալ քեզ, բայց դու հիմա էլ թանկ ես ինձ համար։ Ես չեմ դադարել քո մասին մտածել։ Ինձ թվում էր, թե քեզանից բաժանվելով, ես իսկապես եմ վարվում. այն ժամանակ ամեն ինչ այդպես էր դասավորվել։ Ինձ թվում էր, թե քանի որ Լեստին ինձ դուր է գալիս, ես կարող եմ ամուսնանալ նրա հետ։ Որոշ տեսակետից ես հիմա էլ պատրաստ եմ ընդունելու, որ այսպես է լավ, բայց սա ինձ ավելի մեծ երջանկություն շտվեց։ Ես երբեք ավելի երջանիկ չեմ լինի, քան երբ քեզ հետ էի։ Երևում է՝ խնդիրն այստեղ իմ անձը չէ. առանձին մարդն ընդհանրապես քիչ նշանակություն ունի։ Զգիտեմ, կհասկանաս դու ինձ, թե ոչ, բայց, իմ կարծիքով, մենք բոլորս այս կամ այն չափով հնչին արարածներ ենք։ Մեզ տնօրինում են այնպիսի ուժեր, որոնց վրա մենք իշխել չենք կարող։

— Հասկանում եմ, Լեսթեր,— ասաց Ջեննին։— Ես ոչ մի բանից չեմ դանդատվում։ Այսպես ավելի լավ է։

— Վերջ ի վերջո, կյանքը շատ նման է ֆարսի,— դառնությամբ շարունակեց Լեսթերը։— Մի հիմար կոմեդիա է, ուրիշ ոչինչ։ Միակ բանը, որ կարելի է անել, իր «ես»-ը պահպանելն է։ Իսկ ազնվություն, որքան ես կարող եմ դատել, ոչ ոք մեզանից չի պահանջում։

Ջեննին այնքան էլ լավ չըմբռնեց նրա խոսքերի իմաստը, բայց, հասկացավ, որ նա գոհ չէ իրենից, և խղճաց նրան։ Եվ փորձեց սփոփել նրան.

— Դու ինձ համար մի՛ անհանգստանա, Լեսթեր։ Ես, ոչինչ, կապրեմ։ Սկզբում, երբ նոր էի վարժվում միայնակ ապրել, շատ ծանր էր։ Բայց հիմա՝ ոչինչ։ Մի կերպ կապրեմ։

— Բայց դու հիշիր, որ իմ վերաբերմունքը քեզի՝ չի փոխվել,— ջերմորեն ասաց Լեսթերը։— Ամեն բան, ինչ քեզ է վերաբերում, ինձ համար կարևոր է։ Երբ դու նոր վայրում տեղավորվես, կգամ տեսնելու թե ամե՞ն ինչ ունես։

Ես այստեղ նույնպես էլի կգամ մի քանի օրից հետո։ Դու հասկանո՞ւմ ես իմ հոգին։

— Այո,— ասաց Ջեննին,— հասկանում եմ։

Լեսթերը նրա ձեռքը բռնեց և շոյեց։

— Մի՛ վշտանա,— ասաց նա։— Հարկավոր չէ։ Ես ամեն բան կանեմ, ինչ կարող եմ։ Ինչ կուզես ասա, Ջեննի, բայց դու ինձ համար առաջվա Ջեննին ես։ Ես վատ մարդ եմ, բայց և այնպես որոշ լավ բան կա իմ մեջ։

— Ոչինչ, ոչինչ, Լեսթեր։ Չէ՞ ես ինքս էի պնդում, որ դու այդպես անես։ Ամեն ինչ լավ կլինի։ Եվ դու, երևի, բախտավոր ես հիմա, երբ...

— Չարժե, Ջեննի,— ընդհատեց նրան Լեսթերը։ Ապա սիրալիր իր կողմը քաշեց նրան ու ժպտաց։— Դու ինձ չե՞ս համբուրի ինչպես հին ժամանակ։

Ջեննին ձեռքը դրեց նրա ուսին, երկար նայեց աչքերի մեջ, ապա համբուրեց։ Երբ նրանց շրթունքները հանդիպեցին, նա զգաց, որ դողում է։ Լեսթերը նույնպես դժվարությամբ էր տիրապետում իրեն։ Նկատելով նրա հուզմունքը՝ Ջեննին ճիգ գործադրեց խոսելու։

— Հիմա գնա,— հաստատուն ասաց նա։— Դուրսն արդեն բոլորովին մութ է։

Լեսթերը դուրս գնաց, գիտակցելով, որ ինքը միայն մեկ բան է ուզում. մնալ այստեղ։ Մինչև այժմ էլ Ջեննին նրա համար միակ կինն էր աշխարհում։ Իսկ Ջեննին իրեն ավելի թեթև զգաց, թեև առաջվա պես անջատ էր ապրելու։ Նա չէր փորձում հասկանալ այդ հանելուկի էթիկական կամ բարոյական կողմը։ Ի տարբերություն շատերի՝ Ջեննին չէր ձգտում օվկիանոսը տեղավորել թեյի բաժակի մեջ կամ հեղհեղուկ աշխարհը կապկպել օրենք կոչվող մի թելով։ Լեսթերը դեռ էլի մի քիչ սիրում էր իրեն։ Նա Լետտիին էլ է սիրում։ Դե ի՛նչ կա որ։ Մի ժամանակ ինքը հույս ուներ, որ բացի իրենից, ուրիշ ոչ ոք Լեսթերին պետք չի լինի։ Այդ սխալ եղավ, բայց մի քիչ սերը մի՞թե ոչինչ է։ Ոչ, իհարկե։ Եվ Լեսթերն ինքն էլ նույն կարծիքին էր։

ԳԼՈՒԽ LX

Հետագա հինգ տարիների ընթացքում Լեսթերի և Ջեննիի կյանքի ուղիներն ավելի հեռացան իրարից։ Նրանք հաստատորեն հիմնավորվեցին յուրաքանչյուրն իր աշխարհում, այդպես էլ չվերականգնելով նախկին հարաբերությունները, որոնց, թվում էր, կարող էին հասցնել նրանց «Տրեմոնտ» հյուրանոցում ունեցած մի քանի հանդիպումները։ Լեսթերը հաղիվ էր հասցնում գլուխ հանել իր գործարար ու աշխարհիկ պարտականություններից։ Նա պտույտ էր գալիս այնպիսի մի մթնոլորտում, որի մասին համեստ Ջեննին մտածել անգամ չէր կարող։ Իսկ ինքը՝ Ջեննին հանդարտ ու միապաղաղ կյանք էր վարում։ Քաղաքի հարավային կողմում, Հայդ-Պարկից ոչ հեռու, մի գեղեցիկ, բայց ամենևին ոչ շքեղ փողոցում, մի փոքրիկ, հասարակ տան մեջ նա ապրում էր իր որդեգիր աղջկա, թխահեր Ռոզայի հետ, որին նա վերցրել էր ընկեցիկ երեխաների Արևմտյան որբանոցից։ Նոր հարևանները նրան ճանաչում էին Ջ. Գ. Սթովեր անունով. նա բարվոք էր համարել հրաժարվել Քեյն ազգանունից։ Իսկ միստր և միսիս Քեյնները, երբ ապրում էին Չիկագոյում, ծովափին զբաղեցնում էին մի վիթխարի առանձնատուն, որտեղ ընդունելությունները, պարահանդեսներն ու ճաշկերույթները իրար հաջորդում էին զարմանալի, ուղղակի կալեյդոսկոպիկ արագությամբ։

Ի դեպ, Լեսթերն ինքը վերջին ժամանակներս ավելի հանգիստ, բովանդակալից կյանքի հակումն էր ցուցաբերում։ Նա իր ծանոթների ցուցակից շատերի անունն էր ջնջել, որոնք, արդեն հուշ դարձած, խառնակ տարիներին իրենց դրսևորել էին ոչ բավականաչափ նրբանկատ կամ անպարկեշտ և կամ անտարբեր կամ բամբասասեր։ Լեսթերն այժմ Միջին Արևմուտքի ինը խոշորագույն ֆինանսական ու առևտրական ընկերությունների անդամ էր, իսկ մի քանիսի էլ՝ նախագահ։ Դրանք էին՝ «Միավորյալ Տրակտորային»-ը, կենտրոնը Ցինցիննատիում, «Արևմտյան Հալոցայինը», «Միավորյալ Կառաշինականը», Չիկագոյի Երկրորդ Ազգային բանկը, Ցին-

ցիննատիի Երկրորդ Ազգային բանկը և մի քանի ուրիշ ո՛չ պակաս նշանավոր ընկերություններ։ Կառաշինական տրեստի գործերին նա անմիջական մասնակցություն չէր ունենում, դերադասելով գործել իր հավատարմատար միստր Ուոթսոնի միջոցով, բայց չէր դադարում հետաքրքրվել նրանով։ Ռոբերտին նա չէր տեսել արդեն յոթ տարի, Իմոջինին՝ երեք տարի, թեև նա ապրում էր Չիկագոյում։ Լուիզան, էմին, նրանց ամուսինները և մերձավոր ծանոթները նրա համար օտար մարդիկ էին դարձել։ «Նայթ, Քիթլի և Օ'Բրայեն» իրավաբանական գրասենյակին նա մոտ էլ չէր թողնում իր գործերին։

Տարիների ընթացքում Լեսթերը մի փոքր ծանրացել էր, իսկ նրա հայացքները կյանքի մասին ակներևորեն սկեպտիկ երանգ էին ստացել։ Իր շրջապատի աշխարհում նա ավելի ու ավելի պակաս էր իմաստ տեսնում։ Մի ժամանակ, հեռավոր անցյալում, տեղի է ունեցել մի անհասկանալի երևույթ. օրգանական մանրիկ բջիջն սկսել է զարգանալ, այն բազմացել է բաժանումով, սովորել է միանալ ուրիշ բջիջների հետ, առաջացնելով պես-պես օրգանիզմներ՝ ձկներ, գազաններ, թռչուններ, վերջապես՝ մարդ։ Եվ ահա մարդը՝ բջիջների այդ կուտակումը, իր հերթին ուրիշ մարդկանց հետ միավորվելով, իր համար ճանապարհ է բացում դեպի ավելի ապահովված ու բազմապիսի գոյություն։ Իսկ ինչո՞ւ։ Միայն աստծուն է հայտնի։ Վերցնենք թեկուզ նրան՝ Լեսթեր Քեյնին։ Նա օժտված է մեծ խելքով և որոշ տաղանդով, նա ժառանգություն է ստացել մի ինչ-որ չափով հարստություն, որին ինքը, եթե խոր մտածենք, ոչնչով արժանի չէ, պարզապես բախտը բերել է։ Բայց քանի որ այդ հարստությունը նա օգտագործում է նույնքան խելացի, գործարար ու ստեղծարար, որքան կաներ այդ ամեն մի մարդ, եթե նրա տեղը լիներ, ապա ուրեմն չի կարելի ասել, թե ուրիշները դրան ավելի շատ արժանի կլինեն։ Նա կարող էր ծնվել աղքատության մեջ, և այն ժամանակ կյանքից դոհ կլիներ ոչ ավելի ոչ պակաս, քան ամեն մի աղքատ մարդ։ Ի՞նչ կարիք կա գանգատվել, անհանգստանալ, ենթադրությունների մեջ ընկնել։ Ինչ էլ որ մարդ անելու լի-

նի, կյանքն անշեղորեն առաջ է ընթանալու ենթարկվելով իր սեփական օրենքներին։ Դրանում նա համոզված է։ Ուրեմն էլ ի՞նչ կարիք կա հուզվելու։ Բացարձակապես հարկավոր չէ։ Երբեմն լեսթերին թվում էր, թե նույն հաջողությամբ ինքը կարող էր ամենևին էլ աշխարհ չգալ։ Երեխաները— «ի վերուստ մեզ տրված երջանկությունը», ինչպես ասել էր բանաստեղծը—նրա համար ամենևին էլ ցանկալի և անհրաժեշտ չէին։ Այդ նույն կարծիքին էր նաև միսիս Քեյնը։

Ջեննին, որ առաջվա պես իր որդեգրած դստեր հետ ապրում էր Հարավային կողմում, նույնպես ոչ մի որոշակի պատկերացում չուներ կյանքի իմաստի մասին։ Ի տարբերություն լեսթերի և միսիս Քեյնի՝ նա վերլուծական մտածողություն չուներ։ Նա ամեն բան տեսել էր կյանքում, շատ էր տառապել, որոշ բան էլ կարդացել էր առանց ընտրության ու սիստեմի։ Գիտության հատուկ ճյուղերից նա ոչինչ չէր հասկանում։ Պատմությունը, ֆիզիկան, քիմիան, բուսաբանությունը, երկրաբանությունը և սոցիոլոգիան—այս ամենը նրա համար մթին անտառ էին, այն չէին, ինչ լեսթերի և լեսթերի համար։ Գիտելիքների փոխարեն նա աղոտ զգացողություն ուներ, որ աշխարհը սխալ ու անհասկանալի է կառուցված։ Հավանորեն ոչ ոք մինչև վերջ ոչինչ չի հասկանում։ Մարդիկ ծնվում են և մեռնում։ Ամենք գտնում են, որ աշխարհն ստեղծվել է վեց հազար տարի առաջ, ուրիշներն ասում են, թե այն գոյություն ունի շատ ու շատ միլիոնավոր տարիներ։ Եվ ի՞նչ է թաքնված այս ամենի տակ. կույր պատահականությո՞ւն, թե՞ ինչ-որ ուղղություն տվող գիտակցություն, ինչ-որ աստված։ Երևի պետք է որ մի ինչ-որ բան լինի, մտածում էր Ջեննին, երևի մի ինչ-որ բարձրագույն ուժ է ստեղծել շրջապատի ամբողջ գեղեցկությունը՝ ծաղիկները, խոտը, ծառերը, աստղերը։ Բնությունը որքա՞ն չքնաղ է։ Կյանքը երբեմն դաժան է թվում, բայց բնության գեղեցկությունը հարատև է։ Այս միտքն էր զորավիգ լինում Ջեննիին, որը իր մենության մեջ հաճախ և երկար ժամանակ մխիթարվում էր դրանով։

Ջեննին մանկուց աշխատասեր էր։ Նա երբեք ձեռքերը ծալած չէր նստում, բայց և աշխատանքը նրան չէր խանգա-

ռում մտածել։ Վերջին տարիներս նա գիրացել էր, թեպետև ո՛չ չափից ավելի։ Նա պատկառելի ու վայելչատես արտաքին ուներ, չնայած կրած հոգսերին ու վշտին՝ դեմքին ոչ մի կընճիռ չկար։ Նրա գեղեցիկ թուխ մազերի մեջ արդեն սկսել էր ճերմակ երևալ։ Կապույտ աչքերի հայացքը մարդու հոգին էր թափանցում։ Հարևանները նրան համարում էին բարեսիրտ, սիրալիր և հյուրասեր կին։ Նրա անցյալի մասին ոչինչ հայտնի չէր, բացի այն, որ եկել է Սենդվուդից, իսկ առաջ ապրելիս է եղել Քլիվլենդում։ Նա իր մասին շատ քիչ էր խոսում։

Ջեննին կարողանում էր լավ և սիրով խնամել հիվանդներին, մի ժամանակ մտածում էր, որ կսովորի և կաշխատի որպես հիվանդապահ կամ գթության քույր։ Բայց այդ մտքից ստիպված եղավ հրաժարվել. իմացավ, որ այդպիսի աշխատանքի ընդունում են միայն ջահել կանանց։ Նրա մտքովն անցել էր նաև որևէ բարեգործական ընկերություն մտնել։ Բայց նրա համար անհասկանալի էր այն ժամանակ մոդա դարձած նոր թեորիան, որի համաձայն մարդկանց պետք է միայն սովորեցնել իրենց սեփական ուժերով դուրս գալ դժվարին դրությունից։ Ջեննիին թվում էր, որ եթե աղքատ մարդը օգնություն է խնդրում, հարկավոր է նրան օգնել, առանց դատողություններ անելու, թե որքան արժանի է նա դրան։ Ահա թե ինչու բոլոր հիմնարկություններում, ուր նա վախվխելով դիմել էր, հանդիպել էր պաղ անտարբերության, եթե ո՛չ ուղղակի մերժումի։ Վերջապես նա որոշեց էլի մի երեխա որդեգրել, որպեսզի Ռոզան մենակ չլինի։ Նրա երկրորդ որդեգիրը եղավ Հենրի անունով չորս տարեկան մի տղա, որը Սթովեր ազգանունն ստացավ։ Բանկը էլի կանոնավոր վճարում էր Ջեննիին նրա եկամուտները, այնպես որ նա լիովին ապահովված էր։ Նա ոչ առևտրի, ոչ սպեկուլյացիայի ամենափոքր հակումն էլ չուներ։ Որքա՜ն ավելի նրան դուր էր գալիս երեխաներին պահել, ծաղիկներ խնամել և տնտեսություն վարել։

Ջեննիի և Լեսթերի անջատման կողմնակի հետևանքներից մեկը եղավ եղբայրների տեսակցությունը՝ հոր կտակը կարդալուց հետո առաջին անգամ։ Ռոբերտը հաճախ էր հի-

շում Լեսթերին և հետաքրքրությամբ հետևում էր նրա հաջողություններին։ Լեսթերի ամուսնության լուրը նրան անկեղծ գոհունակություն պատճառեց։ Նա միշտ էլ գտնում էր, որ միսիս Ջերալդը իդեալական կին է իր եղբոր համար։ Մի ամբողջ շարք նշաններից Ռոբերտը հասկացել էր, որ հոր ետամահու կարգադրությունը, ինչպես և «Քեյն ընկերությունն» իր ձեռքը գցելու իր սեփական փորձերը ամենևին չեն նպաստել Լեսթերի լավ վերաբերմունքին իր նկատմամբ։ Բայց նրան թվում էր, որ իրենց հայացքները, մանավանդ գործի բնագավառում, այնքան էլ շատ չեն տարբերվում իրարից։ Այժմ Լեսթերը բարգավաճում է։ Նա կարող է մեծահոգի վերաբերմունք ցույց տալ իրեն, կարող է հաշտության քայլ անել։ Չէ՞ որ Ռոբերտը, իր ժամանակին ուժեր չխնայելով, աշխատել է խելքի բերել եղբորը, և դրանում նրան ղեկավարել են ամենալավ մղումները։ Եթե իրենք մտերիմ լինեն և միասնաբար աշխատեն, իրենց առաջ հարստացման ավելի լայն հնարավորություններ կբացվեն։ Ռոբերտն ավելի ու ավելի հաճախ էր մտածում, թե արդյոք Լեսթերին չի՞ հրապուրի այդպիսի հեռանկարը։

Մի անգամ, երբ Ռոբերտը հյուր էր Չիկագոյում, իր հետ միասին կառքով ճամփորդող ծանոթներին գիտմամբ խընդրեց շուռ գալ դեպի ծովափ։ Նա ուզում էր իր աչքով տեսնել Քեյնների շքեղ առանձնատունը, որի մասին այնքան շատ բան էր լսել։

Եվ հանկարծ նա հայրական տան շունչն զգաց. Լեսթերն այդ առանձնատունը գնելով, նրան կից կառուցել էր մի ամառային այգի, որպիսին իրենք ունեին Ցինցիննատիում։ Այդ երեկոյան Ռոբերտը Լեսթերին մի նամակ գրեց, հրավիրելով նրան իր հետ միասին ճաշել «Յունիոն-ակումբում»։ Նա գրում էր, որ քաղաքում մնալու է երկու-երեք օրից ոչ ավելի և կուզենար տեսնվել եղբոր հետ։ Ինքը, իհարկե, հիշում է, որ մի ժամանակ իրենք գժտվել են, բայց կցանկանար միասին քննարկել մի գործ։ Արդյոք Լեսթերը չի՞ գա թեկուզ հինգշաբթի օրը։

Այս նամակն ստանալով՝ Լեսթերը հոնքերը կիտեց ու

մոռացվեց։ Հոգու խորքում նա դեռ նեղացած էր այն հարվածից, որ հասցրել էր իրեն հայրը։ Մինչև այժմ էլ նա ցնցվում էր, երբ հիշում էր, թե Ռոբերտն ինչպես առանց քաշվելու ձեռք քաշեց իրենից։ Ճիշտ է՝ Ռոբերտը պատճառ ուներ այդպես անելու. հիմա դա հասկանալի է։ Բայց, ինչ էլ լինի, Լեսթերը նրա եղբայրն է, և եթե այն ժամանակ ինքը լիներ Ռոբերտի տեղը, նա, պետք է հուսալ, այդպես ստորաբար չէր վարվի։ Իսկ հիմա, չգիտես ինչու, Ռոբերտն ուզում է տեսնել իրեն։

Սկզբում Լեսթերը մտածեց բոլորովին չպատասխանել։ Հետո որոշեց Ռոբերտին գրել, թե նրա հետ հանդիպել չի կարող։ Բայց նրան համակեց մի հեռաբրքրություն, ցանկացավ իմանալ, թե փոխվե՞լ է Ռոբերտը, ի՞նչ է հարկավոր նրան և ինչ կոմբինացիա է մտածել։ Եվ Լեսթերը նորից միտքը փոխեց։ Այո, նրանք կհանդիպեն. դրանից վնաս չի լինի։ Թեև, ճիշտ է, լավ բան էլ չի ստացվի։ Իրենք երևի իրար խոսք կըտան հինը մոռանալ, բայց խոսքերը խոսքեր կմնան։ Անցածը վերադարձնել չի լինի։ Կոտրված բաժակը սաղացնել չի լինի։ Կարելի է կտորները կպցնել իրար և ասել, թե սաղացել է, բայց գրանով այն նորից բաժակ չի դառնա։ Եվ նա եղբորը գրեց, թե կգա։

Հինգշաբթի օրը, առավոտյան, Ռոբերտը «Աուդիտորիումից» զանգահարեց նրան և առաջիկա տեսակցության մասին հիշեցրեց։ Լեսթերն ագահաբար ականջ էր դնում նրա ձայնին։ «Այո, այո, հիշում եմ»,— ասաց նա։ Կեսօրին նա գնաց քաղաքի գործարար մասը և այստեղ, նրբաճաշակ «Յունիոնակումբում» եղբայրները հանդիպեցին և տեսան իրար։ Ռոբերտն այդքան ժամանակամիջոցում նիհարել էր, նրա մազերը մի փոքր ճերմակել էին։ Հայացքը առաջվա պես հստակատես էր ու խորաթափանց, բայց աչքերի մոտ կնճիռներ էին գոյացել։ Նրա շարժումներն արագ էին, եռանդագին։ Լեսթերին նայելիս իսկույն երևում էր, որ դա ուրիշ կարգի մարդ է՝ լիքը, կապտավուն, սառնարյուն։ Այն օրերին շատերն էին նրան մի փոքր կոշտ համարում։ Ռոբերտի կապույտ աչքերն ամենևին չշփոթեցրին նրան, ոչ մի ազդեցություն չթողին

վիրան։ Նա տեսնում էր եղբոր ամբողջ ներքինը, որովհետև կարողանում էր դիտել և հետևություններ անել։ Իսկ Ռոբերտի համար դժվար էր որոշել, թե այդ տարիների ընթացքում ինչպես է փոխվել Լեսթերը։ Նա գիրացել է, բայց, չգիտես ինչու, մազերը չեն ճերմակում, նա էլի առաջվա պես դեմքի առողջ գույն ունի և ընդհանրապես այնպիսի մարդու տպավորություն է թողնում, որը պատրաստ է կյանքն ընդունել այնպես, ինչպես կա։ Ռոբերտն անհանգիստ կուչ եկավ նրա սուր հայացքից. ակնեղն էր, որ Լեսթերը լիովին պահպանել է իր թե՛ արքությունը, թե՛ պայծառ միտքը, որոնցով միշտ աչքի էր ընկնում նա։

— Ես շատ էի ուզում քեզ հետ տեսնվել, Լեսթեր,— ասաց Ռոբերտը, երբ նրանք արդեն հին սովորությամբ իրար ձեռք էին սեղմել։— Մենք վաղուց չենք հանդիպել, համարյա ութ տարի։

— Այո, մոտավորապես այդքան,— պատասխանեց Լեսթերը։— Ինչպե՞ս են գործերդ։

— Էլի առաջվա պես։ Բայց դու հիանալի տեսք ունես։

— Ես երբեք չեմ հիվանդանում,— ասաց Լեսթերը,— երբեմն միայն հաբերուխ եմ ունենում։ Իսկ այնպես, անկողնում պառկել՝ չեմ էլ հիշում, թե երբ է եղել։ Ինչպե՞ս է կինդ։

— Շնորհակալ եմ, ողջ-առողջ է։

— Իսկ երեխանե՞րդ։

— Ուոլթին ու Թերինգտոնին մենք համարյա չենք տեսնում. նրանցից յուրաքանչյուրն իր ընտանիքն ունի, իսկ մյուսները դեռ տանն են։ Հուսով եմ, քո կինը նույնպե՞ս ողջ-առողջ է,— ավելացրեց նա անվճռական, զգալով, որ ոտք է դնում սայթաքուն հողի վրա։

Լեսթերը մի հանգիստ հայացք գցեց նրա վրա։

— Այո,— պատասխանեց նա։— Նա պինդ առողջություն ունի։ Եվ հիմա ոչ մի բանից չի գանգատվում։

Նրանք էլի մի քիչ խոսեցին դեսից-դենից։ Լեսթերը հարցրեց սբեստի գործերի մասին, ինչպես են ապրում քույրերը, անկեղծորեն խոստովանելով, որ նրանց բոլորովին

կորցրել է իր տեսադաշտից։ Ռոբերտը բոլորի մասին տեղեկություններ տվեց և, վերջապես, գործի անցավ։

— Բայց ես,— ասաց նա,— ահա թե ինչի մասին էի ուզում խոսել քեզ հետ։ Ինձ հետաքրքրում է «Արևմտյան Հալոցային ընկերությունը»։ Ես գիտեմ, որ դու անձամբ նրա դիրեկտորների շարքում չես, քեզ այնտեղ ներկայացնում է քո հավատարմատար Ուոթսոնը, որը, ի դեպ, շատ հասկացող մարդ է։ Բայց, ահա, ընկերության կառավարումը շատ վատ է դրված, այդ մեզ բոլորիս հայտնի է։ Շահույթ ստանալու համար հարկավոր է գործի գլուխ ունենալ գործնական և բանիմաց մարդ։ Մինչև այժմ ես միշտ Ուոթսոնի հետ միասնաբար եմ գործել, որովհետև գտել եմ, որ նրա առաջարկությունները միանգամայն խելացի են։ Նա, ինչպես և ես, գտնում է, որ շատ բան պիտի փոխել։ Այժմ մի հնարավորություն է ստեղծվել՝ գնելու յոթանասուն բաժնետոմս, որոնք պատկանում են այրի Ռոսսիտերին։ Քո և իմ բաժնի հետ միասին դա կկազմեր վերահսկիչ ծրար։ Ես շատ կուզենայի, որ հենց դու գնես այդ յոթանասուն բաժնետոմսը, թեև նույն հաջողությամբ կարող եմ դրանք նաև իմ ձեռքն առնել, միայն թե մեզ մնան։ Այն ժամանակ դու պրեզիդենտ կդարձնես ում ուզենաս, իսկ հետո արդեն գործը յուղի պես առաջ կըգընա։

Լեսթերը ժպտաց։ Առաջարկությունը հրապուրիչ էր։ Նա արդեն Ուոթսոնից իմացել էր, որ այդ ընկերության գործերում Ռոբերտը միշտ եղբոր կողմն է պահում, և վաղուց գլխի էր ընկել, որ նա հաշտվելու մտադրություն ունի։ Եվ ահա սա է ձիթենու ճյուղը մեկուկես միլիոն դրամագլուխ ունեցող ընկերության մեջ վերահսկողություն ունենալու ձևով։

— Դա շատ մեծ սիրալիրություն է քո կողմից,— լրջորեն ասաց նա։— Ուղղակի առատաձեռն ընծա։ Այդ ինչպե՞ս է անցել մտքովդ։

— Դե գիտե՞ս, Լեսթեր,— պատասխանեց Ռոբերտը,— ես քեզ ճիշտն ասեմ։ Այս բոլոր տարիներին ինձ հանգիստ չէին տալիս կտակի այն պատմությունը և այն, որ դու զրկվել ես քարտուղար-գանձապահի պաշտոնից և էլի ուրիշ թյուրի-

մացություններ։ Ես չեմ ուզում հին գարմանը քամուն տալ, տեսնում եմ, որ դու ժպտում ես, բայց ինչո՞ւ իմ մտքերը շարտահայտեմ քեզ։ Անցյալում ես կարգին փառասեր էիր։ Հենց այն ժամանակ, երբ մեռավ մեր հայրը, ես Կառաշինական տրեստ ստեղծելու մտքով էի տարված և վախենում էի, թե դու դրան հավանություն չես տա։ Այն ժամանակից ես շատ եմ մտածել, որ լավ չեմ վարվել, բայց եղածն արդեն եղած էր։ Այդ հին պատմությունն այստեղ մանրամասն քննելը քեզ համար հազիվ թե հետաքրքիր լինի։ Բայց այն, ինչից ես այսօր սկսեցի...

— Կարող էր ծառայել որպես մի որոշ փոխհատուցում,— հանգիստ ասաց Լեսթերը։

— Ասենք՝ այնքան էլ այդպես չէ, Լեսթեր... թեև, թերևս, այդպիսի մի բան է։ Ես հասկանում եմ, որ հիմա այսպիսի բաները քեզ համար մեծ նշանակություն չունեն։ Հասկանում եմ, ավելի կարևոր կլիներ որևէ բան նախաձեռնել այն ժամանակ և ոչ թե հիմա։ Բայց և այնպես ես անկեղծորեն մտածում էի քեզ հետաքրքրել իմ առաջարկությամբ։ Մտածում էի, թե սա սկիզբ կծառայի։ Անկեղծ ասած՝ ես ուզում էի, որ սա մեր հաշտության առաջին քայլը լինի։ Չէ՞ որ մենք, ինչ էլ լինի, եղբայրներ ենք։

Նա մտածում էր, թե որքան հեգնանք կա այս խոսքերի մեջ։ Եղբայրական զգացմունքները շա՞տ են օգնել արդյոք Ռոբերտին անցյալում։ Ըստ էության ոչ այլ ոք, եթե ոչ Ռոբերտն էր, որ մղեց նրան դեպի ամուսնություն միսիս Ջերալդի հետ։ Եվ, թեպետ իսկապես, տուժող անձը միայն Ջեննին եղավ, Լեսթերը մինչև հիմա էլ նրանից նեղացած էր։ Ճիշտ է, Ռոբերտը նրան չզրկեց հայրական կարողության մի քառորդ մասից, բայց և չփորձեց էլ օգնել, որ ստանա, իսկ հիմա երևակայում է, թե իր առաջարկությամբ միանգամից գործը կուղղի։ Լավ չէ այդ։ Եվ հիմարություն է։ Եվ, ընդհանրապես, կյանքը տարօրինակ բան է։

— Ո՛չ, Ռոբերտ,— վերջապես ասաց նա հաստատորեն ու վճռական։— Ես ընդունում եմ քո պատճառաբանությունները, բայց չեմ հասկանում, թե դա իմ ինչին է պետք։ Սոի-

թը քեզ է ներկայացել, դու ինքդ էլ օգտվիր նրանից։ Իսկ ես չեմ ուզում։ Եթե դու այդ բաժնետոմսերը գնես, ես համաձայն կլինեմ բոլոր միջոցառումներին, որ դու հարկավոր կհամարես։ Հիմա ես բավականաչափ հարուստ եմ։ Անցածն անցած է։ Ես չեմ հրաժարվում երբեմն-երբեմն հանդիպել քեզ հետ և զրուցել։ Իսկ սա չէ՞ այն ամենն է, ինչ քեզ հարկավոր է։ Այն կոմբինացիան, որ դու առաջարկում ես ինձ, պարզապես հին ճեղքվածքը սվաղելու համար է։ Քեզ հարկավոր է իմ բարեհաճ վերաբերմունքը՝ խնդրեմ։ Ես քո դեմ ոխ չունեմ։ Ես քեզ վնասելու միտք չունեմ։

Ռոբերտը նայեց եղբորը և ժպտաց։ Որքան էլ ինքը վիրավորած լիներ եղբորն անցյալում, որքան էլ հիմա ինքը վիրավորված լիներ նրանից, այնուամենայնիվ, նա երևի մարդ է։

— Գուցե և դու իրավացի ես, Լեոթեր,— ասաց նա։— Բայց հիշիր, որ ինձ չնչին նկատառումներ չեն առաջնորդելիս։ Ես, իսկապես, ուզում էի հաշտվել քեզ հետ։ Այլևս դրան չեմ անդրադառնա։ Դու մոտ ժամանակներս Ցինցիննատի գալու միտք չունե՞ս։

— Կարծես թե ոչ,— պատասխանեց Լեսթերը։

— Իսկ ես ուզում էի քեզ առաջարկել, որ մեր տանն իջևանես։ Աբի կնոջդ հետ։ Մեր ջահելությունը կմտաբերենք։

Լեսթերը տխուր ժպտաց։

— Լավ, ուրախությամբ,— քաղաքավարությամբ ասաց նա, բայց և մտածում էր, որ Ջեննիի ժամանակ այդպիսի հրավեր չէր կարող ստանալ։ Ոչ մի բան նրա հարազատներին չէր կարող ստիպել, որ Ջեննիին մարգավարի վերաբերվեն։ «Ասենք, գուցե և նրանք մեղավոր չեն,— մտածում էր նա։— Աստված իրենց հետ»։

Եղբայրներն էլի մի քիչ զրուցեցին։ Հետո Լեսթերը հիշեց, որ ինքը գործարար տեսակցություն ունի նշանակած, և նայեց ժամացույցին։

— Ես ստիպված եմ շուտով հեռանալ քեզանից,— ասաց նա։

— Իմ գնալու ժամանակն էլ է,— ասաց Ռոբերտը։

Նրանք վեր կացան։

— Թեշ էլ որ լինի,— ավելացրեց ավագ եղբայրը սանդուղքով իջնելիս,— ես հուսով եմ, որ այսուհետև մենք այնքան էլ խորթ չենք լինի միմյանց համար։

— Հասկանալի է,— ասաց Լեսթերը։— Երբեմն-երբեմն կհանդիպենք։

Նրանք իրար ձեռք սեղմեցին և բաժանվեցին միանգամայն մտերմաբար։ Նայելով ավագ հեռացող Լեսթերի ետևից՝ Ռոբերտը զղջումի և պարտականությունը կատարած չլինելու զգացմունք էր ապրում։ Լեսթերը սովորական մարդ չէ։ Բայց ինչո՞ւ միշտ էլ, նույնիսկ Ջեննիի երևան գալուց առաջ, նրանց միջև կանգնած է եղել մի ինչ-որ պատնեշ։ Հետո Ռոբերտը հիշեց իր վաղուցվա մտքերը «սև գործարքների» մասին։ Այո, ահա թե ինչը չունի Լեսթերը. նրա մեջ նենգություն չկա, նա ընդունակ չէ դաժանության։ Ա՜խ, գրողը տանի։

Իսկ Լեսթերը եղբոր մասին մտածում էր ջղայնությամբ, բայց առանց թշնամական զգացմունքի։ Դե նա այնքան էլ վատը չէ. ուրիշ շատ-շատերը նրանից լավը չեն։ Ի՞նչ դատապարտես նրան։ Դեռ հայտնի չէ, թե ինքն ինչպես կվարվեր, եթե Ռոբերտի տեղը լիներ։ Ռոբերտը փողի մեջ լող է տալիս։ Ինքը ևս։ Հիմա իր համար պարզ է, թե այդ ինչպես սատացվեց, ինչու ինքը զոհ դարձավ, ինչու հայրական հսկա կարողության կառավարումը վստահվել էր Ռոբերտին։ «Այդպես է կյանքը,— մտածում էր նա։— Միևնույն չէ՞։ Ես իմ գոյությունը պահելու միջոցներ ունեմ։ Էլ ուրեմն ի՞նչ կա անհանգստանալու»։

ԳԼՈՒԽ LXI

Ըստ ինչ-որ հնամենի հաշիվների կամ, ավելի ճիշտ, համաձայն դարերի ընթացքում սրբագործված բիբլիական ֆորմուլայի, մարդուն յոթանասուն տարվա կյանք է տրված։ Մերնգե-սերուեդ անվերջ կրկնվող այդ ֆորմուլան այնպես

ամուր է արմատացել մարդկանց գիտակցության մեջ, որ ընդունվում է որպես անվիճելի ճշմարտություն։ Բայց իրականում մարդը, թեպետև իրեն մահկանացու է համարում, օրգանապես կարող է ապրել հինգ անգամ ավելի, և իսկապես, նրա կյանքը շատ ավելի երկարատև կլիներ, եթե միայն նա իմանար, որ ապրում է ոչ թե մարմինը, այլ՝ հոգին, որ հասակը սոսկ պատրանք է և որ մահ չկա։ Սակայն դարերով արմատավորված միտքը, որ չգիտես ինչ մատերիալիստական հիպոթեզների պտուղ է, չափազանց դժվար է դուրս վանել գիտակցությունից, և ամեն օր մարդիկ մեռնում են, ասես ենթարկվելով հնազանդորեն ու վախով ընդունած այդ մատերիալիստական ֆորմուլային։

Այդ ֆորմուլային հավատում էր և Լեսթերը։ Նա հիսուն տարեկանից արդեն անց էր։ Գտնում էր, որ իրեն ամենաշատը քսան տարվա կյանք է մնացել, կամ գուցե և ավելի քիչ։ Դե, ի՛նչ կա որ, նա նախանձելի կյանք է վարել։ Գանգատվելու բան չուներ։ Եթե մահը գար, նա պատրաստ էր դրան։ Նա մահվանը կդիմավորի առանց տրտունջի, առանց պայքարի։

Չէ՞ որ կյանքը մեծ մասամբ իր արտահայտություններով սոսկ մի հիմար կոմեդիա է։

Որ կողմն էլ նայես՝ սոսկ պատրանքներ են, այդ դժվար չէ ապացուցել։ Բայց գուցե և կյանքն ընդհանրապես սոսկ պատրանք է։ Համենայն դեպս, այն շատ նման է երազի, հաճախ՝ ծանր երազի։ Ի՞նչն է նրա մեջ օր առ օր պահպանում կյանքի իրական լինելու գիտակցությունը։ Ըստ երևույթին՝ մարդկանց հետ շփումը՝ վարչությունների նիստերը, ամեն տեսակ ծրագրերի քննարկումը առանձին մարդկանց ու կազմակերպությունների հետ, կնոջ բարձրաձայն հիշեցնելությունները։ Լեստին պաշտում էր նրան և կոչում էր իր իմաստուն հին փիլիսոփա։ Ջեննիի նման նա ևս հիանում էր Լեսթերի անվրդով հաստատակամությամբ, որ ցուցաբերում էր նա ամեն տեսակ անախորժության հանդեպ։ Թվում էր, թե ոչ ճակատագրի հարվածները, ոչ էլ ժպիտները ընդունակ չէին հուզելու Լեսթերին կամ նրան դուրս բերելու հավասարակշռությունից։ Նա վախենալ չէր ցանկանում։ Չէր ցանկանում

նահանջել իր համոզմունքներից, համակրանքից և հակակրանքից, և հարկ էր լինում նրան ուժով պոկել դրանցից, որը, սակայն, միշտ չէր հաջողվում։ Նա, իր սեփական արտահայտությամբ ասած՝ ցանկանում էր մեկ բան՝ «նայել փաստերի աչքերի մեջ» և պայքարել։ Դժվար չէր նրան ստիպել, որ պայքարի, բայց այդ պայքարն արտահայտվում էր համառ դիմադրությամբ։ Նա դիմադրում էր իրեն զոռով ջուրը հրելու ամեն մի փորձին։ Նույնիսկ եթե, վերջ ի վերջո, այնուամենայնիվ, հրում էին, դիմադրության անհրաժեշտության նրա հայացքը մնում էր անփոփոխ։

Նրա պահանջները միշտ էլ առավելապես նյութական կարգի էին, նա ցանկանում էր միայն երկրային բարիքներ և համաձայնում էր միայն ամենալավին։ Բավական էր, որ նրա տանը ներքին փայլը գեթ մի փոքր խամրի, նա պահանջում էր, որ վարագույրները պոկվեն, կահ-կարասին ծախվի և ամբողջ տունը նորից կահավորվի։ Ճանապարհորդությունների ժամանակ փողը պետք է բացեր ու հարթեր նրա ճանապարհը։ Նա չէր հանդուրժում հակաճառություններ, ավելորդ խոսքեր, «հիմար խոսակցություններ», ինչպես ինքն անվանում էր այդ։ Նրա հետ կամ պետք էր խոսել իրեն հետաքրքրող հարցերի մասին, կամ ամենևին չխոսել։ Լետտին հիանալի հասկանում էր նրան։ Նա կատակով խփում էր նրա այտին կամ երկու ձեռքերի մեջ էր առնում գլուխը և ասում, թե նա արջ է, բայց շատ դուրեկան ու անուշ արջ։

— Այո, այո, գիտեմ,— մրթմրթում էր նա։— Ես կենդանի եմ։ Իսկ դու, պետք է ենթադրել, հրեշտակային էության անմարմին արտացոլում ես։

— Դե բավական է, լռիր,— ասում էր Լետտին, որովհետև նա, թեկուզև առանց շար դիտավորության, երբեմն շատ էր ցավ պատճառում նրան։ Այն ժամանակ Լեսթերն շտապում էր փաղաքշանքով մխիթարել նրան, նա լավ գիտեր, որ Լետտին, չնայած իր ամբողջ եռանդին ու ինքնուրույնությանը, իրենից է կախված։ Իսկ Լետտիի համար պարզ էր, որ Լեսթերը կարող է յոլա գնալ նաև առանց իրեն։ Խղճալով նրան՝ Լեսթերը ջանում էր թաքցնել այդ, ձևացնում էր, թե նա

իրեն անհրաժեշտ է, բայց, նրան չէր հաջողվում խաբել ո՛չ նրան, ո՛չ իրեն։ Իսկ Լեոտին, իսկապես, ամբողջ ուժով կառչում էր նրանից։ Այնքա՞ն կարևոր է, երբ մեր այս հեղհեղուկ, անհաստատ աշխարհում քո կողքին այնպիսի սրբազակի ու հաստատուն մեծություն կա, ինչպիսին է այս քաջակորով մարդը։ Քեզ այնպես ես պահում, ինչպես հաճելի լամպի մոտ՝ մթին սենյակում կամ բոցկլտացող խարույկի առաջ՝ ցուրտ փողոցում։ Լեսթերը ոչ մի բանից չի վախենում։ Նա հավատացված է, որ կարողանում է ապրել և կարող է մեռնել։

Այդպիսի խառնվածքը, բնական է, պետք է ապահովագրվեր ամեն քայլափոխին և ամեն առիթով։ Այժմ, երբ Լեսթերը կարգի էր բերել իր ֆինանսական գործերը և բոլոր թելերն ամուր պահում էր իր ձեռքերում, երբ նրա կարողության մեծ մասը դրված էր այն խոշորագույն ընկերությունների բաժնետոմսերի մեջ, որոնց դիրեկտորները ուրիշ գործ չունեին անելու, բացի միայն իրենց փառասեր ադմինիստրատորների նախաձեռնությանը հավանություն տալուց, նրա համար բավական ազատ ժամանակ էր մնում։ Նա Լեոտիի հետ շատ շրջեց Եվրոպայի և Ամերիկայի մոդայիկ կուրորտներում։ Նա սիրեց բախտախաղերը, նրան դուր էր գալիս խոշոր գումարներ դրնել, չվախենալով կորցնել դրանք, եթե անիվը ժամանակին կանգ չառնի կամ գնդակը ցանկացած կողմը չգլորվի։ Նա ավելի շատ տաքացավ գինու վրա, ո՛չ որպես հարբեցող, այլ որպես մի մարդ, որը սիրում է ապրել իր բավականության համար և լավ ժամանակ անցկացնել բարեկամների հետ։ Նա խմում էր կամ անխառն վիսկի, կամ գինու լավագույն տեսակներ՝ շամպայն, կայծկլտուն բուրգոնյան, հոգեպարարը թանկարժեք սպիտակ գինիներ։ Ամեն ինչ, որ դրվում էր նրա սեղանին՝ խորտիկները, արգանակները, ձկնեղենը, տապակածը, որսի միսը, պետք է ամենաառաջնակարգը լիներ, և նա վաղուց արդեն եկել էր այն եզրակացության, որ իմաստ ունի պահել միայն ամենաթանկ խոհարար։ Նրանք գտան ու վարձեցին մի ծերունի ֆրանսիացու՝ Լուի Բերդոյին, որը մի ժամանակ եղել էր մի միլիոնատիրոջ խոհարար։ Լեսթերը նրան շաբաթական հարյուր դոլար էր վճարում, իսկ այդ առթիվ

արված բոլոր տարակուսական հարցերին պատասխանում էր, թե կյանքը մեզ տրվում է միայն մեկ անգամ։

Տոգորված լինելով այսպիսի հայացքներով՝ Լեսթերն անզոր էր որևէ բան փոխելու, որևէ բան ուղղելու։ Անկախ իր կամքից՝ ամեն ինչ թողում էր դեպի իրեն անհայտ նպատակները։ Եթե նա ամուսնանար Ջեննիի հետ և համեմատաբար համեստ եկամուտ ստանար, տարեկան տասը հազար դոլլար, միևնույն է, նա էլի չէր հրաժարվի այդ հայացքներից։ Նա կապրեր էլի նույնպես անկամորեն, բավարարվելով երկուերեք մտերիմների ընկերակցությամբ, որոնք խոսում են իր հետ միևնույն լեզվով և նրա մեջ տեսնում են այն, ինչ որ նա կար՝ լավ մարդ, և Ջեննին, թերևս, նրա հետ այնքան էլ ավելի լավ չէր ապրի, քան առանց նրան։

Քեյնների կյանքում կարևոր դեպքերից մեկը եղավ այն, որ նրանք փոխադրվեցին Նյու-Յորք։ Միսիս Քեյնի մտերիմ բարեկամների մեջ կային մի քանի խելացի կին՝ նոր Անգլիայի շորս հարյուր լավագույն ընտանիքների ներկայացուցչուհիները։ Հենց սրանք էլ նրան համոզեցին փոխադրվել Նյու-Յորք։ Այս որոշումն ընդունելով՝ նա մի տուն վարձեց Յոթանասունութերորդ փողոցում, Մեդիսոն պողոտայի մոտ, յուրաքանչյուր սենյակը կահավորեց որևէ պատմական դարաշրջանի ոճով և առաջին անգամ վարձեց լիվրեավոր սպասավորների մի ամբողջ հաստիք, բոլորովին նման անգլիական ձևին։ Լեսթերը ծիծաղում էր նրա սնափառության և շքեղ դեկորացիաների սեր ունենալու վրա։

— Հապա դու խոսում ես քո դեմոկրատականության մասին,— մրմնջաց նա մի անգամ։— Դու նույնքան դեմոկրատ ես, որքան ես հավատացյալ քրիստոնյա եմ։

— Ամենևին ոչ,— առարկեց Լեսթերը։— Ես ամենախստակական դեմոկրատն եմ։ Բայց մենք բոլորս մեր դասակարգի անդամներն ենք։ Դու նույնպես։ Ես պարզապես ենթարկվում եմ իրերի տրամաբանությանը։

— Ինչ տրամաբանության մասին է խոսքը։ Դու գուցե և կասես, թե կարմիր թավիշով զուգված ծառայապետ ու սպասավորներ ունենալը անհրաժեշտությո՞ւն է պահանջում։

— Իհարկե,— պատասխանեց Լեստին։— Ասենք՝ եթե ո՛չ անհրաժեշտությունը, ապա մեր ամբողջ կյանքի դրվածքը։ Ի՞նչն է քեզ այդպես հուզում։ Չէ՞ դու ինքդ ես պահանջում, որ ամեն ինչ անբասիր լինի, ամենափոքր թերություն տեսնելուն պես ինքդ ես առաջինը վրդովվում։

— Այդ ե՞րբ եմ վրդովվել ես։

— Ասենք, գուցե և ես այնպես չարտահայտվեցի, ինչպես պետք էր։ Բայց դու ուզում ես, որ ամեն ինչ իդեալական լինի, որ ամեն մի դեպքում պահպանված լինի ոճը... Ասենք՝ դու ինքդ էլ շատ լավ գիտես այս։

— Ենթադրենք։ Բայց այստեղ ի՞նչ գործ ունի քո դեմոկրատականությունը։

— Ես դեմոկրատուհի եմ։ Այս բանը դու ինձնից խլել չես կարող։ Հոգուս խորքում ես պակաս դեմոկրատիկ չեմ, քան ուրիշ որևէ կին։ Պարզապես իրերին զգաստ եմ նայում և հնարավորին չափ ոչ մի բանից չեմ զրկում ինձ, ճիշտ այնպես, ինչպես և դու։ Կարիք չկա քար նետելու իմ ապակյա տան վրա, հարգելի Տիրակալս։ Ձեր տնակը նույնպես թափանցիկ է, և ես տեսնում եմ ձեր ամեն մի շարժումը։

— Եվ, այնուամենայնիվ, ես դեմոկրատ եմ, իսկ դու՝ ոչ,— ջղրացնում էր Լեսթերը։

Ի դեպ, նա առանց առարկության հավանություն էր տալիս Լեստիի բոլոր արածներին։ Երբեմն նրան թվում էր, թե նա իր աշխարհում շատ ավելի խելամիտ է տնօրինություն անում, քան ինքը՝ իր աշխարհում։

Անվերջանալի կերուխումները, հերթով բոլոր բուժիչ հանքային ջրերում լինելը, հանգիստ ու փարթամ ճանապարհորդությունները, սպորտի ու մարմնամարզության անտեսումը— այս ամենը վերջ ի վերջո խախտեցին Լեսթերի առողջությունը. այժմ չափից ավելի գերարյունությունը արգելակում էր նրա երբեմնի ուժեղ ու դյուրաշարժ մարմնի բոլոր ֆունկցիաները։ Վաղուց արդեն նրա ստամոքսը, լյարդը, երիկամները, փայծաղը աշխատում էին շատ ծանրաբեռնված։ Վերջին յոթ տարում նա շատ էր գիրացել։ Առաջինը սկսեցին վատ աշխատել երիկամները, ինչպես և ուղեղի անոթները։ Չափա-

վոր սնունդ ստանալու, բավականաչափ շարժուն կյանք վարելու և ավելի շատ հոգեկան հավասարակշռություն ունենալու դեպքում Լեսթերը կարող էր ապրել և մինչև ութսունիններորդ տարի։ Բայց նա իրեն հասցրել էր ֆիզիկական այնպիսի վիճակի, երբ ամենափոքր հիվանդությունն էլ լուրջ հետևանքներ է սպառնում։ Այս ամենի հետևանքը կարող էր լինել միայն մեկ բան, և այն չհապաղեց երևան գալ։

Մի անգամ Լեսթերն ու Լետտին մի խումբ մտերիմ մարդկանց ընկերակցությամբ մի զբոսանավով գնացին Նորվեգիայի հյուսիսային ափերը։ Նոյեմբերին կարևոր գործերը պահանջեցին, որ Լեսթերը ներկա լինի Չիկագոյում։ Նա կնոջ հետ պայմանավորվեց, որ ծննդյան տոներին հանդիպեն Նյու-Յորքում։ Ուոթսոնին տեղեկացնելով, որ իրեն դիմավորի՝ Լեսթերը վերադարձավ և իջևանեց «Աուդիտորիումում»։ Չիկագոյի առանձնատունն արդեն երկու տարի առաջ ծախել էին։

Նոյեմբերի վերջերին, երբ Լեսթերը հիմնականում արդեն վերջացրել էր իր գործերը, հանկարծ նա իրեն վատ զգաց։ Բժիշկը եկավ և ասաց, որ նա աղիքային խանգարում ունի, որը հաճախ արյան կամ որևէ կարևոր օրգանի ընդհանուր լուրջ հիվանդության արտահայտություն է լինում։ Լեսթերը շատ էր տառապում։ Բժիշկը պատվիրեց նրա ոտքերը տաք փաթաթել, մանանեխաթերթիկներ ու դեղեր գրեց։ Ցավերը մեղմացան, բայց Լեսթերին տանջում էր մոտալուտ աղետի նախազգացումը։ Նա Ուոթսոնին խնդրեց հեռագիր տալ Լետտիին։ Հարկավոր էր նրան հայտնել, որ մի առանձին լուրջ բան չկա, բայց մի քիչ հիվանդ է։ Լեսթերի մահճի մոտ մի քույր էր հերթապահում, իսկ նրա սպասավորը ժամապահի պես կանգնել էր համարի դռան առաջ և ձանձրացնող այցելուներին ներս չէր թողնում։ Լետտին կարող էր Չիկագո հասնել երեք շաբաթից ոչ շուտ։ Լեսթերն զգում էր, որ այլևս երբեք նրան չի տեսնի։

Որքան էլ տարօրինակ է, այդ օրերին նա շարունակ մտածում էր Ջեննիի մասին, և այդ ո՛չ նրա համար, որ գտնվում էր Չիկագոյում. Ջեննին, ինչպես և առաջ, նրա համար

մնում էր որպես ամենամոտիկ մարդ։ Այս անգամ Ջիկագո գալով, նա մտադիր էր այցելել Ջեննիին, հենց որ գործերից թեթևանար։ Գալու առաջին իսկ օրը նա Ուոթսոնին հարցրել էր Ջեննիի մասին, և նա ասել էր, որ Ջեննին առաջվա պես ապրում է առանձնացված և տեսքը լավ է։ Լեսթերը շատ էր ուզում տեսնել նրան։

Օրերն անցնում էին իրար ետևից, նրա դրությունը չէր լավանում, և այդ ցանկությունն ավելի ու ավելի ուժեղ էր համակում նրան։ Նրան տանջում էին ցավի զարհուրելի նոպաները, նրա ամբողջ փորոտիքն ասես կծկվում էր, և դրան հաջորդում էր ուժերի լիակատար սպառումը։ Հիվանդի դրությունը թեթևացնելու համար բժիշկն արդեն մի քանի անգամ նրան մորֆի էր սրսկել։

Մի անգամ, առանձնապես ուժեղ մի նոպայից հետո, Լեսթերն իր մոտ կանչեց Ուոթսոնին, պատվիրեց քրոջը դուրս ուղարկել և ասաց.

— Ես ուզում եմ ձեզ մի բան խնդրել։ Իմացեք միսիս Սթովերից, թե չի՞ կարող արդյոք այցելել ինձ։ Իսկ ավելի լավ է, հենց դուք գնացեք նրան բերելու։ Հիվանդապահին և Կոզոյին (այսպես էր սպասավորի անունը) կարելի է դուրս ուղարկել մի կես օրով կամ այնքան ժամանակով, որքան որ նա այստեղ կլինի։ Երբ էլ նա գալու լինի, ներս թողեք ինձ մոտ։

Ուոթսոնը հասկացավ։ Զգացմունքի այս արտահայտությունն արձագանք գտավ նրա հոգու մեջ։ Նա խղճում էր Ջեննիին։ Խղճում էր և Լեսթերին։ Նա մտածեց, թե որքա՞ն կզարմանա աշխարհը, եթե իմանա այսքան ականավոր մարդու ռոմանտիկական քմահաճույքը։ Ուոթսոնը խորապես հարգում էր Լեսթերին և միշտ հիշում էր, որ իր բարեկեցությունը նրան է պարտական։ Նա պատրաստ էր ամեն տեսակ ծառայություն մատուցել Լեսթերին։

Վարձով վերցրած կառքն արագորեն նրան տարավ Հարավային կողմը։ Ջեննին տանն էր։ Նա ծաղիկներն էր ջրում և Ուոթսոնին տեսնելով, զարմանքով հոնքերը վեր քաշեց։

— Ես ձեզ մոտ եմ եկել մի անուրախ հանձնարարու-

թյամբ, միսիս Սթովեր,— սկսեց նա։— Ձեր... ես ուզում եմ ասել միստր Քեյնը լուրջ հիվանդ է։ Նա գտնվում է «Աուդիտորիում»-ում»։ Նրա կինը դեռ Եվրոպայից չի վերադարձել։ Միստր Լեսթերն ինձ պատվիրեց գալ ձեզ մոտ և ասել, որ նա խնդրում է ձեզ այցելել իրեն... Դուք կկարողանայի՞ք հենց հիմա գալ ինձ հետ։

— Այո, իհարկե,— պատասխանեց Ջեննին, և նրա դեմքին երևաց մի ոչինչ չասող արտահայտություն։

Երեխաները դպրոցումն էին։ Պառավ-շվեդուհին՝ նրա միակ սպասուհին, նստած էր խոհանոցում։ Ոչ մի բան Ջեննիին չէր խանգարում բացակայել տնից։ Բայց նա հանկարծ ամենայն մանրամասնությամբ հիշեց մի քանի օր առաջ իր տեսած երազը։ Նա երազում տեսել էր, թե իբր իր շուրջը մի խորհրդավոր սև լիճ է, որի վրա մշուշ կամ ամպ է կանգնել։ Նա լսում էր ջրի թույլ ճողփյունը, և իրեն շրջապատող խավարից երևաց մի մակույկ։ Մակույկը փոքրիկ էր, առանց թիերի, նա շարժվում էր ինքնիրեն, և նրա մեջ նստած էին Ջեննիի մայրը, Վեստան և էլի մի մարդ, որին նա լավ տեսնել չկարողացավ։ Մոր դեմքը գունատ էր ու թախծոտ, ինչպես հաճախ լինում էր կենդանի ժամանակ։ Նա Ջեննիին նայում էր խիստ, բայց կարեկցությամբ լի աչքերով, և հանկարծ Ջեննին հասկացավ, որ մակույկում նստած երրորդ մարդը Լեսթերն է։ Նա մռայլ նայեց Ջեննիին—Ջեննին երբեք նրան այդպես չէր տեսել— և այդ ժամանակ մայրն ասաց. «Իսկ հիմա բավական է. մեր ժամանակն է»։ Մակույկն ըսկըսեց հեռանալ, կորուստի սուր զգացմունքը համակեց Ջեննիին և նա գոչեց. «Մայրի՞կ, ինձ մենակ մի թողնի»։ Բայց մայրը միայն նայեց նրան իր հեզ, խոր, թախծոտ հայացքով, և մակույկն անհետացավ։

Ջեննին վախեցած արթնացավ։ Նրան թվում էր, թե Լեսթերն իր կողքին է։ Նա ձեռքը մեկնեց, որ դիպչի նրա ուսին, բայց հիշելով, որ ինքը մենակ է, նստեց անկողնում և աչքերը տրորեց։ Դրանից հետո ծանր, ճնշող զգացմունքը երկու օր նրան հանգիստ չէր տալիս։ Եվ նոր էր այդ զգացմունքը փա-

բատվել սկսել, երբ երևաց միստր Ուոթսոնը իր սոսկալի լուրով։

Ջեննին դուրս գնաց սենյակից և շուտով վերադարձավ վերարկուով և գլխարկով։ Քայլվածքը, դեմքը—ամեն ինչ ցույց էր տալիս նրա հուզմունքը։ Ջեննին դեռ հիմա էլ շատ լավ տեսք ուներ. նա բարեկազմ էր, հիանալի հագնված, հայացքը վճիտ ու բարի։ Հոգու խորքում նա չէր բաժանվել Լեսթերից, ինչպես և Լեսթերը երբեք չէր կարող մինչև վերջ կտրվել նրանից։ Ջեննիի բոլոր մտքերը Լեսթերի հետ էին, ինչպես այն տարիներին, երբ նրանք ապրում էին միասին։ Նրա ամենանվիրական հիշողությունները կապված էին Քլիվլենդի հետ, որտեղ Լեսթերը սիրահետում էր նրան և ուժով նվաճեց նրան. երևի քարանձավային մարդն էլ այդպես է նվաճել իր կյանքի ընկերուհուն։ Այժմ Ջեննին բուռն ցանկություն ուներ որևէ բանով օգնել Լեսթերին։ Նա իր ետևից մարդ է ուղարկել. այս ոչ միայն ցնցեց նրան, այլև բացեց նրա աչքերը. նշանակում է նա, այնուամենայնիվ... այնուամենայնիվ, սիրում է իրեն։

Կառքը երկար փողոցներով արագորեն վազում էր դեպի քաղաքի գործարար շրջանի ծխածածկ մասը։ Ուոթսոնը նրբազգացորեն լռել էր, որ Ջեննիին չխանգարի մտածել։ Շուտով նրանք հասան «Աուդիտորիումին», և Ուոթսոնը նրան առաջնորդեց մինչև այն համարի դուռը, որտեղ պառկած էր Լեսթերը։ Ջեննին այնքան վաղուց չէր եղել հասարակության մեջ, որ հյուրանոցի երկար միջանցքներով անցնելիս վախ էր զգում։ Համարը մտնելով՝ նա մոտեցավ Լեսթերի մահճակալին և քար կտրեց, նայելով նրան իր լայն բացած կապուտակ, խղճահարությամբ լի աչքերով։ Լեսթերը կիսապառկել էր անկողնում, գլուխը գցել բարձերին։ Նրա սև մազերի մեջ արդեն ճերմակ էր երևում, խելացի, հոգնած աչքերը նայում էին Ջեննիին սիրալիր հետաքրքրությամբ։ Ջեննին այդ գունատ, տառապած դեմքը տեսնելով, մի այրող ցավ զգաց։ Նա կամացուկ սեղմեց Լեսթերի՝ վերմակի վրա ընկած ձեռքը։ Ապա կռացավ և համբուրեց նրա շուրթերը։

— Ես այնքա՜ն եմ վշտացած, Լեսթեր, այնքա՜ն,— շշշնջաց նա։— Բայց հո դու շատ լուրջ չես հիվանդ, չէ՞։ Քեզ

հարկավոր է լավանալ, և որքան կարելի է շուտ։— Նա մեղմորեն շոյեց Լեսթերի ձեռքը։

— Այո, Ջեննի,— ասաց նա,— բայց իմ բանը վատ է։ Բոլորովին հալից գցել է ինձ այս հիվանդությունը, և չգիտեմ, կարո՞ղ եմ դուրս պրծնել թե ոչ։ Ավելի լավ է դու քո մասին պատմիր։ Ինչպե՞ս ես ապրում։

— Ապրում եմ առաջվա պես, սիրելիս,— պատասխանեց Ջեննին։— Ինձ մոտ ամեն ինչ լավ է։ Բայց դու իզուր ես այդպես խոսում։ Դու կլավանաս, և այն էլ շատ շուտ։

Լեսթերը դառն ժպտաց։

— Դու կարծո՞ւմ ես,— և կասկածանքով գլուխը շարժեց։— Ասենք՝ դա ինձ շատ էլ չի անհանգստացնում,— շարունակեց նա։— Նստիր, հարազատս։ Ես ուզում եմ խոսել քեզ հետ առաջվա պես։ Ուզում եմ, որ դու ինձ մոտ լինես։

Նա հառաչեց և աչքերը փակեց։

Ջեննին աթոռը մոտ քաշեց անկողնին, նստեց և Լեսթերի ձեռքն իր ձեռքերի մեջ առավ։ Որքա՞ն լավ է, որ նա մարդ է ուղարկել իր ետևից։ Խղճահարությունը, սերը, երախտագիտությունը լցրել էին նրա սիրտը։ Եվ հանկարծ նա սարսափից սառեց. Լեսթերը ծանր է հիվանդ, այդ իսկույն երևում է։

— Չգիտեմ ինչ է լինելու,— ասաց Լեսթերը։— Լետտին Եվրոպայումն է։ Ես արդեն վաղուց ուզում էի տեսնել քեզ։ Որոշել էի այս գալուս անպայման այցելել քեզ։ Դու հո գիտես, հիմա մենք ապրում ենք Նյու-Յորքում։ Բայց դու մի քիչ լցվել ես, Ջեննի։

— Պառավում եմ, Լեսթեր,— ժպտաց նա։

— Այդ կարևոր չէ,— ասաց Լեսթերը, աչքը չհեռացնելով նրանից։— Բանը տարիքը չէ։ Բոլորն էլ պառավում են։ Բանն այն է, թե ով ինչպես է նայում կյանքին։

Նա լռեց ու հայացքը գցեց առաստաղին։ Թեթև ցավը նրան հիշեցրեց իր կրած տանջանքները։ Այս առավոտվա նըման էլի մի քանի նոպա կրկնվի՝ այլևս դիմանալ չի կարող։

— Ես չէի կարող մեռնել առանց քեզ տեսնելու,— նորից խոսեց նա, երբ ցավը մեղմացավ։— Ես վաղուց ուզում էի քեզ ասել, Ջեննի, մենք իզուր բաժանվեցինք։ Հիմա ես տես-

ասում եմ, որ այդպես չպետք է անեինք։ Դա ինձ երջանկություն չտվեց։ Դու ինձ ներիր։ Հենց ինձ համար էլ ավելի լավ կլիներ, եթե այդպես չանեի։

— Ի՞նչ ես ասում, Լեսթեր,— առարկեց Ջեննին, և նույն վայրկյանին նրա հիշողության միջով անցավ իրենց ամբողջ միասնաբար ապրած կյանքը։ Ահա այն, իրենց իսկական միության, իրենց իսկական հոգեկցության վկայությունը։— Մի՛ տանջիր քեզ։ Այդպես էլ ամեն ինչ լավ է։ Դու շատ բարի ես եղել ինձ հետ։ Հո չէիր կարող իմ պատճառով զրկվել քո ամբողջ կարողությունից։ Ինձ համար էլ այսպես ավելի հանգիստ է։ Իհարկե, ծանր էր, բայց կյանքում քի՞չ ծանր բան է լինում, սիրելիս։

Նա լռեց։

— Ոչ,— ասաց Լեսթերը,— դա սխալ էր։ Հենց սկզբից ամեն ինչ սխալ ընթացավ, բայց դա քո մեղքը չէ։ Ներիր ինձ։ Ես վաղուց էի ուզում քեզ ասել այս։ Շատ ուրախ եմ, որ կարողացա ասել։

— Այդպես մի խոսիր, Լեսթեր, խնդրում եմ քեզ,—աղաչեց Ջեննին։— Ամեն ինչ լավ է։ Դու ափսոսալու ոչինչ չունես։ Այնքա՞ն շատ բան ես արել ինձ համար։ Երբ մտածում եմ...— նրա ձայնը խզվեց։ Սերն ու խղճահարությունը խեղդում էին նրան։ Նա լուռ սեղմեց Լեսթերի ձեռքը։ Հիշեց Քլիվլենդի տունը, որ նա գնել էր իր հարազատների համար։ Եվ թե ինչպես նա օթևան տվեց իր հորը, հիշեց նրա ամբողջ հոգատարությունն ու սիրալիր վերաբերմունքը։

— Դե, հիմա ես քեզ ամեն ինչ ասացի և ինձ թեթև եմ զգում։ Դու լավ կին ես, Ջեննի։ Շնորհակալ եմ, որ եկար ինձ մոտ։ Ես սիրում էի քեզ։ Հիմա էլ սիրում եմ։ Այո, ես ուզում էի ասել քեզ։ Գուցե և տարօրինակ է, բայց քեզանից բացի ես ուրիշ ոչ մի կնոջ չեմ սիրել իսկական սիրով։ Մենք չպետք է բաժանվենք։

Ջեննիի շունչը կտրվում էր։ Այդ բառերին, ահա հենց միայն այդ բառերին էր նա սպասել երկար տարիներ։ Միակ բանը, որ պակասում էր նրան, հենց այդ էր—հաստատել, որ իրենք եթե ֆիզիկապես մոտիկ էլ չեն իրար, ապա հոգով

միասին են։ Հիմա կյանքը նրա համար երջանկություն կլինի։ Մահը նույնպես։ Հեկեկանքը խեղդում էր նրա կոկորդը։

— Ա՜խ, Լեսթեր,— գոչեց Ջեննին և սեղմեց նրա ձեռքը։

Լեսթերը նրան պատասխանեց ձեռքի թույլ սեղմումով։ Մի պահ երկուսն էլ լուռ էին։ Հետո Լեսթերը նորից խոսեց.

— Էհ, իսկ ինչպե՞ս են քո որբուկները։

— Հիանալի երեխաներ են,— պատասխանեց Ջեննին և սկսեց մանրամասն պատմել իր փոքրիկ սաների մասին։ Լեսթերը լսում էր գոհունակությամբ. Ջեննիի ձայնը հանգստացնում էր նրան։ Հենց նրա ներկայությունն էլ բերկրանք էր նրա համար։ Երբ Ջեննին վեր կացավ գնալու, նրա հոնքերը տառապալից կիտվեցին։

— Գնո՞ւմ ես, Ջեննի։

— Կարող եմ մնալ այստեղ, Լեսթեր,— առաջարկեց նա։— Համար կվերցնեմ ինձ համար։ Իսկ միսիս Սվենսոնին նամակով իմաց կտամ, և ամեն ինչ կարգին կլինի։

— Չէ, ինչո՞ւ որ,— ասաց Լեսթերը, բայց Ջեննին հասկացավ, որ ինքը հարկավոր է նրան, որ նա վախենում է մենակ մնալ։

Եվ մինչև նրա վերջին ժամը Ջեննին դուրս չեկավ հյուրանոցից։

ԳԼՈՒԽ LXII

Վախճանը վրա հասավ չորս օրից հետո, որոնց ընթացքում Ջեննին համարյա չհեռացավ հիվանդի անկողնից։ Հիվանդապահ քույրը շատ գոհ էր, որ իրեն փոխարինող հայտնվեց և ինքը մենակ չէ։ Բժիշկը փորձեց առարկել։ Բայց Լեսթերի հետ վիճելը դժվար էր։

— Ես եմ մեռնելու, ոչ թե դուք,— ասաց նա մոայլ հեգնանքով։— Դե ուրեմն թույլ տվեք մեռնել այնպես, ինչպես ինձ դուր է գալիս։

Ուոթսոնը միայն ժպտաց։ Այդպիսի աննկուն արիություն նա դեռ չէր տեսել։

Լեսթերին նամակներ էին գրում, հեռախոսով էին տեղե-

կանում առողջության մասին, այցետոմսեր էին ուղարկում։ Նրա հիվանդության մասին լուրեր տպվեցին նաև լրագրերում։ Ռոբերտը դրանցից մեկը կարդաց և որոշեց գնալ Չիկագո։ Եկան նաև Իմոջինն ու իր ամուսինը։ Նրանց մի քանի րոպեով ներս թողին Լեսթերի մոտ, երբ Ջեննին գնացել էր իր համարը։ Լեսթերը համարյա ամբողջ ժամանակ լուռ էր։ Քույրը նախազգուշացրել էր, որ նրա հետ երկար խոսել չի կարելի։ Հետո նա Ջեննիին ասաց.

— Իմոջինը շատ է փոխվել։— Եվ ուրիշ ոչինչ չավելացրեց։

Այն երեկոյան, երբ Լեսթերը մեռավ, միսիս Քեյնին հայրենիք վերադարձնող շոգենավը Նյու-Յորքից երեք օրվա ճանապարհ էր հեռու։ Վերջին օրերը Լեսթերը շարունակ մտածում էր, թե էլի ինչ անի Ջեննիի համար, բայց այդպես էլ ոչինչ չորոշեց։ Էլի՞ փող թողնել նրան։ Իմաստ չունի. փողը նրան պետք չէ։ Եվ հենց այն պահին, երբ նա մտածում էր, թե հիմա որտեղ կլինի Լետտին և երբ կարող է տեղ հասնել, նորից նրա սուր ցավերն սկսվեցին։ Դեռ չէին հասցրել սրընսկում անել, երբ մահը վրա հասավ։ Հետագայում պարզվեց, որ նա մեռել է ոչ թե աղիքային հիվանդությունից, այլ ուղեղի արնազեղումից։

Ջեննին իր ապրած տագնապից ու անքուն գիշերներից ուժասպառ լինելով ասես քար էր կտրել վշտից։ Լեսթերն այնքան երկար ժամանակ էր տիրապետել նրա մտքերին ու զգացմունքներին, որ այժմ նրան թվում էր, թե իր սեփական կյանքն է վերջացել։ Նա Լեսթերին այնպես էր սիրում, ինչպես, երևի, չէր կարող սիրել որևէ մեկ ուրիշի, և Լեսթերն էլ միշտ կարողանում էր ցույց տալ, որ նա թանկ է իր համար։ Ջեննիի վիշտը արցունքով չէր արտահայտվում, նա զգում էր միայն բութ ցավ, ինչ-որ ընդարմացում կաշկանդել էր նրա բոլոր զգացմունքները։ Լեսթերը, նրա Լեսթերը, նույնիսկ մեռած այնքա՜ն ուժեղ էր թվում։ Դեմքը հանգիստ էր, բայց վճռական՝ ինչպես առաջ։ Միսիս Քեյնը տեղեկացրել էր, որ կգա չորեքշաբթի օրը։ Որոշվեց թաղումը հետաձգել մինչև նրա գալը։ Ջեննին միստր Ուոթսոնից իմացավ, որ մարմինը

փոխադրելու են Ցինցիննատի և այնտեղ թաղելու են Քեյս ընտանիքի տոհմական դամբարանում։ Երբ ազգականներն սկսեցին հավաքվել, Ջեննին գնաց իր տուն. այստեղ նա այլևս անելիք չուներ։

Թաղման արարողության մեջ կարելի էր տեսնել մեր կյանքում եղած աննորմալությունների յուրահատուկ պատկերը։ Միսիս Քեյնին հեռագրով հաղորդեցին, որ Լեսթերի մարմինը հյուրանոցից փոխադրվելու է Իմոջինի տուն։ Դագաղը կրելու էին Ռոբերտը, որը Չիկագո էր հասել եղբոր մահվանից մի քանի ժամ հետո, Բերրի Դոջը, Իմոջինի ամուսին միստր Միչլին և էլի երեք ոչ պակաս հարգարժան ջենտլմեններ։ Բուֆալոյից եկան Լուիզան և իր ամուսինը, Ցինցիննատիից՝ Էմին իր ամուսնու հետ։ Տանը չէին տեղավորվում հանգուցյալին հրաժեշտ տալու համար եկած մարդիկ, որոնցից ոմանք անկեղծ ցավով էին եկել, ոմանք՝ քաղաքավարության համար։ Քանի որ Լեսթերն ու նրա հարազատները իրենց կաթոլիկ էին համարում, թաղման ծեսը կատարելու համար կաթոլիկական քահանա հրավիրվեց։ Լեսթերը պառկել էր իրեն խորթ տան շքեղ հյուրասենյակում, նրա գլխավերևը և ոտքերի մոտ վառվում էին թաղման մոմերը. իսկ մոմագույն մատները կրծքի վրա պահած ունեին արծաթե խաչը։ Նա ինքն էլ կժպտար, եթե իրեն տեսնել կարողանար։ Բայց Քեյնների ընտանիքը, սովոր լինելով պահպանել պայմանականությունները, սրբորեն հետևում էր տրադիցիոն սովորություններին և դրա մեջ ոչ մի անհեթեթություն չէր տեսնում։ Հոգևորականությունը, հասկանալի է, պատրաստ էր իր ծառայությունը մատուցելու։ Ընտանիքը հարուստ էր, բոլորից հարգված, էլ, ուրեմն, ի՞նչ խոսք կարող էր լինել։

Չորեքշաբթի օրը միսիս Քեյնը հասավ Չիկագո։ Անսահման էր նրա վիշտը. Ջեննիի նման նա էլ անկեղծորեն սիրում էր Լեսթերին։ Ուշ երեկոյան, երբ տանն ամեն ինչ խաղաղվել էր, նա իջավ հյուրասենյակ և երկար ժամանակ դագաղի վրա կռացած նայում էր մոմերի թրթռուն լույսով լուսավորված սիրելի դեմքին։ Արցունքները գլորվում էին նրա այտերի վրայով. նա հիշում էր, թե որքան երջանիկ էր ինքը

Լեսթերի հետ։ «Իմ խե՜ղճ, իմ սիրելի՜ Լեսթեր,— շշնջում էր նա։— Խե՜ղճ իմ հերոս»,— և շոյում էր նրա պաղ այտերն ու ձեռքերը։ Նրան չէին ասել, որ Լեսթերն իր մոտ էր կանչել Ջեննիին։ Քեյնների ընտանիքում ոչ ոք չգիտեր այդ։

Իսկ այդ ժամանակ Հարավային կողմի փոքրիկ տան մեջ մի ուրիշ կին մեն-մենակ նստած՝ իր անդառնալի կորուստի ցավն ու տառապանքն էր ապրում։ Այդ բոլոր տարիներին նրա մեջ դեռ համառորեն մի հույս էր ապրում, թե գուցե երբևէ իրենք նորից կմիանան։ Ճիշտ է, Լեսթերը վերադարձավ իր մոտ, վերադարձավ հենց ուղիղ մահից առաջ, բայց ահա նորից գնաց։ Ո՞ւր։ Ո՞ւր գնացին մայրը, հայրը, ո՞ւր գնաց Վեստան։ Ջեննին այլևս Լեսթերին տեսնելու հույս չուներ։ Թերթերում նա կարդացել էր, որ ննջեցյալի մարմինը փոխադրել են միստր Միջլիի տուն։ Հուղարկավորման կարգը կատարվելու է Հարավային կողմի ամենաշքեղ կաթոլիկական եկեղեցիներից մեկում՝ սուրբ Միքայելի եկեղեցում, որի ծուխը էին Իմոջինն ու նրա կինը։ Իսկ հետո դագաղը դիակով փոխադրելու էին Ցինցիննատի։

Ջեննիի համար սա մի նոր վիշտ էր։ Նա այնքա՜ն կուզենար, որ Լեսթերին թաղեին Չիկագոյում, գեթ երբեմն կըկարողանար այցելել նրա գերեզմանին։ Բայց դրանից էլ զըրկում էին նրան։ Դեռ երբեք կյանքում նա իր բախտի տերը չէր եղել։ Միշտ էլ ուրիշներն էին տնօրինել նրա վիճակը։ Լեսթերին Ցինցիննատիում թաղելը նա ապրում էր որպես վերջին ու վերջնական անջատում նրանից. ասես տարածությունը կարող էր որևէ բան փոխել։ Վերջապես նա որոշեց գաղտնաբար գնալ եկեղեցի՝ հոգեհանգստյան արարողությունը ներկա լինելու։ Լրագրում ասված էր, որ ժամերգությունն սկսվելու է ժամը երկուսին։ Ժամը չորսին մարմինը փոխադրելու են կայարան և հարազատները ուղեկցելու են նրան մինչև Ցինցիննատի։ Ջեննիի գլխում մի նոր միտք ծագեց, ինքը կարող է և կայարան գնալ։

Թաղման թափորը եկեղեցի հասնելուց քիչ առաջ կողադռնով ներս մտավ մի սևազգեստ կին, թանձր քողը երեսին, և համեստորեն նստեց մի կիսախավար անկյունում։ Եկեղե-

ցին դատարկ էր, շլուսավորված, և Ջեննիին մի տագնապ հա-
մակեց. արդյոք ճի՞շտ է հիշում ինքը ժամանակն ու տեղը։
Բայց նրա տարակուսանքը երկար չտևեց. շուտով նրա գլխա-
վերևում հնչեց թաղման համաչափ զանգահարությունը։ Հետո
երևաց եկեղեցու ծառան՝ սպիտակ ժամաշապիկը սև զգեստի
վրայից հագած։ Նա մոտեցավ սեղանին և սկսեց մոմերը վա-
ռել։ Վերնասրահում խուլ ոտնաձայներ լսվեցին. այդ երգիչ-
ներն էին իրենց տեղերը գրավում։ Ներսի մտան ու նստարան-
ներին նստոտեցին ինչ-որ մարդիկ. գուցե դրանք հատուկ
հրավեր չստացած ծանոթներ էին, գուցե և պատահական ան-
ցորդներ, որոնց այստեղ էր բերել եկեղեցու զանգը։

Ջեննին զարմացած շուրջն էր նայում։ Նա դեռ երբեք
կաթոլիկական եկեղեցում չէր եղել։ Կիսախավարը, գունավոր
ապակիներով սլաքակամար լուսամուտները, սպիտակ սեղա-
նը, մոմերի ոսկեգույն բոցը—այս ամենը նրա վրա խոր տպա-
վորություն գործեց։ Գեղեցկության ու խորհրդավորության
զգացողությունը, կորուստի թախիծն ու տրտմությունը ամ-
բողջովին համակել էին նրան։ Թվում էր, թե իր առաջ կյանքն
է իր ամբողջ մշուշապատ անորոշությամբ։

Զանգը շարունակ զողանջում էր, և ահա խորանից դուրս
եկավ տղաների շարանը։ Առջևից գալիս էր ամենափոքրիկը՝
մոտ տասնմեկ տարեկան մի չքնաղ մանչուկ։ Նրա ձեռքին մի
շողշողուն արծաթե խաչ կար։ Մյուսները նրա ետևից գալիս
էին զույգ-զույգ, յուրաքանչյուրի ձեռքին մի մեծ, վառած
մոմ։ Նրանց հետևում էր ժանեկապատ սև զգեստով քահա-
նան, հետը՝ երկու դպիր։ Թափորը գլխավոր դռնով անցավ
դեպի գավիթ։ Անցավ մի քանի րոպե, և երկու խումբը իրար
ձայնակցելով լատիներեն մի տխուր մեղեդի երգեցին ողոր-
մածության և հոգու խաղաղության մասին։

Առաջին ձայների հետ եկեղեցու դուռը լայն բացվեց։ Նո-
րից երևացին արծաթե խաչը, մոմերը, խոժոռադեմ քահա-
նան, որը հենց քայլելիս աղոթքի սրտահույզ խոսքեր էր
ասում, իսկ նրանց ետևից երևաց արծաթե բռնակներով սև
դագաղը՝ հանդարտ քայլող մարդկանց ուսերին։ Ջեննին ան-
շարժացավ. ասես անտեսանելի մի ուժ կաշկանդել էր նրա-

բոլոր շարժումները։ Դագաղը կրող մարդկանցից ոչ մեկին նա չէր ճանաչում։ Նա երբեք չէր տեսել ո՛չ Ռոբերտին, ո՛չ միստր Միշլիին։ Դագաղի ետևից զույգ-զույգ քայլող բազմաթիվ մարդկանց մեջ նա ճանաչեց միայն երեքին. վաղուց անցած-գնացած օրերին Լևոթերն այդ մարդկանց նրան ցույց էր տրվել թատրոնում կամ ռեստորանում։ Միսիս Քեյնը քայլում էր առջևից, մի ինչ-որ տղամարդու թևին հենված։ Նրա ետևից գալիս էր Ուոթսոնը՝ տխուր ու լուրջ տեսքով։ Նա մի արագ հայացք գցեց այս ու այն կողմ, ասես որոնում էր Ջեննիին, բայց նրան չգտնելով՝ նորից հայացքն առաջ ուղղեց։ Ջեննին նայում էր, նայում, և նրա սիրտն ավելի ու ավելի ցավով էր սեղմվում։ Այդ հանդիսավոր ծիսակատարությունը որքա՜ն շատ էր վերաբերում նրան, այնինչ նա որքա՜ն հեռու էր այդ բոլոր մարդկանցից։

Թափորը մոտեցավ սեղանին, և այստեղ դագաղը ցած դրին։ Նրա վրա սև խաչերով մի սպիտակ ծածկոց գցեցին— շարշարանոց խորհրդանշանը—իսկ շուրջը բարձր մոմեր դրեցին։ Վերնասրահից ներդաշնակ երգեցողություն լսվեց, դագաղի վրա սուրբ ջուր ցնցեցին, բուրվառը ճոճվեց, և աղոթողներն սկսեցին քահանայի հետ կիսաձայն կրկնել «Հայր մեր»-ը, իսկ հետո, ըստ կաթոլիկական կարգի՝ ամենասուրբ կույսի աղոթքը։ Ջեննին զարմացած էր ու ճնշված, բայց ո՛չ սքանչելի եկեղեցին, ո՛չ շքեղ ծեսը չէին կարող մեղմացնել նրա վշտի սրությունը, անուղղելի կորուստի զգացումը։ Մոմերը, խնկի բուրմունքը, օրհներգությունները—այս ամբողջ գեղեցկությունը թափանցում էր նրա հոգին և խոր թախիծ առաջացնում նրա մեջ։ Ասես ոչինչ չէր մնացել, բացի թախծալի մեղեդիներից և մահվան ներկայությունից։ Ջեննին լալիս էր ու լալիս։ Եվ չգիտես ինչու զարմանում էր, տեսնելով, որ միսիս Քեյնը նույնպես ցնցվում է հեկեկանքից։

Ժամերգությունը վերջացավ, հուղարկավորները կառեթներ նստեցին և դագաղը տարան կայարան։ Երբ բոլոր հրավիրյալներն ու կողմնակի մարդիկ գնացին և եկեղեցին դատարկվեց, Ջեննին նույնպես ոտքի ելավ։ Հիմա նա էլ կգնա կայարան, գուցե իրեն հաջողվի տեսնել, թե դագաղն ինչպես

են վագոն դնելու։ Երևի նախ այն կդնեն կառամատույցի վերա. այդպես արին, երբ տանում էին Վեստային։ Ջեննին կառք նստեց, և շատ չանցած՝ արդեն մտնում էր կայարանի կամարների տակ։ Սկզբում նա կանգնեց բարձր վանդակի մոտ, որի ետևը ձգվում էին երկաթուղային գծերը, հետո գընաց սպասասրահ և ուշի-ուշով նայեց այնտեղ նստած մարդկանց։ Ահա նրանք՝ միսիս Քեյնը, Ռոբերտը, միստր Միշլին, Լուիզան, Էմին, Իմոջինը, և նրանց հետ էլի ինչ-որ մեկը։ Ջեննին զգում էր, որ կարող էր առանց սխալվելու տալ համարյա բոլորի անունները, թեև ոչ ոք նրան չէր ծանոթացրել նրանց հետ։

Միայն այժմ նա հիշեց, որ վաղը տոն է, Գոհաբանության օրն է։ Հսկայական դահլիճը լիքն էր աշխույժ, աղմկոտ բազմությամբ։ Շուրջն ուրախ դժժոց էր կանգնած. տոնակատարության համար քաղաքից դուրս գնացող մարդիկ կանխավայելելով հանգիստն ու զվարճությունները՝ բարձր խոսակցում էին ու ծիծաղում։ Անդադար կառքեր էին մոտենում կայարանին։ Հնչեղ մի ձայն հայտարարում էր, թե որ գնացքն է մոտեցված կառամատույցին և սկսված նստեցումը։ Ջեննիի սիրտը ճմլվեց, երբ դանդաղ ու երգեցիկ ձայնով հայտարարեցին այն երթուղին, որով ինքը շատ անգամ ճամփորդել էր Լեսթերի հետ միասին. «Դեթրոյթ—Թոլեդո—Քլիվլենդ— Բուֆալո—Նյու-Յորք»։ Հետո հայտարարեց. «Ուեյն ամրոց—Կոլումբուս—Պիտսբուրգ—Ֆիլադելֆիա—Ատլանտիկ Սիթի» երթուղու գնացքի մատուցումը և վերջապես՝ «Ինդիանոպոլիս—Կոլումբուս—Ցինցիննատի»...ժամը հասավ։

Ջեննին արդեն մի քանի անդամ սպասասրահից դուրս գալով մոտեցել էր երկաթյա վանդակին, որը նրան բաժանում էր սիրած մարդուց, մտածելով, թե կհաջողվի՞ արդյոք մեկ ինգամ էլ տեսնել փայտե արկղի մեջ տեղավորված դագաղը, նախքան վագոն կբարձրացնեն այն։ Եվ հանկարծ նա տեսավ այն, ինչին սպասում էր։ Մի սայլակ մոտեցրին այն տեղին, ուր պիտի կանգ առներ ապրանքատար վագոնը։ Այդ սայլակի վրա պառկած էր Լեսթերը, այն ամենը, ինչ մնացել էր նրանից՝ հետաքրքրասեր հայացքներից հուսալիորեն թաքցրած

տախտակով, կտորով ու արծաթով։ Սայլակի մոտ պրպտող բեռնողի մտքովն էլ չէր անցնում, թե դրա մեջ որքան վիշտ ու տառապանք է պահված։ Նա որտեղի՞ց պիտի իմանար, որ այդ ժամին Ջեննիի համար հարստությունն ու հասարակական դիրքը մարմնավորվել էին այդ վանդակի՝ անհաղթահարելի արգելքի տեսքով, որը նրան հավիտենապես բաժանում էր սիրած մարդուց։ Այդպես է եղել միշտ։ Ամբողջ կյանքում Լեսթերի մեջ մարմնավորված ուժն ու հարստությունը ետ են մղել նրան, որոշակի սահմանագծից այն կողմը չեն թողել։ Երևում է, նրա ճակատին այդ է գրված եղել՝ չպահանջել, այլ՝ հնազանդվել։ Հենց մանկությունից հարուստների բանակը հաղթաքայլ երթով էր անցել նրա մոտով։ Այժմ նրան ի՞նչ էր մնում անել, բացի թախիծով նրանց ետևից նայելուց։ Ջեննիի համար խորթ այդ աշխարհում Լեսթերը յուրային էր։ Նրան այնտեղ պատվավոր տեղ էին հատկացնում, իսկ Ջեննիին ճանաչել անգամ չէին ուզում։ Մինչ նա դեմքը վանդակին սեղմած կանգնած էր, ձայնը նորից հնչեց. «Ինդիանապոլիս—Կոլումբուս—Ցինցիննատի»... Կառամատույցին մոտեցավ պայծառ լուսավորված պատուհաններով երկար, կարմիր գնացքը՝ ապրանքատար վագոնները, մարդատարները, ռեստորան-վագոնը, որի մեջ շողշողում էին արծաթյա սպասքն ու ճերմակ սփռոցները, և մի քանի լյուքս ննջավագոն, իսկ առջևում՝ վիթխարի սև շոգեքարշը, որը ծուխ ու կայծերի խուրձեր էր ժայթքում։

Ապրանքատար վագոններից մեկը հավասարվեց սայլակին, նրա միջից դուրս նայեց գնացքի բարձող բանվորը, որ կապույտ շոր ուներ հագին, և շուռ գալով ձայն տվեց ինչ-որ մեկին.

— Է՞յ, Ջե՛կ, արի մի օգնիր։ Ննջեցյալ ենք բարձելու։

Ջեննին ոչինչ չէր լսում։

Նա տեսնում էր միայն մեկ բան. այն երկար արկղը, որն ահա, որտեղ որ է կծածկվի իր աչքերից։ Նա զգում էր մեկ բան. շուտով գնացքը կշարժվի, և ամեն ինչ կվերջանա։ Վանդակի դուռը բաց արին, ուղևորները հորդեցին դեպի կառամատույց։ Ահա Ռոբերտը, Էմին, Լուիզան, նրանք բոլորը գը-

նում են դեպի ննջավագոն, որ գտնվում է գնացքի ծայրում։ Նրանք բարեկամներին արդեն հրաժեշտ էին տվել և այժմ գնում են արագ, առանց այս ու այն կողմը նայելու։ Երեք բանվոր օգնեցին բարձրացնելու ծանր արկղը։ Երբ արկղը ծածկվեց վագոնի խորքում, Ջեննիի կրծքի տակ ասես ինչ-որ բան պոկվեց։

Հետո բարձեցին էլի շատ սնդուկներ ու ճամպրուկներ, հետո հնչեց շոգեկառքի զանգը, և ապրանքատար վագոնի դուռը կիսով չափ ծածկվեց։ Լսվում են բացականչություններ՝ «խնդրում եմ, գրավեք ձեր տեղերը», և ահա վիթխարի շոգեկառքն արդեն դանդաղորեն շարժվեց տեղից։ Հնչում է զանգը, գոլորշին դուրս է ժայթքում սուլոցով, սև ծուխը վեր ու վեր է քաշձրանում ծխնելույզից, հետո ցած իջնելով ծածկում է վագոններն ասես թաղման ծածկոցով։ Հնոցապանը, ասես զգալով, թե ինչպիսի ծանր բեռ է տանելու, բացում է բոցկլտացող հնոցի դուռը, որպեսզի ածուխ ավելացնի։ Հնոցի բերանը լուսավորում է հրավառ աչքի պես։

Ջեննին այդ պատկերից կախարդված՝ կանգնել էր անշարժ։ Գունատ, ձեռքերը սեղմած և աչքերը լայն բացած՝ նա հիշում էր միայն մեկ բան՝ լեսթերին տանում են։ Նոյեմբերյան կապարանման երկինքն էր կախվել ճանապարհների վրա։ Գնացքն ավելի ու ավելի էր հեռանում, և, վերջապես, վերջին ննջավագոնին ամրացրած կարմիր լապտերը, ծխանման մշուշի մեջ թաղվելով, աչքից ծածկվեց։

— Այո, այո, — Ջեննիի մոտով անցնելով ասաց մի ինչ-որ մարդ, որն ասես պատրաստվում էր քաղաքից դուրս գնալու։ — Մենք այնտեղ հիանալի ժամանակ կանցկացնենք։ Դու էննիին հիշո՞ւմ ես։ Քեռի Ջիմն էլ է գալիս, մորքուր Էլլան էլ։

Ջեննին ոչինչ չէր լսում. ոչ այս խոսքերը, ոչ կայարանի աղմկոտ իրարանցումը։ Նրա աչքերի առջևով անցնում էր թախծալի, միայնակ տարիների երկար շարքը։ Հետո ի՞նչ է լինելու։ Նա դեռ պառավ չէ։ Հարկավոր է դաստիարակել իր սաներին։ Կանցնի մի քիչ ժամանակ, նրանք կփետրավորվեն, կհեռանան իրենից, իսկ հետո՞։ Օրերի անվերջանալի շարք, մեկը մյուսին նման, իսկ հետո՞...

ՊԱՏՄԱ-ԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Ջեննի Գերհարդը» („Jennie Gerhardt„) Դրայզերի երկրորդ վեպն է։ Լույս է տեսել 1911 թ. հոկտեմբերին։ Այսպիսով, ուրեմն, «Քույր Քերրիի» համար կրած բոլոր աղետներից հետո երիտասարդ գրողը լռել էր ավելի քան տասը տարի։ Զբաղվելով լրագրությամբ՝ Դրայզերի մտքում նորանոր երկեր է հղանում, և նրանց համար շատ ու կարևոր նյութեր է ժողովում։ Նրա կենսագիր Դ. Դուդլեյը պատմելով, թե Դրայզերն ինչպես է աշխատել «Ջեննի Գերհարդի» վրա, նշում է, որ հեղինակը ձգտում է ունեցել տալ իրականության ճշմարիտ պատկերը, «ընթանալ քամուն հակառակ», քննադատել այլանդակ բուրժուական հասարակությունը, «որն աղճատում է մարդկանց, պատվանդանից ցած է գցում մարդկային հանճարներին»։

Եթե վեպի վրա աշխատելու ժամանակ հեղինակի նախանշած քննադատական ռեալիզմի համարձակ ծրագիրը «Ջեննի Գերհարդ»-ում ամբողջ խորությամբ ու հետևողականությամբ չի էլ իրականացված, ապա դեռ այդ ժամանակ կապիտալիստական Ամերիկայի մասին Դրայզերի դատողությունների շիտակությունն ու խստությունը պետք է համարել նրա ստեղծագործության էական առանձնահատկությունը։

Գերհարդի ընտանիքի նկարագրության մեջ անտարակուսելի են ինքնակենսագրական գծերը, և սա առանձնապես վերաբերում է ծերունի Գերհարդին, որը շատ կողմերով է նման Դրայզերի հորը։ Ջեննիի կերպարը, հենց հեղինակի խոստովանությամբ, նրա ամենասիրած կերպարների շարքին է պատկանում։

Դրայզերը շատ ուշադրություն էր հատկացնում «բարձր հասարակությունը» պատկերելուն, որպեսզի ռեալիստորեն ցույց տա նրա անբարոյականությունը և այլանդակությունը։ Հեղինակը իր ստեղծագործության հիմքն էր համարում հասարակ մարդկանց և կապիտալիս-

տական գիշատիչների հակադրությունը։ Թեպետև այդ կոնտրաստը բավականաչափ հետևողականորեն չի բացահայտված, այնուամենայնիվ վեպում շատ ճիշտ է պատկերված։

Վեպի կրկնահրատարակություններից մեկին հեղինակը կցել է մի փոքրիկ եզրակացություն, որի մեջ արտահայտված են գրքի իմաստին վերաբերող հիմնական նկատառումները։ Դա, ինչպես Դրայզերն է գրում, այն է, որ հրապարակ հանի «չքավոր մարդու գստերը, որին կլանել է խլացուցիչ ազմկոտ աշխարհի ջրասուցությունը, աշխարհ, որին կոչում են քաղաքակիրթ, աշխարհ, որ անհագուրդ է տեսարանների ու հարստության նկատմամբ...»։ Նկարագրելով Ջեննիին հրապուրիչ լույսով, ընդգծելով նրա անկեղծությունը, անմիջականությունը, նրա էության արտասովոր նրբությունը («չքավոր մարդու այդ աղջիկը կարոդանում էր զգալ և՛ կանաչ ծառերի գեղեցկությունը, և՛ ամառային անձրևի թովչանքը, և՛ կյանքի վառ գույները»), Դրայզերը նրա դժբախտության պատճառը համարում է այն, որ նա ուժ ու վճռականություն չուներ հակահարված տալու անհոգի ու անզգա բուրժուական աշխարհին։ Դա «ագահ ու հեշտասեր» աշխարհ է, մի աշխարհ, որտեղ բոլորը «չանթում են», որտեղ իշխում են գայլի օրենքները, որտեղ ընդունված է «հարձակվել մերձավորի վրա»։ Գրողի մտադրությունն է եղել ճշմարտացի ցույց տալ այդ աշխարհի զզվելի դեմքը։

«Ջեննի Գերհարդ»-ը այնպիսի հաջածանքի չենթարկվեց, ինչպես «Քույր Քերրին», բայց բուրժուական քննադատությունը բացահայտորեն ջանում էր նսեմացնել նրա նշանակությունը, ամեն կերպ աշխատելով սքողել նրա մերկացնող էությունը։

«Ջեննի Գերհարդ» վեպը ռուսերեն առաջին անգամ հրատարակվել է սովետական ժամանակաշրջանում, 1927 թվականին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ջենի Գեր՝հարդ 5
Պատմա-դրական տեղեկանք 449

ԹԵՈԴՈՐ ԴՐԱՅՁԵՐ

Երկերի ժողովածու

տասը հատորով

Հատոր երկրորդ

ՋԵՆՆԻ ԳԵՐՀԱՐԴ

Խմբագիր՝ Գ. Վ. Վիրապյան
Նկարիչ՝ Ան. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Ռ. Ս. Թեդրոսով
Տեխ. խմբագիր՝ Ն. Ա. Ախիրյան
Վերստ. սրբագրիչ՝ Ժ. Գ. Միրզոյան

Հանձնված է արտադրության 20/XII 1965 թ.։
Ստորագրված է տպագրության 1/XII 1966 թ.։
Թուղթ՝ տպագրական № 2, 84×108 1/32, հրատ. 20,3 մամ., տպ. 28,25 մամ.=23,16 պայմ. մամ.։
Պատվեր 1296 *Գինը՝ 80 կ.։* *Տիրաժ 20 000*
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։